ISBN
978-9939-9303-4-3

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ

НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

NATIONAL ACADEMY OF SCIENCES
OF THE REPUBLIC OF ARMENIA

ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ
МЕЖДУНАРОДНЫЙ НАУЧНО-ОБРАЗОВАТЕЛЬНЫЙ ЦЕНТР
INTERNATIONAL SCIENTIFIC-EDUCATIONAL CENTER

# ՄՐՑՈՒՆԱԿ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՐԱՓՈՓՈԽ ԱՇԽԱՐՀՈՒՄ

ԳԻՏԱԿԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԺՈՂՈՎԻ ՆՅՈՒԹԵՐ
ՀՈՒՆԻՍԻ 21, 2023

# ПРОБЛЕМЫ КОНКУРЕНТОСПОСОБНОГО ОБРАЗОВАНИЯ И НАУКИ В МЕНЯЮЩЕМСЯ МИРЕ

СБОРНИК НАУЧНЫХ СТАТЕЙ
МАТЕРИАЛЫ МЕЖДУНАРОДНОЙ КОНФЕРЕНЦИИ
21 ИЮНЯ, 2023

# PROBLEMS OF COMPETITIVE EDUCATION AND SCIENCE IN A CHANGING WORLD

INTERNATIONAL CONFERENCE
COLLECTION OF SCIENTIFIC ARTICLES
21 JUNE 2023

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
NATIONAL ACADEMY OF SCIENCES OF THE REPUBLIC OF ARMENIA

ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ
МЕЖДУНАРОДНЫЙ НАУЧНО-ОБРАЗОВАТЕЛЬНЫЙ ЦЕНТР
INTERNATIONAL SCIENTIFIC-EDUCATIONAL CENTER

# ՄՐՑՈՒՆԱԿ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՐԱՓՈՓՈԽ ԱՇԽԱՐՀՈՒՄ

## ԳԻՏԱԿԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ
## ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԺՈՂՈՎԻ ՆՅՈՒԹԵՐ

ՀՈՒՆԻՍԻ 21, 2023

# ПРОБЛЕМЫ КОНКУРЕНТОСПОСОБНОГО ОБРАЗОВАНИЯ И НАУКИ В МЕНЯЮЩЕМСЯ МИРЕ

## СБОРНИК НАУЧНЫХ СТАТЕЙ
## МАТЕРИАЛЫ МЕЖДУНАРОДНОЙ КОНФЕРЕНЦИИ

21 Июня, 2023

# PROBLEMS OF COMPETITIVE EDUCATION AND SCIENCE IN A CHANGING WORLD

## INTERNATIONAL CONFERENCE
## COLLECTION OF SCIENTIFIC ARTICLES

21 JUNE 2023

ԵՐԵՎԱՆ-2023
ЕРЕВАН-2023
YEREVAN-2023

378:001(082)
74.48+7243
958

Երաշխավորվել է տպագրության ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի գիտակրթական միջազգային կենտրոնի գիտական խորհրդի կողմից

Рекомендовано к печати Ученым советом Международного научно-образовательного центра Национальной Академии наук РА

Recommended by the Scientific Council of the International Scientific-Educational Center of NAS RA

Մ 958 Մրցունակ կրթության և գիտության հիմնախնդիրները հարափոփոխ աշխարհում: Գիտական հոդվածների ժողովածու: Միջազգային գիտաժողովի նյութեր, հունիսի 21, 2023.- Եր.: <<Տիր>> հրատ., 2023.- 448 էջ:

ՀՏԴ 378:001(082)
ԳՄԴ 74.48+72ց43

ISBN 978-9939-9303-4-3

© Խմբագրական խորհուրդ, 2023
© <<Տիր>> հրատարակչություն, 2023

**ԽՄԲԱԳՐԱԿԱԶՄ**
**РЕДАКЦИОННАЯ КОЛЛЕГИЯ**
**EDITORIAL BOARD**

*Խմբագրական խորհրդի նախագահ*
**Ալբերտ Սարգսյան,** ֆիզիկամաթեմատիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

*Գլխավոր խմբագիր*
**Նաիրա Հակոբյան**, հոգեբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Պատասխանատու քարտուղար՝ **Ատոմ Մխիթարյան**
Հայերենի խմբագիր՝ **Օֆելյա Ավագյան**
Անգլերենի խմբագիր՝ **Գոհար Գրիգորյան**
Ռուսերենի խմբագիր՝ **Մելինե Սարգսյան**

*Տեխնիկական խմբագիր՝* ***Վիկտորյա Սարջանյան***

*ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ՝*

**Կարեն Խաչատրյան**՝ պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
**Հայկ Պետրոսյան**՝ մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
**Աստղիկ Փեփոյան**՝ կենսաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
**Աննա Աբաջյան**՝ բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
**Նաիրա Այվազյան**՝ կենսաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
**Ջոն Սարգսյան**՝ բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
**Անի Քալաջիան**՝ գիտությունների դոկտոր հոգեկան առողջության ոլորտում (ԱՄՆ)
**Դավիթ Պիպոյան**՝ սննդագիտության դոկտոր (Իտալիա)
**Ղազար Գալոյան**՝ երկրաբանական գիտությունների թեկնածու, Տիեզերքի մասին գիտությունների դոկտոր (Ֆրանսիա)
**Աննա Մարիա Թամմարո**՝ տեղեկատվական գիտությունների թեկնածու (Իտալիա)
**Նիկոլո Մերենդինո**՝ գիտությունների թեկնածու սննդի կենսատեխնոլոգիայի ոլորտում (Իտալիա)
**Ջիակոմո Բրանկա**՝ գիտությունների թեկնածու գյուղատնտեսության քաղաքականության ոլորտում (Իտալիա)
**Ալեսսանդրո Բուֆալինի**՝ իրավաբանական գիտությունների թեկնածու (Իտալիա)
**Հայկ Ուտիջիան**՝ երաժշտական գիտությունների թեկնածու (Չեխական

Հանրապետություն)
**Տիգրան Զարգարյան**՝ տեխնիկական գիտությունների թեկնածու, դոցենտ
**Կարեն Սարգսյան**՝ տնտեսագիտության թեկնածու, դոցենտ
**Մերի Սարգսյան**՝ բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ
**Գոհար Գրիգորյան**՝ բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ
**Մարիաննա Ավետիսյան**՝ հոգեբանական գիտությունների թեկնածու, դոցենտ
**Աննա Խաչատրյան**՝ հոգեբանական գիտությունների թեկնածու, դոցենտ
**Նաիրա Համբարձումյան**՝ բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ
**Կարինե Ավետիսյան**՝ քիմիական գիտությունների թեկնածու, դոցենտ
**Միրա Անտոնյան**՝ սոցիոլոգիական գիտությունների թեկնածու, դոցենտ
**Լիլիթ Ղազանչյան**՝ իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ
**Արմեն Սարգսյան**՝ տնտեսագիտության թեկնածու
**Հրաչյա Ասցատրյան**՝ տեխնիկական գիտությունների թեկնածու
**Լիլիթ Սահակյան**՝ աշխարհագրական գիտությունների թեկնածու
**Արուսյակ Հարությունյան** հետազոտող՝ կրթության ոլորտում

*Преседатель редакционной коллегии*
**Альберт Саргсян**
доктор физико-математических наук, профессор

*Главный редактор*
**Наира Акопян,** доктор психологических наук, профессор

Ответственный секретарь - **Атом Мхитарян**
Редактор армянского текста **- Офелия Авагян**
Редактор английского текста**- Гоар Григорян**
Редактор русского текста **– Мелинэ Саркисян**

*Технический редактор - **Виктория Сарджанян***

***РЕДАКЦИОННАЯ КОЛЛЕГИЯ***

**Карен Хачатрян** доктор исторических наук, профессор
**Гайк Петросян** доктор педагогических наук, профессор
**Астхик Пепоян** доктор биологических наук, профессор
**Анна Абаджян** доктор филологических наук, профессор
**Наира Айвазян** доктор биологических наук
**Джон Саркисян** доктор медицинских наук, профессор
**Ани Каладжиан** доктор наук о психологическом здоровье (США)
**Давид Пипоян** доктор пищевых наук (Италия)
**Казар Галоян** кандидат геологических наук, доктор наук о космосе (Франция)
**Анна Мария Таммаро** кандидат наук об информации (Италия)
**Николо Мерендино** кандидат наук по пищевым биотехнологиям (Италия)
**Джиакомо Бранка** кандидат наук по сельскохозяйственной политике (Италия)
**Алессандро Буфалини** кандидат юридических наук (Италия)
**Аик Утиджиан** кандидат наук о музыке (Чешская Республика)
**Тигран Заргарян** кандидат технических наук, доцент
**Карен Саргсян** кандидат экономических наук, доцент
**Мери Саргсян** кандидат филологических наук, доцент
**Гоар Григорян** кандидат филологических наук, доцент
**Марианна Аветисян** кандидат психологических наук, доцент
**Анна Хачатрян** кандидат психологических наук, доцент
**Наира Амбарцумян** кандидат психологических наук, доцент
**Каринэ Аветисян** кандидат химических наук, доцент
**Мира Антонян** кандидат социологических наук, доцент
**Лилит Казанчян** кандидат юридических наук, доцент
**Армен Саркисян** кандидат экономических наук
**Грачья Асцатрян** кандидат технических наук
**Лилит Саакян** кандидат географических наук
**Арусяк Арутюнян** исследователь в области образования

*Chief of the Editorial Board*
**Albert Sargsyan,** Doctor of Physics and Mathematics, Professor
*Editor–in–Chief*
**Naira Hakobyan,** Doctor of Psychology, Professor

Executive Sectretary – **Atom Mkhitaryan**
Armenian Editor **- Ofelia Avagyan**
English Editor**- Gohar Grigoryan**
Russian Editor **- Meline Sargsyan**

*Technical Editor **– Viktorya Sarjanyan***

***EDITORIAL BOARD***

**Karen Khachatryan** Doctor of History, Professor
**Hayk Petrosyan** Doctor of Pedagogy, Professor
**Astghik Pepoyan** Doctor of Biology, Professor
**Anna Abajyan** Doctor of Philology, Professor
**Naira Ayvazyan** Doctor of Biology
**John Sarkissian** Doctor of Medical Sciences, Professor
**Ani Kalayjian** Doctor of Mental Health (USA)
**Davit Pipoyan** Doctor of Food Science (Italy)
**Ghazar Galoyan** PhD in Geological Sciences, Doctor of Sciences of the Universe (France)
**Anna Maria Tammaro** PhD in Information Science (Italy)
**Nicolo Merendino** PhD in Food Biotechnology (Italy)
**Giacomo Branca** PhD in Agricultural Policy (Italy)
**Alessandro Bufalini** PhD in Law (Italy)
**Haig Utidjian** PhD in Musicology (Czech Republic)
**Tigran Zargaryan** PhD in Technical Sciences, Associate Professor
**Karen Sargsyan** PhD in Economics, Associate Professor
**Meri Sargsyan** PhD in Philological Sciences, Associate Professor
**Gohar Grigoryan** PhD in Philological Sciences, Associate Professor
**Marianna Avetisyan** PhD in Psychological Sciences, Associate professor
**Anna Khachatryan** PhD in Psychological Sciences, Associate Professor
**Naira Hambardzumyan** PhD in Philological Sciences, Associate Professor
**Karine Avetisyan** PhD in Chemical Sciences, Associate Professor
**Mira Antonyan** PhD in Sociological Sciences, Associate Professor
**Lilit Ghazanchyan** PhD in Juridical Sciences
**Armen Sargsyan** PhD in Economics
**Hrachya Astsatryan** PhD in Technical Sciences
**Lilit Sahakyan** PhD in Geographical Sciences
**Arusyak Harutyunyan** Researcher in Education

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

### *Հոգեբանություն*

***Նաիրա Հակոբյան, Աննա Խաչատրյան***

Հետպատերազմական անոմիայի հոգեախտորոշումը թիրախային տարբեր խմբերում.........16

***Վազգեն Պողոսյան, Նոնա Մեսրոպյան***

Անձի հոգեկան հատկությունների առաձնահատկությունները որպես շիզոֆրենիայի առաջացման պատճառ.........37

***Վազգեն Պողոսյան, Սոնա Մելիքյան***

Սեռական բռնություններից հետո առաջացած հետտրավմատիկ սթրեսային խանգարումների և խառնվածքի կապը.........51

***Գայանե Հարությունյան***

Քաղաքական գործընթացների հոգեբանական դրսևորումները սոցիալական ցանցերում.........66

***Մարիամ Մեհրաբյան, Գոհար Գևորգյան***

Հոգեբանական ռեսուրսների ուսումնասիրման գիտական մոտեցումների համեմատական վերլուծություն.........85

***Գայանե Գրիգորյան***

Ընտանեկան կոնֆլիկտների հասկացությունը, պատճառները, դրանց ծագման մեխանիզմը.........99

***Անժելիկա Այվազյան***

«Գիտական հետազոտության հիմունքներ» առարկայի դասավանդումը բարձրագույն կրթական համակարգում.........110

***Վարդինե Մեսրոբյան***

Դասախոսների անձնային առանձնահատկությունների, ինքնազարգացման և կազմակերպչական ունակությունների համահարաբերակցությունը.........118

***Բենիկ Երիբեկյան***

Մանիպուլյացիա երևույթի փիլիսոփայական և արժեքային առանձնահատկությունների վերլուծությունը.........131

***Լյուդմիլա Նանուշյան***

Հոգեսոմատիկա. սրտային հիվանդությունների հոգեբանական պատճառները.........143

***Մարինե Այվազյան***

Աշխատանքային մոտիվացիայի ուսումնասիրության տեսական հիմքերը.........155

### *Բնապահպանություն*

***Հովհաննես Ասատրյան***

Խաղողագործության վիճակի, զարգացման մարտահրավերների և ներուժի գնահատումը արմավիրի մարզում ընտրանքային հարցումների մեթոդի կիրառմամբ.........168

***Մերի Մուրադյան***

Ոռոգման ռեժիմը, մեթոդները և ջրման տեխնիկան Հայաստանում.184

*Դեղագիտություն*

***Սամվել Սիրականյան, Տաթևիկ Առաքելյան, Էլմիրա Հակոբյան, Հասմիկ Եգորյան, Լիլիթ Երմալովյան, Անուշ Հովակիմյան, Ռուզաննա Պարոնիկյան***
1-Պիպերազինո-2,7-Նաֆթիրիդինների նոր ածանցյալների հոգեմետ հատկությունների ուսումնասիրությունը……………………………………….195

*Մանկավարժություն*

***Վահան Մելիքսեթյան***
Հանրակրթական հաստատությունների կառավարման սկզբունքների և մեթոդների հարաբերակցությունը……………………………………………211
***Նաիրա Համբարձումյան***
Հետկառուցվածքաբանական տեքստը որպես սոցիալական հիշողություն…………………………………………………………………………226
***Սաթենիկ Մկրտչյան***
44-օրյա պատերազմի ազդեցությունը Արցախից տեղահանված երեխաների կրթության վրա…………………………………………………………240
***Նոնա Գյուլամբարյան***
Բարձրագույն կրթական համակարգում մարդկային ռեսուրսների կառավարման արդի միտումները անձնակազմի հետազոտական հմտությունների զարգացման համատեքստում………………………………………255
***Հայկուհի Սաֆարյան***
Բարձրագույն կրթության կառավարման հիմնախնդիրները ՀԱՊՀ-ում (Հայաստանի Ազգային Պոլիտեխնիկական համալսարան)……………………264

*Իրավագիտություն*
***Արմեն Ասատրյան***
Իրավունքի բացերի առաջացման պատճառները և հաղթահարումն անալոգիայի միջոցով………………………………………………………………274
***Մանվել Հարությունյան***
Մասնավոր անձի կողմից կատարված ձայնագրության՝ որպես ապացույց օգտագործելու իրավաչափության պայմանները……………………292

*Պատմություն*
***Լիլիթ Հովհաննիսյան***
Արևմտյան Հայաստանի հարցի միջազգայնացումը հայաստանյան արդի պատմագիտության գնահատմամբ (1996-2022 թթ.)……………………306

*Տնտեսագիտություն*
***Աշոտ Մաթևոսյան, Անի Գրիգորյան***
ՀՀ արտաքին պետական պարտքի վրա տնտեսական ակտիվության ցուցանիշի աճի և արտարժութային տատանումների ազդեցության գնահատման մոտեցումը………………………………………………………………327

***Արմինե Զախարյան***
Կրթության և գիտության ոլորտների ֆինանսավորման շուրջ.........348
***Սմբատ Աղայան***
Աշխարհատնտեսական հայացք գիտության և կրթության հիմնախնդիրներին......................................................................................369

***Օտար լեզու***

***Գոհար Գրիգորյան***
Ստորադասի տեսակներն անգլերենի նախադասության մեջ.........385
***Մելինե Սարջանյան***
Կրթական համակարգում ռուսաց լեզվի ուսուցման խնդիրներն ու առանձնահատկությունները..........................................................397

***Գրականություն***

***Զարուհի Հայրյան***
Հայաստանի կերպարը Պյոտեր Վեգինի թարգմանություններում (Գևորգ Էմինի պոեզիայի օրինակով)...................................................410
***Ասպրամ Գաբոյան***
Կնոջ ինքնության լեզվական դրսևորումը ժամանակակից բրիտանական գրականությունում..............................................................421

***Սոցիոլոգիա***

***Վիկտորյա Սարջանյան***
Ժողովրդագրական հիմնախնդիրների կարգավորման ուղիները ՀՀ սոցիալական քաղաքականության համատեքստում.................................429

## СОДЕРЖАНИЕ

***Психология***

***Наира Акопян, Анна Хачатрян***

Психодиагностика пост военной аномии в различных целевых группах.........16

***Вазген Погосян, Нона Месропян***

Особенности психических свойств личности как причины возникновения шизофрении.........37

***Вазген Погосян, Сона Меликян***

Взаимосвязь темперамента и посттравматических стрессовых расстройств /ПТСР/, возникших после сексуальных насилий.........51

***Гаяне Арутюнян***

Психологические проявления политических процессов в социальных сетях.........66

***Мариам Меграбян, Гоар Геворгян***

Сравнительный анализ научных подходов к изучению психологических ресурсов.........85

***Гаяне Григорян***

Понятие семейных конфликтов, причины, механизм их возникновения.........99

***Анжелика Айвазян***

Преподавание предмета “Основы научного исследования” в системе высшего образования.........110

***Вардине Месробян***

Соотношение личностных характеристик преподавателей, их саморазвития и организаторских способностей.........118

***Беник Ерибекян***

Анализ философских и ценностных особенностей явления манипуляция.........131

***Людмила Нанушян***

Психосоматика: психологические причины сердечных заболеваний..143

***Марине Айвазян***

Теоретические основы изучения трудовой мотивации.........155

***Экология***

***Оганнес Асатрян***

Оценка состояния виноградарства, препятствий и потенциала его развития в армавирской области методом выборочных обследований.........168

***Мери Мурадян***

Режим орошения, способы и техника полива в Армении.........184

***Фармакология***

***Самвел Сираканян, Татевик Аракелян, Эльмира Акопян, Асмик Егорян, Лилит Ермаловян, Ануш Овакимян, Рузанна Пароникян***

Изучение психотропных свойств новых производных 1-Пиперазино-2,7-Нафтиридина……………………………………………………………………195

***Педагогика***

***Ваган Меликсетян***

Взаимосвязь принципов и методов управления общеобразовательными учреждениями……………………………………………………………………211

***Амбарцумян***

Постструктурный текст как социальная память……………………226

***Сатеник Мкртчян***

Влияние 44-дневной войны на образование детей, перемещенных из Арцаха……………………………………………………………………………240

***Нона Гюламбарян***

Современные тенденции управления человеческими ресурсами в системе высшего образования в контексте развития исследовательских навыков персонала…………………………………………………………………………255

***Айкуи Сафарян***

Проблемы управления высшим образованием в НПУА (Национальный Политехнический Университет Армении)……………………………………264

***Юриспруденция***

***Армен Асатрян***

Причины возникновения пробелов в праве и их преодоление с помощью аналогии…………………………………………………………………274

***Манвел Арутюнян***

Условия правомерности использования записи, сделанной частным лицом, в качестве доказательства…………………………………………………292

***История***

***Лилит Оганисян***

Интернационализация вопроса Западной Армении в оценке современной армянской исторической науки (1996-2022 гг.)……………………306

***Экономика***

***Ашот Матевосян, Ани Григорян***

Подходы к оценке влияния показателях роста экономической активности и валютных колебаний на внешний государственный долг РА…327

***Армине Захарян***

К вопросу о финансировании сфер образования и науки…………348

***Смбат Агаян***

Геоэкономический взгляд на фундаментальные проблемы науки и образования……369

***Иностранный язык***

***Гоар Григорян***

Типы сказуемых в английском предложении……385

***Мелине Сарджанян***

Проблемы и особенности преподавания русского языка в общеобразовательных школах……397

***Литература***

***Заруи Айрян***

Образ Армении в переводах Петра Вегина (на примере поэзии Геворга Эмина)……410

***Аспрам Габоян***

Лингвистическое выражение женской идентичности в современной британской литературе……421

***Социология***

***Виктория Сарджанян***

Пути регулирования демографических проблем в контексте социальной политики РА……429

## CONTENTS


### *Psychology*

***Naira Hakobyan, Anna Khachatryan***

Psychodiagnostics of Post-War Anomie in Different Target Groups......16

***Vazgen Poghosyan, Nona Mesropyan***

Eculiarities of a Person's Mental Properties as a Cause of Schizophrenia.37

***Vazgen Poghosyan, Sona Melikyan***

The Relationship Between Post-Traumatic Stress Disorder and Temperament After Sexual Violence.........................................................51

***Gayane Harutyunyan***

Psychological Manifestations of Political Processes on Social Networks.......................................................................................................66

***Mariam Mehrabyan, Gohar Gevorgyan***

Comparative Analysis of Scientific Approaches to the Study of Psychological Resources...............................................................................................85

***Gayane Grigoryan***

Concept of Family Conflicts, Causes, Mechanism for their Occurrence...99

***Anjelika Ayvazyan***

Teaching the Subject “Fundamentals of Scientific Research” in the Higher Education System.........................................................................110

***Vardine Mesrobyan***

Correlation of Teachers' Personal Characteristics, Self-Development and Organizational Abilities...........................................................................118

***Benik Yeribekyan***

Analysis of the Philosophical Foundations and Value Features of the Phenomenon of Manipulation...................................................................131

***Lyudmila Nanushyan***

Psychosomatics: Psychological Causes of Heart Diseases..................143

***Marine Ayvazyan***

Theoretical Basis for Studying Labour Motivation............................155

### *Ecology*

***Hovhannes Asatryan***

Assessment of the Viticulture State, Challenges and its Development Potential in The Armavir Region Using Sample Surveys.................................168

***Mary Muradyan***

Irrigation Regime, Irrigation Methods and Watering Techniques in Armenia..........................................................................................184

**_Pharmacology_**

**_Samvel Sirakanian, Tatevik Arakelyan, Elmira Hakobyan, Hasmik Yegoryan, Lilit Yermalovian, Anush Hovakimyan, Ruzanna Paronikian_**

The Study of Psychotropic Properties of New 1-Piperazine-2,7-Naphthiridine Derivatives........................................................................................195

**_Pedagogy_**

**_Vahan Meliksetyan_**

Interrelation of Principles and Methods of Management in General Educational Institutions..........................................................................211

**_Naira Hambardzumyan_**

Poststructural Text as Social Memory...........................................226

**_Satenik Mkrtchyan_**

Impact of the 44-Day War on the Education of the Children Displaced from Artsakh...................................................................................240

**_Nona Gylambaryan_**

Modern Trends of Human Resources Management in the Higher Education System in the Context of Personnel Research Skills Development...................255

**_Haykuhi Safaryan_**

Problems of Higher Education Management in Npua (National Polytechnic University of Armenia)..........................................................................264

**_Jurisprudence_**

**_Armen Asatryan_**

Causes of Legal Gaps and Overcoming them by Analogy..................274

**_Manvel Harutyunyan_**

Terms for the Lawful Use of a Private Recording as Evidence...........292

**_History_**

**_Lilit Hovhannisyan_**

Internationalization of The Western Armenia Question in the Evaluation of Modern Armenian Historical Science (1996-2022)......................................306

**_Economics_**

**_Ashot Matevosyan, Ani Grigoryan_**

Approaches to Assessing the Impact of Economic Activity Growth and Currency Fluctuations on the External Debt of The Republic Of Armenia......... 327

***Armine Zakharyan***

On the Financing of Education and Science Sectors..........................348

***Smbat Aghayan***

Geoeconomic View on Fundamental Problems of Science and Education.....................................................................................................369

***Foreign Language***

***Gohar Grigoryan***

Types of Predicates in the English Sentence..................................385

***Meline Sarjanyan***

Problems and Features of Teaching Russian in General Schools.......397

***Literature***

***Zaruhi Hayryan***

The Image of Armenia in Peter Vegin's Translations (on the Example of Gevorg Emin's Poetry)........................................................................410

***Aspram Gaboyan***

Linguistic Expression of Female Identity in Modern British Fiction.....421

***Sociology***

***Viktorya Sarjanyan***

Ways of Regulating Demographic Issues in the Context of The RA Social Policy...........................................................................................429

# ՀԵՏՊԱՏԵՐԱԶՄԱԿԱՆ ԱՆՈՄԻԱՅԻ ՀՈԳԵԱԽՏՈՐՈՇՈՒՄԸ ԹԻՐԱԽԱՅԻՆ ՏԱՐԲԵՐ ԽՄԲԵՐՈՒՄ

**ՆԱԻՐԱ ՀԱԿՈԲՅԱՆ**
ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա,
Գիտակրթական միջազգային կենտրոն,
գիտահետազոտական աշխատանքների գծով փոխտնօրեն,
հոգեբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
naira.hakobyan@isec.am

**ԱՆՆԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ**
ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա,
գիտակրթական միջազգային կենտրոն,
հոգեբանության ամբիոն, դասախոս,
հոգեբանական գիտությունների թեկնածու, դոցենտ
anna.khachatryan@isec.am

**Համառոտագիր**

2020 թ. Արցախյան հակամարտության թեժացմանը հաջորդող հետպատերազմական շրջանը հաճախ բնութագրվում է որպես բարդ և ճգնաժամային: Այդ բնութագրումները վերաբերում են հետպատերազմական շրջանի իրողություններին, որոնք նկարագրված են անձի և սոցիալական խմբերի հարմարման և գործունեության վերաբերյալ տարբեր սոցիալ-հոգեբանական ուսումնասիրություններում: Մասնավորապես, Դ. Սոմասունդարամը և Ս. Սայվայոկանն անդրադարձել են պատերազմից տուժած Շրի Լանկայի ընտանիքների հոգեթերապիայի և հոգեկարգավորման հարցերին, Պ. Մաքքարտին քննարկել է Սառը պատերազմի ժամանակաշրջանին հաջորդող իտալական հասարակության սոցիալ-հոգեբանական փոխակերպումները, Պ. Ադդիսոնը մեկնաբանել է հետպատերազմական Բրիտանիայի ներհասարակական փոփոխությունները և այլն **[1; 8; 9]:**

Այդուհանդերձ, հետպատերազմական շրջանում անձի գործունեության, նոր իրավիճակի արժևորման և բնութագրման վերաբերյալ դեռևս բաց են մնում բազում հարցեր, որոնցից մեկը անոմիայի երևույթի ուսումնասիրումն է և հոգեախտորոշումը: Այս հոդվածի նպատակն է՝ ներկայացնել 2020 թ. Արցախյան պատերազմից հետո անոմիայի հոգեախտորոշման մեթոդական մշակումներն ու արդյունքները **[5]:**

Անոմիայի հոգեախտորոշման համար ընտրվել են դիտման և զրույցի մեթոդները, որոնք անց են կացվել թիրախային մի քանի խմբերում: Հետազոտության մասնակիցները բաժանվել են ըստ հետևյալ թիրախային խմբերի՝ պատերազմի մասնակիցներ, նրանց ընտանիքի անդամներ, զոհվածների ընտանիքի անդամներ և պատերազմում մասնակցություն չունեցող անձինք: Հետպատերազմական անոմիան բնութագրող հատկանիշները դասակարգվել են՝ համաձայն դիտման և զրույցի մեթոդների արդյունքների: Հետազոտության արդյունքները կարող են կիրառելի լինել հետպատերազմական անոմիայի հետագա ուսումնասիրություններում և անոմիան հաղթահարելու մեթոդաբանության մշակման գործում:

**Բանալի բառեր և բառակապակցություններ.** անոմիա, հոգեախտորոշում, պատերազմի մասնակից, դիտում, թիրախային խումբ:

# ПСИХОДИАГНОСТИКА ПОСТ ВОЕННОЙ АН ОМИИ В РАЗЛИЧНЫХ ЦЕЛЕВЫХ ГРУППАХ

**НАИРА АКОПЯН**
Национальная академия наук Республики Армения
Международный научно-образовательный центр
заместитель директора по научно-исследовательским вопросам
доктор психологических наук, профессор
naira.hakobyan@isec.am

**АННА ХАЧАТРЯН**
Национальная академия наук Республики Армения
Международный научно-образовательный центр
преподаватель кафедры психологии
кандидат психологических наук, доцент
anna.khachatryan@isec.am

**Аннотация**

Послевоенный период эскалации конфликта в Арцахе в 2020 г. часто характеризуется как сложный и критический период. Эти характеристики относятся к послевоенным реалиям, описанным в различных социально-психологических исследованиях по адаптации и деятельности человека и социальных групп. В частности, D. Сомасундарам и С. Сэйвейокан исследовали вопросы психотерапии и психорегуляции членов семей в Шри -Ланке, которые пострадали от войны, П. Маккарти обсудил социально-психологические преобразования итальянского общества после периода холодной войны, П. Аддисон прокомментировал послевоенные внутренние общественные изменения Британии и так далее **[1; 8; 9]**.

Тем не менее многие вопросы остаются открытыми в отношении описания и оценки новой ситуации в послевоенный период, одним из которых является исследование и психодиагностика аномии. Цель этой статьи – представить методические разработки и результаты психодиагностики аномии, наблюдавшейся после войны 2020 года в Арцахе **[5].**

Для проведения психодиагностики были отобраны методы наблюдения и беседы, которые проводились в нескольких целевых группах. Участники исследования были разделены в соответствии со следующими целевыми группами: участники войны, члены их семей, члены семей погибших на войне и те, кто не участвовал в войне. Характеристики послевоенной аномии были классифицированны в соответствии с результатами методов наблюдения и беседы. Результаты исследования могут быть применимы к дальнейшим исследованиям поствоенной аномии и в деле разработки методологии для преодоления аномии.

**Ключевые слова и словосочетания:** аномия, психодиагностика, участник войны, наблюдение, целевая группа.

# PSYCHODIAGNOSTICS OF POST-WAR ANOMIE IN DIFFERENT TARGET GROUPS

**NAIRA HAKOBYAN**
National Academy of Sciences of the Republic of Armenia
International Scientific-Educational Center
Deputy Director on Research Affairs
Doctor of Psychology, Professor
naira.hakobyan@isec.am

**ANNA KHACHATRYAN**
National Academy of Sciences of the Republic of Armenia
International Scientific-Educational Center
Department of Psychology, Lecturer
PhD in Psychological Sciences, Associate Professor
anna.khachatryan@isec.am

**Abstract**

The post-war period after the escalation of the conflict in Artsakh in 2020 is often characterized as a complex and crisis period. These characteristics relate to the post-war realities described in various socio-psychological studies on the adaptation and activity of human and social groups. In particular, D. Somasundaram D. and S. Sivayokan investigated the issues of psychotherapy and psych regulation of family members in Sri Lanka, who suffered from the war, P. McCarthy discussed the socio-psychological transformations of the Italian society after the Cold War period, P. Addison commented on post-war internal social changes of Britain and so on **[1; 8; 9]**.

Nevertheless, many questions remain open to describing and assessing the new situation in the post-war period, one of which is the study and psycho-diagnostics of the anomie. The purpose of this article is to present the methodological developments and results of the psycho-diagnostics of the anomie observed after the 2020 war in Artsakh **[5].**

To conduct psycho-diagnostics, we selected the observation and conversation method, which were carried out in several target groups. The participants in the study were divided in accordance with the following target groups: war participants, members of their families, members of the families of those who died in the war and those who did not participate in the war. The results of observation and conversation methods classified the characteristics of post-war anomie. The study results can be applied to further studies of post-war anomie and in developing a methodology for overcoming anomie.

**Keywords and phrases: a**nomie, Psycho-diagnostics, war participant, observation, target group.

«Անոմիա» երևույթը լայնորեն ուսումնասիրվել է հասարակագիտաական տարբեր գիտակարգերում: Անոմիայի գիտական ընկալումների ձևավորման հարցում մեծ ներդրում են ունեցել փիլիսոփա Ժ. Գույոն, սոցիոլոգներ Է. Դյուրքհեյմը, Լ. Սրոուլը, Ն. Սմելսերը, Ռ. Մերտոնը և այլք: Անոմիայի սկզբնական ուսումնասիրություններն իրենց բնույթով վերաբերում են հասարակությունների զարգացմանը խոչընդոտող երևույթների շարքին: Մի շարք սոցիոլոգների կողմից անոմիան դիտարկվում էր որպես հասարակության ներսում սոցիալական նորմերի բացակայություն կամ թուլացում, կամ էլ՝ որպես սոցիալական խմբերի կողմից այդ նորմերին անհամապատասխան վարքի դրսևորում **[2; 3; 4; 6; 7]:** Կարող ենք փաստել, որ անոմիայի, և մասնավորապես, հետպատերազմական անոմիայի սոցիալ-հոգեբանական ուսումնասիրության և հոգեախտորոշման համար դեռևս չկա որևէ միասնական ընմոնում երևույթի էական առանձնահատկությունների և դրսևորումների վերաբերյալ: Թերի են նաև հիմնախնդրի չափելիության վերաբերյալ հոգեբանների կողմից ներկայացված մեթոդական մշակումները: Այդ իսկ պատճառով մեր կողմից մշակվել է հետպատերազմական անոմիայի հոգեախտորոշմանն ուղղված մեթոդական մի համալիր, որի հիմքում ընկած են դիտման և զրույցի մեթոդների կառուցվածքային մշակումն ու իրականացումը հետազոտության մասնակիցների համապատասխան թիրախային խմբերում:

**Մեթոդների նկարագրությունը**

Հետպատերազմական անոմիայի հոգեախտորոշմանն ուղղված մեթոդներից ընտրել ենք դիտման և զրույցի մեթոդները, որոնց արդյունքներով նախատեսում ենք բնութագրել ուսումնասիրվող երևույթի հիմնական հատկանիշներն ու առանձնահատկությունները թիրախային տարբեր խմբերում: Մեթոդների իրականացման հիմքում ընկած է չափելի տեղեկատվության հավաքագրման և հետագա վերլուծության մեթոդական պահանջը: Մեր կողմից հավաքագրվել են տվյալներ հետազոտության 500 մասնակիցների (ք. Երևան) շրջանում, որոնք կազմել են հետպատերազմական հասարակությանը բնորոշ թիրախային սոցիալական խմբերը: Մեթոդների կիրառման ընթացքում կարևոր ենք համարել հավաքագրելու նաև հետազոտության բուն ընթացքի վերաբերյալ տեղեկատվություն մասնակիցների պատրաստակամության, հարցերին պատասխանելու սոցիալական կամեցողության աստիճանի և հետազոտողի անձի հանդեպ բարյացակամ վերաբերմունքի մասին:

**Արդյունքները**

**Դիտման մեթոդ**

Դիտման մեթոդն իրականացվել է մասնակիցների հետ զրույցի ընթացքում. նախապես կազմվել է ուսումնասիրվող հատկանիշների/փոփոխականների ցանկը, որոնք փակ դիտման ընթացակարգով գրանցվել և այնուհետև վերլուծվել են: Ստորև ներկայացնում ենք դիտման մեթոդի արդյունքներն՝ ըստ թիրախային խմբերում ուսումնասիրվող փոփոխականների արտահայտվածության աստիճանի:

***Բարյացակամ վերաբերմունք.*** *պատերազմի մասնակիցների՝ մասնակցություն չունեցող անձանց* թիրախային խմբերում անձինք մեծ մասամբ անպատրաստ են երկար խոսելու հետպատերազմական իրողությունների մասին, սակայն համակրանքով են վերաբերվում հետազոտության բուն ընթացքին: Պատերազմին մասնակցություն չունեցող թիրախային խմբի ներսում այն անձինք, որոնք հետպատերազմական շրջանում պահպանել են իրենց աշխատանքը, ցուցաբերել են ավելի արտահայտված բարյացակամ վերաբերմունք հետազոտության հանդեպ, քան այն անձինք, որոնք պատերազմին մասնակցություն չունենալով հանդերձ, կորցրել են իրենց աշխատանքը:

*Պատերազմի մասնակիցների ընտանիքների անդամները* պատրաստակամ են մասնակցելու հետազոտությանը, ունեն գլխավորապես բարյացակամ վերաբերմունք հետազոտողի և զրույցի թեմայի նկատմամբ: *Զոհվածների ընտանիքների անդամների* շրջանում նկատվել է հարցվողների մեծ մասի կողմից բարյացակամ և հանդուրժող վերաբերմունք հետազոտողի և զրույցի թեմայի հանդեպ: Այդ վերաբերմունքն առավել ցայտուն կերպով է արտահայտվել, երբ հարցադրումներն ու հետազոտողի հետաքրքրությունն ուղղված են եղել ընտանիքում զոհված հարազատի անձին և նրա կյանքի անցած ճանապարհին: *Անհետ կորածների ընտանիքների անդամները* բավական զգուշավոր են հետազոտությանը վերաբերվում, բարյացակամությունն արտահայտվում է չափավոր կերպով:

*Մասնագիտական խմբերում,* որոնք ներկայացված են եղել բժիշկների, փրկարարների և սոցիալական աշխատողների մասնագիտություններով, բոլոր հարցվողների մոտ նկատվում է բարյացակամ վերաբերմունք հետազոտությանը, հարցվողները պատրաստակամ են պատասխանելու հարցերին, հատկապես աչքի է ընկնում սոցիալական աշխատողների խումբը, որի ներկայացուցիչները հաճախ ցանկություն են արտահայտել լրացուցիչ ժամանակ հատկացնելու՝ իրենց մասնագիտական կարծիքն արտահայտելու

համար: *Մշակութային խմբերում* (էթնոմարգինալներ, կրոնական և ազգային փոքրամասնություններ, այլ) հետազոտության մասնակցած այն հարցվողները, որոնք դրսևորել են միգրացիոն դիրքորոշումներ (երկրից կամ բնակության վայրից մեկնելու պատրաստակամություն), ինչպես նաև էթնոմարգինալները, որոնք ներկայացել են երկէթնիկ ինքնության հատկանիշներով, ցուցաբերել են մասնակցության ցածր աստիճան և անբարյացակամ վերաբերմունք:

*Ազգային փոքրամասնություններից* հարցումներին մասնակցել են եզդիներ (6%) և մոլոկաններ (5%), իսկ երևանաբնակ կրոնական փոքրամասնություններից՝ հայ կաթոլիկներ (5%): Բոլոր հարցվողները դրսևորել են բարյացակամ վերաբերմունք և ցանկություն՝ մասնակցելու հետազոտությանը:

*Աշխատանքը պահպանած անձանց* թիրախային խմբում գրեթե բոլոր հարցվողները դրսևորել են մասնակցության պատրաստակամություն և բարյացակամ վերաբերմունք: *Գործազուրկների շրջանում* բարյացակամ վերաբերմունքը նկատվեց հարցվողների շուրջ 25%-ի մոտ: Մնացած հարցվողների վերաբերմունքն արտահայտված անբարյացակամ էր, հետազոտությանը մասնակցելու պատրաստակամությունը՝ շատ ցածր: *Անօթևան մնացած անձանց* թիրախային խմբում բարյացակամ վերաբերմունքը նկատվեց հարցվողների շուրջ 58%-ի մոտ: Մնացած հարցվողների արտահայտված վերաբերմունքն անբարյացակամ էր, հետազոտությանը մասնակցելու պատրաստակամությունը՝ նույնպես շատ ցածր:

***Արհամարհական վերաբերմունք.*** *պատերազմի մասնակիցների, նրանց ընտանիքի անդամների, ինչպես նաև զոհվածների ընտանիքների անդամների ու պատերազմին մասնակցություն չունեցող անձանց թիրախային բոլոր խմբերում* բացակայում էր հետազոտության հանդեպ արհամարհական վերաբերմունքը, սակայն *անհետ կորածների ընտանիքների* շրջանում այն ունի թույլ արտահայտվածություն:

*Մասնագիտական խմբերում, ինչպես նաև կրոնական և ազգային փոքրամասնությունների շրջանում* արհամարհական վերաբերմունքը բացակայում էր: *Ենթամշակութային խմբերում* առկա է գրեթե բոլոր այն հարցվողների մոտ, որոնք ունեն միգրացիոն դիրքորոշումներ կամ երկէթնիկ ինքնություն:

*Անօթևան մնացած անձանց* շրջանում արհամարհական վերաբերմունքը գրանցվել է շուրջ 38%-ի մոտ, իսկ գործազուրկների շրջանում՝ 42%-ի մոտ: Ի տարբերություն այս ցուցանիշների, որոնք գրեթե նույնական են, *աշ-*

*խապանքը պահպանած անձանց* շրջանում նկատվել է արհամարհական վերաբերմունքի դրսևորումների կտրուկ աճ՝ շուրջ 75% հարցվողների մոտ:

***Սոցիալական կամեցողության աստիճանը.*** *պատերազմի մասնակիցներ – մասնակցություն չունեցող անձանց թիրախային խմբերում* դիտարկվել է սոցիալական կամեցողության աստիճանի միջին արտահայտվածություն:

*Պատերազմի մասնակիցների ընտանիքների անդամների* շրջանում դիտարկվել է սոցիալական կամեցողության միջինից բարձր աստիճան: Մյուս երկու խմբերում *(զոհվածների և անհետ կորածների ընտանիքներ)* այդ ցուցանիշն աստիճանաբար թուլանում է: Այդպես, պատերազմում զոհվածների ընտանիքի անդամների շրջանում փորձարարական հետազոտության ավարտին դիտարկվել է արդեն սոցիալական կամեցողության աստիճանի միջին, իսկ անհետ կորածների ընտանիքներում՝ ցածր արտահայտվածություն:

*Բժիշկների, փրկարարների, սոցիալական աշխատողների մասնագիտական խմբերում* սոցիալական կամեցողության աստիճանը բարձր արտահատվածություն ունի, ինչն առանձնահատուկ դրսևորվեց սոցիալական աշխատողների մոտ: Ցածր արտահայտվածություն դիտարկվեց միգրացիոն կողմնորոշում կամ երկքթնիկ ինքնություն ունեցողների մոտ: Զրույցին մասնակցած կրոնական և ազգային փոքրամասնությունների շրջանում սոցիալական կամեցողության աստիճանը բարձր էր:

Հետպատերազմական շրջանում *աշխատանքը պահպանած անձանց* մոտ դիտարկվել է սոցիալական կամեցողության աստիճանի բարձր արտահայտվածություն: *Անօթևան անձինք* դրսևորեցին սոցիալական կամեցողության աստիճանի միջին, իսկ *գործազուրկ անձինք*՝ ցածր արտահայտվածություն:

***Վստահություն հետազոտողի անձի հանդեպ.*** *պատերազմի մասնակիցների, նրանց ընտանիքների, ինչպես նաև զոհվածների ընտանիքների և պատերազմում մասնակցություն չունեցող անձանց թիրախային խմբերում* դիտարկվել է վստահության բարձր աստիճան: Այդ պատկերը փոխվել է *անհետ կորածների ընտանիքներում*, որտեղ վստահությունը բավականին թույլ էր արտահայտված. ընտանիքների անդամներից գրեթե բոլորը հետազոտողի հանդեպ չափազանց կասկածամիտ էին տրամադրված:

*Մասնագիտական բոլոր խմբերում* նույնպես դիտարկվել է վստահության բարձր աստիճան: Վստահության համեմատաբար ցածր աստիճան դիտարկվեց *միգրացիոն կողմնորոշումներ ունեցող անձանց* մոտ, իսկ մնա-

ցած *մշակութային* ենթախմբերում վստահության բարձր աստիճանը պահպանվեց:

Թեպետ *աշխատանքը պահպանած անձանց* շրջանում դիտարկվել է հետազոտողի հանդեպ վստահության բարձր աստիճան, փոքր ինչ այդ ցուցանիշը թուլացել է *անօթևան մնացած անձանց* մոտ, իսկ *գործազուրկ անձանց* շրջանում դիտարկվել է վստահության գերազանցապես ցածր աստիճան:

***Համագործակցելու պատրաստակամություն.*** *պատերազմի մասնակիցներ – մասնակցություն չունեցող անձանց թիրախային խմբերում* նկատվել է համագործակցելու պատրաստակամության միջին մակարդակ:

*Պատերազմի մասնակիցների, զոհվածների և անհետ կորածների ընտանիքներում* համագործակցելու պատրաստակամության մակարդակները աստիճանաբար թուլանում են՝ դրսևորելով համեմատաբար բարձր մակարդակը *պատերազմի մասնակիցների*, իսկ ցածր մակարդակը՝ *անհետ կորածների* ընտանիքների շրջանում:

*Մասնագիտական խմբերում* դիտարկվել է համագործակցության բարձր մակարդակ, իսկ քննվող *ենթամշակութային խմբերում*՝ միջին մակարդակ:

*Աշխատանքը պահպանած*, *անօթևան մնացած և գործազուրկ անձանց* շրջանում համագործակցության պատրաստակամությունը դրսևորվում է աստիճանաբար թուլացման միտվածությամբ: Այսպես, աշխատող անձանց մոտ այն դրսևորվել է ամենաբարձր, իսկ գործազուրկ անձանց մոտ՝ ամենացածր մակարդակները:

Դիտման մեթոդի ներքոնշյալ փոփոխականների (շարժումների բնութագրումը, ձայնի տոնայնությունը, բառապաշարի ընտրությունը և լոգոնևրոզի) խումբը ձևավորվել է բացահայտելու համար:

***Շարժումների բնութագրումը.*** *պատերազմի մասնակիցների* մոտ շարժումները հիմնականում հանգիստ են, նկատվում է դանդաղաշարժություն զրույցի ընթացքում: *Պատերազմին մասնակցություն չունեցող անձանց* մոտ շարժումները հիմնականում հանգիստ են, հավասարակշռված: Երբեմն նկատվում են նյարդային շարժումներ: Ինչպես պատերազմի մասնակիցների, այնպես էլ՝ մասնակցություն չունեցող անձանց կողմից չեն գրանցվել ձեռքերով կտրուկ շարժումներ կամ հարվածներ սեղանին, այլ առարկաներին:

*Պատերազմի մասնակիցների ընտանիքների անդամների* մոտ դիտարկվել են հիմնականում հանգիստ, հավասարակշռված շարժումներ: Մ-

յուս երկու խմբերում՝ *զոհվածների և անհետ կորածների ընտանիքների անդամների* մոտ շարժումները հիմնականում նյարդային, անհավասարակշիռ են: Ձեռքերի շարժումները լայնաթափ են և արտահայտիչ: Այդ երկու խմբերում նկատվում է անկայունություն շարժումների ռիթմի և խտության հատկանիշներով: Գրանցվել են մեկ նյարդային, անհավասարակշիռ, մեկ՝ սառեցված դիրքով, դանդաղ շարժումներ: Պատերազմի մասնակիցների ընտանիքի անդամների կողմից չեն գրանցվել ձեռքերով կտրուկ շարժումներ կամ հարվածներ սեղանին, այլ առարկաներին, ինչը չի կարելի ասել մյուս երկու քննվող խմբերի մասին, որտեղ արձանագրվել են հազվադեպ հարվածներ տարբեր առարկաներին:

*Մասնագիտական խմբերի* մոտ շարժումները հանգիստ են և հավասարակշռված: *Ենթամշակութային խմբերում* շարժումները նույնպես հիմնականում հանգիստ են, սակայն երբեմն նկատվում են նյարդային շարժումներ: Ինչպես մասնագիտական, այնպես էլ ենթամշակութային խմբերի ներկայացուցիչների կողմից չեն գրանցվել հարվածներ սեղանին կամ այլ առարկաներին:

*Աշխատողների շրջանում* շարժումները հանգիստ են, հավասարակշռված: Նկատվում է որոշակի արագաշարժության միտում զրույցի ընթացքում: Արագաշարժությունը գրեթե բացակայում է *գործազուրկ և անօթևան մնացած* անձանց մոտ: Այս վերջին երկու խմբերում նկատվում է անկայունություն շարժումների ռիթմի և խտության հատկանիշներով: Գրանցվել են մեկ նյարդային, անհավասարակշիռ, մեկ՝ սառեցված դիրքով, դանդաղ շարժումներ: Աշխատանքը պահպանած անձանց մոտ չեն գրանցվել հարվածներ սեղանին կամ այլ առարկաներին, սակայն նման շարժումներ դիտարկվել են գործազուրկ և անօթևան մնացած անձանց մոտ:

***Ձայնի տոնայնություն.*** *պատերազմի մասնակիցներ – մասնակցություն չունեցող անձանց թիրախային խմբերում* էլ դիտարկվել է ձայնի ցածր տոնայնություն:

Ձայնի տոնայնությունը ցածր է *պահպանվել պատերազմի մասնակիցների ընտանիքների անդամների* կողմից: *Զոհվածների և անհետ կորածների ընտանիքներում* ձայնի տոնայնությունը կայուն չէր և դրսևորում էր բարձրանալու պարբերական միտվածություն:

*Մասնագիտական և ենթամշակութային* երկու խմբերում էր դիտարկվել էր ձայնի ցածր տոնայնություն:

*Աշխատանքը պահպանած* անձանց շրջանում այլ մեթոդիկաների կիրառման ընթացքում հիմնականում պահպանվում էր ձայնի ցածր տոնայ-

նություն, սակայն *անօթևան և գործազուրկ* անձանց շրջանում ձայնի տոնայնությունը հաճախ բարձրանում էր:

***Բառապաշարի ընտրություն.*** *պատերազմին մասնակցած*, ինչպես նաև *մասնակցություն չունեցող անձանց* մոտ բառապաշարը չափավոր է, հաճախ կիրառվող բառերը կրկնվելու միտում ունեն, պահպանվում է առօրյա խոսակցական լեզուն:

*Պատերազմի մասնակիցների ընտանիքների* անդամների մոտ բառապաշարը չափավոր է, հաճախ կիրառվող բառերը կրկնվելու միտում ունեն, պահպանվում է առօրյա խոսակցական լեզուն: Զոհվածների և անհետ կորածների ընտանիքների անդամների մոտ բառապաշարը սուղ է, հաճախ կիրառվող բառերը կրկնվելու միտում ունեն, նկատվում է խոսքի միատարրություն, մեկ թեմայի շուրջ խոսքի ֆիքսվածություն, պահպանվում է առօրյա խոսակցական լեզուն:

*Մասնագիտական խմբերում* բառապաշարը սուղ է, հաճախ կիրառվող բառերը չունեն կրկնվելու միտում, նկատվում է խոսքի բազմատարրություն, պահպանվում է առօրյա խոսակցական լեզուն, որի հետ զուգահեռ կիրառվում է նաև մասնագիտական բանավոր խոսքը: *Ենթամշակութային խմբերում* բառապաշարը չափավոր է, հաճախ կիրառվող բառերը կրկնվելու միտում ունեն, պահպանվում է առօրյա խոսակցական լեզուն:

*Աշխատանքը պահպանած* անձանց մոտ բառապաշարը չափավոր է, հաճախ կիրառվող բառերը կրկնվելու միտում ունեն, պահպանվում է առօրյա խոսակցական լեզուն: *Գործազուրկ և անօթևան* մնացած անձանց մոտ բառապաշարը համեմատաբար հարուստ է, բազմատարր, նյարդային, հաճախ կիրառվող բառերը չունեն կրկնվելու միտում, պահպանվում է առօրյա խոսակցական լեզուն:

***Լոգոնևրոզի դրսևորումներ.*** *Պատերազմի մասնակիցների* շրջանում լոգոնևրոզի դրսևորումները նկատվել են հարցվողների 7% մոտ: *Պատերազմում մասնակցություն չունեցող անձանց* շրջանում՝ հարցվողների 2% մոտ:

*Պատերազմի մասնակիցների ընտանիքների* շրջանում լոգոնևրոզի դրսևորումները դիտարկվել են հարցվողների 4% մոտ: *Պատերազմում զոհվածների ընտանիքների* անդամների մոտ՝ շուրջ 28%, իսկ անհետ *կորածների ընտանիքների անդամների* մոտ՝ հարցվողների 33% մոտ:
*Մասնագիտական խմբերում* լոգոնևրոզի դրսևորումներ չեն դիտարկվել: *Ենթամշակութային խմբերում*՝ շուրջ 3% մոտ:

*Աշխապանքը պահպանած* անձանց շրջանում լոգոնևրոզի դրսևորումները դիտարկվել են հարցվողների շուրջ 5%-ի մոտ, *գործազուրկների շրջանում՝* հարցվողների 38%-ի, իսկ *անօթևան մնացած* անձանց շրջանում՝ 42%-ի մոտ:

**Զրույցի մեթոդ**

Ինչպես վերը նշվեց, հետպատերազմական անոմիայի հոգեախտորոշման նպատակով կիրառվել է նաև զրույցի մեթոդը նույն թիրախային խմբերում:

Զրույցի կառուցվածքային հարցադրումները ձևակերպվել են հետևյալները՝

1) ընդհանուր վերաբերմունքը հետազոտության նկատմամբ.
2) ընդհանուր գնահատականը՝ հետպատերազմական փուլի վերաբերյալ.
3) հետպատերազմական փուլում չլուծված խնդիրների ռեյտինգավորում.
4) հետպատերազմական փուլում լուծված խնդիրների ռեյտինգավորում:

Մեր կողմից իրականացված զրույցի մեթոդի արդյունքները բերվում են ստորև՝ ըստ թիրախային խմբերի:

**Ընդհանուր վերաբերմունքը հետազոտության նկատմամբ.** *պատերազմի մասնակիցների* կողմից հետազոտության նկատմամբ ընդհանուր վերաբերմունքը դրական էր: Թեև մասնակցության ակտիվությունը դրսևորվել է չափավոր, այդուհանդերձ, հետազոտության թեմատիկան կարևորվել է և իմաստավորվել հարցվողների շրջանում: Պատերազմին մասնակցություն չունեցող անձինք փոքր ինչ բազմակարծիք էին հետազոտության հանդեպ: Ընդհանուր վերաբերմունքը հետազոտության ինկատմամբ քննվող երկու խմբում դրական է:

*Պատերազմի մասնակիցների*, ինչպես նաև՝ *զոհվածների ընտանիքների* կողմից հետազոտության նկատմամբ ընդհանուր վերաբերմունքը դրական էր: Թեև մասնակցության ակտիվությունը դրսևորվել է չափավոր, այդուհանդերձ, հետազոտության թեմատիկան կարևորվել է և իմաստավորվել հարցվողների շրջանում: *Անհետ կորածների* ընտանիքի անդամների կողմից դրսևորվել է որոշակի զգուշավորություն հետազոտության նկատմամբ ընդհանուր վերաբերմունք արտահայտելիս:

*Մասնագիտական խմբերի* ներկայացուցիչների կողմից հետազոտության նկատմամբ ընդհանուր վերաբերմունքը խիստ դրական էր: Հատկապես պոզիտիվ վերաբերմունքը, ինչպես նաև՝ աջակցելու պատրաստակամությունը ցուցաբերեցին սոցիալական աշխատողները, որոնք հետաքրքրված էին սոցիալական հնչեղություն ունեցող թեմայի ուսումնասիրման մեջ: *Ենթամշակութային խմբերում* հարցվողները գերազանցապես նեյտրալ գնահատականներ են տվել, հիմնականում դրսևորել են որոշակի զգուշավորություն հետազոտության նկատմամբ ընդհանուր վերաբերմունք արտահայտելիս:

*Աշխատանքը պահպանած անձանց* շրջանում հիմնականում դրսևորվում էր չափավոր արտահայտված հետաքրքրություն հետազոտության նկատմամբ: Առավել արտահայտված դրական վերաբերմունք դրսևորել են *անօթևան մնացած* անձինք, որոնց համար այս հետազոտությանը մասնակցելը ևս մի առիթ էր բարձրաձայնելու իրենց հուզող խնդիրները: *Գործազուրկների շրջանում* թեև պահպանվում էր ընդհանուր առմամբ դրական վերաբերմունք, սակայն աչքի էր ընկնում որոշակի զգուշավորություն հետազոտության նկատմամբ ընդհանուր վերաբերմունք արտահայտելիս:

**Ընդհանուր գնահատականը հետպատերազմական փուլի վերաբերյալ.** զրույցի ընթացքում նկատվել է *պատերազմի մասնակիցների և մասնակցություն չունեցող անձանց* գնահատականներում որոշակի տարակարծություն: Պատերազմի մասնակից հարցվողներն իրենց գնահատականները հնչեցնելիս ներկա իրողությունները ակամայից համեմատում էին պատերազմում իրենց կողմից հաղթահարված դժվարությունների հետ և համեմատաբար ավելի հանգիստ դիրքորոշում էին ցուցաբերում հետպատերազմական փուլում նկատվող սոցիալական, հոգեբանական, տնտեսական և անվտանգային անորոշ իրողությունների հանդեպ: Հետպատերազմական կենսակերպի ընդհանուր անորոշությունն ինքնին գնահատում էին նորմալ երևույթ: Պատերազմում մասնակցություն չունեցող անձանց գնահատականներում շեշտադրվում էին հատկապես իրենց ապագայի հանդեպ անորոշ սպասումները, որոնք առանձնանում էին ապագա անելիքների հանդեպ թերահավատությամբ և պահանջմունքների որոշակի սահմանափակմամբ: Այս խմբում գերակա էին անվտանգության և առողջության պահպանման պահանջմունքները: Պատերազմի մասնակիցները հետպատերազմական փուլում կարևորել են ինքնուրույնության և հաղորդակցման պահանջմունքները:

Զրույցի ընթացքում *պատերազմի մասնակիցների ընտանիքների* անդամներն իրենց գնահատականները հնչեցնելիս ներկա իրողությունները

ակամայից համեմատում էին պատերազմում իրենց ազգականի կողմից հաղթահարված դժվարությունների հետ: Դրա հետ զուգահեռ, միտում կա պատերազմի մասնակցի կողմից արդեն հաղթահարված դժվարությունները կամ դրանց հետևանքները ներկայացնելու որպես դեռևս գոյություն ունեցող և արդիական խնդիրներ: Հետպատերազմական կենսակերպն ընդհանուր առմամբ գնահատում էին որպես անորոշ և անկայուն: *Պատերազմում զոհվածների ընտանիքների* անդամների գնահատականներում հետպատերազմական փուլը գնահատվում էր հիմնականում վշտի վերապրման տեսանկյունից, իրենց զոհված ազգականի՝ միջավայրում ճանաչված և գնահատված լինելու հանգամանքից ելնելով: Անհետ կորածների ընտանիքներում հետպատերազմական փուլի գնահատականներն առանձնանում էին կտրուկ, երբեմն ծայրահեղ տարբերվող ձևակերպումներով: Ընդհանուր առմամբ, *զոհվածների և անհետ կորածների ընտանիքների* անդամների գնահատականներում նկատվում էր  պահանջմունքների որոշակի սահմանափակման միտվածություն՝ ուղղված հարազատի կորստի շեշտադրմանը և նրա կյանքի մեծարմանը: Այս խմբում գերակա էր կենսագրական հիշողության պահպանման պահանջմունքը: Հետպատերազմական փուլում անվտանգային պահանջմունքները կարևորվել են հատկապես պատերազմի մասնակիցների ընտանիքների անդամների կողմից:

Զրույցի ընթացքում *մասնագիտական խմբերի* ներկայացուցիչները հետպատերազմական փուլը ընդհանուր առմամբ գնահատում էին որպես անորոշ և անկայուն: Մասնագետների կողմից շեշտադրվում է միջավայրում նկատվող մարդկանց վարքագծի կտրուկ, երբեմն ագրեսիվ կողմը: *Ենթամշակութային խմբերի* ներկայացուցիչների գնահատականներում նկատվում էր  պահանջմունքների որոշակի սահմանափակման միտվածություն՝ ուղղված առօրեական առաջնահերթ խնդիրների լուծումներին: Այս խմբում գերակա էր տվյալ ենթամշակութային խմբին պատկանելիության պահպանման պահանջմունքը, որը դրվում էր սոցիալական սպասումների հիմքում:

*Աշխատանքը պահպանած* անձանց ձևակերպումներում հետպատերազմական փուլը ընդհանուր առմամբ գնահատվում էր որպես նոր իրողություն: Այն բնութագրվում էր «Ես»-ի և միջավայրի մասին նախկին պատկերացումների վերափոխմամբ և առկա անորոշությունների հետ զուգահեռ՝ ճկուն, նոր վարքագիծ ձևավորելու ունակությամբ: Շեշտադրվում է այս փուլում ընտանեկան կայունության ամրապնդման պահանջմունքը: *Գործազուրկ և անօթևան* մնացած անձանց գնահատականներում նկատվում էր  հետպատերազմական փուլի՝ որպես միջանկյալ շրջանի, մասին շեշտադրումը: Այն

ընկալվում էր որպես անցողիկ, վերափոխվող, որոշ դեպքերում նաև՝ սխալական կամ անհասկանալի շրջափուլ: Նկատվում էր պահանջմունքների որոշակի սահմանափակման միտվածություն՝ ուղղված առօրեական առաջնահերթ խնդիրների լուծումներին: Այս խմբում գերակա էր սոցիալական սպասումների ցածր աստիճան:

***Հետպատերազմական փուլում չլուծված խնդիրների ռեյտինգավորում.*** *պատերազմի մասնակիցների* շրջանում զրույցի մեթոդի արդյունքներով գրանցվել է չլուծված խնդիրների շարքի հետևյալ ռեյտինգավորումը (ըստ նվազման սկզբունքի)՝

1. աշխատանքով ապահովվածություն.
2. հաղորդակցման բավարար մակարդակ.
3. սոցիալական սպասումների որոշակիություն.
4. անվտանգություն.
5. անձնական կյանք:

*Պատերազմին մասնակցություն չունեցող անձանց* շրջանում զրույցի մեթոդի արդյունքներով գրանցվել է չլուծված խնդիրների շարքի հետևյալ ռեյտինգավորումը (ըստ նվազման սկզբունքի)՝

1. անվտանգություն.
2. սոցիալական սպասումների որոշակիություն.
3. աշխատանքով ապահովվածություն.
4. անձնական կյանք.
5. հաղորդակցման բավարար մակարդակ:

*Պատերազմին մասնակիցների ընտանիքի* անդամների շրջանում զրույցի մեթոդի արդյունքներով գրանցվել է չլուծված խնդիրների շարքի հետևյալ ռեյտինգավորումը (ըստ նվազման սկզբունքի)՝

1. անվտանգություն.
2. սոցիալական սպասումների որոշակիություն.
3. աշխատանքով ապահովվածություն.
4. անձնական կյանք.
5. հաղորդակցման բավարար մակարդակ:

*Պատերազմում զոհվածների ընտանիքների* անդամների շրջանում զրույցի մեթոդի արդյունքներով գրանցվել է չլուծված խնդիրների շարքի հետևյալ ռեյտինգավորումը (ըստ նվազման սկզբունքի)՝

1. հաղորդակցման բավարար մակարդակ.
2. սոցիալական սպասումների որոշակիություն.
3. աշխատանքով ապահովվածություն.

4. անվտանգություն.
5. անձնական կյանք:

*Պատերազմում անհետ կորածների* ընտանիքների անդամների շրջանում զրույցի մեթոդի արդյունքներով գրանցվել է չլուծված խնդիրների շարքի հետևյալ ռեյտինգավորումը (ըստ նվազման սկզբունքի)՝

1. սոցիալական սպասումների որոշակիություն.
2. հաղորդակցման բավարար մակարդակ.
3. անվտանգություն.
4. աշխատանքով ապահովվածություն.
5. անձնական կյանք:

*Մասնագիտական խմբերի* ներկայացուցիչների շրջանում զրույցի մեթոդի արդյունքներով գրանցվել է չլուծված խնդիրների շարքի հետևյալ ռեյտինգավորումը (ըստ նվազման սկզբունքի)՝

1. անվտանգություն.
2. սոցիալական սպասումների որոշակիություն.
3. անձնական կյանք.
4. աշխատանքով ապահովվածություն.
5. հաղորդակցման բավարար մակարդակ:

*Ենթամշակութային խմբերի* ներկայացուցիչների շրջանում զրույցի մեթոդի արդյունքներով գրանցվել է չլուծված խնդիրների շարքի հետևյալ ռեյտինգավորումը (ըստ նվազման սկզբունքի)՝

1. սոցիալական սպասումների որոշակիություն.
2. Անվտանգություն.
3. աշխատանքով ապահովվածություն.
4. հաղորդակցման բավարար մակարդակ.
5. անձնական կյանք:

Այդ ցուցանիշները գերազանցապես դրսևորել են միգրացիոն նպատակադրվածություն ունեցող անձինք: Էթնիկ և կրոնական փոքրամասնությունների ներկայացուցիչների շրջանում չլուծված խնդիրների ռեյտինգավորումը ստացել է հետևյալ տեսքը՝

1. անվտանգություն.
2. աշխատանքով ապահովվածություն.
3. հաղորդակցման բավարար մակարդակ.
4. սոցիալական սպասումների որոշակիություն.
5. անձնական կյանք:

*Աշխատանքը պահպանած* անձանց շրջանում զրույցի մեթոդի արդյունքներով գրանցվել է չլուծված խնդիրների շարքի հետևյալ ռեյտինգավորումը (ըստ նվազման սկզբունքի)՝

1. անվտանգություն.
2. սոցիալական սպասումների որոշակիություն.
3. անձնական կյանք.
4. հաղորդակցման բավարար մակարդակ.
5. աշխատանքով ապահովվածություն:

*Գործազուրկ անձանց* շրջանում զրույցի մեթոդի արդյունքներով գրանցվել է չլուծված խնդիրների շարքի հետևյալ ռեյտինագավորումը (ըստ նվազման սկզբունքի)՝

1. աշխատանքով ապահովվածություն.
2. սոցիալական սպասումների որոշակիություն.
3. անվտանգություն.
4. հաղորդակցման բավարար մակարդակ.
5. անձնական կյանք:

*Անօթևան անձանց* շրջանում զրույցի մեթոդի արդյունքներով գրանցվել է չլուծված խնդիրների շարքի հետևյալ ռեյտինագավորումը (ըստ նվազման սկզբունքի)՝

1. սոցիալական սպասումների որոշակիություն.
2. աշխատանքով ապահովվածություն.
3. անվտանգություն.
4. հաղորդակցման բավարար մակարդակ.
5. անձնական կյանք:

***Հետպատերազմական փուլում լուծված խնդիրների ռեյտինգավորում.*** *պատերազմի մասնակիցների* շրջանում զրույցի մեթոդի արդյունքներով գրանցվել է լուծված խնդիրների շարքի հետևյալ ռեյտինագավորումը (ըստ նվազման սկզբունքի)՝

1. ինքնուրույնություն.
2. անձնական կյանք.
3. առողջություն.
4. հաղորդակցման բավարար մակարդակ.
5. աշխատանքով ապահովվածություն:

*Պատերազմին մասնակցություն չունեցող անձանց* շրջանում զրույցի մեթոդի արդյունքներով գրանցվել է լուծված խնդիրների շարքի հետևյալ ռեյտինագավորումը (ըստ նվազման սկզբունքի)՝

1. հաղորդակցման բավարար մակարդակ.
2. անձնական կյանք.
3. աշխատանքով ապահովվածություն.
4. առողջություն.
5. ինքնուրույնություն:

Պատերազմի մասնակիցների ընտանիքների շրջանում զրույցի մեթոդի արդյունքներով գրանցվել է լուծված խնդիրների շարքի հետևյալ ռեյտինգավորումը (ըստ նվազման սկզբունքի)՝

1. հաղորդակցման բավարար մակարդակ.
2. աշխատանքով ապահովվածություն.
3. ինքնուրույնություն.
4. անձնական կյանք.
5. առողջություն:

*Պատերազմում զոհվածների և անհետ կորածների* ընտանիքների անդամները դրսևորել են նմանատիպ պատկերացումներ լուծված խնդիրների վերաբերյալ, որոնք նույնպես ռեյտինգավորվել են (ըստ նվազման սկզբունքի)՝

1. հաղորդակցման բավարար մակարդակ.
2. աշխատանքով ապահովվածություն.
3. ինքնուրույնություն.
4. առողջություն.
5. անձնական կյանք:

*Մասնագիտական խմբերի* ներկայացուցիչների շրջանում զրույցի մեթոդի արդյունքներով գրանցվել է լուծված խնդիրների շարքի հետևյալ ռեյտինգավորումը (ըստ նվազման սկզբունքի)՝

1. հաղորդակցման բավարար մակարդակ.
2. աշխատանքով ապահովվածություն.
3. ինքնուրույնություն.
4. անձնական կյանք.
5. առողջություն:

*Ենթամշակութային խմբերի* ներկայացուցիչները դրսևորել են հետևյալ պատկերացումները լուծված խնդիրների վերաբերյալ, որոնք նույնպես ռեյտինգավորվել են (ըստ նվազման սկզբունքի)՝

1. անձնական կյանք.
2. ինքնուրույնություն.
3. առողջություն.

4. հաղորդակցման բավարար մակարդակ.
5. աշխատանքով ապահովվածություն:

*Աշխատանքը պահպանած* անձանց շրջանում զրույցի մեթոդի արդյունքներով գրանցվել է լուծված խնդիրների շարքի հետևյալ ռեյտինգավորումը (ըստ նվազման սկզբունքի)՝

1. ինքնուրույնություն.
2. անձնական կյանք.
3. առողջություն.
4. հաղորդակցման բավարար մակարդակ.
5. աշխատանքով ապահովվածություն:

*Գործազուրկ անձինք* դրսևորել են հետևյալ պատկերացումները լուծված խնդիրների վերաբերյալ, որոնք նույնպես ռեյտինգավորվել են (ըստ նվազման սկզբունքի)՝

1. աշխատանքով ապահովվածություն.
2. ինքնուրույնություն.
3. հաղորդակցման բավարար մակարդակ.
4. առողջություն.
5. անձնական կյանք:

*Անօթևան մնացած* անձանց շրջանում գրանցվել են հետևյալ պատկերացումները լուծված խնդիրների վերաբերյալ, որոնք նույնպես ռեյտինգավորվել են (ըստ նվազման սկզբունքի)՝

1. ինքնուրույնություն.
2. աշխատանքով ապահովվածություն.
3. առողջություն.
4. հաղորդակցման բավարար մակարդակ.
5. անձնական կյանք:

**Եզրակացություն**

Բարյացակամ/արհամարհական վերաբերմունքի, սոցիալական կամեցողության աստիճանի, հետազոտողի անձի հանդեպ վստահության և համագործակցելու պատրաստակամության փոփոխականների ներառումը դիտման մեթոդի կառուցվածքում նպատակ ուներ բացահայտելու ոչ միայն թիրախային խմբերի՝ հետազոտությանը մասնակցելու պատրաստակամությունը, այլև պարզելու հետպատերազմական շրջափուլի վերապրման սոցիալ-հոգեբանական առանձնահատկությունները: Պարզ դարձավ, որ աշխատանքը պահպանած անձանց թիրախային խումբը՝ անկախ պատերազմին մասնակցության հանգամանքից, ընդհանուր առմամբ, համարձակ է իր

դիրքորոշումներն արտահայտելու մեջ, չնայած աչքի է ընկնում որոշակի արհամարհական վերաբերմունքով հետազոտողի կողմից բարձրացված հարցադրումների հանդեպ: Գործազուրկ և անօթևան անձանց թիրախային խմբերում մարդկանց պատասխանների հուզական հագեցվածությունը թույլ է տալիս ենթադրել, որ հիմնախնդրի բարձրաձայնումը կուտակված դժգոհությունն ու սպասումներն արտահայտելու միջոց է: Նման հուզական արձագանքը հուշում է մեզ, որ հետագա ուսումնասիրություններում անհրաժեշտ է բացահայտել նաև հետպատերազմական շրջանում անոմիայի և հոգեբանական պաշտպանական մեխանիզմների փոխկապվածությունը: Հետազոտության և, ընդհանուր առմամբ, հիմնախնդրի հադեպ վերաբերմունքը պատկերավոր կերպով արտահայտեց թիրախային տարբեր խմբերում անոմիայի հատկանիշները՝ կախված պատերազմին մասնակցության աստիճանից և կորուստ ունենալու հանգամանքից: Հետպատերազմական շրջանի անոմիկ հատկանիշները, որքան էլ որ նկատվել են բոլոր թիրախային խմբերում, այդուհանդերձ, առավել ցայտուն դրսևորվեցին անհետ կորածների ընտանիքներում, որոնց պատասխաններում գերիշխում էր անորոշությունը, ապագայի հադեպ սպասումների ձևակերպման անկարողությունը:

Հետպատերազմական շրջանում անոմիայի հատկանիշները դրսևորվել են հարցվողների շարժումների անկայունությամբ ռիթմի և խտության հատկանիշներով, սուղ բառապաշարով, հաճախ կիրառվող բառերը կրկնվելու միտումով, խոսքի միատարրությամբ, մեկ թեմայի շուրջ խոսքի ֆիքսվածությամբ, լոգոնևրոզի տարբեր դրսևորումներով: Ընդհանուր առմամբ՝ կիրառված մեթոդների արդյունքում բացահայտվել են հետպատերազմական անոմիայի այնպիսի հատկանիշներ, ինչպիսիք են՝ պատասխանների անորոշությունը, ապագայի հանդեպ սպասումների ձևակերպման դժվարությունները կամ անկարողությունը, ապագա անելիքների հանդեպ թերահավատությունը և պահանջմունքների որոշակի սահմանափակումը:

***Հոդվածը փպագրվում է 21T-5A311 ծածկագրով «Հետպատերազմական շրջանում անձի արժեհամակարգի ճգնաժամի և անոմիայի հիմնախնդիրը և հաղթահարման մեթոդաբանությունը» գիտական թեմայի շրջանակներում:***

1. Addison, Paul, Now the war is over: a social history of Britain, 1945-51 (London, Jonathan Cape, 1985)
2. Agnew, R. (2006). Pressured into crime: An overview of general Strain Theory. Los Angeles: Roxbury Publication.
3. Berk, B. B. (2006). Macro-micro relationships in Durkheim's analysis of egoistic suicide. *Sociological Theory*, *24*(1), 58–80. https://doi.org/10.1111/j.0735-2751.2006.00264.x
4. Fromm, E. (1973). The Anatomy of Human Destructiveness, New York: Henry Holt. 534 p. Resource document. https://lust-for-life.org/Lust-For-Life/_Textual/ErichFromm_TheAnatomyOfHumanDestructiveness_1973_534pp/ErichFromm_TheAnatomyOfHumanDestructiveness_1973_534pp.pdf
5. Hakobyan, N., Gevorgyan, S., Petrosyan, L., Khachatryan, A. (2022). The problem of personal development in the context of social anomie. *Wisdom*, *2*(22), 7-14.
6. Kurtenbach, S., Rettberg, A. (2018). Understanding the Relation between War Economies and Post-War Crime. Third World Thematics: A TWQ Journal, 3:1, 1-8 DOI: https://doi.org/10.1080/23802014.2018.1457454
7. Lafaye, C. (2012). Anomie, exclusion, désaffiliation: dissolution de la cohésion sociale ou du lien social ? *Pensée plurielle*, 11-35.
8. McCarthy, Patrick, The crisis of the Italian state: from the origins of the Cold War to the fall of Berlusconi and beyond (New York, St. Martin's Press, 1997)
9. Somasundaram D., Sivayokan S., Rebuilding community resilience in a post-war context: developing insight and recommendations: A qualitative study in Northern Sri Lanka // International Journal of Mental Health Systems, 2013, 7(3), 24, https://doi.org/10.1186/1752-4458-7-3

# ԱՆՁԻ ՀՈԳԵԿԱՆ ՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՈՐՊԵՍ ՇԻԶՈՖՐԵՆԻԱՅԻ ԱՌԱՋԱՑՄԱՆ ՊԱՏՃԱՌ

**ՎԱԶԳԵՆ ՊՈՂՈՍՅԱՆ**
ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա,
գիտակրթական միջազգային կենտրոն,
հոգեբանական գիտությունների թեկնածու, դոցենտ
vazgen.poghosyan@isec.am

**ՆՈՆԱ ՄԵՍՐՈՊՅԱՆ**
ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա,
գիտակրթական միջազգային կենտրոն,
հոգեբանության ամբիոն, մագիստրանտ
nona.mesropyan.1999@mail.ru

**Համառոտագիր**

Շիզոֆրենիան հոգեկան խանգարում է, որն ազդում է գլխուղեղի վրա՝ հանգեցնելով մարդու մոտ, զգայությունների, ընկալումների, մտածողության, վարքագծերի զգալի խանգարման: Առողջ մարդու մոտ դրանք, որպես հոգեկան առողջության նախապայման, լիարժեք ներդաշնակությամբ են բնորոշվում, իսկ շիզոֆրենիայի պարագայում այդ ներդաշնակությունը խախտվում է: Քանի որ գլխուղեղը մարդու գլխավոր օրգան համակարգն է, ապա նրա ֆունկցիայի խանգարումը բերում է ամբողջ օրգան համակարգի ֆունկցիայի խանգարման, ինչը, բնականաբար, ազդում է մարդու կյանքի որակի վրա, իսկ հոգեբանությունն ուղղված է մարդու կյանքի որակի բարելավմանը, ուստի կենտրոնական խնդիր է համարվում շիզոֆրենիայի զարգացմանը նպաստող հոգեբանական կողմի բացահայտումը: Շիզոֆրենիան ժամանակակից կլինիկական հոգեբանության և հոգեբուժության ամենաարդի խնդիրներից մեկն է: Դրա ապացույցներից մեկը կարող է լինել այն, որ աշխարհի բոլոր երկրներում անցկացվում են հսկայական քանակությամբ գիտական ուսումնասիրություններ՝ այն նպատակով, որ բացահայտեն հիվանդության պատճառներն ու հիմքում ընկած մեխանիզմները, որպեսզի հնարավոր լինի կանխել կամ շրջել դրա զարգացումը: Աշխատանքի արդիականությունը պայմանավորված է նրանով, որ հոգեբանության արդի դրույթներից է այնպիսի խնդիրների ուսումնասիրությունը, որոնք դեռ ամբողջությամբ, կամ մասամբ բացահայտված չեն, այդպիսի խնդիրներից է նաև շիզոֆրենիայի, բնավորության գծերի և պաշտպանական մեխանիզմ-

ների միջև եղած կապը: Վերջին տարիներին անցկացվում է մասսայական հետազոտական աշխատանք հիվանդության ախտանիշների նախադեբյուտային վաղ հայտնաբերման և վնասակար ազդեցության նվազեցման նպատակով, ուստի հոդվածում ներկայացված հետազոտությունն ու մեր առաջ քաշված խնդիրը արդիական է, քանի որ կան տեսական և գործնական բացեր տվյալ հարցի շուրջ:

Հետազոտության նպատակն է՝ ուսումնասիրել շիզոֆրենիայով հիվանդ անձանց մոտ բնավորության շեշտվածության և պաշտպանական մեխանիզմների միջև առկա կապը՝ հիվանդության վառ արտահայտվածության և ռեմիսիայի փուլում:

Հոդվածում անդրադարձել ենք հետևյալ խնդիրներին՝

- ուսումնասիրել շիզոֆրենիան և բնավորության այն շեշտված գծերը, որոնց պաթոլոգիական դրսևորումները կնպաստեն շիզոֆրենիայի առաջացմանը.
- ուսումնասիրել պաշտպանական մեխանիզմների և առանձնացված բնավորության շեշտված գծերի կապը շիզոֆրենիայի զարգացման մեջ.
- առանձնացնել նպատակից բխող և ընտրանքին համապատասխանող մեթոդներ.
- իրականացնել հետազոտական աշխատանք և համեմատել ու վերլուծել ստացված արդյունքները:

Գործնական նշանակությունն այն է, որ տվյալ աշխատանքը թույլ կտա կլինիկական հոգեբաններին և հոգեբույժներին շիզոֆրենիա հիվանդության ախտորոշման և բուժման ընթացքում ուշադրությունը սևեռել հիվանդի մոտ առկա բնավորության շեշտվածությանը և պաշտպանական մեխանիզմներին, ինչպես նաև՝ չգործող մեխանիզմներին, քանի որ հիվանդության զարգացման մեջ կարևոր հանգամանք են անձնային փոփոխությունները, որոնք էլ տանում են դեպի անձի դեֆեկտի:

**Բանալի բառեր և բառակապակցություններ.** շիզոֆրենիա, պաշտպանական մեխանիզմներ, բնավորության շեշտված գծեր, էնդոգեն հիվանդություն, ռեմիսիայի փուլ:

# ОСОБЕННОСТИ ПСИХИЧЕСКИХ СВОЙСТВ ЛИЧНОСТИ КАК ПРИЧИНЫ ВОЗНИКНОВЕНИЯ ШИЗОФРЕНИИ

**ВАЗГЕН ПОГОСЯН**
Национальная академия наук Республики Армения
Международный научно-образовательный центр
кандидат психологических наук, доцент
vazgen.poghosyan@isec.am

**НОНА МЕСРОПЯН**
Национальная академия наук Республики Армения
Международный научно-образовательный центр
Магистрант кафедры психологии
nona.mesropyan.1999@mail.ru

**Аннотация**

Шизофрения – это психическое расстройство, которое влияет на работу головного мозга, приводя к нарушению ощущения, восприятия, мышления, поведения. У здорового человека они, как предпосылки психического здоровья, характеризуются гармоничностью, а при шизофрении эта гармония нарушается. И поскольку головной мозг является главным органом, регулирующим все процессы, происходящие в организме, то нарушение его функции приводит к расстройству восприятия, понимания и способности соответствовать требованиям жизни, что, естественно, действует на качество жизни человека. Поскольку психология направлена на улучшение качества жизни человека, то центральной задачей является выявление психологических особенностей, способствующих развитию шизофрении.

Изучение шизофрении является одной из актуальных проблем современной психологии и психиатрии. Свидетельством этого является большое число научных исследований, проводящихся во многих странах с целью выявления причин этой болезни и механизмов ее развития. Актуальность данного исследования обусловлена тем, что целью психологии является также изучение таких проблем, которые в целом или частично не выявлены. Одной из них является взаимосвязь шизофрении со свойствами личности и защитными механизмами. Изучеиие научных источников свидетельствует о том,что в последние годы проводятся широкие исследования по выявлению первичных симптомов шизофрении и минимизации их отрицательного влияния. В этой связи проведенное нами исследование является актуальным.

Целью исследования является выявление взаимосвязи акцентуации характера и защитных механизмов у больных как в активной фазе, так и в состоянии ремиссии.

Практическое значение исследования заключается в том, что оно позволит клиническим психологам и психиатрам в процессе диагностирования и лечения

шизофрении обратить внимание на акцентуацию характера и проявление защитных механизмов у пациентов, а также на те или иные задержки развития психических свойств личности, приводящих к возникновению и развитию болезни.

**Ключевые слова и словосочетания:** шизофрения, защитные механизмы, акцентуации характера, эндогенные процессы, активная фаза, фаза ремиссии.

## PECULIARITIES OF A PERSON'S MENTAL PROPERTIES AS A CAUSE OF SCHIZOPHRENIA

**VAZGEN POGHOSYAN**
National Academy of Sciences of the Republic of Armenia
International Scientific-Educational Center
Department of Psychology
PhD in Psychological Sciences Associate Professor
vazgen.poghosyan@isec.am

**NONA MESROPYAN**
National Academy of Sciences of the Republic of Armenia
International Scientific-Educational Center
Department of Psychology, Master's Student
nona.mesropyan.1999@mail.ru

**Abstract**

Schizophrenia is a mental disorder that affects the brain, leading to a significant disturbance in a person's thinking, perceptions, feelings, and behaviours. A healthy person, as a prerequisite for mental health, is characterized by total harmony, but in the case of schizophrenia, that harmony is disordered. Moreover, since the brain is the central human organ system, its dysfunction leads to the dysfunction of the entire organ system, which automatically affects the quality of human life, and since psychology is aimed at improving the quality of human life, the identification of the psychological side contributing to the development of schizophrenia is considered to be the main issue. Schizophrenia is one of the most topical problems of modern clinical psychology and psychiatry. One of the proofs of this is that a considerable amount of scientific research is being conducted in all countries of the world to discover the causes and underlying mechanisms of the disease so that it is possible to prevent or reverse its development.

The work's modernity is conditioned by the fact that one of the current provisions of psychology is the study of problems that have not yet been fully or partially revealed; such problems include the relationship between schizophrenia, personality traits and defence mechanisms.

In recent years, massive research has been conducted to detect the disease's pre-debut symptoms early and reduce its harmful effects. Therefore, the study presented in the article and the problem before us are topical because there are theoretical and practical gaps in this issue. The study aims to observe the relationship between personality stress and defence mechanisms in persons with schizophrenia during the acute and remission stages of the disease.

In the article, we addressed the following issues:

- To study the available literature
- To study schizophrenia and those stressed character traits, the pathological manifestations of which will contribute to the emergence of schizophrenia.
- To study the relationship between defence mechanisms and the emphasized traits of a separated character in the development of schizophrenia.
- To distinguish the purpose-driven and selection matching methods.
- To carry out research work and compare and analyze the obtained results.

The practical importance lies in the fact that during the diagnosis and treatment of schizophrenia, the abovementioned work will allow clinical psychologists and psychiatrists to pay attention to the patient's character emphasis and defence mechanisms, as well as dysfunctional mechanisms, as personal changes are an essential factor in the development of the disease, which leads to a personality disorder.

**Keywords and phrases:** schizophrenia, defence mechanisms, stressed character traits, endogenous disease, remission phase.

## Ներածություն

Շիզոֆրենիա՝ հոգեկան խանգարում կամ հոգեկան խանգարումների խումբ, որը բնութագրվում է մտածողության գործընթացների և հուզական ռեակցիաների խաթարմամբ: Շիզոֆրենիա տերմինը առաջարկել է 1908 թվականին շվեյցարացի հոգեբույժ Էյգեն Բլեյլերը՝ հաշվի առնելով երևույթի հոգեախտաբանական սկզբունքը՝ (shiso - հոգու ճեղքվածություն, անձի երկատվածություն) և (phren- հոգի): Շիզոֆրենիայով հիվանդ մարդկանց մոտ առկա են բնավորության որոշակի շեշտված գծեր և իրենց հատուկ հոգեբանական պաշտպանական մեխանիզմներ: Պաշտպանական մեխանիզմները գործում են յուրաքանչյուր մարդու մեջ և օգնում են, որ անձը խուսափի տխուր և տհաճ հիշողություններից և զգացմունքներից: Եթե պաշտպանական մեխանիզմները չեն կարողանում կատարել իրենց ֆունկցիաները կամ ծայրահեղ հետևողականությամբ են կիրառում, ապա այդ հանգամանքը կարող է նպաստել հոգեկան խանգարումների առաջացմանը: Լինում են դեպքեր, երբ անհատի բնավորության այս կամ այն գիծը չափազանց արտահայտված է դառնում նման դեպքերում ասում են, որ անձն ունի բնավորության որոշակի գծի շեշտվածություն կամ ընդգծվածություն, ինչը նկատելի է

մեծ թվով մարդկանց շրջանում, այդ թվում՝ նաև շիզոֆրենիայով հիվանդ մարդկանց մոտ: Բնավորության շեշտվածությունները կարող են ազդել հոգեծին խանգարումների, նևրոզների, պսիխոզների զարգացման վրա, բայց ոչ մի դեպքում չենք կարող դրանք նույնացնել որևէ հոգեկան ախտաբանության հետ:

**Տեսական մաս**

Շիզոֆրենիան առանձնահատուկ տեղ է գրավում հոգեկան խանգարումների բոլոր ձևերի շարքում՝ բավականին բարձր տարածվածությամբ, շատ դեպքերում՝ անբարենպաստ դինամիկայով, որոշ հիվանդների մոտ խորը մտավոր արատներով և անձի համար բացասական սոցիալական հետևանքներով: 1908 թվականին շվեյցարացի հոգեբույժ Էյգեն Բլեյլերը նկարագրեց դեմենցիայից տարբերվող շիզոֆրենիան՝ որպես ինքնուրույն հիվանդություն, և մտցրեց այդ տերմինը հոգեբուժության մեջ: Նա ապացուցեց, որ հիվանդության վաղ ի հայտ գալը պարտադիր չէ երիտասարդ տարիներին. այն կարող է զարգանալ հասուն տարիքում: Նրա գլխավոր առանձնահատկությունը թուլամտությունը չէ, այլ հոգեկանի «ամբողջության խանգարումը» նրա «սխիզիսը» (հին հունարենից թարգմանաբար՝ «ճեղքում») այդ թվում և ասոցիատիվ մտածողության խանգարումը: Հին անվանումը մոռացված էր նաև այն պատճառով, որ շիզոֆրենիան պարտադիր կերպով չէր բերում անձի դեգրադացիայի, իսկ միևնույն ժամանակ դեգրադացիան չի համարվում թուլամտություն կամ դեմենցիա: Որպես կանոն, շիզոֆրենիան սկսվում է ուշ դեռահասության տարիքում (20-25տ) կամ հասուն կյանքի սկզբնական շրջանում՝ լուրջ վնասելով մարդու անձը ամենակարևոր սոցիալական և մասնագիտական զարգացման փուլում: Շիզոֆրենիայի առաջացման և զարգացման մասին կան տասնյակ տեսություններ:

«Ծագումնաբանական տեսության» համաձայն՝ կասկած չի հարուցում այն փաստը, որ շիզոֆրենիան փոխանցվում է ժառանգաբար: Եթե ծնողներից մեկը հիվանդ է, երեխային փոխանցելու հավանականությունը կլինի 16%, իսկ երբ հիվանդ են 2 ծնողները, ապա հավանականությունը՝ 70 - 80% **[2, էջ 134-135]:**

Մինչ օրս էլ դժվար խնդիրներից է շիզոֆրենիայի ախտորոշումը՝ որպես հոգեկան հիվանդությունների խումբ, և դիֆերենցիալ ախտորոշումը՝ որպես շիզոֆրենիա հիվանդություն: Առանձնացնում են շիզոֆրենիայի ընթացքի երեք հիմնական ձև՝ անընդհատ ընթացող շիզոֆրենիա, նոպայաձև

զարգացող շիզոֆրենիա, պարբերական ընթացքով շիզոֆրենիա **[2, էջ 144-145]:**

Շիզոֆրենիայի տեսակների համընդհանուր դասակարգում չկա. տեսակները կարող են տարբեր լինել՝ ըստ տարբեր ախտորոշիչ ձեռնարկների (DSM, WHO, ICD-10) տրված դասակարգման: Շիզոֆրենիան ինքնադրսևորման մեկ եղանակ չունի, չնայած նրա բոլոր դասերն ունեն ընդհանուր հատկանիշներ: Այսօր ICD-10-ում (Հիվանդությունների և հարակից առողջական խնդիրների միջազգային վիճակագրական դասակարգում) ներկայացված շիզոֆրենիայի հիմնական ձևերը՝ Պարանոիդ, Հեբեֆրենիկ, Կատատոնիկ, Չտարբերակված, Հետշիզոֆրենային դեպրեսիա, Մնացորդային, Հասարակ **[4,էջ 144]:**

**Բնավորության շեշտվածություն**

Բնավորությունն անձի էական հատկանիշների ամբողջությունն է, որը բնութագրում է մարդու վերաբերմունքը շրջապատող աշխարհի նկատմամբ և դրսևորվում նրա վարքում, արարքներում: Բնավորությունը մեր հոգեկան որակների, անհատական առանձնահատկությունների ամբողջությունն ու ներդաշնակությունն է, որոնք խիստ անհրաժեշտ են մեր կյանքի ու հարաբերությունների կազմակերպման համար: Ամբողջությամբ վերցրած՝ բնավորությունը չի ժառանգվում և բնածին չէ. այն անձի համար կայուն և անփոփոխ չէ: Այն ձևավորվում և զարգանում է շրջապատող միջավայրի, կենսափորձի, դաստիարակության ազդեցությամբ, այսինքն՝ պայմանավորված է հասարակական, պատմական և անհատական գործոններով: Բնավորության յուրաքանչյուր գիծ ունի արտահայտման տարբեր քանակական աստիճաններ: Օրինակ՝ ամեն մարդ ազնիվ է, բայց յուրաքանչյուրը ազնվության իր չափն ունի, իր յուրովի պատկերացումները և գնահատականը: Բնավորության որևէ գիծ կամ մի քանի գծերի զուգակցում կարող են ընդունել ծայրահեղ ընդգծվածություն և շեշտվածություն:

«Բնավորության շեշտվածություն» (ակցենտուացիա) հասկացությունը հոգեբանության մեջ մտցրել է XX դարի գերմանացի ականավոր հոգեբույժ Կարլ Լեոնհարդը: Ըստ նրա՝ անհատի մեջ որևէ անձնային գիծ կարող է արտահայտված լինել այս կամ այն չափով, ուստի ըստ յուրաքանչյուր գծի՝ մարդիկ ունեն անհատական տարբերություններ: Ըստ հոգեկան գծերից յուրաքանչյուրի՝ մարդկանց կարելի է բաշխել պայմանական առանցքի վրա, որում բաշխումը գրեթե միշտ կարգին է՝ Գաուսյան, այսինքն՝ առանցքի ձախ և աջ ծայրամասերում, քիչ թվով մարդիկ են ընկած, իսկ հիմնական

զանգվածը զբաղեցնում է միջին կամ միջինին մոտ դիրքեր, սակայն լինում են դեպքեր, երբ անհատի բնավորության այս կամ այն գիծը չափազանց արտահայտված է դառնում **[1, էջ 129-131]:**

Կարլ Լեոնհարդի դասակարգումը՝ հիպերթիմ տիպ, դիսթիմ տիպ, ցիկլոտոմիկ կամ աֆեկտիվ-լաբիլ տիպ, բռնկվող տիպ, խցանվող տիպ, պեդանտ տիպ, տագնապային տիպ, էմոտիվ տիպ, դեմոնստրատիվ տիպ, հուզավառ կամ աֆեկտիվ-էկզալտիվ տիպ, էքստրավերտ տիպ, ինտրավերտ տիպ **[1,էջ 133-135]:**

**Պաշտպանական մեխանիզմներ**

Ներկայիս հոգեբանական գիտության կարևոր խնդիրներից է համարվում անձի լիարժեք և բազմակողմանի ուսումնասիրումը: Իր զարգացման ընթացքում անձը ենթարկվում է տվյալ ժամանակաշրջանի սոցիալական, տնտեսական, քաղաքական, հասարակական գործոնների ազդեցությանը, որի հետևանքով առաջացած սթրեսային, տհաճ և ֆրուստրացիոն իրավիճակներից դուրս գալու համար դիմում է պաշտպանական մեխանիզմների օգնությանը:

Պաշտպանական մեխանիզմներ հասկացության մասին գաղափար տվեց ավստրիացի գիտնական Զ. Ֆրեյդը 1894 թ-ին հոգեվերլուծական ուսմունքում՝ «Պաշտպանական նեյրոպսիխոզներ» աշխատության մեջ: Ի սկզբանե Զիգմունդ Ֆրոյդը դրա տակ նկատի ուներ արտամղումը: Հետագայում մնացած մեխանիզմները մշակվեցին այլ հոգեվերլուծողների կողմից, առաջին հերթին՝ Աննա Ֆրոյդի: Այսօր այս հասկացությունը կիրառվում է գրեթե բոլոր հոգեթերապևտների պրակտիկայում՝ անկախ այն հոգեբանական ուղղվածությունից, որին նրանք հետևում են: Հոգեվերլուծական ուսմունքում պաշտպանական մեխանիզմները դիտվում են որպես անհատի անբաժանելի և կարևորագույն առանձնահատկություններ:

Գործադրելով պաշտպանական տարբեր միջոցներ՝ մարդը կարողանում է թեթևացնել հոգեկան լարվածությունը: Հոգեբանության մեջ հեղաշրջող նշանակություն ունեցավ այն հետևությունը, որ կան այնպիսի հոգեկան զորեղ ուժեր, որոնք լուրջ ազդեցություն են թողնում մարդու վարքի վրա, բայց և մնում են չգիտակցված:

Յուրաքանչյուր անհատ օգտվում է տարբեր պաշտպանական մեխանիզմներից և տարբեր չափերով. դրանք օգնում են մարդուն՝ ոչ միայն չկորցնելու իր նկատմամբ ունեցած գնահատականը, այլև օգնում են՝ հաղթահարելու կենսական դժվարությունները: Նրանք հուշում են պրոբլեմների

հնարավոր լուծումները, օգնում են՝ թաքնվելու կամ փախչելու տհաճություններից **[1, էջ 155-156]:**

Հոգեբանական պաշտպանությունը դիտվում է որպես Ես-ի հավասարակշռությունն ու ներդաշնակությունը ապահովող պաշտպանական մեխանիզմների գործողությունների և մեթոդների մի ամբողջություն, որն ուղղված է նվազեցնելու կամ վերացնելու անհատի ամբողջականությանն ու կայունությանը սպառնացող պատճառները, իսկ պաշտպանական մեխանիզմ հասկացությունը բնութագրվում է որպես գործողությունների մի ամբողջություն, որը նվազեցնում կամ վերացնում է այն փոփոխությունները, որոնք կարող են վնաս պատճառել անհատի կայունությանն ու ամբողջականությանը, (հավասարակշռությանը): Պաշտպանական մեխանիզմների ցանկը բազմազան է և անհատապես ուրույն: Հետազոտող հեղինակների մոտ բացակայում է ընդհանուր կարծիքն այն մասին, թե քանի պաշտպանական մեխանիզմ գոյություն ունի **[7, էջ 448]**:

Ժամանակակից հոգեբանների մեծ մասը ընդունում են պաշտպանական մեխանիզմների որոշակի հավաքածու, որոնք գրեթե ունիվերսալ են դարձել, չնայած նկարագրում են բազմաթիվ մեխանիզմներ, բայց, այնուամենայնիվ, կան առավել ճանաչվածներ և տարածվածներ: Սուբլիմացիա, արտամղում (ռեպրեսիա), ներմղում (սուպրեսիա), ժխտում, ռացիոնալիզացիա, պրոյեկցիա, փոխհատուցում կամ կոպենսացիա, կոնվերսիա, նույնականացում, տեղափոխում կամ փոխանցում, հոգեբանական նահանջ (ռեգրեսիա), հումոր, ագրեսիա, ռեակտիվ հակազդեցություն, ֆիքսման կամ ամրագրման մեխանիզմ, գերհույզի մեկուսացում (աֆեկտի իզոլյացիա), պասիվ բողոք, այլասիրություն (ալտրուիզմ), գործողության չեղարկում, պաշտպանական երևակայություն, ինտելեկտուալիզացիա **[1, էջ 155-160]:**

Առողջ մարդիկ իրենց կենսագործունեության ընթացքում օգտագործում են մեխանիզմների տարբեր տեսակներ, բայց երբեմն դրանց կիրառումը հասնում է պաթոլոգիկ աստիճանի, երբ դա բերում է ոչ ադեկվատ վարքի, որն էլ բացասաբար է ազդում անհատի ֆիզիկական կամ հոգեկան առողջության վրա:

Հոգեկան հիվանդությունների առաջացման մեջ, ինչպես, որ մնացած հիվանդությունների դեպքում որոշիչ դեր են խաղում արտաքին և ներքին պայմանները, որոնց վրա էլ ներգործում է պատճառը: Միշտ չէ, որ պատճառը միանգամից առաջացնում է հիվանդություն. հիվանդությունը առաջանում է երկար ներգործությունների ազդեցության տակ **[5, էջ 407]:**

Շիզոֆրենիայի դեպքում ներգծող հանգամանք են հանդիսանում բնավորության շեշտվածությունը և պաշտպանական մեխանիզմները:

Հոգեբանական պաշտպանական մեխանիզմները կարևոր դեր են կատարում ինչպես հիվանդությունների զարգացման, այնպես էլ հիվանդությունների նկատմամբ վերաբերմունքի ձևավորման մեջ: Պաշտպանական մեխանիզմները ազդում են հիվանդության ապրման բովանդակության վրա, որպես հիվանդության ընթացքի հետևանք: Պաշտպանական մեխանիզմները, որ կոչված են կայունացնելու անհատի հոգեկանը, երբեմն կարող են թողնել դեստրուկտիվ ազդեցություն՝ խաթարելով անձի առողջական և հոգեկան գործընթացները (փոխվում է բնավորությունը, դժվար են հարմարվում շրջապատին) **[3, էջ 11]:**

Անձի բնավորության գծերը փոխում են նրա գործունեության ընդհանուր պատկերը և միջանձնային հարաբերությունների դրսևորման ձևերը: Առանցքային դեր կատարելով անձնային դրսևորումներում՝ բնավորության շեշտված գծերը կարող են փոխել անձի ողջ նկարագիրը, երբեմն էլ հիմք հանդիսանալ շեղվող վարքի տարաբնույթ ձևերի և անձնային և հոգեկան որոշ խանգարումների, հատկապես պսիխոպաթիայի զարգացման համար **[6]:**

**Հետազոտական մաս**

Հետազոտությունը իրականացվել է Գեղարքունիքի մարզի Վարդենիս քաղաքի հոգեբուժարանում (ՎԱՐԴԵՆԻՍԻ ՆՅԱՐԴԱՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՏՈՒՆ-ԻՆՏԵՐՆԱՏ ՊՈԱԿ- ՀՈԳԵԲՈՒԺԱՐԱՆ):

Հետազոտության նպատակը՝ ուսումնասիրել շիզոֆրենիա հիվանդության վառ արտահայտվածության և ռեմիսիայի փուլում հիվանդներին բնորոշ բնավորության շեշտված գծերը և պաշտպանական մեխանիզմները:

Հետազոտության ընտրանքը՝ շիզոֆրենիա հիվանդություն ունեցող անձիք, ընդհանուր թվով՝ 30 անձ:

Հետազոտության մեթոդները՝ զրույց, դիտում, անկետավորում, պրոյեկտիվ մեթոդիկա «տուն, ծառ, մարդ»,«անձնավորության բնավորության շեշտվածության հարցարան» ըստ Կ.Լեոնհարդի, Կելեռման Կոնտտեի և Պլուտչիկի «կյանքի ոճի ինդեքսը» հարցարան:

Այսպես, կիրառվել է «Զրույց»-ի մեթոդը. զրույցի ընթացքում հարցերը տրվել են հոգեբույժին: Տրված հարցերի պատասխանների բովանդակությունը վերաբերվում է շիզոֆրենիա ախտորոշմամբ կոնկրետ հիվանդներին:-Դիտման ընթացքում ուսումնասիրվել է հիվանդների վարքային առանձնա-

հատկությունները, վերբալ ակտերը՝ արտահայտիչ շարժումները, խոսքի բնութագրերը, ձեռքերի շարժումներ, ծամածռություններ, քրտնարտադրություն և այլն: Տվյալ հետազոտական աշխատանքի շրջանակներում անկետավորումը տվել է ինֆորմացիա հետևյալ ոլորտների մասին՝ սեռ, տարիք, ընդունման ամսաթիվ, ախտորոշում, վիճակ և այլն: Կիրառվել է պրոյեկտիվ մեթոդիկաներից՝ «Տուն, ծառ, մարդ»-ը, թերևս կիրառվել է օբյեկտի բազմակողմանի ուսումնասիրության համար, ինչը հնարավորություն է տալիս լրացնելու տեղեկատվության այն բացը, որը առաջանում է այս կամ այն մեթոդի սահմանափակությունների պատճառով: Իրականցվել է «Անձնավորության բնավորության շեշտվածության հարցարան՝ ըստ Կ.Լեոնհարդի»: Հարցարանը թույլ է տալիս որոշել բնավորության շեշտվածությունը: Եվ Կելեռման Կոնտտեի, Պլուտչիկի «կյանքի ոճի ինդեքսը» հարցարան, թեսթը նախատեսված է տարատեսակ պաշտպանական մեխանիզմների դիագնոստիկայի համար:

Արդյունքում ստացանք հետևյալ պատկերը. ըստ «Անձնավորության շեշտվածության հարցարանի» տվյալների վերլուծության պարզ դարձավ, որ հետազոտվող 30 անձից 30%-ի (համարժեք 9 հիվանդի) մոտ անձնավորության շեշտվածության տագնապային տիպն է, այսինքն՝ բարձր տագնապայնություն և խոցելիություն: Ընդ որում, 30% -ը կազմող հիվանդները գտնվում էին ռեմիասի փուլում:

30%-ի մոտ գրգռվող տիպն է, այսինքն՝ վարքագծի հիմքում գերակշռում են մղումները և բնազդները, որոնք հանգեցնում են ֆիզիկական լարվածության: Այս 30%-ը կազմող հետազոտվողները հիվանդության արտահայտված ախտանշանների շրջանում են գտնվել:

20%-ի (3 անձ՝ ռեմիսիայի շրջան, 3 անձ՝ շեշտվածության) դեպքում պեդանտ տիպն է, նրանք տհաճ փաստերն ու տրավմատիկ ապրումները ճնշում են հիշողության մեջ, ունեն հոգեկան գործընթացների կարծրություն և չեզոքություն:

10% (3 անձ շեշտվածության շրջան) - հուզավառ, կտրուկ փոփոխություններ հրճվանքից տագնապի:

10% (3 անձ ռեմիսիայի շրջան) – հիշաչար, նրանց մեծամասամբ բնորոշ է վախի և զայրույթի կայունությունը:




Գրաֆիկ 1

Ըստ Կելեռման Կոնտտեի և Պլուտչիկի՝ «Կյանքի ոճի ինդեքսը» հարցարանի տվյալների վերլուծության՝ պարզ դարձավ, որ հետազոտվող 30 անձից 40%-ի մոտ (համարժեք 12 հիվանդի) արտամղում պաշտպանական մեխանիզմն է: Այս 40%-ը ռեմիսիայի փուլում է գնվել և ըստ նախորդ հարցարանի՝ ունեն անձնավորության շեշտվածության տագնապային տիպ: Արտամղման խնդիրն է անձի գիտակցական ոլորտից հեռացնել իր համար տհաճ, անցանկալի տպավորությունները:

30%-ի մոտ պրոյեկցիա պաշտպանական մեխանիզմն է: Այս 30%-ը արտահայտված ախտանշանների շրջանում է գնվել և ըստ նախորդ հարցարանի՝ ունեն անձնավորության շեշտվածության գրգռվող տիպ: Անհատն այլ մարդկանց վերագրում է սեփական մտքերը, զգացմունքները, բնավորության գծերը՝ այդպիսով իրենից հեռացնելով և ուրիշի վրա տեղափոխելով իր համար բացասական կողմերը:

20%-ի մոտ (3 անձ ռեմիսիայի շրջան, 3 անձ շեշտվածության) բացասում - երբ իրականությունը տհաճ է մարդու համար, նա հերքում է խնդիրների առկայությունը կամ փորձում է նվազեցնել սպառնալիքի սրությունը:

10%-ի մոտ (շեշվածության շրջան) ռեգրեսիա- կոնֆլիկտներից, տրավմատիկ ապրումներից խուսափելու նպատակով անձը վերադառնում է ավելի վաղ տարիքին բնորոշ հուզական և վարքային ձևերին և հակազդմանը:




Գրաֆիկ 2

Իրականացնելով վերլուծությունը, համեմատելով մեթոդիկաներից ստացված արդյունքները՝ պարզ դարձավ, որ շիզոֆրենիայի ախտանշանների արտահայտվածության փուլում գտնվող հիվանդների բնավորության շեշտված գծերից գերակշռում է գրգռվող տիպը, իսկ պաշտպանական մեխանիզմներից՝ պրոյեկցիան: Ռեմիսիայի փուլում գտնվող հիվանդների մոտ բնավորության շեշտված գծերից գերակշռում է տագնապային տիպը, իսկ պաշտպանական մեխանիզմներից՝ արտամղումը:




Գրաֆիկ 3

Ըստ գիրական գրականության՝ պաշտպանական մեխանիզմները գործում են յուրաքանչյուր մարդու մեջ և օգնում են, որ անձը խուսափի տխուր և տհաճ հիշողություններից և զգացմունքներից: Եթե պաշտպանական մեխանիզմները չեն կարողանում կատարել իրենց ֆունկցիաները, ապա այդ հանգամանքը կարող է նպաստել հոգեկան խանգարումների առաջացմանը և ըստ մեր հետազոտության արդյունքների՝ շիզոֆրենիա հիվանդություն ունեցող անձաց մոտ պաշտպանական մեխանիզմների որոշակի խումբ չի գործում, դա արդեն իսկ նպաստում է հիվանդության զարգացմանը:

## Եզրակացություններ

Իրականացնելով փորձարարական աշխատանք և ամփոփելով հետազոտության արդյունքները՝ փաստում ենք, որ շիզոֆրենիայի դեպքում ներգործող հանգամանք են հանդիսանում և՛ բնավորության շեշտվածությունը, որը դոմինանտելով անձի վարքում տանում է դեպի պաթոլոգիայի, և՛ պաշտպանական մեխանիզմները, որոնք, ծայրահեղ կատարելով կամ չկատարելով իրենց ֆունկցիաները, զրկում են անձին լիարժեք հոգեբանական պաշտպանական կարողություններից:

## Օգտագործված գրականության ցանկ


1. Ազատյան Ն. Գ., Ավետիսյան Ք. Ս., Առաքելյան Տ. Ա., Գրիգորյան Ն.Ն., Հարությունյան Ս. Հ., Ղազարյան Գ. Հ., Մնացականյան Լ.Ռ., Վարդանյան Ն. Տ., Տեր-Ստեփանյան Ա.Հ., ԲԺՇԿԱԿԱՆ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿ, 341 էջ:
2. ՄԵԼԻՔ - ՓԱՇԱՅԱՆ Ա.Է, Հոգեբուժություն/ դասագիրք բժշկական բուհերի ուսանողների համար/ԵՐԵՎԱՆ 2012:
3. Исаева Е. Р. Копинг - поведение и психологическая защита личности в условиях здоровья и блезньи.- СПБ .: Издательство СПБГМУ 2009. -136ст.
4. Романова Е.С. Л.Р. Гребеников МЕХАНИЗМЫ ПСИХОЛОГИЧЕСКОЙ ЗАЩИТЫ: ГЕНЕЗИС, ФУНКЦИОНИРОВАНИЕ, ДИАГНОСТИКА Г. Мытищи издательство «талант» 1996г. _
5. Тиганова РАМН А.С. «РУКОВОДСТВО ПО ПСИХИАТРИИ» в 2 томах Под редакцией академика Москва "Медицина" 1999. — 712 с:
6. УЧЕНЫЕ ЗАПИСКИ АРМЯНСКОГО ГОСУДАРСТВЕННОГО ПЕДАГОГИЧЕСКОГО УНИВЕРСИТЕТА ИМ. Х. АБОВЯНА № 2 (19) 2013 Гуманитарные науки
7. Фрейд Психология бессознательного: Сб. произведений / Сост., науч. ред., авт. вступ. ст. М.Г. Ярошевский .—— М.: Просвещение, 1990.

# ՍԵՌԱԿԱՆ ԲՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ՀԵՏՈ ԱՌԱՋԱՑԱԾ ՀԵՏՏՐԱՎՄԱՏԻԿ ՍԹՐԵՍԱՅԻՆ ԽԱՆԳԱՐՈՒՄՆԵՐԻ ԵՎ ԽԱՌՆՎԱԾՔԻ ԿԱՊԸ

**ՎԱԶԳԵՆ ՊՈՂՈՍՅԱՆ**
ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա,
գիտակրթական միջազգային կենտրոն,
հոգեբանական գիտությունների թեկնածու, դոցենտ
vazgen.poghosyan@isec.am

**ՍՈՆԱ ՄԵԼԻՔՅԱՆ**
ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա,
գիտակրթական միջազգային կենտրոն,
հոգեբանության ամբիոն, մագիստրանտ
sona.melikyan.87@mail.ru

**Համառոտագիր**

Հետտրավմատիկ սթրեսային խանգարումների առաջացման պատճառների վերաբերյալ կատարվել են բազմաթիվ ուսումնասիրություններ այնպիսի գիտնականների կողմից, որոնք են՝ Մ. Բ. Գորովիցը, Ե. Ա. Սթերլինը, ռուս հետազոտողներ Ա. Ե. Բրուսիլովսկին, Պ. Վ. Կամենչենկոն, Մ. Վ. Մորոզովը, իսկ Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո ռուս հոգեբույժներ՝ Վ. Ե. Գալենկոն, Է. Մ. Զալկինդը, Մ.Վ. Սոլովյովան և այլք: Գրեթե բոլոր հետազոտությունները վերաբերում էին պատերազմներից և աղետներից հետո առաջացած հետտրավմատիկ սթրեսային խանգարումների դրսևորումներին: Այս գիտնականների աշխատանքների շնորհիվ հնարավոր դարձավ պատկերացումներ կազմել, թե ինչպիսի անձնային, սոցիալական, միջմշակութային գործոններ կարող են ազդել խանգարման առաջացման վրա, սակայն, պայմանավորված խառնվածքի տիպով՝ սթրեսակայուն են նրանք, թե ոչ, տագնապախռովությունը ինչ մակարդակի վրա է, և որքանով են հեշտությամբ ադապտացվում սթրեսից հետո՝ սեռական բռնության ենթարկված կանանց հետ անցկացված ուսումնասիրությունները բավարար չեն: Այս խնդիրները դեռևս հետազոտման փուլերում են, ուստի հոդվածում ներկայացված հետազոտությունն ու մեր առաջ քաշված խնդիրը արդիական է, քանի որ կան տեսական և գործնական բացեր տվյալ հարցի շուրջ: Լուծումները, որոնց հանգեցինք հետազոտության վերլուծությունից հետո, թույլ կտան լրացնել տվյալ խնդրի տեսական և գործնական բացերը, ինչպես նաև հետագայում նոր հետազոտական աշխատանքների հիմք կհանդիսանան:

Հետազոտության նպատակն է եղել բացահայտել սեռական բռնության ենթարկված կանանց խառնվածքի տիպի ազդեցությունն ու կապը անձի տագնապախռովության, սթրեսակայունության, սթրեսում դեզադապտացիայի տարբեր մակարդակների առկայության հետ:

Հոդվածում անդրադարձել ենք հետևյալ խնդիրներին՝

- հետազոտել սեռական բռնության ենթարկված կանանց խառնվածքը.
- բացահայտել խառնվածքի կոնկրետ տեսակի կապն ու ազդեցությունը անձի տագնապախռովության հետ.
- ուսումնասիրել խառնվածքի կոնկրետ տեսակի կապն ու ազդեցությունը անձի սթրեսակայունության հետ.
- վերլուծել խառնվածքի կոնկրետ տեսակի կապն ու ազդեցությունը սթրեսում անձի դեզադապտացիայի տարբեր մակարդակների առկայության հետ:

Հետազոտության գործնական նշանակությունն այն է, որ տվյալ ուսումնասիրությունը կարող է օգտակար լինել պրակտիկ հոգեբանների համար և առավել դյուրին դարձել նրանց աշխատանքը սեռական բռնության ենթարկված կանանց հետ, քանի որ այն բացահայտել է խառնվածքի տիպի կապը տագնապախռովության, սթրեսակայունության, սթրեսում դեզադապտացիայի տարբեր մակարդակների առկայության հետ: Մեր աշխատանքը թույլ կտա պրակտիկ գործունեության ընթացքում համապատասխան հոգեբանական գործիքակազմ ընտրել՝ հիմնվելով խառնվածքի տիպի և անձի տագնապախռովության, սթրեսակայունության, սթրեսում դեզադապտացիայի տարբեր մակարդակների առկայության վրա:

**Բանալի բառեր և բառակապակցություններ.** սթրես, դեզադապտացիա, խառնվածք, հետտրավմատիկ սթրեսային խանգարումներ, սեռական բռնություններ:

# ВЗАИМОСВЯЗЬ ТЕМПЕРАМЕНТА И ПОСТТРАВМАТИЧЕСКИХ СТРЕССОВЫХ РАССТРОЙСТВ / ПТСР /, ВОЗНИКШИХ ПОСЛЕ СЕКСУАЛЬНЫХ НАСИЛИЙ

**ВАЗГЕН ПОГОСЯН**
Национальная академия наук Республики Армения
Международный научно-образовательный центр
кандидат психологических наук, доцент
vazgen.poghosyan@isec.am

**СОНА МЕЛИКЯН**
Национальная академия наук Республики Армения
Международный научно-образовательный центр
кандидат психологических наук Доцент
Магистрант кафедры психологии
sona.melikyan.87@mail.ru

**Аннотация**

Причинам возникновения ПТСР посвятили свои исследования многие психологи и психотерапевты, к примеру: М.Б.Горовиц, Е.А.Стерлин, А.Е.Брусиловский, П.В.Каменченко, М.В.Морозов. А после второй мировой войны к этой проблеме обратились психиатры В.Е.Галенко, Э.М.Залкинд. М.В.Соловьева и другие. Почти все исследования относились к проявленлям ПТСР после войн и стихийных бедствий. Усилия ученых позволили пролить свет на то, какие личностные, социальные и межкультурные факторы могут способствовать возникновению психических нарушений. Однако проблема возникновения ПТСР у женщин, подвергшихся сексуальному насилию, исследована недостаточно. В частности, необходимо выяснить, какие усилия необходимо приложить для послестрессовой адаптации и какую роль играют такие личностные факторы, как стрессоустойчивость и тревожность. Эти проблемы находятся в процессе исследования. Учитывая вышесказанное, можем утверждать, что вопросы, поставленные в нашем исследовании, актуальны, поскольку в определенной степени способствуют решению теоретических и практических вопросов данной проблемы. Надеемся, что выводы, которые следуют из наших аналитических заключений, позволят дополнить сведения, относящиеся к решению данной проблемы и могут способствовать направлениям дальнейших исследований.

Целью данного исследования было выявление взаимосвязи типа темперамента, уровня тревожности и стрессоустойчивости женщин, подвергшихся сексуальному насилию.

В статье рассмотрены следующие задачи:

-исследовать типы темперамента женщин, подвергшихся сексуальному насилию;

-выявить связь и влияние типа темперамента на уровень тревожности;

-выявить связь и влияние типа темперамента на стрессоустойчивость личности;

-изучить связь и влияние типа темперамента на уровень наличия уровня дезадаптации женщин.

Практическое значение исследования заключается в следующем: оно может быть полезным практическим психологам и, основываясь на результатах нашего исследования, поможет выбрать наиболее оптимальный и индивидуально приемлемый психологический инструментарий работы с женщинами, подвергшимися сексуальному насилию.

**Ключевые слова и словосочетания:** стресс, дазадаптация, темперамент, посттравматические стрессовые расстройства, сексуальное насилие.

# THE RELATIONSHIP BETWEEN POST-TRAUMATIC STRESS DISORDER AND TEMPERAMENT AFTER SEXUAL VIOLENCE

**VAZGEN POGHOSYAN**
National Academy of Sciences of the Republic of Armenia
International Scientific-Educational Center
Department of Psychology
PhD in Psychological Sciences, Associate Professor
vazgen.poghosyan@isec.am

**SONA MELIKYAN**
National Academy of Sciences of the Republic of Armenia
International Scientific-Educational Center
Department of Psychology, Master's Student
sona.melikyan.87@mail.ru

**Abstract**

Many studies have been conducted on the causes of post-traumatic stress disorders by the following scientists: M. B. Gorovits, E. A. Sterlin, and Russian researchers A. E. Brusilovsky, P. V. Kamenchenko, M. V. Morozov, and after the Second World War Russian Psychiatrists V. E. Galenko, E. M. Zalkind, M.V. Solovyova and others. Most studies have been about the manifestations of post-traumatic stress disorder after wars and disasters. Thanks to the work of these scientists, it became possible to understand what personal, social, and intercultural factors can influence the occurrence of the disorder.

However, conditioned by the type of temperament, studies conducted with sexually abused women were insufficient to find out whether they are resilient to stress due to their temperament or not, their level of anxiety, and how easily they adapt after the stress. These issues are still under investigation. Therefore, the study presented in the article and the problem we put forward are ongoing problems because there are theoretical and practical gaps in this issue. The solutions found after the analysis of the study will allow us to fill the theoretical and practical gaps of the specified problem. Moreover, they will serve as the basis for new studies in the future.

The study aimed to reveal the influence of the temperament type of the women subjected to sexual violence and its relationship with different anxiety levels, stress resistance, and stress maladaptation.

In the article, we addressed the following issues:

• examine the temperament of sexually abused women;

• identify the connection and influence of a specific type of temperament with a person's anxiety;

• study the connection and influence of a specific type of temperament with a person's stress resistance;

• analyze the relationship and influence of a specific type of temperament with a person's different levels of maladaptation under stress.

The study's practical significance lies in the fact that this kind of study can be helpful in practical psychologists and make their work with sexually abused women easier because it revealed the relationship of temperament type with anxiety, stress resistance, and different levels of stress maladaptation. Based on the type of temperament and the presence of different anxiety levels, stress resistance, and stress maladaptation, our work will allow us to choose the appropriate psychological tools during practical activities.

**Keywords and phrases:** stress, maladaptation, temperament, post-traumatic stress disorder, sexual violence.

## Ներածություն

Հետտրավմատիկ սթրեսային խանգարումներին վերաբերող գրեթե բոլոր հետազոտությունները վերաբերում են պատերազմներից և աղետներից հետո առաջացած հետտրավմատիկ սթրեսային խանգարումների դրսևորումներին: Դրանց շնորհիվ հնարավոր դարձավ պատկերացումներ կազմել, թե ինչպիսի անձնային, սոցիալական, միջմշակութային գործոններ կարող են ազդել խանգարման առաջացման վրա, սակայն, պայմանավորված կանանց խառնվածքի տիպով՝ սթրեսակայուն են նրանք, թե ոչ, տագնապախռովությունը ինչ մակարդակի վրա է, և թե որքանով են նրանք հեշտությամբ ադապտացվում սթրեսից հետո, սեռական բռնության ենթարկված կանանց հետ անցկացված ուսումնասիրությունները բավարար չեն: Այս խնդիրները դեռևս հետազոտման փուլերում են: Այսպիսով՝ կարելի է խոսել մեր կողմից առաջ քաշած խնդրի արդիականության մասին: Ուսումնասիրությունները, որոնք բացահայտում են խառնվածքի առանձնահատկությունների ազդեցությունը տրավմատիկ իրադարձություններից հետո առաջացած հետտրավմատիկ սթրեսային խանգարումների վրա, սկսել են կատարվել միայն 2014 թ-ից: Դրանք թույլ են տվել բացահայտել էմոցիոնալ ռեակտիվության կապը խանգարման դրսևորման հետ՝ պատերազմի մասնակիցների, աղետներ վերապրածների, սպանությունների ականատեսների, ոստիկանների, հրշեջների և զինվորների մոտ, ուստի մեր բարձրացրած խնդիրը արդիական է, քանի որ կան տեսական և գործնական բացեր տվյալ հարցի շուրջ: Մեր հետազոտությունը թույլ կտա լրացնել այս տեսական և գործնական բացերը. այն հետագայում նոր հետազոտական աշխատանքների հիմք կհանդիսանա:

**Տեսական մաս**

Ինչպես փաստում են վերջին տասնամյակներում իրականացված հետազոտությունները, սեռական հանցագործությունների դրդապատճառները խիստ բազմազան են: Շատ հաճախ անձին առաջնորդող դրդապատճառները լինում են չբավարարված պահանջմունքներն ու զգացմունքները:

Անհրաժեշտ է նշել, որ սեռական հանցագործություններում դոմինանտում է հենց այդ գործոնը: Բացահայտված է նաև, որ սեռական հանցագործություն կատարում է ինչպես առողջ անձն, այնպես էլ՝ տարբեր հոգեկան խանգարումներ ունեցողները: Քննարկենք սեռական այլասերումները, որոնք պատճառ և հիմք են հանդիսանում հակահասարակական, հակաիրավական այս երևույթի առաջացման գործում, դրանք են՝

- զոոֆիլիան,
- պեդոֆիլիան,
- էքսգիբիցիոնիզմը,
- նեկրոֆիլիան
- ինցեստոֆիլիան
- գերոնտոֆիլիա և այլն:

Հանցագործի անձը տարբերվում է օրինապահ մարդու անձից նորմատիվ-արժեքային համակարգի բովանդակությամբ և կայուն հոգեբանական առանձնահատկություններով, որոնց զուգակցումն ունի հանցածին նշանակություն և հատուկ է հենց հանցագործներին: Որպես բռնաբարություն կատարած անձանց հոգեբանական հատկանիշ, համեմատած այլ հանցագործների հետ, առանձնացվում են միջանձնային հարաբերություններում ամենացածր զգացմունքայնությունը և վարքագծի ղեկավարման թույլ ունակությունը **[2, էջ 223-244]:**

Սեռական այլասերման տեսակ է նաև պեդոֆիլիան: Պեդոֆիլիան սեռական հակման իրագործումն է կամ դրա երևակայումը պրեպուբերտատ և վաղ պուբերտատ շրջանի երեխաների հետ: Պեդոֆիլների մի մասը նախընտրում է որոշակի սեռի երեխաներին, մյուսների համար՝ սեռային պատկանելիությունը էական նշանակություն չունի: Պեդոֆիլներ են համարվում նաև այն տղամարդիկ, որոնք գերադասում են չափահաս զուգընկերների, սակայն չկայացած կամ անհաջող սեռական հարաբերության առաջացրած ֆրուստրացիաների դեպքում և որպես փոխարինող բավարարվածության օբյեկտ՝ ընտրում են երեխաներին: Տղամարդիկ, որոնք ոտնձգություն են անում մինչարբունքային հասակի սեփական երեխաների, երբեմն նաև այլ ե-

րեխաների հանդեպ՝ դեպքում էլ նրանց վարքը սահմանվում է որպես պեդոֆիլիա:

Գոյություն ունի պեդոֆիլիայի դրսևորման մի քանի տարբերակ: Երբեմն այն կարող է երեխայի հանդեպ նուրբ և պլատոնիկ սիրո զգացում լինել՝ առանց սեքսուալ-էրոտիկ հակվածության: Մյուս դեպքում այն դրսևորվում է սեռական բռնության, սեռական բնույթի գործողություններ իրականացնելու ձևով: Քանի որ վերը նշվածը երկու խիստ տարբեր զգացողություններ են, ակնհայտ է, որ պեդոֆիլների անձի տիպերը նույնպես տարբեր են **[7,8]:**

Հոմոսեքսուալիզմը առկա է եղել հին հունական և հռոմեական մշակույթներում, չնայած գիտական շրջանակ է մտել միայն 1869 թ-ին հունգարացի բժիշկ Կ. Բենկերտի կողմից: Հոմոսեքսուալիզմ ասելով՝ հասկացվում է իր սեռի անձանց նկատմամբ սեռական հակումը: Համասեռամոլները մոտ են հանցավոր աշխարհին: Սա առաջնահերթ հիմնավորվում է նրանով, որ վերջիններիս մեջ շատ են թմրամոլները և ապա նրենց սեռական պահանջմունքների բավարարման համար թիրախ են դառնում անչափահասները: Կարևոր է նշել՝ հետազոտությունների արդյունքները փաստում են, որ սա ոչ միայն սեռական հակում է, այլև հուզական: Ուստի համասեռամոլներին ևս կարելի է ներառել սեռական հանցագործությունների հակում ունեցող խմբի մեջ **[3,4]:**

Խոսելով հետտրավմատիկ սթրեսային խանգարումների (այսուհետ՝ ՀՏՍԽ) մասին՝ նախ պետք է անդրադառնալ դրանց ծագմանը: Սթրեսորները դասվում են երկու տեսակի՝ ֆիզիոլոգիական՝ ցավը, սովը, ծարավը և հոգեբանական կորուստը, վտանգ-սպառնալիքը: Իր հերթին հոգեբանականը ևս երկու տեսակի է լինում. դրանք են՝ էմոցիոնալ և ինֆորմացիոն սթրեսորները: Սթրեսը վերածվում է տրավմայի, երբ սթրեսորի ազդեցությունից խաթարվում է անձի հոգեկան ոլորտը, իսկ օրգանիզմում տեղի են ունենում մի շարք ֆիզիոլոգիական փոփոխություններ: Անձի մոտ խաթարվում է աշխարհի կոգնիտիվ մոդելը, աֆեկտիվ ոլորտը, նյարդային այն հատվածները, որոնք պատասխանատու են անձի հիշողության, սովորելու համար: Այս պարագայում, որպես սթրեսոր հանդիսանում են տրավմատիկ իրադարձությունները, որոնցից են ծայրահեղ, էքստրեմալ, կյանքին վտանգ սպառնացող իրավիճակները՝ շատ ուժգին բացասական հետևանքներով: Նման իրավիճակները հիմնովին փոխում են անձի ապահովության զգացումը և առաջացնում տրավմատիկ սթրեսային ապրումներ: Սրա հետևանքով էլ արդեն հետագայում առաջանում է ՀՏՍԽ-ը **[8]:**

ՀՏՍԽ-ն առաջանում է, որպես մնացորդային կամ երկարաձգված հակազդում՝ տրավմատիկ, սթրեսային իրադարձությանը կամ իրավիճակին:

ՀՏՍԽ-ի հիմնական ախտանշաններն են.

1. կրկնվող, ոչ կամածին և կպչուն սթրեսածին հիշողություններ՝ տրավմատիկ իրադարձությունների մասին, որոնք պատահել են անձի հետ կամ որոնց ականատես է եղել անձը.
2. կրկնվող, սթրեսածին երազատեսություններ՝ անցյալում տեղի ունեցած տրավմատիկ իրադարձությունների մասին.
3. դիսոցիատիվ հակազդումներ (օրինակ՝ հանկարծակի առաջացող մտապատկերներ), որոնց ժամանակ անձն այնպես է իրեն զգում և պահում, կարծես տրավմատիկ իրադարձությունը կրկնվում է.
4. ինտենսիվ կամ երկարատև հոգեբանական դիսթրես՝ տրավմատիկ իրադարձությունը հիշեցնող կամ մարմնավորող իրերի կամ իրավիճակների հետ առնչվելիս.
5. ակնհայտ ֆիզիոլոգիական հակազդումներ՝ տրավմատիկ իրադարձությունը հիշեցնող կամ մարմնավորող իրերի կամ իրավիճակների հետ առնչվելիս.
6. կայուն խուսափում՝ տրավմատիկ իրադարձությունների մասին հիշեցնող ազդակներից.
7. ճանաչողական գործառույթների և տրամադրության բացասական փոփոխություններ.
8. գրգռվածություն և նյարդայնություն.
9. քնի խանգարումներ.
10. գերզգոնություն.
11. ապակառուցողական վերաբերմունք սեփական անձի նկատմամբ.
12. կենտրոնացման խնդիրներ.
13. դեպերսոնալիզացիա կամ դերեալիզացիա **[8]:**

Տարբերում են ՀՏՍԽ-երի երեք տեսակ.

- Սուր՝ մինչև երեք ամիս,
- Քրոնիկ՝ երեք ամիս և ավելին,
- Հետաձգված՝ երբ խանգարումը առաջացել է տրավմտիկ իրադարձությունից հետո վեց ամիս և ավել ժամանակ անց **[8]:**

Գոյություն ունի ՀՏՍԽ-երի չորս ձև՝

1. ՀՏՍԽ-ի ասթենիկ տիպ,
2. ՀՏՍԽ-ի տագնապային տիպ,
3. ՀՏՍԽ-ի դիսֆորիկ տիպ,
4. ՀՏՍԽ-ի սոմատոֆորմ տիպ **[8]:**

Խառնվածք ասելով՝ հասկանում են վարքի բնական առանձնահատկությունները, որոնք բնորոշ են տվյալ մարդուն և դրսևորվում են կյանքի

նկատմամբ ռեակցիաների տոնուսով և հավասարակշռությամբ: Խառնվածքի մասին պատկերացումները ծագել են դեռևս հնադարյան ժամանակներում: Հիպոկրատը, ապա Գալենը, դիտելով մարդկանց վարքագծի անհատական առանձնահատկությունները, փորձեցին նկարագրել և բացատրել դրանք: Խառնվածքի մասին ուսմունքի հիմնադիրը համարվում է հին հույն բժիշկ Հիպոկրատը (մ.թ.ա. V դ.), նա կարծում էր, որ մարդու մարմնում կա չորս հեղուկ՝ արյուն, լորձ, դեղին և սև լեղիներ: Մարդու խառնվածքը որոշվում է այդ հեղուկների խառնուրդով: Հեղուկների անունով տրված խառնվածքների անունները պահպանվել են մինչև մեր օրերը: Այսպես, խոլերիկ խառնվածքը բխում է chole («դառնություն») բառից, սանգվինիկը՝ sanguis – ից («արյուն»), ֆլեգմատիկը՝ phlegma – ից («լորձ»), մելանխոլիկ՝ melan chole – ից («սև դառնություն»):

Պայմանական ռեֆլեքսն ուսումնասիրելիս Ի. Պ. Պավլովը բացահայտեց բարձրագույն նյարդային գործունեության օրինաչափությունները և նյարդային գործընթացների հիմնական հատկությունները՝ գրգռումը և արգելակումը: Նյարդային գործընթացների հիմնական հատկությունները հետևյալն են.

1) ուժ,
2) հավասարակշռություն,
3) շարժունակություն:

Արդյունքում առանձնացվեց հետևյալ տիպաբանությունը.

1) նյարդային համակարգի ուժեղ անհավասարակշիռ տեսակը բնութագրվում է ուժեղ գրգռման գործընթացով և պակաս ուժեղ արգելակմամբ,
2) ուժեղ հավասարակշռված (գրգռման գործընթացը հավասարակշռում է արգելակման գործընթացը), շարժական,
3) ուժեղ հավասարակշռված, իներտ (արտաքուստ ավելի հանգիստ, «ամուր»),
4) թույլը՝ բնութագրվում է գրգռման և արգելակման գործընթացների թուլությամբ, նյարդային գործընթացների ցածր շարժունակությամբ (իներտությամբ):

Ի. Պ. Պավլովը նույնացնում էր նյարդային համակարգի տեսակն ու խառնվածքը: Հետագա ուսումնասիրությունները ցույց են տվել, որ նյարդային գործունեության տեսակը միշտ չէ, որ համընկնում է խառնվածքի տեսակին: Խառնվածքի վրա ազդում են ոչ միայն նյարդային գործունեության հատկությունները, այլ նաև անձի սոմատիկ կազմակերպումը: Նյարդային համակարգի տեսակը դիտվում է որպես խառնվածքի հիմք: Խառնվածքը դրսևորվում է ոչ միայն զգացմունքային, այլև մտավոր, կամային գործըն-

թացներում: Երբ խոսում են մարդու խառնվածքի մասին, ապա նկատի ունեն ոչ թե մեկուսացված հոգեբանական գործընթացների դինամիկան, այլ ամբողջ համախտանիշը (անձի վարքագծի ամբողջական դինամիկ առանձնահատկությունների համակարգը): Խառնվածքը, ոչ այլ ինչ է, քան մարդու վարքի իմպուլսիվ-դինամիկ կողմի ամենատարածված բնութագիրը, որն արտահայտում է հիմնականում նյարդային համակարգի հատկությունները:

Այսպիսով՝ խառնվածքն ազդում է գործունեության ակտիվության (աշխատունակության, կոմունիկատիվության, սոցիալական շփումների վրա), պայմաններին հարմարվելու հեշտության վրա: Խառնվածքը կապված է անձի այլ հատկանիշների հետ և ազդում է անձի վերաբերմունքի, վարքի և կամային գործունեության վրա **[6]:**

**Հետազոտական մաս**

Հետազոտությունը անց է կացվել սեռական բռնության ենթարկված կանանց փակ խմբում: Հետազոտության ընտրանքը՝ կյանքի ընթացքում առնվազն մեկ անգամ սեռական բռնության ենթարկված՝ 25-35 տարեկան կանայք՝ ընդհանուր թվով՝ 30 անձ: Հետազոտությունը անց է կացվել մեկ փուլով: Հետազոտության ընթացքում հետազոտվողների հետ կիրառվել են հետևյալ մեթոդները՝ հոգեբանական դիտում, հոգեբանական զրույց, թեստավորում:

Մեթոդիկաներից՝

1. Այզենկի անձնային հարցարանը,
2. Թեյլորի տագնապախռովության չափման մեթոդիկան,
3. Սթրեսակայունության և սոցիալական ադապտացիայի բացահայտման մեթոդիկան,
4. Սթրեսում դեզադապտացիայի և նյարդահոգեկան կայունության ախտորոշման մեթոդիկան **[1]:**

Այզենկի անձնային հարցարանի կիրառումը մեզ թույլ է տվել որոշել հետազոտվողների խառնվածքի տիպը: Թեյլորի տագնապախռովության չափման մեթոդիկայի շնորհիվ մենք պարզեցինք, թե հետազոտվողների յուրաքանչյուր խառնվածքի տիպի մոտ տագնապախռովության ինչ մակարդակ էր: Թ. Հոլմսի և Ռ. Ռահեի սթրեսակայունության և սոցիալական ադապտացիայի բացահայտման մեթոդիկայի օգնությամբ հնարավոր դարձավ դուրս հանել մասնակիցների սթրեսային ծանրաբեռնվածության և դիմադրության մակարդակը: Սթրեսում դեզադապտացիայի ռիսկի և նյարդահոգեկան կայունության ախտորոշման մեթոդիկան թույլ տվեց դուրս հանել

հետազոտվողների սթրեսում դեզադապտացիայի ռիսկի մակարդակը և ախտորոշել նյարդահոգեկան կայունության աստիճանը:

Արդյունքում ստացանք հետևյալ պատկերը. հետազոտությանը մասնակցել են՝ ընդհանուր թվով՝ 30 կանայք, որոնցից 20%-ը՝ ֆլեգմատիկ, 26.67%-ը սանգվինիկ, 30%-ը մելանխոլիկ, 23.33%-ը խոլերիկ խառնվածքի տիպին էին պատկանում: Օգտագործված մեթոդիկաների ընդհանուր պատկերը յուրաքանչյուր խառնվածքի տիպի համար հետևյալն էր.

**Աղյուսակ 1.**

| **Խառնվածքի տիպը** | **Սթրեսում դեզադապտացիայի ռիսկի և նյարդահոգեկան կայունության ախտորոշման մեթոդիկա** | **Թ. Հոլմսի և Ռ. Ռահեի սթրեսակայունության և սոցիալական ադապտացիայի բացահայտման մեթոդիկա** | **Թեյլորի տագնապախռովության չափման մեթոդիկա** |
|---|---|---|---|
| **Ֆլեգմատիկ-20%** | Սթրեսի ժամանակ բարձր նյարդահոգեկան կայունություն– 100% -ի մո | Սթրեսի դիմադրողականության մակարդակը՝ բարձր – 100% ի մոտ | Տագնապախռովության ցածր միտումով միջին մակարդակ – 50%-ի մոտ Տագնապախռովության բարձր միտումով միջին մակարդակ -50% ի մոտ |
| **Սանգվինիկ-26,67%** | Սթրեսի ժամանակ բարձր նյարդահոգեկան կայունություն - 100%-ի մո | Սթրեսի դիմադրողականության մակարդակը՝ բարձր – 100%-ի մոտ | Տագնապախռովության բարձր միտումով միջին մակարդակ-75%-ի մոտ, Տագնապախռովության ցածր միտումով միջին մակարդակ – 25%-ի մոտ |
| **Մելանխոլիկ-30%** | Սթրեսի ժամանակ միջին աստիճանի նյարդահոգեկան կայունություն -33,33%-ի մոտ, Սթրեսի ժա անակ միջին աստիճանի նյարդահոգեկան անկայունություն, փոքր ռիսկ դեզադապտացիայի ժամանակ- 66,67%-ի մոտ | Սթրեսի դիմադրողականության մակարդակը՝ սահմանային -100%-ի մոտ | Տագնապախռովության բարձր միտումով միջին մակարդակ-44,4%-ի մոտ, Տագնապախռովության արձր մակարդակ – 5 ,56% ի մոտ |
| **Խոլերիկ-23,33%** | Սթրեսի ժամանակ միջին աստիճանի նյարդահոգեկան անկայունություն, միջին ռիսկ դեզադապտացիայի ժամանակ - 100% ի մոտ | Սթրեսի դիմադրողականության մակարդակը՝ ցածր - 100% ի մոտ | Տագնապախռովության բարձր մակարդակ – 71,43% ի մոտ Տագնապախռովության բարձր միտումով միջին մակարդակ 28,57% ի մոտ |

Ամփոփելով հետազոտության արդյունքները կարող ենք ասել, որ՝

1. Անձի սթրեսակայունությունը մեծ դեր է խաղում հետտրավմատիկ սթրեսային խանգարումների ի հայտ գալուն: Սեռական բռնություններից հետո առաջացած հետտրավմատիկ սթրեսային խանգարումների տեսակները մեծապես պայմանավորված են բռնության ենթարկվածների խառնվածքի տիպով:
2. Ֆլեգմատիկ խառնվածքի տիպ ունեցող հետազոտվողների մոտ սթրեսի ժամանակ դիտվում է բարձր նյարդահոգեկան կայունություն, սթրեսի դիմադրողականության մակարդակը բարձր է, առկա է տագնապախռովության ցածր և բարձր միտումներով միջին մակարդակ:
3. Սանգվինիկ խառնվածքով հետազոտվողների մոտ սթրեսի ժամանակ բարձր է նյարդահոգեկան կայունությունը, սթրեսի դիմադրողականության մակարդակը բարձր է, իսկ տագնապախռովության բարձր միտումով միջին մակարդակ է:
4. Մելանխոլիկ խառնվածքի տիպի մոտ սթրեսի ժամանակ միջին աստիճանի նյարդահոգեկան անկայունություն է առկա, դեզադապտացիայի փոքր ռիսկ, տագնապախռովության մակարդակը բարձր է, իսկ բարձր միտումով միջին մակարդակը՝միջին է:
5. Խոլերիկ խառնվածքի հետազոտվողների մոտ սթրեսի ժամանակ միջին աստիճանի նյարդահոգեկան անկայունություն է, հակված են դեզադապտացիայի միջին ռիսկի, սթրեսի դիմադրողականության մակարդակը ցածր է, իսկ տագնապախռովության մակարդակը բարձր:

Հիմնվելով կատարված հետազոտության վրա՝ կարելի է հանգել հետևյալ գործնական առաջարկների: Քանի որ հետազոտության արդյունքներից պարզ դարձավ, որ սեռական բռնության ենթարկված կանանց խառնվածքի տիպը կարող է ազդել անձի տագնապախռովության, սթրեսակայունության, սթրեսում դեզադապտացիայի տարբեր մակարդակների առկայության վրա, առաջացնելով հետտրավմատիկ սթրեսային խանգարումներ, ապա սեռական բռնության ենթարկված կանանց հետ հոգեբանական միջամտություն անց կացնելու ընթացքում անհրաժեշտ է՝

1. ուշադրություն դարձնել նրանց խառնվածքին և աշխատանքի ժամանակ կիրառել համապատասխան գործիքակազմ.
2. ցուցաբերել անհատական մոտեցում.

3. սանգվինիկների ու ֆլեգմատիկների հետ աշխատանքի ժամանակ լիակատար ապաքինման հնարավոր է հասնել միայն հոգեթերապիայի միջոցով (հետտրավմատիկ սթրեսային խանգարումների բացակայության դեպքում).
4. մելանխոլիկների և խոլերիկների դեպքում (եթե առկա են հետտրավմատիկ սթրեսային խանգարումներ) անհրաժեշտ կլինի հոգեբույժի և հոգեբանի համագործակցությունը և համատեղ միջամտությունը: Միայն հոգեթերապիայի միջոցով ոչ միայն հնարավոր չի լինի հաղթահարել խնդիրը, այլև այցելուին վնասելու մեծ ռիսկեր կան:

**Եզրակացություններ**

Սեռական բռնության ենթարկված կանանց խառնվածքի տիպը կարող է ազդել անձի տագնապախռովության, սթրեսակայունության, սթրեսում դեզադապտացիայի տարբեր մակարդակների առկայության վրա՝ առաջացնելով հետտրավմատիկ սթրեսային խանգարումներ:

Ինչպես նաև, կարելի է խոսել այն մասին, որ մեր կատարած հետազոտությունը զգալի չափով դյուրին և արդյունավետ կդարձնի սեռական բռնության ենթարկված կանանց հետ աշխատող հոգեբանների գործունեությունը:

**Օգտագործված գրականության ցանկ**


1. Արզումանյան Ս. Ջ., Մկրտչյան Ս. Շ., Սարգսյան Վ. Ժ., Կիրառական հոգեբանության պրակտիկում, Երևան, Զանգակ 97, 2002, 392 էջ
2. Դիլբանդյան Ս. Ա., ՀՀ Քրեական իրավունք: Հատուկ մաս, Երևան, ԵՊՀ հրատ., 2019թ., 960 էջ
3. Дерягин Г. Б. Расследование половых преступлений. Руководство для юристов и врачей, Изд. «Юрлитинформ», Москва, 2008, 528 стр.
4. Еникеев М. И. , Юридическая психология, изд. Норма, Москва, 2005, 640 стр.
5. Каратьян Т. В, Т. И. Гусева Психология личности: конспект лекций, изд. Эксмо, Москва, 2008, 79 стр.
6. Малкина – Пых И. Г., Психологическая помощь в кризисных ситуациях, Москва, Изд-во Эксмо, 2005, 960 стр.
7. Шеляг Т. В., Худавердян В. Ц., Холостова Е. И., Гуслякова Л. Г., Луков В. В., Павленко П. Д., Бобкова П. В., Студенова Е. Г., Щукина Н. П., Лотова И. П., Пантелеева Т. С., Саралиева С. М., Фокин В. А., Демина Л. Д., Мартыненко А. В., Алексеева Л. С., Кругликова Л. П.,

Колков С. В., Ярская-Смирнова Е. Р., Мошняга В. Т., Технологии социальной работы, изд. Инфра-М, Москва, 2001, 400 стр.

8. Фирсов М. В., Студенова Е. Г. Теория социальной работы: Учебное пособие для студентов высших учебных заведений, Гуманитарный издательский центр Владос, Москва, 2001, 265 стр.

# ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՑԱՆՑԵՐՈՒՄ

**ԳԱՅԱՆԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**
ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա,
գիտակրթական միջազգային կենտրոն,
հոգեբանության ամբիոնի դասախոս,
հոգեբանական գիտությունների թեկնածու, դոցենտ
haroutunyang@gmail.com

**Համառոտագիր**

Ժամանակակից աշխարհում համացանցի լայն տարածումը ստեղծել է նոր, այսպես կոչված՝ թվային հասարակություն: Համացանցի միջոցով իրականացվում են բոլոր տեսակի գործունեությունները (խաղային, կրթական, աշխատանքային, գեղագիտական, հաղորդակցական, քրեական, քաղաքական և այլն), որոնք ավանդաբար ուսումնասիրվում են հոգեբանության կողմից: Ինչի արդյունքում առանձնացել և ձևավորվել է հոգեբանության առավել արագ զարգացող մի ճյուղ, որը ստացել է համացանցի հոգեբանություն կամ կիբերհոգեբանություն ավանումը: Համացանցի հասանելիության և մատչելիության արդյունքում գրեթե բոլորը օգտվում են սոցցանցից, որը դառնում է կապի ձևերի մի մաս և կիրառվում է, ավելի շուտ, որպես հաղորդակցման հարմար միջոց:

Համացանցի ձևավորման հենց առաջին տարիներից քաղաքականությունը դառնում է նրա գլխավոր թեմաներից մեկը: Թվային ցանցերում կազմակերպված քաղաքական ակտիվության մասնակցության պատմությունը, սկսվելով քաղաքականության մեջ տեխնոլոգիայի դերի լավատեսական մոտեցումներով, զարգանում է ահաբեկչության դեմ պայքարելով, իսկ հետագայում դառնում է քարոզչության գործիք՝ քաղաքական կուսակցությունների և գործիչների ձեռքում: Իսկ վերջին փուլը նշանավորվում է «Wikileaks»-ի, արաբական գարնան, գունավոր հեղափոխությունների և զավթողական շարժումների ներգրավմամբ: Տարբեր բողոքական, հանրային ցույցերի և հեղափոխական շարժումների կողմից ստեղծված «YouTube»-ի և առցանց ուղիղ հերարձակվող տեսանյութերի դերն ու քաղաքական նշանակությունը ոչ այնքան բացահայտ բովանդակության մեջ է, որքան նոր ձևական և զգացմունքային իրավիճակներում՝ հասկանալի դարձնելով հեղափոխական պայքարի առաջնագծում հայտնվող սովորական մարդկանց սուբյեկտիվ փորձը:

Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ սոցցանցերում մարդիկ սովորաբար տեսնում են միայն այն, ինչ կիսում են իրենց ընկերները: Արդյունքում նրանք կարողանում են տեսնել քաղաքականության միայն մի կողմը՝ այն, ինչի հետ համաձայն են: Հետևաբար, «Facebook»-ի գործածումը նորություններ սպառելու և տարածելու տեսանկյունից խիստ բացասաբար է անդրադառնում քաղաքական գիտելիքների մակարդակի վրա և մասնագետների կարծիքով՝ այն հիմարացնում է մարդկանց:

Ինչպես ցույց են տալիս աշխարհում առցանց ակտիվության տվյալներն, ակտիվ օգտատերերի թիվը Հայաստանում զգալիորեն աճել է. 2019 թվականին, 2017 թվականի համեմատ, աճել է գրեթե հինգ անգամ: Սա, իհարկե, բնակչության քաղաքական ակտիվության արտացոլումն է: ՀՀ իշխանության բոլոր թևերը մեծ ուշադրություն են դարձնում սոցիալական ցանցերին, ուստի դրանց ուսումնասիրությունը կարող է դառնալ քաղաքական գործընթացներ գնահատող և կանխատեսող միջոց և այդ համատեքստում «Facebook» սոցիալական ցանցի հոգեբանական ներգործության ուսումնասիրությունն առավել քան արդիական է:

Մեր ուսումնասիրության նպատակն է՝ պարզել, թե հոգեբանական ինչպիսի երևույթներ են ձևավորում զանգվածային քաղաքական տրամադրությունները համացանցային հասարակության մեջ, մասնավորապես՝ Facebook-ում, և որքանով են դրանք արտացոլում իրական հասարակական կարծիքը:

Հետազոտության աշխատանքային վարկածն է՝ «Facebook»-ում դրսևորվում են ամբոխին բնորոշ հիմնական սոցիալ-հոգեբանական առանձնահատկությունները: Համացանցում օգտատերերի հոգեբանությունը հետազոտելու նպատակով բացվեց կեղծ հաշիվ և կիրառվեցին հետևյալ մեթոդները՝ առցանց մասնակիցների ներգրավված դիտում, բովանդակության վերլուծություն (content analysis) դիպվածի ուսումնասիրություն (case study) և զուգահեռ անցկացվեցին բլից հարցումներ և առանձին օգտատերերի դիտումներ իրական կյանքում:

Ուսումնասիրության արդյունքները բացահայտեցին հետևյալ սոցիալ-հոգեբանական երևույթները: Վիրտուալ հասարակության մեջ (facebook) դրսևորվում են ամբոխի հոգեբանությանը բնորոշ որակներ՝ անանունություն, ներշնչանք, հիպնոսային վիճակ, վարակ, մոլեռանդ առաջնորդի առկայություն, կանացի զգացմունքայնություն: Սոցցանցերում գործում է այցեքարտի էֆեկտը և տարածված են երեսպաշտությունը, բարեգործությունը ու

հանցագործությունը, իսկ վիրտուալ ամբոխը չի արտացոլում իրական քաղաքական տրամադրություններն ու հասարակական կարծիքը:

**Բանալի բառեր և բառակապակցություններ.** վիրտուալ հասարակության հոգեբանություն, ամբոխի հոգեբանություն, զանգվածային քաղաքական տրամադրություններ:

# ПСИХОЛОГИЧЕСКИЕ ПРОЯВЛЕНИЯ ПОЛИТИЧЕСКИХ ПРОЦЕССОВ В СОЦИАЛЬНЫХ СЕТЯХ

**ГАЯНЕ АРУТЮНЯН**

Национальная академия наук Республики Армения

Международный научно-образовательный центр

преподаватель кафедры психологии

кандидат психологических наук, доцент

**Аннотация**

Широкое распространение интернета в современном мире создало новое, так называемое, цифровое общество. Через интернет осуществляются все виды человеческой деятельности (игровая, просветительская, трудовая, религиозная, эстетическая, коммуникативная, криминальная, политическая и др.), которые традиционно изучает психология. В результате отделилась и сформировалась более бурно развивающаяся отрасль психологии, получившая название интернет-психологии или киберпсихологии. Благодаря наличию и доступности интернета практически все пользуются социальными сетями, которые становятся частью коммуникативных моделей и используются скорее как удобное средство общения.

С самых первых лет существования интернета политика стала одной из его основных тем. История участия в организованной политической активности в цифровых сетях начинается с оптимистичных подходов к роли технологий в политике, развивается в борьбе с терроризмом, а позже становится инструментом пропаганды в руках политических партий и деятелей. А последний этап отмечен вовлечением Wikileaks, арабской весны, цветных революций и различных оккупационных движений. Роль и политическое значение YouTube и онлайн-видео, созданных различными протестантскими, публичными демонстрациями и революционными движениями, заключается не столько в их откровенном содержании, сколько в новых формальных и чувственных положениях для понимания субъективного опыта простых людей, оказавшихся на переднем плане революционной борьбы.

Исследования показали, что люди в социальных сетях обычно видят только то, чем делятся их друзья, поэтому они могут видеть лишь одну сторону политики, ту, с которой они согласны. Поэтому использование Facebook для потребления и распространения новостей сильно отрицательно сказывается на уровне политических знаний и, по мнению экспертов, делает людей глупее.

Как показывают данные онлайн-активности в мире, количество активных пользователей в Армении значительно увеличилось. В 2019 году онлайн-активность выросла почти в пять раз по сравнению с 2017 годом. Это, безусловно, отражение политической активности населения. Все ветви власти РА уделяют большое внимание социальным сетям. Поэтому их изучение может стать средством оценки и прогнозирования политических процессов, и в этом

контексте наше исследование психологического воздействия социальной сети Facebook более чем актуально.

Цель нашего исследования - выяснить, какие психологические феномены создают массовые политические настроения в интернет-сообществе, в частности, в Facebook-е, и в какой степени они отражают реальное общественное мнение.

Рабочая гипотеза исследования: В Facebook-е проявляются основные социально-психологические особенности, характерные для толпы.

Для исследования психологии пользователей в интернете был открыт фейковый аккаунт, что позволило проводить онлайн исследования следующими методами: включенное наблюдение, контент-анализ, кейс-стади. Параллельно проводились блиц-опросы и индивидуальные наблюдения пользователей в реальной жизни.

По результатам исследования выявлены следующие социально-психологические явления. В виртуальном обществе (Facebook) проявляются качества, характерные для психологии толпы: анонимность, внушаемость, состояние гипнотического транса, заразительность, наличие фанатичного лидера, женская чувственность. В социальных сетях действует эффект визитной карточки, широко распространены лицемерие, благотворительность и преступность. А виртуальная толпа не отражает реальные политические настроения и общественное мнение.

**Ключевые слова и словосочетания:** психология виртуального общества, психология толпы, массовые политические настроения.

# PSYCHOLOGICAL MANIFESTATIONS OF POLITICAL PROCESSES ON SOCIAL NETWORKS

**GAYANE HARUTYUNYAN**
National Academy of Sciences of the Republic of Armenia
International Scientific-Educational Center
Department of Psychology
PhD in Psychology, Associate Professor

**Abstract**

The widespread use of the Internet in the modern world has created a new, so-called digital society. Through the Internet, all types of human activity (gaming, educational, labour, religious, aesthetic, communicative, criminal, political) are carried out, traditionally studied by psychology. As a result, a more rapidly developing branch of psychology was distinguished and formed, which received the name Internet psychology or cyberpsychology. Thanks to the presence and accessibility of the Internet, almost everyone uses social networks, which become part of communication models and are used more as a convenient means of communication.

From the very first years of the Internet, politics became one of its main topics. The history of participation in organized political activism in digital networks begins with optimistic approaches to the role of technology in politics, develops in the fight against terrorism, and later becomes a propaganda tool in the hands of political parties and figures. Moreover, the last stage is marked by the involvement of Wikileaks, the Arab Spring, colour revolutions and various occupation movements. The role and political significance of YouTube and online videos created by various protestants, public demonstrations and revolutionary movements lie not so much in their explicit content but in new formal and sensual provisions for understanding the subjective experience of ordinary people who find themselves at the forefront of the revolutionary struggle.

Studies have shown that people on social media usually only see what their friends share, so they may only see one side of politics, the one they agree with. Therefore, the use of Facebook to consume and distribute news negatively impacts the level of political knowledge and, according to experts, makes people dumber.

The data on online activity shows that the number of active users in Armenia has increased significantly. In 2019 online activity increased almost five times compared to 2017. This is, of course, a reflection of the political activity of the population. All branches of the RA government pay great attention to social networks. Therefore, their study can become a means of assessing and predicting political processes, and in that context, our study on Facebook's social network is more than relevant.

Our study aims to find out what psychological phenomena create mass political moods in the Internet society, particularly on Facebook, and to what extent they reflect real public opinion.

**The working hypothesis of the research:** Facebook manifests the main socio-psychological features characteristic of the crowd. To study the psychology of users on the Internet, a fake account was opened, which made it possible to conduct online research using methods: participant observation, content analysis, and case study. In parallel, blitz surveys and individual observations of users in real life were carried out.

According to the study results, the following socio-psychological phenomena were revealed. In the social network (Facebook), the qualities characteristic of crowd psychology are manifested: anonymity, suggestibility, a state of hypnotic trance, contagiousness, the presence of a fanatical leader, and feminine sensibility. There is a business card effect; hypocrisy, philanthropy and crime are widespread. Furthermore, the virtual crowd does not reflect the real political moods and public opinion.

**Keywords and phrases:** virtual society psychology, crowd psychology, mass political moods.

We shape our tools and afterwards our tools shape us[1]
*Marshall McLuhan*

21-րդ դարում տեղեկատվական հասարակությունը վերածվել է թվային ինտերնետային հասարակության: Այսօր համացանցի միջոցով իրականացվում են բոլոր տեսակի գործունեությունները (խաղային, կրթական, աշխատանքային, գեղագիտական, հաղորդակցական, քրեական, քաղաքական և այլն), որոնք ավանդաբար ուսումնասիրվում են հոգեբանության կողմից, ինչի արդյունքում առանձնացել և ձևավորվել է հոգեբանության առավել արագ զարգացող մի ճյուղ, որը ստացել է «համացանցի հոգեբանություն» կամ «կիբերհոգեբանություն» ավանունը [**1, էջ 36**]:

Կանադացի հայտնի մեդիա տեսաբան դոկտոր Մարշալ Մաք Լուհանը առաջ քաշեց այն թեզը, ըստ որի՝ նոր տեխնոլոգիաների ի հայտ գալը փոխում է մարդու զգայական ընկալումը և ոչնչացնում նրա ինքնանույնականացումը՝ ստիպելով նրան հարմարվել և տեսնել աշխարհը «ետնահայելու մեջ» [**11**]: Հեղինակը մեկ զգայական ընկալումից մյուսին անցնելու այս գործընթացն անվանում է «ինքնաամպուտացիա» և համեմատում է տեխնոլոգիայի կողմից հավասարեցված զգայական ունակություններն անդամահատված օրգանի հետ, որը շարունակում է ֆանտոմային ցավ պատճառել:

Համացանցի հասանելիության և մատչելիության արդյունքում գրեթե բոլորն օգտվում են սոցցանցից, որը դառնում է կապի ձևերի մի մաս և օգտագործվում է ավելի շուտ որպես հաղորդակցման հարմար միջոց, սակայն

[1] Մենք ստեղծում ենք մեր գործիքները, իսկ հետո մեր գործիքներն են ստեղծում մեզ

հոգեբանական լուրջ խնդիրներ ունեցող օգտատերերն ընտրում են վիրտուալ հաղորդակցությունը որպես հիմնական միջոց: Իրական կյանքում անինքնավստահ երկչոտները դառնում են «Cyberpunk»՝ բացասող, ընդդիմացող և ամենաթողության կողմնակից և հեշտությամբ գտնելով համախոհներ և «ընկերներ» վիրավորում ու հայհոյում են բոլոր նրանց, ովքեր չեն կիսում իրենց տեսակետը: Սոցցանցերում ագրեսիվ, անպարկեշտ, նվաստացուցիչ զզվելի մեկնաբանություններով կիբերբուլինգի են հաճախ ենթարկվում սոցիալական և քաղաքական հարցերում որոշակի սուր դիրքորոշում ունեցող մարդիկ:

Համացանցի ձևավորման հենց առաջին տարիներից քաղաքականությունը դառնում է նրա գլխավոր թեմաներից մեկը: Ա. Կարատզոգիանին թվային ցանցերում կազմակերպված քաղաքական ակտիվության մասնակցության պատմությունը բաժանում է չորս փուլերի [**9**]: Առաջինը (1994–2001) ընդգրկում է համաշխարհային ցանցի առաջին տարիները և բնութագրվում է քաղաքականության մեջ տեխնոլոգիայի դերի լավատեսական մոտեցումներով: Երկրորդը սկսվում է 9/11-ին և նշանավորվում է ահաբեկչությանն այլախոհ ձայներով մարտահրավեր նետելով: Երրորդ փուլը (2007–2010) բնութագրվում է Բարաք Օբամայի առցանց և ցանցից դուրս նախընտրական քարոզչության փոխլրացմամբ: Չորրորդ փուլը (2010–2014) նշվում է հիմնական քաղաքականության մեջ թվային ակտիվության այնպիսի ներգրավմամբ, ինչպիսին են՝ «Wikileaks»-ը, արաբական գարունը և զավթողական շարժումները:

Կարատզոգիանիի կարծիքով՝ 2014 թվականից հետո թվային քաղաքական գործունեությունն, ամենայն հավանականությամբ, կդառնա պակաս կարևոր, քանի որ այն կարգավորվելու է, ինչպես հիմնական իրական քաղաքականությունը: Մինչդեռ քաղաքական վերջին իրադարձություններն ինչպես Հայաստանում, այնպես էլ ամբողջ աշխարհում հակառակն են ապացուցում: ԱՄՆ վերջին ընտրությունների համատեքստում փակվեցին հանրապետական կուսակցության նախագահի թեկնածու Դ. Թրամփի սոցիալական ցանցերի հաշիվները «Facebook»-ում և «Tweeter»-ում: Այսօր քաղաքականության մեջ սոցցանցերը գործածում են օրակարգ ձևավորելու, քարոզչություն անելու և նույնիսկ սուտ ու ապատեղեկատվություն տարածելու համար: Աշխարհի մի քանի երկրներ ձգտում են հնարավորինս սահմանափակել արտաքին ազդեցությունները, հետևաբար, նրանք արգելափակում են ինտերնետ կապերը և գրաքննության ենթարկում բովանդակությունը: Այսպես, բնակչությամբ մեծաքանակ երկրներում՝ Չինաստանում, Իրա-

նում և Հյուսիսային Կորեայում քաղաքացիների համար արգելափակված են համացանցային հաղորդակցման բոլոր տեսակները: Ռուսաստան-Ուկրաինա հակամարտությունը ռազմի դաշտի գործողություններին զուգահեռ ավելի ինտենսիվ է դրսևորվում տեղեկատվական հոգեբանական պատերազմների գործիքակազմով, որը երկրաչափական պրոգրեսիայով տարածվում է սոցիալական ցանցերում:

Ինչպես արդեն նշել էինք համացանցով պայմանավորված քաղաքական ակտիվության մասնակցության երրորդ փուլը նշանավորվեց Բարաք Օբամայի առցանց և ցանցից դուրս սոցիալ-քաղաքական քարոզչության փոխլրացմամբ: 2008-ի նախագահական ընտրությունների ընթացքում համացանցի օգտագործումը զգալիորեն աճեց բոլոր քաղաքական արշավներում, սակայն Օբաման հատկապես լավ կիրառեց սոցիալական ցանցերի ազդեցությունը: Օբամայի համար համացանցի կիրառումը նույն դերը խաղաց, ինչ հեռուստատեսությունը Քենեդու հաղթանակի մեջ 1960-ի նախագահական ընտրություններում: Երկուսն էլ ընդմիշտ փոխեցին քաղաքականության դեմքը նոր տեխնոլոգիաների կիրառման միջոցով, ինչը ստիպեց թե՛ իրենց կուսակիցներին, և թե՛ մրցակիցներին ընդունել զանգվածների հետ շփվելու համար իրենց գտած նոր մեթոդները:

Ստեղծվեց «My.BarackObama.com» սոցիալական կայքը, որտեղ միանգամից գրանցվեց 1,5 միլիոն օգտատեր: Վերջիններս կարող էին քննարկել թեկնածուին, գումար նվիրաբերել և, ամենակարևորը, պայմանավորվել իրենց իրական գործունեության մասին, իսկ «iPhone»-ի օգտատերերը կարող էին ներբեռնել հավելվածներ, որոնք թույլ են տալիս ընկերներին քվեարկել կամ գումարներ նվիրաբերել [**4, էջ 187**]: Արդյունքում, մարդկանց մեծ թիվը կարող է կախված լինել միայն մեկ մարդու ընտրությունից, և եթե նա միջինում ունի տասը ընկեր և բարեկամ, ապա ազդեցությունը տարածվում է տասի վրա, հետո հարյուրի, վերջապես՝ հազարի: Արդյունքում, սոցիալական ցանցերը դառնում են նախընտրական մրցավազքի համար կարևոր ու անբաժանելի հարթակներ և ընտրազանգվածը՝ մանիպուլացնելու ու կառավարելու հզոր միջոց:

Տեքսասի համալսարանի հետազոտողները նշում են, որ քաղաքական և սոցիալ-հոգեբանական հետազոտությունները կենտրոնացել են օգտատերերի հոգեբանական բնութագրերի վրա, այլ ոչ թե՝ քաղաքական վերաբերմունքի և վարքագծի. շատ քչերն են ուսումնասիրել սոցցանցերի դերը մարդկանց ժողովրդավարական գործընթացներում ներգրավելու գործում [**17**]: Մինչդեռ, Արաբական գարնանից 6 տարի առաջ, «New York Times»-ը

հոդված էր գրել «The Revolution Will be Posted» (հեղափոխությունը կուղարկվի) այն մասին, թե ինչպես են բլոգները փոխակերպում նախագահական մրցավազքները: Պ. Սնոուդենը, ընդգծելով «YouTube»-ի և առցանց տեսանյութերի դերը, կարծում է, որ հեղափոխությունը վերբեռնվելու է, և արաբական հեղափոխությունների կողմից ստեղծված տեսահոլովակների քաղաքական նշանակությունը ոչ այնքան բացահայտ բովանդակության մեջ է, որքան նոր ձևական և զգացմունքային իրավիճակներում՝ հասկանալի դարձնելով հեղափոխական պայքարի առաջնագծում հայտնվող սովորական մարդկանց սուբյեկտիվ փորձը [**15**]:

21-րդ դարում սոցիալական մեդիան մոբիլիզացնող ազդեցություն է ունեցել քաղաքացիական ակտիվության վրա՝ ներառյալ բողոքական վարքագիծը, ինչպիսիք են՝ հանրային ցույցերը, խնդրագրերը, բոյկոտները և այլն: Լատինական Ամերիկայի ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ սոցիալական ցանցերն արտացոլում են ինչպես չափավոր, այնպես էլ արմատական բողոքներն ու ապստամբությունները [**13**]: Այնուամենայնիվ, օգտատերերն ավելի շատ են աջակցում չափավոր բողոքի ակցիաներին, իսկ նրանք, ովքեր աջակցում են արմատականներին, զգալիորեն ավելի քիչ են օգտվում կայքերից:

Ըստ «The Washington Post»-ի՝ գրեթե բոլոր երկրները, որտեղ ավելի շատ մարդիկ են օգտվում ինտերնետից, բայց ավելի պակաս ակտիվությամբ են ներգրավված տեղեկատվությունը կիսելու և տարածելու մեջ, գտնվում են Եվրոպայում, իսկ երկրները, որտեղ սոցիալական ցանցի օգտատերերի կողմից տեղեկատվության փոխանակման տեսակարար կշիռը մեծ է, գտնվում են Ասիայում, Աֆրիկայում և Լատինական Ամերիկայում են, որտեղ ինտերնետի հասանելիությունը համեմատաբար ցածր է [**7**]:

Մեգան Ֆոնթեյնը, ուսումնասիրելով սոցիալական մեդիան և դրա ազդեցությունը քաղաքականության մեջ, նշում է, որ 18-ից 24 տարեկան երիտասարդների մեծամասնությունը նորություններ է ստանում սոցիալական ցանցերից, ինչը նշանակում է, որ այս տարիքային խումբը ստանում է որոշակի տեսակի քաղաքական լուրեր [**8**]: Ըստ հեղինակի՝ դա կարող է բացասական ազդեցություն ունենալ, քանի որ ուսումնասիրությունները ցույց են տվել, որ սոցցանցերում մարդիկ սովորաբար տեսնում են միայն այն, ինչ կիսում են իրենց ընկերները, ուստի նրանք կարող են տեսնել քաղաքականության միայն մի կողմը՝ այն, ինչի հետ համաձայն են: Մեկ այլ հետազոտության համաձայն՝ «Facebook»-ի օգտագործումը նորություններ սպառելու և տարածելու համար խիստ բացասաբար է անդրադառնում քաղաքական

գիտելիքների մակարդակի վրա: «Ֆեյսբուքը մեզ հիմա՞ր է դարձնում» հոդվածում հեղինակներն եզրակացնում են, որ սոցիալական ցանցերի ուսումնասիրությունը կարող է դառնալ քաղաքական գիտելիքները կանխատեսող և գնահատող միջոց [**12**]:

Ինչպես ցույց են տալիս աշխարհում առցանց ակտիվության տվյալները, ակտիվ օգտատերերի թիվը Հայաստանում զգալիորեն աճել է: Այսպես, 2019 թվականին առցանց գործունեությունը 2017 թվականի համեմատ աճել է գրեթե հինգ անգամ [**20**]:




Սա, իհարկե, բնակչության քաղաքական ակտիվության արտացոլումն է: Իշխանության բոլոր թևերը մեծ ուշադրություն են դարձնում սոցիալական ցանցերին: Վերջինիս ակտիվ օգտատերերն են Ազգային ժողովի պատգամավորներն ու կառավարության անդամները, իսկ Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը աշխատում է նախագծել մի փաստաթուղթ, որում փորձ է արվում ներդնելու վերահսկողության մեխանիզմներ ինտերնետ ոլորտում [**19**]: «Facebook» սոցիալական ցանցի մեր ուսումնասիրությունն առավել քան արդիական է:

Մեր ուսումնասիրության նպատակն է՝ պարզել, թե հոգեբանական ինչպիսի երևույթներ են ձևավորում զանգվածային քաղաքական տրամադրությունները համացանցային հասարակության մեջ, մասնավորապես՝

«Facebook»-ում, և որքանով են դրանք արտացոլում իրական հասարակական կարծիքը:

Հետազոտության աշխատանքային վարկածն է՝ «Facebook»-ում դրսևորվում են ամբոխին բնորոշ հիմնական սոցիալ-հոգեբանական առանձնահատկությունները: Ամբոխի ուսումնասիրությամբ զբաղվում էին այնպիսի հայտնի մտածողներ, ինչպիսիք են՝ Սոկրատեսը, Պլատոնը, Արիստոտելը, Մաքիավելին, Վեբերը, Տարդեն, Լե Բոնը, Ադլերը, Ֆրոմը, Մոսկովիչը, Ֆրոյդը, Յունգը, Օրտեգան, Կանետին, Իլինը, Դրուրին, Սուրովեցկին: Մեր աշխատանքի մեթոդաբանական հիմքում ընկած է ամբոխի դասական հոգեբանության հայեցակարգը՝ մշակված Գ. Լը Բոնի [**3**] և հարստացված Ս. Մոսկովիչիի կողմից [**5**]:

Համացանցում օգտատերերի հոգեբանությունը հետազոտելու նպատակով բացվեց կեղծ հաշիվ և կիրառվեցին հետևյալ մեթոդները՝ առցանց մասնակիցների ներգրավված դիտում, բովանդակության վերլուծություն (content analysis) դիպվածի ուսումնասիրություն (case study) և զուգահեռ անցկացվեցին բլից հարցումներ և առանձին օգտատերերի դիտումներ իրական կյանքում:

Մեր ուսումնասիրության արդյունքները բացահայտեցին հետևյալ սոցիալ-հոգեբանական երևույթները.

1. **Անանունություն:** Ֆեյսբուքյան հայկական տիրույթում մոտ 26 տոկոս են կազմում կեղծանուններով օգտատերերը: Վերջիններս աչքի են ընկնում այլ կարծիքների նկատմամբ առավել անհանդուրժողությամբ: Հիմնվելով համացանցային հետազոտությունների և գիտական աղբյուրների վերլուծության երկար տարիների փորձի վրա՝ Ա. Ոյսկունսկին նույնպես ընդգծում է անանունությունը՝ որպես մարդկային վարքի հիմնական սկզբունքներից մեկը, որը կարող է շեղումներ առաջացնել հաղորդակցական վարքագծում (բոց, թրոլինգ, խաբեություն, ահաբեկում և հետապնդման առցանց ձևեր՝ կիբերհարձակում, կիբերբուլինգ կիբերմոբինգ և այլն) [**1, էջ 38**]: Հայաստանում ավելանում է օգտատերերի թիվը, որոնք ոչ միայն հանդես են գալիս են մտացածին անունով, այլ նաև աշխատում են բազմաթիվ պրոֆիլներով: Արդյունքում սոցցանցում խպառ վերանում է պատասխանատվության զգացումը, որը մշտապես զսպում է առանձին անհատներին: Ֆեյսբուքում այն մարդիկ, որոնք սկզբունքորեն որոշակի համոզմունքներ ունեն սոցիալական և քաղաքական հարցերի վերաբերյալ, երբեմն ենթարկվում են կիբերհարձակման՝ զզվելի, անպարկեշտ, ստորացուցիչ մեկնաբանություններով: Սոցիալական ցանցում, ինչպես ամբոխում, մարդը դադարում է պատասխա-

նատվություն կրել իր արարքների համար: Այստեղից էլ բխում է այն հաղորդակցային դաժանությունը, որը սովորաբար ուղեկցում է ագրեսիվ ամբոխի գործողություններին:

**2. Ներշնչանք և հիպնոսային վիճակ:** Ինչպես ամբոխի զանգվածը, առցանց օգտատերերը դյուրահավատ և անքննադատ են, չափազանց հեշտությամբ ենթարկվում են տարբեր մանիպուլյատիվ ազդեցությունների, և նրանց համար անհավանական ոչինչ չկա: Սրանից օգտվում են այսպես կոչված կիբերառաջնորդները՝ մարդկանց որոշակի շրջանակի համար ձեռնտու տեղեկատվություն տարածելով: Ցանցում անհատը, որոշ ժամանակ անցկացնելով վիրտուալ ամբոխում, ընկնում է այնպիսի վիճակի մեջ, որը նման է հիպնոսացված սուբյեկտի վիճակին: Ե՛վ իրական ամբոխի մեջ, և՛ վիրտուալ միջավայրում մարդը ձեռք է բերում անդիմադրելի ուժի գիտակցություն:

**3. Վարակ:** Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ հուզմունքը, գրգռվածությունը նպաստում են լուրերի կամ տեղեկատվության փոխանցմանը, այսինքն՝ գրգռվածություն պարունակող բովանդակությունը պետք է ավելի ու ավելի արագ տարածվի [**6**]: Ուսումնասիրելով համացանցում դրսևորվող հույզերը՝ կիբերհույզերի փորձագետ Թ. Լյուիսն ընդգծել է, որ Ֆեյսբուքում դրական և բացասական հույզերը վարակիչ են, և վիրտուալ կիբերհարձակումը կարող է ոչ միայն վարակիչ ագրեսիվ հույզեր առաջացնել, այլև անկանխատեսելի հետևանքներ ունենալ՝ տեղափոխվելով իրական կյանք [**10**]: Հետաքրքիր է նշել, որ «Gallup-2019» հետազոտության արդյունքների համաձայն՝ աշխարհում զայրույթի ամենաբարձր մակարդակը գրանցվել է Հայաստանում, որտեղ հարցվածների 45%-ը նշել է, որ նախորդ օրը զայրույթ է զգացել [**21**]: Ցանցում, ինչպես ամբոխում, արտահայտված կասկածը հաճախ անմիջապես վերածվում է անկասկած հավաստիության, իսկ հակակրանքը՝ չար ատելության, որոնք վարակիչ շրջանառվում են:

4. **Առաջնորդի առկայությունը**: Օգտատերերը հետևում են նրանց, ովքեր հմայում են հեղինակությամբ, պատրանք են տալիս, խաղում են իրենց զգացմունքների հետ և համոզում ոչ թե բանականության օգնությամբ, այլ որպես հուզական առաջնորդ, ով մոլեռանդորեն հավատում է իր գաղափարին՝ հիպնոսացնում և հավատքով վարակում ուրիշներին:

**5. Այցեքարտի էֆեկտ**: «Facebook»-ը պարզեցնում է Հ. Լասվելի հաղորդակցության հինգ բաղադրիչով դասական մոդելը. *ՈՎ, ԻՆՉ, ՈՐ ԱԼԻՔՈՎ, ՈՒՄ, ԻՆՉ ԷՖԵԿՏՈՎ:* Մնում են *ՈՎ* և *ԷՖԵԿՏԸ*, իսկ մյուս երեք օղակներն անտեսվում են: Տեղեկատվության նշանակությունը կարևորվում է նրանով, թե ով է հաղորդում, այսինքն՝ գործում է այսպես կոչված «այցեքարտի էֆեկ-

տը»: Վերցնենք ակնառու օրինակ: Երիտասարդ բալետի պարուհու ողբերգական մահվան կապակցությամբ իրական և վիրտուալ հարթակում քննարկվում էր Օպերայի և բալետի թատրոնի շենքում հոգեհանգստի արարողություն կազմակերպելուց իշխանությունների հրաժարումը: Երկու հայտնի երգչուհիներ քննադատում են Մշակույթի նախարարության որոշումը. յուրաքանչյուրն իր էջում թողել է բովանդակային առումով հայելանման գրառում: Մեկի գրառման տակ հայտնվեցին համաձայնության և միայն դրական արձագանքներ, մյուսի՝ հակառակը՝ թեմային չառնչվող բացասական մեկնաբանություններ, կեղտոտ արտահայտություններ, վիրավորանք և անվարկումներով ֆիզիկական տվյալների ծաղր (խոզ, գետաձի և այլն): Հետաքրքիր է, որ երկու երգիչուհիներն էլ ունեն գրեթե միանման կազմվածք, սակայն գիրությունը ծաղրող մեկնաբանություններն ուղղված էին միայն երկրորդին: Առաջինը պաշտպանել էր «թավշյա հեղափոխությունը», երկրորդը՝ նախկին իշխանության պատգամավոր էր:

**6. Կանանց ակտիվություն**: Ինչպես հիմա, այնպես էլ մինչև սոցիալական ցանցերի տարածումը, հայ կանայք հիմնականում ապաքաղաքականացված չեն, նրանք ավելի շատ ներկայացնում են հասարակության այն զանգվածը, որը թեև չի զբաղվում քաղաքականությամբ, բայց հետաքրքրված է դրանով: Նրանք շատ հեշտ են համոզվում և հաճախ միամտորեն ներգրավվում քաղաքականության մեջ: Կանանց ներուժը, ինչպես իրական, այնպես էլ վիրտուալ դաշտում, մեր կարծիքով, պարզապես օգտագործվում է գրեթե բոլոր քաղաքական շարժումների և կուսակցությունների կողմից: Այստեղ կարելի է օգտագործել «քաղաքական թրաֆիքինգ» տերմինը», որովհետև շատ հաճախ հատկապես կանանց միջոցով են քաղաքական ուժերը կատարում սև աշխատանքը, ամենադժվարին գործերը: Հիշենք «ՀՀՇ-ի բտեռները», երբ Խորհրդային զորքի դիմաց հիմնականում կանայք էին առաջին շարքերում կանգնում, քանի որ կնոջ նկատմամբ ուժ գործադրելն ավելի անբարոյական և բացասական է ընկալվում: Կանանց, որպես կանոն, շատ են օգտագործվում նախընտրական քարոզարշավների ժամանակ և առավելագույնն՝ ընտրական տեղամասերում: Այսպես ամեն անգամ, երբ Օրինաց երկիր կուսակցության կամ նրա լիդերի համար անբարենպաստ պայմաններ էին ստեղծվում, պայքարի ճակատային գծում էր հայտնվում Հեղինե Բիշարյանը: Կոնֆլիկտային իրավիճակներում, սեփական կուսակցության լիդերին պաշտպանելու կամ մրցակիցների հանդեպ այսպես կոչված սև «PR»-ի տեխնոլոգիաներ կիրառելու գործում ակտիվանում և առաջին պլան էին մղվում նաև «Ժառանգություն» կուսակցության կանայք, առանձնապես՝

Զարուհի Բոստանջյանը: «Բարգավաճ» կուսակցությունում այդ դերը ստանձնել էր Նաիրա Զոհրաբյանը: Փորձը ցույց է տվել, որ կին քաղաքական գործչի դեմ անարդյունավետ է հակագովազդի և «սև PR-ի» տեխնոլոգիաների կիրառումը, քանի որ դա ծայրահեղ ոչ էթիկական է համարվում և դրա կիրառումը մեծ վնաս է հասցնում հարձակվող կողմին, մանավանդ, եթե նա տղամարդ է: Հենց այս համատեքստում էլ այսօր նույնպես սեփական կուսակցության համար դժվարին պահերին ինչպես «փողոցում», այնպես էլ Ազգային ժողովում կանայք հայտնվում են առաջին շարքերում և համարձակ կարծիքներով ու հայտարարություններով պաշտպանում իրենց քաղաքական ուժի շահերը: Նույնն արտացոլվում է սոցիալական հարթակներում:

2018 թվականի բուռն քաղաքական իրադարձությունների ժամանակ և իշխանափոխությունից հետո ֆեյսբուկում նմանատիպ ակտիվություն է արձանագրվում նույնիսկ նախկինում ամբողջովին ապաքաղաքական կանանց կողմից: Հետաքրիր է, որ Լը Բոնը ամբոխը համեմատում էր կնոջ հետ, որ միշտ զգացմունքային ծայրահեղությունների մեջ է ընկնում: Մեր հետազոտության տվյալները ցույց տվեցին, որ կանայք ավելի ակտիվ են «Facebook»-ում, քան տղամարդիկ, հատկապես ծայրահեղական հայացքներ ունեցողները: Ամենամեծ եռանդով, երբեմն մոլեռանդությամբ աջակցում են նոր իշխանությանը և նախատում նախկիններին, երբեմն աչքի են ընկնում հայհոյանքներով ու անեծքներով: Համաձայն «Facebook»-ի օգտատերերի բաշխվածության վերաբերյալ համաշխարհային ժողովրդագրական տվյալների՝ 43%-ը կանայք են, իսկ 57%-ը՝ տղամարդիկ [**22**]: Մեր ուսումնասիրության արդյունքում կանանց և տղամարդկանց ակտիվության տեսակետից հետևյալ պատկերն է գրանցվել: Օրինակ՝ «Գո՞հ եք Նիկոլ Փաշինյանի աշխատանքից» ռեպոստի տակ [14] «Facebook»-ում ըստ սեռի թողած մեկնաբանությունների հարաբերակցությունը կազմել է տղամարդկանց 24% և կանանց 74% (2% ֆեյքեր): Կանանց դրական արձագանքները հաճախ ներկայացվում էին վիրտուալ ինքնարտահայտման կանացի ձևերով (ծաղիկներ, սրտիկներ, համբույրներ):

**7. Երեսպաշտություն:** Առցանց տրամադրությունները չեն արտացոլում մարդանց իրական տրամադրությունները: Առցանց ռեժիմում մարդկանց քաղաքական տեսակետներն ու մեկնաբանությունները շատ դեպքերում էապես տարբերվում են ընտանիքի, գործընկերների և ընկերների շրջանակում իրական շփման ժամանակ բարձրաձայնած կարծիքներից: Սա կարող ենք բացատրել այսպես կոչված, «լռության պարույրով», որը առաջ է

քաշել հասարակական գիտությունների հայտնի հետազոտող Նոել-Նյումանը [**14**]: Նա ապացուցում է, որ եթե պատասխանողի կարծիքը տարբերվում է իր սոցիալական շրջանակի մարդկանց կարծիքներից, ապա նա փորձում է հրապարակայնորեն չարտահայտել իր տեսակետները՝ վախենալով հակամարտությունից ու մեկուսացումից: Շատ դեպքերում մարդը լռում է, երբեմն էլ սկսում է կիսել հակառակ կարծիքը՝ նվազեցնելով ռիսկերը, կենտրոնանում է հաղթանակի վրա:

8, **Բարեգործություն և հանցագործություն**: Սոցիալական մեդիան, ինչպես ցանկացած այլ գործիք, օգտագործվում է թե՛ բարու, թե՛ չարի համար: Լը Բոնը գտնում էր, որ ամբոխը նույնքան հեշտությամբ հերոսանում է, որքան դառնում է հանցագործ: Սոցիալական մեդիան կարող է օգտակար լինել անհատներին, ընկերություններին, կառավարությանը և բարեգործական կազմակերպություններին տեղեկատվության փոխանակման կամ զանգվածներին որևէ հաղորդագրություն տարածելու հարցում: Մյուս կողմից սոցիալական մեդիան այսօր չափազանց հզոր գործիք է տարբեր խարդախությունների, մարդկանցից գումարներ շորթելու և, ինչպես վկայում են ՀՀ Ազգային անվտանգության ծառայության բացահայտումները, երբեմն դառնում է օտարերկրյա գործակալների կողմից մարդկանց հավաքագրելու և լրտեսական դավաճանության մղելու հարթակ: Կոճակի սեղմումով այն հնարավորություն է տալիս ցանկացած անհատի հետ կապ հաստատելու և տեղեկություններ տարածելու աշխարհի հազարավոր և նույնիսկ միլիոնավոր մարդկանց հետ: «Մամուլին հաջողվում էր մի քանի շաբաթվա ընթացքում երևան հանել բոլորովին անհայտ մանրամասներ, անուններ, ինչ-որ հրաշքով ստիպել լայն զանգվածներին այդ անունների հետ կապել անհավանական հույսեր, մի խոսքով, այդ անուններին ապահովել այնպիսի ճանաչվածություն, որը երազում էլ չեն տեսել իրոք խոշոր անհատները: Միևնույն ժամանակ, պետական ու հասարակական կյանքի տարբեր ոլորտների հին ու փորձված գործիչները կարծես լրիվ մեռնում էին հասարակական կարծիքի համար, կամ էլ նրանց գլխին էր լցվում այնքան նողկալի զրպարտություն, որ նրանց անունները կարճ ժամանակում դառնում էին չլսված ստորության ու խաբեբայության խորհրդանիշ»: Սա հատված է Ա. Հիտլերի գրքից [**2, էջ 65-66**]: Մեր օրերում նույն երևույթը երկրաչափական պրոգրեսիայով բազմապատկվում է սոցիալական ցանցերի միջոցով:

Ջ. Սուրովեցկին իր «Ամբոխի իմաստությունը» գրքում պարզել է, որ մարդկանց մեծ խմբերն ավելի խելացի են, քան՝ էլիտան, կարող են լուծել խնդիրները, խթանել նորարարությունը, խելամիտ որոշումներ կայացնել և

նույնիսկ կանխատեսել ապագան [**16**]: Բայց խնդիրն այն է, որ խմբերը խելացի են միայն այն դեպքում, երբ նրանց մեջ մարդիկ հնարավորինս ազատ և անկախ են: Սոցիալական ցանցը, ինչպես ամբոխը, ոչ միայն բաղադրիչներից բաղկացած ապրանք է, այլև մի բան էլ ավելին. այն հնարավորություն է տալիս մուտք գործելու մարդկանց մեծ շրջանակ, այն թույլ է տալիս մարդկանց համակարգել իրենց գործողությունները ինչ-որ լավ բանի համար, սակայն տարեցտարի ցանցերն ավելի ու ավելի են դժվարացնում դրան հասնելը, քանի որ հաճախ սպասարկում են առանձին մարդկանց ու խմբերի շահերը և հանրության ուշադրությունը հրավիրում են հասարակության որոշակի շերտերի համար կարևոր խնդիրների վրա: Ավելի ուշ TED կոնֆերանսում իր «Օնլայն ամբոխի ուժն ու վտանգը» ելույթում Սուրովեցկին ցանցի վտանգը համեմատեց մրջյունի մահվան պարույրի հետ (Ant Death Spiral): «Մրջյունների գաղութը հիանալի մոդել է, որտեղ փոքր մասերը միասին աշխատում են մեծ գործի համար: Բայց, եթե մրջյուններն ինչ-որ տեղ էին գնում ու մոլորվում, նրանք սկսում են հետևել մի պարզ կանոնի՝ արե՛ք այն, ինչ անում է ձեր առջևի մրջյունը: Եվ այնպես է ստացվում, որ արդյունքում մրջյունները շրջան են կազմում և շարունակում անդադար շրջել մինչև սատկելը: Սա մի բան է, որից մենք պետք է զգույշ լինենք: Մենք պետք է զգուշանանք նորից ու նորից շրջաններով շրջելուց, մինչև մահանանք» [**24**]:

Այսպիսով, մեր ուսումնասիրության արդյունքները բացահայտեցին հետևյալ սոցիալ-հոգեբանական երևույթները: Վիրտուալ իրականության մեջ անհատը ձեռք է բերում մի շարք կոնկրետ հոգեբանական հատկանիշներ, որոնք իրեն բնորոշ չեն իրական կյանքում: Սոցցանցերում (facebook) դրսևորվում են ամբոխի հոգեբանությանը բնորոշ որակներ՝ անանունություն, ներշնչանք, հիպնոսային վիճակ, վարակ, մոլեռանդ առաջնորդի առկայություն, կանացի զգացմունքայնություն: Ինչպես նաև, գործում է այցեքարտի էֆեկտը ու տարածված են երեսպաշտությունը, բարեգործությունը և հանցագործությունը: Իսկ վիրտուալ ամբոխը չի արտացոլում իրական քաղաքական տրամադրություններն ու հասարակական կարծիքը:

### Օգտագործված գրականության ցանկ


1. *Войскунский, А. Е.,* Поведение в киберпространстве: психологические принципы // *Человек*. — 2016. — № 1. — С. 36–49.
2. Гитлер А., Моя борьба. https://onemorelibrary.com/index.php/ru/?option=com_djclassifieds&format=raw&view=download&task=download&fid=16899

3. Лебон, Г., Психология народов и масс. - М.: Академический проект, 2011. - 238 с
4. Кристакис, Н., Фаулер, Дж., Связанные одной сетью: Как на нас влияют люди, которых мы никогда не видели; пер. с англ. Н. Сашиной. - М.: ООО «Юнайтед Пресс», 2011. - 361 с.
5. Московичи, С., Век толп. Исторический трактат по психологии масс. / Пер. с фр. -М.: «Центр психологии и психотерапии», 1998. - 480 с.
6. Berger J., Arousal Increases Social Transmission of Information. Psychological Science 22(7) 891 –893.
7. Dewey C. , Where do people overshare most online? Hint: It's not the U.S. The Washington Post, May 30, 2013.
8. Fountain M., Social Media and its Effects in Politics: The Factors that Influence Social Media use for Political News and Social Media use Influencing Political Participation. https://kb.osu.edu/bitstream/handle/1811/81616/Thesis_Megan_Fountain.pdf?sequence=1&isAllowed=y 11.03.2023
9. Karatzogianni A. Firebrand Waves of Digital Activism 1994–2014: The Rise and Spread of Hacktivism and Cyberconflict. Basingstoke: Palgrave Macmillan, 2015 -185p.
10. Lewis, T. , Facebook Emotions Are Contagious. LiveScience on July 1, 2014. https://www.scientificamerican.com/article/facebook-emotions-are-contagious/ 11.03.2023
11. McLuhan M., Fiore Q. War and Peace in the Global Village. — N.Y.: Bantam, 1968. -192 p.
12. Michael A. Cacciatore, Sara K. Yeo, Dietram A. Scheufele, Michael A. Xenos, Dominique Brossard, Elizabeth A. Corley Is Facebook Making Us Dumber? Exploring Social Media Use as a Predictor of Political Knowledge . / Journalism & Mass Communication Quarterly, (2018) Volume: 95 issue: 404-424pp.
13. Mourão, R.R.; Saldaña, M.; McGregor, S.C.; Zeh, A.D. Support for Protests in Latin America: Classifications and the Role of Online Networking. *Soc. Sci.* 2016, *5*, 58. Support for Protests in Latin America: Classifications and the Role of Online Networking Support for Protests in Latin America: Classifications and the Role of Online Networking. https://www.mdpi.com/2076-0760/5/4/58/htm 11.03.2023
14. Noelle-Neumann E., The Spiral of Silence: Public Opinion—Our Social Skin. Chicago, 1994. -277p.
15. Snowdon, P., "The Revolution Will be Uploaded", Culture Unbound, Volume 6, 2014: 401–429 pp. https://core.ac.uk/download/pdf/147825998.pdf 11.03.2023
16. Surowiecki's S.,The Wesdom of Crowds http://www.asecib.ase.ro/mps/TheWisdomOfCrowds-JamesSurowiecki.pdf 11.03.2023

17. Zhang W., Johnson T., Seltzer T., Bichard S., The revolution will be networked: The influence of social networking sites on political attitudes and behavior. Social Science Computer Review 28.1 (2010): 75-92.
18. http://armtime24.com/news/145/ 01.04.2021
19. https://drive.google.com/file/d/0ByUvzKRsmK-uTmdVWTV6NUh1QjBkdC1VY2xHTHBmczUwbldv/view?fbclid=IwAR1lqJkHQXZAugEOw1We3Xb2RnPyP_7oEX91KqYgEsnIAYWjqpElwA2epdg 27.03.2023
20. https://metrics.torproject.org/userstats-bridge-country.html?start=2017-01-27&end=2023-03-27&country=am 27.03.2023
21. https://news.gallup.com/interactives/248240/global-emotions.aspx?g_source=link_NEWSV9&g_medium=related_tile1&g_campaign=item_249098&g_content=What%2520Is%2520the%2520World%27s%2520Emotional%2520Temperature%3f 10.03.2023
22. Digital 2019: Global Internet Use Accelerates - We Are Social Global https://wearesocial.com/blog/2019/01/digital-2019-glogal-internet-use-accelerates/ 11.03.2023
23. Surowiecki's S., The Wisdom of Crowds http://www.asecib.ase.ro/mps/TheWisdomOfCrowds-JamesSurowiecki.pdf 11.03.2023
24. https://www.ted.com/talks/james_surowiecki_on_the_turning_point_for_social_media/transcript 11.03.2023

# ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՄԱՆ ԳԻՏԱԿԱՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ


**ՄԱՐԻԱՄ ՄԵՀՐԱԲՅԱՆ**

ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիա

Գիտակրթական միջազգային կենտրոն

հոգեբանության ամբիոնի դոցենտ

հոգեբանական գիտությունների թեկնածու

mariam.mehrabyan@isec.am

**ԳՈՀԱՐ ԳԵՎՈՐԳՅԱՆ**

Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան,

կրթության հոգեբանության ֆակուլտետ, ուսանող

gohargevorgyan01@mail.ru



**Համառոտագիր**

Հոդվածում ուսումնասիրվում են հոգեբանական ռեսուրսների և հույզերի փոխկապակցվածության վերաբերյալ առկա գիտական մոտեցումները: Մեր հետազոտության նպատակն է ներկայացնել այն գործոնների փոխկապվածությունը, որոնք ազդեցություն ունեն հոգեբանական ռեսուրսների մոբիլիզացիայի գործում: Հաստատվում է այն գաղափարը, որ ինչպես դրական, այնպես էլ բացական հույզերը և հոգեբանական ռեսուրսների այնպիսի գործոններն, ինչպիսիք են՝ կենսունակությունը, տոլերանտությունը, լավատեսությունը, հոռետեսությունը, համարվում են խթան անձնային ներուժի մոբիլիզացիայի գործում:

Հոգեբանական ռեսուրսները ընկալվում են որպես անձնային հոգեբանական բնութագրեր, որոնք մեծապես պայմանավորում են սոցիալական միջավայրում անձի հոգեբանական առողջության և հոգեբանական բարեկեցության պահպանման հանգամանքը: Մատնանշվում է այն փաստը, որ հոգեբանական ռեսուրսները արտահայտվում են հուզականորեն հագեցվածությամբ: Հույզերի միջոցով անձը արտահայտում է իր պահանջմունքների բավարարվածությունը, դրանց վերարժևորումը: Նկատի ունենալով, որ հույզերն ունեն գնահատողական, կարգավորիչ, հաղորդակցական գործառույթներ, նշենք նաև, որ հույզերը սերտորեն շաղկապված են ռեսուրսների ֆունկցիոնալության հետ:

Այսպես ընգծվում է, որ սթերսն ինքնին նույնպես կարող է ունենալ կոնստրուկտիվ բնույթ. դա կախված է անձի կողմից սթրեսին տրված արձագանքից: Առանձնացվում են անձի լավատեսության և հոռետեսության ռեսուրսները, որոնք նույնպես հանդես են գալիս որպես արձագանք կատարվող իրադարձությանը: Վերը թվարկված գործոնների դրսևորման աստիճանից կարող ենք եզրակացնել, թե ինչպես է անձը կարողանում կառավարել իր ռեսուրսները՝ ունենալով աշխարհի նկատմամբ դրական կամ բացասական հույզեր: Ժամանակակից ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ հոգեբանական ռեսուրսների ինտենսիվությունը և կիրառելիությունը արտահայտվում են հույզերի միջոցով: Հարկ է նշել, որ մեծ նշանակություն ունի անձի կողմից հույզերի նույնականացման և  կառավարման հմտությունների ձևավորումը: Դիտարկված տեսությունների մոտեցումները թույլ են տալիս մեզ եզրակացնելու, որ հոգեբանական ռեսուրսների ակտիվացումը նկատվում է այն ժամանակ, երբ անձը կարողանում է տարանջատել և նույնականացնել ինչպես սեփական, այնպես էլ այլ անձանց հույզերը, կարողանում է բնութագրել հույզերի պատճառահետևանքային կապերը և կարողանում է կամային հատկանիշների շնորհիվ կառավարել հուզերի դրսևորումները:

**Բանալի բառեր և բառակապակցություններ.** հոգեբանական ռեսուրս, հույզ, սթրես, ռեսուրսների ֆունկցիոնալություն:

# СРАВНИТЕЛЬНЫЙ АНАЛИЗ НАУЧНЫХ ПОДХОДОВ К ИЗУЧЕНИЮ ПСИХОЛОГИЧЕСКИХ РЕСУРСОВ

**МАРИАМ МЕГРАБЯН**
Национальная академия наук Республики Армения
Международный научно-образовательный центр
доцент кафедры психологии
кандидат психологических наук
mariam.mehrabyan@isec.am

**ГОАР ГЕВОРГЯН**
Армянский государственный педагогический университет имени Х. Абовяна
студент факультета педагогической психологии
gohargevorgyan01@mail.ru

**Аннотация**

В статье рассматриваются связи психологических ресурсов и эмоций, а также научные подходы к их изучению. Согласно представленным ранее мнениям относительно данной проблематики, стимулом для мобилизации личностного потенциала считаются как положительные, так и отрицательные эмоции, а также такие психологические факторы, как жизнестойкость, толерантность, оптимизм, пессимизм.

Ресурсы воспринимаются как личностно-психологические характеристики, которые во многом обусловливают сохранение психологического здоровья и благополучия человека в социальной среде. Отмечено, что психологические ресурсы выражаются определенной эмоциональной насыщенностью. Посредством эмоций человек выражает степень удовлетворения своих потребностей и их переоценку. Имея в виду, что эмоции обладают оценочной, регулятивной, коммуникативной функциями, следует также отметить, что эмоции тесно связаны с функциональностью ресурсов.

Таким образом, можно сделать вывод, что проявление стресса может иметь и конструктивный характер, это зависит от реакции человека на стресс. Выделяются ресурсы оптимизма и пессимизма человека, которые также выступают реакцией на происходящее событие. По степени проявления перечисленных выше факторов можно сделать вывод о том, насколько человек способен контролировать свои ресурсы, испытывая положительные или отрицательные эмоции по отношению к миру. Современные исследования показывают, что интенсивность и степень применения психологических ресурсов выражаются через эмоции. Следует отметить, что большое значение имеет формирование у человека навыков идентификации и управления эмоциями. Подходы рассматриваемых теорий позволяют сделать вывод о том, что активизация психологических ресурсов наблюдается тогда, когда человек может осознать и идентифицировать как свои, так и чужие эмоции, способен

характеризовать причинно-следственные связи эмоций, и управлять проявлениями эмоций за счет волевых качеств.

**Ключевые слова и словосочетания:** психологический ресурс, эмоции, стресс, функциональность ресурсов, личный потенциал.

# COMPARATIVE ANALYSIS OF SCIENTIFIC APPROACHES TO THE STUDY OF PSYCHOLOGICAL RESOURCES

**MARIAM MEHRABYAN**
National Academy of Sciences of the Republic of Armenia
International Scientific-Educational Center
Department of Psychology,
PhD in Psychological Sciences, Associate Professor
mariam.mehrabyan@isec.am

**GOHAR GEVORGYAN**
Armenian State Pedagogical University, named after Kh. Abovyan
Faculty of Educational Psychology, Student
gohargevorgyan01@mail.ru

**Abstract**

This article explores the relationship between psychological resources and emotions and the existing scientific research pertaining to it. We aim to present the interrelationships of the factors that affect the mobilisation of psychological resources. According to what has been theorised, positive and negative emotions and psychological resources like resilience, tolerance, optimism, and pessimism are catalysts in mobilising personal potential.

Psychological resources are personal characteristics which largely influence people's psychological health within social environments. These emotionally-charged characteristics are the outlet for expressing or reviewing people's needs through emotion. In addition to their evaluative, moderative and communicative functions, emotions are also closely tied to the functionality of resources.

It follows that stress can also be constructive, depending wholly on the person's reaction to stress. Optimism and pessimism as resources act as reactions as well. Based on the degree to which these factors manifest, we can gather how well people control their resources while harbouring positive or negative attitudes towards the world. Modern research demonstrates that the intensity and applicability of psychological resources are expressed through emotions. Developing skills to identify and control emotions is of great significance. We can understand from previous literature that psychological resources activate when people are able to identify and differentiate their own and others' emotions, describe the cause and effect of emotions, and control the expression of these emotions.

**Keywords and phrases:** Psychological resource, emotions, stress, the functionality of resources, personal potential.

«Հոգեբանական ռեսուրսների» հասկացությունն այսօր լայնորեն տարածում է գտել ինչպես անձի առօրյա կյանքում, այնպես էլ ժամանակակից գիտական տեսություններում: Ռեսուրսների բազմաբովանդակ ընկալումների հիմքում ընկած են անձի հոգեկան առողջության, սոցիումում հարմարման, ակտիվ կենսագործունեության և անձնային ներուժի մոբիլիզացիայի մասին պատկերացումները **[2,12,15]**: Ակներև է, որ ռեսուրսների և, մասնավորապես, հոգեբանական ռեսուրսների, հասկացութային շրջանակը բավականին տարողունակ է և բազմաշերտ, ինչն իր հերթին ստեղծում է հիմնախնդրի ուսումնասիրման համար որոշակի մեթոդաբանական դժվարություններ: Այդ համատեքստում հոգեբանական ռեսուրսների վերաբերյալ տարաբնույթ գիտական մոտեցումների համակարգման, դրանց անալիտիկ մոդելավորման խնդիրը դառնում է արդիական և անհրաժեշտ: Հոգեբանական ռեսուրսների համակարգման հիմնախնդիրը փորձել ենք լուծել հույզերի արտահայտման և նույնականացման տեսանկյունից:

Անձի հարմարվողական կարողությունների առանցքը կազմող հոգեբանական բնութագրերի շարքում տարբեր հեղինակներ առանձնացնում են հուզական կայունության բարձր և անհանգստության ցածր մակարդակները, անձի համարժեք ինքնագնահատականը, կամային կարգավորման բարձր մակարդակը, ինքնավերաբերմունքի և կյանքի իմաստային կողմնորոշումների, անձի բարոյական պատասխանատվության բարձր մակարդակը և այլ: Լայն իմաստով, անձնային ռեսուրսները սովորաբար հասկացվում են որպես անհատական հոգեբանական բնութագրեր, որոնք կապված են և պայմանավորում են գործունեության հաջող իրականացումը և հոգեբանական բարեկեցության բարձր մակարդակը [11]: Որպես հոգեբանական ռեսուրսներ առանձնացվում են այնպիսի կառուցվածքներ, ինչպիսիք են՝ տոլերանտությունը և կենսունակությունը [3]:

Հոգեբանական ռեսուրսների հուզական հագեցվածության մասին դիտարկումներ է կատարել Ս. Մադդին, որը հոգեբանական ռեսուրսների շարքում քննարկել է կենսակայունության խնդիրը: «Կենսակայունություն» հասկացությունը հեղինակը սահմանում է ոչ թե որպես անձնային որակ, այլ որպես համոզմունքների մի ամբողջ համակարգ, որը կյանքի ընթացքում որոշակի չափով ենթակա է ձևավորման և զարգացման: Կենսակայունությունը դիտարկվում է որպես անձի բազային բնութագրիչ, որն ի հայտ է գալիս արտաքին միջավայրում անձի ակտիվության, հարմարման և սոցիալականացման ընթացքում: Այլ խոսքերով, կենսակայունությունը միջնորդի դերում է ընկալվում անձի ներաշխարհի և նրա վրա ազդող դրական կամ բացասա-

կան արտաքին ազդակների միջև: Կենսակայունությունը հաճախ ներկայացվում է որպես անձի ինտեգրատիվ հատկանիշ, որը հնարավորություն է տալիս հաջողությամբ հաղթահարելու ծառացած դժվարությունները: Այն կարելի է համարել անձի հոգեկան առողջության ցուցանիշ: Կենսունակությունն, այսպիսով, դիտարկվում է որպես անձի էկզիստենցիալ ճգնաժամի հաղթահարման սոցիալ-հոգեբանական կարևորագույն ռեսուրս: Ս. Մադդիի մեկնաբանությամբ **[3]**՝ կենսունակությունը երեք հետևյալ փոխկապակցված բաղադրիչներից բաղկացած համակարգ է՝

- ներգրավվածություն.
- վերահսկողություն.
- ռիսկի ընդունում:

Տարբեր սոցիալական գործընթացներին անձի ներգրավվածությունը դրսևորվում է որոշակի հույզերով լեցուն համոզմունքի մեջ այն հարցի շուրջ, որ մասնակցությունը սոցիումում տեղի ունեցող գործընթացներին հնարավորություն է ընձեռում կատարելու նոր բացահայտումներ սեփական անձի և սոցիալական միջավայրի մասին, ինչպես նաև՝ արժևորելու գործունեության ընթացքն ու արդյունքները: Ներգրավվածությունը հիմնված է տվյալ իրավիճակում հաջողությամբ գործելու կարողության վերաբերյալ անձի ինքնավստահության վրա:

Վերահսկողությունը մարդու վստահությունն է, որ կյանքի բոլոր իրադարձությունները գտնվում են իր տեսադաշտում, իր վերահսկողության ներքո: Այս տարրը արտացոլում է մարդու պատրաստակամությունը վերահսկելու իր գոյության բոլոր ասպեկտները: Վերահսկողության մակարդակն ուղղակիորեն կախված է մտածողության ոճից և հույզերը կառավարելու հմտություններից:

Ռիսկի ընդունումը մարդու համոզմունքն է, որ իր հետ տեղի ունեցող բոլոր իրադարձությունները նպաստում են նրա զարգացմանը՝ փորձ ձեռք բերելու միջոցով: Ռիսկի ընդունումը ցույց է տալիս անձի վերաբերմունքը փոփոխությունների նկատմամբ, ուստի և դրսևորվում է համապատասխան հույզերի միջոցով:

Կենսունակությունը՝ որպես հոգեբանական ռեսուրս, կարելի է համարել  անձի ունակություն դիմակայելու արտաքին աշխարհի անբարենպաստ հանգամանքներին, որոնք խոչընդոտում են անձնային աճին և կենսագործունեությանը:

Ինչպես նշում են մի շարք հեղինակներ, կենսունակության հոգեբանական ռեսուրսի ֆունկցիոնալությունը մեծանում է տագնապի հուզական վիճակի թուլացմանը զուգընթաց, քանի որ տագնապայնությունն առաջանում է անորոշ վտանգի սպասման պայմաններում և դրսևորվում է իրադարձությունների անբարենպաստ զարգացման ակնկալիքով:

Այս սահմանումները վերլուծելուց հետո պարզ է դառնում, որ տագնապայնությունը հանդես է գալիս որպես հուզական վիճակ, որը վկայում է ոչ միայն հոգեբանական ռեսուրսների ցածր ֆունկցիոնալության, այլև սոցիումում անձի հարմարման և հոգեբանական բարեկեցության անբավարար մակարդակի մասին:

Հոգեբանական ռեսուրսերի հետագա ուսումնասիրությունները ցույց տվեցին սուբյեկտիվորեն ընկալվող տագնապային կամ օբյեկտիվորեն վտանգ ներկայացնող պայմաններում անձի կենսունակության, դժվարությունները հաղթահարելու և համապատասխան հույզերը կառավարելու վերաբերյալ գիտական մտքի զարգացման հիմնական միտումները: Այսպես, Ջ. Ռոթթերը սոցիալական ուսուցման իր հայեցակարգի մեջ մտցրեց «վերահսկողության լոկուս» հասկացությունը՝ տվյալ իրավիճակում մարդու վարքը կանխատեսելու համար: Միևնույն ժամանակ, վերահսկողության լոկուսը դիտվեց որպես սոցիալական միջավայրի անբարենպաստ փոփոխությունների պայմաններում անձի կողմից դրսևորվող ընդհանրացված ակնկալիքի ձև, որը բնութագրում է անձի պատրաստակամության աստիճանը վերահսկելու անբարենպաստ երևույթները: Բացի դրանից՝ սահմանվեցին վերահսկողության լոկուսի հիմնական տարատեսակները՝ ըստ ներքին և արտաքին ուղղվածության: Վերահսկողության ներքին ուղղվածություն ունեցող մարդիկ ավելի հեշտ են հաղթահարում սթրեսը՝ արտաքին ուղղվածության շեշտադրմամբ անձանց համեմատ:

Կարվերի, Սելիգմանի և այլ հեղինակների կողմից առանձնացվեցին լավատեսության և հոռետեսության հոգեբանական ռեսուրսները: Դրանք նույնպես որակավորվեցին որպես անձի կողմից դրսևորվող ընդհանրացված ակնկալիք՝ ապագայի հանդեպ դրական և, համապատասխանաբար, բացասական սպասումների միջոցով **[8]:**

Յանոֆֆ-Բալմանի կողմից առաջ քաշվեց կարծիք՝ բազային համոզմունքների մասին, որոնք նույնպես հագեցած են դիխոտոմիկ հուզականությամբ **[10]**: Անձի բարյացակամության բազային համոզմունքը բացահայտում է անձի համոզմունքն իրեն շրջապատող աշխարհի հանդեպ «դրական-բացասական» կատեգորիաներով: Ըստ Յանոֆֆ-Բալմանի՝ մարդկանց մեծա-

մասնությունը համոզված է, որ աշխարհն իր ամբողջության մեջ ապրելու արժանի վայր է, և նրանում անհաջողությունները բավականին հազվադեպ են տեղի ունենում: Որպես կանոն, մարդկության մեծամասնությունը նույնպես կարծում է, որ իրենց շրջապատում են բարի, պարկեշտ, վստահելի մարդիկ, որոնք անհրաժեշտության դեպքում օգնության կգան: Այսպիսով՝ այս հիմնարար համոզմունքը բաժանվում է հուզականորեն հագեցած երկու հիմնական՝ ըստ շրջապատող մարդկանց և շրջակա աշխարհի բարյացակամության ցուցիչների:

Ա. Անտոնովսկին առաջարկել է հոգեբանական ռեսուրսների սալուտոգենետիկ պարադիգմ, որը կենտրոնացված է սթրեսային իրավիճակները հաջողությամբ հաղթահարող մարդկանց դեպքերի ուսումնասիրության վրա: Այս պարադիգմի շրջանակներում սթրեսային իրավիճակների հաղթահարմանն ուղղված ռեսուրսների դասակարգման մեջ հեղինակը հիմնվում է հոգեբանական (օրինակ՝ լավատեսությունը՝ որպես անձի հատկանիշ), սոցիալական միջավայրի (օրինակ՝ սոցիալական աջակցություն) և ֆիզիկական միջավայրի (օրինակ՝ մաքուր խմելու ջուր) գործոնների վրա, որոնք նպաստում են կապվածության զգացման առաջացմանն ու ամրակայմանը **[6]:** Ըստ Ա. Անտոնովսկու՝ նույնիսկ ինքնին սթրեսը միշտ չէ, որ պաթոգեն է, որոշակի պայմաններում այն կարող է լինել նաև սալուտոգեն գործոն՝ առաջացնելով օրգանիզմում սթրես, որը կարող է առաջացնել նոր հարմարվողական ռեակցիաներ: Սթրեսը հաջողությամբ հաղթահարելու արդյունքում մարդը կարող է դրական փորձ ձեռք բերել: Այսպիսով՝ ավելի իմաստալից է խոսել մարտահրավերների, այլ ոչ թե սթրեսային գործոնների, հակամարտությունների կամ խնդիրների մասին: Սթրեսի հետևանքները՝ լինեն դրանք բացասական, չեզոք կամ դրական, կախված չեն բուն սթրեսի բնույթից, այլ կախված են դրան արձագանքելու անհատական ձևերից, որոնք հեղինակն անվանում է գիտակցված հաղթահարման ռազմավարությունների աշխատանք՝ անգիտակից պաշտպանական մեխանիզմների փոխարեն՝ ստեղծագործական ադապտացիա և աճ, էներգիայի արդյունավետ օգտագործում՝ այն վատնելու փոխարեն, ուրախության զգացում՝ ցավ զգալու փոխարեն:

Ա. Բանդուրան, իր հերթին, շեշտադրեց ինքնարդյունավետության մասին գաղափարը [**7**]: Ինքնարդյունավետությունը ընդհանուր առմամբ հասկացվում է որպես անձի համոզմունք նրա մասին, որ նա ի վիճակի է լուծելու իր առջև ծառացած խնդիրները: Միևնույն ժամանակ, Ա. Բանդուրան ընդգծում է, որ թեպետ ինքնարդյունավետությունն ազդում է արտադրողակա-

նության վրա, սակայն ինքնարդյունավետության վերաբերյալ անձի ակնկալիքները բավարար չեն նպատակին հասնելու համար: Այստեղ կարևորվում են նաև այլ բաղադրիչները (համապատասխան իրավասություններ և մոտիվացիոն խթաններ): Ա. Բանդուրան նշում է, որ մարդու կյանքում կարող են լինել շատ դեպքեր, երբ նա կարողանում է գործել՝ վստահ լինելով հաջողության հասնելու մեջ, բայց նա չի գործում, քանի որ դրա համար դրդապատճառներ չկան: Այնուամենայնիվ, համապատասխան հմտությունների և խթանների, որպես հոգեբանական ռեսուրսներ, առկայության դեպքում արդյունավետության հանդեպ ակնկալիքները հիմնական գործոնն են, որոնց միջոցով անձը կատարում է իր գործունեության ընտրությունը՝ ըստ դրա բարդության մակարդակի, ջանքերի չափի և սթրեսային իրավիճակների հաղթահարման ժամանակ ջանքերի պահպանման տևողության:
Քանի որ հնարավոր չէ օբյեկտիվորեն գնահատել մարդուն հասանելի ռեսուրսների քանակը, ժամանակակից հետազոտությունները կենտրոնանում են հենց անձի կողմից այդ ռեսուրսների սուբյեկտիվ զգացողությունների վրա: Սուբյեկտիվ կենսունակության հայեցակարգը հոգեբանության ոլորտ են բերվել Ռայանի և Ֆրեդերիկի կողմից [14]: Ռայանը կարծում է, որ կոնֆլիկտները «Ես»-ի վրա չափազանց մեծ ազդեցություն են թողնում, որոնք խոչընդոտում  են ինքնիրացմանը, և, հետևապես, նվազեցնում են կենսունակությունը [14]:

Սուբյեկտիվ կենսունակությունը կամ «Ես»-ին հասանելի էներգիայի զգացումը, ըստ այս մոտեցման, անհատի հոգեբանական բարեկեցության կարևոր ցուցանիշ է: Այդ էներգիան կապվում է ոչ միայն և ոչ այնքան մարդու ֆիզիկական վիճակի, որքան նրա հոգեբանական ինքնագիտակցության հետ: Ռայանը և Ֆրեդերիկը սահմանում են կենսունակությունը որպես մարդու էներգիայով/ռեսուրսներով և կյանքով լի լինելու գիտակցված փորձ և այն համարում են մարդու ֆիզիկական (օրգանիզմի) և հոգեբանական բարեկեցության արտացոլում: Սա ֆենոմենոլոգիապես հիմնված չափանիշ է, որի բովանդակությունը տարբերվում է բարեկեցության արտաքին չափանիշներից, ինչպիսիք են՝ հաջողությունը, առողջությունը, սոցիալական աջակցությունը և անձնական ձեռքբերումները: Սուբյեկտիվ կենսունակությունը վերաբերում է անձի ընկալմանը՝ որպես գործունեության «աղբյուր»-ի: Սուբյեկտիվ կենսունակության աճը պետք է ուղեկցի ինքնավարության և ամբողջականության փորձին կամ ինքնաակտիվացմանը և այլ պայմաններին, որոնք կապված են անձի՝ «լիովին ընդունակ մարդ» զգալու հետ [4]:

Ինչպես տեսնում ենք, հոգեբանական ռեսուրսների գործարկումն ու ակտիվացումը սերտորեն կապված է սոցիալական միջավայրում անձի կենսագործունեության հուզական դրսևորումների հետ: Հայտնի է, որ հույզերը արտացոլում են արտաքին աշխարհի նկատմամբ անձի վերաբերմունքը և դիրքորոշումը: Հույզերը սուբյեկտիվորեն արտացոլում են անձի պահանջմունքները և ապագայի հանդեպ սպասումները: Հույզերի միջոցով արտահայտվում են սոցիալական միջավայրում անձի կենսագործունեության դրդապատճառները ու դրանց բավարարման աստիճանը, ինչպես նաև արտացոլվում է անձի վերաբերմունքը սեփական «ես»-ի և շրջապատող աշխարհի հանդեպ: Գաղտնիք չէ, որ հույզերի միջոցով անձն արտահայտում է նաև իր պահանջմունքների բավարարման անհնարինությունն ու դրանց վերարժևորումը: Հետևելով Կ. Իզարդի հույզերի հայտնի դասակարգմանը՝ կարող ենք փաստել, որ հեղինակի կողմից առանձնացված հիմնական հույզերի խմբում բացասական հույզերի քանակը զգալիորեն գերազանցում է դրական հույզերին: Այսպես, որպես դրական հույզեր Կ. Իզարդն առանձնացնում է ուրախությունն ու հետաքրքրությունը: Առանձնացնելով զարմանքը՝ որպես չեզոք հույզի տեսակ՝ մնացած հույզերի տեսակները հեղինակը օրակում է իրենց բացասական նշանակություններով, ինչպիսիք են՝ տխրությունը, զայրույթը, զզվանքը, արհամարհանքը, վախը, ամոթը և մեղքը:

Հույզերի գործառութային ուսումնասիրությունները ցույց են տալիս անձի հոգեկան առողջության և կենսագործունեության համար անհրաժեշտ գործառույթների դրսևորման հարցում հույզերի բազմաֆունկցիոնալ նշանակությունը: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ հույզերը կատարում են գնահատողական, ռեգուլյատիվ, հաղորդակցական գործառույթներ, դրանք սերտորեն շաղկապված են որոշակի սոցիալական իրավիճակներում հոգեբանական ռեսուրսների ձևավորման և գործարկման երևույթների հետ:

Մի շարք հեղինակների կողմից բացասական հույզերի արտահայտումը գնահատվում է որպես ահազանգ միջավայրում անձի ադապտացիայի և անձնային ներուժի մոբիլիզացիայի համար, որի վերջնարդյունքը կանխորոշվում է հոգեբանական ռեսուրսների ֆունկցիոնալության աստիճանով **[5]:** Ժամանակակից ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ հոգեբանական ռեսուրսների ֆունկցիոնալության ինտենսիվությունը, ուղղվածությունը և կիրառելիությունն արտահայտվում են հույզերի միջոցով, որոնց շարքում բացասական հույզերի տեսակները կրում են ոչ միայն ռեսուրսների մոբիլիզացիան ազդարարող, այլև, ընդհանուր առմամբ, անձի պահանջմունքների բավարարման մակարդակի վերաբերյալ տեղեկատվական գործառույթներ:

Այս համատեքստում կարևորություն է ներկայացնում հույզերի կառավարման և հոգեբանական ռեսուրսների ակտիվացման համեմատական վերլուծությունը: Դ. Լյուսինի ձևակերպմամբ՝ անձի վարքագծում հոգեբանական ռեսուրսների ակտիվացումը նկատվում է այն դեպքում, երբ նա ՝

- կարող է տարանջատել և նույնականացնել սեփական և այլոց հույզերի տեսակները,
- ընդունակ է ներկայացնելու իր հույզերը վերբալ մակարդակում,
- կարող է բնութագրել հույզերի պատճառահետևանքային կապերը,
- կարող է վերահսկել հույզերի դրսևորման ինտենսիվությունը և ուղղվածությունը,
- կարող է կամային հատկանիշների շնորհիվ առաջացնել կամ զսպել այս կամ այն հույզի արտահայտումը **[1]:**

Հույզերի բնութագրման հետաքրքիր մոդել է առաջարկում Ն. Հոլը, որ հույզերի ֆունկցիոնալությունն ու հասկացումը ամբողջացնում է հուզական ինտելեկտ հասկացության միջոցով և սահմանում է հուզական ինտելեկտի հոգեախտորոշման հետևյալ բաղադրիչները՝

- սեփական հույզերի կառավարում,
- հուզական տեղեկացվածություն,
- հուզական ինքնամոտիվացիա,
- ապրումակցում,
- այլոց հույզերի նույնականացում **[9]:**

Հոգեբանական ռեսուրսների ֆունկցիոնալության առումով հույզերի արտահայտման և կառավարման վերը նշված մոդելները կարևորվում են ինչպես տեսական, այնպես էլ մեթոդական նշանակություններով: Հույզերի, հատկապես բացասական հույզերի արտահայտման ինտենսիվության և ուղղվածության վերաբերյալ տվյալները կարող են տեղեկություն հաղորդել հոգեբանական ռեսուրսների ակտիվացման պահանջմունքի վերաբերյալ, ինչպես նաև՝ արտահայտել անձի պահանջմունքների անբավարարվածության մակարդակը:

Մեթոդապես, հույզերի և հոգեբանական ռեսուրսների հոգեախտորոշման զուգահեռ իրականացվող փորձարարական հետազոտությունները հնարավորություն են ընձեռում մշակելու հույզերի, հոգեբանական ռեսուրսների ֆունկցիոնալության ինտեգրալ մոդել, որի շրջանակներում հնարավոր կլինի սոցիալական և անձնային մակարդակներում պահանջվող պոզիտիվ ռեսուրսների ակտիվացմանն ու ամրակայման հոգեշտկող աշխատանքները

համալրել հոգեբանների նույնականացման և կառավարման հմտությունների զարգացման աշխատանքներով:

**Օգտավործված գրականության ցանկ**


1. Андреева Г.М., Богомолова Н.Н., Петровская Л.А. Современная социальная психология на Западе (теоретические направления), М., 1978, 290.
2. Люсин Д.В. Новая методика для измерения эмоционального интеллекта: опросник ЭмИн // Психологическая диагностика, 2006. № 4. С. 3-22.
3. Мадди С. Смыслообразование в процессах принятия решения // Психологический журнал. 2005. Т. 26. № 6. С. 87-101.
4. Реан, А. А. Психология личности / А.А. Реан. - Санкт-Петербург: Питер, 2013. - 288 с.
5. Саенко Ю.В. Регуляция эмоций. Тренинги управления чувствами и настроениями. – Спб: Речь, 2010. – 232 с.
6. Antonovsky, A. (1984). The sense of coherence as a determinant in health. In J. D. Matarazzo (Ed.) Behavioral Health: A Handbook of Health Enhancement and Disease Prevention (114–129). N.Y.: John Wiley.
7. Bandura, A. (1977). Self-efficacy: Toward a unifying theory of behavior change. Psychological Review, 84, 191–215.
8. Carver, C. S., Gaines, J. G. (1987). Optimism, pessimism, and postpartum depression. Cognitive Therapy and Research, 11, 449–462.
9. Doroshkevych, D. & Ilyash, O. (2020). The Investigation of Emotional Intelligence Level in Non-Government Organization with the Use of Hall’s Test . The Journal of International Scientific Researches , 2020 Additional Number , 6-14 . DOI: 10.23834/isrjournal.709199
10. Janoff-Bulman, R. (1989). Assumptive worlds and the stress of traumatic events: Application of the schema construct. Social Cognition, 7, 113–136
11. Maddi, S. R. (2004). Hardiness: An operationalization of existential courage. Journal of Humanistic Psychology, 44, 279–298.
12. Mayer J.D., Salovey P., Caruso D.R. Emotional Intelligence as Zeitgeist, as Personality, and as a Mental Ability. In: R. Bar-On, J.D.A. Parker (Eds.), Handbook of emotional intelligence: Theory, development, assessment, and application at home, school, and in the workplace. San Francisco, CA: Jossey-Bass. 2000. - pp. 92-117.
13. Rotter, J. B. (1975). Some problems and misconceptions related to the construct of internal versus external control of reinforcement. Journal of Consulting and Clinical Psychology, 43, 56–67

14. Ryan, R. M., Frederick, C. (1997). On energy, personality, and health: Subjective vitality as a dynamic reflection of well-being. Journal of Personality, 65(3), 529–565.
15. Snyder, C. R., Harris, C., Anderson, J. R., Holleran, S. A., Irving, L. M., Sigmon, S. T., et al. (1991). The will and the ways: Development and validation of an individual-differences measure of hope. Journal of Personality and Social Psychology, 60, 570–585.

# ԸՆՏԱՆԵԿԱՆ ԿՈՆՖԼԻԿՏՆԵՐԻ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ, ՊԱՏՃԱՌՆԵՐԸ, ԴՐԱՆՑ ԾԱԳՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄԸ

**ԳԱՅԱՆԵ ԳՐԻԳՈՐՅԱՆ**
Խ. Աբովյանի անվանի հայկական պետական մանկավարժական համալսարան,
քիմիական գիտությունների թեկնածու
gayanca@yahoo.com

**Համառոտագիր**

Վերջին ժամանակներում ընտանեկան հարաբերություններն էական փոփոխությունների են ենթարկվել: Ավելացել է բջջային՝ ամուսիններից և երեխաներից կազմված ընտանիքների թիվը: Փոխվել են ընտանիքում ամուսինների ֆունկցիաները, նրանց արժեհամակարգը, վերաբերմունքը երեխաների հանդեպ, դաստիարակության մեթոդները: Շատ կարևոր է ուսումնասիրել ընտանեկան հարաբերություններում տեղի ունեցող տեղաշարժերը, ընտանեկան կոնֆլիկտների առաջացման պատճառները և դրանց ազդեցությունը երեխայի անձի ներդաշնակ ձևավորման վրա: Գոյություն ունի «կոնֆլիկտ» հասկացության մի քանի սահմանում: Բ. Մ. Ռեբուսը կոնֆլիկտը բնութագրում է որպես մարդկանց գիտակցության մեջ միմյանց հանդեպ հակադարձ ուղղված և անհամատեղելի միտումների բախում՝ կապված բացասական սուր հուզական ապրումների հետ **[1]**:

Ըստ վիճակագրական տվյալների՝ ընտանեկան կոնֆլիկտների հիմնական պատճառը հաղորդակցման կուլտուրայի, փոխադարձ վստահության, քաղաքավարության, ուշադրության, բարյացակամության, նրբազգացության բացակայությունն է:

Իրականում կոնֆլիկտների պատճառ կարող են հանդիսանալ հոգեբանական անհամատեղելիությունը, սեռական խնդիրները, միմյանց մտադրությունները չհասկանալը, վարքի սխալ մեկնաբանությունները, բարոյականության վերաբերյալ տարբեր մոտեցումները, պարտքի և պատասխանատվության զգացումի բացակայությունը և այլն:

Ընտանիքն ամուր է այն ժամանակ, երբ զույգերի միջև ստեղծված են բարիդրացիական հարաբերություններ, երբ ազատ քննարկվում են տարբեր թեմաներ, երբ ամուսիններն ունեն ընդհանուր հետաքրքրություններ, ընդունակ են ապրումակցման, զիջող են և, ամենակարևորը, երբ ընտանիքի հիմքում սերն է:

**Բանալի բառեր և բառակապակցություններ.** ընտանիք, կոնֆլիկտներ, համատեղելիություն, ներանձնային, միջանձնային, անհատական-խմբային:

# ПОНЯТИЕ СЕМЕЙНЫХ КОНФЛИКТОВ, ПРИЧИНЫ, МЕХАНИЗМ ИХ ВОЗНИКНОВЕНИЯ

**ГАЯНЕ ГРИГОРЯН**
Армянский государственный педагогический университет им. Х. Абовяна
кандидат химических наук
gayanca@yahoo.com

**Аннотация**

В последнее время семейные отношения претерпели значительные изменения. Увеличилось количество мобильных семей, состоящих из супругов и детей. Изменились функции супругов в семье, их система ценностей, отношение к детям, методы воспитания. Очень важно изучать изменения в семейных отношениях, причины семейных конфликтов и их влияние на гармоничное формирование личности ребенка. Существует несколько определений конфликта. Б. М. Ребус характеризует конфликт как столкновение противоположных и несовместимых тенденций в сознании людей, связанных с негативными острыми эмоциональными переживаниями **[1]**.

По статистическим данным, основной причиной семейных конфликтов является отсутствие культуры общения, взаимного доверия, вежливости, внимания, доброты, такта.

На самом деле причиной конфликтов может быть психологическая несовместимость, сексуальные проблемы, непонимание намерений друг друга, неверное толкование поведения, разные подходы к морали, отсутствие чувства долга и ответственности и т.д.

Семья крепка, когда между супругами существуют дружелюбные отношения, когда свободно обсуждаются различные темы, когда супруги имеют общие интересы, умеют жить вместе, обходительны и, самое главное, когда семья строится на любви.

**Ключевые слова и словосочетания:** семья, конфликты, совместимость, внутриличностная, межличностная, индивидуально-групповая.

# CONCEPT OF FAMILY CONFLICTS, CAUSES, MECHANISM FOR THEIR OCCURRENCE


**GAYANE GRIGORYAN**
Armenian State Pedagogical University after Kh. Abovyan
PhD in Chemical Sciences
gayanca@yahoo.com



**Abstract**

In recent times, family relations have undergone significant changes. The number of mobile families consisting of spouses and children has increased. The function of spouses in the family, their value system, attitude towards children and upbringing methods have changed. Studying the changes in family relationships, family conflict causes, and their impact on a child's personal harmonic formation is essential. There are several definitions for conflict conception. B. M. Rebus describes the conflict as one of people's consciousness clash of opposite and incompatible tendencies towards each other associated with negative acute emotional feelings.

According to statistical data, the main cause of family conflict is the lack of communication culture, mutual trust, courtesy, attention, kindness and tenderness.

In fact, the cause of family conflicts can be psychological incompatibility, sexual problems, not understanding each other's intentions, wrong interpretations of behaviour, different approaches to morality, and lack of duty and responsibility sense.

The family is strong when there are neighbourly relations between the couples when various topics are freely discussed, when the spouses have common interests, are able to live together, are accommodating and, most notably when the family is based on love.



**Keywords and phrases**: family, conflicts, compatibility, intrapersonal, interpersonal, individual-group.


Ըստ Ա. Վ. Սերգեյչուկի՝ կոնֆլիկտը անհատների անհամատեղելի նպատակների, հետաքրքրությունների, դիրքորոշումների, կարծիքների, հայացքների բախում է **[2]**:

Ի տարբերություն Ռեբուսի և Սերգեյչուկի՝ Ա. Մ. Ստոլյարենկոն կոնֆլիկտը բնութագրում է ոչ թե որպես բախում, այլ հակասություն. «Կոնֆլիկտը երկու և ավելի մարդկանց (խմբերի) միջև սուր և դժվար լուծվող հակասություն է, որը բնութագրվում է հակամարտությամբ, հակասող կողմերի կողմից ուժեղ միջոցների փոխադարձ կիրառմամբ՝ հակառակ կողմին հաղթելու նպատակով» **[3]**:

Ըստ վիճակագրական տվյալների ընտանեկան կոնֆլիկտների հիմնական պատճառը հաղորդակցման կուլտուրայի, փոխադարձ

վստահության, քաղաքավարության, ուշադրության, բարյացակամության, նրբազգացության բացակայությունն է:

Իրականում կոնֆլիկտների պատճառ կարող են հանդիսանալ հոգեբանական անհամատեղելիությունը, սեռական խնդիրները, միմյանց մտադրությունները չհասկանալը, վարքի սխալ մեկնաբանությունները, բարոյականության վերաբերյալ տարբեր մոտեցումները, պարտքի և պատասխանատվության զգացումի բացակայությունը և այլն:

Ընտանիքն ամուր է այն ժամանակ, երբ զույգերի միջև ստեղծված են բարիդրացիական հարաբերություններ, երբ ազատ քննարկվում են տարբեր թեմաներ, երբ ամուսիններն ունեն ընդհանուր հետաքրքրություններ, ընդունակ են ապրումակցման, զիջող են և, ամենակարևորը, երբ ընտանիքի հիմքում սերն է:

Ընտանեկան կոնֆլիկտների հիմքում ընկած է ամուսինների նպատակների և հետաքրքրությունների օբյեկտիվ տարբերությունները, որը հարաբերություններում ընդունվում է որպես հակադրություն: Սոցիալ-հոգեբանական հետազոտությունները հնարավորություն են տալիս առանձնացնելու ընտանեկան կյանքում առաջացող կոնֆլիկտների չորս տեսակ՝

1. Ներանձնային- պետք է նշել, որ այն մարդը, որն ունի ներքին կոնֆլիկտներ, հաճախ սխալ է գնահատում շրջապատի մարդկանց և տեղի ունեցող իրադարձությունը: Արդյունքում տեղի է ունենում հոգեբանական ճնշում և հնարավոր է ներանձնային կոնֆլիկտը վերափոխվի միջանձնային կոնֆլիկտի:

2. Միջանձնային-կոնֆլիկտը ծագում է 2 կամ ավելի մարդկանց միջև: Միջանձնային կոնֆլիկտն առաջանում է մարդկանց համատեղ աշխատանքի ժամանակ և ծագում հակադրությունների լուծման ժամանակ: Նման կոնֆլիկտի լուծումը կախված է մարդկանց զարգացման մակարդակից:

3. Անհատական-խմբային կոնֆլիկտը առաջանում է այն ժամանակ, երբ անհատի նպատակը, վարքը չի համապատասխանում խմբի նորմերին:

4. Միջխմբային կոնֆլիկտ-այս դեպքում կարող է տեղի ունենալ բախում տարբեր խմբերի նպատակների, վարքի միջև: Կոնֆլիկտային գործունեության հիմքում ընկած են՝

ա) գործունեության բնույթը (հարձակվողական, պաշտպանողական, չեզոք).

բ) ակտիվության կոնֆլիկտներ (սիրո կորուստ, կապվածություն, կոպտություն, խանդը, կյանքին տարբեր հայացքներով նայելը).

գ) ներքին կոնֆլիկտ (դավաճանություն, մեկ այլ մարդու հանդեպ նոր զգացում):

Ընտանեկան կյանքը մի ամբողջ գիտություն է, որը շատ բարդ է և անընդհատ զարգացող, քանի որ երկու ճակատագրեր միացել են և դարձել ընդհանուր երկու աշխարհներ: Անհրաժեշտ է ապրել ընդհանուր հոգսերով, հաջողություններով **[4]**:

Ընտանիքի յուրահատկություններից մեկն այն է, որ մի քանի մարդ ամենասերտ փոխհարաբերությունների մեջ են լինում երկարատև ժամանակահատվածում, մի քանի տասնյակ տարիների ընթացքում: Նման ինտեսիվ փոխազդեցության համակարգում դժվար է գոյակցել առանց վեճերի, կոնֆլիկտների և ճգնաժամերի: Ընտանիք կազմելուց հետո սկսվում է ամուսնական առօրյան իր հոգսերով, ամուսինների միջև կարող են առաջանալ նաև հակասություններ, կոնֆլիկտներ, որոնք առաջ են բերում ներընտանեկան անբարենպաստ փոխհարաբերություններ: Այդ կոնֆլիկտները կարող են վերաբերվել ամուսնական կյանքի տարբեր կողմերին, դրամի, հետաքրքրություններին, բարեկամներին, ազգականներին, երեխաներին և այլն: Ներընտանեկան անբարենպաստ փոխհարաբերությունների առաջացման հիմնական և ավելի հաճախ հանդիպող պատճառներից մեկը կոնֆլիկտներն են ընտանիքի անդամների միջև: Ընտանիքի անդամների միջև միշտ առկա է պայքար հանուն իշխանության, հանուն որոշումներ կայացնելու իրավունքի: Օրինակ՝ ծնողի և երեխայի միջև որոշակի պայքար է առաջանում, թե տարբեր խնդիրների շուրջ ով է վճիռ կայացնելու: Միջամուսնական կոնֆլիկտների առաջացումն ավելի հավանական է դառնում հետևյալ պայմանների առկայության դեպքում կամ հետևյալ պատճառներով՝

1. սեփական ես-ի նշանակալիության, կարևորության պահանջմունքի, չբավարարվածության, ամուսիններից մեկի սոցիալական դիրքի ցածրացում.

2. դրական հույզերի, պահանջմունքի, չբավարարվածության, քնքշանքի հասկանալու և փոխըմբռնման բացակայության և այլն.

3. ցածր կրթամակարդակ.

4. աշխատանքի բացակայություն և ֆինանսական դժվարություններ.

5. կախվածություն ծնողների ընտանիքներից:

Ամուսնական կոնֆլիկտները հաճախ առաջանում են զույգերի ֆիզիկական և հոգեբանական անհամատեղելիության պատճառով: Հոգեբանական համատեղելիությունը պայմանավորված է ամուսինների խառնվածքի տիպով և բնավորության գծերով: Որքան ամուսինները նման են իրար բնավորությամբ և խառնվածքով, այնքան ավելի շատ են նյարդայնացնում և հոգնեցնում միմյանց: Ներդաշնակ զույգ կարող են լինել օրինակ սանգվինիկ ամուսինն ու մելանխոլիկ կինը: Ֆիզիկական համատեղելիությունը պայմանավորված է կնոջ և տղամարդու օրգանիզմի կառուցվածքով, սեռական օրգանների առանձնահատկություններով, որոնք էական նշանակություն ունեն սեռական կյանքում: Արդեն ապացուցված է, որ սեռական անբավարարվածությունը, ինտիմ կյանքում առկա խնդիրներն առաջացնում են սառնություն ու անտարբերություն կին-տղամարդ հարաբերություններում:

Ընտանիք կազմելիս հարկավոր է հաշվի առնել նաև այն, որ տղամարդկանց օրգանիզմի վերջնական ձևավորումը տեղի է ունենում 25 տարեկանում, իսկ կանանց օրգանիզմի վերջնական ձևավորումը՝ 18-20 տարեկանում: Բացի այդ, տղամարդկանց սեռական հակումն ավելի երկար է պահպանվում, քան կանանց: Ուստի, կենսաբանական տեսանկյունից ցանկալի է, որ զույգ կազմելիս տղամարդը լինի տարիքով ավելի մեծ, որպեսզի սեռական կյանքում լինի ներդաշնակություն **[5]**:

Ամուսնական կոնֆլիկտների առաջացման մյուս հաճախակի հանդիպող պատճառը տղամարդու՝ որպես լոկ ֆինանսի աղբյուր դիտարկվելն է: Այն միտքը, որ ընտանիքի անդամները ֆինանսապես տղամարդուց կախվածության մեջ են, սկսում է ճնշել և բացասաբար անդրադառնալ նրա հոգեկանի վրա: Արդյունքում թուլանում է նրա կապը նախ՝ կնոջ, ապա՝ երեխաների հետ:

Գոյություն ունեն նաև այնպիսի ընտանիքներ, որտեղ բավականին բարձր է կոնֆլիկտայնության աստիճանը, խաթարված է ընտանիքի անդորրը, միջանձնային հարաբերություններում առկա է լարվածություն: Դրանք են՝

- նևրոտիկ ընտանիք, որտեղ զույգի մոտ նկատվում են տագնապայնության բարձր մակարդակ, քնի խանգարում, ագրեսիվություն.

- ճգնաժամային ընտանիք, որտեղ ամուսինները թշնամաբար են տրամադրված միմյանց նկատմամբ, հաշվի չեն առնում միմյանց հետաքրքրությունները, հակված չեն փոխզիջման.

- պրոբլեմային ընտանիք, որտեղ առկա խնդիրների, կյանքի ծանր պայմանների արդյունքում ընտանիքը հայտնվում է անկայուն վիճակում:

Ընտանեկան վեճերն իրենց բնույթով կարող են լինել պերմանենտ (անընդհատ): Նման ընտանիքները հիմնականում լինում են քրեածին, կոնֆլիկտածին, անբարենպաստ ընտանիքներ:

Վեճերի ժամանակ գլխուղեղի կեղևում առաջանում է օպտիմալ գրգռման օջախ, որը կարող է ընդգրկել ահռելի ու ավելի կետերի տարածք:

Այս դեպքում մարդը կորցնում է ինքնատիրապետումը, դիմացինին լսելու ունակությունը և վեճը վերածվում է կոնֆլիկտի: Ցանկացած վեճի հիմքում ընկած է անհատականության երևույթը, այսինքն՝ անհատականը:

Մարդն աշխատում է, հնարավորինս վիրավորելով դիմացինին, բարձրացնել «ես»-ի արժեքը: Կոնֆլիկտի հիմնական պատճառը անձնավորության որևիցե պահանջմունքի չբավարարված լինելն է: Սկսած ֆիզիկական, կենսաբանական,ֆիզիոլոգիականից մինչև հոգևոր պահանջմունքները:

Կոնֆլիկտների մեխանիզմը հասկանալու համար անհրաժեշտ է առանձնացնել պատկերացումների 3 համակարգ՝

1. էգոցենտրիկ համակարգ - հիմքում ընկած է սեփական «ես»-ը, այլ մարդիկ կամ առարկաները հանդես են գալիս որպես կա՛մ օգտակար գործիք, կա՛մ խոչընդոտ.

2. այլետրոցենտրիկ համակարգ - կենտրոնում ընկած է ուրիշը.

3. սոցիոցենտրիկ - հիմքում ընկած է մեկը **[6]**:

Ընտանիքի համար ճգնաժամային շրջաններն են՝

1. Միմյանց հարմարվելու փուլ՝ամուսնական կյանքի առաջին տարին է, երբ ձևավորվում է նոր որակի հարաբերություններ, նոր հոգևոր արժեքներ:

2. Երեխա ունենալու փուլ՝ երեխաների ծնունդը բարդացնում է ամուսինների մասնագիտական աճի հնարավորությունները, քիչ ժամանակ է տրամադրվում անձնական գրավիչ գործունեությանը (հոբբի), կնոջ հոգնածության պատճառով, կապված երեխայի խնամքի հետ, ժամանակավոր սեռական ակտիվության նվազումը:

3. Բախման փուլ՝ երեխաների դաստիրակության վերաբերյալ ամուսինների և նրանց ծնողների հայացքների, տեսակետների բախումը:

4. Միապաղաղության կամ միջին ամուսնական տարիքի փուլ՝ այս շրջանը երբեմն անվանում են նաև զգացմունքների հագեցվածության փուլ կամ քաղցի շրջան:

5. Իվոլուցիոն կամ միայնակության զգացման փուլ: Այս շրջանը համարվում է 18-ից 24 տարի համատեղ կյանքից հետո, որը հաճախ համընկնում է ինվոլուցիոն շրջանի հետ: Կարող է ձևավորվել միայնակության զգացում՝ կապված երեխաների հեռանալու հետ: Այս փուլում հսկայական նշանակություն ունեն արտաքին գործոնները՝ նյութական վիճակի վատթարացումը, աշխատանքի անցնելու անհնարինությունը, սեփական բնակարանի բացակայությունը և այլն **[7]**:

Ընտանեկան անբավարարվածության վիճակն առաջանում է կոնֆլիկտային իրավիճակների արդյունքում, որոնցում դրսևորվում է տարաձայնություն տվյալ անհատի վերաբերյալ, սպասումների և նրա իրական կյանքի միջև: Կոնֆլիկտից կոնֆլիկտ կուտակվելով՝ այսպիսի անբավարարվածությունը արտահայտվում է հուզական պոռթկումներում և հիստերիկ դրսևորումներում, որոնց հաճախականացումը կարող է լրջորեն խաթարել ընտանիքի ամրությունը: Ճնշող մեծամասնությամբ, պատճառները, որոնք հանգեցնում են ընտանիքում կոնֆլիկտային իրավիճակի, առաջ են բերվում սոցիալական գործոններով:

Նշենք նաև, որ ընտանեկան վեճերի «ամենաթեժ» պատճառը ամուսիններից մեկի խանդն է: Իրավիճակը բարդանում է նրանով, որ եթե անգամ «մեղավոր կողմը» ոչ մի առիթ չի տվել, դա ոչ մի բան չի փոխում: Բոլոր փաստարկներն անտեսվում են, քանի որ խանդը զգացմուն-

քի հիվանդագին արտահայտում է «անխառն» վիճակում, երբ բանականության փաստարկները չեն աշխատում **[8]**:

Մյուս ակնհայտ պատճառը, այսպես կոչված, «ուղեղի լուսավորումն» է, որը գործում է հատկապես երիտասարդ ընտանիքներում: Երբ համատեղ կյանքի ռոմանտիկ շրջանն ավարտվում է, (միջինը 1-ից 3 տարի հետո) կողակցի թերությունները համակերպվել բոլորը չեն կարողանում: Հաճախ բացահայտում են, որ կիրքը՝ կիրք, բայց ստացած դաստիարակության, կրթության տարբերությունը, չհամընկնող կենսական արժեքները, մասնագիտական կայացածության հարցը և այլ խնդիրներ պարարտ հող են դառնում ներքին չարացածության համար, ինչը հանգեցնում է բացահայտ կոնֆլիկտների: Երբ ներքին լարվածությունը գերհասունանում է այն մտքից, որ կողակիցը համատեղ կյանքում ամենևին էլ այնպիսին չէ, ինչպիսին պատկերացնում էիք, սկսվում են մանր խայթոցները, որոնք սովորաբար արագ վերաճում են լուրջ վիճաբանությունների:

Բացի այդ՝ կյանքի կենցաղային կողմից չես փախչի, իսկ նյութական ապահովությունը, տան պայմաններն ու հարմարավետությունը իսկապես կարևորագույն դեր են խաղում: Դժբախտաբար, ժամանակակից ընտանիքների մեծ մասը չի կարող պնդել, թե գոհ է նյութական վիճակից: Իսկ երբ ստիպված եք լինում վարձած մի տնից մյուսը տեղափոխվել, վճարել ապառիկ ապրանքների, կարծես, չսպառվող տոկոսները, երբ բնակարանում 20 տարի շարունակ վերանորոգում չի իրականացվել, իսկ խորհրդային տարիներին գնված կահույքն սկսել է քանդվել, վեճ ու կռիվներն անխուսափելի են:

**Կոնֆլիկտ ծնող-երեխա հարաբերություններում**: Ընտանիքում ծնողը կարող է կոնֆլիկտներ ունենալ տարբեր տարիքի երեխաների հետ: Պատճառը ծնողի՝ երեխայի տարիքային և հոգեբանական առանձնահատկությունները չգիտակցելն է, դաստիարակության ձևերին չտիրապետելը, երեխայի մտադրությունները չհասկանալը, նրան մշտապես փոքր և անկարող մարդ համարելը: Մի տարիքային փուլից մյուսին անցումն ուղեկցվում է ճգնաժամով, որը միշտ չէ, որ սահուն է ընթանում: Ճգնաժամը կարող է լարվածություն առաջացնել հարաբերություններում՝ հատկապես երեք տարեկանում և դեռահասության տարիքում: Երեք տարեկանի ճգնաժամի պատճառը գոյություն ունեցող հակասությունն է երեխայի պահանջմունքների և դրանց բավարարման միջև **[9]**:

Ծնող-երեխա հարաբերություններում կոնֆլիկտներ են առաջանում նաև սխալ դաստիարակության պատճառով: Ծնողը միշտ ձգտում է իր երեխային դարձնել օրինակելի, անթերի՝ կիրառելով խիստ պատժամիջոցներ, կոպիտ վարվելով, քիչ խրախուսելով, երբեմն էլ դաժան վերաբերմունք դրսևորելով: Ոչ տեղին պատիժը, ծնողի կոպտությունը, դաժանությունը երեխայի մեջ հանգեցնում են երկու ծայրահեղ դրսևորումների. առաջին դեպքում երեխան մեծանում է չարացած, ագրեսիվ, երկրորդ դեպքում՝ անվստահ, բարդույթավորված: Բազմակի դիտարկումները ցույց են տվել, որ ավտորիտար ոճի ծնողների երեխաները մեծանում են ընկճված, անվստահ, ինքնամփոփ, կաշկանդված, չշփվող:

Նրանք ինքնավստահ և նախաձեռնող չեն, չեն կարողանում ինքնուրույն որոշումներ կայացնել, կազմակերպել սեփական կյանքն ու աշխատանքը:

**Կոնֆլիկտ ընտանիքի այլ անդամների հետ:** Եթե համեմատենք ընդլայնված և բջջային ընտանիքները, ապա կտեսնենք, որ ընդլայնված ընտանիքներում առաջանում են այնպիսի կոնֆլիկտներ, որոնք ուղղակի չեն կարող առաջանալ բջջային ընտանիքներում: Հայկական իրականությունում ընդունված ավանդույթ է, երբ տղան ամուսնանում և իր կնոջ հետ ապրում է հայրական ընտանիքում, որտեղ, բացի ծնողներից, ապրում են նաև եղբայրները, քույրերը և այլ հարազատներ: Որքան բազմանդամ է ընտանիքը, այնքան դժվար է ապահովել բարիդրացիական մթնոլորտ: Բազմաթիվ ընտանիքների ուսումնասիրությունները ցույց են տվել, որ ընդլայնված ընտանիքներում կոնֆլիկտը հիմնականում առաջանում է հարսների և սկեսուրների միջև: Կոնֆլիկտների պատճառ կարող են հանդիսանալ կենցաղային պայմանները, ֆինանսական խնդիրները, կրթվածության մակարդակի տարբերությունները, մայրական խանդը, հարսի ինքնահաստատվելու ձգտումը, երեխայի դաստիարակության հետ կապված տարբեր մոտեցումները, բնավորության և խառնվածքի անհամատեղելիությունը և այլն: Կոնֆլիկտներ են առաջանում նաև ընտանիքի այլ անդամների միջև, երբ առաջ է գալիս նյութական բարեկեցության, ժառանգության հարցը: Առաջին հայացքից թվում է, թե այս տեսակի կոնֆլիկտներն ազդեցություն չունեն երեխայի հոգեկան զարգացման վրա, սակայն, երբ երեխան ականատես է լինում, թե ինչպես են ծնողները վիճաբանում, վիրավորում, վարկաբեկում մեկը մյուսին, փոխվում է նաև նրա հոգեվիճակը: Կոնֆլիկտային իրադրությունը երեխային

դարձնում է սառնասիրտ, չշփվող, դաժան, անուշադիր, ագրեսիվ, կոպիտ կամ էլ անվստահ, ինքնամփոփ, ընկճված ու անտարբեր **[10]**:

Այսպիսով՝ կարող ենք ասել, որ ընտանիքի անառողջ մթնոլորտը, ամուսինների կոնֆլիկտային հարաբերությունները միանշանակ բացասական ազդեցություն են գործում երեխայի վրա: Երեխան, որը մշտապես գտնվում է լարված, սթրեսային վիճակում, ունենում է «ծանր» բնավորություն, չի կարողանում կապեր հաստատել հասակակիցների և մեծահասակների հետ, ունենում է ոչ ադեկվատ, ցածր ինքնագնահատական:

### Օգտագործված գրականության ցանկ


1. Ребус Б.М. Психологические основы управления школой. – Ставрополь.: СГПИ. 1990, էջ 45.
2. Сергейчук А.В. Социология управления. - СПб.: Бизнес-пресс, 2002, էջ 212.
3. Столяренко А.М. Общая и профессиональная психология. - М.: ЮНИТИ-ДАНА, 2003, էջ 294.
4. Андреева Т. В. Семейная психология: Учеб. пособие. — СПб.: Речь, 2004. Էջ 37
5. Смелзер Н. Сексуальные роли и неравенство. Психология семьи. Хрестоматия. Под ред. Райгородского Д. Я. Самара. 2002. էջ 324.
6. Սեդրակյան Ս.Ա. Ընտանիքի հոգեբանություն. Երևան: <<Ուրարտու>> համալս., 2010, էջ 216
7. Калмыкова Е.С. Психологические проблемы первых лет супружеской пары. Психология семьи. Хрестоматия. Под ред. Райгородского Д. Я. - Самара. 2002. էջ 474.
8. Ильин Е.П. Дифференциальная психофизиология мужчины и женщины. СПб.: Питер, 2003, էջ 224.
9. Коробанова Ж.В. Влияние полоролевых представлений родителей на формирование личностных особенностей одаренных девочек. Автореферат канд.дисс. - М., 2002. — 24 с.
10. Карабанова О. А. Психология семейных отношений и основы семейного консультирования. — М., 2005. —С. 320.

# «ԳԻՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ» ԱՌԱՐԿԱՅԻ ԴԱՍԱՎԱՆԴՈՒՄԸ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

**ԱՆԺԵԼԻԿԱ ԱՅՎԱԶՅԱՆ**
ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա,
գիտակրթական միջազգային կենտրոն,
հոգեբանության ամբիոն, դասախոս

**Համառոտագիր**

Հոդվածը ներկայացնում է բարձրագույն կրթական համակարգում «Գիտական հետազոտության հիմունքներ» առարկայի դասավանդման տեսամեթոդաբանական հիմքերը: Մատնանշվում է ժամանակակից հասարակությունների զարգացման պայմաններում առարկայի դասավանդման կարևորությունը: Քննարկվում են «հետազոտություն», «հետազոտող» եզրույթները և սահմանման առանձնահատկությունները: Առանձնահատուկ ուշադրություն է դարձվում գիտական հետազոտության իրականացման նպատակի, մեթոդների ձևակերպման և գրականության մշակման ու վերլուծության հարցադրումներին:

Ներկայացվում են գիտական հետազոտությունների դասակարգման տարբեր հիմքեր՝ ըստ այդ հետազոտության շրջանակներում կիրառված մեթոդների, այն գիտելիքի, որը հետազոտությունը նպատակ ունի ստեղծելու կամ վերհանելու,ըստ այն թիրախային խմբի, որին հետազոտությունն ուղղված է կամ ըստ հետազոտության հիմնախնդրի և այլն:

Ընդհանուր առմամբ, որպես տարածված դասակարգում, առանձնացվում են որակական և քանակական հետազոտությունները: Դրանք տարբերվում են իրականացման տրամաբանությամբ ու սկիզբ են առնում տեսական մոտեցումների վերլուծությունից:

Հոդվածում շեշտադրվում է գիտական հետազոտության կազմակերպման և հանրային պահանջի ձևավորման փոխազդեցությունը ժամանակակից գիտական մտքի զարգացման տեսանկյունից:

**Բանալի բառեր և բառակապակցություններ.** գիտական հետազոտություն, դասավանդում, մեթոդներ, հանրային պահանջ, բարձրագույն կրթական համակարգ:

# ПРЕПОДАВАНИЕ ПРЕДМЕТА “ОСНОВЫ НАУЧНОГО ИССЛЕДОВАНИЯ” В СИСТЕМЕ ВЫСШЕГО ОБРАЗОВАНИЯ

**АНЖЕЛИКА АЙВАЗЯН**
Национальная академия наук Республики Армения
Международный научно-образовательный центр
преподаватель кафедры психологии

**Аннотация**

В статье представлены теоретико-методологические основы преподавания предмета «Основы научного исследования» в системе высшего образования. Подчеркивается важность преподавания предмета в условиях развития современных обществ. Представляются к обсуждению понятия «исследование», «исследователь» и особенности их определения. Уделяется особое внимание определению цели, методов проведения научного исследования, а также обзору и анализу библиографии.

Представлены различные основы для классификации научных исследований: в соответствии с методами, используемыми в исследовании, в соответствии с направлением исследования на создание или выявление научного знания, по принципу организации целевой группы или проблематики исследования и т. д. В целом, качественные и количественные типы исследования представляются в качестве общей классификации. Эти типы различаются по логике реализации задач исследования и начинаются, как правило, с изучения теоретических подходов.

В статье также подчеркивается влияние формирования общественного спроса на организацию научного исследования с точки зрения развития современной научной мысли.

**Ключевые слова и словосочетания:** научное исследование, преподавание, методы, общественный спрос, система высшего образования.

## TEACHING THE SUBJECT “FUNDAMENTALS OF SCIENTIFIC RESEARCH” IN THE HIGHER EDUCATION SYSTEM

**ANJELIKA AYVAZYAN**
National Academy of Sciences of the Republic of Armenia
International Scientific-Educational Center
Department of Psychology, Lecturer

**Abstract**

The article presents the theoretical and methodological basis of teaching the subject “Fundamentals of Scientific Research” in the higher education system. The importance of teaching the subject in the conditions of the development of modern societies is emphasized. The terms “research”, “researcher” and the features of their definition are presented. Particular attention is paid to the definition of the goal, methods of conducting scientific research, as well as the review and analysis of the bibliography.

Various basis for the classification of scientific research is presented - according to the methods used in the study, the knowledge that the research aims to create or reveal, according to the target group or research issue selection. In general, qualitative or quantitative research is separated as a standard classification. These types differ by the logic of implementation and, as a rule, begin with analyzing theoretical approaches.

The influence of the formation of social demand on the organization of scientific research from the point of view of the development of modern scientific thought is also emphasized in the article.

**Keywords and phrases:** scientific research, teaching, methods, social demand, higher education system.

«Գիտական հետազոտության հիմունքներ» առարկայի դասավանդումը բարձրագույն կրթական համակարգում մեծ կարևորություն է ներկայացնում: Առարկայի հանդեպ աճող հետաքրքրությունը մասնագետների և ուսանողների շրջանում մեծապես պայմանավորված է հասարակության արագընթաց զարգացման առանձնահատկություններով, ինչպես նաև՝ անձի ու սոցիալական միջավայրի հետազոտման հանրային պահանջների փոփոխություններով: Այս առարկայի ներմուծմամբ բարձրագույն կրթական համակարգ կարող ենք փաստել գիտական մտքի և սոցիալական միջավայրի որոշակի փոխազդեցությունների մասին: Մասնավորապես, առարկայի շրջանակներում քննարկվում են հանրության պահանջների ձևավորման կամ տրանսֆորմացիայի փոխկապվածությունը գիտական հետազոտության ուղղվածության, հետազոտության էթիկայի նորմերի և արդյունքների հուսալիության չափանիշների հետ: Հանրության պահանջները հասկանալու համար անհրաժեշտ է իրականացնել բազմակողմանի վերլուծություններ: Այդ պատճառով հակիրճ անդրադառնանք հետազոտության ժամանակակից ընկալման

և «Գիտական հետազոտության հիմունքներ» առարկայի դասավանդման ընթացքում քննարկվող հարցադրումներին:

Թերևս, մի շարք հեղինակների կողմից նշվել է, որ չկա «հետազոտություն» հասկացության մեկ ու ամբողջական, վերջնական սահմանում: Պատճառը գուցե այն է, որ գիտական հետազոտության տեսակները տարբեր են կամ գիտական հետազոտությունն ու հետազոտվող իրականությունն այնքան բազմազան են, որ դժվար է այն միանշանակորեն սահմանել:

Որոշ սահմանումներում **[6]** «հետազոտությունը» ներկայացվում է որպես համակարգված գործողությունների ամբողջություն, շարք, հաջորդականություն, որի նպատակն է փաստերի բացահայտումն ու մեկնաբանությունը, վարկածների հաստատումը/հերքումը, տեսական և գործնական հայացքների վերանայումը: Հաշվի առնելով հետազոտության կարևորությունը որոշակի քաղաքականությունների իրականացման համար՝ այն սահմանվում է նաև որպես քաղաքականությունների ուղղորդման միջոց **[2]**:

Մեծ մասամբ, գիտական հետազոտությունը որոշակի թեմայով կամ որոշակի երևույթի մասին տեղեկատվության հավաքագրման և վերլուծման գործընթացն է:

Ըստ Սթինհաուզի **[7]**՝ գիտական հետազոտությունը համակարգված հարցադրումների ամբողջություն է, որը (կամ որից ստացված տեղեկատվությունը) հրապարակայնացվում է:

Քեմբրիջի առցանց բառարանը **[4]** նշում է, որ հետազոտողը մեկն է, որը զգուշորեն ուսումնասիրում է մի որևէ երևույթ՝ հատկապես այդ երևույթի մասին նոր տեղեկատվություն բացահայտելու/ստանալու կամ այդ երևույթն ավելի լավ հասկանալու նպատակով:

«Հետազոտողը», ըստ էության, մասնագիտություն է: Այդուհանդերձ, հաշվի առնելով արդի աշխարհում հետազոտական հմտությունների ու հետազոտություններից ստացված տեղեկատվության կարևորությունը, շատերն են հետազոտություն իրականացնում՝ չլինելով մասնագետ: Մի կողմ թողնելով հետազոտության որակի խնդիրը՝ կարևոր է հասկանալ, որ հետազոտողի դերում կարող են հայտնվել բոլորը: Յուրաքանչյուր ոք, որ իր առջև դնում է աշխարհը մեթոդապես ճանաչելու հիմնախնդիրը, արդեն իսկ ստանձնում է հետազոտողի դերը:

Անշուշտ, մասնագետ-հետազոտողների ու հետազոտական մասնագիտացված կազմակերպությունների իրականացրած աշխատանքը հիմնարար նշանակություն ունի ինչպես գիտության,այնպես էլ իրականության ընկալման ու այն վերափոխելու համար, սակայն ներկայումս մարդկանցից ա-

վելի ու ավելի են պահանջվում հետազոտական այնպիսի հմտություններ, որոնք համահունչ կլինեն ոչ միայն մասնագիտական պահանջներին, այլև բարոյահոգեբանական դաստիարակությանն ու բարոյական փիլիսոփայությանը: Քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներն ավելի ու ավելի են հմտանում սոցիալական հետազոտությունների իրականացման մեջ՝ ներգրավելով հետազոտողների, ձեռք բերելով հետազոտական հմտություններ, զարգացնելով հետազոտական ու վերլուծական կարողություններ:

Հետազոտողի դերը ստանձնելու պարագայում, սակայն, էական է հետևել հետազոտական տրամաբանության կանոններին ու հետազոտական էթիկային:

Մասնավորապես, էթիկապես ընդունելի են այն հետազոտությունները, որոնց շրջանակներում ներգրավված հետազոտվող հանրությանը նախապես ամբողջական տեղեկատվություն է տրամադրվում իրականացվելիք հետազոտության մասին ու հետազոտողը/հետազոտական կազմակերպությունը ստանում է հետազոտությանը մասնակցողների գրավոր համաձայնությունը:

Հետազոտական հիմնախնդիրը որոշակի և հասկանալի ձևակերպում է պահանջում այն երևույթի մասին, որը մենք ցանկանում ենք հետազոտել՝ երևույթի հետ կապված իրավիճակը փոփոխելու, դժվարությունների հասկացման, տեսականորեն կամ գործնականորեն առկա հարցերին պատասխաններ գտնելու համար **[3]**:

Հետազոտական հիմնախնդրի մասին մտածելիս մենք դեռևս չենք պատասխանում այն հարցին, թե ինչպես ենք իրականացնելու հետազոտությունը, սակայն վերջինիս մասին հստակ պատկերացումը հետազոտական նախագծի ամուր հիմքն է:

Հասարակական գիտություններում գիտական հետազոտության հիմնախնդիրների բնութագրման ու տարբերակման հնարավորությունները բազմաթիվ են: Ընդհանրացնելով կարող ենք ասել, որ լինում են ճանաչողական/նկարագրական, համեմատություն ենթադրող և երևույթների միջև կապերի բացահայտում ենթադրող հիմնախնդիրների տեսակներ:

Ճանաչողական/նկարագրական հիմնախնդիրները հետազոտության առարկա են դառնում, երբ որևէ երևույթ, իրավիճակ, կարգավիճակ մեծ կարևորություն ունի, սակայն դրա մասին տեսության և պրակտիկայի դաշտում բավարար տեղեկատվության պակաս կա:

Համեմատություն ենթադրող հիմնախնդիրները կարող են վերա-

բերվել հասարակության մի քանի խմբերի, մի քանի երևույթների, միևնույն սոցիալական խմբի տարբեր կարգավիճակների ըմբռնմանը՝ համեմատություն կատարելու համատեքստում:

Երևույթների միջև կապերի բացահայտումներ ենթադրող հիմնախնդիրները հիմնականում քանակական բնույթի են ու ներկայացվում են վիճակագրության միջոցով, որոնք դեռևս բացահայտված չեն տվյալ սոցիալական համատեքստում կամ առկա հետազոտությունների շրջանակներում:

Հիմնախնդրի հիմնավորումը նույնպես հետազոտական և վերլուծական աշխատանք է, քանի որ ներկայացնում է հիմնախնդրի՝ հետազոտված լինելու աստիճանը, մատնանշում է, թե ինչ տեսական մոտեցումներ կան հիմնախնդրի կամ դրան առնչվող թեմաների վերլուծություններում:

Գրականության վերլուծության՝ որպես հետազոտության բաղադրատարրի գրավականը հղումներ իրականացնելու մեջ է, քանի որ աղբյուրներ գտնելն ու հղումներ կատարելը կարևոր գործընթաց է, որի իրականացման հմտությունները պետք է ձեռք բերել և մշակել: Եթե փորձենք քայլ առ քայլ նկարագրել գրականության վերլուծության գործընթացը, ապա գրականության վերլուծություն կատարելու հետազոտական կարողությունների մշակումը կներկայացվի հետևյալ հաջորդականությամբ.

Քայլ 1: որոշակիացնել հղումներ կատարելու մեթոդը,

Քայլ 2: որոշակիացնել վերլուծության թեման,

Քայլ 3: հստակեցնել գրականությունը, որն ընթերցվելու է և ենթարկվելուվերլուծության,

Քայլ 4: վերլուծել գրականությունը,

Քայլ 5: ընդհանրացնել վերլուծությունը, քարտեզագրել հիմնական հասկացությունները,

Քայլ 6: համադրել ընթերցված նյութը,

Քայլ 7: գրի առնել հետազոտության գրականության վերլուծությունը:

Ընդհանուր առմամբ, առարկայի դասավանդման շրջանակներում ընդգծվում է, որ ցանկացած գործունեության ընթացք կամ գործունեության արդյունք, որը նպաստում է անձի հետազոտական կարողությունների զարգացմանը, կարելի է արտահայտել համապատասխան կերպ **[1]**.

- դրական գնահատում (սատարել, կողմնակից լինել, պնդել, տեսնել, ըմբռնել,հիմնավորել),
- չեզոք գնահատում (հասցեագրել, հղում անել, մեկնաբանել, դիտարկել),

- դեռևս հաստատման ենթակա գնահատում (ենթադրել, առաջարկել, քննարկել),
- քննադատական գնահատում (ժխտել, քննադատել, հերքել, հաստատել, իմաստավորել) (Աղյուսակ 1):




Աղյուսակ 1. Գիտական հետազոտության կազմակերպման կառուցվածքը

Այս մոտեցումը, այլ խոսքերով, մեկ գործունեության ընթացքում գնահատողական մի քանի եզրահանգումներ կատարելու կարողությունը, ցույց է տալիս վարկածների փոխկապվածությունը հետազոտական հարցի և նպատակի հետ:

Ամփոփելով վերը նշվածը՝ կարող ենք փաստել, որ «Գիտական հետազոտության հիմունքներ» առարկայի շրջանակներում անհրաժեշտ է ոչ միայն բնութագրել «հետազոտություն» եզրույթը, այլև բնութագրել հետազոտության իրականացման գիտական հիմքերը.

- ✓ Հետազոտական հիմնախնդրի հիմնավորում/արդիականության ձևակերպում (գրականությանվերլուծությամբ),
- ✓ Հետազոտության նպատակ,
- ✓ Հետազոտության խնդիրներ,
- ✓ Վարկած(ներ),
- ✓ Մեթոդաբանություն (մեթոդի տեսությունը), մեթոդներ,
- ✓ Ընտրանք՝ մեթոդաբանությունը, հաշվարկը, դեպքերի ընտրությունը որակական հետազոտության պարագայում,
- ✓ Տվյալների վերլուծության մեթոդաբանությունը (կարող է

տեղադրվել մեթոդաբանության բաժնում կամ կարող է ներկայացվել առանձին),

- ✓ Գրականության ցանկը
- ✓ Հետազոտության ժամանակացույցը, բյուջեն (առկայության դեպքում) և գործիքները՝ հարցաթերթ, դիտարկման քարտ և այլն:

Բազմաթիվ են հետազոտության նախագծմանը վերաբերող մեթոդաբանական դասագրքերը և ուղեցույցերը **[5]**: Հետազոտության նախագծումը նույնպես կախված է հետազոտության որակական, քանակական կամ խառը մեթոդներով իրականացնելուց:

Առարկայի դասավանդման ընթացքում կարևոր է տարանջատել անհատական և թիմային հետազոտական նախագծերը: Սովորաբար, անհատական հետազոտական նախագծերն ավելի փոքրածավալ են ու ենթադրում են ավելի քիչ ռեսուրսների կիրառություն: Այդուհանդերձ, հետազոտության որակն ու արժեքը չեն չափվում դրա վրա ներդրված ֆինանսական ռեսուրսների չափով. այստեղ հիմնարար են մարդկային հետազոտական ռեսուրսները, ձեռքբերված կամ գործարկված հետազոտական կարողություններն ու մեթոդաբանությունը:

**Օգտագործված գրականության ցանկ**


1. Academic Coaching and Writing LLC (2017) Writing a literature review. [Online] Available at: https://www.academiccoachingandwriting.org/dissertation-doctor/resources/writing-aliterature-review
2. Becker S., Bryman A., Ferguson H., Understanding research for social policy and social work (second edition): Themes, methods and approaches, Policy Press., 448 p.
3. Bryman, Alan. “The Research Question in Social Research: What is its Role?” International Journal of Social Research Methodology 10 (2007): 5-20.
4. Cambridge University Press, 2017, Definition of “researcher” from the Cambridge Business English Dictionary, https://dictionary.cambridge.org/dictionary/english/
5. Cresswell, W. J. (2014) Research Design: Qualitative, Quantitative, and Mixed Methods Approaches. CA; London, New Dehli: Sage publications.
6. Mierriam Webster’s Collegiate Dictionary, Definition of Research, https://www.merriamwebster.com/dictionary/research [N. Y., 2017
7. Steenhouse, L. (1978) Applying Research to Education, https://www.uea. ac. Uk/documents/4059364/4994243/Stenhouse-1978Applying+Research+to+education.pdf/24ec7b40-ac56-46d2-8f8f-2bb7b4c53ac4

# ԴԱՍԱԽՈՍՆԵՐԻ ԱՆՁՆԱՅԻՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ԻՆՔՆԱԶԱՐԳԱՑՄԱՆ և ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ ՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՀԱՐԱԲԵՐԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

**ՎԱՐԴԻՆԵ ՄԵՍՐՈՊՅԱՆ**
ՀՀ պետական կառավարման ակադեմիայի հոգեբանության
և քաղաքագիտության ամբիոնի ասպիրանտ,
«Ժեստ» հոգեբանական կենտրոնի հոգեբան
Vardine.mesropyan@mail.ru

**Համառոտագիր**

Ժամանակակից հասարակությունը դասախոսի առջև դնում է խնդիրներ, որոնք չեն սահմանափակվում միայն մասնագիտական գիտելիքով և հմտություններով, այլ նաև՝ նրանով, որ ուսումնական գործընթացում անհրաժեշտ է ձևավորել հաջողության մոտիվացիա, ինքնուրույնություն: Անդրադառնալով դասախոսների մասնագիտական պատրաստվածությանը և պիտանելիությանը՝ կարող ենք ասել, որ այն անձի կենսագործունեության անբաժանելի մասն է կազմում: Մասնագիտական պատրաստվածությունը անվերջանալի, մշտապես փոփոխվող և զարգացող գործընթաց է: Այն կարող է ընթանալ ողջ կյանքում և ունենալ որակական փոփոխություններ, և այդ է պատճառը, որ դասախոսի ինքնազարգացումը, ինքնակատարելագործման խնդիրը չափազանց արդի խնդիր է մասնագիտական պիտանելիության հարցում: Հոդվածում ներկայացված է դասախոսների անձնային որակների, ինչպես նաև նրանց ինքնազարգացման ունակությունների հարցարանի փորձարարական հետազոտության արդյունքների համահարաբերակցության ուսումնասիրությունը: Հոդվածի նպատակն է՝ պարզել դասախոսների անձնային որակների և ինքնազարգացման առանձնահատկությունների միջև առկա փոխկապվածությունը: Դասախոսների մոտ միջին ցուցանիշներով բարձր են գտնվել հետևյալ անձնային գործոնները՝ շփվողականություն, բարեխղճություն, հուզական կայունություն, համարձակություն, երազկոտություն և ռադիկալիզմ: Ինքնազարգացման թեստի ցուցանիշներով դասախոսների մոտ գրանցվել է միջինը 61 բալ, որը վկայում է այն մասին, որ դասախոսները կարողանում են ինքնիրացնել սեփական հնարավորությունները, ինքնազարգանալ՝ մասնագիտական աճի համար: Հաղորդակցման և կազմակերպչական ունակություններից բնորոշ են ուղղվածությունը, գործնականությունը, ինքնավստահությունը, հոգեբանական տակտը: Համահարաբերակցական կապերի բացահայտումը հնարավորություն է

տալիս փաստելու, որ դասախոսները ունեն տակտի զգացողություն, ինքնավստահ են շփվող, կարող են ցուցաբերել կազմակերպչական ունակություններ: Դասախոսները իրենց զարգացման, առաջխաղացման ընթացքում ունենում են մոտիվացիայի պակաս, անինքնավստահություն, կարող են ցուցաբերել հակադրական վարք, բարձր է նաև տագնապայնությունը:

**Բանալի բառեր և բառակապակցություններ**՝ անձնային առանձնահատկություն, ինքնազարգացում, հաղորդակցում, կազմակերպչական ունակություններ, համահարաբերակցություն, փորձարարական հետազոտություն, արդյունք:

# СООТНОШЕНИЕ ЛИЧНОСТНЫХ ХАРАКТЕРИСТИК ПРЕПОДАВАТЕЛЕЙ, ИХ САМОРАЗВИТИЯ И ОРГАНИЗАТОРСКИХ СПОСОБНОСТЕЙ

**ВАРДИНЕ МЕСРОБЯН**
Академия государственного управления
Республики Армения аспирант, кафедра психологии и политологии
Психолог Психологический центр “Жест”

**Аннотация**

Современное общество ставит перед преподавателем задачи, которые не ограничиваются только профессиональными знаниями и умениями, но и тем, что в образовательном процессе необходимо формировать мотивацию на успех, самостоятельность. Говоря о профессиональной подготовке и пригодности преподавателя, можно сказать, что это неотъемлемая часть жизни человека. Профессиональное обучение – это бесконечный, постоянно меняющийся и развивающийся процесс. Оно может продолжаться на протяжении всей жизни и иметь качественные изменения, и именно поэтому вопрос саморазвития, самосовершенствования преподавателя является чрезвычайно актуальным с точки зрения профессиональной пригодности.

В статье представлены результаты исследования взаимосвязи между личностными качествами преподавателей и результатами экспериментального исследования опросника способностей преподавателей к саморазвитию. Цель статьи - выяснить взаимосвязь между личностными качествами преподавателей и особенностями саморазвития. Среди преподавателей по средним показателям были выделены следующие личностные факторы: коммуникабельность, добросовестность, эмоциональная устойчивость, смелость, мечтательность и радикализм. По показателям теста на саморазвитие преподаватели набрали в среднем 61 балл, что доказывает, что преподаватели способны реализовывать собственные возможности, саморазвиваться для профессионального роста. По показателям теста, определяющим коммуникативные и организаторские способности, лидировали: целеустремленность, практичность, уверенность в себе, психологический такт. Выявление коррелятивных связей экспериментального исследования позволит доказать, что преподаватели обладают чувством такта, являются уверенными в себе коммуникаторами, могут демонстрировать организаторские способности. В процессе своего развития и продвижения у преподавателей наблюдается недостаток мотивации, неуверенность, может проявляться противоречивое поведение, а также высокая тревожность.

**Ключевые слова и словосочетания:** личностная характеристика, саморазвитие, общение, организаторские способности, соотношение, экспериментальное исследование, результат.

# CORRELATION OF TEACHERS' PERSONAL CHARACTERISTICS, SELF-DEVELOPMENT AND ORGANIZATIONAL ABILITIES

**VARDINE MESROBYAN**
Public Administration Academy of the Republic of Armenia,
Department of Psychology and Political Science,
Psychologist at Zhest Psychological Center

**Abstract**

Modern society sets the teacher tasks that are not limited only to professional knowledge and skills but also in the educational process; it is necessary to form motivation for success and independence. In terms of the training and suitability of trainers, this is an integral part of human life. Professional training is a never-ending, ever-changing process. It can continue throughout life and have qualitative changes; therefore, the question of teacher self-development is extremely relevant regarding professional competence. The research results regarding the relationship between the personal qualities of teachers and the results of an experimental study of a questionnaire of their abilities for self-development are discussed in the article. The purpose of the article is to find out the relationship between the personal qualities of teachers and the characteristics of self-development. Among teachers, the following personal factors were high on average: sociability, honesty, emotional stability, courage, daydreaming and radicalism. According to the indicators of the test for self-development, teachers scored an average of 61 points, proving that teachers can realize their capabilities and develop themselves for professional growth. According to the test determining communication and organizational skills, the following qualities were high: purposefulness, practicality, self-confidence, and psychological tact. Identification of the correlative links of the pilot study will prove that teachers have a sense of tact, self-confident communicators, and can demonstrate organizational skills. In their development, the teachers lack motivation and self-confidence and may exhibit contradictory behaviour and anxiety.

**Keywords and phrases: p**ersonal characteristics, self-development, communication, organizational skills, correlation, experimental research, result .

## Ներածություն

Թեմայի արդիականությունը պայմանավորված է նրանով, որ ժամանակակից դասախոսը ոչ միայն պետք է լինի գիտելիքի կրող, այլև գրագետ լինի տարբեր ոլորտներում, ունենա այնպիսի անձնային, հոգեբանական հատկանիշներ, որոնք թույլ են տալիս հաջողությամբ հաղթահարել մասնագիտական գործունեությունը:

Հոդվածի նպատակն է՝ բացահայտել դասախոսների անձնային որակները, հաղորդակցման և կազմակերպչական ունակությունները, ինչպես նաև՝ նրանց ինքնազարգացումը և ցույց տալ դրանց միջև առկա փոխպայ-

մանավորվածությունը: Հիմնահարցի արդիականությունը ոչ թե դասախոսների որակների միջին արտահայտվածությունը բացահայտելն է, այլ որակների միջև առկա փոխկապվածությունը բացահայտելն է, ինչը հիմք է ծառայելու նրանց համար վերապատրաստման ծրագիր ստեղծելու:

Հետազոտական ընտրանքը բաժանել ենք երկու խմբի՝ դասախոսներ և տարբեր մասնագիտություններ ունեցող մարդիկ: Միջին տվյալների հավաստիությունը հիմնավորելու համար իրականացրել ենք համահարաբերակցական վերլուծություն դասախոսների անձնային առանձնահատկությունների, ինքնազարգացման ունակությունների, հաղորդակցման և կազմակերպչական ունակությունների ցուցանիշների միջև: Փորձարարական ընտրանքը երկու խմբերում եղել է 50 անձ: Հետազոտությանը մասնակցել է ընդհանուր 100 անձ:

**Տեսամեթոդական հիմքեր**

Դասախոսի մասնագիտական գործունեության և անհատական որակները գտնվում են փոխադարձ կապի մեջ: Աշխատանքային գործունեությունը, որը ներկայացնում է դասախոսի համար հատուկ պահանջներ, ստիպում է նրան զարգացնել որոշակի անհատական մասնագիտական որակներ: Եվ հակառակը, նոր իմաստ են ձեռք բերում անհատական որակները, որոնք իրացվում են դասախոսի մասնագիտական գործունեության մեջ և ապահովում նրա հաջողությունը: Այս ամենից ելնելով՝ մենք մեր աշխատանքում գլխավոր խնդիր ենք դիտարկել հենց այս կապի ուսումնասիրումը՝ անձնային և մասնագիտական որակների համահարաբերակցությունը՝ ինքազարգացում, կազմակերպչական ունակություններ և դրանց ազդեցությունը աշխատանքային գործունեությունում:

Այժմ դիտարկենք դասախոսի անձի վերաբերյալ մի շարք տեսություններ, որպեսզի ցույց տանք նրանց համար կարևոր անձնային որակները:

Ըստ Ֆ.Ն. Գոնոբոլինի՝ «Դասախոսի աշխատանքում հաջողության հասնելու համար կարևոր է որոշակի փոխազդեցություն նրա անհատական գծերի և կարողությունների դրսևորման մեջ: Սովորաբար դրանք փոխազդեցության մեջ են մասնագիտական գործունեության մեջ և կախված հանգամանքներից կարող են դրսևորվել: Որոշակի որակների դրսևորման ժամանակ կարևոր է հաշվի առնել որոշակի չափանիշներ» [1, էջ 97-104]:

Ըստ Վ. Ս. Մերլինի՝ անհատականությունը մի շարք որակների համախումբ է՝ անհատական-հոգեբանական և սոցիալ-հոգեբանական: Անհատական-հոգեբանական որակների մեջ նա դիտարկում է անձի ֆիզոլոգիան,

բնավորությունը, խառնվածքը, հետաքրքրությունները, դրդապատճառները և այլն [2, էջ 254]: Սոցիալ-հոգեբանական որակների մեջ մտնում է անձը՝ որպես հասարակության անդամ, հասարակության մեջ կայացման ճանապարհը, գործունեությունը, սոցիալական ակտիվությունը: Վերլուծելով այս մոտեցումը՝ կարող ենք փաստել, որ այս հատկանիշների համահարաբերակցությունը չափազանց կարևոր է դասախոսի գործունեության մեջ: Մասնագիտական գործունեությունում են դրսևորվում անձի անհատական առանձնահատկությունները, ստեղծված իրավիճակում անձի հուզական կայունությունը, խնդիրներ լուծելու ճկունությունը, կոնֆլիկտները կառավարելու ունակությունը:

Ուշագրավ են Կ. Լևինի, Ա. Մասլոուի, Գ. Մյուրեյի, Գ. Օլպորտի, Կ. Ռոջերսի մոտեցումները, որոնք անձը դիտարկում էին դինամիկ կառույց, որի հիմքում ընկած էր անձի յուրօրինակության գաղափարը: Անձի կառուցվածքի հիմքում ընկած է ես-կոնցեպցիան, որը ձևավորվում է արտաքին աշխարհի հետ ունեցած փոխհարաբերությունների հաշվին և կարգավորում է վարքը: Առանձնակի նշանակություն ունի մոտիվացիան, որի շնորհիվ էլ իրականանում է անձի կայացումը [3, էջ 336]:

Համաձայն Ե. Կլիմովի՝ դասախոսի մասնագիտությունը պատկանում է «մարդ-մարդ» տիպին, ինչն էլ բնորոշվում է հետևյալ որակներով՝ կառավարել, ուսուցանել, կրթելու կարողություն, լայն աշխարհայացք, լսելու ունակություն, դիմացինի հուզական վիճակի գիտակցում, կարեկցելու ունակություն, բարդ իրավիճակներում արագ կողմնորոշում, ինքնակարգավորում [4, էջ 47]:

Ըստ Բ. Ֆ. Լոմովի՝ մասնագիտական-մանկավարժական ուղղությունը՝ որպես դասախոսի անձը ձևավորող հատկություն, մեծապես կախված է նրա նպատակներից, դրդապատճառներից, պահանջմունքներից, կարողություններից, սյուբեկտիվ վերաբերմունքից: Դիտարկելով Ն. Վ. Կուզմինի, Ջ. Հոլանդի, Լ. Ֆ. Սպիրինի տեսակետները՝ կարող ենք նույնպես փաստել, որ մանկավարժական գործունեությունում գերիշխող է դասախոսի անձը: Անձի անհատական հատկանիշների շնորհիվ է կառուցվում մանկավարժական գործունեությունը [5, էջ 313]:

Մասնագիտական զարգացման տեսություններում արտասահմանյան հեղինակները առանձնացնում են մասնագիտական կողմնորոշման հետևյալ տիպաբանությունը՝ «հետաքրքրություն առարկայի նկատմամբ», «հետաքրքրություն դեպի անձը», «հետաքրքրություն գործնական աշխատանքի նկատմամբ» «հետաքրքրություն տեսական աշխատանքի նկատմամբ»:

Արտասահմանյան հոգեբանական աշխատանքներում և հետազոտություններում հաճախ ենք հանդիպում «ինքն» կամ «ինքնա» (self) կիրառությանը, որն առավել բնորոշվում է որպես անձնային համակարգ (self-system), և որի օգնությամբ մարդը կարողանում է տարբերակել ներանձնային և արտաքին օբյեկտիվ երևույթների փոխկապակցվածությունը [6, էջ 122-127]:

Վերլուծելով վերը նշված տեսական մոտեցումները՝ կարող ենք փաստել, որ դասախոսի անձը իր մասնագիտական գործունեության անբաժան մասն է կազմում: Դասախոսի անձը պայմանավորվում է ինչպես անհատական առանձնահատկություններով, այնպես էլ սոցիալական գործոններով: Այս փոխազդեցության գլխավոր արդյունքը կրթության ներքին բովանդակությունն է, սովորողների ներգրավվածությունը դեպի գիտություն՝ որպես կրթական գլխավոր դերակատարների: Այնուամենայնիվ, դարձյալ մեկ անգամ ևս նշենք դասախոսների այն անձնային որակները, որոնք դուրս ենք բերել տեսական վերլուծության արդյունքում: Դասախոսի առաջնային անձնային որակներն են՝ կառավարման ունակություն, ուսուցանելու կարողություն, հուզական կայունություն, դիմացինին լսելու ունակություն, սեփական հույզերը կառավարելու, ճանաչելու ունակություն, ինքնատիրապետում, ինքնազարգացում, ինքնակարգավորում, մոտիվացիա, դիտողականություն, արագ կողմնորոշվելու ունակություն, բարոյականություն, արժեքներ, կոնֆլիկտները կառավարելու ունակություն և այլն [8]: Այս որակներն են արտահայտվում դասախոսների մասնագիտական գործունեության մեջ:

**Ուսումնասիրության մեթոդներ**

Համաձայն առաջադրված նպատակի, վարկածի և խնդիրների՝ մեր կողմից կազմվել է ուսումնասիրության ռազմավարություն: Տեսական վերլուծության վրա հիմնվելով՝ նպատակահարմար ենք գտել օգտագործել հիմնահարցի հոգեբանական աղբյուրների վերլուծություն, զրույց, կոնտենտ վերլուծություն, ինչպես նաև թեստավորման և հարցարանի մեթոդները՝ որպես հետազոտության հիմնական գործիքներ: Հոգեբանական թեստավորման մեթոդը թույլ է տալիս գնահատել հետազոտվողի որոշակի անձնային որակներ: Թեստավորման մեթոդը դասվում է հոգեբանական հետազոտության օբյեկտիվ մեթոդիկաների խմբին: Այն հետազոտվող անձի հատկությունների, տարբեր բնութագրիչների չափման ընթացակարգ է [7, էջ 288]:

Ելնելով առաջադրված նպատակից՝ ընտրվել են հետևյալ մեթոդիկաները՝ դասախոսների ինքնազարգացման ունակությունների բացահայտման հարցարան, Կետտելի «Անձնային առանձնահատկությունների» բացա-

հայտման հարցարան, հաղորդակցման և կազմակերպման ունակություննե-րը որոշող թեստ:

**Ստացված արդյունքներ**

Այժմ ներկայացնենք տվյալները աղյուսակի տեսքով, որպեսզի կարողանանք իրականացնել երկու խմբերի համահարաբերակցական վերլուծությունը:

Աղյուսակ 1

| Դասախոսներ | | Մասնագետներ | |
|---|---|---|---|
| | | | |
| M- միջին արժեք | T ցուցանիշ | M- միջին արժեք | σ-ստանդարտ շեղում |
| 8 | 1.36 | 9 | 1.46 |
| 3 | 3.11 | 4 | 1.26 |
| 7 | 2.34 | 8 | 2.21 |
| 6 | 1.43 | 5 | 1.71 |
| 5 | 2.51 | 6 | 1.80 |
| 9 | 1.01 | 10 | 1.82 |
| 8 | 1.78 | 7 | 1.97 |
| 7 | 1.31 | 8 | 2.12 |
| 5 | 1.89 | 6 | 1.50 |
| 7 | 0.55 | 8 | 2.44 |
| 6 | 1.46 | 6 | 2.22 |
| 6 | 1.41 | 6 | 1.90 |
| 8 | 0.25 | 8 | 1.84 |
| 5 | 0.79 | 5 | 2.00 |
| 7 | 6.17 | 9 | 1.68 |
| 5 | 0.17 | 5 | 2.12 |
| 7 | 6.57 | 9 | 2.03 |

Ինչպես երևում է, աղյուսակում՝ մասնագետների խմբում, բարձր են ե-ղել հետևյալ անձնային որակները՝ շփվողականություն, հուզական կայունություն, բարեխղճություն, վարքի բարձր հսկողություն, ինքնագնահատական: Եվ որպեսզի կարողանանք հետազոտական երկու խմբերի ցուցանիշների միջին արժեքների միջև գոյություն ունեցող էական տարբերությունների մասին վերլուծություն իրականացնել՝ հաստատել կամ հերքել, գործածել ենք մաթեմատիկական վիճակագրության մեջ հայտնի Ստյուդենտի t չափանիշը: Ինչպես ցույց են տալիս ցուցանիշները, ինտելեկտի նշանակալիության մակարդակ 0.01 df=11, դասախոսների և մասնագետների խմբերի

մոտ կա էական տարբերություն, դասախոսների մոտ ոչ միշտ է, որ բարձր է ինտելեկտը, որը խոսում է այն մասին, որ ցածր ստենը դժվար է ընկալում նոր հասկացություններ, ամեն ինչ հասկանում է բառացիորեն և որոշակի: Մտածողությունը հստակ է և պատկերավոր, գործում է ինտուիտիվ, քան տրամաբանորեն: Ստացված ցուցանիշը կոտրում է նաև այն դիրքորոշումը, որ դասախոսները միշտ ունեն բարձր ինտելեկտ: Հուզական կայունության ցուցանիշը վկայում է այն մասին, որ դասախոսների մոտ կարող է նկատվել հուզական անհավասարակշիռ վիճակ. կարող են ցուցաբերել կոնֆլիկտային վարք: Վարքի վերասկողության t ցուցանիշը՝ նշանակալիության մակարդակ 0.001 df=5, և ինքնագնահատականի ցուցանիշը փաստում են այն, որ երկու խմբերում հենց այս անձնային որակների միջև կան էական տարբերություն-ներ: Ու երկու խմբերի ստացված միջին տվյալներով մասնագետների խմբում ավելի բարձր են վերը թվարկված որակները:

Իրականացրել ենք նաև համահարաբերակցական վերլուծություն դա-սախոսների անձնային որակների, ինքազարգացման միջին ցուցանիշների և կազմակերպչական ունակությունների միջին ցուցանիշների միջև:

Ցուցանիշների համահարաբերակցական կապերը.

Աղյուսակ 2

n=50

P< 0,05* P< 0,01** P<0,001***

| | | |
|---|---|---|
| Դոմինանտություն | Ռադիկալիզմ | r= -,309** |
| Ուղղվածություն | Նրբազգացություն | r=,263* |
| Գործնականություն | Երազկոտություն | r -0,275 |
| Կախվածություն | Տագնապայնություն | r= 364** |
| Ինքնազարգացում | Ինքնավստահություն | r= -320** |
| Ինքնազարգացում | Զիջողակ նություն | r= -413*** |
| Ինք ազարգացում | Պահանջկոտություն | r=-,283 |

Համահարաբերակցական վերլուծությունը ցույց տվեց, որ բացասական կոռելյացիոն կապ է առկա դոմինանտության և ռադիկալիզմի միջև r= -,309*, որը վկայում է այն մասին, որ որքանով դասախոսները ձգտում են իշխանության, պահպանողական են կանոնների, սկզբունքների գիտելիքի հարցում: Երբեմն կարող են ցուցաբերել հակադրող վարք նոր գաղափարների, փոփոխությունների հանդեպ: Ուղղվածության և նրբազգացության միջև առկա է դրական կապ r=,263*, որը վկայում է այն մասին, որ դասախոսները զգայուն են, տպավորվող, կարող են ունենալ տրամադրության կտրուկ տատանումներ, երազկոտ են: Կարող են համատեղել իրենց ուժերը կոլեկտիվի ընդհանուր նպատակների

կենտրոնացման համար: Պատասխանատու են, վստահելի սեփական որոշումների համար: Գործնականության և երազկոտության միջև առկա է բացասական կապ r -0,275, որը վկայում է այն մասին, որ դասախոսները ցուցաբերում են հարմարվողական վարք, փորձում են զարգացնել իրենց գործնական հմտությունները, իրատեսական են, ոչ երազկոտ: Երազկոտության հակառակ բևեռը դարձյալ գործնականությունն է, որը դարձյալ վկայում է այն մասին, որ դասախոսները ունեն գործնական խնդիրները արագ լուծելու կարողություն, միտված են դեպի արտաքին իրականության կողմնորոշում: Կախվածության և տագնապայնության միջև առկա է դրական կապ r= 364**, որը խոսում է այն մասին, որ դասախոսները ցուցաբերում են հնազանդություն, հարմարվողական վարք, լինում են անինքնավստահ սեփական ուժերի և հնարավորությունների հարցում: Բացակայում է ինքնուրույնությունը, շատ հաճախ ենթարկվում են ուրիշների կարծիքին, ինչից էլ առաջանում է տագնապայնություն, որը դարձյալ փաստում է դասախոսների անհանգստության, խոցելիության մասին, ունենում են տրամադրության տատանումներ, վախ ուրիշների հավանության չարժանանալու: Բարձր է արտահայտված նաև սեփական անձի նկատմամբ դժգոհությունը:

Ինքնազարգացման և ինքնավստահության միջև առկա է բացասական կապ r=-320**, ինչը խոսում է այն մասին, որ դասախոսները իրենց մասնագիտության առաջխաղացման և զարգացման ընթացքում ունենում են անինքնավստահություն, իսկ եթե բարձր է արտահայտված ինքնավստահությունը, ուրեմն այս դեպքում չեն գնում ինքնազարգացման:

Ինքնազարգացման և զիջողականության միջև առկա է բացասական կապ r=-413***, ինչը վկայում է այն մասին, որ դասախոսները ինքնազարգացման դեպքում ցուցաբերում են առանց վեճի զիջելու պատրաստակամություն, համաձայն են ուրիշի կարծիքի հետ և ենթարկվում են նրանց ազդեցությանը: Նկատվում է նախաձեռնողականության պակաս, սեփական ինքնազարգացման հարցում: Որքան շատ է զիջում, այնքան բարձր է տագնապայնությունը, վախը սեփական ունակությունների և գիտելիքի հարցում:

Ինքնազարգացման և պահանջկոտության միջև դարձյալ առկա է բացասական կապ r=-283, ինչը դարձյալ փաստում է այն, որ դասախոսները իրենց զարգացման, մասնագիտական առաջխաղացման հարցում պահանջկոտ չեն, բավարարվում են իրենց ունեցած գիտելիքով:

Հեշտությամբ գնում են զիջումների, չեն ցուցաբերում համառություն, պատրաստակամություն դեպի մասնագիտական զարգացում:

Հետևաբար կարող ենք դուրս բերել հետևյալ որակները, որոնք առկա են դասախոսների մոտ որպես հիմնական որակներ՝




**Եզրակացություն**

Ամփոփելով փորձարարական արդյունքների տվյալները՝ կարող ենք ասել, որ դասախոսների մոտ բարձր են գտնվել հետևյալ անձնային որակները՝ շփվողականություն, բարեխղճություն հուզական կայունություն, համարձակություն, երազկոտություն և ռադիկալիզմ: Դասախոսները ունեն տակտի զգացողություն, ինքնավստահ են, կարող են ցուցաբերել կազմակերպչական ունակություններ: Դասախոսները իրենց զարգացման, առաջխաղացման ընթացքում ունենում են մոտիվացիայի պակաս, անիքնավստահություն, կարող են ցուցաբերել հակադրական վարք, բարձր է նաև տագնապայնությունը: Կազմակերպչական և հաղորդակցման ունակություններում առաջնային են հետևյալ որակները՝ ուղղվածություն, գործնականություն, ինքնավստահություն, հոգեբանական տակտ: Դասախոսները կարողանում են իրականացնել տարատեսակ շփումներ, իրենց աշխատանքում առաջնորդվում են բարեխղճությամբ, համարձակ են, կարող են ռիսկի գնալ: Կարողանում են կառավարել իրենց հույզերը և վարքը: Կարողանում են գնահատել տիրող մթնոլորտը և հարմարվել դրան: Արագ կողմնորշվում են՝ ինչպես կարող են ազդել մարդկանց վրա՝ ելնելով նրա անհատական առանձնահատկություններից: Ինքնազարգացման և առաջխաղացման հարցում ցուցաբերում են զիջողականություն, պահանջկոտ չեն սեփական անձի հադեպ, անինքնավստահ են: Հոգեբանական որակները գտնվում են հարաբերակցության մեջ, դասախոսների դեպքում որպես հարաբերակցությունն ապահովող որակ հանդես է գալիս ինքնազարգացումը: Ինքնազարգացումը մարդու համապարփակ զարգացման գործընթաց է, իսկ ժամանակակից

կրթությունը դասախոսից պահանջում է ոչ միայն մասնագիտական գիտելիք և կարողություններ, այլ նաև այն, որ դասախոսը գտնվի շարունակական կրթության մեջ: Մասնագիտական գործունեության մեջ դասախոսի ինքնազարգացումը արտաքին մասնագիտական պատրաստվածության և ներքին դրդապատճառների ինտեգրման գործընթաց է: Արտաքինը սահմանում է ինքնազարգացման բովանդակությունը, ձևերն ու մեթոդները, իսկ ներքին ձգտումները ապահովում են դասախոսի ինքնազարգացման գիտակցումն ու անձնական նշանակությունը մասնագիտական գործունեության մեջ:

Այսպիսով՝ տվյալները ցույց են տալիս, որ դասախոսների ինքնազարգացումը գործնականում իրականացվում է սեփական ցանկությունից ելնելով. չկան համալսարանի կողմից իրականացվող ռազմավարություն, մեխանիզմներ, որոնք ապահովում են ինքնազարգացման ինտեգրումը դասախոսների գիտամեթոդական, գիտական և նորարարական գործունեության մեջ և այլն: Այս հանգամանքը վկայում է այն մասին, որ, օրինակ, գիտական գործունեության մեջ դասախոսի ինքնազարգացման բազմաթիվ արդյունքներ չեն ստանում համապատասխան մեթոդաբանական և հոգեբանական մեկնաբանություն, ուստի այս խնդիրը դառնում է մեր ուսումնասիրության առարկան: Մենք առաջարկում ենք վերապատրաստումների դեպքում շեշտը դնել հոգեբանական որակների փոխկապվածության վրա, որտեղ հատուկ դեր ունի ինքնազարգացումը, վերջինս զարգացնելով՝ կապահովենք հոգեբանական որակների զարգացումը: Դասախոսների հոգեբանական որակների համալիր զարգացումը նպաստում է նրանց գործունեության արդյունավետության բարձրացմանը և առաջխաղացմանը:

## Օգտագործված գրականության ցանկ


1. Гоноболин Ф.Н. О некоторых психических качествах личности учителя // Вопросы психологии. 1975. № 1. С. 97-104.
2. Мерлин В.С. Очерк интегрального исследования индивидуальности. М., 1986. 254с
3. Небылицын В.Д. Психофизиологические исследования индивидуальных различий. М., 1976. 336.
4. Климов Е.А. Развивающийся человек в мире профессий. Обнинск: Изд-во «Принтер», 1993. 47с
5. Ломов Б.Ф. Методологические и теоретические проблемы психологии. М.: Наука, 1984. 313 с

6. Зеер Э.Ф. Концепция профессионального развития человека в системе непрерывного образования // Педагогическое образование в России. 2012. № 5. С. 122-127
7. Ավանեսյան Հ. Մ. Փորձարարական հոգեբանություն: Ուսումնական ձեռնարկ/ Երևան.: Էդիթ Պրինտ, 2010 թ. – 288 էջ:
8. Մեսրոբյան Վ. «Կրթության կառավարիչների մասնագիտական և հոգեբանական որակների ուսումնասիրություն» ԵՊՀ Արդի հոգեբանություն #2(5) 2019 https://drive.google.com/file/d/1emDXkm2j_hzVipV6a85N8SB-3l9d7Yd_/view

# ՄԱՆԻՊՈՒԼՅԱՑԻԱ ԵՐԵՎՈՒՅԹԻ ՓԻԼԻՍՈՓԱՅԱԿԱՆ ԵՎ ԱՐԺԵՔԱՅԻՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ

**ԲԵՆԻԿ ԵՐԻԲԵԿՅԱՆ**
Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան, հայցորդ
byeribekyan@bk.ru

**Համառոտագիր**

Հոդվածում դիտարկվում և վերլուծության են ենթարկվում «մանիպուլյացիա» երևույթի որոշ փիլիսոփայական առանձնահատկություններ: Ներկայացվում են տարբեր ձևակերպումներ, «մանիպուլյացիա» երևույթի վերաբերյալ արժեքային գնահատականներ: Դիտարկվում են մանիպուլյացիայի ծագման և գործընթացային առանձնահատկությունների վերաբերյալ պատմական հիմքեր, որոնք չեն ունեցել դեռևս հստակ գիտական հիմնավորվածություն և ձևակերպում: Առանձնացվում են տարբեր գիտական ձևակերպումներ, կարծիքներ և գնահատականներ, որոնք վերաբերում են մանիպուլյացիայի գործառնական դերին և նշանակությանը սոցիալական, քաղաքական և միջանձնային հարաբերությունների ոլորտներում: Մասնավորապես, վերլուծության են ենթարկվում մանիպուլյացիա երևույթի վերաբերյալ դրական և բացասական գիտական գնահատականները: Որպես բացասական կամ դրական գնահատականի հիմնական գործոն դիտարկվում է մանիպուլյացիայի կառուցողական կամ ապակառուցողական գործառույթը հասարակության սոցիալական, քաղաքական կյանքում, միջանձնային հարաբերություններում:

Մասնագիտական գրականության մեջ դեռևս չկա «մանիպուլյացիա» երևույթի վերաբերյալ միանշանակ սահմանում կամ կարծիք: Հոդվածում դիտարկվում են մանիպուլյատիվ ներգործության ծագման և իրագործման պատմական արմատները և նախանշանները, որոնք դեռևս չեն ունեցել հստակ գիտական հիմնավորում: Մանիպուլյացիա երևույթը հաճախ կարելի էր դիտարկել հեքիաթներում, դիցաբանություններում, աշխարհայացքային հայեցակետերում: Այդ շրջանում չկար նաև «մանիպուլյացիա» երևույթի վերաբերյալ հստակ դրսևորված բացասական գնահատական: Մանիպուլյացիա երևույթի վերաբերյալ միանշանակ սահմանում և գնահատական տալու դժվարությունը կապվում է սոցիալական կյանքի բարդության, ինչպես նաև սոցիալական ենթատեքստերի և առանձին իրավիճակների բազմազանության հետ:

Ժամանակակից աշխարհում «մանիպուլյացիա» երևույթի տարածվածությունը կապվում է մասսայական մշակույթ հասկացության հետ, որը ենթադրում է տարբեր մշակութային արժեքների միջև սահմանների և տարբերությունների վերացում: Այստեղ կարևոր դեր և նշանակություն է ունենում տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացումը և տարածումը:

Հոդվածում դիտարկվում է մանիպուլյատիվ նպատակադրության վերհանման կարևորությունը: Չնայած սահմանումների և արժեքային գնահատականների բազմազանությանը՝ մինչ այս պահը տվյալ խնդիրը հանդիսանում է անորոշ և դժվար ապացուցելի: Հստակությունն այստեղ կապված է սոցիալական ենթատեքստը հաշվի առնելու հետ, որտեղ դիտարկվում է «մանիպուլյացիա» երևույթը:

Սոցիալական, քաղաքական և միջանձնային հարաբերություններում և իրադարձություններում մանիպուլյացիան կարելի է դիտարկել որպես որոշակի պաշտպանական մեխանիզմ, որը հիմնականում դիտարկվում է անորոշ իրավիճակներում: Տվյալ պարագայում մանիպուլյացիայի օբյեկտ է սոցիալական իրադարձությունը, որին տրվում են համապատասխան սիմվոլիկ նշաններ՝ նպատակ ունենալով տվյալ իրադարձության վերաբերյալ ստանալ պարզություն, իմաստավորվածություն և կանխատեսելիություն:

**Բանալի բառեր և բառակապակցություններ.** *մանիպուլյացիա, փիլիսոփայական հիմքեր, արժեքային գնահատական:*

# АНАЛИЗ ФИЛОСОФСКИХ И ЦЕННОСТНЫХ ОСОБЕННОСТЕЙ ЯВЛЕНИЯ МАНИПУЛЯЦИЯ

**БЕНИК ЕРИБЕКЯН**
Армянский государственный педагогический университет им. Х. Абовяна
соискатель
byeribekyan@bk.ru

**Аннотация**

В статье делается попытка рассмотреть и проанализировать некоторые философские аспекты явления манипуляция. Демонстрируются разные определения, ценностные оценки феномена манипуляции. Рассматриваются исторические основы появления и особенностей функционирования явления манипуляции, не имеющего тогда еще четкого научного обоснования и формулировки. Выделяются разные теоретические формулировки, мнения и оценки роли и функционального значения манипуляции в социальной, политической и межличностной сферах жизнедеятельности. В частности, анализируются позитивные и негативные научные оценки явления манипуляция. В качестве основного фактора позитивности или негативности считается конструктивная, регулирующая либо дестабилизирующая функция манипуляции на социальную, политическую жизнь общества, межличностные отношения.

В научной литературе до сих пор не существует однозначного обозначения и мнения в контексте явления манипуляция. В статье рассматриваются исторические корни и предпосылки возникновения и осуществления манипулятивного воздействия, которое не имело тогда научного обоснования. Феномен манипуляции часто можно было наблюдать в сказках и мифах, в мировоззренческих воззрениях. В этом контексте не наблюдалось выраженной негативной оценки явления манипуляции. Сложность однозначного определения и оценки явления манипуляция связывается с фактом сложности социальной жизни, а также с разнообразием социальных контекстов и отдельных ситуаций.

Распространенность явления манипуляция в современном мире связывается с понятием «массовая культура», которая представляет собой размывание культурных граней и различий. Важную роль здесь приобретает развитие и распространение информационных технологий.

В статье выявляется важность рассмотрения вопроса манипулятивной интенции. Несмотря на многочисленные определения, ценностные оценки до нынешнего момента остаются неопределенными и трудно доказуемыми. Ясность в данном вопросе зависит от учета социального контекста, в котором можно наблюдать явление манипуляция.

В определенных социальных, политических или межличностных событиях и отношениях манипуляцию можно рассматривать как некоторый защитный механизм, который проявляется в основном в неопределенных ситуациях. В данном случае объектом манипуляции является социальное событие, которому

определенные символические значения с целью получения ясности, осмысленности и предсказуемости данного события.

**Ключевые слова и словосочетания:** манипуляция, философские основы, ценностные оценки.

# ANALYSIS OF THE PHILOSOPHICAL FOUNDATIONS AND VALUE FEATURES OF THE PHENOMENON OF MANIPULATION

**BENIK YERIBEKYAN**
Armenian State Pedagogical University after Kh. Abovyan
Applicant
byeribekyan@bk.ru

**Abstract**

The article attempts to consider and analyze some philosophical aspects of the phenomenon of manipulation. Different definitions and value assessments of the phenomenon of manipulation are demonstrated. The historical foundations of the appearance and features of the functioning of the phenomenon of manipulation, which did not have a clear scientific justification and formulation at that time, are considered. There are different theoretical formulations, opinions and assessments of manipulation's role and functional significance in the social, political and interpersonal spheres of life. In particular, positive and negative scientific assessments of the phenomenon of manipulation are analyzed. The main factor of positivity or negativity is considered to be the constructive, regulating or destabilizing function of manipulation of society's social and political life and interpersonal relationships.

There is still no unambiguous designation and opinion on the phenomenon of manipulation in the scientific literature. The article examines the historical roots and prerequisites for the emergence and implementation of manipulative influence, which had no scientific justification then. The phenomenon of manipulation could often be observed in fairy tales and myths in certain worldviews. In this context, there was no pronounced negative assessment of the phenomenon of manipulation. The complexity of the unambiguous definition and evaluation of the phenomenon of manipulation is associated with the complexity of social life and the diversity of social contexts and individual situations.

The prevalence of manipulation in the modern world is associated with the concept of "mass culture", which blurs cultural boundaries and differences. The development and dissemination of information technologies plays an important role here.

The article reveals the importance of considering the issue of manipulative intention. Despite numerous definitions and value assessments, up to the present moment, this moment remains to be determined and difficult to prove. The clarity in this matter depends on considering the social context in which the phenomenon of manipulation can be observed.

In certain social, political or interpersonal events and relationships, manipulation is a protective mechanism that manifests mainly in uncertain situations. In this case, the object of manipulation is a social event to which certain symbolic meanings are attributed to obtain clarity, meaning, and predictability of this event.

**Keywords and phrases:** manipulation, philosophical foundations, value assessments.

**Ներածություն**

Սոցիալ-հոգեբանական ներգործության, ներազդման մեխանիզմների և գործընթացների մասին հիշատակումները, ինչպես նաև դրանց վերաբերյալ մոտեցումները և գնահատականներն ունեն պատմական և ժամանակագրական առանձնահատկություններ: Հին Հունաստանի գիտական, փիլիսոփայական մտքում կարելի է հանդիպել հիշատակումների՝ հոգեբանական ներգործության մեխանիզմների վերաբերյալ: Մասնավորապես Պլատոնը խոսում է «համոզելու արվեստ» գաղափարի մասին, որը նա բնութագրում է որպես սեփական նպատակների և ցանկությունների իրագործման նպատակով այլոց խրախուսելու ինքնակամ, այլ ոչ թե հարկադրաբար գործողությունների դրդելու մասին [8]: Այստեղ հիմնականում խոսվում է քողարկված ներգործության կամ ներազդման մասին:

Մանիպուլյատիվ ներգործության իրականացման առանձին բաղադրիչների կիրառման մասին հիշատակվում է նաև հին արևելյան, մասնավորապես՝ հին չինական փիլիսոփայության մեջ որպես առանձին գաղափարախոսություններ: Այստեղ մանիպուլյատիվ ներգործության երևույթները բնութագրվում են որպես հակառակորդների, թշնամիների դեմ կիրառվող մշակված, պլանավորված քայլերի հաջորդականություն, որի արդյունքում օգտագործվում են բազմաթիվ խորամանկություններ՝ հակառակորդի կամ հակադիր կողմին ճնշելու նպատակով: Այս ամենը հիմնականում իրագործվում էր պատերազմի կամ պատերազմական գործողությունների վարման ենթատեքստում և որպես հիմնական նպատակադրում դիտարկում էր սեփական զինվորների կամ քաղաքացիների գիտակցության մեջ համապատասխան նախատրամադրվածություն ստեղծելու գործընթացը **[11], [3]:**

Լատիներենում «մանիպուլյացիա» հասկացությունը բնորոշվում է նաև որպես փոքր խումբ: Խոսքը Հին Հռոմում գոյություն ունեցող ռազմական ջոկատների՝ «մանիպուլաների» մասին է, որոնք անմնացորդ նվիրումով կատարում էին ղեկավարների բոլոր հրահանգները **[9], [14]:**

Ե. Լ. Դոցենկոն նշում է, որ «մանիպուլյացիա» երևույթի վերաբերյալ նկարագրությունների կարելի է հանդիպել հեքիաթներում, որտեղ կարելի տեսնել պայքարի և խորամանկության, ինչպես նաև՝ դրանց օգտագործման արդյունքում դիմացինի հանդեպ հաղթանակ տանելու երևույթը: Սոցիալական ենթատեքստում «մանիպուլյացիա» երևույթի ծագումը կապվում է մենք և նրանք հակադիր բևեռների առաջացման հետ, որի արդյունքում տեղի է ունենում սեփական հանրույթի անդամների և արժեքների հետ նույնականացում, շարունակաբար օժանդակություն ստանալու ամրապնդում, սեփա-

կան պատասխանատվության տեղափոխում տվյալ հանրույթի վրա և անձնական շահի ստացում **[4]:**

Վերը նշվածի ենթատեքստում խոսքը «մանիպուլյացիա» երևույթի կամ «մանիպուլյատիվ ներգործություն» հասկացության ոչ թե գիտական ձևակերպման, բնորոշման, այլ՝ դրանց առանձին բաղադրիչների նկարագրության մասին է: Ընդհանուր առմամբ, այդ ամենի մեջ կարելի է նկատել այն, որ «մանիպուլյացիա» հասկացությունը և երևույթը դիտարկվում են հիմնականում բացասական կողմից:

**Տեսական հիմնավորումներ**

Ժամանակակից աշխարհում մանիպուլյացիայի, սոցիալ-հոգեբանական ենթատեքստում նշվում են «մասսայական մշակույթ» հասկացությունը և երևույթը: Սրա հիմքում դիտարկվում է գիտատեխնիկական առաջընթացի, համացանցի ազդեցությունը՝ առանձին ազգային, մշակութային, արժեքային առանձնահատկությունների և տարբերությունների չեզոքացման ենթատեքստում: Վերջնական արդյունքում խոսքը մասսայական մշակույթի ձևավորման մասին է **[11]:**

Ինչ վերաբերում է ժամանակակից սոցիալական, հասարակական և քաղաքական կյանքում «մանիպուլյացիա» երևույթի վերաբերյալ գիտնականների կարծիքներին, ապա այստեղ նշվում է երկու հիմնական ուղղություն: Առաջին ուղղության գիտնականները (Կ. Պոպպեր, Ֆ. Խայեկ, Զ. Բժեզինսկիյ, Ջ. Գիլբերտ և այլն) մանիպուլյացիայի դերը ժամանակակից կյանքում դիտարկում են անխուսափելի և չեն արտահայտում հստակ բացասական կարծիք դրա վերաբերյալ: Քաղաքական կառավարման տեսանկյունից մանիպուլյացիան դիտարկվում է նույնիսկ որպես անխուսափելի երևույթ: Գիտնականների և փիլիսոփաների մյուս խումբը (Ֆ. Նիցշե, Խ. Օրտեգա-ի--Գասսեթ, Տ. Ադորնո և այլն) մանիպուլյատիվ գործառույթների իրականացումը դիտարկում են բացասական տեսանկյունից որպես յուրահատուկ բռնության տեսակ **[11]:**

Մասսայական գիտակցության կառավարման տեսանկյունից, Գ. Շիշկովի կարծիքով, մանիպուլյացիան դիտարկվում  է որպես հանրային կյանքի կառավարման անհրաժեշտ գործիք, քանի որ մասսաները հաճախ ձգտում են հասնել սոցիալական կյանքի կառավարման՝ չունենալով դրա համար անհրաժեշտ ընդունակություններ և գիտելիք **[12]:**

Այնուամենայնիվ, մասսայական գիտակցության մանիպուլյացիան իր հիմքում պարունակում է կոնկրետ նպատակ՝ անհատի կամ հանրության

կոնկրետ շրջանակների մոտ մտածողության և վարքի համապատասխան ձևերի մշակումը:

Հետաքրքրական է նաև դրական և բացասական ներգործության վերաբերյալ տեսակետը: Բացասական ներգործությունն այս ենթատեքստում բնութագրվում է որպես մանիպուլյատիվ, որի ժամանակ խոսքը դիմացինից կարճաժամկետ, իրավիճակային շահերից դրդված օգուտ ստանալու մասին է: Իր հերթին, դրական ներգործության դեպքում խոսքը որոշակի հավերժական արժեքների փոխանցման գործընթացի մասին է: Վերջիններս հիմնականում մատուցվում են գիտելիքի տեսքով, որն ուղղված է անհատի (ներգործության օբյեկտի) մոտ ինքնուրույն ճանաչողական հետաքրքրություն առաջացնելուն, ներգործության սուբյեկտը պատասխանատվություն է կրում վերջնական արդյունքի համար: Այլ կերպ ասած՝ դրական ներգործության պարագայում չի անտեսվում, խրախուսվում է ներգործության օբյեկտի կամքը, կամային որոշում կայացնելը, բացասական մանիպուլյատիվ ներգործության դեպքում ներգործության օբյեկտի կամային գործողությունն իրագործվում է առանց նրա գիտակցական ցանկության և վերահսկողության **[10]:**

Հաճախ մանիպուլյատիվ ներգործության սուբյեկտն արժեզրկում է մանիպուլյատիվ ներգործության օբյեկտի կեցության առանձնահատկությունները, ընտրության և որոշում կայացնելու ազատությունը: Այնուամենայնիվ, ներգործության օբյեկտը կարող է նաև ինքնակամ հրաժարվել այդ ազատությունից, երբ սեփական իմացական, մտածողության գործընթացը համարելով ժամանակի կորուստ կամ խուսափելով ճշմարիտ, օբյեկտիվ տեղեկույթի կամ գաղափարի հետ առճակատվելուց, հենվում է այլ բանիմաց անհատների կամ խմբի խոսքի արտահատչականության կամ գաղափարախոսության գրավչության վրա:

Բոլոր դեպքերում էլ կարևոր ենք համարում նշել հետևյալը. տվյալ դեպքում խոսքը «ես-այն», այլ ոչ թե «ես-դու» հոգեբանական կապի մասին է, քանի որ հաղորդակցման մասնակիցների դիրքերը հավասար չեն և կողմերից մեկը մյուսին դիտարկում է որպես «օբյեկտ»: Այս երկու գաղափարները հիմնականում վերցված են կլինիկական հոգեթերապևտիկ պրակտիկայից, մասնավորապես՝ գեշտալտ-թերապիայից, էկզիստենցիալ և անալիտիկ հոգեթերապիայից **[7], [15]:**

Միջանձնային հարաբերություններում էկզիստենցիալ հոգեբանության և հոգեթերապիայի տեսանկյունից մանիպուլյացիա երևույթի վերաբերյալ հետաքրքրական են Ռ. Մեյի և Է. Շաստրոմի տեսակետները: Նրանց կար-

ծիքով, միջանձնային հարաբերություններում մանիպուլյատիվ վերաբեր-մունքի գերակայության պարագայում անձը հրաժարվում է իր անհատակա-նությունից, ինքնատիպությունից, իսկությունից: Վերջնական արդյունքում, անձն ինքն է դառնում մանիպուլյացիայի «զոհ»: Որպես մանիպուլյատիվ վե-րաբերմունքի առաջացման հիմնական պատճառ նշվում է միջանձնային հա-րաբերություններում «դժվար իրավիճակում» հայտնվելու վախը **[6], [13]:**

Այս տեսակետներին մոտ է նաև օտարացման երևույթը, որը դիտարկ-վում է որպես մանիպուլյացիաների կամ մանիպուլյատիվ վերաբերմունքի ծագման պատճառ: Խոսքն առանձին անհատի՝ հասարակական հարաբե-րություններից մեկուսանալու, հեռանալու մասին է: Օտարացման երևույթը դիտարկվում է նաև սոցիալ-հոգեբանական առավել լայն ենթատեքստում, որտեղ խոսվում է տեղեկատվական օտարացման գաղափարի մասին: Որ-պես օտարացման առարկա այստեղ հանդես է գալիս տեղեկույթը՝ իր սկզբնական նշանակությունից շեղվելու, տարբեր իմաստներ ստանալու և մեկնաբանությունների բազմազանության համատեքստում **[1], [2]:**

Եթե փորձենք փոխկապակցել մանիպուլյացիա երևույթը միջանձնա-յին հարաբերություններում  առավել լայն սոցիալական կամ քաղաքական կողմերի հետ, կարող ենք տեսնել, որ առանձին անհատի հոգեկերտվածքը լուրջ ազդեցություն և առանցքային նշանակություն է ձեռք բերում սոցիալ-քաղաքական մանիպուլյացիաների ենթատեքստում: Այս խնդիրը լուրջ ու-սումնասիրված է Գ. Լասսուելի աշխատությունում **[5]:** Այս համատեքստում կարելի է խոսել ոչ թե գիտակցաբար, այլ ավելի շուտ անգիտակցաբար ի-րականացվող մանիպուլյացիայի մասին:

Նման պարագայում, կարծում ենք, միշտ չէ, որ կարելի է խոսել հստակ մշակված, ծրագրված սոցիալ-հոգեբանական մանիպուլյատիվ ներ-գործության կազմակերպման և իրականացման մասին:

**Մանիպուլյացիայի՝ որպես հարմարման գործառույթի վերլուծությունը**

Բացի մանիպուլյացիայի մեկնաբանությունները և դիտարկումները սո-ցիալական, քաղաքական կամ միջանձնային ոլորտներում դիտարկելուց, մանիպուլյատիվ նպատակադրության, համապատասխան դրդապատճառի նույնականացման խնդիրը դեռևս մնում է բաց: Մանիպուլյացիայի դրական կամ բացասական նպատակադրման խնդիրը կարևոր գործոն է, քանի որ միջանձնային հարաբերություններում (օրինակ՝ մեծահասակի կողմից երե-խային խրախուսելու/պատժելու գործընթացում) օգտագործվող առանձին բառերը կամ լեզվական մարտավարությունները կարող են օգտագործվել նաև ինքնաբերաբար: Ավելին, մեծահասակի նման վերաբերմունքի վերջնա-

կան արդյունք կարող է հանդիսանալ երեխայի մոտ ցանկալի վարքի ձևավորումը:

Իսկ ինչպե՞ս մեկնաբանել այն հանգամանքը, երբ կյանքի որոշակի անբարենպաստ կամ ոչ միանշանակ իրավիճակների և պայմանների ազդեցության ներքո առանձին անհատն ստիպված է լինում հարմարվել փոփոխվող իրադրությանը՝ «մանիպուլյացնելով» արտաքին միջավայրի գործոնները և երևույթները: Կարելի է ենթադրել, որ նման պարագայում անհատը դառնում է մանիպուլյատիվ ներգործության սուբյեկտ, իսկ արտաքին իրականության բաղադրիչները՝ մանիպուլյատիվ ներգործության օբյեկտ:

Կարծում ենք՝ տվյալ պարագայում խոսքը ոչ թե մանիպուլյացիայի, այլ հարմարման գործընթացի իրականացման մասին է: Մանիպուլյացիան այս ենթատեքստում դիտարկվում է որպես սոցիալ-հոգեբանական ազդեցություններին և երևույթներին հարմարվելու միջոց: Եթե դիտարկելու լինենք անհատի և միջավայրի միջև ներդաշնակության հաստատման գործընթացի կարևորությունը, ապա մանիպուլյացիան կարելի է դիտարկել որպես կարևոր՝ անձի և միջավայրի համար դրական նշանակություն ունեցող երևույթ:

Վերը նշվածը չի առնչվում գիտական գրականության մեջ նշվող «կոնտրմանիպուլյացիա» երևույթի հետ **[4],** քանի որ այն ենթադրում է տվյալ ոլորտում համապատասխան գիտելիքների և վարժվածության առկայություն:

Դիտարկելով միջավայրի ազդեցությունը որպես մանիպուլյատիվ վարքի առաջացման կարևոր գործոն՝ կարող ենք նշել նաև, որ որոշ դեպքերում մանիպուլյատիվ վարքի և վերաբերմունքի հիմքում կարող են ընկած լինել նաև համապատասխան նպատակադրումները: Կարելի է խոսել անհատի մոտ վարքային ձևաչափերի և սխեմաների մասին, որոնք հանդիսանում են անհատի՝ արտաքին միջավայրի հետ հաղորդակցվելու մեխանիկորեն ամրապնդված մարտավարություններ և արտաքին դիտորդի մոտ ստեղծում մանիպուլյատիվ վարքի տպավորություն:

Հոդվածում դիտարկված գաղափարները, դրանց վերլուծությունը և դիտարկումը փիլիսոփայական և գոյաբանական տեսանկյունից միտված են հիմնականում ուրվագծելու «մանիպուլյացիա» երևույթի որոշ ձևակերպումներ, բնութագրումներ և գիտական մեկնաբանությունները: «Մանիպուլյացիա» երևույթի դրական կամ բացասական կողմերի վերաբերյալ մեկնաբանության խնդիրը դեռևս մնում է բաց՝ պահպանելով հետագա գիտական վերլուծությունների, քննարկումների և ճշգրտումների անհրաժեշտությունը:

**Եզրակացություն**

Ինչպես կարելի է նկատել, «մանիպուլյացիա երևույթի դրական կամ բացասական լինելու և գնահատվելու վերաբերյալ կարծիքները և տեսակետները դեռևս հստակ և միանշանակ չեն: Այդ ամենը կապված է սոցիալական, քաղաքական կամ միջանձնային փոխհարաբերությունների բազմազանության, իրավիճակների, ենթատեքստի առանձնահատկությունների հետ:

Վերը նշված բարդությունը կապված է նաև «մանիպուլյացիա» երևույթի վերաբերյալ գիտական հանրույթում առկա տարակարծությունների և տարբեր սահմանումների առկայության հետ: Այնուամենայնիվ, սոցիալ-քաղաքական ենթատեքստում «մանիպուլյացիա» երևույթը դիտարկվում է բացասական երանգավորմամբ՝ կապված քաղաքական պայքարում օգտագործվող տարբեր կոշտ միջոցների օգտագործման հետ, որոնց նպատակն է կոնկրետ լսարանի մոտ համապատասխան կարծիքի ձևավորումը՝ հիմնականում հաշվի չառնելով լսարանի կամքը: Սոցիալ-հոգեբանական մանիպուլյացիայի հիմքում ընկած է նաև հստակ ընդգծված նպատակը, մշակված են այդ նպատակին հասնելու ուղիները:

Միջանձնային, հարաբերությունների որոշ դրվագներում «մանիպուլյացիա» երևույթը և մանիպուլյատիվ վերաբերմունքը կարող է դրսևորվել նաև առանց դիմացինի նկատմամբ հանդեպ  հստակ դրսևորած բացասական նպատակադրության, ինչպես նաև՝ սովորեցնելու արդյունքում՝ որպես արտաքին իրականության հետ հաղորդակցվելու վարքային մարտավարություն: Եթե որպես հիմք դիտարկենք մանիպուլյացիա երևույթում պատասխանատվության (ներգործության գործընթացի կատարման) գաղափարը, ապա արտաքին իրականությունից և միջավայրից եկող ազդակները հաճախ «պատասխանատվություն» են կրում անհատի մանիպուլյատիվ հակազդման համար, ինչն ինքնին արժե դիտարկել որպես արտաքին իրականությանը հարմարվելու անհրաժեշտ պայման:

## Օգտագործված գրականության ցանկ


1. Elster J. Making Sense of Marx. – Cambridge: Cambridge University Press, 1985. – P. 107.;
2. Белл Д Социальные рамки информационного общества // Новая технократическая волна на Западе – М : Прогресс, 986 – с.;
3. Грачев Г., Мельник И. Манипулирование личностью. М.: Эксмо, 2002. С. 67.;
4. Доценко Е. Л. Психология манипуляции: феномены, механизмы и защита.— М.:, Издательство МГУ, 1997. — 344 с.;
5. Лассуэл Г Психопатология и политика: монография; пер с англ Самсоновой Т.Н., Коротковой Н.В. – М.: РАГС – 2005. – 352 с.;
6. Мэй Р. Любовь и воля. М., 1997;
7. Перлз Ф., Гудмен П., Хефферлин Р. Практикум гештальтерапии.-2005.-288с.;
8. Платон. Диалоги. Книга вторая. М., 2008
9. Пую Ю.В. Социально-философские основания антропологии манипулирования: автореф. Дис. д-ра философских наук. СПб., 2010.],
10. Шавердян Г. Право на социальное влияние и обязанность ответственности. http://ysu.am/files/06G_Shahverdyan_r.pdf (Ծանոթանալու ամսաթիվը՝ 11.03.2023);
11. Шихалиева У. Х., Феномен манипуляции в контексте современной культуры: философский анализ. (Диссертация на соискание ученой степени кандидата философских наук);
12. Шишков Г. Управляемое омассовление.-М, 1999.-С. 56.;
13. Шостром Э. Человек-манипулятор. Внутреннее путешествие от манипуляции к актуализации. М., 2008;
14. Юренков В. В., Манипуляция как социально-философское явление. https://cyberleninka.ru/. (Ծանոթանալու ամսաթիվը՝ 10.03.2023);
15. Якоби М. Встреча с аналитиком. Феномен переноса в человеческих отношениях. Серия: Юнгианская психология. Издательство: Когито-Центр, 2007 г. Мягкая обложка, 144 стр.

# ՀՈԳԵՍՈՄԱՏԻԿԱ. ՍՐՏԱՅԻՆ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ

**ԼՅՈՒԴՄԻԼԱ ՆԱՆՈՒՇՅԱՆ**
ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա,
գիտակրթական միջազգային կենտրոն,
հոգեբանության ամբիոն, մագիստրանտ,
աշխատավայր՝ մանուկների զարգացման հիմնադրամ (ՔՈԱՖ),
զարգացման հոգեբան
lyudmilanan@gmail.com

*Հոդվածը նվիրվում է իմ սիրելի հորաքույր Հրանուշ Ն.-ի լուսավոր հիշատակին:*

**Համառոտագիր**

Հոգեսոմատիկ գործոնը բնորոշ է սրտային հետևյալ հիվանդություններին՝ էսենցիալ հիպերտոնիա, սրտային իշեմիկ հիվանդություններ, սրտային ռիթմի խանգարում, վախով պայմանավորված սրտային նևրոզ:

Հոգեբանական զանգվածային հետազոտությունների արդյունքում հետազոտությունների շրջանակ է հանդիսացել բնավորության առանձնահատկության ուսումնասիրումը:

Սրտային հիվանդությունների հոգեսոմատիկ դրսևորման դեպքում դեպրեսիայի, զայրույթի, սթրեսի, հետտրավմատիկ սթրեսային խանգարման բավականին բարձր շեմ է առկա, որը ունենում է իր անդրադարձը մարմնի վրա:

Սրտային հիվանդությունների դեպքում առկա է «մանիպուլյատիվ» վարք, որը հաճախ լինում է ոչ գիտակցված:

Առաջ է քաշվում վարկած, ըստ որի սրտային հիվանդություն ունեցող հիվանդների մոտ առկա է տագնապայնության, դեպրեսիվության բարձր շեմ, որն էլ հանգեցնում է հոգեսոմատիկ խնդիրների:

Ամփոփելով ստացված արդյուքները (ըստ GAD-ի, Բեկի տագնապայնության, դեպրեսիվության սանդղակների)՝ կարող ենք հաստատել առաջ քաշված վարկածը, ըստ որի, առկա է տագնապայնության, դեպրեսիվ խանգարման բավականին բարձր շեմ, որի պատճառները կարող են լինել տարբեր հիվանդություններ:

Ֆիզիկական ակտիվության, առողջ ապրելակերպի, առողջ սննդակարգի, արյան ճնշմանը կանոնավոր հետևելու պարագայում հնարավոր է

սրտանոթային խնդրի հնարավոր կանխում, սակայն, միայնակ դժվար է փոխել այդ ամենը, ուստի անհրաժեշտ է լինում հոգեբան, հոգեթերապևտի հետ աշխատանք:

**Բանալի բառեր և բառակապակցություններ.** հոգեսոմատիկա, սրտային հիվանդություններ, հոգեթերապիա:

# ПСИХОСОМАТИКА: ПСИХОЛОГИЧЕСКИЕ ПРИЧИНЫ СЕРДЕЧНЫХ ЗАБОЛЕВАНИЙ

**ЛЮДМИЛА НАНУШЯН**
Национальная академия наук Республики Армении
Международный научно-образовательный центр
магистрат кафедры психологии
lyudmilanan@gmail.com

*Статья посвещается светлой памяти моей тети Грануш Н.*

**Аннотация**

В статье вкратце обсуждается возникновения психологических причин болезни сердца.

Психосоматический компонент проблема в первую очередь, характерен для следующих заболеваний сердечно-сосудистой системы: эссенциальная артериальная гипертония, ишемическая болезнь сердца, нарушения сердечного ритма, сердечный невроз страха. У людей с психосоматическими нарушениями наблюдается гнев и подавление агрессивных импульсов, излишняя сдержанность, хроническая нервно-психическая напряженность, стремление к самоутверждению, депрессивность.

Безусловно, говоря о психосоматике сердечных болезней, нельзя пройти мимо такого явления как то ли сознательная, то ли неосознанная "манипуляция". Вызвать сердечную симптоматику человеку всегда достаточно просто, потому что она тесно связана с вегетативными нарушениями.

Если рассмотреть методики (GAD, методика Бека тревожность, депрессивность), мы можем понять, что шкала тревожности, депрессивности высока у сердечно-сосудистых больных, у кого есть некая предрасположенность. Таким образом, наша гипотеза подтверждается.

**Ключевые слова и словосочетания:** психосоматика, сердечные болезни, психотерапия.

**PSYCHOSOMATICS: PSYCHOLOGICAL CAUSES OF HEART DISEASES**

**LYUDMILA NANUSHYAN**
National Academy of Sciences of the Republic of Armenia
International Scientific-Educational Center
Department of Psychology, Master's Student
Children of Armenia Fund (COAF),
development psychologist
lyudmilanan@gmail.com

*In the loving memory of Aunt Hranush N.*

**Abstract**

The article briefly discusses the emergence of psychological causes of heart disease.

As we can see, the degree of anxiety, tendencies toward denial, and depressive disorders are high. In addition to somatic treatment, behavioural interventions to control risk factors are available, as well as psychotherapy and antidepressants.

Psychosomatic disorder is a psychological condition involving physical symptoms, usually without medical explanation. People with this condition may have excessive thoughts, feelings or concerns about the symptoms, affecting their ability to function well.

People experiencing depression, anxiety, stress, and even PTSD over a long period of time may experience specific physiologic effects on the body, such as increased cardiac reactivity (e.g., increased heart rate and blood pressure), reduced blood flow to the heart, and heightened levels of cortisol.

Thus, summarizing the methodologies, we make the following summary of the results: due to GAD methodology and the methodologies of Beck's depression inventory and Beck's anxiety inventory, we can see that people with heart disease have a high rank of depression, anxiety, sometimes they can have manipulative behaviour, fears

**Keywords and phrases:** psychosomatic**,** heart diseases, psychotherapy.

## Ներածություն

Ժամանակակից բժշկության, կլինիկական հոգեբանության, բժշկական հոգեբանության մեջ համարվում է, որ մարդու ֆիզիկական ինքնազգացողությունը և հոգեկան աշխարհը անքակտելիորեն կապված են միմյանց հետ: Անհրաժեշտության դեպքում հարկավոր է հասկանալ բոլոր հիվանդությունների հոգեծին գործոնները, որոնց բախվում է բժիշկը: Դրա հետ կապված՝ ավելի է մեծանում հոգեսոմատիկայի դերը բժշկության մեջ: Զարգացած երկրներում ապացուցված է, որ օրգանական հիվանդություննե-

րի 50%-ն ունի հոգեծին գործոն, սակայն հարկավոր է տարբերակել այն հիվանդությունները, որոնք ունեն հոգեսոմատիկ բնույթ և աշխատանքը պետք է ուղղված լինի խնդրի կանխմանը և շտկմանը՝ հոգեթերապիայի և անհրաժեշտության դեպքում հոգեմետ դեղերի օգտագործման միջոցով:

19-րդ դարում առանձնացվեցին «հոգեսոմատիկա» և «սոմատոհոգեբանություն» տերմինները: «Հոգեսոմատիկա» տերմինը անվանվել է 1818 թ-ին Հայնրոտի կողմից, իսկ «սոմատոհոգեբանություն» տերմինը 1822 թ-ին Յակոբի կողմից:

Ֆիզիկական և հոգեկան մարմինների միասնության մասին հայտնի է եղել դեռևս մարդկության պատմության պարզագույն (պրիմիտիվ) շրջանում. այդ ժամանակ համարվում էր, որ հիվանդությունը առաջանում է հզոր ուժերի կողմից, որպեսզի քշեն չար հոգիներին, տարբեր անեծքներ, խոսքային ռիտուալներ են նրանք իրականացրել: Արդեն իսկ Մեսոպոտամիայի բժշկությունը կրում էր հոգեսոմատիկ բնույթ իր բոլոր դրսևորումներով, իսկ Արիստոտելի և Հիպոկրատի բժշկագիտական աշխատությունները ուղղված էին հոգեկան և ֆիզիկական մարմինների միասնությանը:

Դարերի ընթացքում շատ փիլիսոփաներ խոսում էին մարմնի և հոգու միասնության մասին: Հոգեսոմատիկ մոտեցման հոգևոր հայր կարող ենք համարել նաև Ֆրիդրիխ Նիցշեին. նա ստեղծել էր փիլիսոփայություն, որը ծագում էր մարմնից, խոսում էր նրա բազմազանության մասին՝ մարմնի և հոգու միասնությամբ, սակայն դասական բժշկությունը ուշադրություն չէր դարձնում փիլիսոփայական դատողություններին և շարունակում էր իր դիտարկումները առանձին օրգան համակարգերի շուրջ: Միայն 19-րդ դարում գիտնականները կրկին վերադարձան հին հունական գաղափարախոսությանը և մարդու օրգան համակարգերի միասնության գաղափարին, կարևորեցին այն, որ ոչ միայն պետք է բուժել հիվանդությունը, այլ հիվանդին:

1920 թ-ից հետո Գերմանիայի տարբեր շրջաններում առաջացավ հետաքրքրություն հոգեֆիզիոլոգիական հետազոտությունների հարցում: Գուստավ Հեյերի և Է. Վիտկովերի հիպնոսի փորձերում հայտնաբերվել է հարաբերականորեն բնորոշ ազդեցություն հոգեկան գրգռիչների և սոմատիկ ֆունկցիաների միջև:

19-րդ դարի կեսերից հոգեկան և ֆիզիկական գործոնների ուսումնասիրությունը շարունակվեց հոգեբանության շրջանակներում, իսկ 50-ական թթ-ին ամերիկյան գիտական գրականության մեջ հրատարակվեց ավելի քան 5. 000 գիտական հոդված, որը նվիրված էր սոմատիկ բժշկությանը՝ հոգեբանների աչքերով: 1950-ական թթ-ին Ալեքսանդր Միչերլիխը Հեյդել-

բերգում բաց արեց համալսարանին կից առաջին հոգեսոմատիկ կլինիկան: Ռուսական գիտական շրջանակներում շատ գիտնականներ գործածեցին Պավլովի տեսությունը, որոնք զբաղվում էին նաև հոգեսոմատիկայի հարցերով: Բեխտերևը ոչ միայն գլխավորում, այլ նաև ապացուցում էր իր աշխատություններում սոմատիկ խանգարումների հնարավոր լինելը՝ հոգեկանի ազդեցության ներքո:

Պեզեշկինը մտցնում է հոգեսոմատիկայի վերաբերյալ 3 հասկացություն. նեղ իմաստով այն գիտական և բուժական ուղղությունն է, որը հաստատում է կապ հոգեկան ապրումների և օրգանիզմի ռեակցաների միջև: Այստեղ ներառված են հոգեսոմատիկ հիվանդությունները և ֆունկցիոնալ խանգարումները, որոնց առաջացումը և ընթացքը կախված է հատկապես հոգեսոցիալական հանգամանքներից, իսկ լայն իմաստով, այն ուղղություն է, որը ուսումնասիրում է կոմպլեքս փոխազդեցություն հիվանդ անձի և սոցիումի միջև: Առավել լայնամասշտաբ առումով հիվանդության ազդեցությունը ընդգրկում է անձի կենսագործունեությունը ողջ հասարակության և մշակույթի շրջանակներում:

*Հոգեսոմատիկայի ժամանակակից հիմնավորումը հետևյալն է. այն գիտություն է, որը ուսումնասիրում է սոմատիկ հիվանդությունները, որոնք մասնավորապես, առաջացել են հուզական դաշտի խանգարումների հետևանքով* [1]:

Հոգեսոմատիկ հիվանդությունները, լինելով նոզոլոգիական միավորներ, այնուամենայնիվ թույլ են տալիս ակներև տեսնել հոգին և մարմինը՝ որպես մեկ ամբողջություն: Տարբեր հեղինակներ և հետազոտողներ հոգեսոմատիկ հիվանդություններին անդրադարձ կատարելիս նշում են դրանց առաջացման հիմքում մարդու անձի, նրա առանձնահատկությունների, հույզերի, ներքին կոնֆլիկտների, պաշտպանության ձևերի և այլ հոգեբանական գործոնների դերի մասին: Այստեղ քննարկվող տարբեր մոտեցումները օգնում են ավելի աչալուրջ լինել տարբեր սոմատիկ դրսևորումների հանդեպ՝ արդեն հոգեբանական տեսանկյունից, և տարբեր հիվանդությունների ուսումնասիրման կամ բուժման դեպքում չմոռանալ մարդուն դիտել ոչ միայն որպես դրանց կրողը, այլ ամենաառաջինը՝ որպես անձ՝ իր ողջ հոգեբանական կերտվածքով հանդերձ, ինչն էլ կարող է հուշել դրանց առաջացման պատճառը, իսկ հոգեբանության մեջ խնդրի լուծման համար առաջնային է հենց պատճառի բացահայտումը:

Հոգեսոմատիկ հիվանդությունները այն հիվանդություններն են, որոնց էթոլոգիայի և պաթոգենեզի հիմքում ընկած են հոգեկան գործոններ, որոն-

ցից կարելի է նշել հիվանդի անձը, հոգեկան և հուզական վիճակները, կոնֆլիկտները: Օքսֆորդյան հոգեբանական բառարանում հոգեսոմատիկ հիվանդությունները բացատրվում են որպես որոշակի օրգանական խանգարումներ, ինչպես օրինակ հիպերտոնիան, որոնց առաջացման պատճառն են հոգեբանական գործոնները, ինչպես օրինակ սթրեսը: [2] («Արդի հոգեբանության տեսական և կիրառական հիմնախնդիրները», գիտական հոդվածների ժողովածու 2, Երևան-2012, «Հոգեսոմատիկ հիվանդություններ. պատմական ակնարկ», Լ. Կարապետյան):

Հիվադությունների հոգեսոմատիկ պայմանավորվածության մասին մտածել են դեռևս հին աշխարհում: Դրա վառ արտահայտությունն է այն, թե ինչպես էին հին բժշկության մեջ շամանները հիվանդին բժշկելու համար կիրառում մոգական եղանակներ. օրինակ՝ ցավը բուժելու համար նրանք գալարվում էին, կարծես ցավից, հետո վեր կենում, ինչից հետո հիվանդները առողջանում էին կամ ինչ-որ ծեսերի միջոցով բուժում կամ հիվանդացնում էին մարդուն, պատրաստում էին դիմակներ և հմայիլներ, իսկ արևելյան մոգերը օգտագործում էին «մոգական թվերի» համադրություններ. միջնադարում՝ խաչակրաց արշավանքների միջոցով, Եվրոպա էին բերվում տախտակներ՝ թվերով և ամուլետներ, որոնք օգտագործվում էին բուժման համար: Վերածննդի ժամանակներում տիրում էր մի կարծիք, «մոգական շրջանակի» մեջ գտնվելը կփրկի չումայից: Հին Հնդկաստանում, Ասորեստանում, Եգիպտոսում, որտեղից ներթափանցեց նաև Հունաստան, ինչպես ծեսերի, այնպես էլ բուժման ժամանակ տաճարներում կիրառում էին հիպնոսը, որը հետագայում ՝ XVIII դարում սկսվեց կիրառվել Ֆ. Մեսմերի կողմից [2]:

**Սրտային հիվանդությունների հոգեբանական գործոնները**

Գիտական հոդվածը նվիրված է սրտային հիվանդությունների հոգեծին գործոնների ուսումնասիրությանը:

Հոգեսոմատիկ գործոնը բնորոշ է սրտային հետևյալ հիվանդություններին՝ էսենցիալ հիպերտոնիա, սրտային իշեմիկ հիվանդություններ, սրտային ռիթմի խանգարում, վախով պայմանավորված սրտային նևրոզ:

Առաջ է քաշվել վարկած, ըստ որի՝ սրտանոթային որոշ հիվանդությունների դեպքում առկա է հոգեսոմատիկ գործոն, որը ապացուցելու համար կիրառվել են «GAD»-ի տագնապայնության սանդղակը, Բեկի տագնապայնության և դեպրեսիվության սանդղակները:

Հոգեբանական զանգվածային հետազոտությունների արդյունքում, հետազոտությունների շրջանակ է հանդիսացել բնավորության առանձնա-

հատկության ուսումնասիրումը: Ըստ Այզենկիի հարցարանի՝ հայտնաբերվել է, որ ճնշումային հիպերտոնիայով տառապող հիվանդներին, ի տարբերություն առողջ մարդկանց, ավելի շատ բնորոշ է էքստրավերտությունը, իսկ ստի սանդղակը ցածր է, «Chachaj A, et al»-ի հետազոտողները հայտնաբերել են, որ ճնշումային հիպերտոնիայով տառապող հիվանդները ունեն նևրոտիզմի բարձր աստիճան [3]:

*Սրտային իշեմիկ հիվանդություններ*. հիվանդների այս խումբը շատ ներամփոփ է. նրանք չեն արտահայտում իրենց հույզերը և ամեն ինչ պահում են իրենց ներսում: Նրանք դժվարությամբ են կառուցում միջանձնային հարաբերություններ, դժվար են մտերմանում մարդկանց հետ: Իշեմիկ հիվանդությամբ տառապող հիվանդները թաքցնում են իրենց վախերը շրջապատից:

Սրտային իշեմիկ հիվանդությամբ տառապող հիվանդների հաջորդ խումբը հանդիսանում են շատ նպատակասլաց մարդիկ, նրանք ունեն մեծ նպատակներ և պատրաստ են աշխատել դրանց հասնելու համար, կարողանում են հասնել իրենց նպատակներին ցանկացած գնով, նրանք ունեն հագեցած աշխատանքային ռեժիմ և կյանքի սթրեսային ռիթմ, ավտորիտար են ինչպես տանը, այնպես էլ աշխատավայրում, մրցակցային են, պերֆեկցիոնիստ, գործը ցանկանում են հասցնել մինչև վերջ:

Երջանկության, ուրախության, սիրո զգացումները գլխուղեղում առաջացնում են հորմոններ, որոնք օրգանիզմի վրա դրական են անդրադառնում: Օրինակ՝ օքսիտոցին հորմոնը արյան մեջ իջեցնում է սթրեսի հորմոնը, երջանկության հորմոն էնդորֆինը բարձրացնում է տրամադրությունը, հանգստացնում է: Ֆիզիկական ակտիվության, առողջ ապրելակերպի, առողջ սննդակարգի, ճնշմանը կանոնավոր հետևելու դեպքում դա կարող է դառնալ սրտանոթային խնդրի կանխման լավ պրոֆիլակտիկա, սակայն միայնակ դժվար է փոխել ամեն ինչ, ուստի անհրաժեշտ է լինում հոգեբան, հոգեթերապևտի հետ աշխատանք [4]: Առիթմիա (սրտային ռիթմի խանգարում). նրանք, ովքեր ունեն առիթմիա, շատ լավ գիտեն, որ անհանգստանալ պետք չէ: Անհանգստությունից հետո ինքնազգացողությունը ավելի է վատանում: Այսինքն՝ այն հույզերը, որոնք մենք ապրում ենք, ուղղակիորեն անդրադառնում են մեզ վրա: Սրտի աշխատանքը սերտորեն կապված է ուղեղի աշխատանքի հետ:

Այդ պատճառով մենք պետք է մեր օրգանիզմին սովորեցնենք, որ նա արձագանքի իրադարձություններին այնպես, որ չառաջանան օրգանական

խնդիրներ: Այսինքն՝ անկախ ամեն ինչից՝ սիրտը պետք է նորմալ գործի, անկախ մեր հուզական ֆոնից:

Երբ հասկանում ենք, որ սրտային աշխատանքը խախտվում է այն ժամանակ, երբ տեղի է ունենում հուզական պոռթկում (զայրույթ, վախ), դա պարզ ցույց է տալիս այն, որ խնդիրը կրում է հուզական բնույթ: Երբ ուժեղ վախ է օրգանիզմը ապրում, այն անդրադառնում է սրտի աշխատանքի վրա: Որոշ մարդկանց մոտ լինում է դող, անզգայանում են վերջույթները, լինում է օդի անբավարարության զգացում:

Միևնույն ժամանակ, երբ մարդը զգում է սրտի արագ բաբախ, նա համակվում է անակնկալ մահի տագնապով, սիրտը սկսում է բաբախել ուժգին, թվում է սիրտը կանգ է առնելու: Այս ամենը հոգեբանական պատճառների է հանգեցնում: Ըստ վիճակագրության՝ մելանխոլիկներն են հակված նման խնդրի:

Ի՞նչն է ընկած հիմքում՝ հիմնականում երկու հույզ՝ զայրույթ և վախ: Երկրորդը ավելի հիմնարար է: Վախի ժամանակ օրգանիզմը արտադրում է տարբեր հորմոններ, օրինակ՝ ադրենալին, որոնք անցնում են սրտի միջով: Սիրտը զգում է այդ ազդեցությունը անգամ առողջ մարդու մոտ, սակայն դա խնդիր չի առաջացնում, ազդեցությունը լինում է կարճաժամկետ:

Այսինքն՝ դրսևորումը լինում է այն դեպքում, երբ առկա է ֆիզիկական նախատրամադրվածություն [5]:

Կարդիոֆիոբիական նևրոզ (սրտային ֆոբիա, պանիկայի սինդրոմ), կարդիոֆոբիական նևրոզը գտնվում է նյարդային վախի և ֆոբիաների միջև:

Հիվանդությանը բնորոշ է վախ, սրտի շրջանի վրա կենտրոնացում, որը միանում է ընդհանուր վախին: Հիվանդները վախենում են սրտի կանգնից, որը թվում է նրանց պուլսի արագացման հետևանք: Շատերը գնում են մեկ բժշկից մյուս բժշկի մոտ, կորցնում են հետաքրքրությունը աշխատանքի նկատմամբ, երկար ժամանակ դառնում են ոչ աշխատունակ: Շատ հաճախ հիպոխոնդրիկ տառապանքները տարածվում են ստամոքս-աղիքային տրակտի վրա: Այլ դեպքերում առաջանում են ֆոբիկ սիմպտոմներ, ինչպիսիք են՝ կլաուստրաֆոբիան կամ ագորաֆոբիան: Հիվանդության ընդհանուր պատկերը ուղեկցվում է մենակության վախով. նրանք չեն կարող մնալ մենակ, փորձում են լինել ծնողների, կողակցի կամ բժշկի կողքին: Բժշկի ներկայությունը նրանց տալիս է ապահովության զգացում: Սրտային խնդրի հոգեսոմատիկ դրսևորման մասին առաջին հոգեվերլուծական դեպքը նկարագրել է Զ. Ֆրեյդը 1895 թ-ին. այն մի տղամարդու մասին է, որն ունեցել է

սրտային նոպա, երբ իմացել է հոր մահվան լուրը և այդ ժամանակվանից տառապել է վախի նևրոզով: Կոնֆլիկտը, որը մեծ հաշվով դրսևորվում է կարդիոֆոբիկ նևրոզի ժամանակ, կոնֆլիկտ է, որը մի կողմից իր մեջ պարունակում է ինքնապաշտպանություն, իսկ մյուս կողմից՝ սեփական հնարավորությունների սահմանափակում և կախյալություն:

Այսինքն՝ այս խնդիրը հիմնականում առաջանում է հարազատի կորստի, տեղափոխության, հիվանդությանը զուգահեռ, այն ամենի հետ է կապված, ինչը սպառնում է մենակության առաջացման՝ հիվանդի պատկերացումներում: Հիմքում ընկած է մահվան ագրեսիվ ձգտում և միևնույն ժամանակ հրաշք, որը կփրկի մահից [6, 376 с.]:

**Տեսամեթոդաբանական հիմքեր**

Գիտական հոդվածի համար տեսամեթոդաբանական հիմքեր են հանդիսանում Բեհտերևի, Պեզեշկինի, Գուստավ Հեյերի, Է. Վիտկովերի և այլոց մոտեցումները:

**Ուսումնասիրության մեթոդներ**

Գիտական հոդվածի համար ուսումնասիրության մեթոդիկաներ են հանդիսացել «GAD» (General Anxiety Disorder- 7) developed by Drs. Robert L. Spitzer, Janet B. W. Williams, Kurt, Բեկի տագնապայնության գնահատման սանդղակը, Բեկի դեպրեսիվության չափման սանդղակը:

**Արդյունքներ**

1. Ըստ «GAD-ի» և Բեկի տագնապայնության սանդղակների հետազոտվողների մոտ ստացված արդյունքերի ամփոփումից պարզ է դառնում, որ նրանց մոտ առկա է տագնապայնության բավականին բարձր շեմ. դրսևորումներն են՝

- ✓ գեներալիզացված տագնապ
- ✓ սոցիոֆոբիա
- ✓ տագնապային խանգարում
- ✓ հետտրավմատիկ սթրեսային խանգարում

2. Ըստ Բեկի դեպրեսիվության սանդղակի՝ դուրս բերվեց դեպրեսիայի բարձր շեմ, որը տարբերվում է դեպրեսիվ էպիզոդից իր մաշտաբայնությամբ. առկա են հետևյալ դրսևորումները՝

- ճնշվածություն
- տխրություն, թախիծ

- անելանելիություն
- ճնշված տրամադրություն
- արագ հոգնածություն
- հետաքրքրության բացակայություն՝ նախկինում հետաքրքրող երևույթների նկատմամբ

**Եզրակացություն**

Ամփոփելով ստացված արդյունքները և ապացուցելով առաջ քաշված վարկածը՝ կարող ենք կատարել հետևյալ եզրակացությունը.

**1.** Ըստ «GAD»-ի թեստի և Բեկի տագնապայնության սանդղակի հիվանդների մոտ նկատվում է գեներալիզացված տագնապ, սոցիոֆոբիա, տագնապային խանգարումներ, հետտրավմատիկ սթրեսային խանգարում:

Խորհուրդ է տրվում հոգեթերապևտիկ աշխատանք, հոգեմարմնական թերապիա, շնչառական վարժություններ, լիարժեք քուն:

**2.** Ըստ Բեկի դեպրեսիայի սանդղակի՝ պարզ դարձավ, որ հիվանդները ունեն դեպրեսիայի ուժեղ շեմ, որն ուղեկցվում է ճնշվածությամբ, տխրությամբ, հիվանդների մոտ նկատվում է արագ հոգնածություն, հետաքրքրության բացակայություն ամեն ինչի նկատմամբ, ապատիա:

Խորհուրդ է տրվում հոգեթերապևտիկ աշխատանք, իսկ անհրաժեշտության դեպքում հոգեբույժի միջամտություն, հակադեպրեսանտների օգտագործում:

Հոգեսոմատիկ գործոնը սրտային հիվանդությունների դեպքում առաջանում է զգայուն հոգեկան ունեցող մարդկանց մոտ, որոնք սովորաբար թաքցնում են իրենց հուզական վիճակը շրջապատի մարդկանցից, հիվանդը սրտին մոտ է ընդունում ցանկացած մանրուք, երբ բացասական հույզերը դուրս չեն գալիս հոգեկանից, այդ ամենը դառնում է մարմնական խնդիր:

*«Երբ աչքերը լաց չեն լինում, լաց է լինում սիրտը՝ կաթվածի փեսքով»:*
*Վ. Միքայելյան*

**Օգտագործված գրականության ցանկ**


1. Составитель: К.С. Карташова О-753 Основы психосоматики: учебно-методическое пособие [Электронный ресурс] / сост. К.С. Карташова. – Электрон. дан. – Красноярск: Сиб. федер. ун-т, 2012.
2. Елисеев Ю.Ю. <<Психосоматические заболевания. Справочник, М., 2003
3. Ларионов П. М. Психосоматические отношения при артериальной гипертензии. Российский кардиологический журнал.
4. Психологические причины ишемии сердца, https://fidem.spb.ru/teoriya_uspeha/psikhologicheskie-prichiny-ishemii-serdtsa/
5. Ольга Станиславовна Копылова, <<Психосоматика нарушений сердечного ритма>>, 11.11.2018г.
6. Бройтигам В., Кристиан П., Рад М. Психосоматическая медицина: Кратк. учебн. / Пер с нем. Г.А. Обухова, А.В. Бруенка; Предисл. В.Г. Остроглазова. – М.: ГЭОТАР МЕДИЦИНА, 1999. - 376 с.

# ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՄՈՏԻՎԱՑԻԱՅԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ

**ՄԱՐԻՆԵ ԱՅՎԱԶՅԱՆ**
ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա,
գիտակրթական միջազգային կենտրոն,
հոգեբանության մագիստրոս

**Համառոտագիր**

Հոդվածը ներկայացնում է մոտիվացիայի հետազոտման ակունքները և զարգացման միտումները: Հոդվածում շեշտադրվում է աշխատանքային մոտիվացիայի հանդեպ տարբեր հեղինակների տեսական մոտեցումներն ու դիրքորոշումները: Շեշտադրվում է այն միտքը, որ մոտիվացիան գործընթաց է, որը նախապատրաստում է անձի նպատակաուղղված վարքագիծը: Դա այն է, ինչ ստիպում է մեզ գործել՝ ներառելով կենսաբանական, հուզական, սոցիալական և ճանաչողական ներուժը, որը ակտիվացնում է վարքը: Առօրյա խոսքում «մոտիվացիա» տերմինը հաճախ գործածվում է նկարագրելու համար, թե ինչու է մարդն ինչ-որ բան անում: Դա մարդկային գործողությունների շարժիչ ուժն է՝ ներքին մղումը:

Մոտիվացիայի ուսումնասիրությունն այն հիմնախնդիրներից է, որն առաջնահերթ է դառնում ժամանակակից արագ փոփոխվող հասարակությունների ենթատեքստում: Առավել կարևորվում է հիմնախնդրի ուսումնասիրությունը անձի աշխատանքային գործունեության ուսումնասիրության տեսանկյունից, քանի որ այդ գործունեությունը չափազանց զգայուն է հասարակության սոցիալ-հոգեբանական փոփոխությունների հանդեպ:

Աշխատանքային մոտիվացիայի հիմնախնդրի բարձրաձայնումն ու հետազոտումը կարևոր է իրականացնել բոլոր տարիքային խմբերում, քանի որ սոցիալ-հոգեբանական պայմաններն ու փոփոխություններն անդրադարնում են ամբողջ հասարակության վրա: Հատկանշական է, որ ժամանակակից տեխնոլոգիական դարաշրջանում, երբ անընդհատ նորամուծություններ են արվում անձի կողմից՝ իր իսկ պահանջները բավարարելու համար, միևնույն է դրանց հիմքում մարդկային պահանջմունքներն են և մոտիվացիան: Տարբեր հեղինակների կարծիքների վերլուծությունը բացահայտում է նաև մոտիվացնող գործոնների ուղղակի կապն աշխատանքային գործունեության էության և բնույթի հետ:

Հոդվածում ներկայացվում են աշխատանքային մոտիվացիայի ուսումնասիրման տարբեր մոտեցումներ: Քննարկման առարկա են դարձել Ֆ.

Թեյլորի Է. Մեյոյի, Ա. Մասլոուի, Ֆ. Հերցբերգի, Դ. Մաք Քլելանդը, Վ. Վռումի և այլոց տեսակետները աշխատանքային մոտիվացիայի տեսական դասակարգումների և պրակտիկ աշխատանքային միջավայրում մոտիվացիայի մակարդակի բարձրացման վերաբերյալ:

**Բանալի բառեր և բառակապակցություններ.** մոտիվացիա, կոգնիտիվ գործոններ, աշխատանքային մոտիվացիա, գործունեություն:

# ТЕОРЕТИЧЕСКИЕ ОСНОВЫ ИЗУЧЕНИЯ ТРУДОВОЙ МОТИВАЦИИ

**МАРИНЕ АЙВАЗЯН**
Международный научно-образовательный центр,
Национальная академия наук, РА
Магистр психологии

**Аннотация**

В статье представлены истоки исследования мотивации и тенденций развития. Подчеркиваются теоретические подходы и позиции различных авторов относительно понятия трудовой мотивации. Подчеркивается идея о том, что мотивация - это процесс, который подготавливает целенаправленное поведение человека. Это то, что заставляет нас действовать, включая биологический, эмоциональный, социальный и когнитивный потенциал, который активирует поведение. В повседневной речи термин «мотивация» часто используется, чтобы описать, почему человек что-то делает. Это движущая сила человеческого действия, внутренний толчок.

Изучение мотивации является одной из проблем, которая становится приоритетом в контексте современных быстро меняющихся обществ. Изучение проблемы является особенно важным с точки зрения изучения трудовой деятельности человека, поскольку эта сфера чрезвычайно чувствительна к социально-психологическим изменениям в обществе.

Проблема исследования вопроса трудовой мотивации важна во всех возрастных группах, поскольку изменения социально- психологических условий влияют на общество в целом. Следует отметить, что в современный технологический век, когда человек совершает постоянные инновации для удовлетворения своих собственных требований, их основой являются потребности и мотивация личности. Анализ взглядов различных авторов выявляет прямую связь мотивационных факторов с сущностью и природой трудовой деятельности.

В статье представлены различные подходы к изучению трудовой мотивации. Предметом обсуждения стали взгляды Ф. Тейлора, Э. Майо, А. Маслоу, Ф. Герцберга, Д. Мак-Клелланда, В. Врума и других относительно теоретических классификаций и повышения уровня трудовой мотивации в практической рабочей среде.

**Ключевые слова и словосочетания:** мотивация, когнитивные факторы, трудовая мотивация, деятельность.

# THEORETICAL BASIS FOR STUDYING LABOUR MOTIVATION

**MARINE AYVAZYAN**
National Academy of Sciences of the Republic of Armenia,
International Scientific-Educational Center
Department of Psychology
Master's Student

**Abstract**

The article presents the origins of the study of motion and development trends. The article emphasizes various authors' theoretical approaches and positions regarding the concept of work motivation. The idea that motivation is a process that prepares the purposeful behaviour of a person is emphasized. It makes us act, including the biological, emotional, social and cognitive potential that activates behaviour. In everyday speech, the term "motivation" is often used to describe why a person does something. It is the driving power of human action, an internal impetus.

The study of motivation is one of the problems that become a priority in the context of modern, rapidly changing societies. The study of the problem is the most important in studying human labour since this area is susceptible to socio-psychological changes in society.

The problem of studying the issue of labour motivation is essential in all age groups since changes in socio-psychological conditions affect society as a whole. It should be noted that in the modern technological age, when a person makes constant innovations for satisfying his requirements, their basis is the needs and motivation of personality. The analysis of the views of various authors also reveals the direct connection of motivational factors with the essence and nature of labour activity.

The article presents various approaches to the study of labour motivation. The subject of the discussion was the views of F. Taylor, E. Majo, A. Maslow, F. Herzberg, D. McClelland, V. Vrum and other relatively theoretical classifications and increase the level of work motivation in the practical working environment.

**Keywords and phrases**: Motivation, cognitive factors, work motivation, activity.

«Մոտիվ» հասկացությունը (լատիներեն՝ «movere» - շարժվել, հրել) նշանակում է գործունեության խթան, գործողությունների և արարքների խթանիչ պատճառ: Մոտիվացիան կամ դրդապատճառները կարող են տարբեր լինել՝ հետաքրքրություն գործունեության բովանդակության և ընթացքի նկատմամբ, պարտավորություն հասարակության հանդեպ, ինքնահաստատում և այլն:

Ժամանակակից հոգեբանական գիտակարգում հաճախ ենք հանդիպում «մոտիվացիա» եզրույթի կիրառմանն ու գործարկմանը տարբեր բնա-

գավառներում՝ կենցաղում, գիտատեսական կամ փորձարարական մոտեցումների ներկայացման ժամանակ: Հիմնականում հեղինակները համակարծիք են, որ մոտիվացիան այն է, ինչը դրդում է գործունեության կատարմանը (օր՝. հանուն ինքնահաստատման, շահույթի ձեռքբերման և այլն); Չնայած մոտիվացիան՝ որպես հոգեբանական ֆենոմոն, ուսումնասիրվել է տարաբնույթ տեսանկյուններից, այնուամենայնիվ, գիտնականների ուշադրության կենտրոնում է մնում աշխատանքային մոտիվացիայի ձևավորման, զարգացման և բարելավման հիմնախնդիրը:

Առաջին լուրջ քայլերը ուսումնասիրելու աշխատողի մոտիվացիան ձեռնարկել է Ֆ. Թեյլորը (1856-1917), որ փորձ է կատարել առաջ քաշելու կառավարման նոր մեթոդաբանություն՝ ուղղված աշխատողների կատարողականը և արտադրողականությունը բարձրացնելու մեխանիզմների բացահայտմանը: Նրա կիրառած մեթոդի կառուցվածքային բովանդակությունը հետևյալն է՝

- ուսումնասիրել և արձանագրել աշխատակիցների կատարողականն աշխատատեղում.
- փոփոխել աշխատանքի կատարման մեթոդները.
- նորից արձանագրել աշխատանքի կատարողականը:

Այս մոտեցումը հայտնի է դարձել «գիտական կառավարման» բնորոշմամբ՝ շնորհիվ հիմնախնդրի մանրամասն ուսումնասիրության և վերլուծության: Ֆ. Թեյլորի հիմնական նպատակն էր՝ կրճատել ԱՄՆ արդյունաբերության մեջ առկա աշխատանքի անարդյունավետության ցուցանիշները:

Ֆ. Թեյլորի համոզմամբ՝ սոցիալական միջավայրում ամենատարածված մտայնությունն այն է, որ աշխատողների և գործատուների նպատակները չեն կարող համընկնել: Այնուամենայնիվ, Ֆ. Թեյլորը նշում է, որ դա այդպես չէ, քանի որ հնարավոր է երկու խմբերին առաջնորդել միևնույն նպատակին, ինչն իր հերթին կարող է հանգեցնել արտադրողականության արդյունավետությանը **[7]:**

Աշխատանքային մոտիվացիայի հայտնի տեսաբաններից է Է. Մեյոն (1880-1949), որ հայտնի է իր մարդկային հարաբերությունների տեսությամբ, որը տարածվեց «Հոթորնյան ազդեցություն» աշխատության շնորհիվ: Այն հիմնված է գործարանային տիպի աշխատավայրերում 5 տարիների ընթացքում իր և իր թիմի կողմից իրականացրած մի շարք փորձարկումների արդյունքների վրա: Նրա աշխատանքը հիմնված էր այն ենթադրության վրա, որ աշխատանքային պայմանները՝ լուսավորությունը, ջեռուցումը, հանգստյան ժամանակահատվածը և այլն, իսկայական ազդեցություն ունեն

աշխատողների արտադրողականության վրա: Չնայած, հետագա տարիների ընթացքում, Է. Մեյոյի տեսությունը ենթարկվեց որոշակի քննադատության՝ ստացված արդյունքների հուսալիության չափանիշների բացակայության պատճառով, այնուամենայնիվ, Է. Մեյոյի հետազոտության հիմնարար նշանակությունը՝ որպես աշխատանքային գործունեության կառավարման պատմության շրջադարձային կետ, ճանաչվում է բոլոր հետագա հեղինակների կողմից **[3]:**

Հիմնախնդրի ուսումնասիրման կարևոր ներդրում է կատարել հումանիստական տեսության հետևորդ Ա. Մասլոուն: Նա, դարձյալ կարևորելով մարդու ինքնաիրացման պահանջմունքը, տալիս է պահանջմունքների սեփական դասակարգումը, որը հայտնի դարձավ իր հիերարխիկ համակարգով՝

1. Բազային պահանջմունք. Ա. Մասլոուն անվանում է կենսաբանական պահանջմունքներ, որոնք ապահովում են օրգանիզմի կենսաֆիզիոլոգիական գոյատևումը:
2. Անվտանգության պահանջմունք. ուղղված է կայունության ապահովմանը:
3. Պատկանելություն և սիրո պահանջմունք. շրջանակներն ուրվագծվում են ընտանիքում և ընկերական շրջապատում անձի գործունեությամբ:
4. Հարգանքի պահանջմունք. ինքնահարգանքի և ճանաչման միջոցով արտահայտված:
5. Ինքնիրացման պահանջմունք. որպես ընդունակությունների զարգացման որոշակի դրսևորում:

Հարկ է նշել, որ ներկայացված պահանջմունքների հիերարխիկ մոդելում անձի պահանջմունքների ձևավորման կամ ակտիվացմանը նպաստում է «Ես»-ի մասին իր պատկերացումներն ու ընկալումները: Հետևելով պահանջմունքների այս մոդելին՝ մի շարք հեղինակներ հանգել են այն մտքին, որ մարդը, մինչև չբավարարի իր «ես»-ը, չի կարող ձգտել համամարդկային արժեքների բավարարմանը:

Նշենք նաև, որ Ա. Մասլոուն առաջիններից էր, որ իր ուշադրությունն ուղղել էր ոչ միայն անձի բացասական, այլև դրական կողմերի վրա, ինչի շնորհիվ հնարավոր դարձավ գիտականորեն հետազոտել անձնային փորձի դրական ձեռքբերումները և բացահայտել անձի ինքնազարգացման և ինքնակատարելագործման հնարավոր ուղիները **[3]:**

Աշխատանքային մոտիվացիայի գիտական բնութագրման հետագա փորձերը կապվում են Ֆ. Հերցբերգի և իր գործընկերների կողմից 1959 թվականին մշակված մոտիվացիայի երկգործոն տեսության հետ: Նրանց

նպատակն էր պարզել գործունեությամբ անձի բավարարվածության և դժգոհության պատճառները, ինչպես նաև բացահայտել աշխատանքի արտադրողականության աճի և նվազման պատճառները: Այս հետազոտության արդյունքները թույլ տվեցին Ֆ. Հերցբերգին եզրակացնել, որ աշխատանքից բավարարվածությունը կախված է անձի ներքին և էական բնութագրերից, իսկ դժգոհությունը՝ աշխատանքի արտաքին բնութագրերից և դրա համատեքստից: Արդյունքն այն էր, որ արդյունաբերական իրավիճակներում մարդու գործունեության վրա ազդող բոլոր գործոնները Ֆ. Հերցբերգի կողմից բաժանվեցին հիգիենիկ և մոտիվացնող գործոնների: Պետք է նկատի ունենալ նաև, որ հոգեբանների ուշադրության կենտրոնում հայտնվեց միապաղաղ աշխատանքը՝ միաժամանակ մատնանշվեց աշխատանքի միապաղաղության պայմաններում բավարարվածության բացակայության հագամանքը, մինչդեռ պարզվեց, որ ստեղծագործական և բովանդակային գործունեության բազմազանությունը, ընդհակառակը, խթանում է աճը, կանխում ուշացումները, աշխատանքից անհարկի բացակայությունները և այլն: Այդ եզրակացությունների շնորհիվ որպես մոտիվացիոն գործոններ բնութագրվեցին նաև անձի աշխատանքային կարիերայի աճն ու լրացուցիչ պատասխանատվության զգացումը **[5]:**

Իր հետազոտության ընթացքում Ֆ. Հերցբերգը եկել է հետևյալ եզրակացությունների՝ գործունեությամբ բավարարվածությունը և դժգոհությունը երկու անկախ չափումներ են, որոնց վրա ազդող գործոնների մի ամբողջ խումբ կա «գործունեությունից գոհունակություն» (որպես շարժիչ գործոններ), ինչպես նաև մի խումբ այլ գործոններ, որոնք ազդում են անմիջապես գործունեության վրա «գործունեությունից դժգոհություն» (որպես հիգիենիկ գործոններ) **[4]:**

Շնորհիվ վերը նշված բնութագրման՝ Ֆ. Հերցբերգն առաջ է քաշել աշխատանքային մոտիվացիայի հաշվարկման հետևյալ բանաձևը՝

**Աշխատանքային միջավայր և աշխատանքային պայմաններ + մոտիվացնող գործոններ = բավարարվածության վիճակ**

**Աշխատանքային միջավայր և աշխատանքային պայմաններ - մոտիվացնող գործոններ = զրո ազդեցություն**

Այսպիսով՝ մենք կարող ենք ընդգծել, որ չնայած Ֆ. Հերցբերգը, իհարկե, նշանակալի ներդրում ունեցավ աշխատանքային մոտիվացիայի ֆենոմենը հասկանալու գործում, սակայն հաշվի չի առել շատ փոփոխականներ, որոնք որոշվում են մոտիվացիան պայմանավորող տարբեր իրավիճակներով: Գիտնականների հետագա հետազոտությունները հանգեցրին մոտիվացիա-

յի մի շարք այլ տեսությունների ստեղծմանը: Այսպիսով՝ Վ. Վռումի (1964 թ.) ակնկալիքների տեսությունը և Բ. Սքիննների (1953 թ.) օպերանտ պայմանավորումը կարելի է համարել Ֆ. Հերցբերգի մոտիվացիայի երկգործոն տեսության յուրօրինակ զարգացում:

Աշխատանքային մոտիվացիայի տեսական բնութագրման գործում կարևոր ներդրում է ունեցել Դ. Մաք Քլելանդը (1917-1988), որ զարգացրեց նվաճումների վրա հիմնված մոտիվացիոն տեսությունը և կատարեց որոշակի բարեփոխումներ աշխատողների գնահատման մեթոդաբանության մեջ: Նա հայտնի է 3 տեսակի մոտիվացիոն պահանջմունքների նկարագրությամբ **[8]:** Դրանք են՝

- նվաճումների մոտիվացիա.
- հեղինակության/ուժի մոտիվացիա.
- պատկանելիության մոտիվացիա:

Պահանջմունքների տեսության շրջանակներում Դ. Մաք Քլելանդը աշխատակցի բոլոր կարիքները բաժանեց երեք մեծ խմբերի: Դրանք ներառում են՝

1. իշխանության կարիքները.
2. հաջողության կարիքները.
3. ներգրավվածության կարիքները:

Հեղինակի կարծիքով՝ իշխանության կարիքը ամենաբարձր առաջնահերթությունն է: Մարդկանց այս կատեգորիայի համար իշխանության կարիքը ոչ մի կերպ ինքնահաստատման ցանկություն չէ՝ ունայնությունը բավարարելու համար, այլ մարդկանց ղեկավարելու պատասխանատու աշխատանք կատարելու ցանկություն՝ ուղղված սոցիալական կամ կազմակերպչական խնդիրների լուծմանը:

Հաջողության պահանջմունքը բավարարվում է միայն այն ժամանակ, երբ սկսված աշխատանքը հաջողությամբ ավարտված է: Հաջողության անհրաժեշտությունը՝ որպես նվաճումների դրդապատճառ, բնորոշ է մարդկանց ճնշող մեծամասնությանը, բայց դրա զարգացման մակարդակը տարբեր է յուրաքանչյուր մարդու համար: Հենց այս մակարդակից է կախված լինելու մարդու գործունեության արդյունավետությունը, նրա մասնագիտական հաջողությունները ցանկացած ոլորտում:

Հնարավոր չէ չհիշատակել ամերիկացի հոգեբան Ջոն Աթկինսոնի ներդրումը Մակ Քլելանդի տեսության մեջ: Ըստ նրա՝ հաջողության հասնելու պահանջմունքը պետք է դիտարկել ձախողումից խուսափելու անհրաժեշտության հետ միասին: Աթկինսոնը պարզել է, որ հիմնականում ձեռքբերումների մոտիվացիա ունեցող մարդիկ ձգտում են հաջողության, մինչդեռ ցածր

նվաճումների մոտիվացիա ունեցող մարդիկ հակված են խուսափել ձախողումից: Ջ. Աթկինսոնի կողմից արված այս հավելումը հետագայում հիմք դարձավ նրա և Դ. Մակ Քլելլանդի կողմից մշակված սուբյեկտիվորեն նախընտրելի ռիսկի տեսության համար **[1]:** Դրանում ձեռքբերումների մոտիվացիան և ձախողումից խուսափելու դրդապատճառը որոշիչ գործոններ են մարդու կողմից իր ռիսկային վարքի համար ընդունելի՝ աշխատանքային օրակարգի ձևավորման գործում: Այստեղ հետաքրքիր է նշել, որ նվաճումների բարձր մոտիվացիա ունեցող մարդիկ (որին, ի դեպ, պատկանում են գրեթե բոլոր ղեկավարները) նախընտրում են ռիսկի միջին մակարդակը: Նրանք փորձում են խուսափել հատկապես ռիսկային իրավիճակներից, որոնք պարունակում են ձախողման մեծ հավանականություն, բայց միևնույն ժամանակ խուսափում են իրավիճակներից, որտեղ ռիսկը նվազագույն է: Այս դեպքում շոշափելի արդյունքների հասնելու հավանականությունը գործնականում զրոյական է, իսկ միջին ռիսկային իրավիճակներում հաջողությունը կախված է գերազանցապես սեփական ջանքերից: Այս տեսական մոտեցումների հետագա զարգացումները հանգեցրին աշխատանքային մոտիվացիայի ֆենոմենի բացահայտմանը կոգնիտիվ գործոնների վերլուծության միջոցով: Կոգնիտիվ գործոնների կարևորությունը «մոտիվ-գործողություն» համատեքստում նշել են շատ տեսաբաններ, և առաջին հերթին, Վեյները (1980) և Հեկհաուզենը (1980): Ինչպես գրում է Վեյները «Ըմբռնումը և հեդոնիզմը մոտիվացիայի աղբյուրներ են»: Նա կարծում է, որ մոտիվացիայի տեսության մեջ չափազանց մեծ ուշադրություն է դարձվել աֆեկտիվ գրգռմանը և մարդու կողմից չըմբռնելուն, թե ինչ է տեղի ունենում մոտիվացիայի և գործողության միջև ընկած ժամանակահատվածում և ինչն է որոշում՝ արդյոք կլինի աֆեկտիվ գրգռում:

Վայները, Աթկինսոնը և այլք, կիրառում են «մոտիվացիա» եզրույթը՝ նկարագրելու վերջնական ազդարարող ներուժը (տվյալ գործողության մղումը) այն բանից հետո, երբ այն ենթարկվել է ակնկալիքների և արժեքների ազդեցությանը:

Հատկանշական է, որ 1960-ական թվականներից հոգեբանները կենտրոնացել են գերազանցապես ճանաչողական գործընթացների՝ ընկալման, հիշողության, մտածողության, երևակայության և ուշադրության ուսումնասիրության վրա: Սա նշանավորվեց հատուկ ուղղության՝ ճանաչողական հոգեբանության արագ զարգացմամբ և բազմաթիվ ճանաչողական տեսությունների առաջացմամբ:

Կառավարման տեսությունների տեսանկյունից Վ. Վռումի մոտիվացիայի տեսությունը առաջին անգամ հնարավորություն տվեց աշխատող մարդուն նայել ոչ թե որպես ավտոմատ կամ մեքենա, այլ որպես իրականությունը մոդելավորող հետազոտող: Վ. Վռոմի մոտիվացիայի հայեցակարգը հիմնված է ակնկալվող օգուտների տեսության վրա, որն առաջարկվել է 1944 թվականին մաթեմատիկոսներ Ջոն ֆոն Նոյմանի և Օսկար Մորգենշթերնի կողմից: Հեղինակը բացատրում է, թե ինչպես է մարդը գնահատում իր գործողությունների հնարավոր արդյունքները: Օրինակ՝ մենք ենք որոշում՝ ուր գնալ՝ ձախ, թե աջ, բայց չգիտենք, թե ինչ հետևանքներ է ունենալու մեր կայացրած որոշումը: Մենք պետք է մտովի պատկերացնենք հնարավոր արդյունքները և որոշենք դրանց արժեքը: Մոտիվացիայի ցանկացած ճանաչողական տեսություն հիմնված է այն փաստի վրա, որ մարդը գիտակցաբար վերահսկում է իր վարքը: Ճանաչողական գործիքների օգնությամբ մենք ըմբռնում ենք, թե ինչ ենք անում և ինչ նպատակով: Մենք կարող ենք համեմատել մեր վարքի և դրանում կազմակերպչական համատեքստի տարբերակներ՝ լավագույնը փնտրելու համար:

Վ. Վռոմի տեսության մեջ կան երեք կարևոր գործոններ, որոնք որոշում են մոտիվացիան:

- ✓ Առաջին՝ մեր ակնկալիքներն են, որոնք մի կողմից կախված են սեփական կարողությունների ու փորձի գնահատականից, մյուս կողմից՝ խոչընդոտների ու սահմանափակումների առկայությունից:
- ✓ Երկրորդ գործոն՝ աշխատանքի և վարձատրության գործիքային հարաբերությունն է:
- ✓ Երրորդ գործոն՝ վալենտությունն է (արդյունքի նշանակությունը): Դեռևս 18-րդ դարում շվեյցարացի ֆիզիկոս և մեխանիկ Դանիել Բերնուլին ձևակերպեց սուբյեկտիվ օգտակարության հայեցակարգը, ըստ որի՝ մեկ անձի համար շահույթը կարող է չնչին արժեք ունենալ մյուսի համար, ինչից բխում է, որ վալենտության գնահատականները խիստ անհատական են: Մարդիկ կարող են առաջնորդվել արտաքին պարամետրերով, ինչպիսիք են՝ աշխատավարձը, խթանները, հարգանքը, ինչպես նաև կարող են հաշվի առնել ներքին գործոնները, ինչպիսիք են՝ ձեռք բերված արդյունքից բավարարվածությունը, հպարտությունը և այլն:

Վ. Վռոմի մոդելը բազմիցս հաստատվել է լաբորատոր և դաշտային հետազոտություններում: Վան Էերդեի և Թիերրիի մետավերլուծական մոտեցման համաձայն՝ Վ. Վռոմի մոդելի հիման վրա հաշվարկված կանխա-

տեսող ակնկալիքները մեծապես փոխկապակցված էին ինչպես ձեռքբերումների սուբյեկտիվ գնահատման՝ անձի տեսանկյունից, այնպես էլ աշխատանքային գործունեության օբյեկտիվ ցուցանիշների հետ:

Չնայած մեծ առաջընթացին՝ Վ. Վրումի տեսությունը մի շարք թերությունների պատճառով նույնպես ենթարկվեց քննադատությունների: Առաջին. այն չէր բացատրում մոտիվացիայի հայեցակարգը, տեսականորեն չկան անձնակազմի վարքագծի և մոտիվացիայի վերաբերյալ հստակ առաջարկներ, բացակայում էր նաև չափի և խթանների հստակ հասկացությունների ձևակերպումները, և չէր ուսումնասիրում վալենտային չափումը: Փաստորեն, տեսությունը հաշվի է առել միայն զանգվածային, բայց ոչ անհատական գիտակցությունը **[3]:**

Մոտիվացիայի ամենաբարդ ինտեգրատիվ տեսություններից Փորթեր-Լոուլերի մոդելն է: Մոտիվացիայի համապարփակ տեսությունը, որը մշակվել է Լայման Փորթերի և Էդվարդ Լոուլերի կողմից, ներառում է տարրեր ինչպես սպասումների տեսությունից, այնպես էլ այլ տեսություններից: Նրանց մոդելը ներառում է հինգ փոփոխական՝ ջանք, ընկալում, արդյունքներ, պարգևատրում և բավարարվածություն:

Անհատի արդյունքները կախված են երեք փոփոխականներից՝ ջանքերից, կարողություններից և անհատականության գծերից և նրա դերի ընկալումից: Մոդելը հսկայական ներդրում ունեցավ մոտիվացիայի ըմբռնման գործում, քանի որ ցույց տվեց, որ մոտիվացիան պայմանավորված է պատճառահետևանքային հարաբերությունների մի ամբողջ շղթայով, և դա աշխատանքի արդյունքն է (զգացողությունը, որ աշխատանքը լավ է արված) հանգեցնում է. բավարարվածություն և, հետևաբար, աշխատանքի արդյունքների բարելավում:

Համաձայն Փորթեր-Լոուլերի մոդելի, եթե աշխատողը չունի անհրաժեշտ հմտություններ և կարողություններ հանձնարարված առաջադրանքը կատարելու համար, ապա մոտիվացիայի բարձր մակարդակն անգամ չի օգնի նրան հասնել բավարարվածության: Աշխատողի կողմից իր աշխատանքի որակի սուբյեկտիվ (անձնական) գնահատումը կարևոր է. որքան բարձր է աշխատողի կողմից իր աշխատանքի որակի գնահատումը, այնքան բարձր է վարձատրության ակնկալվող մակարդակը: Միայն աշխատողի իրական կատարողականը կարող է ազդել նրա՝ աշխատանքից բավարարվածության բարձրացման կամ նվազման վրա: Սա նշանակում է, որ անձնակազմի մոտիվացիան կարելի է կառավարել միայն ճիշտ առաջադրանքներ դնելու, առաջադրանքների կատարման մոնիտորինգի և կատարված աշխատանքի

համար պարգևատրումների ճիշտ համակարգի միջոցով: Հակառակ դեպքում ընկերության անձնակազմը կհասկանա, որ արտադրողականության բարձրացման արժեքը ավելի բարձր է, քան եկամուտների հնարավոր աճը: Այս անհամապատասխանությունը կգործի որպես աշխատանքի արտադրողականության աճի ուժեղ դեմոտիվատոր **[2]:**

Ամերիկացի հոգեբան Ջոն Սթեյսի Ադամսը 1963 թվականին առաջարկել է արդարության (հավասարության) տեսությունը: Այս տեսությունը հիմնված էր այն պնդման վրա, որ մարդիկ սուբյեկտիվորեն գնահատում են ծախսած ջանքերի և ստացած պարգևների հարաբերակցությունը, մինչդեռ այս հարաբերակցությունը համեմատում են նմանատիպ աշխատանք կատարած այլ մարդկանց կատարողականի հետ **[6]:**

Համաձայն Ադամսի արդարության տեսության՝ յուրաքանչյուր աշխատող համեմատում է իր ներդրման և արդյունքի հարաբերակցությունը մյուսների հարաբերակցության հետ: Համեմատության արդյունքում նա գնահատում է՝ իր հետ արդար, թե անարդար են վարվում: Անարդարությունը կարող է դրսևորվել որպես վրդովված և հանդուրժող թերվճարումներ կամ գերավճարներ, որոնք աշխատողի մոտ կարող են մեղավոր զգալ: Անարդարության զգացումը շատ դեպքերում աշխատակիցներին բերում է հոգեբանական սթրեսի, հետևաբար՝ նա կլուծի խախտված արդարադատությունը վարքագծի տարբեր դրսևորումներով:

Այսպիսով՝ «մոտիվացիա» հասկացությունը ներառում է անձի վարքի շարժառիթների ողջ համալիրը: Անձի մոտիվացիոն գործոնները ներառում են անձի վերաբերմունքը, հետաքրքրությունները, ցանկությունները, ձգտումները և մղումները: Անձի վարքագիծն ակտիվանում է շարժառիթների ներգործության արդյունքում, որոնք անձի կարիքների փոփոխումն են՝ մղումներ, հետաքրքրություններ, ձգտումներ, ցանկություններ, զգացմունքներ: Ներկայացված տեսական մոտեցումներն ու ուղղությունները թույլ են տալիս եզրակացնելու աշխատանքային մոտիվացիայի ինտեգրալ բնույթի մասին: Աշխատանքային մոտիվացիան այժմ կարևորվում է ոչ միայն աշխատավայրում անձի աշխատանքի արդյունավետության բարձրացման տեսանկյունից, այլև կրում է ինտեգրալ կամ համակարգային նշանակություն՝ ներազդելով ընդհանուր առմամբ անձի վարքագծի և ճանաչողական գործընթացների վրա:

## Օգտագործված գրականության ցանկ


1. Макклеланд Д., Мотивация человека, Питер, 2007, с. 519
2. Нюттен Ж., Мотивация, действие и перспектива будущего, М., 2004
3. Фалмер Р. М. Энциклопедия современного управления : в 5 т. Москва : ВИПКэнерго, 1992. Т. 3. С. 100
4. Херцберг Ф., Майнер М. У. Побуждение к труду и производственная мотивация // Социологические исследования. 1990. № 1. С. 127
5. Шелдрейк Дж. Теория менеджмента: от тейлоризма до японизации / пер. с англ. под ред. В. А. Спивака. Санкт-Петербург : Питер, 2001. С. 247
6. Ադամս Ջ., ttp://ru.solverbook.com/spravochnik/menedzhment/teoriya-spravedlivosti-adamsa/
7. Թեյլոր Ֆ., https://hy.warbletoncouncil.org/aportaciones-de-frederick-taylor-7619
8. Հերցբերգ Ֆ., https://4brain.ru/blog/теория-мотивации-герцберга

# ASSESSMENT OF THE VITICULTURE STATE, CHALLENGES AND ITS DEVELOPMENT POTENTIAL IN THE ARMAVIR REGION USING SAMPLE SURVEYS

**HOVHANNES ASATRYAN**
National Academy of Sciences
Institute of Economics after M. Kotanyan
Junior Researcher, PhD student
hov97hov@gmail.com

**Abstract**

Viticulture (aka grapes production) is one of the most prominent branches of agriculture in the Armavir region of RA. In the past 30 years of independence, this sector experienced ups and downs and has a development trend that cannot be described as linear and growing. This research is devoted to assessing the current state of viticulture in the Armavir region of RA. The main purpose of the research is to reveal the existing obstacles that hinder further sector development. In the scope of that purpose, the possibilities and preconditions of further development of viticulture in the Armavir region were evaluated.

The scientific novelty lies in the fact that for the first time, the viticulture of the Armavir region was comprehensively studied, and for that purpose, the method of sample surveys was used.

By implementing the method of sample surveys author tried to reveal the main characteristics and peculiarities of grape-producing practices, the average selling prices of grapes, the ways and directions of realization of grapes, and the costs per unit of grapes were calculated. Sample surveys provided first-hand information from grape growers, and the analyses of that information were summarized in the following conclusions:

- The overwhelming majority of grape producers operate in vineyards which have a size of less than 1.0 ha,
- The majority of grape producers use their family labour during grape cultivation processes which helps to reduce costs per unit of grapes,
- Mainly technical varieties of grapes are cultivated in the Armavir region,
- The main obstacle for grape producers in the region is the low prices of grapes, which prevents them from expanding their vineyards and production volumes,
- The sales and procurement of grapes have serious issues which must be resolved to ensure the further development of viticulture in the region.

The observations made in the scope of this article can be helpful for the Government of RA during sectoral policy-making and for the investors and private firms for their decision-making processes.

**Keywords and phrases:** viticulture, grape producers, vineyards, sample surveys, Armavir region**.**

# ԽԱՂՈՂԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՎԻՃԱԿԻ, ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԻ ԵՎ ՆԵՐՈՒԺԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՈՒՄ ԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ՀԱՐՑՈՒՄՆԵՐԻ ՄԵԹՈԴԻ ԿԻՐԱՌՄԱՄԲ

**ՀՈՎՀԱՆՆԵՍ ԱՍԱՏՐՅԱՆ**

ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիա

Մ. Քոթանյանի տնտեսագիտության ինստիտուտ

Կրտսեր գիտաշխատող, ասպիրանտ,

hov97hov@gmail.com

**Համառոտագիր**

Խաղողագործությունը ՀՀ Արմավիրի մարզի գյուղատնտեսության կարևորագույն ճյուղերից մեկն է: Անկախության նախկին 30 տարիների ընթացքում այս ճյուղը ունեցել է վերելքներ և անկումներ, իսկ հիմա բնութագրվում է զարգացման այնպիսի տրենդով, որը աճող չի կարելի համարել: Այս հոդվածը ուղղված է ՀՀ Արմավիրի մարզում խաղողագործության ներկայիս վիճակի գնահատմանը: Հետազոտության հիմնական նպատակն է՝ բացահայտել այն առկա խոչընդոտները, որոնք խաթարում են խաղողագործության հետագա զարգացումը: Այդ նպատակի իրականացման շրջանակներում գնահատվել են մարզում խաղողագործության զարգացման հնարավորությունները և նախապայմանները:

Հետազոտության գիտական նորույթն այն է, որ առաջին անգամ համակողմանիորեն ուսումնասիրվել է Արմավիրի մարզի խաղողագործությունը, և այդ նպատակով կիրառվել է ընտրանքային հարցումների մեթոդը:

- The irrigation regime depends on the choice of irrigation method. The yield of crops also depends on the choice of that method. For the cultivation of various crops, the relevant irrigation method is chosen based on the characteristics of the given crop. For example, studies have shown that for tomatoes, cucumbers and other crops (with higher water demand), the appropriate irrigation method is drip irrigation, and for potatoes, the rain pipe irrigation method.

**References**


1. Գլոբալ էկոլոգիական Հիմնադրամի (ԳԷՀ), Բիովերսիթի Ինթեր-նաշնալի (IPGRI), UNEP, «Հայաստանի գյուղական համայնքներում ագրոկենսաբազմազանության պահպանության և օգտագործման միջոցով կենսապայմանների բարելավում» ծրագիր, «Այգիների ոռոգում նոր տեխնոլոգիաների միջոցով», 2017թ. էջ 24
2. Գուլյան Ա. Ա., Մանուկյան Ռ. Ռ., «Երկրագործություն», Երևան 2009թ, էջ 229
3. Եղիազարյան Գ. Մ., Ղազարյան Մ. Մ., Սանոյան Ս. Վ., Մելիորացիա, Երևան 2014թ, էջ 336
4. Հարությունյան Դ., Մուրադյան Մ., «Ոռոգման համակարգի առանձ-նահատկությունները ՀՀ-ում», Այլընտրանք գիտական հանդես, 2021թ., №2 էջ 236-242

5. Ղարիբյան Գ., Բանջարաբուծություն, ՀՀԿԳՏ-Եր. :ՀԱԱՀ, 2014. -էջ 161
6. Մուրադյան Մ. Թվայնացումը որպես ոռոգման տեխնոլոգիաների կատարելագործման ուղի, Այլընտրանք գիտական հանդես, 2021թ, №3, էջ 84-90
7. ՇԵՆ ԲՀԿ, Պտղատու այգիների հիմնում, 2019թ, էջ 94
8. Նավոյան Գ., Ոռոգման հիմունքների ուղեցույց, Երևան 2009թ, էջ 34
9. Гуломов С. Б., Бараев Ф. А., Абдураупров Р. Р. , Развитие теории определения поливных норм сельскохозяйственных культур,2015г., стр.187
10. Налойченко А.О., Атаканов А.Ж. Орошение как главный элемент эффективного регулирования факторов жизни растений, Бишкек 2009 г., стр. 16
11. Российская академия сельскохозяйственных наук ГНУ Всероссийский научно-исследовательский институт овощеводства, Режим орошения, способы и техника полива овощных и бахчевых культур в различных зонах РФ, 2010 г., стр 82
12. Manucharyan, Drip irrigation and its investment opportunities in Armenian agriculture, Norwegian Journal of Development of the International Science, №17/2018, Vol. 4, Oslo 2018, p. 3-6
13. Արցախի Հանրապետության գյուղատնտեսության կայք էջ՝ http://minagro.nkr.am/

ՀՀ էկոնոմիկայի նախարարության կայք էջ՝ https://www.mineconomy.am/

# 1-ՊԻՊԵՐԱԶԻՆՈ-2,7-ՆԱՖԹԻՐԻԴԻՆՆԵՐԻ ՆՈՐ ԱԾԱՆՑՅԱԼՆԵՐԻ ՀՈԳԵՄԵՏ ՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ


**ՍԱՄՎԵԼ ՍԻՐԱԿԱՆՅԱՆ**
ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա,
Օրգանական և դեղագործական քիմիայի գիտատեխնոլոգիական կենտրոն,
Նուրբ օրգանական քիմիայի ինստիտուտ, առաջատար գիտաշխատող,
քիմիական գիտությունների դոկտոր
shnnr@mail.ru

**ՏԱԹԵՎԻԿ ԱՌԱՔԵԼՅԱՆ**
ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա,
Օրգանական և դեղագործական քիմիայի գիտատեխնոլոգիական կենտրոն,
Նուրբ օրգանական քիմիայի ինստիտուտ,
կրտսեր գիտաշխատող,
tatev160396@mail.ru

**ԷԼՄԻՐԱ ՀԱԿՈԲՅԱՆ**
ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա,
Օրգանական և դեղագործական քիմիայի գիտատեխնոլոգիական կենտրոն,
Նուրբ օրգանական քիմիայի ինստիտուտ,
կրտսեր գիտաշխատող
hakobyan.elmira@mail.ru

**ՀԱՍՄԻԿ ԵԳՈՐՅԱՆ**
ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա,
Օրգանական և դեղագործական քիմիայի գիտատեխնոլոգիական կենտրոն,
Նուրբ օրգանական քիմիայի ինստիտուտ,
կրտսեր գիտաշխատող
hasmik.yegoryan@mail.ru

**ԼԻԼԻԹ ԵՐՄԱԼՈՎՅԱՆ**
ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա,
Օրգանական և դեղագործական քիմիայի գիտատեխնոլոգիական կենտրոն,
Նուրբ օրգանական քիմիայի ինստիտուտ,
կրտսեր գիտաշխատող
lilit.yermalovyan@edu.isec.am

**ԱՆՈՒՇ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ**
ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա,
Օրգանական և դեղագործական քիմիայի գիտատեխնոլոգիական կենտրոն,
Նուրբ օրգանական քիմիայի ինստիտուտ,
ավագ գիտաշխատող,
քիմիական գիտությունների թեկնածու
aaa.h.87@mail.ru

**ՌՈՒԶԱՆՆԱ ՊԱՐՈՆԻԿՅԱՆ**
ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա,
Օրգանական և դեղագործական քիմիայի գիտատեխնոլոգիական կենտրոն,
Նուրբ օրգանական քիմիայի ինստիտուտ,
առաջատար գիտաշխատող,
կենսաբանական գիտությունների դոկտոր, դոցենտ
paronikyan.ruzanna@mail.ru

**Համառոտագիր**

Ինֆորմացիոն ու հաղորդակցական տեխնոլոգիաների լայն կիրառումը ամբողջ աշխարհում բնակչության համար ստեղծում է առողջական բազմապիսի խնդիրներ հոգեկան ոլորտում: Նոր հակացնցումային դեղանյութերի ստեղծումը, որոնք ունեն նաև փոխկապակցված հոգեմետ հատկություններ, լայն պահանջարկ ունի և արդիական է: Հոգեմետ հատկություններով զուգորդված հակացնցումային պրեպարատների ստեղծման համար կարևոր է էքսպերիմենտալ մոտեցումների մշակումը՝ հիմնված կենդանիների մոտ պաթոլոգիայի առանձին դրսևորումների դիֆերենցված մոդելավորման վրա: Խոսքը վերաբերում է կենդանիների մոտ հետազոտական ակտիվականության «բաց դաշտ», «խաչաձև բարձրացված լաբիրինթոսի» և այլ մոդելների մասին:

Աշխատանքում իրականացված է 1-պիպերազինո-2,7-նաֆթիրիդինների նոր ածանցյալների հոգեմետ հատկությունների ուսումնասիրություն: 2,7-Նաֆթիրիդինների հիման վրա իրականացվել են դրանց ինչպես նոր ֆունկցիոնալ ածանցյալների, այնպես էլ համակցված եռացիկլ և քառացիկլ հետերոցիկլիկ համակարգերի սինթեզներ:

Հետազոտված միացությունների մեծ մասը ցուցաբերում են հակացնցումային ազդեցություն կորազոլի հետ անտագոնիզմի թեստով: Միացություններից ամենաբարձր հակակորազոլային ազդեցություն ցուցաբերել են

**4b,c** և **5a–d** միացությունները, որոնք 50 մգ/կգ դեղաչափում դրսևորում են 60% և 80% էֆեկտիվություն, համապատասխանաբար: Միացությունների 50% էֆեկտիվ դոզաները գտնվում են 25-58 մգ/կգ սահմաններում: Բոլոր միացությունները իրենց հակակոռազոլային ակտիվությամբ զիջում են դիազեպամին, սակայն ավելի քիչ թունավոր են: «Բարձրացված խաչաձև լաբիրինթոս»-ի մոդելով **4b,c** և **5a–d** միացությունները 50 մգ/կգ դեղաչափում մկների մոտ ավելացնում են բաց թևերում գտնվելու ժամանակը, ինչպես դիազեպամը, համեմատած ստուգիչի տվյալների հետ: Դա վկայում է այս միացությունների անքսիոլիտիկ հատկությունների մասին:

«Բաց դաշտ» մոդելով ակտիվ **4b,c** և **5a–d** միացությունների մոտ 50 մգ/կգ դեղաչափում բացահայտված է առնետների մոտ վարքագիծը ակտիվացնող հատկություն, ընդ որում այդպիսի հատկություն ունի նաև դիազեպամը (2 մգ/կգ դեղաչափում):

Հայտնաբերվել է որոշակի կապ սինթեզված միացությունների կառուցվածքի և կենսաբանական ակտիվության միջև, մասնավորապես, ուսումնասիրությունները ցույց են տվել, որ.

- 1-պիպերազինո-3-ամինո-2,7-նաֆթիրիդինների շարքում անկախ 3-րդ դիրքի ամինի բնույթից, բարձր ակտիվություն ցուցաբերել են 4-էթիլպիպերազին ֆրագմենտ պարունակող միացությունները,
- ամենաբարձր նեյրոտրոպ ակտիվություն դիտվել է պիրազոլո[3,4-*c*]-2,7-նաֆթիրիդինների մոտ, ընդ որում անկախ պիպերազինային օղակի տեղակալիչից,
- վերջիններիս ցիկլման արդյունքում՝ պիրիմիդո[1',2':1,5]պիրազոլո[3,4-*c*]-2,7-նաֆթիրիդինների դեպքում, տեղի է ունենում ակտիվության կտրուկ նվազում:

**Բանալի բառեր և բառակապակցություններ.** 1-պիպերազինո-2, 7-նաֆթիրիդիններ, կոռազոլային ցնցումներ, նեյրոտրոպ ակտիվություն, անքսիոլիտիկ ազդեցություն:

# ИЗУЧЕНИЕ ПСИХОТРОПНЫХ СВОЙСТВ НОВЫХ ПРОИЗВОДНЫХ 1-ПИПЕРАЗИНО-2,7-НАФТИРИДИНА


**САМВЕЛ СИРАКАНЯН**
Национальная академия наук Республики Армения
Научно-технологический центр органической и фармацевтической химии
Институт тонкой органической химии
ведущий исследователь
доктор химических наук
shnnr@mail.ru

**ТАТЕВИК АРАКЕЛЯН**
Национальная академия наук Республики Армения
Научно-технологический центр органической и фармацевтической химии
Институт тонкой органической химии
младший научный сотрудник
tatev160396@mail.ru

**ЭЛЬМИРА АКОПЯН**
Национальная академия наук Республики Армения
Научно-технологический центр органической и фармацевтической химии
Институт тонкой органической химии
младший научный сотрудник
hakobyan.elmira@mail.ru

**АСМИК ЕГОРЯН**
Национальная академия наук Республики Армения
Научно-технологический центр органической и фармацевтической химии
Институт тонкой органической химии
младший научный сотрудник
hasmik.yegoryan@mail.ru

**ЛИЛИТ ЕРМАЛОВЯН**
Национальная академия наук Республики Армения
Научно-технологический центр органической и фармацевтической химии
Институт тонкой органической химии
младший научный сотрудник
lilit.yermalovyan@edu.isec.am

**АНУШ ОВАКИМЯН**
Национальная академия наук Республики Армения
Научно-технологический центр органической и фармацевтической химии

Институт тонкой органической химии
старший научный сотрудник
кандидат химических наук
aaa.h.87@mail.ru

**РУЗАННА ПАРОНИКЯН**
Национальная академия наук Республики Армения
Научно-технологический центр органической и фармацевтической химии
Институт тонкой органической химии
ведущий исследователь
доктор биологических наук, доцент
paronikyan.ruzanna@mail.ru

**Аннотация**

Широкое использование информационных и коммуникационных технологий создает множество проблем с психическим здоровьем населения во всем мире. Разработка новых противосудорожных препаратов, обладающих также сопутствующими психотропными свойствами, широко востребована и своевременна. Для разработки противосудорожных препаратов, сочетающихся с психоактивными свойствами, важна разработка экспериментальных подходов, основанных на дифференцированном моделировании отдельных проявлений патологии у животных. Речь идет о модели исследовательской активности «открытое поле», «крестообразном приподнятом лабиринте» и других моделях у животных.

В работе проведено изучение психотропных свойств новых производных пиперазинонафтиридинов. На основе 2,7-нафтиридинов синтезированы как их новые функциональные производные, так и комбинированные трициклические и тетрациклические гетероциклические системы.

Большинство исследованных соединений проявляют противосудорожное действие в тесте по антагонизму с коразолом. Среди исследованных соединений соединения 4b,c и 5a-d показали самый высокий антикоразольный эффект, проявляя эффективность 60% и 80% в дозе 50 мг/кг, соответственно. 50% эффективные дозы соединений находятся в диапазоне 25-58 мг/кг. Все соединения уступают диазепаму по антикоразольной активности, но менее токсичны. В модели приподнятого крестообразного лабиринта соединения **4b,c** и **5a-d** в дозе 50 мг/кг увеличивали время пребывания в открытых рукавах у мышей аналогично диазепаму по сравнению с контрольными данными. Это указывает на анксиолитические свойства этих соединений.

Показано, что активные соединения **4b,c** и **5a–d** в дозе 50 мг/кг в модели «открытое поле» активируют поведение крыс, таким свойством обладает и диазепам (в дозе 2 мг/кг).

Обнаружена определенная связь между структурой синтезированных соединений и биологической активностью, в частности, исследования показали, что:

• среди 1-пиперазино-3-амино-2,7-нафтиридинов, независимо от природы амина в 3-м положении, высокой активностью обладают соединения, содержащие 4-этилпиперазиновый фрагмент.

• наибольшая нейротропная активность наблюдалась у пиразоло[3,4-c]-2,7-нафтиридинов независимо от заместителя в пиперазиновом кольце,

• в результате циклизации последних в случае пиримидо[1',2':1,5]пиразоло[3,4-c]-2,7-нафтиридинов происходит резкое снижение активности.

**Ключевые слова и словосочетания**: 1-пиперазино-2,7-нафтиридины, коразоловые судороги, нейротропная активность, анксиолитический эффект.

## THE STUDY OF PSYCHOTROPIC PROPERTIES OF NEW 1-PIPERAZINE-2,7-NAPHTHIRIDINE DERIVATIVES

**SAMVEL SIRAKANIAN**
National Academy of Sciences of the Republic of Armenia
Scientific Technological Center of Organic and Pharmaceutical Chemistry
Institute of Fine Organic Chemistry
Leading Researcher
Doctor of Chemical Sciences
shnnr@mail.ru

**TATEVIK ARAKELYAN**
National Academy of Sciences of the Republic of Armenia
Institute of Fine Organic Chemistry
Scientific Technological Center of Organic and Pharmaceutical Chemistry
Junior Researcher
tatev160396@mail.ru

**ELMIRA HAKOBYAN**
National Academy of Sciences of the Republic of Armenia
Institute of Fine Organic Chemistry
Scientific Technological Center of Organic and Pharmaceutical Chemistry
Junior Researcher
hakobyan.elmira@mail.ru

**HASMIK YEGORYAN**
National Academy of Sciences of the Republic of Armenia
Institute of Fine Organic Chemistry
Scientific Technological Center of Organic and Pharmaceutical Chemistry
Junior Researcher
hasmik.yegoryan@mail.ru

**LILIT YERMALOVIAN**
National Academy of Sciences of the Republic of Armenia
Institute of Fine Organic Chemistry
Scientific Technological Center of Organic and Pharmaceutical Chemistry
Junior Researcher
lilit.yermalovyan@edu.isec.am

**ANUSH HOVAKIMYAN**
National Academy of Sciences of the Republic of Armenia
Institute of Fine Organic Chemistry
Scientific Technological Center of Organic and Pharmaceutical Chemistry
Senior Researcher
PhD In Chemistry
aaa.h.87@mail.ru

**RUZANNA PARONIKIAN**
National Academy of Sciences of the Republic of Armenia
Institute of Fine Organic Chemistry
Scientific Technological Center of Organic and Pharmaceutical Chemistry
Leading Researcher
Doctor of Biological Sciences, Associate Professor
paronikyan.ruzanna@mail.ru

Abstract

The widespread use of information and communication technologies creates various mental health problems for the population worldwide. The development of new anticonvulsant drugs that also have associated psychotropic properties is widely demanded and timely. For developing anticonvulsant drugs combined with psychoactive properties, it is essential to develop experimental approaches based on differentiated modelling of individual manifestations of pathology in animals. We are talking about the "open field", "cross-shaped elevated maze", and other models of research activity in animals.

The study of the psychotropic properties of new derivatives of 1-piperazine-2,7-naphthyridines is carried out in the work. Based on 2,7-naphthyridines, both their new

functional derivatives and combined tricyclic and tetracyclic heterocyclic systems were synthesized.

Most investigated compounds show anticonvulsant effects in test by the antagonism with corazol. Among the compounds, compounds **4b,c** and **5a–d** showed the highest anticorazol effect, showing 60 and 80% efficacy at a dose of 50 mg/kg, respectively. The 50% effective doses of the compounds are in the range of 25-58 mg/kg. All compounds are inferior to diazepam in their anticorazol activity but are less toxic. In the elevated plus-maze model (ESP test), compounds **4b,c** and **5a–d** at a dose of 50 mg/kg increased the time spent in the open arms in mice similar to diazepam compared to control data. It indicates the anxiolytic properties of these compounds.

Active compounds **4b,c** and **5a–d** at a dose of 50 mg/kg in the "open field" model have been shown to activate behaviour in rats, and diazepam (at a dose of 2 mg/kg) also has such a property.

A certain relationship between the structure of the synthesized compounds and the biological activity was found; in particular, the studies showed that:

• Among 1-piperazino-3-amino-2,7-naphthyridines, regardless of the nature of the amine in the third position, the compounds containing the 4-ethyl piperazine fragment showed high activity.

• the highest neurotropic activity was observed for pyrazolo[3,4-*c*]-2,7-naphthyridines, regardless of the substituent on the piperazine ring,

• as a result of cyclization of the latter, in the case of pyrimido [1',2':1,5] pyrazolo [3,4-c]-2,7-naphthyridines, a sharp decrease in activity occurs.

**Keywords and phrases:** 1-piperazine-2,7-naphthyridines, corazol convulsions, neurotropic activity, anxiolytic effect.

## Ներածություն

Ազոտ պարունակող հետերոցիկլիկ միացությունները մեծ դեր են խաղում կենդանի բջիջների կենսաքիմիական գործընթացներում: *Ազոտ պարունակող հետերոցիկլերի բնական ներկայացուցիչները հանդիսանում են որպես ֆիտոքիմիական դեղամիջոցներ, ինչպես նաև հայտնի են հետևյալ դեղամիջոցները՝ խինին, էլիպտիցին, թեոֆիլին, էմետին, պապավերին, պրոկաին, կոդեին, մորֆին և այլն: Ազոտ պարունակող հետերոցիկլիկ միացությունների սինթետիկ ածանցյալները դեղամիջոցներում հանդիսանում են նաև որպես հիմնական կառուցվածքային միավոր, ինչպիսիք են՝ դիազեպամը, իզոնիազիդը, քլորպրոմազինը, մետրոնիդազոլը, բարբիտուրաթթուն, կապտոպրիլը, քլորխինինը, ազիդոտիմիդինը, անտիպիրինը և այլն:*

*Հարկ է նշել, որ ԱՄՆ «FDA»-ի (*պարենի և դեղերի վարչություն*) կողմից հաստատված փոքր մոլեկուլային կառուցվածքով դեղամիջոցների մոտ 60%-ը ազոտ պարունակող հետերոցիկլիկ համակարգեր են **[1]:** Ավելին, 200*

*ամենավաճառվող փոքր մոլեկուլային կառուցվածքով դեղամիջոցներից 13-ը, ըստ 2012 թվականի տվյալների, պարունակում են պիպերազինի օղակ* ***[2]:***

Ազոտ պարունակող հետերոցիկլիկ համակարգերի շարքում պիպերազինը ունի իր ուրույն տեղը շնորհիվ իր լայն կիրառության տարբեր բնագավառներում՝ բժշկություն, արտադրություն, գյուղատնտեսություն, կոորդինացիոն քիմիայում, սոսինձներում, հեղուկ բյուրեղներում, արևային մարտկոցներում, էլեկտրոնային սարքերում և այլն:

Ազոտ պարունակող հետերոցիկլիկ համակարգերից 2,7-նաֆթիրիդինի ածանցյալները համեմատաբար քիչ են ուսումնասիրված և, ունենալով կենսաբանական ակտիվության լայն շրջանակ և ունիվերսալ լուծելիություն (որն, իհարկե, մեծ առավելություն է կենսաբանական տեսանկյունից), հանդիսանում են հետազոտությունների համար հեռանկարային ու յուրահատուկ ուղղություն: Մասնավորապես, հայտնի է, որ 2,7-նաֆթիրիդինի ածանցյալները ցուցաբերում են հակաբորբոքային, ցավազրկող, հակաքաղցկեղային, հակացնցումային հատկություններ, ինչպես նաև շատ կինազաների սելեկտիվ ու հզոր ինհիբիտորներ են: 2,7-Նաֆթիրիդինային օղակ պարունակող միացություններ՝ ալկալոիդներ, հայտնաբերվել են նաև տարբեր կենդանի օրգանիզմներում, օրինակ՝ բույսերում և ծովային օրգանիզմներում: Այս ալկալոիդները սովորաբար ցուցադրում են կենսաբանական ակտիվություն: Այդ պատճառով այս համակարգերում նոր ֆունկցիոնալ խմբերի ներմուծումը, կամ արդեն առկա խմբերի վերափոխումը, ինչպես նաև վերջիններիս հիման վրա նոր համակցված հետերոցիկլիկ համակարգերի ստացումը հանդիսանում է հեռանկարային և արդիական խնդիր:

Հաշվի առնելով վերոհիշյալը՝ այս աշխատանքում խնդիր է դրվել ստանալ միացություններ, որոնք իրենց կառուցվածքում միաժամանակ կպարունակեն 2,7-նաֆթիրիդինի և պիպերազինի օղակներ, և ուսումնասիրել սինթեզված միացությունների նեյրոտրոպ ակտիվությունը: Մասնավորապես, 2,7-նաֆթիրիդինի առաջին դիրքում սինթեզվել են տեղակալված պիպերազիններ, իսկ այնուհետև վերջիններիս հիման վրա իրականացվել են փոխարկումներ: Աշխատանքը հանդիսանում է նախկինում իրականացված հետազոտությունների շարունակությունը ***[3,4,5,6]:***

**Հետազոտությունների մեթոդները**

1. Հակացնցումային ազդեցության սպեկտրը հետազոտվել է 18-22գ երկսեռ սպիտակ մկների վրա պենտիլենտետրազոլով (կորազոլ, ՊՏԶ) և մաքսիմալ էլեկտրոշոկով (ՄԷՇ) առաջացրած ցնցումներով [7]:

Հետազոտվել են նաև պրեպարատների կողմնակի էֆեկտները՝ շարժումների կոորդինացիայի խախտում, միոռելաքսացիա, ատաքսիա՝ «պտտվող առանցքի թեստով» [5]: Ստուգվել է պրեպարատների սուր օրական տոքսիկականությունը: Փորձերի արդյունքները ենթարկվել են ստատիստիկ մշակման՝ հաշվարկելով դրանց էֆեկտիվ 50% ($ԷԴ_{50}$), մահացու 50% ($ԼԴ_{50}$) և նեյրոտոքսիկ 50% ($ՏԴ_{50}$) դեղաչափերը՝ կիրառելով Լիտչվիլդի և Ուիլկոկսոնի պրոբիտ անալիզի մեթոդը [8]:

2. Հոգեմետ ազդեցության հետազոտման համար իրականացվել են հետազոտական ակտիվության «բաց դաշտ», « բարձրացված խաչաձև լաբիրինթոս» մեթոդները:

- Միացությունների սեդատիվ, ակտիվացնող և անքսիոլիտիկ հատկությունները հետազոտվել են առնետների մոտ վարքագծի «բաց դաշտ» մոդիֆիկացված մոդելով [9]: Էքսպերիմենտի 5 րոպեի ընթացքում որոշվել է հորիզոնական տեղաշարժերի քանակը, անցքերի հոտոտումը և ուղղահայաց տեղաշարժերը, ինչպես փորձնական, այնպես էլ՝ ստուգիչ խմբի կենդանիների մոտ:
- Վերջին ժամանակներին էքսպերիմենտալ ֆարմակոլոգիայում հաճախ օգտագործվում է «բարձրացված խաչաձև լաբիրինթոս»-ի (ԽԲԼ) մեթոդիկան, որը առաջարկված է Pellow և համահեղինակների կողմից 1985թ [10]:
  իրականացվել է մկների մոտ, որոնց տեղադրում են լաբիրինթոսի բաց և փակ թևերի հատման հատվածում և ֆիքսվում է կենտրոնում, փակ և բաց թևերում կենդանու գտնվելու ժամանակը և մուտքերի քանակը:

**Հետազոտությունների արդյունքները**

Հետազոտությունները իրականացվել են 1-պիպերազինո-2,7-նաֆթիրիդինների նոր 23 ածանցյալների ուսումնասիրմամբ:

Նշված միացությունների սինթեզը, փոխարկումները և կառուցվածքը ներկայացված են ստորև՝ երեք սխեմաներով (**սխեմա 1,2,3**):

**1-Պիպերազինո-3-քլոր-2,7-նաֆթիրիդինների 3 սինթեզը և փոխարկումը**




**3. a**:R = Me; **b:** R = Et; **c:** R = Ph; **d:** R = $CH(Ph)_2$; **4.a**:R = Me, $R^1$ = H; **b**:R = Et, $R^1$ = H; **c**:R = Et, $R^1$ = Me;**d**:R = Ph, $R^1$ = H;**e**:R = $CH(Ph)_2$, $R^1$ = H.

**Սխեմա 1.** 1-Ամինո-3-քլոր-2,7-նաֆթիրիդինների **3** սինթեզը և փոխարկումը:

**Պիրազոլո[3,4-*c*]-2,7-նաֆթիրիդինների սինթեզը և փոխարկումը**




**5, 6. a**:R = Me; **b:** R = Et; **c:** R = Ph; **d:** R = $CH(Ph)_2$.

**Սխեմա 2.** Պիրազոլո[3,4-*c*]-2,7-նաֆթիրիդինների **5** սինթեզը և փոխարկումը:

## 1-Պիպերազինո-3-օքսո-2,7-նաֆթիրիդինների 8 սինթեզը




**7, 8**. **a:**R = Me; **b:** R = Ph; **c:** R = $CH(Ph)_2$.

**Սխեմա 3.** 1-Պիպերազինո-3-օքսո-2,7-նաֆթիրիդինների **8** սինթեզը:

Սինթեզված 1-պիպերազինո-3-ամինո-2,7-նաֆթիրիդինները **4a–e**, պիրազոլո[3,4-*c*]-2,7-նաֆթիրիդինները **5a–d** և պիրիմիդո [1',2':1,5]պիրազոլո[3,4-*c*]-2,7-նաֆթիրիդինները **6a–d** հետազոտվել են ՀՀ ԳԱԱ ՕԴՔ ԳՏԿ ՆՕՔԻ հոգեմետ հատկությունների ուսումնասիրման խմբում, որտեղ իրականացվել է վերջիններիս նեյրոտրոպ հատկությունների ուսումնասիրություն:

Վերոնշյալ միացությունների **4a–e**, **5a–d** և **6a–d** նեյրոտրոպ ակտիվության ուսումնասիրությունները իրականացվել են առլթբռեդ մկների (18–24 գ կշռով) և առնետների (120–140 գ կշռով) վրա: Միացությունները ներարկվել են միջմկանային՝ էլեկտրաշոկի իրականացումից և կորազոլի ներմուծումից 45 րոպե առաջ: Միացությունները ներմուծվել են տվին 80-ի և կարբօքսիմեթիլցելյուլոզի հետ կոլոիդային խառնուրդի տեսքով: Կենդանիների մոտ ստուգիչ է հանդիսացել կոլոիդային լուծույթը:

Յուրաքանչյուր միացության համար հակացնցումային ակտիվությունը փորձարկվել է երկու դեղաչափերով (25 և 50 մգ/կգ) հինգ կենդանու վրա: Կորազոլային ցնցումները ստացվել են վերջինիս ենթամաշկային ներարկմամբ 85 մգ/կգ դեղաչափով, իսկ մաքսիմալ էլեկտրաշոկով

առաջացրած ցնցումները ստացվել են 140 վոլտ հոսանքի անցկացմամբ աչքերի եղջերաթաղանթի միջով: Կորազոլային ցնցումները հանդիսանում են կլոնիկ ցնցումների մոդել, ինչպես նաև անքսիոլիտիկ հատկությունների դրսևորման կանխագուշակիչ թեստ, իսկ էլեկտրաշոկով առաջացրած ցնցումները՝ տոնիկո-կլոնիկ գեներալիզացված ցնցումների մոդել:

Պրակտիկ տեսակետից հակացնցումային ակտիվություն ունեցող միացությունների մեծամասնությունը հետաքրքրություն է ներկայացնում միայն թունաբանական ցուցանիշների հետ համադրումից հետո: Այդ իսկ պատճառով ակտիվ միացությունների համար իրականացվել է օրական սուր թունականության հետազոտություն: Հաշվի առնելով, որ հակացնցումային միացությունները, ինչպես և բոլոր դեղապրեպարատները, առաջացնում են անցանկալի կողմնակի նեյրոտոքսիկ ազդեցություն, միացությունների հետազոտման համար ուսումնասիրվել են նաև սեդատիվ, միոռելաքսանտ, նեյրոտոքսիկ ազդեցությունները (շարժումների կոորդինացիայի խանգարում), որի համար կիրառվել է «պտտվող առանցքի» թեստը:

Հետազոտված ակտիվ միացությունների համար իրականացվել է նաև հոգեմետ հետազոտության՝ «բարձրացված խաչաձև լաբիրինթոս»-ի մոդելի, և հետազոտական ակտիվության ուսումնասիրման «բաց դաշտ» մոդելի կիրառմամբ: Համեմատությունը իրականացվել է հայտնի տրանկվիլիզատոր դիազեպամի հետ [11]:

Հետազոտության արդյունքները ցույց են տվել, որ ուսումնասիրված միացությունները **4a**–**e**, **5a**–**d** և**6a**–**d** չունեն հակաէլեկտրոշոկային ազդեցություն, սակայն այս կամ այն չափով դրսևորում են անտագոնիզմ կորազոլի հանդեպ:

Միացություններից ամենաբարձր հակակորազոլային ազդեցություն ցուցաբերել են **4b,c** և **5a–d** միացությունները, որոնք 50 մգ/կգ դեղաչափում դրսևորում են 60% և 80 % էֆեկտիվություն, համապատասխանաբար: Միացությունների 50% էֆեկտիվ դոզաները գտնվում են 25-58 մգ/կգ սահմաններում: Մնացած մյուս միացությունների **4a,d,e** և **6a**–**d** մոտ նույն դեղաչափում եղել է 20–40 % էֆետկտիվություն (նկար 1):




**Նկար 1.** Միացությունների հակակորազոլային ակտիվության գրաֆիկը:

Բոլոր հետազոտված միացությունները քիչ թունավոր են և ունեն նաև ցածր մկանաթուլություն առաջացնելու հատկություն (միոռելակսացիա), որն ի հայտ է գալիս միացությունների 300 մգ/կգ-ից բարձր դեղաչափերում, իսկ սուր օրական թունականութունը՝ 500 մգ/կգ-ից բարձր դեղաչափերում:

Նշված բոլոր միացությունները իրենց հակակորազոլային ակտիվությամբ զիջում են դիազեպամին, սակայն ավելի քիչ թունավոր են:

«Բարձրացված խաչաձև լաբիրինթոս»-ի մոդելով (ԲԽԼ թեստով) **4b,c** և **5a–d** միացությունները 50 մգ/կգ դեղաչափում մկների մոտ ավելացնում են բաց թևերում գտնվելու ժամանակը, ինչպես դիազեպամը, համեմատած ստուգիչի տվյալների հետ: Դա վկայում է այս միացությունների անքսիոլիտիկ հատկությունների մասին:

«Բաց դաշտ» մոդելով ակտիվ **4b,c** և **5a–d** միացությունների մոտ 50 մգ/կգ դեղաչափում բացահայտված է առնետների մոտ վարքագիծը ակտիվացնող հատկություն, ընդ որում այդպիսի հատկություն ունի նաև դիազեպամը (2 մգ/կգ դեղաչափում):

Բացահայտված են ուսումնասիրված միացությունների **4a–e**, **5a–d** և **6a–d** քիմիական կառուցվածքի և դրանց դեղաբանական ակտիվության միջև կապը: Այսպես 1-պիպերազինո-3-ամինո-2,7-նաֆթիրիդինների շարքում **4a–e**, անկախ 3-րդ դիրքի ամինի բնույթից, բարձր ակտիվություն

դիտվել է 4-էթիլպիպերազին ֆրագմենտ պարունակող միացությունների մոտ **4b,c**: Պիրիմիդո[1',2':1,5]պիրազոլո[3,4-*c*]-2,7-նաֆթիրիդինները **6a–d**անկախ հինգերորդ դիրքի ամինի բնույթից (տեղակալված պիպերազին) ցուցաբերում են միանման թույլ հակացնցումային էֆեկտ: Ամենաբարձր արտահայտված հակացնցումային ակտիվություն դիտվում է եռացիկլ պիրազոլո[3,4-*c*]-2,7-նաֆթիրիդինների շարքում **5a–d**, ընդ որում այս շարքի բոլոր միացությունները ցուցաբերել են միանման բարձր ակտիվություն, հետևաբար կարող ենք փաստել, որ պիրիմիդինային ցիկլի փակումը բերում է ակտիվության կտրուկ նվազմանը:

Այսպիսով՝ աշխատանքի ընթացքում իրականացնել է 2,7-նաֆթիրիդինների քսաներեք նոր ֆունկցիոնալ և համակցված ածանցյալների սինթեզ: Իրականացվել է սինթեզված միացությունների նեյրոտրոպ ակտիվության ուսումնասիրություն, որի արդյունքում բացահայտվել է որոշակի կապ միացության կառուցվածքի և կենսաբանական կատիվության միջև:

*Հետազոտությունն իրականացվել է ՀՀ գիտության կոմիտեի ֆինանսական աջակցությամբ՝ 21AG-1D036 ծածկագրով գիտական թեմայի շրջանակներում:*

## Օգտագործված գրականության ցանկ


1. Vitaku E., Smith D.T., Njardarson J.T. Analysis of the structural diversity, substitution patterns, and frequency of nitrogen heterocycles among U.S. FDA approved pharmaceuticals. *J. Med. Chem.*, 2014, v. 57, № 24, p. 10257−10274.
2. James T., MacLellan P., Burlsem G.M., Simpson I., Grant J.A., Warriner S., Sridharan V., Nelson A. A modular lead-oriented synthesis of diverse piperazine, 1,4-diazepane and 1,5-diazocane scaffolds. *Org. Biomol. Chem.*, 2014, v. 12, № 16, p. 2584−2591.
3. Sirakanyan, S.N., Noravyan A.S., Dzhagatspanyan I.A., Nazaryan I.M., Hovakimyan A.A., Akopyan A.G., Avetisyan N.G. Synthesis and neurotropic activity of new derivatives of piperazino-substituted pyrano[3,4-*c*]pyridines. *Pharm. Chem. J.*, 2013, v. 46, №10, p. 591–594.
4. Sirakanyan S.N., Hakobyan E.K., Nikoghosyan A.G., Paronikyan R.G., Dzhagatspanyan I.A., Nazaryan I.M., Akopyan A.G., Hovakimyan A.A. Synthesis and neurotropic activity of new 7-cyclohexyl-6,7,8,9-tetrahydro-3*H*-pyrazolo[3,4-*c*]-2,7-naphthyridine-1,5-diamines. *Pharm. Chem. J.,* 2018, v. 52, № 2, p. 108−111.

5. Sirakanyan S.N., Akopyan E.K., Paronikyan R.G., Nazaryan I.M., Akopyan A.G., Ovakimyan A.A. Synthesis and neurotropic activity of piperazino-derivatives of pyrano[3,4-*c*]pyridines. *Pharm. Chem. J.*, 2019, v. 53, № 6, p. 495–499.
6. Sirakanyan S. N., Kartsev V. G., Spinelli D., Geronikaki A., Petrou A., Ivanov M., Glamoclija J., Sokovic M., Hakobyan E., Hovakimyan A. A., Synthesis and antimicrobial activity of new 2-piperazin-1-yl-*N*-1,3-thiazol-2-ylacetamides of cyclopenta[*c*]pyridines and pyrano[3,4-*c*]pyridines. *Arch. der Pharm.*, 2021, vol. 354, № 1, p. 2000208.
7. Vogel H. G., Vogel W. H. (Eds.). In Drug discovery and Evaluation. Pharmacological Assays Springer. Berlin and N-Y. 2008, pp.569-874.
8. Беленький М.Л. - Элементы количественной оценки фармакологического эффекта. Медгиз, Ленинград, 1963, 152стр.
9. File S. E., Behav.Brain.Res., Factors controlling measures of anxiety and responses to novelty in the mouse. Behavioural Brain Research, 125 (2001), pp. 151-157.
10. Pelow S., File S. EThe effects of triazolobenzodiazepines in two animal tests of an anxiety and on the holeboard. .- Pharmacol. Biochem. and Behav., 86 (1985), pp.
11. 1985, v.24, N 3, pp. 525-529.
12. Машковский М. Д. ‘’Лекарственные средства’’ М.: Новая волна. 2021г., 1216 стр.

# ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ՄԵԹՈԴՆԵՐԻ ՀԱՐԱԲԵՐԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

**ՎԱՀԱՆ ՄԵԼԻՔՍԵԹՅԱՆ**
ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիա,
գիտակրթական միջազգային կենտրոն,
սոցիալական մանկավարժության ամբիոնի դասախոս,
մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ
vmeliqsetyan0077@mail.ru

**Համառոտագիր**

Մարդկության գոյության բոլոր ժամանակներում կրթությունը եղել և մնում է հասարակության առաջընթացը ապահովող և դրան նպաստող կարևոր ոլորտներից մեկը: Աշխատանքի *արդիականությունը* պայմանավորված է Հայաստանի Հանրապետության կրթական ոլորտում իրականացված բարեփոխումների արդյունքում էապես փոխված կրթության կառավարման սկզբունքների, գործառույթների, մեթոդների և ոճերի նկատմամբ եղած մոտեցումներով: Կրթության կառավարման համակարգում կառավարող սուբյեկտների գործունեության արդյունավետության համար կարևոր են կառավարման ժամանակակից սկզբունքների և մեթոդների, դրանց հարաբերակցության իմացությունը: Դպրոցի կառավարման գործող համակարգի ուսումնասիրության արդյունքում պարզեցինք, որ այդ գործընթացը վերափոխման և կատարելագործման կարիք ունի, քանի որ առկա իրավիճակում կառավարման որոշ սկզբունքներ չեն գործում, իսկ որոշ գործառույթներ ձևական բնույթ են կրում: Դպրոցում արդյունավետ կառավարում իրականացնելու համար անպայման պետք է հաշվի առնել կառավարման մասին գիտության կուտակված հսկայական փորձը, օրինաչափությունները, սկզբունքները, ինչպես նաև՝ ժամանակակից կառավարաբանության ու կրթության համակարգի առաջարկվող փոփոխությունները: Կրթության, հանրակրթության, մասնավորապես դպրոցի կառավարման ոլորտում իրականացվող փոփոխությունների շղթան ստիպում է վերանայել հին արժեքները, վերաիմաստավորել դրանք, ստեղծել նորերը, որոնց հիմքում անպայմանորեն պետք է ընկած լինի յուրաքանչյուր սովորողի, յուրաքանչյուր սուբյեկտի հնարավորությունները, ունակությունները:

**Բանալի բառեր և բառակապակցություններ.** դպրոցի կառավարում, հանրակրթական չափորոշիչ՝ գիտելիք, հմտություն, դիրքորոշում, արժեքային բաղադրիչ, կրթության որակի ապահովում:

# ВЗАИМОСВЯЗЬ ПРИНЦИПОВ И МЕТОДОВ УПРАВЛЕНИЯ ОБЩЕОБРАЗОВАТЕЛЬНЫМИ УЧРЕЖДЕНИЯМИ

**ВАГАН МЕЛИКСЕТЯН**
Национальная академия наук Республики Армения
Международный научно-образовательный центр
Преподаватель кафедры социальной педагогики
кандидат педагогических наук, доцент
vmeliqsetyan0077@mail.ru

**Аннотация**

Во все времена существования человечества образование было и остается одной из важных сфер, обеспечивающих и способствующих прогрессу общества. Знание современных принципов и методов администрирования важны для эффективности деятельности субъектов управления в системе контроля над качеством образованием. ***Актуальность*** работы обусловлена подходами к принципам, функциям, методам и стилям управления образованием, которые существенно изменились в результате реформ, осуществленных в образовательной сфере Республики Армения. В результате изучения действующей системы управления в школе мы выяснили, что данный процесс нуждается в преобразовании и модернизации, так как в сложившейся ситуации некоторые принципы управления не работают, а некоторые функции носят формальный характер. Для осуществления эффективного управления в школе необходимо учитывать огромный опыт, закономерности и принципы управленческой науки, а также предлагаемые изменения в современной системе управления и образования. Цепь изменений, проводимых в сфере образования, и в частности, школьного управления, заставляет пересмотреть старые ценности, переосмыслить их, создать новые, которые обязательно должны основываться на возможностях и способностях каждого обучающегося и каждого субъекта.

**Ключевые слова и словосочетания:** управление школой, управление персоналом, профессиональная оценка, ресурс, планирование, обеспечение качества образования, общеобразовательный стандарт.

**INTERRELATION OF PRINCIPLES AND METHODS OF MANAGEMENT IN GENERAL EDUCATIONAL INSTITUTIONS**

**VAHAN MELIKSETYAN**
National Academy of Sciences of the Republic of Armenia
International Scientific-Educational Center
PhD in Pedagogical Sciences, Associate Professor
Lecturer, Department of Social Pedagogy
vmeliqsetyan0077@mail.ru

**Abstract**

At all times of humankind's existence, education has been and remains one of the essential spheres that ensures and contributes to the progress of society. Knowledge of modern management principles and methods and their interrelation are important for the operating efficiency of managing authorities in the education management system. The *relevance* of the work is associated with the significantly revised approaches to the principles, functions, methods, and styles of education management due to reforms implemented in the educational sector of the Republic of Armenia. As a result of the study of the current school management system, we found out that the process needs to be transformed and improved because, in the current situation, some management principles do not work, and some functions are of a formal character. In order to implement effective management in schools, it is utmost necessary to consider the vast experience, patterns, and principles accumulated by science on management, as well as the proposed changes in modern management and education system. The chain of changes in education, public education, and mainly school management makes us review the old values, reconsider them, and create new ones, which must necessarily be based on the capabilities and abilities of each learner, each person.

**Keywords and phrases:** school management, personnel management, professional evaluation, resource, planning, education quality assurance, general education standard.

**Ներածություն**

Բոլոր ժամանակներում կրթությունը կարևոր տեղ ու դեր է ունեցել և համարվել է մարդու գլխավոր հարստությունը: Յուրաքանչյուր պետության կայուն ու բարեկեցիկ առաջխաղացման հիմքը կրթությունն է: Փոխվել են ժամանակները, կրթության որակը ավելի է կարևորվել, հետևաբար էլ ավելի է բարձրացել նրա դերը: Կրթությունը հասարակության հիմքն է, որի միջոցով մարդը կատարելագործվում և ձգտում է ավելիին: Կրթությունը գիտելիքի, հմտությունների, արժեքների, վերաբերմունքի, ավանդույթների, սովորությունների ձեռքբերումն է, այն հանրային բարիք է, որի միջոցով ձևավորվում է մարդու իմացության մակարդակը, խորանում է շրջակա միջավայրը

ճանաչելու, ընտրություն կատարելու աստիճանը և այդ իմաստով մարդկային գործունեության բոլոր բնագավառների զարգացման ու կատարելագործման անհրաժեշտ պայման է:

*Կառավարում* հասկացությունը ընդգրկում է ողջ հասարակությունը: Կառավարման հաջողության համար կենսական նշանակություն ունի անհատների ակտիվ ներգրավումը և իրազեկ ու գիտակից մասնակցությունը: Կառավարման որակը հասարակության վրա մեծ ազդեցություն ունի: Կառավարումը դրսևորվում է որպես լիազորված մարմինների և անհատների նպատակաուղղված ներգործություն տնտեսական և սոցիալական գործունեություն իրականացնող կազմակերպությունների վրա:

Լայն առումով, այդ գործունեությունը մարդու և բնության հարաբերություն է, որը միջնորդավորվում է մարդու ստեղծած արտադրանքով: Հարկ է նշել նաև, որ *կառավարում* եզրույթը անգլերեն *մենեջմենթ* բառի հայերեն թարգմանություն է. դրանք գործածվում են որպես հոմանիշներ:

Կառավարման գիտության բազմաթիվ սահմանումներից որն էլ ընդունենք, կարելի է վստահորեն ասել, որ կառավարչական միտքը, բառիս լայն իմաստով, սկիզբ է առել անհիշելի ժամանակներից: Կառավարման անհրաժեշտությունը ծագել է մարդկանց համակեցության ամենասկզբից:

Անձնակազմի կառավարում եզրույթը արդի ժամանակներում գործածվում է անձնակազմի ընտրության, վերապատրաստման, հարմարման գործընթացները ներկայացնելու նպատակով: Անձնակազմի կառավարումը մարդկանց ղեկավարելու գործունեության ձևերից է, որի նպատակը որևէ հաստատության անդամների աշխատանքի, հմտության, փորձի կիրառման միջոցով նրա գործունեության բարելավմանը հասնելն է: Կառավարումը համապարփակ գործընթաց է, որի տեսությունը ստեղծվել է նախորդ դարավերջին: Հետազոտության *նպատակն* է ուսումնասիրել և համադրել *դպրոց* սոցիալական ինստիտուտի կառավարման սկզբունքներն ու մեթոդները, դրանց հարաբերակցությունը:

Հետազոտության *հիմնական խնդիրները* ենթադրում են ընդհանուր նպատակին հասնելու ուղիները:

Դրանք են՝

**ա.** ներկայացնել ժամանակակից դպրոցի կառավարման հիմքում ընկած մեթոդները.

**բ.** ուսումնասիրել և վերլուծել կառավարման դասական դպրոցների կողմից առաջադրված սկզբունքները, որոնք այսօր էլ արդիական են.

**գ.** դիտարկել դպրոցի կառավարման մեթոդների բազմազանությունը, բնութագրել յուրաքանչյուր մեթոդախմբին բնորոշ չափանիշները.

**դ.** ուսումնասիրել կառավարման սկզբունքների և մեթոդների փոխհարաբերակցությունը:

Հետազոտության *օբյեկտը դպրոց* սոցիալական ինստիտուտն է: Հետազոտության *առարկան* կրթության կառավարման սկզբունքները և մեթոդներն են, դրանց հարաբերակցությունը:

**Մեթոդաբանությունը:** Աշխատանքում ուսումնասիրվել, վերլուծվել և համեմատական մեթոդի միջոցով համադրվել են խնդրո առարկայի հետ առնչվող բազմաթիվ հիմնարար հարցեր: Աշխատանքի համար մեթոդաբանական հիմք են հանդիսացել կառավարման տեսության վերաբերյալ Ֆրեդերիկ Թեյլորի, Անրի Ֆայոլի գաղափարները:

**Հետազոտության գիտագործնական նշանակությունը:** Աշխատանքի *գիտական նշանակությունը* այն է, որ ուսումնասիրելով կրթության կառավարման սկզբունքներն ու մեթոդները՝ փորձել ենք, որքան հնարավոր է, համակողմանի ներկայացնել կրթության կառավարման ժամանակակից միջոցները, ցույց տալ դրանց տրամաբանական կապն ու հարաբերակցությունը, կարևորել այն հանգամանքը, որ կառավարման ողջ գործընթացում կառավարող սուբյեկտի յուրաքանչյուր գործողություն, նրա կողմից կիրառվող յուրաքանչյուր կառավարման մեթոդ պետք է բխի մասնագիտական սկզբունքներից՝ ստեղծված իրավիճակին համապատասխան: Աշխատանքի *գործնական նշանակությունն* այն է, որ կրթության կառավարման սկզբունքների, մեթոդների և դրանց հարաբերակցության ուսումնասիրությունը հնարավորություն կտա կառավարման համակարգում աշխատող կառավարող սուբյեկտներին պատկերացում կազմելու ժամանակակից կառավարման սկզբունքների և մեթոդների մասին՝ հետևելով արդի կրթությանը ներկայացվող պահանջներին՝ իրականացնել կրթության կառավարումը:

**Հանրակրթության կառավարման սկզբունքները որպես արդյունավետ կառավարման նախապայման**

Դպրոցի կառավարման ժամանակակից տեսությունը զարգանում է որպես սոցիալական կազմակերպությունների կառավարման ընդհանուր տեսության մի մաս: Այն ունի կառավարման իր կարևոր առանձնահատկությունները, որոնք նրան առանձնացնում են այլ տեսակի սոցիալական կազմակերպությունների կառավարումից:

Հայաստանի Հանրապետությունում հասարակական հարաբերությունների կտրուկ փոփոխությունն այսօր պահանջում է կրթության նոր մակար-

դակ, որը ենթադրում է նոր բովանդակություն, կոնկրետ իրականանալի նպատակներ, հստակ ռազմավարություն, մարտավարություն և կառավարման նորագույն տեխնոլոգիաներ: Կրթության համակարգի իրավասությունների, լիազորությունների աստիճանական փոխանցումը ենթահամակարգերին ենթադրում է կառավարման նոր սկզբունքներ, նոր գործառույթներ, նորամուծություններ, որոնք թափանցել են կրթության ոլորտ, և ապահովում են դպրոցի՝ որպես կրթական համակարգի առաջին օղակի զարգացումը:

Կատարված փոփոխությունները հանգեցնում են դպրոցի կառավարման խնդիրների փոփոխության և նոր գիտականորեն հիմնավորված միջոցներ, տեխնոլոգիաներ ու պայմաններ են առաջադրում դրանց լուծման համար:

Կառավարվող բոլոր համակարգերը՝ տնտեսական, սոցիալական, մանկավարժական և այլն, պահանջում են կառավարման բարձր արվեստ, տեսական մեթոդաբանական խոր իմացություն:

Հանրակրթության բնագավառում պետությունը երաշխավորում է հետևյալ սկզբունքների ապահովումը՝

1. Հանրակրթության մարդասիրական բնույթը, ազգային և համամարդկային արժեքների, մարդու կյանքի ու առողջության, անհատի ազատ և համակողմանի զարգացման առաջնայնությունը, քաղաքացիական գիտակցության կարևորումը, անհատի և նրա իրավունքների ու ազատությունների նկատմամբ հարգանքը, արժանապատվությունը, հայրենասիրությունը, աշխատասիրությունը, պատասխանատվությունը, հանդուրժողականությունը, բնապահպանական աշխարհայացքի ձևավորումը:

2. Հանրակրթության հավասար հնարավորությունները, մատչելիությունը, շարունակականությունը, հաջորդականությունը և համապատասխանությունը սովորողների զարգացման մակարդակին, առանձնահատկություններին ու պատրաստվածության աստիճանին:

3. Հանրակրթության բնագավառում ժողովրդավարական կառավարման սկզբունքների ապահովումը:

4. Ուսումնական հաստատություններում ստեղծագործական աշխատանքի խթանումը, սովորողների վերլուծական, քննադատական մտածողության, գիտելիքի ինքնուրույն ձեռքբերման և կիրառման, տեղեկատվական տեխնոլոգիաների գործածման ունակությունների զարգացման առաջնայնությունը:

5. Հանրակրթության որակի շարունակական բարելավումը, միջազգային չափանիշներին համապատասխանությունը, ինչպես նաև՝ միջազգային կրթական համակարգին ինտեգրումը:

6. Ուսումնական հաստատությունների ինքնավարության և պետական վերահսկողության հավասարակշռումը:

7. Անկախ կազմակերպական-իրավական ձևից՝ ուսումնական հաստատությունների և դրանցում սովորողների ու աշխատողների իրավահավասարությունը:

8. Հանրակրթական և այլ կրթական ծրագրերի փոխհամաձայնեցվածությունը [3, 32]:

**Կառավարման հիմնական գործառույթները**

Կառավարչական գործունեությունը բաղկացած է հաջորդաբար կրկնվող և փոխադարձաբար կապված գործողություններից, այսինքն՝ կառավարման գործառույթներից, որոնք կազմում են կառավարման գործընթացի կարևորագույն բաղադրամասը և արտահայտում են դրա էությունը: Կառավարման գործառույթը կառավարման տեսության հիմնարար հասկացություններից է: Կառավարման գործառույթները դասակարգվում են ըստ այն հատկանիշների, որոնք առավել ընդհանրական են կառավարման գործընթացի բովանդակության և գործունեության ոլորտի պատկանելության տիրույթներում: Մասնագիտական գրականության մեջ առկա է կառավարման հիմնական գործառույթների դասակարգումը՝ պլանավորում, կազմակերպում, շահամիտում, վերահսկողություն: Այժմ համառոտ դրանց բովանդակության մասին:

**ա.** Մասնագիտական գրականության մեջ «պլանավորումը» սահմանվում է որպես կազմակերպության գործունեության նպատակների, դրանց իրագործման մեթոդների և ուղիների կանխատեսում: Այն կազմակերպության նպատակների սահմանումն է ու դրանց հասնելու միջոցառումների համալիրը: Պլանավորումը կառավարման միջուկն է, որի հիման վրա կազմակերպվում և նպատակաուղղվում է կոլեկտիվի (տվյալ դեպքում՝ կրթական համակարգի) գործունեությունը, ապահովում է այդ գործունեության հեռանկարային բնույթը:

**բ.** Կառավարման հիմնական գործառույթներից հաջորդը՝ կազմակերպումը, կառավարաբանական գրականության մեջ սահմանվում է իբրև ձեռնարկության նպատակների իրականացման միջոցների ու պայմանների ապահովում, կառուցվածքի ստեղծում, որը մարդկանց հնարավորություն է տալիս արդյունավետ աշխատելու հանուն առաջադրված նպատակների:

Կազմակերպումը լայն և ընդգրկուն երևույթ է, որի ամենախոր ու սեղմ բնութագրումը տվել է Ֆրիդրիխ Շելլինգը՝ «Աշխարհը կազմակերպություն է» [25, 14]:

**գ.** Շահամիտման (մոտիվացիա) գործառույթը արտահայտում է կառավարման առավել խորքային էությունը: Շահամիտման միջոցով է, որ կառավարողը ներազդում է կառավարվողի վարքի վրա՝ ձգտելով իրականացնել իր նպատակները: «Պատճառաբանման» գործառույթը կառավարման բնագավառում աշխատող ցանկացած տեսաբանի առանձնակի ուշադրության առարկան է [40, 32]:

Պատճառաբանում ասելով՝ արևմուտքում, ինչպես նաև՝ Ճապոնիայում հասկանում են մարդու դրդիչ գործոնների այնպիսի կարգավորում, որի դեպքում նրա մեջ առաջանում է այնպես աշխատելու ցանկություն, որ նպաստի կազմակերպության նպատակների իրականացմանը:

Գ. Վերահսկողությունը, որպես կառավարման գործառույթ, կազմակերպությունների կողմից իրենց առաջ դրված նպատակներին հասնելու ապահովման գործընթաց է: Վերահսկողությունը կառավարման հիմնական (ընդհանուր) եզրափակիչ գործառույթն է, առանց որի անհնար է գործնականում արդյունավետորեն իրականացնել կառավարման մյուս երեք ընդհանուր գործառույթները (պլանավորումը, կազմակերպումը և մոտիվացիան): Անրի Ֆայոլը կարծում է. «վերահսկողությունն իրենից ներկայացնում է այն բանի հաստատումը, թե ամեն ինչ ընթանում է հաստատված պլանին, գոյություն ունեցող դիրեկտիվ փաստաթղթերին և գործող սկզբունքներին համապատասխան» [25, 23]:

**Հանրակրթության պետական չափորոշիչը դպրոցի կառավարման համակարգում**

Հանրակրթության պետական նոր չափորոշիչը դպրոցի կառավարման համակարգում նոր հորիզոններ է բացում, նոր հնարավորություններ է ստեղծում, թույլ է տալիս բարելավել հանրակրթական դպրոցի կառավարման գործընթացը, դպրոցին տալիս է ինքնուրույնություն, որպեսզի դպրոցը կարողանա առավելագույնս օգտագործել սովորողների և իր ներուժը, տարածաշրջանի, համայնքի հնարավորությունները [5]:

Նոր չափորոշիչը ավելի ճկուն աշխատելու հնարավորություն է տալիս՝ կտրուկ փոփոխություն և ավելի ճկուն համակարգ: Չափորոշիչը նկարագրում է առարկայացանկի ձևավորման սկզբունքները, և դպրոցներին հնարավորություն է տրվում ընտրելու իրենց ուսումնական պլանները, իսկ պետության վերահսկողությունը լինելու է վերջնարդյունքների միջոցով:

ՀՀ կառավարութունը 2021 թվականի փետրվարի 4-ի նիստում հաստատեց Հանրակրթության պետական չափորոշիչը, որի հիմքի վրա ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարը հաստատեց առարկայական ծրագրերն ու չափորոշիչները:

Մինչ Կառավարության հաստատմանը ներկայացվելը Հանրակրթության պետական չափորոշչի նախագիծն անցավ հանրային և մասնագիտական քննարկումների տևական փուլ, ներկայացված բազմաթիվ առաջարկների հիման վրա նախագիծը շտկվեց, խմբագրվեց ու լրամշակվեց:

Հանրակրթության պետական չափորոշիչը բխում է կարողունակությունների վրա հիմնված մոտեցումից և սահմանում է շրջանավարտներին ներկայացվող որակական պահանջները՝ ըստ կրթական աստիճանների (կարողունակություններ (կոմպետենցիաներ) և ըստ կրթական աստիճանների ուսումնառության՝ ակնկալվող վերջնարդյունքներ), ուսումնական բնագավառները, դրանց բովանդակությանը ներկայացվող պահանջները, հանրակրթական հիմնական ծրագրերի բովանդակության պարտադիր նվազագույնը, ուսումնական պլանի և առարկայացանկերի ձևավորման հիմնական սկզբունքները, սովորողների գնահատման ձևերը, սանդղակը, հաշվառման կարգը:

**ա.** Հանրակրթական հիմնական ծրագրերը (տարրական, հիմնական և միջնակարգ)մշակվում են Չափորոշչի նորմերի և դրույթների համաձայն:

**բ.** Չափորոշիչը նպատակաուղղված է հավասարապես հասանելի, ներառական և որակյալ կրթության քաղաքականության ապահովմանը:

**գ.** Չափորոշչի պահանջները պարտադիր են հանրակրթական հիմնական և այլընտրանքային ծրագրերի, այդ թվում՝ առարկայական ծրագրերի, ուսումնական պլանների, դասագրքերի և ուսումնական գործընթացի բովանդակությանն առնչվող այլուսումնական նյութերի համար:

**դ.** Չափորոշչի պահանջները պարտադիր են հանրակրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների համար՝ անկախ դրանց կազմակերպական-իրավական ձևից և ենթակայությունից: Հանրակրթության պետական նոր չափորոշչով սահմանված են հետևյալ ութ կարողունակությունները:

**ե.** Կարողունակությունները սովորողի կողմից ուսումնառության և դաստիարակության գործընթացում ձեռք բերված գիտելիքի, արժեքների, հմտությունների և դիրքորոշումների հիման վրա ըստ իրավիճակի արդյունավետ ու պատշաճ արձագանքելու ձևերն են: Կարողունակությունները ձևավորվում են սովորողի ուսումնառության ընթացքում ուսուցման կազմա-

կերպման տարբեր ձևերի, սովորողի կողմից ուսումնական առարկաների ծրագրերի բովանդակության յուրացման, ինչպես նաև ուսուցման գործընթացում դաստիարակության միջոցով և բխում են հանրակրթության հիմնական նպատակներից:

Հանրակրթական տարրական, հիմնական և միջնակարգ ծրագրերի սովորողների ուսումնառության ակնկալվող վերջնարդյունքները նկարագրում են, թե հանրակրթական հիմնական ծրագրերի կրթական աստիճանների ավարտին սովորողը ինչ պիտի իմանա, կարողանա անել և հասկանա: Վերջնարդյունքներն ուղղված են կարողունակությունների ձևավորմանը:

Միջնակարգ կրթության կարողունակություններն են՝

*1. Լեզվական գրագիտություն և կարողունակություն.* Սովորողները տիրապետում են հայոց լեզվին, գրավոր և բանավոր կերպով գրագետ հաղորդակցվում են մայրենի լեզվով և այլ օտար լեզուներով՝ ըստ լեզվական կանոնների և իրավիճակների: Նրանք կիրառում են լեզուն՝ որպես ուսումնառության և հասարակական կյանքին մասնակցության համապիտանի գործիք: Ընդհանուր գրագիտությունը կազմում է սովորելու և լեզվական հաղորդակցության հիմքը, որի հիման վրա կարող են ձևավորվել գրագիտության մյուս ձևերը (քաղաքացիական, բնապահպանական, տնտեսական, ֆինանսական, իրավական, առողջապահական, գիտատեխնիկական, թվային և այլն): Սովորողներն ընդունակ են բանավոր և գրավոր ձևերով ճանաչել, ըմբռնել, արտահայտել, ստեղծել և մեկնաբանել տարբեր հայեցակարգեր, փաստեր և կարծիքներ՝ օգտագործելով տարբեր առարկաներին և իրավիճակներին առնչվող տեսողական, ձայնային և թվային նյութեր:

*2. Սովորելու կարողունակություն,* սովորողներն ինքնուրույն և մյուսների հետ համատեղ արդյունավետ սովորում և աշխատում են կյանքի տարբեր իրավիճակներում: Նրանք ճանաչում են իմացության սահմանները: Սովորողները ինքնակազմակերպվում են և ձևավորում են ժամանակի արդյունավետ կառավարման հմտություններ: Նրանք կարողանում են գնահատել սեփական և ուրիշների ֆիզիկական ու հոգեբանական հնարավորությունները, սովորում են աշխատել ծանրաբեռնվածության պայմաններում: Սովորելու ընթացքում աշակերտները ձևավորում են իրողությունները քննադատաբար և բազմակողմանի ուսումնասիրելու, վերլուծելու, ինչպես նաև ստեղծագործական ու նորարար մոտեցումներ կիրառելու ունակություններ: Սովորողները ձևավորում են համակարգային և ինտեգրված մտածողություն:

*3. Ինքնաճանաչողական և սոցիալական կարողունակություն.* սովորողներն ընդունակ են ինքնանդրադարձման և ինքնակազմակերպման մի-

ջոցով ձգտելու ինքնաճանաչման: Նրանք ձևավորում են վստահություն սեփական ուժերի և կյանքի հանդեպ և հաջողությամբ կառավարում են սեփական ժամանակը, գիտելիքներն ու հմտությունները, կարողանում են դրսևորել առողջ և անվտանգ կենսակերպ, ինչպես նաև մասնագիտական կողմնորոշում: Սովորողները դրսևորում են հարգանք, ազնվություն և պատասխանատվություն ինչպես սեփական անձի, այնպես էլ այլոց հանդեպ՝ անկախ տարիքից, սեռից, ազգությունից, բարեկեցության աստիճանից, արտաքին տեսքից, ընդունակություններից, մասնագիտությունից, համոզմունքներից և այլ առանձնահատկություններից: Նրանք սոցիալական հարաբերություններում գործում են կառուցողական և համերաշխ, դրսևորում են ընկերակցելու ունակություն և կոնֆլիկտների խաղաղ և համագործակցային կարգավորման հմտություններ: Տարբեր մշակույթների, կրոնների, աշխարհայացքների և կյանքի կազմակերպման անհատական պատկերացումների հետ առնչվելու արդյունքում սովորողները ընդունակ են ճանաչելու դրանց տարբերությունները:

*4. Ժողովրդավարական և քաղաքացիական կարողունակություն.* սովորողները նպաստում են ժողովրդավարության, ազատության, բարեվարքության, սոցիալական արդարության և իրավական պետության գաղափարի վրա հենվող հասարակության զարգացմանը: Նրանք ճանաչողության միջոցով ձևավորում են սեր հայրենիքի նկատմամբ, գիտակցում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունից բխող ազգային, պետական, հասարակական շահերն ու առաջնահերթությունները տրածաշրջանային և համաշխարհային մակարդակներում: Սովորողներն արժևորում են մարդու կյանքն ու արժանապատվությունը, կարևորում են սեփական քաղաքացիական պարտքը, քաղաքացիական մասնակցության մշակույթը՝ որպես ժողովրդավարության կենսունակության հիմք: Նրանք ճանաչում են հասարակության կյանքի մշակութային, պետաիրավական և տնտեսական ոլորտներն ու համակողմանի վերլուծում են դրանք, ցուցաբերում են նախաձեռնողականություն, ինքնուրույն որոշումներ կայացնելու, դրանք իրագործելու ունակություն և հետևանքների համար պատասխանատու լինելու պատրաստակամություն, թվային և մեդիա կարողունակություն, սովորողները տիրապետում են մեդիագրագիտության կանոններին ու հմտություններին, պատկերացնում են մեդիայի աշխատանքը և դերը ժողովրդավարական հասարակությունում, կարողանում են կողմնորոշվել տեղեկատվության հոսքերում, գտնել և տարածել տեղեկություններ, քննադատորեն վերլուծել դրանք, գնահատում են մեդիայի ազդեցությունը սեփական և այլոց արժեքային պատկե-

րացումների, դիրքորոշումների և գործողությունների վրա: Թվային մեդիայի օգտագործման հնարավորությունների կողքին գիտակցում են նաև դրանց հետ կապված ռիսկերը, ունակ են գնահատելու և վերափոխելու իրենց վարքը թվային աշխարհում՝ անվտանգության, պատասխանատվության և էթիկայի տեսանկյունից: Տիրապետում են մեդիա արտադրանք ստեղծելու տեխնիկական և ստեղծագործական հմտություններին, ինչպես նաև կարողանում են արդյունավետորեն կիրառել մեդիա գործիքները քաղաքացիական իրավունքների իրացման ու ժողովրդավարական գործընթացների մասնակցության նպատակով:

*5. Թվային և մեդիա կարողունակություն.* սովորողները տիրապետում են մեդիագրագիտության կանոններին ու հմտություններին. պատկերացնում են մեդիայի աշխատանքը և դերը ժողովրդավարական հասարակությունում, կարողանում են կողմնորոշվել տեղեկատվության հոսքերում, գտնել և տարածել տեղեկություններ, քննադատորեն վերլուծել դրանք, գնահատում են մեդիայի ազդեցությունը սեփական և այլոց արժեքային պատկերացումների, դիրքորոշումների և գործողությունների վրա: Թվային մեդիայի օգտագործման հնարավորությունների կողքին գիտակցում են նաև դրանց հետ կապված ռիսկերը, ունակ են գնահատելու և վերափոխելու իրենց վարքը թվային աշխարհում՝ անվտանգության, պատասխանատվության և էթիկայի տեսանկյունից: Տիրապետում են մեդիա արտադրանք ստեղծելու տեխնիկական և ստեղծագործական հմտություններին, ինչպես նաև կարողանում են արդյունավետորեն կիրառել մեդիա գործիքները քաղաքացիական իրավունքների իրացման ու ժողովրդավարական գործընթացների մասնակցության նպատակով,

*6. Մշակութային կարողունակություն.* սովորողները ճանաչում են հայ մշակույթն ու մարդկային քաղաքակրթությունների մշակութային բաղադրիչները՝ որպես մարդկայինզգացմունքների և գործողությունների կողմնորոշիչներ: Նրանք արժևորում են սեփական ինքնությունը, ընտանիքի, համայնքի և պետության դերը, ունեն Հայաստանի աշխարհագրության, հասարակական-քաղաքական համակարգի և պատմության հիմնարար իմացություն: Աշակերտները ձևավորում են սեփական նախասիրություններ ազգային և համաշխարհային մշակութային ժամանակաշրջանների ուսումնասիրության ընթացքում: Նրանք ի վիճակի են զարգացնելու սեփական մշակութային ու գեղագիտական պատկերացումները՝ արժևորելով հոգևոր և նյութական ժառանգությունն ու մշակութային բազմազանությունը, ճանաչելով հայ և համաշխարհային գրականությունն ու արվեստը և ձևավորելով մշակութային

գրագիտություն և ճաշակ:

*7. Մաթեմատիկական և գիտատեխնիկական կարողունակություն.* սովորողներն առօրյա կյանքում գործածում են մաթեմատիկական մտածողություն՝ բնության, հասարակության, մշակույթի և աշխատանքային ոլորտի երևույթները ճանաչելու և դրանք մաթեմատիկական կառուցվածքների, բանաձևերի, մոդելների, կորերի, աղյուսակների միջոցով հասկանալու համար: Աշակերտները կարողանում են ընկալել և արդյունավետ կիրառել վերացարկված և ընդհանրացված հասկացությունները և ճանաչել իրականության մեջ դրանց արտացոլումները: Նրանք ընկալում են բնագիտական մտածողության և աշխատանքի, ինչպես նաև տեխնիկական առաջընթացի միջև եղած փոխադարձ կապը: Աշակերտներն ընկալում են տեխնոլոգիական գիտելիքի կիրառման հնարավորությունները մարդու պահանջմունքների համատեքստում, ճանաչում են մարդու գործունեության արդյունքում ի հայտ եկող փոփոխությունները ու սեփական պատասխանատվությունը:

*8. Տնտեսական կարողունակություն.* աշակերտները համարժեք վերլուծում և գնահատում են մասնավոր ձեռնարկատիրության, ժողովրդական տնտեսության և համաշխարհային տնտեսական մակարդակներում տեղի ունեցող տնտեսական գործընթացները և պետության դերը տնտեսության մեջ, ինչպես նաև այդ գործընթացներում ճանաչում, գնահատում և արժևորում են կնոջ և տղամարդու ունեցած դերը: Նրանք հասկանում են հասարակության, տնտեսության և քաղաքականության միջև եղած փոխազդեցությունները: Աշակերտներն ընկալում են տնտեսական և հասարակական կարգերն ու ճանաչում են բնության և հասարակության փոխազդեցությունները, ինչպես նաև՝ կայուն զարգացման ու շրջակա միջավայրի պահպանության գործում սեփական դերն ու պատասխանատվությունը:

Չափորոշիչը սահմանում է, որ հանրակրթական հիմնական ծրագրերի բովանդակությունը նպատակաուղղված է ուսումնառության ակնկալվող վերջնարդյունքների միջոցով կարողունակությունների ձևավորմանը, ներկայացված է բովանդակության բաղադրիչներով, ուսումնական բնագավառներով և որոշակիացվումէ ուսումնական առարկաների ծրագրերում:

Հանրակրթական ծրագրերի բովանդակության պարտադիր նվազագույնը սահմանվում է ըստ կրթական ծրագրերի աստիճանների՝ ուսումնական բնագավառների ուղղվածությանը համապատասխան առարկայական չափորոշիչների, ծրագրերի միջոցով և սույն չափորոշչի համաձայն ներառում է հանրակրթության ընդհանուր նպատակներին համապատասխան ընտրված ու սովորողի կողմից յուրացման համար նախատեսված գիտելիք-

ները, մանկավարժորեն և հոգեբանորեն չափորոշված-հարմարեցված սոցիալական փորձը, մշակութային, բարոյական ու գեղագիտական, ազգային և համամարդկայինարժեքները:

Չափորոշչով սահմանվում են հանրակրթության հիմնական ծրագրերի բովանդակության հետևյալ բաղադրիչները՝ *գիտելիք, հմտություն, դիրքորոշում, արժեքային բաղադրիչ:*

**Եզրակացություն**

Կրթության, հանրակրթության, մասնավորապես դպրոցի կառավարման ոլորտում իրականացվող փոփոխությունների շղթան ստիպում է վերանայել հին արժեքները, վերաիմաստավորել դրանք, ստեղծել նորերը, որոնց հիմքում անպայմանորեն պետք է ընկած լինի յուրաքանչյուր սովորողի, յուրաքանչյուր սուբյեկտի հնարավորությունները, ունակությունները: Թեմային առնչվող գրականության ուսումնասիրությունից, հարցումների, նորմատիվային փաստաթղթերի՝ օրենքների, իրավական ակտերի ուսումնասիրությունների արդյունքների վերլուծությունից հանգեցինք հետևյալ եզրակացությունների՝

**ա.** Դպրոցի կառավարման արդյունքը պետք է լինի՝ վերափոխել հանրակրթական դպրոցն այնպես, որ այն դառնա ստեղծագործ միջավայր, որտեղ բոլոր սուբյեկտները որոշում կայացնելու հնարավորություն կունենան, ստեղծագործ աշխատանքի համար հնարավորություն կունենան:

**բ.** Դպրոցի կառավարման գործընթացում մեծացնել սովորողների, ծնողների ներգրավվածությունը ոչ թե ձևականորեն, ինչպես հիմա է, այլ իրական ներգրավվածություն պետք է ապահովել: Ճիշտ է, ուսումնական հաստատության կառավարմանը մասնակցում են նաև ուսումնական հաստատության աշակերտական խորհրդի անդամները՝ խորհրդակցական ձայնի իրավունքով, բայց կարևոր է սովորողների հետ քննարկել այն բոլոր հարցերը, որոնք հենց նրանց են վերաբերում, պետք է անպայման հաշվի առնելնրանց կարծիքը՝ չմոռանալով, որ ամեն ինչ առաջին հերթին նրանց համար է արվում, և որ դպրոցում կատարվող բոլոր գործողությունների առանցքում, ելակետում ու վերջնակետում պետք է երեխաները լինեն:

**գ.** Գրականության ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ դպրոցի կառավարման համակարգը կուռ համակարգ է, ունի իր սկզբունքները, գործառույթները, սակայն բարեփոխման ու նորացման կարիք ունի:

**դ.** Դպրոցում արդյունավետ կառավարում իրականացնելու համար

անպայման պետք է հաշվի առնել կառավարման մասին գիտության կուտակված հսկայական փորձը, օրինաչափությունները, սկզբունքները, ինչպես նաև ժամանակակից կառավարաբանության ու կրթության համակարգի առաջարկվող փոփոխությունները:

**ե.** Դպրոցի կառավարման համակարգի արդյունավետությունը որոշվում է բոլոր սուբյեկտների ակտիվ ներգրավվածությամբ, դպրոցում իրականացվող բոլոր գործընթացների զարգացմամբ:

## Օգտագործված գրականության ցանկ


1. ՀՀ սահմանադրություն, 1995 թ., փոփոխություններով, ընդ. 06.12.2015:
https://www.arlis.am/documentview.aspx?docID=143723

2. Կրթության մասին ՀՀ օրենք, Ե., 1999:
https://www.arlis.am/documentview.aspx?docID=68299.

3.Հանրակրթության մասին ՀՀ օրենք, Ե., 2009, փոփոխություններով, ընդ. 06.03.2022:
https://www.arlis.am/documentview.aspx?docid=71908.

4. Հանրակրթության պետական չափորոշիչ, ընդ. 04.02.2021:
https://www.arlis.am/documentview.aspx?docid=149788.

5. ՀՀ պետական հանրակիրթական ուսումնական հաստատություն ոչ առևտրային կազմակերպության օրինակելի կանոնադրություն, Ե., 2017:
https://www.arlis.am/documentview.aspx?docid=114876.

6. Հանրակրթական դպրոցի տնօրենի ուղեցույց, պրակ 1, Կրթակարգ, Ե., ԿԱԻ, 2004, 240 էջ:

7. Ա. Երիցյան, Ա. Ճուղուրյան, Բոլոնիայի գործընթացը և կրթության որակի հիմնախնդիրները, Ե., Էդինթ Պրինտ 2008:

8. Ս. Խրիմյան, Ա. Հովսեփյան ևք, Դպրոցի կառավարում և ղեկավարում, Ե., 2003:

9. Գ. Ղուկասյան, Մանկավարժություն, հ. 2, Ե., Զանգակ-97, 2005, 232 էջ:

10. Վ. Ա. Միրզոյան, Կառավարման ամբողջականությունը: Կառավարում, Ե., Տնտեսագետ, 2000, 500 էջ:

11. Վ. Ա. Պրոննիկով, Ի. Դ. Լադանով, Ճապոնացիները, Ե.,1989, 420 էջ:

12. Сергеева В. П., Управление образовательними системами, М., 2004.

13. Шамова Т. И., Третьяков П. И., Капустин Н. П., Управление образовательными системами, Учеб. Пособие, М., 2004.

14. Менеджмент в управлении школой; Учеб. Пособие, М., 1992.

# ՀԵՏԿԱՌՈՒՑՎԱԾՔԱԲԱՆԱԿԱՆ ՏԵՔՍՏԸ ՈՐՊԵՍ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆ

**ՆԱԻՐԱ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ**
ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիա,
Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտ,
ավագ գիտաշխատող,
բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ
nairahambardzumyan@litinst.sci.am,

**Համառոտագիր**

Ուսումնասիրությունը ընդգրկում է 20-րդ դարավերջին և 21-րդ դարասկզբին ի հայտ եկած սոցիալական երևույթները, որոնք առավել նշանավորեցին գրավոր մշակույթը և սոցիալական հիշողության գոյության նոր փուլում հնարավոր դարձրին *հեղինակ-մեկնաբան-տեքստ* փոխներթափանցումները տեքստի, տեղեկատվական լուծումների և դրանց տեսականացման տիրույթներում:

Ուսումնասիրության *նպատակն* է՝ քննել տեքստի կազմավորմանն առնչվող տեսական հասկացությունների հնարավոր գոյությունը և նշանավորել տեքստը որպես սոցիալական հիշողություն:

Ուսումնասիրության *խնդիրն* է՝ տեքստ-սոցիում փոխներթափանցումները հիմնավորել սոցիալական հիշողության առանձնահատկությունների միջոցով:

Ուսումնասիրության *գիտական նորույթը* այն է, որ *տեքստի հասկացման* մեթոդոլոգիական գործառույթները հետազոտվել են տեքստի պարունակության և *սոցիալական հիշողության* օբյեկտիվացված գոյության համատեքստում:

Ուսումնասիրության *արդիականությունը* պայմանավորված է ուսումնասիրվող նյութի միջգիտակարգայնությամբ, ըստ որի՝ այն վերլուծվել է գրականության տեսության, լեզվաբանության և սոցիոլոգիայի միջև փոխադարձ կապերի և առնչությունների համատեքստում՝ համապատասխան մեթոդների կիրառությամբ:

Այսօրինակ ուսումնասիրություն կատարվում է առաջին անգամ: Այն կարևոր է և արդիական ոչ միայն միջգիտակարգայնության, այլև տեսաբանության մեջ *տեքստին* առնչվող հիմնախնդիրների քննության տեսանկյունից: Ըստ ուսումնասիրության արդյունքների՝ բացահայտվել են նաև *տեքստ* հասկացությունը գործառող որոշ սոցիալ-հաղորդակցական դրսևորումներ,

որոնք իմաստավորել են տեքստի հասկացման գործընթացները հետմոդեռնիզմի ժամանակաշրջանում:

**Բանալի բառեր և բառակապակցություններ.** հետկառուցվածքաբանություն, հետմոդեռնիզմ, տեքստ և սոցիում, սոցիալական հիշողություն, օքսիմորոն, գենոտեքստ, ֆենոտեքստ:

# ПОСТСТРУКТУРНЫЙ ТЕКСТ КАК СОЦИАЛЬНАЯ ПАМЯТЬ

**НАИРА АМБАРЦУМЯН**
Национальная академия наук Республики Армения,
Институт литературы имени Манука Абегяна,
старший научный сотрудник,
кандидат филологических наук, доцент,
nairahambardzumyan@litinst.sci.am

**Аннотация**

Исследование включает в себя социальные явления, возникшие в конце XX-начале XXI века, которые в наибольшей степени ознаменовали письменную культуру и сделали возможным взаимопроникновение автора-интерпретатора-текста в области текста, информационных решений и их теоретизирования в новый этап существования социальной памяти.

*Цель* исследования - изучить возможность существования теоретических концепций, связанных с формированием текста, и обозначить текст как социальную память.

*Задача* исследования состоит в том, чтобы обосновать взаимопроникновение текста и общества через особенности социальной памяти.

*Научная новизна* исследования заключается в том, что методологические функции понимания текста исследовались в контексте содержания текста и объективированного существования социальной памяти, такой, как исходный текст.

*Актуальность* исследования определяется междисциплинарным характером изучаемого материала, который был проанализирован в контексте взаимосвязей и взаимоотношений между литературоведением, языкознанием, социологией с использованием соответствующих методов. Такое исследование проводится впервые. Это важно и актуально не только с точки зрения междисциплинарности, но и с точки зрения рассмотрения проблем, связанных с теорией литературы.

По результатам исследования также были выявлены некоторые социально-коммуникативные проявления с использованием концепта текста, придававшие смысл процессам понимания текста в период постмодернизма.

**Ключевые слова и словосочетания:** постструктурализм, постмодернизм, текст и общество, социальная память, оксюморон, генотекст, фенотекст.

# POSTSTRUCTURAL TEXT AS SOCIAL MEMORY

**NAIRA HAMBARDZUMYAN**
National Academy of Sciences of the Republic of Armenia,
Institute of Literature after Manuk Abeghyan,
Senior Researcher,
PhD in Philology, Associate Professor,
nairahambardzumyan@litinst.sci.am

**Abstract**

This study involves the social phenomena that arose in the late 20th and early 21st centuries, which significantly influenced the written culture and allowed for *author-interpreter-text* interpenetrations in the fields of text and information solutions, as well as their theorization in the new stage of social memory existence.

The study aims to explore the possibility of the existence of theoretical concepts related to the formation of the text and designate the text as a social memory.

The *problem* of the study is to substantiate the interpenetration of text and society through the features of social memory.

The scientific *novelty* of the study is constituted by the fact that the methodological functions of understanding the text were studied in the context of the content of the text and the objectified existence of *social memory*, such as the original text.

The *actuality* of the study is conditioned by the interdisciplinary nature of the material under study, according to which it was analyzed in the context of interconnections and interrelations between Literary Theory, Linguistics and Sociology with the application of appropriate methods. This kind of study has been attempted for the first time.

This is important and relevant not only from the point of view of interdisciplinarity but also from that of considering *text-related* problems.

The research results helped reveal some social-communicative manifestations using the concept of *text*, which gave meaning to the processes of understanding the text in the period of postmodernism.

**Keywords and phrases:** poststructuralism, postmodernism, text and society, social memory, oxymoron, genotext, phenotext.

## Ներածություն

1970-1980-ական թվականներին *տեքստ* հասկացությունը դիտարկելի էր առավելապես պատմականության տիրույթում և ընդգրկում էր սուբյեկտի անհատական զգացողությունները *թե ինչպես պատահեց*-ի շարույթում: 2000-ական թվականներին այն առնչվում էր առավելապես *տեքստի* էութաբանական հատկանիշներին, որոնց միջոցով մերժվում էր հիսթորիզմը՝ տեքստի հիմքում ունենալով պատմականությունը և դրանք

առնչվող մի շարք կարգավորումներ: Սույն հանգամանքը տարբերակող առանձնահատկություններից մեկը լեզվի գերակայությունն է փորձի նկատմամբ, որը նախ և առաջ ենթադրում է մարդու ներաշխարհի արտացոլումը սոցիումի գոյաբանության ներքին տիրույթում: Այս երևույթը այլ կերպ անվանում ենք *հետմոդեռնիզմ*:

20-րդ դարավերջին և 21-րդ դարասկզբին ի հայտ եկած սոցիալական երևույթների բազմազանությունը առավել նշանավորեց գրավոր մշակույթը և սոցիալական հիշողության գոյության նոր փուլում հնարավոր դարձրեց *հեղինակ-մեկնաբան-տեքստ* փոխգործակցությունը *տեքստ-տեղեկատվություն* լուծումների և դրանց տեսականացման տիրույթներում: Այս հանգամանքը հնարավոր է հիմնավորել *սոցիալական հիշողության* առանձնահատկությունների միջոցով, որոնց ենթադրում են՝

ա. տեքստ-սոցիում հարաբերությունները,

բ. տեսական ըմբռնումների հնարավորությունը և նշանակությունը տեքստում որպես հայտնագործում,

գ. տեքստը որպես սոցիալական հիշողություն:

**Հեղինակ-լեզու-տեքստ**

*Տեքստ* հասկացության իմաստավորումը հետմոդեռնիզմի ժամանակաշրջանում ի սկզբանե հիմնավորվում է Ֆերդինանդ դե Սոսյուրի տեսության միջոցով, ըստ որի՝ ընդգծվում են լեզվի՝ որպես համակարգի *ներքին* ու *արտաքին* կառուցվածքաբանական հատկանիշները: **[9]** Ըստ Սոսյուրի՝ լեզուն չեզոք և լճացած երևույթ չէ, թեպետ կառավարվում է սեփական համակարգերի **[9]** միջոցով: Այդ պատճառով էլ *բառ-օբյեկտ-գաղափար* կապը արտացոլվում է *նշանակելիի* ու *նշանակության* միասնական տիրույթում: Սա ինքնաբուխ երևույթ է, քանի որ գործնականում հնարավոր չէ գտնել երկու լեզուներ, որոնցում *բառ-օբյեկտ* հարաբերակցությունը ընկալվում է միևնույն կերպ, քանի որ մտավոր աշխատանքի հետևանքով ստեղծված որոշակի պատկերները, որոնք սերում են մեկ լեզվից, գտնվում են մյուսի սահմաններից դուրս: Ստացվում է, որ լեզուն գործառվում է միմյանց չառնչվող երկու երևույթների՝ խոսքից գրականություն անցումներով, որոնք կարևոր է դիտարկել սեփական օրենքները ունեցող լեզվական համակարգի համատեքստում և ոչ թե իրականության արտացոլման, քանի որ լեզուն միավորում է աշխարհը, իսկ համակարգը՝ նրա շուրջ եղած պատկերացումները: Լեզվի այսօրինակ ըմբռնումը նվազեցնում է հեղինակի դերակատարությունը, քանի որ տեքստի իմաստային տիրույթը առնչվում է լեզվի ձևական կողմերին ոչ պակաս, քան հեղինակին: Այս դեպքում միտքը, թե հեղինակը ունակ է

մինչև վերջ ընթերցողին փոխանցելու իր մտահղացման (նյութի) իմաստը, կորցնում է հիմնավորումը: Փոխանցման այս անհնարինությունն էլ տեքստում ենթադրում է *հեղինակի մահը*: **[1]**

Այս համատեքստում՝ կիրքը, տրամադրությունը կամ զգայությունները դառնում են հեղինակին փոխարինող տեքստ և ոչ թե անսկիզբ-անսահման մի բառարան, որից հեղինակը անվերջորեն անջատում է իր գիրը: Ընթերցողը նույնանում է տարածությանը՝ գրանցելով *ցիտատները* կամ *ալյուզիաները*, որոնցից կազմված է գիրը: Տեքստը իր նշանակությամբ առավել միասնական է, երբ արտահայտվում է ընթերցողի միջոցով, որը այս դեպքում *մարդն է առանց պատմության*: **[1]** Այսօրինակ խոցելի, անհետագիծ և անպատմություն պատկերներ ստեղծվում են միայն *կառուցվածքաբանության* տիրույթում, ուստի բնական է, որ պատմություն չունեցող սուբյեկտը կարող է և չհիշել ոչինչ, քանի որ նա միաժամանակ *մարդ-սպառողն* է, որ ստեղծում և հավասարապես սպառում է նորանոր տեքստեր:

Կառուցվածքաբանության և հետմոդեռնիզմի հիմնական վերլուծություններում տեքստը դիտարկվում է կենտրոնացված հասկացման ենթատեքստում՝ դառնալով նշանների փոխկապակցված ու ամբողջական շղթա, որը պարզեցնում է տեքստի հիշողության օտարվածությունը: Այսօրինակ արձանագրումը չպետք է խանգարի տեքստի որոնման հետագա փորձերում տեսական մտահղացումները իրագործելուն, քանի որ դրանք հնարավոր են միայն *հեղինակ-տեքստ-լեզու-հիշողություն* գաղտնագրված կապի դեպքում: Հետևաբար, *բացասական արդյունքը նույնպես արդյունք է*, որը թույլատրում է ուժեղացնել տեքստի և հիշողության փոխառնչությունները և որոնումները ուղղել դեպի սոցիալ-մշակութային տարբեր հարացույցերում: **[6]**

Այս առումով, տեսաբանական գրականության մեջ գոյություն ունեն սկզբունքային մի շարք հնարավորություններ, որոնց իրագործման ելակետը հասկացման մակարդակի ուժեղացված մշակումն է հետմոդեռնիզմի սահմաններում: Տեքստի *ներքին* և *արտաքին* հարաբերությունները արտահայտվում են ներունակության հատկանիշով, որը ստեղծվում է ոչ միայն տարածության, այլև ժամանակային շերտերի չափումներում և համընկնում է *ապագա-անցյալ* փոխներթափանցումներին: Այս հարաբերության արտահայտությունը նույնպես հանգեցնում է *հիշողություն* հասկացությանը, որը ոըմբռնվում է որպես ինքն իրեն փոխհարաբերվող ներկա կամ որպես երկու *ես*-երի փոխներթափանցում:

Հիշողության ֆենոմենը չի բխում հետմոդեռնիզմի փիլիսոփայությունից, քանի որ այն ձեռք է բերում նորանոր նշանակություններ և գնահատա-

կաններ, այլակերպ գոյություն, որը կարելի է գրանցել նաև *մեթոդոլոգիական մոդալ փոխաձևումներով*: Այս առումով, հետմոդեռնիզմը ու հետկառուցվածքաբանությունը նշանակալիորեն փոխեցին վերաբերմունքը տեքստի հանդեպ: Հետևաբար, չնայած մետաֆորային հագեցվածությանը՝ *տեքստ* ըմբռնումը բնութագրվում է փիլիսոփայական երեք հիմնական հատկանիշներով՝

**ա.** *ոչ թիրախային* և *ոչ առանցքային* նշանակություններ, որոնք կապված են միմյանց փոխհաջորդող ցանցով,

**բ.** *միֆի քաղաքականության հերքում,* որը ստեղծվում և իրացվում է աղբյուրների ու որոշակի փոխազդեցությունների արդյունքում,

**գ.** *իմաստի բազմազանությունը* և *սկզբունքային նշանակությունների անավարտությունը*, որոնք որոշակիացված չեն տիրող կառույցների կողմից և հղում են կատարում ցանկության ոլորտին՝ չնյութականացնելով մշակույթի սահմանայնությունը:

Տեքստի այդօրինակ ըմբռնումը, չնայած տարբեր բնութագրումներին, հարցը առնչում է անցյալին: Տեքստի ուսումնասիրությունը թույլատրում է նաև որոշակի ճանապարհի անցնել՝ մինչև գեղարվեստական տեքստի կոնկրետությունը և լեզվական վերացականությունը արտահայտելը: Այս հանգամանքի հիմքում տեքստաբանական և տեքստագիտական վերլուծությունն է, որտեղ անմիջական կամ մակերեսային իմաստները գործում են միայն *երևացող*-ի օգտին: Հետկառուցվածքաբանության տիրույթում տեսական այսօրինակ վերլուծությունը ստացել է *ապակառուցում* կամ *կազմաքանդում* անվանումը:

**Տեքստ-հիշողություն-ապակառուցում**

Ապակառուցումը ենթադրում է տարաբնույթ ընթերցումներ, որոնց արդյունքում հնարավոր է հայտնաբերել բոլորովին նոր տեքստեր՝ սկզբունքորեն տարբեր նշանակություններով: **[2]** Եթե Սոսյուրի կողմից առաջադրված նշանակելիի և նշանակության տարբաժանումը բացարձակացնենք, ինչը անհնար է տվյալ դեպքում, հնարավոր է հասնել նաև *մեկնաբանական* անսահմանության:

Տեքստերի մեկնաբանության անսահման ազատությունը որոշ չափով սահմանափակվում է *միջտեքստային* հղումներով, որոնք իրենց հերթին հայտնաբերվում են *տեքստի* և *նշանաբանական միջավայրի* փոխազդեցական և փոխկապակցված ֆենոմենի հատկանիշով **[10]:** Համաձայն այս դիտարկման՝ անցյալի տեքստերը չպետք է մեկուսացվեն, քանի որ ոչ մի տեքստ երբևէ չի ստեղծվել առանց այլ տեքստերի գաղտնագրված ներազ-

դեցության: Հեղինակները գործածում են լեզուն՝ ծառայեցնելով միևնույն նպատակին՝ գրին, իսկ ընթերցողը ընդունում է տեքստի իրողությունը այնքանով, որքանով որ թույլ են տալիս վերջինիս լեզվական հնարավորությունները և զարգացվածությունը: **[10]** Տեքստերի աշխարհը ամբողջանում է գրական երկի տարաժանրությամբ, որոնցից յուրաքանչյուրը ունի սեփական մշակութապատմական պայմանականությունները, հասկացությունները և գործածության ձևերը: Յուրաքանչյուր տեքստ հավակնում է երկխոսության կամ լեզվի գործնականության տիրույթում ձեռք է բերում նոր ուժ, որը այս կամ այն չափով արտացոլվում է սոցիումի հիշողության տիրույթում: Հետևաբար, միջտեքստային հղումներն են, որ թույլատրում և ապահովում են *տեքստ-հիշողություն* կապը: Այս դեպքում, Ռոլան Բարտի «Հեղինակի մահը» **[1]** ըմբռնումը ոչ մի կերպ չի հարաբերվում տեքստին, քանի որ մեկնաբանությունը ձեռք է բերում ինքնուրույն գոյավիճակ և համապատասխանաբար՝ բազմաթիվ կապեր, որոնք ամրապնդում են տվյալ երևույթի մշակութաբանական էությունը ոչ միայն անցյալում, այլև ապագայում:

*Միջտեքստային հղում* երևույթը ներառում է նաև տեքստեր, որոնք ստեղծվում են հետո, քանի որ տեքստի աղբյուրը գոյություն ունի մինչև տեքստը ու նաև՝ տեքստից հետո: Հետևությունը, որ հնարավոր է մեկնաբանության հիմքում, նշանակալիորեն մեղմում է հետմոդեռնիզմի ու հետկառուցվածքաբանության դիրքորոշումները, որոնք էապես հարաբերվում են *տեքստի հիշողություն* ըմբռնմանը: Հատկապես միջտեքստային հղումներն են, որ փիլիսոփայական տվյալ ըմբռնումները սոցիալական ենթատեքստում հասցնում են կառուցվածքայնորեն էականացված *տեքստ-հիշողություն* փոխադարձ կապին, որը դուրս է գաղտնագրման մակարդակից: Այս դեպքում միջտեքստայնության *ունիվերսալությունը* որպես *տեքստ-հիշողություն*, հնարավոր է հիմնավորել՝ անդրադառնալով *մշակութաբանությանը* և *բնագրագիտությանը*: Միջտեքստայնությունը՝ որպես փոխադարձ կապ և հմտություն, ապահովում է տվյալ մշակութաբանական միջավայրի նշանագիտական ոլորտը՝ արդարացնելով տեքստի գոյությունը, քանի որ այն նախ և առաջ ունի պատմա-մշակութային և լեզվական հակվածություններ:

**Սոցիում և հիշողություն**

Ըստ Քրիստևայի՝ գրական բարձրագույն (հանճարեղ) տեքստերը աստվածաշնչյան միջբնագրային փոխակերպումներն են, որոնք գենոտեքստի շրջանակներում իրականացնում են ֆենոտեքստի ծննդյան գործընթացը: **[5]** Պոստմոդեռնիզմի սոցիալական ընկալումներում կարևորվում է *հիշողության* ֆենոմենը: Հատկապես միջտեքստայնության միջոցով է, որ մի որ-

ևէ մշակույթի պատկանող տեքստը ներգրավվում է մեկ այլ մշակութային ավանդույթում, ինչպես պատմական ենթատեքստում *ուղղահայաց* հիշողությունը, այնպես էլ միևնույն տոպոսին պատկանող մշակույթների ենթատեքստում *հորիզոնական* հիշողությունը: Նման դիտարկումները և դրանցից բխող եզրահանգումները ենթադրում են տեքստի մեկնաբանությունը՝ ելնելով դրա նշանագիտական կառուցվածքից: Տեսականացված այս քայլը երևութանում է նախ և առաջ սոցիումի հիշողության և տեքստի այնկողմնային (տրանսցենդենտալ) կապի տեսանկյունից: Տեքստի կառուցվածքային-նշանագիտական մեկնաբանության օբյեկտը դիտարկելի է *տեքստ-բնագիր* հարաբերությամբ: **[1]** Այս ինքնատիպ կառուցվածքա-լեզվաբանական առաջընթացի արդյունք է տեքստի *հասկացումը*: Այս առումով, ուշագրավ է Ռոլան Բարտի գաղափարը *տեքստ-բնագիր* փոխառնչությունների տիրույթում, որը ըմբռնելի է որոշակի տարածաժամանակային ռեզոնանսում: Ըստ Բարտի՝ *բնագրի* և *տեքստի* հնարավորությունները ֆիզիկապես սահմանափակելու փորձը կտրուկ է: Բարտը գրում է՝ «Տարբերությունը ահա թե որն է. *բնագիրը* նյութական գոյություն է, որը գրավում է գրքային տարածության որոշակի մակարդակները (օրինակ՝ գրադարանը), իսկ *տեքստը* մեթոդոլոգիական տիրույթ է: Բնագիրը տեսանելի է, ակնառու, իսկ տեքստը հնարավոր է հիմնավորել համապատասխան օրենքներով»: **[1]**

Օգտագործելով տեքստի հասկացման մեթոդոլոգիական գործառույթները, Բարտը ի ցույց է դնում տեքստի պարունակությունը, որը գրանցում է *սոցիալական հիշողության* օբյեկտիվացված գոյությունը, ինչպիսին որ բնագիրն է, ուստի որպես ինքնուրույն գոյություն՝ բնագիրը ներգրավվում է գաղափարների անվերջանալի փոխակերպությունների գործընթացում՝ պայմանավորվելով պատմա-մշակութային իրողություններով, իսկ տեքստը շարունակում է իր ինքնուրույն գոյությունը նույնիսկ *հեղինակի մահից* հետո՝ առիթ դառնալով նոր մտածությունների, մտահղացումների և նոր ուսումնասիրությունների:

Այս դեպքում նշանագիտական եռյակը՝ *նշանակելի-նշանակություն-նշան* ստեղծում է նշանագիտական նոր իրականություններ, քանի որ տեքստը ամբողջական նշանագիտական համակարգ է՝ չափավոր շարժուն, սակայն՝ կայուն, ներառում է նշանակելին (որպես տեքստ), նշանակությունը (որպես ըմբռնում), նշանը (որպես տեքստի ձև): Համաձայն սույնին՝ բավական տարողունակ է սոցիալական հիշողությունը հետմոդեռնիզմի ու հետկառուցվածքաբանության տիրույթներում: Մյուս կողմից, եթե ընդունենք տեքստի իմաստային բազմաբևեռությունը, ուրեմն այն իր պարունակութ-

յամբ ընդունակ է վերածնվելու նաև *մտավոր զվարճանքի* հատկանիշով, **[7]** թեպետ ժամանակակից աշխարհում դրանք նույնպես տարանջատելի չեն հեղինակից: Եվ սա այն է, ինչ հնարավոր էր մոդեռնիստական հասարակության մեջ իմաստային *օքսիմորոնների* ստեղծման և ապակառուցման տիրույթում:

Եվ սա է պատճառը, որ մշակութային-պատմական և էթնիկական ցնցումներով հագեցած հասարակություններում տեսանելի է հատկապես *սոցիալական հիշողության պատասխանատվության նվազումը*:

Նշանագիտության ու ժամանակակից հետմոդեռնիստական փիլիսոփայության տիրույթները դիտարկելիս տեսանելի են հիշողության և տեքստի սահմանները ոչ այնքան պարունակության, որքան կառուցվածքաբանության տեսանկյուններից: Այս դեպքում, միջտեքստայնությունը նպաստում է տեքստի՝ որպես սոցիալական հիշողության գոյության ձևի, նույնական ու այնկողմնային (տրանսցենդենտալ) կողմերի բացահայտմանը՝ ի ցույց դնելով վերջինիս՝ հայտնագործություն լինելու գոյաբանական արդյունավետ շրջադարձը, որը տեսանելի է ժամանակակից տեսաբանության մեջ:

Հաղորդակցության այս տեսակը *սոցիալական լեզվաբանության* տիրույթում է: Խոսքը մարդկանց միջև պատմականորեն ձևավորված հաղորդակցության ձևի մասին է, որը գործում է որոշակի կանոններով գործող լեզվական կառույցների միջոցով: Լեզվահաղորդակցությունը ի ցույց է դնում մարդու խոսքը որպես նշանային համակարգ: Հաղորդակցության ամենաընդհանրական միջոցը խոսքն է, քանի որ խոսքի միջոցով տեղեկատվությունը փոխանցելիս հաղորդագրության իմաստը առնվազն կորչում է, չնայած դա տեղի է ունենում միայն հաղորդակցական գործընթացի բոլոր մասնակիցների կողմից իրավիճակի վերահսկման բարձր աստիճանի դեպքում:




Ցանկացած տեղեկատվական փոխանցում հնարավոր է միայն նշանների և նշանային համակարգերի միջոցով: Գոյություն ունեն նշանային մի քանի համակարգեր, որոնք օգտագործվում են հաղորդակցման գործընթացում, դրան համապատասխան հնարավոր է ստեղծել փոխադարձ կապի գործընթացների դասակարգում: Առավել խիստ բաժանմամբ տարբերվում

են *բանավոր* և *ոչ բանավոր* հաղորդակցումները՝ օգտագործելով նշանային տարբեր համակարգեր:

**Գենոտեքստից ֆենոտեքստ և հակառակը**

Ըստ ֆրանսիացի տեսաբան Յուլիա Քրիստևայի՝ անհրաժեշտ է տեղաշարժել տեքստը՝ իմաստավորելով էական տարբերությունները երկու մակարդակների միջև՝ գենո- ու ֆենո- տեքստերի, **[3]** որոնք միմյանց հարաբերվում են ինչպես *խորք* և *մակերես*, իսկ իմաստակիր կառույցի ու նշանակելիի ընթացական հատկանիշներով՝ որպես *խորհրդանիշ* կամ *բանաձև*: Այս հասկացությունները նա ստեղծել է *գենոտիպ* ու *ֆենոտիպ* կենսաբանական հասկացությունների համաբանությամբ: Ըստ Քրիստևայի՝ անհրաժեշտ է ընթացքի (շարժման) մեջ դնել *տեքստը*՝ իրականացնելով *տարբերակման, շերտավորման, վերադիտարկման* գործընթացները:

Մետալեզվական հատկանիշների տեսանկյունից դրանք հնարավոր է բնորոշել հետևյալ կերպ՝ գենոտեքստը *տոպոլոգիայի* առարկան է, ֆենոտեքստը դիտարկելի է *հանրահաշվական հատկանիշների* համատեքստում, թեպետ՝ նրանց միջև գոյություն ունեն լուրջ տարբերություններ: Կառուցվածքաբանության տիրույթում դրանց մակերեսային ու խորքային մակարդակները նույնական են, քանի որ տեքստը իր խորքում ունի *հասկացական-տրամաբանական* և *քերականական-տրամաբանական* համակարգերը, որոնց միջև չկան և չեն կարող լինել փոխներթափանցման հարաբերություններ և փոխանցումներ:

Ըստ Քրիստևայի՝ *գենոտեքստը* լեզվաբանորեն գործառվող վերացական մակարդակ է, որը նախորդում է արտահայտություններին և պայմանականորեն հակադրվում է ձևավորված-ավարտուն տեքստային կառույցին: Նշանավորվելով որպես խորքային հիմնաշերտ և լեզվական կառույցի միջոցով արտահայտվող չհամակարգվող իմաստային բազմաշերտ տեքստ, որը սուբյեկտիվ չէ կամ չունի հաղորդակցական գործառույթներ, սույնը միաժամանակ *էֆեմեր, ոչ հաստատուն*, հեշտորեն քայքայվող կառույց է, որը սկզբնավորվում է հեղինակի բնազդային ազդակների միջոցով **[4]:** Սույնը նաև երկվալենտ ելքային տարածություն է, որում յուրաքանչյուր լեզվական մատրիցա ընկալվում է որպես միագիծ մատրիցաների հանրագումար: Պայմանավորում է խոսքային մատրիցաները, նախորդում է երկխոսություններին, հոգեբանական կառույցներին, ընդգրկում է իրադարձական տարբեր տեղեկությունները:

Գենոտեքստը ներառում է նշանագիտական բոլոր գործընթացները, տարածականորեն ընկալվող ազդակները, բաժանումները, որոնք կազմա-

վորվում են բուն տեքստում՝ սոցիալական ու բնական համակարգերի միջոցով ներառելով ամբողջական տեքստը, նշանաբանական համակարգը, օբյեկտ-սուբյեկտ հարաբերությունները, նշանակության միջուկի կազմավորումը: Գենոտեքստի հայտնաբերումը տեքստում պահանջում է տարաբույթ ազդակների ու էներգիաների փոխանցումներ, որոնք իրենց հետքն են թողնում ֆենոմենալ և մեղեդային հակադրությունների վրա՝ իրենց ազդեցությունը թողնելով մասնատվող իմաստաբանական կարգերի տիրույթներում: Գենոտեքստը առաջին ազդակից ստեղծված էներգիայի միակ փոխանցողն է, որը կազմավորում է տարածությունը, և որում սուբյեկտը դեռևս պառակտված միասնականությունը չէ, այլ մինչ-լեզվային մակարդակում գոյություն ունեցող հիմք է, որի արտաքին շերտը *ֆենոտեքստն* է: Ըստ այդմ՝ բազմաթիվ սահմանափակումները և օրենքները (հատկապես՝ սոցիալ-քաղաքական) արգելակում են նշանակելիության ընթացքը այն կետում, որտեղ հատվում է գենոտեքստը՝ միավորվելով խորհրդանշական մատրիցաների օգնությամբ և արգելակելով ընթացքի անվերջությունը: Ֆենոտեքստը այդ արգելակման արդյունքն է:

**Ֆենոտեքստից գենոտեքստ և հակառակը**

Ժամանակակից տեքստերը մեծ մասամբ (ոչ բոլորը) ֆենոտեքստեր են, քանի որ մոդեռնիստական պոեզիան հնարավոր է դիտարկել նշանակության անվերջության ընթացակարգի, այլ կերպ՝ նշանագիտական *քորայի* տեսանկյունից, որը էականորեն փոփոխում է լեզվական կառույցների հումքը: Ֆենոտեքստը հաղորդակցական լեզվի սեփականությունն է, որը մշտապես մասնատված է: Եթե գենոտեքստը նշանակության ու համակարգման գործընթաց է, որը բացահայտվում է շարժուն և հարաբերական սահմանների օգնությամբ, ապա ֆենոտեքստը ենթարկվում է հաղորդակցության օրենքներին՝ ենթադրելով ինչպես հեղինակին, այնպես էլ՝ ընթերցողին: Սույնը արտադրվում է լեզվի միջոցով, որում արդեն իսկ գոյություն ունեն և բնականորեն զարգացել են սոցիալական որոշ գաղտնագրեր, գաղափարաբանական բանաձևեր: Այն կայուն իմաստային և նշանաբանորեն կազմավորված հիերարխիա է: Գենոտեքստը ներառում է նշանագիտական բոլոր գործընթացները, հատկապես՝ բացատները, որոնք տեքստում կազմավորում են սոցիալական և բնական համակարգերը՝ վերածելով դրանք ամբողջականության: Նույնը նաև տարաբնույթ խորհրդանշայնության ստեղծումն է, օբյեկտ-սուբյեկտ կազմավորումը, իմաստային միջուկի ձևավորումը, տեքստում ազդակների միջոցով փոխանցվող էներգիաները, որոնք իրենց հետքը թողնում են տեքստի ռիթմի, մեղեդայնության, իմաստաբանական և տրա-

մաբանական առանձնահատկությունների կամ միմեսիսի (ֆանտազմ, բացատ, պատում և այլն) վրա: Ըստ Քրիստևայի՝ ֆենոտեքստը քերականորեն իմաստի ստեղծմանը նպաստող կառույց է, որը ենթարկվում է հաղորդակցական գործընթացին, ենթադրում է հեղինակի ասացման գործընթացը և ընթերցողին, ում ուղղված է տեքստը, իսկ գենոտեքստը անցնում է հարաբերականի ու ժամանակավոր սահմանափակումների միջով և կազմավորվում է երկու լիիրավ սուբյեկտների միջև հեռարձակվող տեղեկատվության հակադիր բևեռներում: Համապատասխանաբար, հնարավոր է առանձնացնել նաև վերոնշյալ տեքստերը միավորող մեխանիզմները, որոնց միջոցով սույն միջ(տրանս)-լեզվաբանական գոյությունները ի հայտ են գալիս ֆենոտեքստի փոփոխությունների միջոցով՝ որպես նշանագիտական կարգ, որպես գենոտեքստի ուրվական, որը համառորեն հիշեցնում է իրեն ֆենոտեքստում՝ միտելով միևնույն տեքստի մշտանորոգմանը: Նշանակությունը դիտարկվում է տեքստի կազմավորման կամ նյութական հոգեսոմատիկ գործընթացների տեսանկյունից, որոնք առնչվում են *քորա* ըմբռնմանը, քանզի այն, ինչ անվանում ենք նշանակություն, ազդակների անվերջ գործառությունն է, որը ի հայտ է գալիս *լեզու-հաղորդակցություն* ճանապարհին՝ «Սույնը հետերոգեն գործընթաց է, որը չունի ոչ անարխիստական մասնատված հետին պատ, ոչ շիզոֆրենիայի փակուղի, այլ կառուցողական և կազմալուծման գործնականությունն է՝ սուբյեկտիվ և սոցիալական սահմանային մոտեցումներով և միայն այդ պայմաններում է դառնում հաճույք ու հեղափոխություն» **[4]:**

Հետկառուցվածքաբանական և հետմոդեռնիստական քննադատությունը փոխառեց Քրիստևայից սույն ըմբռնումները, որից հետո խիստ չափավոր գենոտեքստը սկսեց իմաստավորել ինքնուրույն իրականացող ամեն ինչ, իսկ ֆենոտեքստը՝ այն ամենը, ինչ ամրագրվում է տեքստում:

**Եզրակացություն**

20-րդ դարավերջին և 21-րդ դարասկզբին ի հայտ եկած սոցիալական երևույթների բազմազանությունը առավել նշանավորեց գրավոր մշակույթը և սոցիալական հիշողության գոյության նոր փուլում հնարավոր դարձրեց *հեղինակ-մեկնաբան-տեքստ* փոխգործակցությունը *տեքստ-տեղեկատվություն* լուծումների և դրանց տեսականացման տիրույթներում:

Ուսումնասիրության մեջ հետկառուցվածքաբանական *տեքստ* հասկացությունը դիտարկվել է *պատմականություն* երևույթից դուրս, որը միաժամանակ հնարավորություն է քննելու տեքստը որպես *սոցիալական հիշողություն*:

*Տեքստ* հասկացության իմաստավորումը հիմնավորվել է նաև Ֆերդինանդ դե Սոսյուրի տեսության միջոցով, ըստ որի՝ ընդգծվել են լեզվի՝ որպես համակարգի, *ներքին* և *արտաքին* կառուցվածքաբանական հատկանիշները:

*Տեքստ-սոցիում-հիշողություն* փոխադարձ կապերը և փոխներթափանցումները բացահայտվել են հետկառուցվածքաբանական *ապակառուցում* գործիքի միջոցով, որը ենթադրում է տարաբնույթ այնպիսի ընթերցումներ, որոնց արդյունքում հնարավոր է հայտնաբերել բոլորովին նոր տեքստեր՝ սկզբունքորեն տարբեր նշանակություններով:

Տեքստի կառուցվածքային-նշանագիտական մեկնաբանության օբյեկտը դիտարկվել է *տեքստ-բնագիր* հարաբերությամբ, որի կառուցվածքա-լեզվաբանական ինքնատիպ առաջընթացի արդյունք է տեքստի *հասկացումը*: Օգտագործելով տեքստի հասկացման մեթոդոլոգիական գործառույթները՝ ի ցույց է դրվել տեքստի պարունակությունը, որը գրանցում է *սոցիալական հիշողության* օբյեկտիվացված գոյությունը, ինչպիսին որ բնագիրն է: Հաղորդակցության այս տեսակը *սոցիալական լեզվաբանության* տիրույթում է:

**Օգտագործված գրականության ցանկ**


1. Барт Р., Избранные работы. Семиотика. Поэтика, М., 1989, 616 с.
2. Derrida, Jacques, Acts of literature: edited by Derek Attridge, 1991, 236 p.
3. Kristeva Julia, Revolution in Poetic Language. Translated by Margaret Waller with an Introduction by Leon S. Roudiez, Columbia University Press New York, 1941, 260 p.
4. Кристева Ю., Избранные труды: Разрушение поэтики. Пер. с франц. М.: «Российская политическая энциклопедия, 2004, 656 с.
5. Кристева Ю., Семиотика: Исследования по семанализу, Пер. с фр.: Э. А. Орловой. М., Академиический проект, 2013, 285 с.
6. Համբարձումյան Ն., Տեքստ և Մեկնություն, Ե., 2013, Տիր, 174 էջ 56-68: 174
7. Հեսսե Հ., Հուլունքախաղ, թարգմ. Ա. Առաքելյան, Ե., 2016, Անտարես, 644 էջ:
8. Интертекстуальность художественного дискурса [Электронный ресурс]: Астрахань: Астраханский государственный университет, Издательский дом «Астраханский университет», 2018. 242 с.
9. Соссюр де ф., Заметки по общей лингвистики, М., Наука, 2000, 280 с.
10. Рикер П., Конфликт интерпретаций, М., Медиум, 1995, 416 с.

# 44-ՕՐՅԱ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԱՐՑԱԽԻՑ ՏԵՂԱՀԱՆՎԱԾ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՎՐԱ

**ՍԱԹԵՆԻԿ ՄԿՐՏՉՅԱՆ**
ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա,
գիտակրթական միջազգային կենտրոն,
մանկավարժության ամբիոնի մագիստրանտ
mkrtchyan.satik@mail.ru

**Համառոտագիր**

Սույն հետազոտության շրջանակներում փորձ է կատարվել ուսումնասիրելու 44-օրյա պատերազմի հետևանքով Արցախից տեղահանված երեխաների կրթական հիմնախնդիրները և տեղահանման ազդեցությունը երեխաների հոգեկան առողջության, նոր միջավայրում հարմարման ու սոցիալականացման վրա: Սոցիոլոգիական հարցումների արդյունքների վերլուծության, համապատասխան գրականության և փաստաթղթերի ուսումնասիրության շնորհիվ առանձնացվել են առաջնային հիմնախնդիրները և դրանց լուծման համար առաջ են քաշվել մի շարք եղանակներ:

**Բանալի բառեր և բառակապակցություններ.** տեղահանված անձ, կրթության իրավունք, մանկավարժահոգեբանական աջակցություն, հոգեբանական տրավմա, ճգնաժամային իրավիճակ:

# ВЛИЯНИЕ 44-ДНЕВНОЙ ВОЙНЫ НА ОБРАЗОВАНИЕ ДЕТЕЙ, ПЕРЕМЕЩЕННЫХ ИЗ АРЦАХА

**САТЕНИК МКРТЧЯН**
Национальная академия наук Республики Армения
международный научно-образовательный центр
магистрант кафедры педагогики
mkrtchyan.satik@mail.ru

**Аннотация**

В рамках данного исследования была предпринята попытка изучить образовательные проблемы детей, перемещенных из Арцаха в результате 44-дневной войны, и влияние перемещения на психическое здоровье детей, адаптацию и социализацию в новой среде. Благодаря анализу результатов социологических опросов, изучению соответствующей литературы и документов были выявлены первоочередные проблемы и предложен ряд путей их решения.

**Ключевые слова и словосочетания:** переселенец, право на образование, педагогико-психологическая поддержка, психологическая травма, кризисная ситуация.

# IMPACT OF THE 44-DAY WAR ON THE EDUCATION OF THE CHILDREN DISPLACED FROM ARTSAKH

**SATENIK MKRTCHYAN**
National Academy of Sciences of the Republic of Armenia
International Scientific-Educational Center
Department of Pedagogy
Master's Student
mkrtchyan.satik@mail.ru

**Abstract**

Within the framework of this research, an attempt was made to study the educational problems of children displaced from Artsakh due to the 44-day war and the impact of displacement on children's mental health, adaptation and socialization in a new environment. Due to the analysis of the results of sociological surveys, and the study of relevant literature and documents, the primary problems were identified, and a number of ways were put forward for their solution.

**Keywords and phrases**: Displaced person, right to education, pedagogic-psychological support, psychological trauma, crisis situation.

## Ներածություն

Պատերազմն իր հետ բերում է ոչ միայն ավերածություն ու մահ, այլ նաև իր խոր ու ցավոտ հետքն է թողնում պատերազմի միջով անցած մարդկանց վրա: Արցախյան 44-օրյա պատերազմը ցնցեց բոլորիս, սակայն այդ աղետալի հարվածի ցավոտ հետևանքի առաջին կրողները դարձան երեխաները. խաթարվեց նրանց մանկությունը, շատերն անցան արկերի ու փամփուշտների դժոխքով՝ զրկվելով իրենց տանն ապրելու, իրենց հարազատ դպրոցում կրթություն ստանալու հիմնարար իրավունքից: 44-օրյա պատերազմի ընթացքում Արցախից տեղահանված երեխաների գերակշիռ մասը հաստատվեց Հայաստանում: Աներկբա է, որ բացի սոցիալական ու հոգեբանական տարատեսակ խնդիրներից, օրախնդիր էր նաև տեղահանված երեխաների կրթության շարունակականության հարցը լուծելն, ինչը և արվեց:

## Հիմնախնդիրներ

Պատերազմի թոհուբոհով անցած երեխան ունենում է հոգեբանական տարատեսակ խնդիրներ՝ սթրեսներ, վախեր, դեպրեսիա, ագրեսիվություն, ծայրագույն դեպքում՝ հոգետրավմա: Տեղահանված/տարհանված երեխաների պարագայում՝ խնդիրն առավել սուր է և բազմանկյուն. երեխան ունենում

է սոցիալականացման, նոր բնակավայրին, կրթական՝ իրեն անծանոթ միջավայրին հարմարվելու խնդիրներ: Պայմանավորված 44-օրյա պատերազմի հետևանքով Արցախից տեղահանված երեխաների առջև ծառացած մարտահրավերներով, որոնց առանցքում կարելի է դիտարկել կրթության իրավունքի իրացումը՝ մեր երկիրը կանգնեց ֆորսմաժորային իրավիճակի առաջ: Մի կողմից՝ պատերազմական գործողություններ ու անվտանգային խնդիրներ, մյուս կողմից՝ մեծ թվով դպրոցականներ, որոնց կրթության իրավունքն, անշուշտ, պետք է իրացվեր: Անսպասելիության և հանկարծակիության գործոնները պատճառ դարձան, որ երկրի կրթական համակարգը չկարողացավ արագ և օպերատիվ արձագանքել ճգնաժամային իրավիճակին, արդյունքում՝ ի հայտ եկան բազմաթիվ բացեր ու համակարգակառուցվածքային խնդիրներ, որոնց բախվեցին թե' տեղահանված երեխաները, թե ՀՀ կրթական համակարգի ենթակառուցվածքները, ուստի կարծում ենք, որ հիմնախնդիրն ունի համակողմանի ուսումնասիրության, հնարավոր ռեսուրսների գնահատման և արդիականացման կարիք:

**Հետազոտության նպատակը**

Սույն հետազոտությունը նպատակ ունի խորապես ուսումնասիրելու 44-օրյա պատերազմի հետևանքով տեղահանված երեխաների կրթության հիմնախնդիրն ու դրա իրացման ճանապարհին հանդիպած դժվարությունները: Փորձ է արվել մշակելու և առաջադրելու այնպիսի համալիր մեթոդներ ու գործիքակազմ, որոնց գործադրումը հնարավորություն կտա անցնցում իրականացնելու պատերազմի հետևանքով տեղահանված երեխաների ուսումնադաստիարակչական գործընթացը՝ տրամադրելով վերջիններիս նպատակային ու թիրախավորված մանկավարժահոգեբանական աջակցություն:

**Հիմնախնդրի վերլուծություն**

Պատերազմը համամարդկային, բազմակողմանի երևույթ է, որը դիպչում է կյանքի՝ սոցիալական, հոգեբանական մշակութային, տնտեսական, կրթական և, որ ամենակարևորն է, անվտանգային ասպեկտներին: Պատերազմը ոչ միայն խաթարում է մարդկային հասարակության զարգացումը, այլև ժամանակի հետ դառնում կենսակերպ՝ ինտեգրվելով հասարակության կյանքին: Տեսակետ կա, որ մարդկության պատմությունը պատերազմների պատմություն է: Վ. Չերչիլը միանգամայն ճշգրիտ նշել է. «Պատերազմը մարդկային ցեղի ճակատագիրն է՝ բացառությամբ կարճ և պատահական

ընդմիջումների, երկրի վրա երբեք խաղաղություն չի եղել»[1, էջ 196]: Մ. Լյութերը, պատերազմը բնութագրելով, նշել է. «Պատերազմը ամենամեծ աղետն է, որը կարող է առաջացնել տառապանք մարդկությանը: Այն ոչնչացնում է կրոնը, պետությունները, ընտանիքները: Ցանկացած աղետ նրանից նախընտրելի է»[2]: Պատերազմը և ռազմական գործողություններն արտակարգ իրավիճակների շարքում առանձնահատուկ տեղում են գրավում՝ իրենց բացարձակ դեստրուկտիվ և սթրեսածին բազմատեսակ կողմերով՝ մահ և տառապանք, զոհեր և կորուստներ, սոցիալական, կրթական և բժշկական ինստիտուտների կազմալուծում, առաջնային կարիքների բավարարման կտրուկ բարդացում, ընտանիքների կազմաքանդում, սով և հիվանդություններ, տեղահանում, արտագաղթ, աղքատություն և անհուսություն և այլն: Պատերազմի հետևանքներից, սակայն, ամենասարսափելին դրա միջով անցած մարդկանց հոգեվիճակն է, նոր աշխարհի և ապագայի նկատմամբ նրանց կազմաքանդված տեսլականը: Ինչպես նշեցինք, հատկապես թիրախային են երեխաները, քանի որ նրանք դառնում են առավել խոցելի, խաթարվում է նրանց՝ աշխարհի, մարդկանց և սեփական անձի վերաբերյալ՝ դեռևս լիարժեքորեն չձևավորված համոզմունքային համակարգի կայունությունը: Արդյունքում՝ դժվար հաղթահարելի են դառնում պատերազմական գործողությունների արդյունքում տեղահանված երեխաների մոտ դրսևորվող հոգեբանական տրավմաները, սոցիալական-հոգեբանական դժվարությունները, որոնք ունենում են բավականին դժվար ընթացք: Հոգեբանական գիտությունների թեկնածու, դոցենտ Միշչենկո Լյուբով Վլադիմիրովնան տեղին է նկատում. «Պատերազմների արդյունքում մարդիկ հաճախ են բախվում հոգեբանական տրավմաների, սթրեսային իրավիճակների, նրանց մշտապես հետապնդում է վախը և սարսափը, որը կոտրում է անձի «ես»-ի պաշտպանիչ շերտը, և մարդը, պատրաստ չլինելով, այլևս չի կարող կառավարել ու փոխակերպել իրեն պարուրող բացասական էներգիայի չափից ավելի շատ քանակությունը, քանի որ տագնապն այլևս չի կատարում ազդանշանի իր գործողությունը, և դրա հետևանքով խանգարվում է մարդու ինքնապաշտպանական ռեակցիաների համակարգը [3, էջ 225-228]:

Ինչպես հայտնի է, պատերազմը և դրա հետևանքներն աղետալի իրավիճակ ստեղծեցին թե՛ ՀՀ-ում, թե՛ Աh-ում: Հազարավոր մեր հայրենակիցներ ստիպված եղան կյանքի ու մահվան կռիվ տալ, վտանգվեց նրանց ֆիզիկական ու հոգեկան առողջությունը, ոտնահարվեցին սեփականության ու գույքի իրավունքները, դժվարացան նրանց համար որակյալ կրթություն և առողջապահություն ապահովելու գործընթացները: Այս իրավիճակով պայմա-

նավորված՝ պատերազմի առաջին օրերին Արցախից հազարավոր երեխաներ պաշտպանություն գտան ՀՀ-ում: ԱՀ-ի ՄԻՊ-ի հատուկ զեկույցի տրամադրած տվյալների համաձայն՝ հրետակոծություններից, հրթիռային և օդային հարվածներից նյութական վնաս է կրել 71 դպրոց և 14 մանկապարտեզ: Ադրբեջանի ագրեսիայի հետևանքով փակվել է 220 դպրոց և 58 մանկապարտեզ: Այս ամենի հետևանքով շուրջ 24 000 երեխա զրկվել է դպրոց և 4 000 երեխա՝ նախադպրոցական հաստատություն հաճախելու իրավունքից [4]: Այս թվերն իրականում սարսափեցնող են: Կարելի է պնդել, որ ամեն կերպ ոտնահարվել են երեխաների՝ այդ թվում նաև կրթության իրավունքը, որը ամրագրված է «Երեխայի իրավունքների մասին» կոնվենցիայի 28-րդ հոդվածում [5]: ՀՀ Սահմանադրության 38-րդ հոդվածի համապատասխան կետով ամրագրված է, որ ՀՀ-ում գտնվող յուրաքանչյուր ոք ստանում է կրթությունից օգտվելու իրավունք, մասնավորապես՝ հանրակրթական կամ միջնակարգ կրթությունից անվճար օգտվելու իրավունք [6]: ԱՀ սահմանադրության 38-րդ հոդվածի առաջին կետում էլ ամրագրված է. «Յուրաքանչյուր ոք ունի կրթության իրավունք: Պարտադիր կրթության ծրագրերը և տևողությունը սահմանվում են օրենքով: Պետական ուսումնական հաստատություններում միջնակարգ կրթությունն անվճար է» [7]:

Իրականում պետք է արձանագրել, որ 44-օրյա պատերազմի ընթացքում տեղահանված երեխաների կրթության կազմակերպման ճանապարհին ՀՀ կրթության պետական կառավարման լիազոր մարմինը, դպրոցն ու ուսուցիչը բախվեցին ոչ միայն երեխաների տեղայնացման, ուսումնառության համար անհրաժեշտ միջոցներով նրանց ապահովման հիմնախնդիրների, այլ վերջիններիս սոցիալականացման և հետպատերազմյան հոգեբանական ծանր իրավիճակի հաղթահարման խնդիրների, նաև՝ ուսումնական գործընթացին նրանց ինտեգրելուն: Պատերազմների, հակամարտությունների պատճառով տեղահանված անձանց վարքագծի բազմաթիվ դիտարկումները վկայում են այն մասին, որ պատերազմի միջով անցած մարդիկ ոչ միայն բախվում են ունեզրկության, սովի, սոցիալական խնդիրների, այլ նաև նրանց հոգեբանության մեջ տեղի են ունենում նկատելի փոփոխություններ՝ հաճախ ունենալով առավել սուր դրսևորումներ: Նույնը կարելի է պնդել 44-օրյա պատերազմի սարսափի միջով անցած երեխաների հոգեբանական վիճակի մասին: Մեր ուսումնասիրությունները գալիս են փաստելու, որ բազմաթիվ տեղահանված երեխաների մոտ հետպատերազմյան շրջանը բավականին դժվար շրջափուլ է եղել: Պատերազմի ժամանակ մտերիմի, հարազատի կորստից հետո երեխայի կյանքը կտրուկ փոխվում է: Տեղահանված

երեխաների դեպքում իրավիճակն առավել սրվում է՝ առաջացնելով ապահովության զգացողություն, նպատակների և հավատի կորուստ, ինքնաընկալման փոփոխություն: Այս իրավիճակով պայմանավորված՝ կրթությունը երեխայի համար սկզբնական շրջանում դառնում է երկրորդային, նա փորձում է ամեն կերպ ազատվել իր վախերից, տագնապներից: «Երեխաները պետք է պաշտպանված լինեն բռնությունից և հնարավորություն ունենան մեծանալու իրենց ընտանիքների հետ: Նրանք չպետք է բաց թողնեն դպրոցը կամ վախենան բժշկի գնալուց: Նրանք չպետք է խտրականության ենթարկվեն այն պատճառով, թե որտեղից են նրանք գալիս: Նրանք պետք է կարողանան իրենց զգալ ինչպես տանը՝ որտեղ էլ որ լինեն, որտեղ էլ որ տուն լինի» [8]:

Աներկբա է, որ տեղահանված երեխաներին ՀՀ-ում ընդունեցին գրկաբաց: Նրանց համար ԿԳՄՍ նախարարության կողմից իրականացվեց առաջնային կարիքների գնահատում և կրթություն ստանալու իրավունքն իրացնելու համար՝ անհրաժեշտ քայլեր: Կարծում եք, որ ռեսուրսների ու գործիքակազմի պակաս, այդուամենայնիվ, առկա էր՝ բավարարելու պատերազմի սարսափով անցած երեխաների բնականոն ուսումնական գործընթացն ու այդ շրջանակներում նաև հոգեշտկողական պահանջմունքները: Անշուշտ, կազմակերպչական գործընթացն ունեցավ բազմաթիվ կնճռոտ կողմեր, բազմաթիվ երեխաներ այդպես էլ չկարողացան ինտեգրվել նոր սոցիալական միջավայրին, չհաղթահարեցին իրենց բարդույթներն ու վախերը: Պատերազմի հետևանքով տեղահանումը, ըստ էության, գիտակցության և հոգեկանի փոփոխված վիճակ է: Պատերազմն ազդեցություն է ունենում ընտանիքի վրա՝ որպես համակարգի, որը հաճախ կազմալուծվում է. խնամակալների (հիմնականում՝ հայրերի, երբեմն նաև՝ մայրերի) մահը երեխաների լքման ռիսկեր է ծնում: Այս ամենը գալիս է փաստելու, որ յուրաքանչյուր տեղահանված երեխա ունենում է իր պատմությունը, իրեն բնորոշ վախերն ու ապագայի նկատմամբ իր պատկերացումները, իսկ արդյոք ՀՀ-ն, որ 44-օրյա պատերազմի հետևանքով տեղահանված/տարհանված երեխաների կրթության շարունակականության ապահովման միակ պատասխանատուն էր, ուներ այդչափ ներուժ կամ մարդկային ռեսուրս՝ գնահատելու յուրաքանչյուր երեխայի անհատական կարիքը, վերահսկելու տեղահանված երեխաների հոգեբանական վիճակն ու արդյունավետ իրացնելու նրանց կրթության իրավունքը: Ընդհանուր վերցրած՝ ամեն բան արվեց, որ բոլոր երեխաները ստանան իրենց կրթությունը շարունակելու հնարավորությունը, սակայն մի շարք ասպեկտներում նկատելի էր լիարժեքության և արդյունավետության պակաս:

Ժամանակին և չուշացած մանկավարժահոգեբանական օժանդակությունն այս համատեքստում, կարծում ենք, որ անչափ կարևոր հանգամանք է՝ տեղահանված և նոր միջավայրում առաջին քայլերն անող երեխայի համար: Ըստ էության՝ երեխան իր վախերի, մտայնությունների ու տագնապների հետ մենակ է մնում, նրան պետք է համակարգային օգնություն, որպեսզի կարողանա վերագտնել իրեն, գտնել առաջ գնալու, դրական էմոցիաներով լցվելու ուժ, բնականոն կյանքի վերադառնալու և սովորելու մոտիվացիան: Հաղթահարման այս շրջանում երեխային մենակ չթողնելն այնքանով է կարևոր, որ նրա կողմից ապրած անհանգստության բացասական ազդեցությունը դրսևորվում է ոչ միայն սուր իրավիճակում, այլև կարող է մեծապես ազդեցություն ունենալ հետագա կյանքի վրա՝ հաճախ հանգեցնելով կյանքի որակի նվազմանը, անձի պաթոլոգիական գծերի ձևավորմանը, սոցիալական անհամապատասխանությանը, հոգեկան հիվանդությունների առաջացմանը [9, էջ 360]: Մեր համոզմամբ՝ ՀՀ-ում իրենց կրթության իրավունքն իրացնող տեղահանված երեխաների հոգեբանական խնդիրները մեծամասամբ մնացին չլուծված. երեխաները պատշաճ հոգեբանական աջակցություն չստացան ուսումնական հաստատություններում՝ պայմանավորված ուսուցիչների՝ նմանօրինակ հիմնախնդրով երեխաների հետ մանկավարժական աշխատանքի փորձառության պակասով: Պատերազմի տրավմատիկ փորձառությունը, դրա հետևանքով տեղահանումը կամ տարհանումը խաթարում է երեխայի պատկերացումներն ու համոզմունքները, նվազեցնում է անվտանգության՝ մանկուց ի վեր ձևավորված ներքին զգացողությունը, որը հիմնված է մի շարք փոխկապակցված գործոնների, օրինակ՝ ծննդավայրի, տան, ծնողների, ընտանիքի, դպրոցի, ընկերների և այլնի վրա: Երբ այս սոցիալական համակարգի շղթան քանդվում է և այլևս չի ապահովում անվտանգության զգացողությունը, երեխան սկսում է սատարման նոր մեխանիզմներ որոնել: Հենց այս համատեքստում է առաջնային նրա՝ սոցիալական նոր միջավայրում ապահով զգալու, ընդունված լինելու կարևորությունն ու այդ գործընթացում մանկավարժահոգեբանական աջակցության դերը: Անչափ կարևոր է հենց սկզբից չեզոքացնել երեխայի հոգեկան առողջության խանգարումների խարանը, որպեսզի վերջինս կարողանա բաց խոսել իր զգացածի և մտացածի մասին, չպարփակվի իր մեջ, ձերբազատվի մենակության և անպաշտպանության զգացողություններից: Շատ կարևոր է, որ այս առումով դասընկերների, առհասարակ սոցիալական միջավայրի խոսույթը կկենտրոնանա ոչ թե պատերազմի վրա, այլ ուղղված լինի երեխայի հետ-

պատերազմյան ինքնության որոնմանը, որտեղ պատերազմը պակաս կենտրոնական տեղ կզբաղեցնի:

Դիտարկենք, թե 44-օրյա պատերազմի հետևանքով ինչ մարտահրավերների առաջ կանգնեց ՀՀ կրթական համակարգը.

- ճգնաժամային իրավիճակում ռեսուրսների համակարգման դժվարություններ,
- մարդկային ներուժի պակաս՝ պայմանավորված հիմնախնդրի հետ աշխատանքի փորձի բացակայությամբ,
- տեղահանված երեխաներին դպրոց ընդունելու փաստաթղթավորման գործընթացի դժվարություններ,
- տեղահանված երեխաների հետ մանկավարժահոգեբանական անհատական աշխատանքի ռեսուրսների պակաս,
- տեղահանված երեխաների հետ նպատակաուղղված հոգեբանական աշխատանքի ռեսուրսների սակավություն,
- ծնողական համայնքի հետ մանկավարժական աշխատանքի դժվարություն՝ պայմանավորված հիմնախնդրի հետ աշխատանքի փորձի բացակայությամբ,
- տեղահանված երեխաների բնակության վայրի և կացարանի հաճախակի փոփոխությամբ պայմանավորված դժվարություններ,
- տեղահանված երեխաների բացակայությունները վերահսկելու մեխանիզմների պակաս,
- տեղահանված երեխաների սոցիալականացման խնդիրներ,
- տեղահանված երեխաների հարմարման խնդիրներ,
- կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների հարմարման խնդիրներ՝ հիմնականում այնպիսի դպրոցներում, որոնցում ուսուցիչները չունեին ներառական կրթության փորձառություն,
- ոչ հաճախ, բայց դիտարկվող խտրականություն տեղահանված երեխաների նկատմամբ համադասարանցիների կողմից,
- խոսքային դժվարություններ՝ պայմանավորված բարբառային խոսույթով:

Ըստ էության, կարելի է կարծել, թե պատերազմական իրավիճակում կրթության շարունակականությունը, պետության կողմից կրթության իրավունքի մատչելիության ապահովումը երկրորդային հիմնախնդիր է և առավել կարևոր է շեշտը դնել տեղահանված երեխաների սոցիալական հիմնախնդիրների վրա: Սակայն, ի հակադրություն դրա, կարծում ենք, որ

կրթությունն այսպիսի իրավիճակներում տեղահանված երեխաների կյանքում կարող է խաղալ կարևոր ու առանցքային դեր՝ նոր սոցիալական միջավայրում հարմարվելու, մանկավարժահոգեբանական աջակցության, դասընկերների հետ շփման միջոցով բնականոն կյանք վերադառնալու, վախերն ու տագնապները հաղթահարելու առումով: Ուստի և կարևոր ենք համարում մեր կողմից վերոգրյալ հիմնախնդիրների՝ պետական մակարդակով ուսումնասիրությունը և հեռանկարային մեխանիզմների մշակումը:

**Գործնական համատեքստ**

Որպեսզի պատկերն առավել առարկայական լինի, մեր կողմից իրականավել է հիմնախնդրի հետազոտություն առցանց սոցիոլոգիական հարցման միջոցով: Հարցմանը մասնակցել է 44-օրյա պատերազմի հետևանքով տեղահանված երեխայի թվով 10 ծնող *(աղյուսակ 1)* պատերազմի արդյունքում տեղահանման հետևանքով ՀՀ-ում կրթություն ստացած 10 ավագ դպրոցական *(աղյուսակ 2) և* 10 ուսուցիչ, որոնք առնչվել են տեղահանված երեխաների հետ *(աղյուսակ 3):*

Եվ այսպես, մեր կողմից նախապես մշակվել են հարցաշարեր, որոնցում զետեղել ենք հիմնահարցի շուրջ, մեր պատկերացմամբ, կնճռոտ և բարձրածայնման արժանի հիմնահարցեր: Ըստ էության՝ հարցման արդյունքնում մեզ հաջողվեց առաջին դեմքով ստանալ հիմնախնդրի ավելի առարկայական ու համակողմանի պատկերը, որին և միտված էր մեր հետազոտությունը:

Դիտարկենք հարցման արդյունքները համապատասխան աղյուսակներում:

**Աղյուսակ 1**

**Տեղահանված երեխաների ծնողների հետ իրականացված սոցիոլոգիական հարցումների արդյունքների վերլուծություն**

| | |
|---|---|
| 1.Ինչպե՞ս Ձեր երեխան ընդունեց պատերազմի իրողությունը: | ✓ շատ ծանր-90%<br>✓ միջին ծանրության-10% |
| 2.Ինչպե՞ս Ձեր երեխան ընդունեց տեղահանման փաստը: | ✓ բացասական-100%<br>✓ դրական-0%<br>✓ չեմ կարող ասել-0% |

| | | |
|---|---|---|
| | 3. ՀՀ-ում դպրոց հաճախելիս Ձեր երեխան ունեցա՞վ սոցիալականացման կամ հարմարման դժվարություններ: | ✓ այո-70%<br>✓ ոչ-10%<br>✓ մասամբ-20% |
| | 4.Ինչպիսի՞ հետևանքներ թողեց պատերազմի հետևանքով տեղահանումը Ձեր երեխայի վրա: | ✓ ֆիզիկական առողջության վատթարացում-20%<br>✓ քնի խանգարում, վախ, տագնապայնություն-70%<br>✓ դպրոցական գործունեության մեջ պասիվություն, սովորելու մոտիվացիայի անկում-60%<br>✓ դժվար հարաբերություններ դասընկերների հետ, ագրեսիվություն-40%<br>✓ ռեգրեսիվ, հետընթացային վարք-30% |

**Աղյուսակ 2**

**Տեղահանված երեխաների հետ իրականացված սոցիոլոգիական հարցումների արդյունքների վերլուծություն**

| | | |
|---|---|---|
| | 1.Կարողանո՞ւմ ես մոռանալ պատերազմը. նոր միջավայրը, նոր ընկերները նպաստո՞ւմ են, որ վերադառնաս բնականոն կյանքին: | ✓ այո-30%<br>✓ ոչ-40%<br>✓ մասամբ-30% |
| | **2.**Ունե՞ս արդյոք դժվարություններ ուսման մեջ: | ✓ այո-60%<br>✓ ոչ-10%<br>✓ մասամբ-30% |
| | 3.Նոր ընկերները ինչպե՞ս են քեզ վերաբերվում: | ✓ լավ-70%<br>✓ վատ-0%<br>✓ չգիտեմ-30% |
| | 4.Ուսուցիչները քեզ օգնո՞ւմ են հաղթահարելու դժվարությունները: | ✓ այո-70%<br>✓ ոչ-0%<br>✓ երբեմն-30% |

**Աղյուսակ 3**

**Տեղահանված երեխաներին դասավանդող ուսուցիչների հետ իրականացված սոցիոլոգիական հարցումների արդյունքների վերլուծություն**

| | |
|---|---|
| 1.Նշե՛ք Ձեր դժվարությունները, որոնց բախվել եք 44-օրյա պատերազմի հետևանքով տեղահանված երեխաների հետ տարվող մանկավարժական աշխատանքի ընթացքում: | ✓ վախ, անհանգստություն-30%<br>✓ ինքնավստահության պակաս-70%<br>✓ մասնագիտական հմտությունների պակաս-60%<br>✓ խուճապ՝պայմանավորված անսպասելիությամբ-90% |
| 2. Ունեցե՞լ եք ծանր հոգեկան վիճակով երեխայի հետ աշխատանքի փորձ: | ✓ այո-70%<br>✓ ոչ-30% |
| 3. Ի՞նչ հիմնախնդիրներ կառանձնացնեք, որոնք խոչընդոտեցին Ձեր մանկավարժական արդյունավետ աշխատանքին: | ✓ տեղահանված երեխաների սոցիալականացման, հարմարման խնդիրներ-50%<br>✓ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների հարմարման խնդիրներ-30%<br>✓ հիմնախնդրի հետ աշխատանքի փորձի բացակայություն-70%<br>✓ տեղահանված երեխաների հետ մանկավարժահոգեբանական անհատական աշխատանքի ռեսուրսների պակաս-50%<br>✓ ուսումնական պլանների և առարկաների հնարավոր անհամապատասխանություն-20% |
| 4. Ինչպե՞ս կգնահատեք կրթության պետական կառավարման լիազոր մարմնի աշխատանքը՝ 44-օրյա պատերազմի հետևանքով տեղահանված/տարհանված երեխաների կրթության գործընթացը կազմակերպելու հարցում: | ✓ լավ-50%<br>✓ վատ-30%<br>✓ միջին մակարդակի-20% |

**Եզրակացություն**

Այսպիսով՝ ստացված արդյունքները կրկին գալիս են փաստելու, որ 44-օրյա պատերազմի հետևանքները իրենց բացասական ազդեցությունն ունեցան նաև կրթական համակարգի բնականոն ընթացքի վրա: Տեղահանված երեխաների մեծ թվաքանակը բազմաթիվ խնդիրներ ստեղծեց ՀՀ-ի կրթության ոլորտում: Մասնավորապես՝ կշեշտադրենք տեղահանված երեխաների հոգեկան առողջության ոլորտի խնդիրները, որոնք իրենց ուղիղ ազդեցությունն ունեցան ուսման որակի և սովորելու մոտիվացիայի վրա, ուստի և կարծում ենք, որ ուսուցիչները պետք է քաջատեղյակ լինեն նման խնդիրներով երեխաների հետ տարվող մանկավարժահոգեբանական աշխատանքի առանձնահատկություններին, ինչի պակասը, համաձայն հարցված ուսուցիչների, այնուամենայնիվ, նկատելի էր: Հիմնվելով մեր ուսումնասիրությունների վրա՝ կարող ենք պնդել, որ արձագանքելով տեղահանված երեխաների խնդիրներին՝ ուսուցիչների և հոգեբանների կողմից պետք է օպերատիվ կերպով ապահովեն տեղահանված երեխայի առաջնային կարիքները, նրանց համար ապահովվի համապատասխան վերականգնողական միջավայր՝ հնարավոր երկրորդային տրավմաների բացառման համար: Անչափ կարևոր է նաև տեղահանված երեխայի սոցիալականացման և նրա՝ միջավայրին հարմարման համար համապատասխան մթնոլորտի ապահովումը, դասընկերների բարիդրացիական վերաբերմունքը, նրանց տոլերանտությունն ու ապրումակցումը: Այս համատեքստում առանցքային կարևոր է մանկավարժական աշխատողների բացատրական աշխատանքը դասարանի մյուս աշակերտների հետ՝ հնարավոր խտրականությունն ու վատ վերաբերմունքը բացառելու նկատառումներից ելնելով:

Միայն կայուն և առողջ հոգեբանական միջավայրում տեղահանված երեխան կարող է անցնցում հաղթահարել իր հոգեբանական խնդիրները, կարևորել կրթությունը, ունենալ սովորելու մոտիվացիա:

Կարծում եք, որ այս համատեքստում հարկ է պետական մակարդակով ուշադրությունը՝ մանկավարժական աշխատողների հմտություններն ու կարողությունները զարգացնելու ուղղությամբ, ինչը կարելի է իրականություն դարձնել համապատասխան վերապատրաստումների, սեմինարների միջոցով: Նկատենք, որ պատերազմական իրավիճակներում կրթական հաստատություններում համապատասխան թվով անձնակազմի առկայությունը շատ կարևոր է, քանի որ հակառակ պարագայում՝ հնարավոր չի լինի արձագանքել ռազմական գործողությունների արդյունքում տուժած ընտանիքների և նրանց երեխաների կարիքներին: Այսօր ՀՀ բազմաթիվ դպրոց-

ներում հոգեբաններ ու սոցիալական աշխատողներ չկան, ուստի 44-օրյա պատերազմի արդյունքում ուսուցիչները բազմաթիվ հարցերում ստիպված էին ապավինել բացառապես իրենց մասնագիտական ու մարդկային որակներին: Հենց այս համատեքստում է, որ ակնառու է դառնում համապատասխան վերապատրաստումների կարիքը, ինչի շուրջ իրեց համոզմունքն էին հայտնել նաև հետազոտությանը մասնակցած ուսուցիչների մի մասը՝ փաստելով, որ զգացվել է մասնագիտական աջակցության կարիք:

Այսպիսով՝ կարող ենք փաստել, որ ԼՂ կոնֆլիկտի և դրանով պայմանավորված ճգնաժամի պայմաններում երեխաների պաշտպանությունն առաջնային է դառնում, քանի որ առաջանում են երեխաների հանդեպ բռնության, անտեսման, թերսնուցման, հոգեբանական վիճակի վատթարացման, կրթության ընդհատման ռիսկեր, ուստի հաշվի առնելով նոր պատերազմական վտանգի հնարավորության ռիսկերը՝ շատ կարևոր է, որ մեր կրթական համակարգն ամեն կերպ պատրաստ լինի հնարավոր ֆորսմաժորային իրավիճակում երեխաների կրթության իրավունքն արդյունավետ իրացնելու հույժ կարևոր մարտահրավերին:

## Օգտագործված գրականության ցանկ


1. Черчиль В. Мировой кризис: пер. с англ.; с предисл. И. Минца. – М.; Л.: Государственное военное изд-во, 1932. – 196с
2. Афоризмы. Война и мир https://mydocx.ru/7-73629.html /հասանելի է 20.02.2023/
3. Мищенко Л. В. Психическая травма. Социально-психологическое сопровождение и предотвращение рецидивов: учеб. пособие. М.: Юрайт, 2018, 225-228 стр.
4. Կարապետյան, Ա, 2020: «Պատերազմի երեխաները. կյանքի ու մահվան շեմին»: https://evnreport.com/arm/magazine-issues/the-children-of-war-on-the-brink-of-life-and-death-2 /հասանելի է 20.03.2023/
5. «Երեխայի իրավունքների մասին» կոնվենցիա, հոդված 28: http://www.parliament.am/library/MAKkonvencianer/10.pdf /հասանելի է 25.03. 2023/
6. «ՀՀ Սահմանադրություն»,2015 թ., https://bit.ly/3oEKbzW /հասանելի է 25.03.2023/
7. «ԼՂ Սահմանադրություն», 2006 թ., https://bit.ly/3yMtbMK հասանելի է 24.03.2023/

8. ՅՈՒՆԻՍԵՖ, «Միգրանտներ և տեղահանված երեխաներ»: https://www.unicef.org/migrant-refugee-internally-displaced-children /հասանելի է 27.03.2023/

9. Панишева О.В., Логинов А.В. Особенности социализации, обучения и воспитания «детей войны» // Научно-техническое и экономическое сотрудничество стран АТР в XXI веке. 2016. Т. 2. 352 – 360 стр.

# ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ՄԱՐԴԿԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱՐԴԻ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

**ՆՈՆԱ ԳՅՈՒԼԱՄԲԱՐՅԱՆ**
ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա,
գիտակրթական միազգային կենտրոնի
մագիստրանտ՝ «Կրթության կառավարում» մասնագիտությամբ

**Համառոտագիր**

Հոդվածում քննարկվում են մարդկային ռեսուրսների կառավարման արդի միտումները բարձրագույն կրթական համակարգում: Ներկայացվում են անձնակազմի հետազոտական հմտությունների բարելավմանն ուղղված մի քանի հեղինակավոր համալսարանական ծրագրեր և մոդելներ: Շեշտադրվում է այն փաստը, որ մարդկային ռեսուրսների կառավարման դիտարկվող օրինակներում անձնակազմի հետազոտական հմտությունների կատարելագործման հիմնախնդիրը մեկնաբանվում է որպես ոլորտի կառավարման ռազմավարական հայեցակետ:

Մարդկային ռեսուրսների կառավարման մոդելները միտված են որակյալ աշխատուժ ստեղծելու, համաշխարհային գիտատեխնիկական և գործարար միջավայրում պահանջված հետազոտողներ պատրաստելու և համալսարանի հետազոտական բազան կառուցելու մարտահրավերներին: Մարդկային ռեսուրսների կառավարման մոդելը բարձրագույն կրթության ոլորտում անձնակազմի մասնագիտական աճի և կարիերայի զարգացման պլանավորման, խթանման և աջակցության միջավայր է:

Հոդվածում քննարկվում են Վոլվերհամփթոնի, Մելբուրնի և Բրիստոլի համալսարաններում մշակված մարդկային ռեսուրսների կառավարման մոդելները: Ներկայացված մոդելները ձևավորում են անձնակազմի հետազոտական հմտությունները, վարքագիծն ու հատկանիշները, ինչպես նաև խրախուսում ձեռքբերված հետազոտական հմտությունների կիրառումը մասնագիտական գործունեության մեջ: Քննարկված բոլոր համալսարանական մոդելներում շեշտադրվում է անձնակազմի հետազոտական կարողությունների սոցիոմետ նպատակադրվածությունն ու իմաստավորումը:

**Բանալի բառեր և բառակապակցություններ.** մարդկային ռեսուրսների կառավարում, անձնակազմի հետազոտական հմտություններ, մոդել, ռազմավարական ուղղություն:

# СОВРЕМЕННЫЕ ТЕНДЕНЦИИ УПРАВЛЕНИЯ ЧЕЛОВЕЧЕСКИМИ РЕСУРСАМИ В СИСТЕМЕ ВЫСШЕГО ОБРАЗОВАНИЯ В КОНТЕКСТЕ РАЗВИТИЯ ИССЛЕДОВАТЕЛЬСКИХ НАВЫКОВ ПЕРСОНАЛА

**НОНА ГЮЛАМБАРЯН**
Национальная академия наук Республики Армения
Международный научно-образовательный центр
магистрант по специальности „Управление образования”

**Аннотация**

В статье обсуждаются современные тенденции в управлении человеческими ресурсами в системе высшего образования. Представлены несколько авторитетных университетских программ и моделей, направленных на усовершенствование исследовательских навыков персонала. Акцентируется тот факт, что в наблюдаемых примерах управления человеческими ресурсами проблема усовершенствования исследовательских навыков персонала интерпретируется в качестве стратегии управления исследуемой сферы.

Модели управления человеческими ресурсами направлены на создание качественной рабочей силы, подготовку исследователей, востребованных во всемирной научной, технической и бизнес-среде, а также на создание исследовательской базы университета.

Модель управления человеческими ресурсами - это среда профессионального роста и развития карьеры, поддержки персонала в области высшего образования.

В статье обсуждаются модели человеческих ресурсов, разработанные в университетах Вольверхамптона, Мельбурна и Бристола. Представленные модели формируют исследовательские навыки, поведение и функции персонала, а также поощряют применение исследовательских навыков в профессиональной деятельности. Во всех представленных университетских моделях подчеркивается социальное целеполагание персонала на развитие исследовательских навыков и их осмысливание.

**Ключевые слова и словосочетания:** управление человеческими ресурсами, исследовательские навыки персонала, модель, стратегическое направление.

## MODERN TRENDS OF HUMAN RESOURCES MANAGEMENT IN THE HIGHER EDUCATION SYSTEM IN THE CONTEXT OF PERSONNEL RESEARCH SKILLS DEVELOPMENT

**NONA GYLAMBARYAN**
National Academy of Sciences of the Republic of Armenia
International Scientific-Educational Center
Department of Education Management
Master's Student

**Abstract**

The article discusses modern trends in human resource management in the higher education system. Several reputable university programs and models are represented aimed at improving personnel research skills. It is emphasized that in the observed examples of human resource management, the problem of improving the research skills of personnel is interpreted as a management strategy.

Models of human resource management aim to create high-quality labour, prepare researchers for the world's scientific, technical and business spheres, and create the university research base. The human resource management model is the area of professional growth and development of career support for higher education personnel.

The article discusses the models of human resources developed at the universities of Wolverhampton, Melbourne and Bristol. The presented models form the staff's research skills, behaviour and functions and encourage the use of research skills in professional activities. All presented university models emphasize the social goal-setting of personnel to develop research skills and comprehension.

**Keywords and phrases:** Human resource management, personnel research skills, model, strategic direction.

### Ներածություն

Բարձրագույն կրթական համակարգում մարդկային ռեսուրսների կառավարման արդի միտումները ուսումնասիրվել են տարբեր տարածաշրջաններում գործող մի շարք հեղինակավոր համալսարանական ծրագրերի և մոդելների օրինակներով: Ուսումնասիրված մոդելների համեմատական վերլուծությունը մատնանշում է մարդկային ռեսուրսների կառավարման ռազմավարական հիմնական ուղղությունները, որոնք միտված են անձնակազմի հետազոտական կարողությունների զարգացմանն ու աշխատաշուկայում ձեռքբերված հմտությունների հետագա կիրառելիությանը:

Ստորև ներկայացնում ենք տարածում գտած մարդկային ռեսուրսների կառավարման մոդելների բովանդակությունն ու կառուցվածքն ըստ անձնակազմի հետազոտական կարողությունների զարգացման հայեցակետի:

**Վոլվերհամփթոնի համալսարան [5].** Վոլվերհամփթոնի համալսարանում գործող մարդկային ռեսուրսների կառավարման այս մոդելն ուղղված է՝

■ երիտասարդ աշխատողներին՝ գնահատելու և պլանավորելու իրենց մասնագիտական զարգացման ընթացքը,

■ աշխատողների ղեկավարներին և վերահսկողներին՝ աջակցելու երիտասարդ հետազոտողների գիտական կայացմանը,

■ պրոֆեսորադասախոսական ողջ կազմին, HR մասնագետներին և կարիերայի խորհրդատուներին՝ երիտասարդ կադրերի պլանավորման և հետազոտողների զարգացման աջակցության հարցերում:

Մարդկային ռեսուրսների կառավարման վոլվերհամփթոնյան մոդելը (Գծապատկեր 1) թույլ է տալիս հասկանալ երիտասարդ մասնագետների հետազոտական կարողությունների և հմտությունների ձևավորման շրջանակները և նրանց ներուժը՝ որպես բարձրարժեք աշխատակիցների, անհատների, որոնք հետաքրքրված են դառնալու տվյալ բնագավառում պահանջված հետազոտողներ, ուստի ստորև ներկայացվող ծրագիրը կարող է հետաքրքրել ինչպես գիտաուսումնական, այնպես էլ տնտեսակիրառ ոլորտի մասնագետներին:

**Գծապատկեր 1. Վոլվերհամփթոնյան մոդելի կառուցվածքը**




Ինչպես տեսնում ենք Գծապատկեր 1-ում ներկայացված մարդկային ռեսուրսների կառավարման մոդելից, անձնակազմի հետազոտական կարողությունների զարգացման շրջանակը կառուցված է 4 հիմնական ոլորտների միջոցով, որոնք ներկայացված են մտավոր կարողությունների, հետազոտողի արդյունավետության, հետազոտության կազմակերպման և հետազոտական կարողությունների ազդեցության տիրույթների տեսքով: Առաջարկվող մոդելի յուրաքանչյուր տիրույթ կառուցվածքային առումով բաղկացած է 3-ական ենթաբաժիններից, որոնք, իրենց հերթին, տարբերակվում են ըստ որոշակի հետազոտական կարողությունների ցանկի:

Արդյունքում կարող ենք փաստել, որ ստեղծված մոդելը բազմաֆունկցիոնալ է և հստակ կերպով համակարգված: Պարզ երևում է, որ համալսարանում կիրառվող մարդկային ռեսուրսների կառավարման մոդելը հիմնված է անձնակազմի հետազոտական կարողությունների քառաբաժին բաղադրատարրերի վրա. հետազոտական կարողությունների զարգացումը սկսվում է մտավոր կարողությունների զարգացման մակարդակից, որն էլ միտված է, իր հերթին, զարգացնելու հետազոտողի արդյունավետությունը: Այնուհետև, վերջին բաղադրատարրն արտահայտվում է հետազոտության կազմակերպման հմտությունների բարելավման և հետազոտողի կարողությունների սոցիոմետ ազդեցության միջոցով:

**Բրիստոլի համալսարան [1].** Բրիստոլի համալսարանի մարդկային ռեսուրսների կառավարման համալիր մոտեցումը ներկայացվում է ինչպես անձնակազմի հետազոտական կարողությունների զարգացման, այնպես էլ մասնագիտական հաղորդակցության արդյունավետության համատեքստում: Համալսարանն իրականացնում է հետազոտողների անձնական և մասնագիտական զարգացմանն ուղղված համապարփակ ծրագիր, որին կարող են մասնակցել համալսարանի բոլոր շահառուները՝ ներառյալ գիտական աստիճանին հավակնող հետազոտողները:

Ծրագրի շրջանակներում մարդկային ռեսուրսների կառավարման մասնագետների կողմից կազմակերպվում են առցանց և առերես սեմինարներ, դասընթացներ, որոնց նպատակն է աջակցել շահառուներին ձեռք բերել մասնագիտական հմտություններ այնպիսի ոլորտներում, ինչպիսիք են՝ անձնական արդյունավետությունը, հետազոտությունների կառավարումը և հաղորդակցությունը:

Մարդկային ռեսուրսների կառավարման մոդելի ռազմավարական ուղղությունները հետևյալն են.

- ✓ անձնակազմի անձնական զարգացում և բարեկեցություն.
- ✓ հետազոտական գործունեության պլանավորում.
- ✓ մասնագիտական և կարիերայի զարգացում.
- ✓ հետազոտական գործունեությունը խթանող մեխանիզմների բացահայտում.
- ✓ պատասխանատվության շրջանակի մշակում հետազոտության արդյունքների վերաբերյալ.
- ✓ աշխատանք հետազոտության այլ մասնակիցների կամ շահառուների հետ.
- ✓ անձնակազմի հետազոտական գործունեության մոնիթորինգ:

Նշենք, որ այս համալսարանում մարդկային ռեսուրսների կառավարման ընդհանուր տեսլականը, թեպետ, կառուցվածքային առումով տարբերվում է նախորդ մոդելից, այնուամենայնիվ, հետազոտական կարողությունների զարգացման համալիրում նույնպես շեշտադրվում են բարձրագույն կրթական համակարգին հատուկ մարդկային ռեսուրսների կառավարման հիմնական՝ մասնագետ-հետազոտողի արդյունավետության, հետազոտության կառավարման և մասնագետ-հետազոտողի սոցիալական փոխգործողության՝ որպես սոցիոմետ ազդեցության, ռազմավարական ուղղությունները:

**Մելբուրնի համալսարան.** Նմանատիպ մոդել է առաջարկվում նաև Մելբուրնի համալսարանի կողմից: Մարդկային ռեսուրսների կառավարման կառուցվածքում մշակվել է անձնակազմի հետազոտական գործունեության զարգացմանն ուղղված ռազմավարական ծրագիր, որը ներառում է մասնագիտական հաղորդակցման, անձնակազմի սոցիալական ակտիվության և ներ-/արտա-համալսարանական գործունեության կառավարման հետևյալ բաղադրատարրերը.

- մասնագիտական հաղորդակցում և գործունեություն, որը ներառում է՝
    - գիտական համաժողովներին և կոնֆերանսներին մասնակցություն.
    - գիտական հրատարակությունների մոնիթորինգ.
    - անձնակազմի արտահամալսարանական հաղորդակցում համալսարանի շահառուների հետ.
    - աղբյուրագիտական/գրադարանային ակտիվություն.
- անձնակազմի սոցիալական ակտիվություն, որը ներառում է՝
    - ժամանակի տնօրինման հմտություններ.
    - սոցիալական կապեր հաստատելու հմտություններ.
    - հետազոտական նպատակադրվածություն.
    - հետազոտողի էթիկայի նորմերի պահպանում.
- անձնակազմի ներհամալսարանական և արտահամալսարանական գործունեության կառավարում, որը ներառում է՝
    - կարիերայի զարգացում և աշխատաշուկայում ներկայացում.

- o անձնակազմի մասնագիտական ձեռքբերումների վերաբերյալ տվյալների բազայի վարում.
- o գործատուի հետ փոխադարձ կապ **[2; 4]**:

Հատկանշական է, որ մարդկային ռեսուրսների կառավարման համալիրում աչքի են ընկնում անձնակազմի ինչպես ներհամալսարանական, այնպես էլ արտահամալսարանական հաղորդակցմանն ուղղված պլանավորման աշխատանքները, որոնք կարող են միավորվել ենթածրագրերի շրջանակներում՝ ըստ կառավարման ռազմավարության այս կամ այն բաղադրատարրի:

**Եզրակացություն**

Մարդկային ռեսուրսների կառավարման վերոնշյալ մոդելները, թեպետ ունեն ծրագրային տարբերություններ, այդուհանդերձ, աչքի են ընկնում բարձրագույն ուսումնական հաստատության պրոֆեսորադասախոսական անձնակազմի հետազոտական կարողությունների զարգացման ռազմավարության որոշակի ընդհանրություններով: Այդ ընդհանրությունները, թերևս, լավագույն ցուցանիշն են այն բանի, թե ժամանակակից աշխարհում ինչ միտումներ են ձևավորվում մարդկային ռեսուրսների կառավարման ոլորտում, մասնավորապես, բարձրագույն կրթական համակարգում, ինչպես է ընկալվում մասնագետ-հետազոտողը, կարողությունների ինչպիսի «փաթեթ» է համարվում անհրաժեշտ՝ հասարակության մեջ առաջադեմ և մրցունակ մասնագետ համարվելու համար **[3; 6]**:

Պատահական չէ, որ բոլոր թվարկված համալսարաններում մարդկային ռեսուրսների կառավարման տեսանելի արդյունքը համարվում է գերազանցապես անձնակազմի հետազոտական կարողությունների բարելավումն ու խորացումը և պոզիտիվ ազդեցությունը հասարակության զարգացման վրա, ինչը կարող է արտահայտվել հասարակության մեջ մասնագետ-հետազոտողի ներգրավվածության աստիճանով, աշխատաշուկայում հետազոտության արդյունքների կիրառման փաստով կամ էլ՝ հետազոտողների միջազգային և արտահամալսարանական հաղորդակցման միջոցով:

**Օգտագործված գրականության ցանկ**


1. Բրիստոլի համալսարանի կայքէջ, http://www.bristol.ac.uk/doctoral-college/current-research-students/ppd/course-directory/:
2. «Կրթության ոլորտում էթիկայի, թափանցիկության և ազնվության համաեվրոպական հարթակ» (ETINED) ծրագիր կայքէջ՝ http://www.coe.int/en/web/ethics-transparency-integrity-ineducation :
3. Ն. Հակոբյան, Վ. Պողոսյան, Ա. Խաչատրյան, Սովորողների բարոյահոգեբանական զարգացման և հետազոտական կարողությունների ձևավորման խնդրի շուրջ, Հետազոտական կարողությունների զարգացման միջազգային գիտաժողով, (18 հունիսի, 2021), Գիտական հոդվածների ժողովածու, 78-86:
4. Մելբուրնի համալսարանի կայքէջ, https://gradresearch.unimelb. edu.au/developing-my-skills/development-and-training/communication-and-writing :
5. Վոլվերհամփթոնի համալսարանի կայքէջ, https://www.wlv.ac.uk/research/the-doctoral-college/research-students/research-skills-development-workshops/ :
6. Vanderstraeten A., ‘Human Resource Management and Performance’, Academia Press, Gent (BE), 2014. A. Vanderstraeten, “The HRM Cockpit: an instrument for developing and evaluating sustainable HRM in an organization”, Sustainable HRM and Employee Well-Being, Proceedings. p.1-27, Ghent University (BE), 2015. Կայքէջ՝ https://biblio.ugent.be/publication/7003407 .

# ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՊՈԼԻՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ (ՀԱՊՀ)

**ՀԱՅԿՈՒՀԻ ՍԱՖԱՐՅԱՆ**
ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ կրթության կառավարման մագիստրանտ,
ՀԱՊՀ պատմաբան-մանկավարժ
haykuhisafaryan97@gmail.com

**Համառոտագիր**

Կրթության համակարգի ներկա փուլի ռազմավարական նպատակն է՝ ընդունելով ժամանակակից մարտահրավերները, արձանագրել հիմնախնդիրների լուծման և առաջընթացի այնպիսի արդյունքներ, որոնք կնպաստեն կրթության և գիտելիքի վարկանիշի մեծացմանը և կամրապնդեն Հայաստանի՝ որպես գիտակրթական տարածքի հեղինակությունը:

21-րդ դարում էապես վերափոխվել և ընդլայնվել են տեխնոլոգիական համալսարանների դերն ու առաքելությունը տնտեսական և սոցիալական զարգացման գործընթացներում: Առաջ են եկել տեխնոլոգիական համալսարանների վերափոխման և բարձրագույն ճարտարագիտական կրթության զարգացման փոխկապակցված նոր միտումներ:

Ճարտարագիտական կրթության զարգացման արդի համատեքստում ճարտարագետի հիմնական բնութագրերն են՝

- ամուր, հիմնարար գիտելիքային բազա, ճարտարագիտության միջդիսցիպլինար ընդհանրական ակզբունքների և հիմնադրույթների իմացություն.
- շարունակական մասնագիտական կատարելագործման և ինքնակրթության հանձնառություն և կարողություններ,
- բարձր պրոֆեսիոնալիզմ ճարտարագիտության՝ ընտրած մասնագիտական ասպարեզում.
- մեկից ավելի լեզուներով արդյունավետ հաղորդակցվելու և միջազգային թիմերում գործելու ունակություններ.
- անորոշության և ռիսկերի գնահատման ու կառավարման կարողություն.
- ժամանակակից մենեջմենթի և հատկապես ռեսուրսների կառավարման սկզբունքների տիրապետում:

**Բանալի բառեր և բառակապակցություններ**. բարձրագույն կրթություն, համալսարան, տեխնոլոգիա, հիմնախնդիր, կառավարում:

# ПРОБЛЕМЫ УПРАВЛЕНИЯ ВЫСШИМ ОБРАЗОВАНИЕМ В НПУА (НАЦИОНАЛЬНЫЙ ПОЛИТЕХНИЧЕСКИЙ УНИВЕРСИТЕТ АРМЕНИИ)

**АЙКУИ САФАРЯН**
Историк-педагог, НПУА
Магистр управления образованием МНОЦ НАН
РА haykuhisafaryan97@gmail.com,

**Аннотация**

Стратегическая цель нынешнего этапа системы образования, принимая современные вызовы, состоит в том, чтобы зафиксировать такие результаты решения проблем и прогресса, которые будут способствовать повышению рейтинга образования и знаний и укреплению репутации Армении как научно-образовательного пространства.

В XXI веке роль и миссия технологических университетов в процессах экономического и социального развития существенно трансформировались и расширились. Появились новые взаимосвязанные тенденции трансформации технологических университетов и развития высшего инженерного образования.

В современных условиях развития инженерного образования основными характеристиками инженера являются:

- Сильная база фундаментальных знаний, знание междисциплинарных общих принципов и основ инженерии.
- Целеустремленность и способность к постоянному профессиональному развитию и самообразованию.
- Высокий профессионализм в выбранной профессиональной области инженерии.
- Способность эффективно общаться на нескольких языках и работать в международных командах.
- Способность оценивать и управлять неопределенностью и риском. Знание современного менеджмента и особенно принципов управления ресурсами

**Ключевые слова и словосочетания:** Высшее образование, университет, технология, проблема, управление.

# PROBLEMS OF HIGHER EDUCATION MANAGEMENT IN NPUA (NATIONAL POLYTECHNIC UNIVERSITY OF ARMENIA)

**HAYKUHI SAFARYAN**
National Academy of Sciences of the Republic of Armenia,
Master of Education Management,
Historian-pedagogue of NPUA
haykuhisafaryan97@gmail.com

**Abstract**

The strategic goal of the current stage of the education system, accepting modern challenges, is to record such results of problem-solving and progress that will contribute to the increase of the education and knowledge rating and strengthen the reputation of Armenia as a scientific and educational area.

In the 21st century, technological universities' role and mission in economic and social development have been significantly transformed and expanded. New interrelated trends in the transformation of technological universities and the development of higher engineering education have emerged.

In the current context of the development of engineering education, the main characteristics of an engineer are:

- Strong fundamental knowledge base, knowledge of general interdisciplinary principles and fundamentals of engineering.
- Commitment and capacity for continuous professional development and self-education.
- High professionalism in the chosen professional field of engineering.
- Ability to communicate effectively in multiple languages and work in international teams.
- Ability to assess and manage uncertainty and risk.
- Knowledge of modern management and especially resource management principle

**Keywords and phrases**: higher education, university, technology, problem, management.

## Ներածություն

Կրթությունը կարևորվում է որպես պետական ռազմավարական հիմնախնդիրների՝ ազգային անվտանգության, կայուն տնտեսական զարգացման, աղքատության հաղթահարման, ժողովրդավարական հասարակության զարգացման, գիտելիքահեն տնտեսության կայացման, լուծման առանցքային գործոններից մեկը [7]:

Կրթության համակարգի ներկա փուլի ռազմավարական նպատակն է՝ ընդունելով ժամանակակից մարտահրավերները, արձանագրել հիմնախն-

դիրների լուծման և առաջընթացի այնպիսի արդյունքներ, որոնք կնպաստեն կրթության և գիտելիքի վարկանիշի մեծացմանը և կամրապնդեն Հայաստանի՝ որպես գիտակրթական տարածքի հեղինակությունը:

Ներկայումս պետությունների առաջընթացը և զարգացման մակարդակը պայմանավորված են տնտեսության և սոցիալական ոլորտի՝ բարձրորակ մասնագիտական կադրերով ապահովվածությամբ: Մասնագիտական կադրերի և գիտելիքի ձևավորման անհրաժեշտ պայմանը բարձրագույն կրթությունն է:

21-րդ դարում էապես վերափոխվել և ընդլայնվել են տեխնիկական համալսարանների դերն ու առաքելությունը տնտեսական և սոցիալական զարգացման գործընթացներում: Առաջ են եկել տեխնիկական համալսարանների վերափոխման և բարձրագույն ճարտարագիտական կրթության զարգացման փոխկապակցված նոր միտումներ:

Ներկայումս Պոլիտեխնիկական համալսարանն ազգային բարձրագույն տեխնիկական կրթության առաջատարներից է և հեղինակություն է վայելում ոչ միայն մեր երկրում, այլև նրա սահմաններից դուրս: Այն տեխնիկական գիտությունների խոշոր գիտահետազոտական կենտրոն է: Այստեղ կատարվում են հետազոտություններ բարդ տեխնիկական համակարգերի մաթեմատիկական մոդելավորման, նանոտեխնոլոգիաների, տեղեկատվական տեխնոլոգիաների և ինֆորմատիկայի, մեքենագիտության և նյութագիտության, էներգետիկայի և էլեկտրատեխնիկայի, ռադիոտեխնիկայի և միկրոէլեկտրոնիկայի, քիմիական տեխնոլոգիաների և մեքենաշինության, ավտոմատացման և կառավարման համակարգերի, ինչպես նաև՝ կիրառական մաթեմատիկայի բնագավառներում [4]:

Ժամանակակից բարձրագույն կրթության համակարգերի արդիականացման կարևորագույն միտումներից են միջազգային ինտեգրման գործընթացները: Կրթական քաղաքականության մեջ միջազգայնացումը հիմնարար հայեցակարգերից է Բոլոնիայի գործընթացի մասնակից երկրներում: Բարձրագույն կրթության միջազգայնացում լայն իմաստով նշանակում է բարձրագույն կրթության ռազմավարությունների մշակում միջպետական համատեքստում, մասնավորապես՝ եվրոպական կրթական միասնական տարածքի ստեղծում [1, էջ 10]:

Միջազգային բարձր վարկանիշի ձեռքբերման համար կարևոր նախապայման է նաև համալսարանի գիտության միջազգային հեղինակության բարձրացումը, ինչը ենթադրում է միջազգային գիտահետազոտական ծրագրերում համալսարանի մասնակցության ակտիվացումն ու եվրոպական գի-

տական տարածքին ինտեգրման անհրաժեշտ նախադրյալների ստեղծումը: Այն ներառում է նաև միջազգային գիտական համագործակցության առկա ցանցի ընդլայնում և բազմազանեցում, արտասահմանյան բարձր վարկանիշ ունեցող գիտական հանդեսներում հոդվածների հրատարակում, միջազգային ներկայացուցչական գիտաժողովներին մասնակցություն, ինչպես նաև՝ միջազգային գիտական կոնսորցիումներում և գիտատեղեկատվական ցանցերում աճող ներգրավվածություն [3, էջ 52]:

Համալսարանի կառուցվածքը սահմանվում է Հոգաբարձուների խորհրդի որոշմամբ: Համալսարանի ինքնուրույն ուսումնական կառուցվածքային ստորաբաժանումներն են՝ ինստիտուտները, ֆակուլտետները, կենտրոնները, ամբիոնները, քոլեջները, դպրոցները, հենակետները, ուսումնական փորձնական տնտեսությունները [5]:

Համալսարանի տարածքային երեք ստորաբաժանումների՝ Գյումրու, Վանաձորի և Կապանի կառավարման համակարգերն ունեն նույնանման զուգորդված կառավարման կառուցվածքներ՝ կոլեգիալ կառավարման մարմին՝ մասնաճյուղի գիտական խորհուրդ և միանձնյա ղեկավար՝ մասնաճյուղի տնօրեն [2, էջ 22]:

Համալսարանն իր գործունեությունն իրականացնում է իր մարմինների միջոցով: Համալսարանի կառավարման մարմիններն են՝

1. Համալսարանի հոգաբարձուների խորհուրդը.
2. Համալսարանի տնօրենը (այսուհետև՝ ռեկտորը).
3. Համալսարանի գիտական խորհուրդը.
4. Համալսարանի ուսանողական խորհուրդը:

Համալսարանի կառավարման հիմնախնդիրներին ծանոթանալով և **տեսամեթոդական հիմքերը** ներկայացնելով՝ անդրադառնում ենք համալսարանի կառավարման համակարգին և կառավարման գործընթացին, առաջացած խոչընդոտներին, արդիականացման գործընթացներին և միջազգային կապերի հաստատմանը:

Որպես երկարաժամկետ պլանավորում՝ համալսարանում, իր առաքելությանն ու նպատակներին համապատասխան, մշակվում է 5-ամյա ստրատեգիական պլան, որը հաստատվում է ՀԱՊՀ հոգաբարձուների խորհրդի կողմից:

Հավատարիմ իր առաքելությանը՝ ՀԱՊՀ-ն ձգտում է դառնալ.

▪ միջազգայնորեն ճանաչված հետազոտական համալսարան, որն էական դերակատարություն ունի տնտեսական զարգացման և տեխնոլոգիական նորաստեղծության ազգային և տարածաշրջանային ծրագրերում,

▪ համալսարան, որը հարմարունակ է միջավայրի փոփոխություններին, արագ և համարժեք է արձագանքում տնտեսության և հասարակության փոփոխվող կարիքներին, աշխատաշուկայի պահանջարկին,

▪ համալսարանի կառավարումն իրականացվում է ՀՀ օրենսդրությանը և ՀԱՊՀ կանոնադրությանը համապատասխան, ինքնակառավարման հիման վրա՝ միանձնյա ղեկավարման և կոլեգիալության սկզբունքների զուգակցմամբ, ՀԱՊՀ հոգաբարձուների խորհրդի, գիտական խորհրդի և ռեկտորատի գործառույթների իրագործմամբ:

▪ ՀԱՊՀ կառավարման համակարգը միտված է համալսարանի կրթական և գիտահետազոտական գործունեության, ինչպես նաև՝ գիտատեխնիկական և միջազգային համագործակցության արդյունավետ իրականացմանը [3, էջ 12-13]:

**Ուսումնասիրության մեթոդները**

Ուսումնասիրման ենթակա են եղել համալսարանի կանոնադրությունը, կանոնակարգերը, էլեկտրոնային նյութերը, որոնք բովանդակում են հաշվետություններ, արձանագրություններ, ելույթների սղագրություններ, զեկուցումներ, կառավարության որոշումներ, կրթության ոլորտին վերաբերող օրենսդրական և նորմատիվային փաստաթղթեր, կրթական համակարգի զարգացման որոշակի փուլում հետազոտվող հիմնախնդրի վերաբերյալ տարաբնույթ փաստաթղթեր:

Հոդվածում անդրադառնում ենք, Պոլիտեխնիկական համալսարանի հնգամյա ստրատեգիական պլանին 2016-2020 թթ.( նպատակները և խնդիրները):

Կրթության ոլորտը բավականին ընդգրկուն է ու բազմաբովանդակ, այդ իսկ պատճառով կարելի է առանձնացնել մի շարք հիմնախնդիրներ: Այն հիմնախնդիրներն են, որոնք կրթության կառավարմանն են առաջադրվում հասարակության կողմից:

Կրթության կառավարման ոլորտում առանձնացվել են հետևյալ հիմնախնդիրները.

**Կրթության հասանելիության և հավասար «մուտք»-ի ապահովման հիմնախնդիրը**: Համալսարանի զարգացման նպատակներից է աշխատաշուկայի պահանջներին համահունչ բազմազանեցնել և ակտիվացնել համալսարանի ընդունելության գործընթացը՝ ապահովելով բավարար համակազմ՝ տեխնոլոգիական կրթության բոլոր աստիճանների և մասնագիտությունների պահպանման և կայուն զարգացման համար:

Այսպիսով՝ կարևորվում է առաջարկվող ծրագրերի և մասնագիտությունների մարքեթինգը, սերտացնել կապը ուսանողների ու դպրոցների ավարտական դասարանների աշակերտների միջև՝ նպատակ ունենալով ազդել վերջիններիս հետագա մասնագիտական կողմնորոշման վրա:

**Կրթության որակի ապահովում և վերահսկողություն:** Ուսուցման որակը և կրթական ծրագրերի արդիականությունը եղել և մնում են համալսարանի մրցունակության և նրա շրջանավարտների ծառայունակության հիմնական երաշխիքները: Այս առումով հատկապես կարևորվում են այնպիսի նախապայմանային հիմնախնդիրներ, ինչպիսիք են՝ որակի գնահատման և ապահովման ներհամալսարանական լիարժեք գործող համակարգի առկայությունը, առաջարկվող կրթական ծրագրերի անվանացանկի համապատասխանությունը աշխատուժի շուկայի առկա պահանջներին, ինչպես նաև՝ դրանց բովանդակային և կառուցվածքային պարբերական կատարելագործումները՝ որակավորումների ազգային շրջանակին և փոփոխվող արտաքին պահանջներին համահունչ:

**Համալսարանի գիտական ներուժի արդյունավետ օգտագործման և հետագա զարգացման համար անհրաժեշտ մեխանիզմների հիմնախնդիրը:**

Այս տեսանկյունից կարևորագույն նշանակություն ունի ինչպես համալսարանի դասախոսների առավելագույն ներգրավվածությունը հետազոտական և նորարարական աշխատանքներում, այնպես էլ գիտական նոր կադրերի նպատակային պատրաստման գործընթացը:

Ուստի կարևորվում է համալսարանում կատարվող գիտական աշխատանքների, մասնավորապես՝ ֆինանսավորվող հետազոտական ծրագրերի, դրանց ծավալի կայուն աճն ու արդյունավետության բարձրացումը, փորձարարական բազայի ու ինֆորմացիոն ապահովման զարգացումն ու բարելավումը, Համալսարանի դասախոսների և ուսանողների առավելագույն ներգրավումը գիտահետազոտական նախագծերում ու աշխատանքներում:

Համալսարանը աշխատանքներ է տանում՝ պահովելու գիտական հետազոտությունների ինովացիոն կողմնորոշման համար անհրաժեշտ ենթակառուցվածքների և խթանող պայմանների ստեղծումը, նորաստեղծությանն ուղղված համալսարան-արդյունաբերություն հետազոտական համագործակցության համակողմանի զարգացումը՝ ինստիտուտների առավելագույն ներգրավումով, ձևավորել ռազմաարդյունաբերական համալիրի հետ կապի արդյունավետ մեխանիզմներ:

Կարևորվում է գիտական հետազոտությունների ու նորաստեղծային մշակումների արդյունքների պատշաճ հրապարակայնացումը, դրանց առևտրայնացմանն ուղղված մարքեթինգային միջոցառումների իրականացումը: Առավելագույնս օգտագործել Համալսարանի տեղեկատվական հնարավորությունները հասարակությանն ու գիտական հանրությանը Համալսարանում կատարվող հետազոտական և ինովացիոն աշխատանքներն ու դրանց արդյունքները ներկայացնելու համար:

Ամենակարևորը խրախուսվում է գիտական հանդեսներում և ժողովածուներում անգլիալեզու գիտական հրապարակումների ծավալի ավելացումը՝ միջոցներ ձեռնարկելով հետազոտողների շրջանում անգլերենի իմացության կատարելագործման ուղղությամբ:

**Ֆինանսավորման ու կառավարման մեխանիզմների հիմնախնդիրը:**

Համալսարանի զարգացման նոր խնդիրներն ու ծրագրերն առաջադրում են կառավարման համակարգի կատարելագործման պահանջ և վերջինիս արդյունավետության բարձրացման անհրաժեշտություն: Կառավարման համակարգի կատարելագործումը պետք է նպատակաուղղված լինի համալսարանի գործունեության կառավարման հիմնական գործընթացների ներդաշնակեցմանը, լիազորությունների և պատասխանատվությունների հստակ տարաբաշխմանը, կարևորագույն որոշումների ընդունման կոլեգիալության նախապայմանի անվերապահ պահպանմանը և ուսանողական ինքնավարության առավելագույնս զարգացմանը:

Կառավարման հիմնախնդիրների շարքում առանձնահատուկ է դասախոսական կազմի և վարչակազմի անբարենպաստ տարիքային կազմ և բարձր միջին տարիք:

Բարձր որակավորում ունեցող կադրային ներուժի առկայությունը համալսարանի զարգացման, անհրաժեշտ մակարդակով կրթության ապահովման և նորարարական տեխնոլոգիաներին տիրապետող ինժեներական կադրերի պատրաստման գրավականն է:

Համալսարանի զարգացման միտումներից և ինստիտուտային կառուցվածքի ձևավորման առանձնահատկություններից ելնելով՝ կարևորվում են կադրային ներուժի արդյունավետ օգտագործումը, որակյալ վարչակազմի առկայությունը, նրա կատարելագործումը, համալրումն ու երիտասարդացումը: Առկա պայմաններում հատկապես կարևորվում են այնպիսի հիմնախնդիրներ, ինչպիսիք են՝ դասախոսական հաստիքների օգտագործման արդ-

յունավետության բարձրացումը, հաստիքախնայողական քաղաքականության վարումը, դասավանդման արդյունավետության բարձրացումը:

Համալսարանի բնականոն գործունեության և առաջընթացի կարևորագույն երաշխիքներից մեկը նրա ֆինանսական կայունության ապահովումն է, որին մեծապես կնպաստի ոչ միայն ուսանողական համակազմի ավելացումը, կրթական նոր ծրագրերի առկայությունը, գիտական և գիտատեխնիկական ծրագրերի ընդլայնումը, այլ նաև ակտիվ ձեռնարկատիրական գործունեության իրականացումը:

Համալսարանի կրթական և հետազոտական ծրագրերի պատշաճ որակի անհրաժեշտ նախադրյալներից է դրանց իրականացման համարժեք նյութատեխնիկական բազայի ապահովումը: Այն ենթադրում է առկա բազայի մշտական նորացումն ու արդիականացումը և համապատասխանեցումը որակի շարունակաբար բարձրացող պահանջներին:

Հետագա զարգացման և կատարելագործման առաջնահերթ խնդիրներ են նաև համալսարանի ուսումնագիտական լաբորատոր բազայի վերազինումն ու ընդլայնումը՝ հագեցնելով այն նորագույն տեխնիկայով և տեխնոլոգիաներով:

Հատուկ կարևորություն են ստանում այնպիսի ռազմավարական խնդիրներ, ինչպիսիք են՝ **համալսարանի միջազգային կապերի ընդլայնումն ու բազմազանեցումը**, կրթական ծրագրերի միջազգայնացումը, ուսանողների և դասախոսների ակադեմիական շարժունության հնարավորությունների ընդլայնումը, կրթության որակի միջազգային ստանդարտների ապահովումն ու, որպես հետևանք, Համալսարանի ընդլայնվող միջազգային ճանաչումը և վարկանիշի բարձրացումը:

Նպաստել համալսարանի միջազգային ճանաչման շրջանակի ընդլայնմանը և միջազգային հեղինակության բարձրացմանը, խթանել միջազգային գիտակրթական ինտեգրման գործընթացներում համալսարանի շարունակական ներգրավումը:

**Եզրակացություն և գրականություն:** Այսպիսով՝ Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանը Հայաստանի Հանրապետության ամենանշանակալի կրթական հաստատություններից է: Ներկայումս Պոլիտեխնիկական համալսարանն ազգային բարձրագույն տեխնիկական կրթության առաջատարներից է և հեղինակություն է վայելում ոչ միայն մեր երկրում, այլև նրա սահմաններից դուրս: Այն տեխնիկական գիտությունների խոշոր գիտահետազոտական կենտրոն է:

Համալսարանն իր 90-ամյա պատմության ընթացքում ձևավորել է որոշակի մնայուն արժեքներ և ավանդույթներ, որոնք միավորում են դասախոսների և ուսանողների մի քանի սերունդների և բնորոշում նրա եզակի «պոլիտեխնիկական» նկարագիրը:

Փաստական նյութի աղբյուր են ծառայել ուսումնական հաստատության ընթացիկ բազմաբնույթ փաստաթղթերը՝ ուսումական ծրագրերը, հնգամյա ռազմավարական պլանը, հաշվետու փաստաթղթերը, հրամանները, վերահսկողություն իրականացնող կառույցների փաստաթղթերը և այլն:

**Օգտագործված գրականության ցանկ**


1. Ենթակառուցվածքային կարողությունների ինքնավերլուծության հաշվետվություն, ՀԱՊՀ, Երևան, 2012թ. 189 էջ:
2. Հայաստանի Ազգային Պոլիտեխնիկական համալսարան (հիմնադրամ) ուսումնական ստորաբաժանումների ցուցակ:
3. Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի Վանաձորի մասնաճյուղի կանոնադրություն, փոփոխություններով, Vanadzor kanonadrutyun_skan_hastatvac.pdf 21 էջ:
4. ՀԱՊՀ պաշտոնական կայք https://polytech.am/polytechnic/ :
5. ՀԱՊՀ ստրատեգիական պլան (2016-2020թթ.), http://polytech.am/shared-files/36847/2016-2020%D4%B9%D4%B9.-%D5%8D%D5%8F%D5%90%D4%B1%D5%8F%D4%B5%D4%B3%D4%BB%D4%B1%D4%BF%D4%B1%D5%86-%D5%8A%D4%BC%D4%B1%D5%86.pdf 73 էջ:
6. ՀՀ 14.04.1999 N ՀՕ-297 օրենք, հոդված 4:
7. Մ. Զասլավսկայա, Տիտարենկո, Հետխորհրդային երկրներում բարձրագույն կրթության համակարգերի միջազգայնացման հիմնախնդիրները (Հայաստանի և Բելոռուսի օրինակով), http://ysu.am/files/02M_Zaslavskaya_L_Titarenko.pdf , ՝ 03.12.2019, 10 էջ:

# ԻՐԱՎՈՒՆՔԻ ԲԱՑԵՐԻ ԱՌԱՋԱՑՄԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ ԵՎ ՀԱՂԹԱՀԱՐՈՒՄՆ ԱՆԱԼՈԳԻԱՅԻ ՄԻՋՈՑՈՎ

**ԱՐՄԵՆ ԱՍԱՏՐՅԱՆ**
ՀՀ փաստաբանների պալատի
նախագահի առաջին տեղակալ,
ԵՊՀ պետության և իրավունքի տեսության
ու պատմության ամբիոնի դասախոս,
իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ
asatryan.armen@gmail.com

**Համառոտագիր**

Հոդվածում հեղինակը վեր է հանել և քննարկել իրավունքի բացերի առաջացման խնդիրը այն ասպեկտով, որ իրավունքը պահանջում է ամրագրել այս պահին գոյություն ունեցող հասարակական հարաբերությունները, մինչդեռ օրենսդրին դժվար է արտացոլել գոյություն ունեցող իրականությունը և կանխատեսել զարգացման հնարավոր տարբերակները: Հասարակական հարաբերությունների խմբերը կարող են դուրս մղվել օրենսդրի տեսադաշտից, քանի որ հնարավոր չէ նշել ու նկատի ունենալ հասարակական կյանքի բոլոր երևույթները և այն իրավիճակները, որոնց հետ կապված են իրավաբանական հետևանքների առաջացումը: Օրենսդիրը մշտապես ջանում է ճիշտ արտացոլել հասարակական հարաբերությունների ընթացքը և խուսափել հասարակության պահանջներին անհամապատասխան իրավական դրսևորումներից: Մինչդեռ, այս կամ այն հանգամանքի բերումով, որոշակի ժամանակահատվածում որոշակի փաստեր և հանգամանքներ հայտնվում են իրավունքի կարգավորման շրջանակից այն կողմ, որոշներն էլ, հակառակը, շարունակում են մնալ իրավունքի կարգավորման շրջանակում թեև կորցրել են իրենց իրավական նշանակությունը:

Իրավագիտության մեջ բացերի առաջացման պատճառները նախ և առաջ բաժանվում են երկու հիմնական խմբի՝ օբյեկտիվ պատճառների (բացեր առաջացնող օբյեկտիվ հանգամանքներ) և սուբյեկտիվ պատճառների (բացեր առաջացնող սուբյեկտիվ հանգամանքներ):

Հատկանշական է, որ հոդվածում անդրադարձ է կատարվել մի շարք հեղինակների տեսակետների. օրինակ՝ Վ.Վ. Լազարևը և բազմաթիվ այլ գիտնականներ, որոնք բացերի առաջացման օբյեկտիվ պատճառ համարում են իրավունքի համապատասխան նորմերի ընդունման պահին իրավական կարգավորման կարիք ունեցող այն հարաբերությունների բացակայությունը,

որոնք առաջանում են հետագայում, իսկ սուբյեկտիվ պատճառ՝ օրենսդրի կողմից կարգավորվող հարաբերությունների ոչ ճիշտ գնահատումը և բացթողումները:

Վ. Ներսիսյանցը այդ կապակցությամբ գրում է «Իրավունքում բացերը կարող են առաջանալ, լինել կա՛մ զարգացող հասարակական հարաբերություններից օրենսդրության անխուսափելի հետ մնալու հետևանք, կա՛մ էլ հենց օրենսդրի սխալների ու բացթողումների, նրա օրինաստեղծ մշակույթի ցածր մակարդակի և այլնի արդյունք»:

Նշած առաջին օբյեկտիվ պատճառը՝ կապված իրավական կարգավորման ենթակա նոր հասարակական հարաբերությունների ծագման և զարգացման հետ, համարվում է գործող օրենսդրության «հնանալու», նորանոր ի հայտ եկող հասարակական հարաբերությունների կարգավորման անհնարինության հանգամանքները և հասարակական կյանքի բազմազան հարցերի իրավական կարգավորման համար պահանջվող ժամանակը, որն անհրաժեշտ է դրանց լրիվ և բազմակողմանի կարգավորման փորձ և գիտելիք ձեռք բերելու համար: Բնական է, որ նշված հասարակական հարաբերությունները կարող են ծագել ու զարգանալ այս կամ այն երկրի, նաև՝ Հայաստանի Հանրապետության քաղաքական, տնտեսական և սոցիալական կյանքի փոփոխության, հասարակական կյանքի նոր բնագավառների առաջացման հետևանքով, որոնք ներառված չեն իրավական կարգավորման ոլորտում: Նման իրադրության մեջ օրինաստեղծ մարմինները «չեն» հասցնում արագորեն տիրապետել գիտության նոր տեխնոլոգիաներին, շուկայական և դրա հետ կապված բազմազան և բազմաթիվ այլ հարաբերություններին, անընդհատ զգացվում է լրացուցիչ նորմատիվ կարգավորման, երկրի ամբողջ օրենսդրության նորացման կարիք: Այստեղ էլ հաճախ հնարավոր չի լինում կանխատեսել ներկա կամ ապագա կենսական իրադրությունների բազմազանությունը, և, կամա թե ակամա, իրավունքում առաջանում են բացեր:

Անշուշտ, օրենսդրությունն ընդհանրապես մշտապես հնանալու հատկություն ունի, որը բնականաբար կապված է դրա կարգավորման օբյեկտ հանդիսացող հասարակական հարաբերությունների մշտական զարգացման, իրավական կարգավորման կառուցակարգերի հետ:

Այսպիսով՝ իրավունքի բացերի առաջացման օբյեկտիվ պատճառներ կարող են լինել մի շարք գործոններ, որոնցից են՝ օրենսդրության հնացումը, իրավական կյանքի անվերջ բազմազանությունը և նոր հարաբերությունների և կապերի առաջացումը, որոնք գոյություն չեն ունեցել այս կամ այն նորմի

ընդունման պահին և օրենսդիրը չի նախատեսել և չէր էլ կարող նախատեսել դրանք:

Բացի այդ՝ ժամանակակից իրավական պետություններում գոյություն ունեն մարդու իրավունքների և ազատությունների ապահովման զարգացած համակարգեր և ինստիտուտներ, ապահովված են այդ իրավունքների իրականացման և պաշտպանության գործընթացի տարբեր փուլեր: Այս առաջադրանքի կատարումն ուղեկցվում է ողջ իրավական համակարգի, օրենսդրության համակարգի բարեփոխմամբ, սակայն տնտեսական, քաղաքական, աշխատանքային և այլ հարաբերությունների առաջանցիկ զարգացմամբ, նույնիսկ իդեալական նորմատիվ գործունեության առկայության դեպքում, կարգավորումը դժվարանում է: Ժամանակակից ազգային իրավական համակարգի թերությունների ոչ պակաս կարևոր նախադրյալներն են օրինագծերի պատրաստման և ընդունման համակարգի թերությունները:

Հարկ է նշել, որ օրենսդրական գործունեությունն ինքնին ի վիճակի չէ արագ և արդյունավետ կերպով վերացնելու իրավական համակարգում առկա բացերը: Այս պայմաններում, մասնավորապես, բարձրանում է իրավակարգավորման ոլորտում վերադաս ատյանների նախադեպային որոշումների իրավական դիրքերի դերն ու նշանակությունը: Վերոգրյալը թույլ է տալիս եզրակացնել, որ օրենքի բացթողումների հայտնաբերման և դրանց հաղթահարման խնդրի ուսումնասիրությունն առավել քան տեղին է:

**Բանալի բառեր և բառակապակցություններ.** իրավունքի բաց, օրենսդրական բաց, օրենքի անալոգիա, իրավունքի անալոգիա, իրավունքի բացի հաղթահարում, նորմատիվ պատվիրանի բացակայություն:

# ПРИЧИНЫ ВОЗНИКНОВЕНИЯ ПРОБЕЛОВ В ПРАВЕ И ИХ ПРЕОДОЛЕНИЕ С ПОМОЩЬЮ АНАЛОГИИ

**АРМЕН АСАТРЯН**

Первый заместитель председателя Палаты адвокатов Республики Армения,
Преподаватель ЕГУ кафедры теории государства и права и истории,
кандидат юридических наук, доцент

**Аннотация**

В статье рассмотрена проблема пробелов в праве в том аспекте, что закон требует закрепления сложившихся общественных отношений, но законодателю сложно отразить существующую действительность и спрогнозировать возможные варианты развития. Группы общественных отношений могут быть вытеснены из поля зрения закона, поскольку невозможно упомянуть и учесть все явления общественной жизни и ситуации, связанные с наступлением правовых последствий. Законодатель всегда старается правильно отразить ход общественных отношений и избежать правовых проявлений, не соответствующих запросам общества. Между тем в силу тех или иных обстоятельств в определенный период времени одни факты и обстоятельства выходят за рамки правового регулирования, другие, наоборот, продолжают оставаться в сфере правового регулирования, хотя и утратили свою юридическую значимость.

Причины пробелов в судебной практике прежде всего делятся на две основные группы: объективные причины (объективные обстоятельства, вызывающие пробелы) и субъективные причины (субъективные обстоятельства, вызывающие пробелы).

Примечательно, что в статье обращается внимание на взгляды ряда авторов, таких как В.В. Лазарев и многие другие ученые, которые объективной причиной пробелов считают отсутствие отношений, нуждающихся в правовом регулировании, на момент принятия соответствующих норм права, а субъективной причиной - неправильную оценку и упущения регулируемых отношений законодателем.

В связи с этим В. Нерсисянц пишет: «Пробелы в праве могут возникать либо в результате неизбежного отставания законодательства от развивающихся общественных отношений, либо в результате ошибок и упущений законодателя, низкого уровня его правотворческой культуры и т. д."

Первой названной объективной причиной, связанной с возникновением и развитием новых общественных отношений, подлежащих правовому регулированию, считается «устаревание» действующего законодательства, обстоятельство невозможности регулирования вновь возникающих общественных отношений, правовое регулирование различные вопросы общественной жизни, время, необходимое для приобретения опыта и знаний по их полному и всестороннему регулированию. Естественно, что указанные

общественные отношения могут возникать и развиваться в результате изменения политической, экономической и социальной жизни той или иной страны, как и Республики Армения, появления новых сфер общественной жизни, не входящих в сферу правового регулирования. В такой ситуации правотворческим органам «не удается» быстро освоить новые технологии науки, рынка и многих других отношений, связанных с ним, возникает постоянная потребность в дополнительном нормативном регулировании, обновлении всего законодательства. страна. Здесь тоже часто не удается предсказать многообразие текущих или будущих жизненных ситуаций, и волей-неволей в законе возникают пробелы.

Несомненно, что законодательство в целом имеет свойство устаревать, что связано с постоянным развитием общественных отношений, являющихся объектом его регулирования, структур правового регулирования.

Таким образом, объективными причинами возникновения правовых пробелов может быть ряд факторов, в том числе устаревание законодательства, бесконечное многообразие правовой жизни, возникновение новых отношений и связей, не существовавших на момент принятия законодательства, и предвидеть ту или иную норму законодатель не мог.

Кроме того, в современных правовых государствах развиты системы и институты обеспечения прав и свобод человека, предусмотрены различные этапы процесса реализации и защиты этих прав. Выполнению этой задачи сопутствует вся правовая система с реформированием системы законодательства, но с поступательным развитием экономических, политических, трудовых и других отношений, даже при наличии идеальной нормотворческой деятельности, регулирование становится затруднительным. Не менее важными предпосылками недостатков современной национальной правовой системы являются недостатки системы подготовки и принятия законопроектов.

Следует отметить, что сама законотворческая деятельность не способна быстро и эффективно устранить имеющиеся пробелы в правовой системе. В этих условиях, в частности, возрастает роль и значение правовых позиций прецедентных решений вышестоящих судов в сфере правового регулирования. Вышеизложенное позволяет сделать вывод, что исследование проблемы выявления пробелов в праве и их преодоления является более чем целесообразным.

**Ключевые слова и словосочетания:** пробелы в праве, пробел в законодательстве, аналогия права, аналогия закона, преодоления пробелов в праве, отсутствие нормативно-правовой регулировки.

# CAUSES OF LEGAL GAPS AND OVERCOMING THEM BY ANALOGY

**ARMEN ASATRYAN**
First Deputy Chairman of the Chamber of Advocates of the RA,
Yerevan StateUniversity, Chair of History and Theory of State and Law, Lecturer
PhD in Law,
Associate Professor

**Abstract**

In the article, the author raised and considered the problem of gaps in the law from the perspective that the law requires consolidation of existing social relations. At the same time, it is difficult for the legislator to reflect on the existing reality and predict possible development options. Social groups may be excluded from the scope of the law since it is impossible to mention and consider all phenomena of public life and situations involving legal consequences. The legislator always tries to reflect the course of social relations correctly and to avoid legal manifestations that do not meet the demands of society. Meanwhile, due to unavoidable circumstances in a certain period, some facts and circumstances go beyond the scope of legal regulation; some, on the contrary, continue to remain in the sphere of legal regulation, although they have lost their legal significance.

The reasons for gaps in judicial practice are primarily divided into two main groups: objective reasons (objective circumstances causing gaps) and subjective reasons (subjective circumstances causing gaps).

It is noteworthy that the article refers to the views of several authors, such as V.V. Lazarev and many other scientists, who consider the objective reason for the gaps to be the absence of relations in need of legal regulation at the time of the adoption of the relevant legal norms, and the subjective reason is an incorrect assessment and omission of regulated relations by the legislator.

V. V. Nersisyants writes: "Gaps in the law may arise either as a result of the inevitable lag of legislation from developing social relations or as a result of mistakes and omissions of the legislator, the low level of his law-making culture. etc".

The first named objective reason associated with the emergence and development of new public relations subject to legal regulation is considered to be the "obsolescence" of the current legislation, the circumstances of the impossibility of regulating newly emerging public relations, legal regulation of various issues of public life, the time required to acquire experience and knowledge on their complete and comprehensive regulation. Naturally, these public relations can arise and develop as a result of changes in the political, economic and social life of the Republic of Armenia and the emergence of new spheres of public life that are not included in the sphere of legal regulation. In such a situation, law-making bodies "fail" to quickly master new technologies of science, the market and various and many other relations related to it; there is a constant need for additional regulatory regulation and updating of the entire

legislation of the Russian Federation. It is also often impossible to predict the diversity of current or future life situations, and willy-nilly gaps arise in the law.

There is no doubt that legislation as a whole tends to become obsolete, which is naturally associated with the constant development of public relations that are the object of its regulation, legal regulation structures.

Thus, the objective reasons for the emergence of legal gaps may be several factors, including the obsolescence of legislation, the infinite variety of legal life, and the emergence of new relationships and connections that did not exist at the time of the adoption of legislation. The legislator could not and could not foresee this or that norm.

In addition, modern legal states have developed systems and institutions for ensuring human rights and freedoms and provide for various stages in the process of implementing and protecting these rights. The entire legal system accompanies the fulfilment of this task with the reform of the legislative system. However, regulation becomes difficult with the progressive development of economic, political, labor, and other relations, even in the presence of ideal normative activity. Equally essential prerequisites for the shortcomings of the modern national legal system are the shortcomings of the system of preparation and adoption of draft laws.

It should be noted that the legislative activity itself cannot quickly and effectively eliminate the existing gaps in the legal system. In these conditions, in particular, the role and importance of the legal positions of precedent decisions of higher courts in the field of legal regulation increases. The above allows us to conclude that the study of the problem of identifying gaps in the law and overcoming them is more than appropriate.

**Keywords and phrases:** Gap in law, gap in the legislature, analogy rights, analogy law, absence of normative-legal regulations.

«Պատճառ» կատեգորիան, որն առաջացել է լատիներեն «causa» եզրույթից, նշանակում է մի երևույթ, որն անմիջականորեն պայմանավորում է մեկ այլ երևույթի՝ հետևանքի առաջացումը **[10]:**

Իրավագիտության մեջ և իրավունքի բոլոր ճյուղերում «պատճառը»-ը, ավելի ճիշտ՝ արարքի և հետևանքի միջև «պատճառական կապի», սուբյեկտի արարքի (գործողության կամ անգործության) իրավաբանական որակման, հետևաբար և մեղավորին իրավաբանական պատասխանատվության ենթարկելու կամ առաջացած հետևանքները, տվյալ դեպքում՝ իրավունքի բացերը հաղթահարելու հիմք հանդիսացող անհրաժեշտ հանգամանքներն ու առաջացած հետևանքները պարզելու գլխավոր բնութագրիչն է, այլ կերպ՝ իրավունքում բացերը բացահայտող կառուցակարգի բաղկացուցիչներից մեկը:

Իրավունքի բացերի առաջացման խնդիրն այն է, որ իրավունքը պահանջում է ամրագրել այս պահին գոյություն ունեցող հասարակական հա-

րաբերությունները, մինչդեռ օրենսդրին դժվար է արտացոլել գոյություն ունեցող իրականությունը և կանխատեսել զարգացման հնարավոր տարբերակները: Հասարակական հարաբերությունների խմբերը կարող են դուրս մղվել օրենսդրի տեսադաշտից, քանի որ հնարավոր չէ նշել և նկատի ունենալ հասարակական կյանքի բոլոր երևույթները և այն իրավիճակները, որոնց հետ կապված են իրավաբանական հետևանքների առաջացումը: Օրենսդիրը մշտապես ջանում է ճիշտ արտացոլել հասարակական հարաբերությունների ընթացքը և խուսափել հասարակության պահանջներին անհամապատասխան իրավական դրսևորումներից: Մինչդեռ, այս կամ այն հանգամանքի բերումով, որոշակի ժամանակահատվածում որոշակի փաստեր և հանգամանքներ հայտնվում են իրավունքի կարգավորման շրջանակից այն կողմ, որոշներն էլ, հակառակը, շարունակում են մնալ իրավունքի կարգավորման շրջանակում թեև կորցրել են իրենց իրավական նշանակությունը:

Իրավագիտության մեջ բացերի առաջացման պատճառները նախևառաջ բաժանվում են երկու հիմնական խմբի՝ օբյեկտիվ պատճառների (բացեր առաջացնող օբյեկտիվ հանգամանքներ) և սուբյեկտիվ պատճառների (բացեր առաջացնող սուբյեկտիվ հանգամանքներ):

Վ.Վ. Լազարևը, բազմաթիվ այլ գիտնականներ բացերի առաջացման օբյեկտիվ պատճառ համարում են իրավունքի համապատասխան նորմերի ընդունման պահին իրավական կարգավորման կարիք ունեցող այն հարաբերությունների բացակայությունը, որոնք առաջանում են հետագայում, իսկ սուբյեկտիվ պատճառ՝ օրենսդրի կողմից կարգավորվող հարաբերությունների ոչ ճիշտ գնահատումը և բացթողումները **[2, էջ 209]:**

Վ. Ներսիսյանցը այս կապակցությամբ գրում է. «Իրավունքում բացերը կարող են առաջանալ, լինել կա՛մ զարգացող հասարակական հարաբերություններից օրենսդրության անխուսափելի հետ մնալու հետևանք, կա՛մ էլ հենց օրենսդրի սխալների ու բացթողումների, նրա օրինաստեղծ մշակույթի ցածր մակարդակի և այլնի արդյունք» **[1, էջ 251]:**

Նշած առաջին օբյեկտիվ պատճառը՝ կապված իրավական կարգավորման ենթակա նոր հասարակական հարաբերությունների ծագման և զարգացման հետ, համարվում է գործող օրենսդրության «հնանալու», նորանոր ի հայտ եկող հասարակական հարաբերությունների կարգավորման անհնարինության հանգամանքները և հասարակական կյանքի բազմազան հարցերի իրավական կարգավորման համար պահանջվող ժամանակը, որն անհրաժեշտ է դրանց լրիվ և բազմակողմանի կարգավորման փորձ և գիտե-

լիք ձեռք բերելու համար: Բնական է, որ նշված հասարակական հարաբերությունները կարող են ծագել ու զարգանալ այս կամ այն երկրի, նաև՝ Հայաստանի Հանրապետության քաղաքական, տնտեսական և սոցիալական կյանքի փոփոխության, հասարակական կյանքի նոր բնագավառների առաջացման հետևանքով, որոնք ներառված չեն իրավական կարգավորման ոլորտում: Նման իրադրության մեջ օրինաստեղծ մարմինները «չեն» հասցնում արագորեն տիրապետել գիտության նոր տեխնոլոգիաներին, շուկայական ու դրա հետ կապված բազմազան և բազմաթիվ այլ հարաբերություններին, անընդհատ զգացվում է լրացուցիչ նորմատիվ կարգավորման, երկրի ամբողջ օրենսդրության նորացման կարիք: Այստեղ էլ հաճախ հնարավոր չի լինում կանխատեսելու ներկա կամ ապագա կենսական իրադրությունների բազմազանությունը, և, կամա թե ակամա, իրավունքում առաջանում են բացեր:

Անշուշտ, օրենսդրությունն ընդհանրապես մշտապես հնանալու հատկություն ունի, որը բնականաբար կապված է դրա կարգավորման օբյեկտ հանդիսացող հասարակական հարաբերությունների մշտական զարգացման, իրավական կարգավորման կառուցակարգերի հետ:

Այսպիսով՝ իրավունքի բացերի առաջացման օբյեկտիվ պատճառներ կարող են լինել մի շարք գործոններ, որոնցից են՝ օրենսդրության հնացումը, իրավական կյանքի անվերջ բազմազանությունն ու նոր հարաբերությունների և կապերի առաջացումը, որոնք գոյություն չեն ունեցել այս կամ այն նորմի ընդունման պահին և օրենսդիրը չի նախատեսել ու չէր էլ կարող նախատեսել դրանք:

Այսպիսի բացեր առաջանում են հենց նորմատիվ ակտի հրապարակման պահին և այն բանի հետևանքով, որ իրավաստեղծ մարմինը ընդհանրապես չի իմացել նորմատիվ կարգավորման կարիք ունեցող հանգամանքների առկայության մասին, չի գիտակցել իրեն հայտնի հասարակական հարաբերությունների կարգավորման անհրաժեշտությունը, իմացել է դրանց մասին և գիտակցել է իրավունքում դրանց ամրապնդման անհրաժեշտությունը, բայց իրավական ակտի հրապարակման ժամանակ անգիտակցաբար բաց է թողել դրանց կարգավորումը, գիտակցել և ակտի կայացման պահին կարգավորել է տվյալ հարաբերությունը, բայց օրենսդրության երկարատև համակարգման (կոդիֆիկացիայի) պատճառով տվյալ նորմը ամբողջությամբ կամ մասնակիորեն դադարել են հասարակական պահանջմունքները բավարարելուց:

Ինչպես նշվել էր, իրավունքում բացեր կարող են առաջանալ ոչ միայն օբյեկտիվ, այլ նաև սուբյեկտիվ պատճառներով: Սուբյեկտիվ պատճառներով առաջացած բացերը  ինչպիսիք են՝ օրենսդրի կողմից գոյություն ունեցող հասարակական հարաբերությունների սխալ գնահատելը, օրինաստեղծ մշակույթի ցածր մակարդակի հետևանքով ճիշտ չարտահայտվելը և հենց այդ պատճառով իրավունքի նորմերի միջև հակասություններ (կոլիզիա) ստեղծելը, օրենսդրության անկատարությունը, պատշաճ օրենսդրական տեխնիկայի բացակայությունը, սուբյեկտիվ բնույթի անբարենպաստ այլ գործոնները խաթարում են հասարակական հարաբերությունների բնականոն գործունեությունը, առաջացնում են մարդու հիմնարար իրավունքների և ազատությունների պաշտպանության մեխանիզմերի խեղաթյուրում:

ՀՀ իրավունքի գրեթե բոլոր ճյուղերի օրենսդրական և ենթաօրենսդրական ակտերը զուրկ չեն բացերից և հակասություններից, հարցի լուծումը դատական հայեցողությանը թողնող նորմերից, ՀՀ Սահմանադրական դատարանի կողմից հարցի լուծումը դատարաններին թողնող իրավիճակներից, ընդհանուր իրավասության դատարանների կողմից իրավական դրույթների՝ սահմանադրությանը և միջազգային իրավունքին ոչ համահունչ մեկնաբանություններից, կոլիզիաներից և մրցակցող նորմերից, որոնք հող են ստեղծում իրավական ժխտողականության, ինչպես նաև անհարմարություններ՝ իրավակիրառող սուբյեկտների, քաղաքացիների և իրավաբանական անձանց համար:

Իրավունքի բացերի սուբյեկտիվ պատճառների թվին պետք է դասել նաև այն դեպքերը, երբ օրենսդիրը ապավինում է այնպիսի վերացական հասկացությունների, ինչպիսիք են՝ գնահատման ենթակա (օրինակ՝ ողջամիտ ժամկետ, էական վնաս և այլն) հասկացություններին:

Եթե ընդհանրացված ձևով բնորոշելու լինենք իրավունքի բացերի առաջացման սուբյեկտիվ պատճառները, ապա դրանք իրավական կարգավորման ենթակա հասարակական հարաբերությունների ոչ ճիշտ գնահատումն է, օրենսդրի բացթողումները, նրա վրիպակները, ոչ ճիշտ արտահայտվելը, իրավունքի նորմերի միջև արմատական հակասություններ ստեղծելը և այլն:

Սուբյեկտիվ պատճառների թվին են դասվում նաև իրավունքի բացերի առաջացման այն դեպքերը, երբ դրանք առաջացել են օրենսդրական տեխնիկայի և այն լեզվի կանոնները անտեսելու հետևանքով, որով գրված է օրենքը, կամ էլ համապատասխան եզրույթներից սխալ օգտվելու և օրենսդրի միտքն իրավաբանորեն սխալ ձևակերպելու հետևանքով:

Ըստ Գ. Հ. Սաֆարյանի՝ իրավական հակասությունները և բացերը հետևանք են տիրող իրավական նիհիլիզմի, որը դրսևորվում է ինչպես իրավաստեղծ, այնպես էլ իրավակիրառ ոլորտում: Հետևաբար, պայքարը այդ հակաիրավական չարիքի դեմ պետք է լինի համարժեք՝ սկսած պետական իշխանություններից մինչև շարքային քաղաքացու գործուն պայքարը **[5, էջ 158]:**

Իրավունքի/օրենքի բացերի առաջացման ոչ պակաս կարևոր խնդիր է օրինագծի մշակման և ընդունման մեխանիզմների անկատարությունը: Արդյունքում բազմաթիվ օրենքներ ծանրաբեռնված են հղում պարունակող նորմերով և հստակ չեն, ինչի հետևանքը օրենսդրական համակարգի ողողումն է բացերով և հակասություններով, որոնք առաջացնում են բազմաթիվ մեկնաբանություններ, իր հերթին դա բերում է իրավակիրառ գործունեության մեջ բացերի առաջացմանը, քաղաքացիների և տնտեսվարող սուբյեկտների իրավունքների խախտմանը, օրինաստեղծ գործունեության տարբեր մակարդակներում հակասությունների:

Այսպիսով՝ իրավունքի բացերի առաջացման պատճառների ուսումնասիրությունը թույլ է տալիս մշակել իրավունքի բացերի հաղթահարման արդյունավետ միջոցներ, ինչպես նաև ներկայացնել իրավական նոր նորմերի ստեղծման ժամանակ դրանց առաջացումը կանխող մեխանիզմներ: Ակնհայտ է, որ գործնականում հնարավոր չէ կանխատեսել բոլոր հնարավոր իրավիճակները, որոնց հետ իրավաստեղծն ապագայում կարող է բախվել և օրենսդիրը նոր նորմատիվ իրավական ակտն ընդունելու և բացը լրացնելու կամ վերացնելու փոխարեն շատ հաճախ գնում է «տրորված» ճանապարհով՝ կիրառելով օրենքի կամ իրավունքի անալոգիան, սկսելով փնտրել նման հարցերով իրավաբանական պրակտիկա:

Տեսական գրականության մեջ ամրագրված է, որ անալոգիան իրավունքում օրենքով որոշակիորեն չնախատեսված, բայց իրավական կարգավորում պահանջող հարաբերության վճռումն է օրենսդրության համանման նորմով կամ իրավունքի ընդհանուր սկզբունքով **[2, էջ 570]:**

Եթե օրենքում բացակայում է կոնկրետ հարաբերության ուղղակի լուծումը, ապա գործը որոշվում է այն օրենքով, որը առավել նման հարաբերության կարգավորում է պարունակում (օրենքի անալոգիա), իսկ եթե այդպիսի հարաբերության վերաբերյալ գործող օրենսդրությունը հնարավոր չէ կիրառել, ապա գործում են իրավունքի ընդհանուր սկզբունքները (իրավունքի անալոգիա):

Խորհրդային արդարադատության պրակտիկայում իրավունքի անալոգիան հազվագյուտ երևույթ էր: Անալոգիան, որպես կանոն, համարվում է բացերի հաղթահարման առավել ընդունելի և տարածված ճանապարհ, ինչի վերաբերյալ խոսելիս դեռևս հույն փիլիսոփա Արիստոտելը նշել է, որ անալոգիան կարելի է համարել ապացույցների ստացման մի էվրիստիկ ճանապարհ, որը դիտարկվում էր որպես հռետորական մի ձև՝ իրենում ներառելով սիլլոգիզմն ու ինդուկցիան: «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի համաձայն՝ իրավական ակտերի անալոգիա կարող է կիրառվել, եթե օրենսդրության մեջ բացակայում է կոնկրետ հասարակական հարաբերությունը կարգավորող իրավական նորմը, սակայն օրենսդրությամբ սահմանված է համանման հարաբերությունները կարգավորող այլ իրավական նորմ, ապա այդպիսի հարաբերությունների նկատմամբ (եթե դա չի հակասում դրանց էությանը) կիրառվում են համանման հարաբերություններ կարգավորող իրավական նորմերը:

Օրենքի կամ իրավունքի անալոգիա չի կարող կիրառվել, եթե դրանով սահմանափակվում են անձանց իրավունքները, ազատությունները, կամ նրանց համար նախատեսվում է նոր պարտականություն կամ պատասխանատվություն, կամ խստացվում են նրանց նկատմամբ կիրառվող պատասխանատվության, հարկադրանքի միջոցները կամ դրանց կիրառման կարգը, հարկերի, տուրքերի և այլ պարտադիր վճարների վճարման կարգը, անձանց գործունեության նկատմամբ հսկողություն ու վերահսկողություն իրականացնելու պայմանները և կարգը **[2]:**

Ներկայացնենք գերմանացի փիլիսոփա Գ. Վ. Լեյբնիցի տեսակետը, ում կարծիքով, անալոգիան ներկայացվում էր որպես օրենքում նույնական կարգավորումների վերաբերյալ արտահայտված գիտական և փիլիսոփայական ճանաչողության ձև: Ըստ նրա՝ նման նույնականացումները կարող են հնարավոր համարվել, եթե ներկայացված դեպքերի միջև տարբերություններ չկան կամ իրենց բնույթով էապես չեն տարբերվում: Կարելի է ասել, որ անալոգիայի, որպես իրավունքի բացի հաղթահարման միջոցի ուսումնասիրության ակունքները հասնում են դեռևս վաղ պատմական ժամանակաշրջաններ: Գրեթե բոլոր երկրներում օրենսդրական մակարդակով ամրագրվում է անալոգիայի կիրառելիությունը, որն անկախ տարբեր երկրների օրենսդիր մարմինների կողմից տրված բնորոշումների, կոչված է լուծելու մեկ հարց՝ հաղթահարել իրավունքի բացը՝ ըստ անհրաժեշտության օգտագործելով իրավունքի ընդհանուր սկզբունքները, սահմանադրական դոկտրինը, սովորույթները: ՀՀ օրենսդրության շրջանակներում անալոգիայի մասին հի-

շատակվում է թվով 5 իրավական ակտերում՝ քաղաքացիական, ընտանեկան, աշխատանքային, քաղաքացիական դատավարության և քրեական օրենսգրքերում: Անալոգիան քաղաքացիական իրավունքում կիրառվում է այն դեպքերում, երբ Քաղաքացիական օրենսգրքի կարգավորման ոլորտում ընդգրկված հարաբերություններն ուղղակիորեն կարգավորված չեն օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, և բացակայում է դրանց նկատմամբ կիրառելի գործարար շրջանառության սովորույթը (գործարար շրջանառության սովորույթ է համարվում ձեռնարկատիրական գործունեության որևէ բնագավառում ձևավորված և լայնորեն կիրառվող օրենսդրությամբ չնախատեսված վարքագծի կանոնը, անկախ դրա՝ որևէ փաստաթղթում ամրագրման հանգամանքից) **[2]**, նման հարաբերությունների նկատմամբ, եթե դա չի հակասում դրանց էությանը, կիրառվում են համանման հարաբերություններ կարգավորող քաղաքացիական օրենսդրության նորմերը (օրենքի անալոգիա): Օրենքի անալոգիայի կիրառման անհնարինության դեպքում կողմերի իրավունքները և պարտականությունները որոշվում են՝ ելնելով քաղաքացիական օրենսդրության սկզբունքներից (իրավունքի անալոգիա): Քաղաքացիական իրավունքները սահմանափակող և պատասխանատվություն սահմանող նորմերի կիրառումն անալոգիայով չի թույլատրվում: Հայաստանի Հանրապետության ընտանեկան օրենսգիրքը սահմանում է ընտանեկան հարաբերությունների նկատմամբ ընտանեկան օրենսդրության և քաղաքացիական կիրառումն անալոգիայի կարգով: ՀՀ ընտանեկան օրենսգրքի համաձայն**[2]**, եթե ընտանիքի անդամների միջև հարաբերությունները կարգավորված չեն ընտանեկան օրենսդրությամբ կամ կողմերի համաձայնությամբ, և բացակայում են նշված հարաբերություններն ուղղակիորեն կարգավորող քաղաքացիական իրավունքի նորմերը, ապա նման հարաբերությունների նկատմամբ (եթե դա չի հակասում դրանց էությանը) կիրառվում են նույնպիսի հարաբերությունները կարգավորող ընտանեկան և (կամ) քաղաքացիական իրավունքի նորմերը (օրենքի անալոգիա): Օրենքի անալոգիայի կիրառման անհնարինության դեպքում ընտանիքի անդամների իրավունքներն ու պարտականությունները որոշվում են՝ ելնելով ընտանեկան կամ քաղաքացիական իրավունքի սկզբունքներից (իրավունքի անալոգիա): Ինչ վերաբերում է աշխատանքային իրավունքի ոլորտում անալոգիայի կիրառմանը, ապա նշենք, որ ՀՀ աշխատանքային օրենսգիրքը սահմանում է, որ եթե աշխատանքային հարաբերություններն ուղղակիորեն կարգավորված չեն օրենքով, ապա նման հարաբերությունների նկատմամբ, եթե դա չի հակասում դրանց էությանը, կիրառվում են համանման հարաբերություններ կարգավո-

րող աշխատանքային օրենսդրության նորմերը (օրենքի անալոգիա): Օրենքի անալոգիայի կիրառման անհնարինության դեպքում կողմերի իրավունքները և պարտականությունները որոշվում են՝ ելնելով աշխատանքային օրենսդրության սկզբունքներից (իրավունքի անալոգիա): Անալոգիա չի կարող կիրառվել, եթե դրանով սահմանափակվում են քաղաքացիների և իրավաբանական անձանց իրավունքները, ազատությունները, կամ նրանց համար նախատեսվում է նոր պարտավորություն կամ պատասխանատվություն, կամ խստացվում են քաղաքացիների նկատմամբ կիրառվող հարկադրանքի միջոցները և դրանց կիրառման կարգը, քաղաքացիների և իրավաբանական անձանց նկատմամբ հսկողություն ու վերահսկողություն իրականացնելու պայմաններն ու կարգը **[2]:**

Պետք է նշել, որ անալոգիայի նկատմամբ վերաբերմունքն իրավունքի տարբեր ճյուղերում տարբեր է: Ինչպես նշեցինք, Քաղաքացիական օրենսգիրքը թույլ է տալիս կիրառել ինչպես օրենքի, այնպես էլ իրավունքի անալոգիա (Քաղ. օր. հոդված 9), իսկ Քրեական օրենսգրքի 5-րդ հոդվածի 2-րդ մասն ուղղակիորեն սահմանում է. «Քրեական օրենքն անալոգիայով կիրառելն արգելվում է»: Քրեական դատավարությունում անալոգիայի կիրառման վերաբերյալ միասնական մոտեցում չի դրսևորվել, սակայն անալոգիան, դիտարկելով որպես օրենքում առկա բացերի լրացման միջոց, իր կիրառումն է գտնում իրավունքի ամենատարբեր ոլորտներում, որտեղ բացառություն չի կազմում նաև քրեական դատավարությունը:

Հասարակական հարաբերությունների դինամիկ զարգացման պայմաններում օրենսդրի համար բավականին դժվար է ստեղծել այնպիսի իրավական նորմեր, որոնք կգործեն երկարատև ժամանակահատվածում և համապարփակ կկարգավորեն բոլոր հասարակական հարաբերությունները: Բացի դրանից՝ կյանքում կատարվող երևույթները կարող են այնպիսի անկրկնելի հատկանիշներ ունենալ կամ արտահայտվել այնպիսի դրսևորումներով, որ օրենքը պատրաստ չլինի համարժեքորեն կարգավորել այդ հարաբերությունները: Ճիշտ է, օրենքի բացի լրացման հիմնական միջոցը պակասող իրավական նորմի ընդունումն է, այնուամենայնիվ, ոչ միշտ է հնարավոր ընդունել խիստ որոշակի իրավական նորմեր: Հետևաբար, ոչ մի օրենք չի կարող հաշվի առնել իրավական կարգավորման ենթակա հասարակական հարաբերությունների բազմազանությունը **[9, էջ 422]:** Այս պարագայում քրեադատավարական հարաբերությունների բազմաթիվ մասնավոր դրսևորումներ կարող են դուրս մնալ կոնկրետ իրավական նորմի կարգավորման շրջանակներից:

ՀՀ ՔԴՕ-ն անալոգիայի նկատմամբ հստակ մոտեցում չի դրսևորել[3], իսկ «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքով սահմանվում է իրավական ակտերի նորմերի անալոգիայով կիրառման հնարավորությունը: Անալոգիայի օրենսդրական ամրագրման քննարկումից զատ դիտարկենք օրենքի և իրավունքի անալոգիա հասկացությունների բովանդակության պարզաբանումը: Օրենքի անալոգիայի էությունն այն է, որ հարաբերությունների նույնաբնույթ լինելու պայմաններում անցում է կատարվում իրավանորմի նյութական իմաստից դեպի իրավաբանականը: Այլ կերպ ասած, գործ ենք ունենում նույնական հարաբերությունների նկատմամբ իրավունքի նորմի կիրառման հետ: Օրենքի անալոգիայի կիրառումը ենթադրում է կոնկրետ իրավանորմի կիրառում կոնկրետ հարաբերության նկատմամբ: Իրավունքի անալոգիան օգտագործվում է այն պայմաններում, երբ անհնարին է օրենքի անալոգիայի կիրառումը՝ իրավանորմի բացակայության պատճառով: Նման պայմաններում եզրահանգման հիմքում դրվում է իրավունքի ընդհանուր սկզբունքը: Իրավաբանական գրականության մեջ հստակ ձևավորված է անալոգիայի կիրառման սովորույթ: Մասնավորապես, իրավական կարգավորման բացի առկայության պայմաններում թույլատրելի է համարվում օրենքի անալոգիայի կիրառումը, և միայն օրենքի անալոգիայի կիրառման անհնարինության դեպքում նոր՝ իրավունքի անալոգիայի կիրառումը: Կարևոր ենք համարում նշել մի հանգամանք, այն որ անալոգիայի կիրառումը մշտապես պետք է համապատասխանի օրինականության սկզբունքին: Այսինքն՝ դատարանների կողմից անալոգիային դիմելու համապատասխան որոշումը պետք է կայացված լինի գործի փաստական և իրավական հանգամանքների օբյեկտիվ, բազմակողմանի ուսումնասիրության հիման վրա, հակառակ պարագայում անալոգիայի անհարկի օգտագործումը կարող է հանգեցնել մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների խախտմանը: Անալոգիան, որպես իրավական կատեգորիա, հանդես է գալիս որպես իրավունքի բացի հաղթահարման տարբերակ: Այն հիմնված է

[3] Ի տարբերություն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրքն անալոգիայի վերաբերյալ կոնկրետ նորմ է պարունակում: Մասնավորապես, Քաղաքացիական դատավարության օրենսգրքի հոդված 4-րդ-ի համաձայն «Վիճելի հարաբերությունը կարգավորող նյութաիրավական օրենքի կամ այլ իրավական ակտի բացակայության դեպքում դատարանը կիրառում է նույնանման հարաբերություններ կարգավորող օրենքի նորմերը (օրենքի անալոգիա): Նման նորմերի բացակայության դեպքում դատարանը վեճը լուծում է՝ ելնելով իրավունքի ընդհանուր սկզբունքներից (իրավունքի անալոգիա)»:

դասական Արիստոտելյան գաղափարախոսության և դրա հետագա զարգացման վրա: Իրավական մտքի հետագա զարգացման պայմաններում անալոգիան հանդես է եկել երկու՝ իրավունքի և օրենքի անալոգիայի ձևով, իսկ այժմ դրա կիրառության թույլատրելիությունը ամրագրվել է օրենսդրական մակարդակում: Անալոգիայի կիրառման ժամանակ օրենսդիրը պետք է հստակորեն պահպանի օրինականության և իրավունքի այլ համընդհանուր սկզբունքները և հետևի կոնկրետ կանոնների՝ անկախ անալոգիայի կիրառման թույլատրելիության հանգամանքից: Անդրադառնալով Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարանի արտահայտած դիրքորոշմանը, նշենք որ օրենսդրական բացի սահմանադրականության հարց քննելիս սահմանադրական դատարանի խնդիրն է պարզել, թե տվյալ օրենսդրական բացը հանդիսանում է իրավակարգավորման թերությունը, թե՞ իրավաստեղծ մարմինը նման իրավակարգավորում սահմանելիս հաշվի է առել օրենսդրության մեջ համապատասխան իրավական երաշխիքների առկայությունը և ակնկալել այդ իրավական երաշխիքների հիման վրա համապատասխան իրավակիրառական պրակտիկայի ձևավորումը: Սահմանադրական դատարանն իր՝ 2010 թ. փետրվարի 5-ի ՍԴՈ-864 որոշման մեջ անդրադառնալով իրավունքի բացի հաղթահարման գործում սահմանադրական դատարանի և օրենսդիր մարմնի իրավասությունների հարաբերակցությանը՝ նշել է Իրավունքի բացը հաղթահարելու հարցում օրենսդիր մարմնի և սահմանադրական դատարանի իրավասությունները դիտարկելով իշխանությունների տարանջատման սկզբունքի համատեքստում՝ սահմանադրական դատարանը հարկ է համարում արձանագրել, որ բոլոր դեպքերում, երբ իրավունքի բացը պայմանավորված է իրավակարգավորման ոլորտում գտնվող կոնկրետ հանգամանքների առնչությամբ նորմատիվ պատվիրանի բացակայությամբ, ապա նման բացի հաղթահարումն օրենսդիր մարմնի իրավասության շրջանակներում է: Սահմանադրական դատարանը գործի քննության շրջանակներում անդրադառնում է օրենքի այս կամ այն բացի սահմանադրականությանը, եթե վիճարկվող նորմի բովանդակությամբ պայմանավորված իրավական անորոշությունն իրավակիրառական պրակտիկայում հանգեցնում է տվյալ նորմի այնպիսի մեկնաբանությանն ու կիրառմանը, որը խախտում է կամ կարող է խախտել կոնկրետ սահմանադրական իրավունք: Զարգացնելով իր վերոհիշյալ իրավական դիրքորոշումները՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ օրենսդրական բացը կարող է հանդիսանալ սահմանադրական դատարանի քննության առարկա միայն այն դեպքում, երբ օրենսդրության մեջ առկա չեն այդ բացը լրացնելու այլ ի-

րավական երաշխիքներ կամ օրենսդրության մեջ համապատասխան իրավական երաշխիքների առկայության պարագայում ձևավորված է հակասական իրավակիրառական պրակտիկա, կամ երբ առկա օրենսդրական բացը չի ապահովում այս կամ այն իրավունքի իրացման հնարավորությունը: Հակառակ պարագայում, իրավակարգավորման բացի սահմանադրականության հարցը ենթակա չէ սահմանադրական դատարանի քննությանը: Իրավական համակարգը սկզբունքորեն պետք է բացառի իրավակարգավորման այնպիսի երևույթ, ինչպիսին է՝ թերի ու տարակարծությունների տեղիք տվող, ինչպես նաև հակասական իրավական ակտերի ընդունումը, սակայն որևէ երկրի իրավական համակարգ դեռևս ամբողջությամբ ձերբազատված չէ վերոհիշյալ թերություններից, իսկ արդի իրավաքաղաքական զարգացումների համատեքստում, երբ հարկ է լինում արմատապես ընդլայնել իրավակարգավորման շրջանակները և առավել հաճախ դիմել օրենսդրական փոփոխությունների, վիճակն էլ ավելի է վատթարանում: Իրավաստեղծ գործունեության խութերը, ըստ իրավագետ Ա. Վաղարշյանի գնահատման, թելադրված են մի քանի գործոններով. Իրավաստեղծ գործունեության ընթացքը ևս կարիք ունի մեթոդաբանական, տեսական ավելի բարձր, ընդգրկուն զինվածության, իրավաբանական ավելի բազմերանգ արտացոլման: Իրավաբանական ակտերի որակը և արդյունավետությունը մեծապես կախված են օրենսդիրների հատկապես իրավաբանական արհեստավարժությունից: Իրավակիրառ մարմինները, դատարանները կշահեին իրավունքի ընդհանուր տեսության իմացությունից: Իրավունքը գործողության մեջ դնելը անբաժան է այն լավ կամ ճիշտ հասկանալուց, իրավաբանական երևույթները ամբողջական համատեքստում ըմբռնելուց» **[1, էջ 7]:**

Այսպիսով՝ կարող ենք ասել, որ անալոգիան, որպես բացերի լրացման հիմնական եղանակներից, իրավակիրառ պրակտիկայում լայնորեն գործածվում է մասնավոր իրավունքի ճյուղերում՝ սկսած հռոմեական իրավական համակարգից մինչև ժամանակակից մասնավոր իրավունքի համակարգերը: Ակնհայտ է, որ իրավական կարգավորման բացերի բացահայտման փորձադաշտ են հանդիսանում իրավաբանական պրակտիկան և մասնավորապես, իրավակիրառական մարմինների գործունեությունը, ազգային դատական պրակտիկան, որոնց ընթացքում բավականին հաճախ անհրաժեշտություն են առաջանում լուծելու վիճակահարույց իրավիճակը՝ այնպիսի պայմաններում, երբ իրավական նորմերում առկա են հակասությունները, անորոշությունները և բացերը: Այս առումով, ազգային իրավական համակարգում իրավակիրառ մարմինները և բարձրագույն դատական ատյաննե-

րը (ՀՀ Սահմանադրական դատարանը և Վճռաբեկ դատարանը) տարբեր եղանակներով (անալոգիայի, իրավամեկնաբանման, իրավակարգավորման բացերի լրացման) լրացնում են իրավական բացերը, հաղթահարում անորոշությունները և հակասությունները:

**Օգտագործված գրականության ցանկ**


1. Ա. Վաղարշյան, «Իրավունք» հասկացության տեսամեթոդաբանական և գործնական նշանակությունը, «Բանբեր Երևանի համալսարանի. Իրավագիտություն», № 3 (144), 2014, էջ 7:
2. ՀՀ Աշխատանքային օրենսգիրք, հոդված 10:
3. Հայաստանի Հանրապետության ընտանեկան օրենսգիրք, հոդված 5, https://www.arlis.am/:
4. ՀՀ քաղաքացիական օրենսգիրք, հոդված 7, https://www.arlis.am/:
5. Ն. Ա. Ապիյան, Սաֆարյան Գ.Հ., Հակոբյան Ջ.Հ. Պետության և իրավունքի տեսության հիմնահարցեր, Երևան, 2001, էջ 158:
6. «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենք, հոդված 39: https://www.arlis.am/:
7. Վ. Ս. Ներսեսյանց, Իրավունքի և պետության տեսություն, Եր., 2001, էջ 251:
   В.М. Корельского и В.Д. Перевалова. М., Теория государства и права / Под ред.: ИНФРА М-Норма, 1997. — 570 с.
8. Г. Н. Манова. М., «Теория государства и права». 1995, ст. 209.
9. Н. И. Матузова, А. В. Малько. М., Теория государства и права., под ред. 1997, ст. 422.
10. https://hy.glosbe.com/la/hy/causa.

# ՄԱՍՆԱՎՈՐ ԱՆՁԻ ԿՈՂՄԻՑ ԿԱՏԱՐՎԱԾ ՁԱՅՆԱԳՐՈՒԹՅԱՆ՝ ՈՐՊԵՍ ԱՊԱՑՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾԵԼՈՒ ԻՐԱՎԱՉԱՓՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

**ՄԱՆՎԵԼ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**
ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա,
Գիտակրթական միջազգային կենտրոն,
իրավագիտության ամբիոնի մագիստրանտ
manvel.harutyunyan@isec.am

**Համառոտագիր**

Սույն աշխատանքի շրջանակներում հեղինակի կողմից ուսումնասիրվել է մասնավոր անձի կողմից կատարված ձայնագրության՝ որպես ապացույց օգտագործելու իրավաչափության պայմանները:

Հեղինակն ուսումնասիրել է մասնավոր ընտանեկան կյանքի անձեռնամխելիության իրավունքը, հաղորդակցության ազատության և գաղտնիության իրավունքը, ներկայացրել դրանց հնարավոր իրավաչափ սահմանափակման հիմքերը, պետության ներկայացուցչի կողմից գաղտնի կերպով ձայնագրություն կատարելու համար անհրաժեշտ իրավական հիմքերը և սահմանված ընթացակարգը, ինչպես նաև պետության ներկայացուցիչ չհանդիսացող մասնավոր անձի կողմից կատարված ձայնագրության՝ որպես ապացույց օգտագործելու իրավաչափության պայմանները:

Փորձ է կատարվել վեր հանելու հնարավոր խնդրահարույց իրավիճակները, օրենսդրական թերությունները, առաջարկելու՝ լուծումներ:

**Բանալի բառեր և բառակապակցություններ**. մասնավոր անձի կողմից կատարված ձայնագրություն, իրավաչափության պայմաններ, ընտանեկան կյանքի անձեռնմխելիություն, իրավունք, հաղորդակցության ազատություն, իրավաչափության սահմանափակման հիմքեր:

# УСЛОВИЯ ПРАВОМЕРНОСТИ ИСПОЛЬЗОВАНИЯ ЗАПИСИ, СДЕЛАННОЙ ЧАСТНЫМ ЛИЦОМ, В КАЧЕСТВЕ ДОКАЗАТЕЛЬСТВА

**МАНВЕЛ АРУТЮНЯН**
Национальная академия наук Республики Армения
Международный научно-образовательный центр
магистрант кафедры права
manvel.harutyunyan@isec.am

**Аннотация**

В рамках данной работы автором были изучены условия правомерности использования в качестве доказательства аудиозаписи, сделанной частным лицом.

Автор изучил право на неприкосновенность частной семейной жизни, право на свободу общения и неприкосновенность частной жизни, представил основания их возможного правомерного ограничения, необходимые правовые основы и установленную процедуру для тайной звукозаписи представителем государства, а также условия правомерности использования в качестве доказательства аудиозаписи, сделанной частным лицом, не являющимся представителем государства.

Предпринята попытка выявить возможные проблемные ситуации, законодательные недостатки, предложить решения.

**Ключевые слова и словосочетания:** звукозаписи, сделанной частным лицом, условия правомерности, неприкосновенность семейной жизни, право, свобода общения, основания ограничения правомерности.

# TERMS FOR THE LAWFUL USE OF A PRIVATE RECORDING AS EVIDENCE

**MANVEL HARUTYUNYAN**
National Academy of Sciences of the Republic of Armenia
International Scientific-Educational Center
Department of Law
Master's Student
manvel.harutyunyan@isec.am

**Abstract**

Within the framework of this work, the author studied the conditions of the legality of using an audio recording made by a private person as evidence.

The author studied the right to inviolability of private family life, the right to freedom of communication and privacy, presented the grounds for their possible lawful restriction, the necessary legal bases and the established procedure for secret sound recording by a representative of the state, as well as the conditions for the legality of using as evidence an audio recording made by a private person who is not a representative of the state.

An attempt has been made to identify possible problematic situations and legislative shortcomings and propose solutions.

**Keywords and phrases:** sound recordings made to private individuals, conditions of legality, inviolability of family life, law, freedom of communication, grounds for limiting legality.

**Տեսամեթոդական հիմքեր**

20-րդ դարի սկզբին իրավական ակտերի մեծ մասը չէր նախատեսում անձնական կյանքի անձեռնմխելիության իրավունքի նորմատիվային ամրագրում:

Նախապատվությունը տրվում էր միայն նամակագրության, հեռագրական, հեռախոսային հաղորդագրությունների գաղտնիության իրավունքին: Միայն Երկրորդ համաշխարհային պատերազմի ավարտից հետո եվրոպական երկրների պետական համակարգերի բարեփոխման ժամանակ Նոր Սահմանադրություններում հիշատակվեց քաղաքացու մասնավոր կյանքը **[1]**:

Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 12-րդ հոդվածը սահմանում է. «Ոչ ոք չպետք է ենթարկվի իր անձնական կյանքի, ընտանիքի, բնակարանի կամ նամակագրության նկատմամբ կամայական միջամտության, ինչպես նաև՝ որևէ ոտնձգության իր պատվի ու հեղինակության նկատմամբ: Յուրաքանչյուր ոք ունի նման միջամտությունից կամ ոտնձգութ-

յունից օրենքով պաշտպանվելու իրավունք» **[2]**: Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիրը ևս ամրագրել է վերոնշյալ իրավունքը: Մասնավորապես, դաշնագրի 17- րդ հոդվածը սահմանում է. «1. Ոչ ոք չի կարող ենթարկվել քմահաճ կամ անօրինական միջամտության իր անձնական և ընտանեկան կյանքին, քմահաճ կամ անօրինական ոտնձգության իր բնակարանի անձեռնմխելիության կամ իր թղթակցության գաղտնիքի նկատմամբ, կամ էլ անօրինական ոտնձգության՝ իր պատվի ու հեղինակության նկատմամբ:

2. Յուրաքանչյուր մարդ ունի այդպիսի միջամտությունից կամ այդպիսի ոտնձգություններից օրենքի պաշտպանության իրավունք» **[3]**:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ նաև՝ ՄԻԵԿ) 8-րդ հոդվածը սահմանում է.

«1. Յուրաքանչյուր ոք ունի իր անձնական ու ընտանեկան կյանքի, բնակարանի և նամակագրության նկատմամբ հարգանքի իրավունք:

2. Չի թույլատրվում պետական մարմինների միջամտությունն այդ իրավունքի իրականացմանը, բացառությամբ այն դեպքերի, երբ դա նախատեսված է օրենքով և անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում՝ ի շահ պետական անվտանգության, հասարակական կարգի կամ երկրի տնտեսական բարեկեցության, ինչպես նաև անկարգությունների կամ հանցագործությունների կանխման, առողջության կամ բարոյականության պաշտպանության կամ այլ անձանց իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով»:

Մասնավոր և ընտանեկան կյանքի անձեռնմխելիության իրավունքը իր ամրագրումն է ստացել մի շարք այլ միջազգային փաստաթղթերում ևս:

Ներպետական օրենսդրության մասին խոսելիս պետք է նշել, որ վերոնշյալ իրավունքը իր ամրագրումն է ստացել ՀՀ Սահմանադրությամբ:

Մասնավորապես՝ ՀՀ Սահմանադրության 31-րդ հոդվածը սահմանում է.

«1. Յուրաքանչյուր ոք ունի իր մասնավոր և ընտանեկան կյանքի, պատվի ու բարի համբավի անձեռնմխելիության իրավունք:

2. Մասնավոր և ընտանեկան կյանքի անձեռնմխելիության իրավունքը կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ պետական անվտանգության, երկրի տնտեսական բարեկեցության, հանցագործությունների կանխման կամ բացահայտման, հասարակական կարգի, առողջության և բարոյակա-

նության կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով» **[4]**:

Ինչ վերաբերում է ուսումնասիրվող իրավունքի Սահմանադրական ամրագրման արտասահմանյան փորձին, ապա այն բազմազան է: Գերմանիայի Սահմանադրությունն ընդհանրապես չի խոսում մասնավոր կյանքի անձեռնմխելիության իրավունքի մասին. 10-րդ հոդվածը ամրագրում է, որ«1. Նամակների, հաղորդագրությունների և հեռահաղորդակցության գաղտնիությունը անձեռնմխելի է:

2. Սահմանափակումները կարող են սահմանվել միայն օրենքի համաձայն: Այն դեպքերում, երբ սահմանափակումը ծառայում է ֆեդերացիայի ազատ ժողովրդավարական հիմնական կարգի կամ գոյության կամ անվտանգության պաշտպանությանը, ստատուտը կարող է նախատեսել, որ տուժող անձը չպետք է տեղեկացված լինի այդ սահմանափակման մասին, և որ դատարան դիմելը պետք է փոխարինվի խորհրդարանի կողմից նշանակված մարմինների և օժանդակ մարմինների կողմից գործի քննությամբ **[5]**:

Գրեթե նույնական է Իտալիայի Սահմանադրության կարգավորումը, որը սահմանում է. «1. Նամակագրության ազատությունը և գաղտնիությունը և կապի մյուս բոլոր տեսակները անձեռնմխելի են:

2. Դրանց նկատմամբ սահմանափակումները կարող են կիրառվել միայն դատարանի որոշմամբ, որում պետք է նշվեն վերոնշյալ իրավունքը սահմանափակելու շարժառիթները» (15-րդ հոդված) **[6]**:

Ֆրանսիայի Սահմանադրությունն ընդհանրապես չի ամրագրում այդ իրավունքը, այն նախատեսված չէ ոչ մարդու և քաղաքացու իրավունքների հռչակագրում, ոչ էլ 1946 թվականի հոկտեմբերի 27-ի Սահմանադրության նախաբանում **[7]**:

Արևելյան Եվրոպայի երկրների սահմանադրությունները շատ դեպքերում առանձնացնում են մասնավոր կյանքի անձեռնմխելիության և փոստային կապի գաղտնիության իրավունքը՝ միաժամանակ նախատեսելով նաև քաղաքացու անձնական կյանքի մասին տեղեկություններ հավաքելու արգելքը **[8]**:

Ալբանիայի Հանրապետության Սահմանադրության 36-րդ հոդվածով սահմանվում է. «Նամակագրության կամ կապի ցանկացած այլ միջոցի ազատությունը և գաղտնիությունը երաշխավորվում է» **[9]**:

Էստոնիայի Հանրապետության Սահմանադրության 26-րդ հոդվածը որպես պահպանվող բարիք առանձնացնում է ընտանեկան և մասնավոր կյանքի անձեռնմխելիությունը: Նույն հոդվածում նախատեսվում են հնարա-

վոր սահմանափակումների հիմքեր՝ պետական հիմնարկները, տեղական ինքնակառավարման մարմինները և դրանց պաշտոնատար անձինք իրավունք չունեն միջամտել որևէ մեկի ընտանեկան և մասնավոր կյանքին այլ կերպ, քան օրենքով սահմանված դեպքերում և կարգով՝ այլոց առողջության, բարոյականության, հասարակական կարգի կամ իրավունքների և ազատությունների պաշտպանության, հանցագործությունը կանխելու կամ հանցագործին բռնելու նպատակով **[10]**:

Ինչ վերաբերում է ԱՄՆ-ին, ապա Սահմանադրության 4-րդ ուղղման մեջ նշվում է. «Չհիմնավորված խուզարկություններից և կալանավորումներից անձի, բնակարանի, թղթի և գույքի պահպանության ժողովրդի իրավունքը չպետք է խախտվի»:

Ամփոփելով կարելի է եզրահանգել, որանձնական կյանքի անձեռնմխելիության իրավունքն ամրագրվում է հարակից այլ իրավունքների հետ միասին: Այդպիսիք կարող են լինել բնակարանի անձեռնմխելիության, հաղորդակցության գաղտնիության, պատվի, արժանապատվության պաշտպանության իրավունքները: Ընդ որում, սահմանադրությունները կարող են դրանք դիտարկել որպես հավասարարժեք իրավունքներ, ինչպես նաև դրանցից մեկը սահմանել որպես ընդհանուր իրավունք, որն իր մեջ ներառում է արդեն այլ մասնավոր իրավունքներ:

Այժմ անդրադառնանք ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված մասնավոր կյանքի անձեռնմխելիության իրավունքին:

Նախ և առաջ, հարկ ենք համարում նշել, որ ի տարբերություն 2005թ. խմբագրությամբ Սահմանադրության 23-րդ հոդվածով պաշտպանվող արժեքների, 2015թ. խմբագրությամբ այդ արժեքների շրջանակը ընդլայնվել է՝ մասնավոր և ընտանեկան կյանքից բացի դրանց մեջ ներառելով նաև անձի պատիվն ու բարի համբավը **[11]:**

Ընդհանուր առմամբ վերոնշյալ իրավունքը բաղկացած է հետևյալ տարրերից՝

1. մասնավոր կյանքի անձեռնմխելիություն
2. ընտանեկան կյանքի անձեռնմխելիություն
3. պատվի անձեռնմխելիություն
4. բարի համբավի անձեռնմխելիություն:

Պետք է նշել, որ պատվի և բարի համբավի անձեռնմխելիությունը սույն աշխատանքի ուսումնասիրության օբյեկտ չեն հանդիսանում, ուստի սույն աշխատանքում դրանց անդրադարձ չի կատարվի:

Մասնավոր կյանքի անձեռնմխելիությունը բավական լայն և ընդգրկուն հասկացություն է: Մասնավոր կյանքի անձեռնմխելիության իրավունքը ոչ թե պարզապես նորմատիվ ամրագրում ստացած սուբյեկտիվ իրավունքներից մեկն է, այլ մարդու, հասարակության, պետության փոխհարաբերությունների որոշակի սահման **[12]**:

Մասնավոր կյանք ասելով՝ հասկանում ենք ֆիզիկական և հոգևոր ոլորտ, որը վերահսկվում է անհատի կողմից, ազատ է արտաքին ազդեցությունից, այսինքն, դա անհատի անձնականև կենցաղային ոլորտն է, նրա հաղորդակցման ոլորտը, կրոնի նկատմամբ վերաբերմունքը, ոչ ծառայողական զբաղմունքը, հոբբիները և հարաբերությունների այլ ոլորտները, որոնց մարդը չի ցանկանում հրապարակայնություն հաղորդել, եթե դա չի պահանջում օրենքը **[13]**:

Ինչ վերաբերում է ընտանեկան կյանքի անձեռնմխելիությանը, ապա հարկ ենք համարում նշել, որ ընտանեկան իրավունքի տեսությունում ընտանիքը (իրավաբանական իմաստով) սահմանվում է որպես անձնական ոչ գույքային և գույքային իրավունքներից և պարտականություններից բխող՝ ամուսնությունից, ազգակցությունից, որդեգրումից կամ ընտանիքում դաստիարակության համար երեխաների ընդունման այլ ձևերից բխող անձանց շրջանակ **[14]**:

Ընտանիքի սահմանմանը անդրադարձել է նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանը(այսուհետ նաև՝ ՄԻԵԴ): Մասնավորապես, Մարքսն ընդդեմ Բելգիայի գործում ՄԻԵԴ-ն արձանագրել է, որ ընտանեկան կյանքը ներառում է առնվազն մերձավոր ազգականների միջև կապը, օրինակ՝ պապերի, տատերի և թոռների միջև, քանի որ նման հարաբերությունները կարող են էական դեր խաղալ ընտանեկան կյանքում **[15]**:

Օլսոնն ընդդեմ Շվեդիայի գործում նաև նշել է, որ հարազատ եղբայրներն ու քույրերը կարող են պահանջել իրենց ընտանեկան կյանքը հարգելու իրավունքը:Դատարանը ընտանիքը գնահատում է ոչ թե ֆորմալ իրավաբանական մոտեցման տեսանկյունից. արդյոք ամուսնական հարաբերությունները սահմանված կարգով գրանցված են թե ոչ, այլ թույլ է տալիս դիմումատուներին ապացուցել ընտանեկան կյանքի գոյությունը դե ֆակտո որոշ փաստերի հաստատման միջոցով, օրինակ՝ ֆինանսական կամ հոգեբանական կախվածության **[16]**:

Ընտանեկան կյանքը ոչ թե մի քանի անձանց, այլ ազգակցական կապերով կապված անձանց վարքագծին վերաբերող փաստերն են **[17]**:

Ընտանեկան կյանքը ինքնին լայն հասկացություն է, որն իր մեջ ներառում է ինչպես ընտանեկան գաղտնիքի իրավունքը, այնպես էլ ընտանիքի ստեղծման, պահպանման և ընտանեկան հաղորդակցության հարցերը:

Անձնական և ընտանեկան գաղտնիքների շարքին կարելի է դասել որդեգրման գաղտնիքը, ամուսինների անձնական կյանքի գաղտնիությունը, ընտանիքում առկա անձնական գույքային և ոչ գույքային հարաբերությունները և այլ տեղեկություններ: Անձնական և ընտանեկան գաղտնիքի իրավունքը նշանակում է, որ ընտանիքի անդամը կարող է պահանջել չհրապարակել համապատասխան տեղեկությունները, ինչպես նաև տնօրինել համապատասխան տեղեկատվությունը իր հայեցողությամբ կամ ընտանիքի մյուս անդամների համաձայնությամբ:

Պետության կողմից ընտանեկան կյանքի նկատմամբ հարգանքը ենթադրում է ընտանեկան հարաբերությունների նպետական մարմինների կամայականորեն միջամտելու բացառում:

Արգելվում են ընտանեկան հարաբերությունները խոչընդոտող ապօրինի միջամտությունները՝ շփման արգելք, բռնի բաժանում, ընտանեկան կյանքի մանրամասնությունների հրապարակում և այլն: Այս իրավունքի խախտումը պետք է հանգեցնի պատասխանատվության, այդ թվում՝ նյութաիրավական:

Ընտանեկան կյանքը հարգելը սկզբունքային է ցանկացած պետության համար, քանի որ ընտանիքի դերն ու նշանակությունը հասարակության և պետության կայացման հարցում թերագնահատել իրավունք չունի ոչ միպետություն **[17]**:

Մասնավոր կյանքի անձեռնմխելիության իրավունքի ամրագրումը միտված է անձի համար և անձի շուրջ այնպիսի շրջանակի (տարածության) երաշխավորմանը, որում նա, զերծ մնալով պետության կամ հանրության կողմից որևէ ուղղորդումից կամ առավել ևս հարկադրանքից, կկարողանա ազատորեն դրսևորել և զարգացնել իր անհատականությունը՝ իր արժանապատվության և ընդհանուր և հատուկ ազատությունների և իրավունքների՝ պետության, հանրության և այլ մասնավոր անձանց կողմից հարգանքի պայմաններում:

Հետևապես՝ անձի մասնավոր տարածության անձեռնմխելիությունը՝ այլ հիմնական իրավունքների և ազատությունների համակցության մեջ, հնարավորություն է տալիս ապահովելու թե՛ մարդու անհատական ներքին ինքնորոշումը՝ իր կենսական շահերին համապատասխան, թե՛ այլ մասնավոր անձանց հետ նրա մասնավոր-կենսական կապերի գաղտնիությունը՝

պետությունից, հասարակությունից և երրորդ անձանցից: Մասնավոր կյանքի անձեռնմխելիության իրավունքը դասվում է անձնական իրավունքների շարքին: Յուրաքանչյուրն այդ իրավունքով օժտված է ի ծնե, և պետությունները պարտավոր են ձեռնպահ մնալ այդ անձնական ազատության ոլորտին ապօրինի միջամտելուց **[18]**:

Մասնավոր կյանքի անձեռնմխելիության հիմնական իրավունքի պաշտպանությունը ներառում է ոչ միայն պետության կողմից մասնավոր կյանքին միջամտելուց ձեռնպահ մնալը, այլև պետության պոզիտիվ պարտականությունը՝ անհրաժեշտ և արդյունավետ օրենսդրական և իրավակիրառ միջոցներով երաշխավորելու և ապահովելու այն: Հետևապես՝ պետությունը, նախ՝ ինքը չպետք է միջամտի այս հիմնական իրավունքին, բացառությամբ Սահմանադրությամբ թույլատրված դեպքերի, ինչպես նաև պարտավոր է սահմանել ոչ միայն իր, այլև երրորդ անձանց կողմից այս հիմնական իրավունքի խախտումների դեպքում դրանցից արդյունավետ պաշտպանվելու համար անհրաժեշտ ընթացակարգեր և կառուցակարգեր, և, վերջապես, պարտավոր է նաև գործնականում ապահովել այս հիմնական իրավունքի պաշտպանությունը երրորդ անձանցից **[19]:**

ՀՀ Սահմանադրությամբ ևս նախատեսված են այդ իրավունքի սահմանափակման դեպքերը: Մասնավորապես 31-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանվում է. «Մասնավոր և ընտանեկան կյանքի անձեռնմխելիության իրավունքը կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ պետական անվտանգության, երկրի տնտեսական բարեկեցության, հանցագործությունների կանխման կամ բացահայտման, հասարակական կարգի, առողջության և բարոյականության կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով»:

Հարկ ենք համարում նշել, որ մասնավոր կյանքի, այդ թվում՝ հաղորդակցության անձեռնմխելիության իրավունքը անձի ինչպես ներպետական, այնպես էլ միջազգային օրենսդրությամբ երաշխավորված կարևոր իրավունքներից է և պետք է պաշտպանվի կամայական ու անօրինական ամեն տեսակ միջամտությունից:

Ընդ որում, այդ իրավունքը կարող է սահմանափակվել միայն իրավաչափ նպատակին հասնելու համար, օրենքով սահմանված դեպքերում և կարգով՝ դատարանի որոշման հիման վրա:

Այսպիսով, ողջ վերոգրյալի արդյունքում կարելի է ասել հետևյալը. Անձի մասնավոր կյանքի անձեռնմխելիության իրավունքը ամրագրված է թե՛ ՀՀ Սահմանադրությամբ և թե մի շարք միջազգային փաստաթղթերով:

Իսկ ինչ վերաբերում է անձի հաղորդակցության ազատության և գաղտնիության իրավունքին, ապա միջազգային փաստաթղթերով վերոնշյալ իրավունքը դիտարկվում է մասնավոր կյանքի անձեռնմխելիության իրավունքի հետ համատեղ, որպես այդ իրավունքի տարր: Սակայն ՀՀ Սահմանադրությամբ վերոնշյալ երկու իրավունքները առանձնացված են 31 և 33-րդ հոդվածներում: Այդ իրավունքները դասվում են անձի անձնական իրավունքների շարքին, որոնցով անձն օժտված է ի ծնե: Պետության վրա դրված է այդ իրավունքները արդյունավետ կերպով երաշխավորելու և ապահովելու պարտականություն: Հենց այդպիսի երաշխիքներից մեկն էլ ՀՀ քրեադատավարական օրենսդրությամբ դրանց ամրագրումն է: Մասնավոր և ընտանեկան կյանքի գաղտնիությունը հիմնարար սկզբունք ամրագրված է ՀՀ ՔԴՕ 26-րդ հոդվածում: Հարկ ենք համարում նշել, որ քննարկման առարկա իրավունքները բացարձակ չեն. թե՛ միջազգային փաստաթղթերով և թե ներպետական օրենսդրությամբ սահմանված են այդ իրավունքների իրավաչափ սահմանափակման դեպքերը, որի մասին կխոսվի հաջորդ ենթավերնագրում:

**Եզրակացություն և առաջարկություններ:**

Մասնավոր անձի կողմից կատարված ձայնագրության որպես ապացույց օգտագործելու իրավաչափության հիմքերի մասին խոսելիս առաջին հերթին ցանկանում ենք նշել, որ կարող ենք հանդիպել 2 հիմնական դեպքերի, երբ ձայնագրությունը կատարվել՝

1. պետության ներկայացուցչի կողմից,
2. պետության ներկայացուցիչ չհանդիսացող մասնավոր անձի կողմից:

Անկասկած է, որ յուրաքանչյուր դեպքի համար անհրաժեշտ ունենալ օրենսդրական մակարդակում առանձնահատուկ մոտեցում:

Անրադառնանք պետության ներկայացուցչի կողմից գաղտնի կերպով կատարված ձայնագրության որպես ապացույց օգտագործելու իրավաչափության հիմքերին: Թեմաին վերաբերող օրենսդրական կարգավորումները մի կեղմից պետք է գործիք հանդիսանան իրավապահ մարմինների ձեռքում ՝ կատարված հանցագործությունները քննելու և բացահայտելու համար, միուս կողմից պետք է բացառվի լիազորությունների հնարավոր չարաշահումները: Ժիրայր Սեֆիլյանի գործով Եվրպական դատարանը նշել է նվազագույն երաշխիքները, որոնք պետք է բացառեն հնարավոր չարաշահումները:

ՀՀ ՔԴՕ **241.** -րդ հոդվածով սահմանվում է նամակագրության, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների վերահսկում իսկ 249-րդ հոդվածով՝ **Թվային, այդ թվում՝ հեռախոսային հաղորդակցության վերահսկումը** քննչական գործողությունները: Այլ հաղորդում, ինչպես նաև կապի այլ միջոցներով տարվող խոսակցություն հասկացությունները ինքնին բավականաչափ լայնացնում են վերահսկման և լսման օբյեկտների ցանկը, քանի որ դրանք թույլ են տալիս այդ օբյեկտների շարքում ներառել մարդկանց միջև տեղեկատվության փոխանակման ցանկացած միջոց (և ֆաքսիմիլային ապարատը, և հեռագիրը, և փոստային աղավնիները, և խուլ-համրերի շփումը նշանների միջոցով և այլն:

Անրադառնալով այն հարցին, թե որոնք են պետության ներկայացուցիչ չհանդիսացող մասնավոր անձի կողմից կատարված ձայնագրության՝ որպես ապացույց ընդունելի իրավաչափության հիմքերը, ցանկանում ենք նշել՝ օրենսդրական մակարդակում չկա հստակ նշված չափորոշիչներ, որոնց առկայության դեպքում ձայնագրությունը կարող է թույլատրելի ապացույց ճանաչվել: Քիչ չեն դեպքերը, երբ մարդիկ ակամայից հայտնվում են այնպիսի իրավիճակում ,որ ձայնագրության միջոցով կարող են արժեքավոր ապացուցել ձեռք բերել կատարված կամ կատարվելիք հացագործության բացահայտման համար: Սակայն օրենսդրական մակարդակում պարզաբանված չէ , թե որ դեպքում նման ձայնագրությունները կարող են թույլատրելի ապացույց համարվել: Միևնույն ժամանակ առկա են մի շարք իրար հակասող դատական նախադեպեր: Կարծում ենք ՝ Վահիկ Մխիթարյանի գործով Վճռաբեկ դատարանի արտահայտած դիրքորոշումը սպառիչ կերպով արտահայտում է այն հարցերի շրջանակը, որոնց պարզաբանման արդյունքում դատարանը կարող է որոշել կատարված ձայնագրության իրավաչափության հարցը,ուստի առաջարկում ենք օրենսդրական մակարդակով ամրագրել այդ չափորոշիչները: Կարծում ենք, որ այդ չափորոշիչները նաև համապատասխանում են ՄԻԵԴ-ի կողմից մի շարք դատական գործերով արտահայտված դիքրքորոշումներին:

Սակայն միևնույն ժամանակ կատարված ձայնագրությունները կարող են առնչվել օրենքով պաշտպանված այնպիսի կարևոր ոլորտներին, ինչպիսին է մասնավոր կյանքի անձեռնամխելիության: Անդրադառնալով այդ հարցին ցանկանում ենք վկայակոչել գերմանական իրավունքում տեղ գտած «Միջամտելու երեք հարթությունների» տեսությունը : Կարծում ենք ՝ օրենսդրական մակարդակով ձայնագրությունները 3 հիմնակամ խմբերի բաժանելով՝ կբացառենք այն ձայնագրությունների թույլատրելիությունը, որոնք

առնչվում են մասնավոր կյանքի անձեռնամխելիության բուն միջուկին, իսկ այն երկու դեպքերում, երբ ձայնագրությունները որոշակիորեն շոշափում են մասնավոր կյանքի անձեռնամխելիությանը ոլորտ, կամ ընդանրապես չեն առնչվում մասնավոր կյանքի անձեռնախելիությանը, ապա դրանց թույլատրելիության հարցը կարող ենք որոշել վերեվում նշված չափորոշիչների համաձայն:

Ուշադրության է արժանի նաև այն հանագամանքը, թե մասնավոր անձի կողմից գաղտնի կերպով կատարված ձայնագրությունը ապացույցի ինչ տեսակ է:

Անրադառնալով այդ հարցին ցանկանում ենք նշել, որ տեսության մեջ չկա միասնական մոտեցում այդ հարցի շուրջ: Նման բացը հաղթահարելու համար կարելի է սահմանել «Ձայնագրություններն ու տեսագրությունները, թվային ապացույցներ»՝ որպես ապացույցի առանձին տեսակ: Սա նաև հնարավորություն կտա ապացույցի այդ տեսակի նկատմամբ որդեգրել որոշակիորեն այլ մոտեցումններ, ինչը բացառապես պայմանավորված է ապացույցի այդ տեսակի առանձնահատկություններով, օրինակ՝ նման պայմաններում անձնական տվյալների մշակումը կհամարվի թույլատրելի, և երբ քրեական դատավարությանմբ որևէ տեսա/լուսանկարահանում կամ ձայնագրություն համարվի թույլատրելի ապացույց, տվյալների սուբյեկտը վնասի հատուցում պահանջելու իրավունք չի ունենա՝ իր իրավունքների անթույլատրելի մշակում իրականացնեու հիմքով: Արդյունքում նմանատիպ մոտեցումներ կսահմանվեն քաղաքացիական դատավարության և քրեական դատավարության օրենսգրքերեում, որում ի տարբերություն առաջինի՝ թվային ապացույցը սահմանված չէ՝ որպես ապացույցի ինքնուրույն տեսակ:

«Ձայնագրություններն ու տեսագրությունները, թվային ապացույցներ»՝ որպես ապացույցի առանձին տեսակ սահմանելով՝ մասնավոր անձի կողմից կատարված տեսագրության թույլատրելիության հարցը կարող է որոշվել մեր կողմից արդեն իսկ առաջարկված սկզբուներով:

Առաջարկում ենք՝ ՀՀ Քրեական դատավարության օրենսգրքում նորմ ավելացնել, որով թույլատրելի ապացույց կհամարվի կատարված տեսաձայնագրությունը, երբ կա երկու կողմերի համաձայնությունը, ընդ որում այդ համաձայնությունը կարող է արտահայտվել համաձայնության բացակայության մասին չփաստելով (օրինակ՝ երբ անձը տեսնում է, որ իրեն տեսանկարահանում են, բայց շարունակում է իր ապօրինի գործողությունները կամ ինքնապատասխանիչի վրա թողնված ձայնագրությունը ): Չնայած նրան որ ՀՀ օրենսդրությամբ երկու կողմերի համաձայնությամբ կատարված տեսա-

ձայնագրությունը որպես թույլատրելի ապացույց ճանաչելու հնարավորության դեմ ուղղակի արգելք չկա, այնուամենայնիվ կարծում ենք՝ որոշակի «հնարքների» կամ «մեխանիզմերի» կիրառմամբ հնարավոր է նմանօրինակ տեսա-ձայնագրությունը անթույլատրելի ապացույց ճանաչելը:

**Օգտագործված գրականության ցանկ**


1. Романовский Г.Б., Право на неприкосновенность частной жизни, МЗ-Пресс, 2001 /// http://library.khpg.org/files/docs/1430850257.pdf
2. Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիր, (ընդունվել և հռչակվել է ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեայի 1948 թ. դեկտեմբերի 10-ի 217 Ա (III) բանաձևի համաձայն, ուժի մեջ է մտել 10.12.1948) http://www.un.am/up/file/Universal%20Declaration%20of%20Human%20Rights_official%20translation.pdf
3. Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիր, (ընդունվել է ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեայի 16.12.1966 թ. 2200 Ա (XXI) բանաձևով, ուժի մեջ է մտել 23.03.1976) /// https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=18500 :
4. Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն, ՀՀՊՏ 2015.12.21/Հատուկ թողարկում Հոդ. 1118., ուժի մեջ է մտել 22.12.2015
5. Գերմանիայի դաշնային Հանրապետության Սահմանադրություն, հրապարակվել է խորհրդարանական խորհրդի կողմից 1949 թվականի մայիսի 23-ին /// https://www.concourt.am/armenian/legal_resources/world_constitutions/constit/germany/ge-old-e.htm
6. Իտալիայի Հանրապետության Սահմանադրություն, ընդունվել է 1947 թվականի դեկտեմբերի 22, ուժի մեջ է մտել՝ 01.01.1948 /// https://www.concourt.am/armenian/legal_resources/world_constitutions/constit/italy/itaold-e.htm
7. Текст Конституций европейских стран цитируется по Конституции зарубежных государств. М, 1996. См. также КНР. Конституция и законодательные акты. М. 1984.:
8. Романовский Г.Б. , Право на неприкосновенность частной жизни, МЗ-Пресс, 2001 /// http://library.khpg.org/files/docs/1430850257.pdf
9. Ալբանիայի Հանրապետության Սահմանադրություն, հրապարակվել է 28. 11. 1998 ///

https://www.concourt.am/armenian/legal_resources/world_constitutions/constit/albania/albani-e.htm

10. Էստոնիայի Հանրապետության Սահմանադրություն, ընդունվել է 1992 թվականի հունիսի 28-ին /// https://www.concourt.am/armenian/legal_resources/world_constitutions/constit/estonia/estoni-e.htm
11. Հայաստանի Հանրապետության 2015թ. խմագրությամբ Սահմանադրությունը, համառոտ պարզաբանումներ, Վ. Պողոսյան և Ն. Սարգսյան, Երևան, 2016, էջ 52
12. Романовский Г.Б. , Право на неприкосновенность частной жизни, МЗ-Пресс, 2001 /// http://library.khpg.org/files/docs/1430850257.pdf
13. Комментарий к Семейному кодексу РФ / Под ред. И.М.Кузнецовой. М., 1996 (комментарий к статье 2):
14. Европейский Суд по правам человека. Избранные решения: В 2 т. Т. 1. с. 240.:
15. Гомьен Д., Харрис Д., Зваак Л. Европейская конвенция о правах человека и Европейская социальная хартия: право и практика. М., 1998, с.306.:
16. Лещенко Г.В. Право на личную и семейную тайны // Право граждан на информацию и защита неприкосновенности частной жизни: Сборник научных трудов. Часть II. Н.Новгород, 1999, с. 206.:
17. Պետություն և իրավունք. ՀՀ Իրավաբանների միություն, ԵՊՀ Իրավագիտության ֆակուլտետ, 2019թ.:
18. Պետություն և իրավունք. ՀՀ Իրավաբանների միություն, ԵՊՀ Իրավագիտության ֆակուլտետ, 2019թ.:
19. Международная и внутригосударственная защита прав человека: учебник / А.Х. Абашидзе, З.Г. Алиев, К.Ф. Амиров и др.; под ред. Р.М. Валеева. М.: Статут, 2011. էջ 126

# ԱՐԵՎՄՏՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՐՑԻ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ԱՐԴԻ ՊԱՏՄԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՄԲ (1996-2022 ԹԹ.)

**ԼԻԼԻԹ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**
ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա,
գիտակրթական միջազգային կենտրոն,
պատմության ինստիտուտ,
Հայկական հարցի և Հայոց ցեղասպանության պատմության բաժնի ավագ գիտաշխատող,
պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ
lilit.hovhannisyan@isec.am

**Համառոտագիր**

XIX դարի վերջին քառորդին ազգային պետականության բացակայության պայմաններում թուրքական տիրապետության դեմ մղվող ազատագրական պայքարում հայ ժողովուրդը հույսը դրել էր արտաքին ուժերի վրա: Նա, ըստ էության, պատրաստ չէր զինված պայքարի և չկարողացավ կազմակերպել համընդհանուր զինված հակաթուրքական ապստամբություն, երբ 1877-1878 թթ. ռուսական Կովկասյան բանակը գրավում էր Արևմտյան Հայաստանը:

Ռուս-թուրքական պատերազմի ավարտից հետո՝ 1878 թ., Սան Ստեֆանոյի պայմանագրով, ապա Բեռլինի տրակտատով Արևմտյան Հայաստանի հարցը միջազգայնացվեց: Այդպիսով՝ մեծ տերությունների մերձավորարևելյան ռազմաքաղաքական շահերն ու միջպետական հակասությունները դարձան Հայկական հարցի բովանդակության և դրա աստիճանական փոփոխության վրա ազդող լուրջ գործոն: 1878 թվականին, ի հեճուկս արևմտահայերի ցանկության, Արևմտյան Հայաստանը չստացավ ինքնավարություն: Ռուս-անգլիական սուր հակասությունների և մրցակցության հետևանքով Հայկական հարցը հանգեցվեց Արևմտյան Հայաստանում միջազգային վերահսկողության ներքո բարենորոգումների անցկացման հարցի և, ընդհուպ Առաջին աշխարհամարտը, միջազգային դիվանագիտական շրջանակներում քննարկվում էր հենց այդ բովանդակությամբ:

Վերոնշյալ իրադարձությունների վերլուծությունն ու արժևորումը եղել և մնում է Հայկական հարցի բազմաշերտ պատմությունն ուսումնասիրող Հայաստանյան պատմաբանների ուշադրության կենտրոնում: 1996-2022 թթ. Հայաստանյան պատմագիտության մեջ համակողմանիորեն լուսաբան-

վել են Հայկական հարցի միջազգայնացման, միջազգային դիվանագիտական շրջանակներից հայ ազգային հասարակական շրջանակների ակնկալիքների, դրանց նկատմամբ մեծ տերությունների ու սուլթանական կառավարության դիրքորոշումների և վարած քաղաքականության հարցերը: Մասնավորապես, Գ. Գալոյանը, Է. Կոստանդյանը, Ռ. Հովհաննիսյանը, Վ. Թունյանը, Ա. Մարուքյանը, Ս. Պողոսյանը վերարժևորել են XIX դարի վերջին քառորդին եվրոպական տերությունների հետ աշխատելու ուղղությամբ հայ գործիչների մոտեցումների ուժեղ և թույլ կողմերը, արտաքին իրադրության փոփոխությունները հաշվարկելու և հօգուտ ազգային շահերի օգտագործելու նրանց ճկունությունը, դրան խոչընդոտող գործոնները, նորահայտ վավերագրերի հիման վրա ներկայացրել ու գնահատել են Հայկական հարցում մեծ տերությունների շահերն ու հետաքրքրությունները, կիրառած դիվանագիտական հնարքները:

**Բանալի բառեր և բառակապակցություններ.** Հայաստանի Հանրապետություն, Հայկական հարց, պատմագիտություն, Արևմտյան Հայաստան, բարենորոգումներ, անվտանգություն, Սան Ստեֆանոյի պայմանագիր, Բեռլինի տրակտատ:

# ИНТЕРНАЦИОНАЛИЗАЦИЯ ВОПРОСА ЗАПАДНОЙ АРМЕНИИ В ОЦЕНКЕ СОВРЕМЕННОЙ АРМЯНСКОЙ ИСТОРИЧЕСКОЙ НАУКИ (1996-2022 ГГ.)

**ЛИЛИТ ОГАНИСЯН**
Национальная академия наук Республики Армения
Международный научно-образовательный центр
Институт истории
старший научный сотрудник отдела истории Армянского вопроса и Геноцида армян
кандидат исторических наук, доцент
lilit.hovhannisyan@isec.am

**Аннотация**

В последней четверти XIX века, в условиях отсутствия национальной государственности, армянский народ в освободительной борьбе против турецкого владычества опирался на иностранные силы. По существу он не был готов к вооруженной борьбе и не смог организовать всеобщего вооруженного антитурецкого восстания, когда русская Кавказская армия в 1877-1878 гг. оккупировала Западную Армению.

После окончания русско-турецкой войны подписанием в 1878 году Сан-Стефанского договора, а затем Берлинского трактата вопрос о Западной Армении был интернационализирован. Таким образом, ближневосточные военно-политические интересы и межгосударственные конфликты великих держав стали серьезным фактором, влияющим на содержание Армянского вопроса и его постепенное изменение. В 1878 году, вопреки желанию западных армян, Западная Армения не получила автономии. В результате острых русско-английских противоречий и соперничества Армянский вопрос сводился к вопросу о проведении реформ в Западной Армении под международным контролем и вплоть до Первой мировой войны обсуждался в международных дипломатических кругах с таким содержанием.

Анализ и оценка вышеперечисленных событий были и остаются в центре внимания армянских историков, изучающих многослойную историю Армянского вопроса. В 1996-2022 годах армянская историография всесторонне освещала проблемы интернационализации Армянского вопроса, ожиданий армянской национальной общественности от международных дипломатических кругов, позиции и политики по отношению к ним великих держав и османского правительства. В частности, Г. Галоян, Э. Костандян, Р. Оганисян, В. Тунян, А. Марукян, С. Погосян переоценили сильные и слабые стороны подходов

армянских деятелей в их работе с европейскими державами в последней четверти XIX века, их гибкость в расчете на изменения во внешней ситуации и их использование в пользу национальных интересов. Они также переоценили факторы, препятствующие этому процессу, а на основании недавно обнаруженных документов были представлены и оценены интересы великих держав в Армянском вопросе, использованные ими дипломатические уловки.

**Ключевые слова и словосочетания:** Республика Армения, Армянский вопрос, историческая наука, Западная Армения, реформы, безопасность, Сан Стефанский договор, Берлинский трактат.

# INTERNATIONALIZATION OF THE WESTERN ARMENIA QUESTION IN THE EVALUATION OF MODERN ARMENIAN HISTORICAL SCIENCE (1996-2022)

**LILIT HOVHANNISYAN**
National Academy of Sciences of the Republic of Armenia
International Scientific Educational Center
Institute of History
Department of Armenian Cause and
Armenian Genocide, Senior Researcher
PhD in Historical Sciences, Associate Professor
lilit.hovhannisyan@isec.am

**Abstract**

In the last quarter of the 19th century, in the absence of national statehood, the Armenian people relied on foreign forces in the liberation struggle against Turkish rule. He was unprepared for armed struggle and could not organize a general anti-Turkish uprising when the Russian Caucasian army occupied Western Armenia in 1877-1878.

After the end of the Russo-Turkish war, the Question of Western Armenia was internationalized by the Treaty of San Stefano signing and then with the Treatise of Berlin in 1878. Thus, the Middle Eastern military-political interests and interstate conflicts of the Great Powers have become a serious factor influencing the content of the Armenian Question and its gradual change. In 1878, contrary to the wishes of Western Armenians, Western Armenia did not receive autonomy. As a result of sharp Russian-English contradictions and rivalry, the Armenian Question was reduced to the issue of reforms in Western Armenia under international control and, up to the First World War, was discussed in international diplomatic circles with such content.

The analysis and evaluation of the above events have been and remain the focus of attention of Armenian historians studying the multi-layered history of the Armenian Question. From 1996-2022, the problems of the internationalization of the Armenian Question, the expectations of the Armenian national community from international diplomatic circles, and the positions and policies towards them of the Great Powers and the Ottoman government are comprehensively elucidated in the Armenian historiography. In particular, the strengths and weaknesses of the approaches of Armenian leaders regarding their work with European Powers in the last quarter of the 19th century, their flexibility in calculating the changes in the external situation and their use in favour of national interests are reevaluated by G. Galoyan, E. Kostandyan, R. Hovhannisyan, V. Tunyan, A. Marukyan, S. Poghosyan. The factors hindering this process, the interests of the Great Powers in the Armenian Question, and the diplomatic tricks they used are presented and evaluated by them based on recently discovered documents.

**Keywords and phrases:** Republic of Armenia, Armenian Question, Historical science, Western Armenia, reforms, safety, Treaty of San Stefano, Berlin Treatise.

**Ներածություն**

2022 թվականի մայիսի 31-ին ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոնի նախաձեռնությամբ Երևանում տեղի ունեցած «Հիմնարար և կիրառական գիտական հետազոտություններ. արդիական խնդիրներ և ձեռքբերումներ» խորագրով միջազգային գիտաժողովում հանդես եկա «Հայկական հարցի ուսումնասիրության արդյունքները Հայաստանյան պատմագիտության մեջ (1991-2021 թթ.)» թեմայով զեկուցմամբ **[9, էջ 469-478]**, որում ամփոփ ներկայացվեցին 1991-2021 թվականներին Հայաստանի Հանրապետության պատմագիտության մեջ 1878-1923 թթ. Հայկական հարցի՝ որպես միջազգային դիվանագիտության հարցի տարբեր հիմնախնդիրների վերաբերյալ հիմնարար հետազոտությունների արդյունքները: Այս ուսումնասիրության նպատակն է՝ վերլուծել և գնահատել 1878 թ. Արևմտյան Հայաստանի կամ Հայկական հարցի միջազգայնացման, դրա բովանդակության ու նշանակության վերաբերյալ ՀՀ պատմագիտության մեջ կատարված գիտական արժեքավոր հետազոտությունների արդյունքները, դրանցում արտացոլված տեսակետներն ու եզրահանգումները, որոնք ունեն գիտագործնական նշանակություն:

**Ուսումնասիրության տեսամեթոդական հիմքերը**

Վերլուծության տեսական հիմքը կազմում են պատմագիտական հիմնարար աշխատությունները՝ մենագրությունները, գիտական հոդվածներն ու զեկուցումները, պատմագրական բնույթի ուսումնասիրությունները: Այս տեսանկյունից հիմնահարցն առաջին անգամ է ներկայացվում: Հետազոտությունը կատարված է պատմագենետիկական, ռետրոսպեկտիվ, պատմահամեմատական, պատմահամակարգային և տերմինաբանական մեթոդների օգտագործմամբ:

**Ուսումնասիրության արդյունքները**

1866–1869 թթ. հակաթուրքական ապստամբությունը Կրետե կղզում, 1875 թ. Հերցեգովինա–բոսնիական, ապա, 1876 թ. բուլղարական ապստամբությունները, 1876 և 1878 թթ. մակեդոնական զինված ընդվզումները, 1877-1878 թթ. Ռուսաստանի ռազմական հաջողությունները Թուրքիայի նկատմամբ, միևնույն ժամանակ եվրոպական տերությունների ռազմաքաղաքական շահերի բախումն Արևելյան հարցում մինչև հիմքերը ցնցեցին բազմազգ Օսմանյան կայսրությունը: Թուրքահպատակ քրիստոնյա ժողովուրդները՝ հայերը, հույները, բուլղարները, սերբերը, սլովենները, չեռնոգորցիները, մակեդոնացիները, պաշտպանում էին Ռուսաստանի նվաճողական քաղաքականությունը՝ այն համարելով թուրքական բռնակալությունից ազատվելու հի-

րենց հնարավորություններից մեկը: Միևնույն ժամանակ նրանք կարևորում էին եվրոպական տերությունների դերն այդ գործում: Վերջիններս էլ, իրենց հերթին, թուրքահպատակ քրիստոնյա ժողովուրդների ազատագրական պայքարն օգտագործում էին իբրև Թուրքիայի վրա ճնշում գործադրելու միջոց՝ հասնելու իրենց քաղաքական ծրագրերի իրագործմանը **[3, էջ 254]**: Բալկաններում և Ասիական Թուրքիայում Ռուսաստանի դիրքերի ամրապնդումն անցանկալի էր հատկապես Անգլիայի համար: Պատահական չէ, որ 1878 թ. սկզբին, Կոստանդնուպոլսին ռուսական զորքի մոտենալուն ի պատասխան բրիտանական ռազմական նավատորմը շարժվեց դեպի «թուրքական ջրեր» և խարիսխ գցեց Իշխանաց կղզիների մոտ՝ կայսերական մայրաքաղաքից նավարկության մեկ ժամվա հեռավորության վրա: Նաև ուշագրավ է, որ այդ նպատակի համար պառլամենտը 6 միլիոն ֆունտ ստեռլինգ էր հատկացրել **[16, էջ 457]**: Գ. Գալոյանի նկատառմամբ, անգլիական կառավարության այդ վարքագիծը նշանակում էր հրաժարվել 1877–1878 թթ. ռուս–թուրքական պատերազմի բռնկումից ընդամենը 24 օր առաջ ստորագրված Լոնդոնյան արձանագրությունից, որով նա պարտավորվել էր չեզոքություն պահպանել ռուս–թուրքական հակամարտության նկատմամբ **[15, էջ 156–158]**: Եվ սա այն դեպքում, երբ նշված համաձայնությամբ կողմերը «խորհուրդ էին տալիս» Թուրքիային որոշ «զիջումներ անել» Ռուսաստանին՝ Բալկանյան հարցի վերաբերյալ Կոստանդնուպոլսում 1876 թ. մարտին տեղի ունեցած կոնֆերանսի ձախողման հետևանքով սրված ռուս–թուրքական հարաբերությունները մեղմելու համար **[3, էջ 258]**: Պատմաբանը կարևորում է մեկ այլ հանգամանք ևս. անգլիական կառավարությունը հետևողական էր, որ ռուս–թուրքական հարաբերություններին հօգուտ Օսմանյան կայսրության իր ցանկացած միջամտություն կատարվեր սուլթանի համաձայնությամբ, քանի որ դրա բացակայությունը «ոչ միայն Անգլիայի դեմ՝ որպես ագրեսորի կհաներ ամբողջ Եվրոպային, այլև Թուրքիային կմղեր համաձայնության Ռուսաստանի հետ, ինչը ձեռնտու չէր Անգլիային: ...Թուրքիան կարող էր օգտագործել այդ հաղթաթուղթը Անգլիայից զիջումներ ստանալու համար» **[3, էջ 258]**:

1877–1878 թթ. ռուս–թուրքական պատերազմում տարած ռազմական հաղթանակն ու 1878 թ. փետրվարի 19 (մարտի 3)-ին ստորագրված Սան Ստեֆանոյի՝ 29 հոդվածից կազմված հաշտության նախնական պայմանագիրն էապես ամրապնդում էին Ռուսաստանի ռազմաքաղաքական դիրքերը միջազգային ասպարեզում **[7, էջ 434]**: Օսմանյան կայսրությունը ենթարկվում էր մասնակի բաժանման **[13, էջ 3]**:

Ըստ Սան Ստեֆանոյի պայմանագրի 16-րդ հոդվածի, նկատի առնելով, որ ռուսական զորքերի դուրսբերումը նրանց իսկ գրաված Հայաստանի՝ Թուրքիային վերադարձվելիք վայրերից՝ Բասենից ու Էրզրումից, կարող էր երկրամասում առիթ կենսագործել հայաբնակ մարզերի (Վանի, Բիթլիսի, Էրզրումի, Սեբաստիայի, Խարբերդի, Դիարբեքիրի վիլայեթների – Լ. Հ.) տեղական կարիքներից հարուցվող բարելավումներ և բարենորոգություններ, և զերծ պահել հայերի անվտանգությունը քրդերից և չերքեզներից» **[10, էջ 92]**: Բարենորոգումներն իրագործվելու էին նախքան ռուսական զորքերի դուրսբերումը նրանց կողմից գրավված Հայաստանի տարածքներից: Ըստ պայմանագրի 25–րդ հոդվածի, ռուսական զորքերի դուրսբերումն Ասիական Թուրքիայից կատարվելու էր վեց ամսվա ընթացքում՝ «հաշված վերջնական հաշտություն կնքելու օրից» **[10, էջ 92]**: Գ. Գալոյանն իրավացիորեն նկատում է, որ այդպիսով «Ռուսաստանն իր հովանավորության տակ էր վերցնում Արևմտյան Հայաստանը: Դա ավելին էր, քան ազդեցության գոտի ձեռք բերելը, բայց չէր նշանակում, թե Արևմտյան Հայաստանին ինքնավարություն էր տրվում» **[3, էջ 264]**:

Հայանպաստ էին նաև Սան Ստեֆանոյի պայմանագրի 17–րդ և 27–րդ հոդվածները: 17–րդ հոդվածով Բարձր դուռը պարտավորվում էր լիակատար և անվերապահ ներում շնորհել այն օսմանահպատակներին, ովքեր մասնակցել էին պատերազմական գործողություններին՝ օգնելով հակառակորդին, իսկ այն անձանց, ովքեր այդ իրադարձությունների հետևանքով տարագրվել էին կամ բանտարկվել՝ անհապաղ ազատ արձակել **[10, էջ 92]**: Իսկ 27–րդ հոդվածով թուրքական կառավարությունը պարտավորվում էր չհալածել և թույլ չտալ հալածել այն թուրքահպատակներին, որոնք պատերազմի ժամանակ կապեր էին ունեցել ռուսական բանակի հետ, ինչպես նաև նրանց, ովքեր կցանկանային իրենց ընտանիքներով հեռանալ ռուսական զորքերի հետ **[10, էջ 92]**: Պայմանագրի 19–րդ հոդվածն ընդգծում էր, որ թուրքական կողմը պարտավոր էր վճարել ռազմատուգանք 1 միլիարդ 410 միլիոն ռուբլու չափով, ինչը, սակայն, անկարող էր: Ուստի ռազմատուգանքի փոխարեն Արդահանը, Կարսը, Բաթումը, Բայազետը և ողջ տարածքը մինչև Սողանլուղ անցնում են Ռուսաստանին **[10, էջ 93–95]**: Այդ հոդվածում մանրամասն նշված է սահմանագիծը Սև ծովի ափից լեռնաշղթայի վրայով, Խոպ և Ճորոխ գետերի ջրբաժանով, կիրճերով, գյուղերով՝ հավելելով, որ քարտեզի վրա նույնը կնշի ռուսական և օսմանյան պատգամավորներից կազմված հանձնաժողովը: Ուշագրավ է, որ տարածքային փոխհատուցումը կազմում էր ռազմատուգանքի մեծ մասը՝ 1 միլիարդ 100 միլիոն ռուբլի: Մնացած 310 միլիոն ռուբլու վճարման ձևը որոշվելու էր հետագայում **[13, էջ 18]**:

Ըստ Ա. Մարուքյանի, Ռուսաստանը գիտակցում էր, որ Օսմանյան կայսրության քրիստոնյաները, այդ թվում հայերը, 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմի ժամանակ իրենց կյանքը վտանգելով էին աջակցել ռուսական բանակին: Ուստի Սան Ստեֆանոյի պայմանագրի 17-րդ, 25-րդ և 27-րդ հոդվածները կարևոր էին նրանով, որ Ռուսաստանն օսմանյան ներպետական օրենսդրությունից դուրս էր բերում ու միջազգայնացնում պատերազմի ժամանակ թուրքերի հակառակորդ իր զորքերին սատարած օսմանահպատակների պաշտպանության հարցը **[2, էջ 53]**:

Սան Ստեֆանոյի պայմանագրի 16-րդ հոդվածով միջազգային դիվանագիտության օրակարգ էր մտնում Արևմտյան Հայաստանի բարենորոգումների, իսկ հետագայում ինքնավարության, ապա նաև անկախության խնդիրը՝ Հայկական հարց անվամբ: Խորհրդահայ պատմագիտությունը, Հայկական հարցը գնահատելով որպես Արևելյան հարցի բաղկացուցիչ մասը, բավարարվել է, նշելով, որ այն աշխարհի վերաբաժանմանը նախապատրաստվող գաղութատիրական երկրներին հնարավորություն էր ընձեռում ցանկացած ձևով միջամտելու Թուրքիայի ներքին գործերին **[11, էջ 109]**: Հայ պատմաբանների ճնշող մեծամասնությունն ուշադրության կենտրոնում պահել է լոկ Հայաստանին վերաբերող 16–րդ հոդվածը: Անտեսվել է դրա նկատմամբ եվրոպական տերությունների անհանգստության խորքային պատճառը. Սան Ստեֆանոյի պայմանագիրն ամբողջությամբ Ռուսաստանին դարձնելու էր գերիշխող պետություն թե՛ Բալկանյան թերակղզում, թե՛ Սև ու Միջերկրական ծովերում: Եվ եթե այս պայմաններում Արևմտյան Հայաստանը ևս անցներ Ռուսաստանի ազդեցության ոլորտը, այդ դեպքում տարածաշրջանում նա չէր ունենալու իր մրցակիցը: Այս էր պատճառը, որ եվրոպական տերությունները նախնական հաշտության պայմանագիրը դիտում էին որպես իրենց շահերի դեմ ուղղված պայմանագիր և պահանջում էին Ռուսաստանից վերանայել այն: Հանդես գալով հայկական շահի դիրքից և զարգացնելով վերոնշյալ գնահատականը՝ հետխորհրդահայ պատմագիտության մեջ Սան Ստեֆանոյի պայմանագիրը կարևորված է որպես միջազգային առաջին պայմանագիրը, որով Հայկական հարցը դառնում էր միջազգային քննարկման առարկա. Թուրքիան ընդունում էր Հայաստան աշխարհագրական և պատմական տարածքի գոյությունն իր նվաճած երկրների շարքում **[3, էջ 266, 268], [7, էջ 435–436]**:

Զարգացնելով այս տեսակետը՝ Էմմա Կոստանդյանը (1934-2014) խորհրդային պատմաբան Ռաֆիկ Հովհաննիսյանի (1931-1976) համահեղինակությամբ կատարված վերլուծության մեջ շեշտում է, որ 16–րդ հոդվածը լի էր անորոշություններով. հստակորեն չէր նշվում, թե ի՞նչ բարեփոխումներ պետք է

կատարվեն, կային միայն ընդհանուր դատողություններ: Ավելին, մի փոքրիկ արտահայտությամբ՝ «զերծ պահել հայերի անվտանգությունը քրդերից և չերքեզներից», Բարձր դուռը փորձում էր սեպ խրել հարևան հայ և քուրդ ժողովուրդների միջև **[7, էջ 436]**:

Ուշագրավ է, որ Հայկական հարցի միջազգայնացման ընթացքում սուլթանի կառավարությունն օգտագործում էր հայկական գործոնը, որպես զոնդաժի միջոց մի կողմից՝ հայ ազգային շրջանակների, մյուս կողմից՝ մեծ տերությունների իրական շահերն ու հետաքրքրությունները շոշափելու նպատակով **[6, էջ 77–84]**: Այսպես, Սան Ստեֆանոյի բանակցությունների ընթացքում սուլթան Աբդուլ Համիդ II–ի գիտությամբ այնտեղ էին գտնվում Հայոց ազգային ժողովի կողմից լիազորված պատվիրակությունը՝ Կոստանդնուպոլսի Հայոց պատրիարք Ներսես Վարժապետյանի գլխավորությամբ, և Վանի հոգևոր առաջնորդ Մկրտիչ (Հայրիկ) Խրիմյանի պատվիրակությունը: Հայ գործիչները բանակցություններ էին վարում ռուսական պատվիրակության ղեկավարի՝ Թուրքիայում Ռուսաստանի նախկին դեսպան Նիկոլայ Իգնատևի հետ «հայկական անկախ պետություն» ստեղծելու վերաբերյալ: Սակայն վերջինս չխոստացավ պաշտպանել այդ գաղափարը Բեռլինի վեհաժողովում **[17, էջ 47]**: Շեշտելով այս տեղեկության հավաստիությունը՝ Գ. Գալոյանն իրավացիորեն նկատում է, որ դրա պատճառն անգլիական դիվանագիտության թուրքանպաստ միջամտությունն էր եղել **[3, էջ 265]**: Այնուհետև, անդրադառնալով սուլթանի կողմից Ն. Վարժապետյանի և Մ. Խրիմյանի մեկնումը Սան Ստեֆանո թույլատրելու նպատակներին՝ պատմաբանն այն ենթադրությունն է հայտնում, որ նա «այդ քայլով նպատակ է ունեցել իր համար պարզելու, թե հայերը վերջնականապես ինչի են ձգտում»: Հարցն այն է, որ պատրիարքը մշտապես հավաստիացնում էր սուլթանին, որ հայերն անջատողական ձգտումներ չունեն: Դրանով Ն. Վարժապետյանն արտահայտում էր իր անձնական տեսակետը, որն աղերս չուներ արևմտահայության ազատագրական ձգտումների հետ: Հայ ժողովրդի արևմտյան հատվածի՝ իր հայրենիքում ապրելու և զարգանալու հեռանկարի տեսանկյունից այն հանդիսանում էր նվազագույն պայմաններով բավարարվելուն ուղղված դիրքորոշում, որն էլ էական ազդեցություն ունեցավ Հայկական հարցի դիվանագիտական բովանդակության ձևավորման վրա: Այսպես, Ն. Իգնատևի հետ բանակցություններից հետո պատրիարք Ն. Վարժապետյանի գլխավորությամբ ստեղծված հանձնախումբը պատրաստեց «Օսմանյան Հայաստանի կազմակերպական կանոնագրի ծրագիր», որն արտահայտում էր մի կողմից պատրիարքի, մյուս կողմից՝ ռուսական դիվանագիտության զուսպ ու զգու-

շավոր դիրքորոշումը հայկական վիլայեթների իրավական կարգավիճակի հարցում: Այդ ծրագիրը ռուսական կայսեր «զորավոր պաշտպանությունը» հայցելու «արդար և օրինաւոր» անհրաժեշտությունը հիմնավորող հուշագրի հետ միասին 1878 թ. մարտի 15–ին արքեպիսկոպոս Խ. Նարբեյը Պետերբուրգում ներկայացրեց ցար Ալեքսանդր II–ին **[8, էջ 60–61, 62–63]**: Ըստ ծրագրի՝ ինքնավարություն ստանալու դեպքում Արևմտյան Հայաստանը դրվելու էր Թուրքիայի և Ռուսաստանի համատեղ կառավարման ներքո՝ մնալով Օսմանյան կայսրության կազմում, այսինքն՝ Հայկական հարցն արմատապես չէր լուծվելու: Այսպիսով՝ սուլթանը համոզվեց, որ պատրիարքը կամ դիվանագիտություն էր խաղում, կամ, իրոք, չգիտեր, թե ինչի են ձգտում արևմտահայերը **[3, էջ 265, 272]**:

Գ. Գալոյանի գնահատմամբ, Պատրիարքարանի ծրագրի «խեղճությունը բացատրվում էր արևմտահայերի հոգեբանական գործոնով». «դարեր շարունակ ապրելով Օսմանյան կայսրությունում նրանց համար դեռևս դժվարամարս էր Արևմտյան Հայաստանի ինքնավարության գաղափարը, ընդգծվում էր Թուրքիայի գերիշխանության տակ ինքնավարություն ստանալու պահանջը **[3, էջ 270]**:

Պատմաբանը նաև անդրադառնում է, իր բնութագրմամբ, «չգիտես ում կողմից լիազորված», «պետություն չներկայացնող», «դեռևս բարձր դիրք չգրավող … կրոնավոր» Պողոս Նուբար փաշայի մշակած ծրագրին, որը չէր համաձայնեցվել պատրիարքի հետ. դրանում անգամ ակնարկ չկար Արևմտյան Հայաստանի ինքնավարության մասին, գլխավոր պահանջը հանգում էր երկրամասում եվրոպական տերությունների հովանավորությամբ հայ նահանգապետի նշանակմանը: Գ. Գալոյանի նկատառմամբ՝ նշված երկու իրար հետ չհամաձայնեցված ծրագրերը տառապում էին անհետևողականությամբ և ընդունակ չէին վճռական պայքարի մղելու ազատատենչ ժողովրդին: «Տնավարի» կազմված այդ ծրագրերը, հենց դրանց երկուսը լինելու փաստը, լուրջ տարաձայնություններ առաջացրին հայ հասարակության մեջ՝ պառակտելով ու ջլատելով նրա ուժերը: Ե՛վ արևմտահայերի, և՛ արևելահայերի ակնկալիքներն այնքան մեծ էին, որ նրանց չէին կարող գոհացնել առաջադրված ծրագրերի «համեստությունը» և իրականացման «երերուն մեխանիզմները»: Պատահական չէ, որ այդ ծրագրերը լրջությամբ չընդունեց նաև հացեստերերից և ոչ մեկը, թեև նրանք արտաքուստ «բարյացակամությամբ» ծանոթացան դրանց: Գ. Գալոյանն իրավացիորեն նկատում է, որ «հայ գործիչներից շատերի մեջ միշտ էլ սեփական պատվախնդրությունը բարձր է դասվել ազգի շահերից» **[3, էջ 272]**: Պատմաբանի անկեղծ ընդ-

հանրացումը, ցավոք, բնութագրական է նաև մեր օրերում: Դա վկայում է, որ պատմության համապատասխան դասից ոչինչ չենք սովորել:

Գ. Գալոյանի համոզմամբ՝ Աբդուլ Համիդը քաջատեղյակ էր Խ. Նարբեյի ու Մ. Խրիմյանի առաքելություններին և հեռատեսորեն չէր խոչընդոտել դրանց ընթացքը՝ հասկանալով, որ «երկու լարերի վրա հայ գործիչների խաղը ոչ միայն գրգռելու էր եվրոպական տերություններին և Ռուսաստանին միմյանց դեմ, այլև բոլորի անվստահությունն էր առաջացնելու հայերի անկեղծության նկատմամբ: Բացի այդ՝ ... Աբդուլ Համիդը ձգտում էր ստեղծել տպավորություն, որ հայերը, դիմելով եվրոպական տերություններին, ... ձգտում էին հասնել Սան Ստեֆանոյի պայմանագրի փոփոխմանը, որպեսզի իրենց բախտի տնօրինությունը չտրվեր միայն Ռուսաստանին:

Աբդուլ Համիդի հաշվարկները սխալ դուրս չեկան: Հետևանքը եղավ այն, որ ո՛չ Ռուսաստանը և ո՛չ էլ արևմտաեվրոպական որևէ տերություն չխոստացան պաշտպանել Հայ դատը Բեռլինի վեհաժողովում: Դա Աբդուլ Համիդի խոշոր հաղթանակն էր» **[3, էջ 273], [4, էջ 3–18], [5, էջ 7–21], [12, էջ 36–48]**:

Ընդհանրացնելով խնդրո առարկա ժամանակահատվածին վերաբերող բրիտանական դիվանագիտական փաստաթղթերից քաղված փաստերը՝ Գ. Գալոյանը նկատում է, որ Բեռլինի վեհաժողովի նախօրեին սուլթանը դիվանագիտական խորամանկ քայլերով աշխատում էր խորացնել արևմտաեվրոպական տերությունների և Ռուսաստանի հակասությունները Հայկական հարցում, ինչի վկայությունն էր 1878 թ. մայիսի 18 (30)-ին Լոնդոնում Ռուսաստանի դեսպան Պ. Շուվալովի և Մեծ Բրիտանիայի արտաքին գործերի մինիստր լորդ Սոլսբերիի միջև ստորագրված գաղտնի համաձայնագիրը **[3, էջ 273–276]**: Ըստ դրա՝ պայմանավորվածություն ձեռք բերվեց, որ Սան Ստեֆանոյի պայմանագրի 16-րդ հոդվածով նախատեսված Արևմտյան Հայաստանում բարենորոգումների անցկացման վերահսկողության վերաբերյալ խոստումներ Բեռլինի վեհաժողովում տրվեին ոչ թե բացառապես Ռուսաստանի, այլ նաև Անգլիայի անունից: Դրա դիմաց Անգլիան պարտավորվում էր չխանգարել Ռուսաստանին ձեռք բերելու Բաթումի նավահանգիստը: Բացի այդ՝ Անգլիան համաձայնեց, որ Ռուսաստանը վեհաժողովում պնդեր պահպանելու իր գրաված տարածքները, պայմանով, որ ապագայում Ռուսաստանի սահմանները չէին ընդարձակվելու Ասիական Թուրքիայում **[10, էջ 100, 102]**: «Այսպիսով, Անգլիայի ճնշման միջոցով տապանաքար դրվեց Սան Ստեֆանոյի պայմանագրի 16-րդ հոդվածի վրա, և այնքան ծանր, որ այն այլևս տեղից շարժելու ոչ մի հեռանկար չունեցավ»,– եզրա-

կացնում է Գ. Գալոյանը **[10, էջ 279]**: Հավելենք, որ 1878 թ. մայիսի 30-ի անգլո-ռուսական գաղտնի համաձայնությանը հետևեց հունիսի 4-ին անգլիական կառավարության վերջնագիրը Բ. Դռանը՝ անգլո-թուրքական պաշտպանական համաձայնագիր կնքելու պահանջով, որով երաշխավորվելու էր Օսմանյան կայսրության տարածքային ամբողջականության և անձեռնմխելիության պաշտպանությունը Ռուսաստանի հնարավոր հարձակումից **[17, էջ 36-39]**: Խոսքը վերաբերում էր նախևառաջ Արևմտյան Հայաստանին: Նույն օրը՝ հունիսի 4-ին, Կոստանդնուպոլսում Մեծ Բրիտանիայի դեսպան Հ. Լեյարդը և Օսմանյան կայսրության մեծ վեզիր Սավֆետ փաշան ստորագրեցին «Պաշտպանողական դաշնակցություն Անգլիայի և Թուրքիայի միջև»՝ ուղղված Ռուսաստանի դեմ: Ըստ դրա առաջին հոդվածի՝ «եթե Ռուսաստանը, իր ձեռքում պահելով Բաթումը, Արդահանը, Կարսը կամ նրանցից մեկն ու մեկը, այսուհետև երբևիցե փորձ անի տիրելու Ասիայում Նորին կայսերական մեծություն սուլթանի ունեցած այն երկրներից որևէ մի մասին, որը խաղաղության վերջնական դաշնագրով պիտի որոշվի, այն ժամանակ Անգլիան պարտավորվում է միանալ Նորին կայսերական մեծություն սուլթանի հետ, զենքի ուժով այդ երկրները պաշտպանելու համար» **[10, էջ 104]**: Նույն հոդվածով Բարձր դուռն իր համաձայնությունն էր տալիս, որպեսզի Կիպրոս կղզին զինագրավվեր և կառավարվեր Անգլիայի կողմից **[10, էջ 104]**: «Ռուս-անգլիական և թուրք-անգլիական պայմանագրերն ապահովեցին Անգլիայի գերիշխող դերակատարությունը ամբողջ Եվրոպայում: Դրանից հետո նա արդեն պատրաստ էր մասնակցելու համաեվրոպական վեհաժողովին: Երկու դաշնագրերում Հայկական հարցի վերաբերյալ վնասակար հոդվածներ կային. ռուս-անգլիական պայմանագրով Բայազետը և Ալաշկերտի հովիտը վերադարձվելու էին Թուրքիային, իսկ թուրք-անգլիական պայմանագրով Անգլիայի հովանավորությամբ ուժեղանում էին Թուրքիայի դիրքերը»,- ընդգծում են Է. Կոստանդյանը և Ռ. Հովհաննիսյանը **[7, էջ 439]**: Աբդուլ Համիդի հետ մտերիմ թուրք պետական գործիչ Մեհմեդ Քյամիլ փաշան 1911 թ. տպագրված իր քաղաքական հուշագրության մեջ ընդգծում էր, որ, խրախուսելով հայերի «բարենորոգման հավակնությունները»՝ «իբր թե մեծամասնությամբ հայերով բնակեցված Տրապիզոնի, Էրզրումի, Վանի և Բիթլիսի վիլայեթները մեծ պետությունների հովանավորության ներքո մի ինքնավար վարչաձևի մեջ» դնելու հարցը՝ Անգլիան նպատակ էր հետապնդում «Սև ծովից մինչև Իրանի սահմանը» հայերին ծառայեցնել որպես պատնեշ դեպի Հնդկաստան Ռուսաստանի հնարավոր առաջխաղացման դեմ **[1, էջ 49]**: «Բոլորի համար պարզ է, որ Օսմանյան կայսրությունը թույլ-

նալու դեպքում Անգլիան, իր ուզածի պես, հայերին հրահրելու է Ռուսաստանի դեմ: …Մեր պետության ազդեցության թուլացումը թե՛ Թուրքիայի և թե՛ Անգլիայի շահերը վնասելուց բացի մի այլ հետևանք չի կարող ունենալ:

Ուստի Անգլիան չպետք է, որ իր ջանքերը խնայի Օսմանյան կայսրությանը բարեկամաբար օժանդակելու և նրա փառքն ու անկախությունը պաշտպանելու գործում»,– եզրակացնում էր Քյամիլ փաշան՝ միևնույն ժամանակ խորհուրդ տալով սուլթան Աբդուլ Համիդին Անգլիայի օժանդակությամբ «ջնջել վերացնել», «անհետ եւ անճիտ» անել հայ ազգը **[1, էջ 51, 20]**:

Տեղյակ չլինելով մեծ տերությունների դիվանագիտական «խաղերին»՝ պատրիարք Ն. Վարժապետյանը, Խ. Նարբեյը և Մ. Խրիմյանն այդպես էլ չկարողացան ընկալել, որ Հայկական հարցում անգլիական կառավարության դիրքորոշումը հակահայկական էր **[3, էջ 280-281, 285-286, 287, 289-290]**: Այս առիթով Գ. Գալոյանը նկատում է, որ անգլիական կառավարությունը, չխոչընդոտելով հայ պատվիրակների գործունեությանը, հետապնդում էր «մշուշապատ խոստումներով մոլորության մեջ գցելու միջոցով» արևմտահայերին «Ռուսաստանից կտրելու» նպատակ **[3, էջ 287]**: Եվ սա այն դեպքում, երբ Մ. Խրիմյանի և Խ. Նարբեյի գործունեությունը «երկակի խաղի» տպավորություն էր թողնում եվրոպական դիվանագիտական շրջանակներում: Հարցն այն է, որ Խ. Նարբեյը պատրիարքից հանձնարարություն ուներ համոզելու ռուսական կայսրին, որ հայերի միակ հույսը Ռուսաստանն է, մինչդեռ թուրքական և անգլիական իշխանությունները կասկածում էին, թե Ն. Վարժապետյանը գաղտնի կապերի մեջ էր ռուսների հետ, իսկ ռուս գործիչները պատրիարքին համարում էին Անգլիայի և սուլթանի դրածո **[3, էջ 289–290]**: Միայն Բեռլինի վեհաժողովից հետո հայերը համոզվեցին, որ «Անգլիան անկեղծ չէր իրենց նկատմամբ…, իսկ Ռուսաստանը շահագրգռված չէր, որպեսզի Արևմտյան Հայաստանին ինքնավարություն տրվեր, քանի որ դրա բնականոն հետևանքը կարող էր լինել Միացյալ և Անկախ Հայաստանի ստեղծումը, և Ռուսաստանը կզրկվեր Արևելյան Հայաստանից»,- նկատում է Գ. Գալոյանը **[3, էջ 290]**: Նա իրավացիորեն նշում է, որ այդ վեհաժողովում Անգլիան Կիպրոսի անեքսիայի դիմաց իր պարտքը վճարեց Թուրքիային՝ առանց մտահոգվելու, թե ինչ կլիներ այդ դեպքում հայերի հետ **[3, էջ 294]**: Պատմաբանը նկատի ունի, որ Անգլիայի պահանջով Ռուսաստանը ստիպված ոչ միայն համաձայնեց ռուսական զորքը Թուրքիային վերադարձվելիք տարածքներից դուրս բերել անհապաղ, այսինքն՝ նախքան բարենորոգումներ անցկացնելը, այլև ընդունեց Արևմտյան Հայաստանում բարենորոգումների նկատմամբ մեծ տերությունների կոլեկ-

տիվ պատասխանատվության պայմանը, որը նախապես համաձայնեցվել էր Բ. Դռան հետ: Դա նշանակում է, որ բարենորոգումների անցկացման միջոցների վերաբերյալ համաձայնությունը Թուրքիան կնքելու էր ոչ միայն Ռուսաստանի, այլև Բեռլինի դաշնագիրը ստորագրող վեց տերությունների հետ: Այս պայմանը դրվեց Բեռլինի տրակտատի 61-րդ հոդվածի հիմքում: Ըստ դրա, «Բարձր Դուռը պարտավորվում է առանց հետագա հապաղման իրագործել հայաբնակ մարզերում տեղական կարիքներից հարուցված բարելավումներն ու բարենորոգումները և ապահովել հայերի անվտանգությունը չերքեզներից և քրդերից: Բարձր Դուռը տերություններին պարբերաբար կհաղորդի այն միջոցների մասին, որոնք ինքը ձեռք է առել այդ նպատակի համար, իսկ տերությունները կհսկեն դրանց կիրառմանը» **[10, էջ 128]**: Իսկ թե ինչ միջոցներ պետք է կիրառվեին Թուրքիայի դեմ, եթե նա զանց առներ բարենորոգումների անցկացումը, ոչ մի խոսք չէր ասվում: Բեռլինի վեհաժողովին մասնակցած և ոչ մի տերություն հարկ չհամարեց դրանց անդրադառնալ: Ըստ էության, բարենորոգումներ անցկացնելը, ինչպես կյանքը ցույց տվեց, թողնվեց Աբդուլ Համիդի հայեցողությանը: Արևմտյան Հայաստանին ինքնավարություն տալու հարցը նույնիսկ քննարկման չդրվեց **[3, էջ 296]**: Բեռլինի տրակտատի 61-րդ հոդվածին լրացնելու էր գալիս 62-րդ հոդվածը, ըստ որի, Օսմանյան կայսրության տարածքում դավանության տարբերությունը չէր կարող առիթ տալ որևէ հպատակի իրավունքները զանց առնելու բոլոր այն հարցերում, որոնք վերաբերում էին քաղաքացիական և քաղաքական իրավունքներից օգտվելու, հանրային պաշտոններ վարելու, պաշտոնական գործեր կատարելու կամ տարբեր ազատ մասնագիտություններով և արհեստներով զբաղվելու հնարավորությանը: Բացի այդ, բոլոր հպատակներին, առանց կրոնական խտրության, թույլատրվում էր ազատ վկայություն տալ դատարանում **[10, էջ 128–129]**: Ա. Մարուքյանի գնահատմամբ, եվրոպական տերությունները՝ առաջին հերթին Անգլիան, Ռուսաստանին զրկելով Հայկական հարցում ունեցած մենաշնորհից և վերացնելով Սան Ստեֆանոյի պայմանագրով նախատեսված բարենորոգումների իրականացման հստակ երաշխիք հանդիսացող 25-րդ և 27-րդ հոդվածները, Բեռլինի տրակտատում չառաջարկեցին նման երաշխիքային հոդվածներ, ինչը հնարավորություն տվեց թուրքական իշխանություններին ոչինչ չձեռնարկելու 61-րդ և 62-րդ հոդվածների կատարման ուղղությամբ: Պատմաբանը նկատում է, որ 1879 թ. հունվարի 27-ին Կոստանդնուպոլսի ռուս-թուրքական «Խաղաղության մասին» վերջնական պայմանագրով վերահաստատվեցին Սան Ստեֆա-

նոյի պայմանագրի 17-րդ և 27-րդ հոդվածները, որոնք Բեռլինի տրակտատով չէին վերացվել ու փոփոխության չէին ենթարկվել **[2, էջ 61, 62]**:

Է. Կոստանդյանը և Ռ. Հովհաննիսյանն անդրադառնում են հայ պատվիրակների գործունեության անմիաբանությանը, որը եվրոպական դիվանագիտական շրջանակների առջև վկայում էր հայկական գործոնի թուլության և անկազմակերպվածության մասին: Պատմաբանները, մասնավորապես, անդրադառնում են Բեռլինի վեհաժողովին ներկայացված Մ. Խրիմյանի և Խ. Նարբեյի, ինչպես նաև Պ. Նուբար փաշայի ծրագրերին: Դրանցից առաջինը հանգում էր Օսմանյան կայսրության սահմաններում ինքնավար Հայաստանի և Կիլիկիայի ստեղծմանը եվրոպական հովանավորության ներքո՝ դրանում ներառելով բարենորոգվելիք հայկական նահանգները, Էրզրումի ու Վանի վիլայեթները, Դիարբեքիրի վիլայեթի հյուսիսային մասը, Արղնի սանջակը, Սղերդի սանջակի հյուսիսային մասը և Տրապիզոնի ու Բաթումի միջև գտնվող Ռիզե նավահանգիստը, որտեղ հայ բնակչությունը բացարձակ մեծամասնություն էր կազմում: Ըստ երկրորդի՝ նախատեսվում էր Արևմտյան Հայաստանում կատարել բարենորոգումներ՝ ուղղված արևմտահայերի անձնական և գույքային իրավունքների պաշտպանությանը: Ըստ Է. Կոստանդյանի և Ռ. Հովհաննիսյանի, թեև առաջարկվող բարենորոգումները խիստ չափավոր էին և իրականանալի, այդուհանդերձ, թողնում էին անբարենպաստ տպավորություն: Իսկ թուրք պատվիրակները բացատրություն էին պահանջում հայերից նրանց հանդիպումների մասին **[7, էջ 443–444]**: Վ. Թունյանի գնահատմամբ էլ՝ Սան Ստեֆանոյի պայմանագրի նախապատրաստման և Բեռլինի վեհաժողովի հրավիրման ընթացքում Արևմտյան Հայաստանի ազատագրման վերաբերյալ հայ գործիչների մոտեցումների ու կազմած ծրագրերի տարբերությունները պայմանավորված էին օսմանյան «ժառանգության» բաժանման հարցում մեծ տերությունների դիրքորոշմամբ ու հակասություններով **[14, էջ 102–108]**: Մեկ այլ պատմաբան՝ Ս. Պողոսյանը, վեր կանգնելով հայ ազգային շրջանակներում առկա տարաձայնություններից, իրավացիորեն նշում է. «Հայկական հարցի սկզբնավորման փուլում հայ գործիչները հույս ունեին եվրոպական մեծ պետությունների օգնությամբ ազատվել թուրքական դժնդակ լծից, ստանալ ինքնավարություն, իսկ հետագայում, ինչու չէ, հասնել անկախության: Սակայն ժամանակը ցույց տվեց, որ մեր ժողովուրդը ճիշտ չէր կողմնորոշվում միջազգային բարդ ու խճճված հարաբերություններում, քանի որ պետականության երկարատև բացակայության պայմաններում չունեինք պատրաստված դիվանագետներ: Արևմտահայության հոգևոր և քաղաքական ղեկավարությունը ստանձնած

Կ. Պոլսի Պատրիարքարանը դեմ էր հայերի զինված ելույթներին՝ հուսալով, որ «Օսմանյան հայրենիքին» ցուցաբերած հավատարմության և մեծ պետությունների աջակցության շնորհիվ հայ ժողովրդին կտրվի սպասված ինքնավարությունը, բայց չարաչար սխալվեցին» **[12, էջ 48]**: Ըստ Ս. Պողոսյանի՝ խնդրո առարկա ժամանակաշրջանում ամենամեծ բացթողումը Պ. Նուբարի ծրագիրը մերժելն էր, նրա դիվանագիտական կարողություններից ու անձնական կապերից օգտվելուց հրաժարվելը: «Ոչ ոք չի կարող վստահորեն ասել, թե ինչ զարգացումներ կունենար Հայկական հարցը, եթե Նուբարն իր ծրագրով ներկայանար Բեռլինի կոնֆերանսին, սակայն շատ մեծ է հավանականությունը, որ արևմտահայությունը կփրկվեր հետագա ջարդերից ու Մեծ եղեռնից»,– նշում է նա **[12, էջ 48]**:

Պատմաբանների գնահատմամբ, 1878 թ. ռուս-անգլիական, ապա թուրք-անգլիական գաղտնի պայմանագրերով ողջ իրադրության հսկողությունը Անգլիայի իրավասության տակ էր: Անգլիական դիվանագետները վեհաժողովի ընթացքում վարում էին թե՛ Ռուսաստանից, թե՛ Թուրքիայից զիջումներ կորզելու քաղաքականություն: Դրա արդյունքում Ռուսաստանը ստիպված էր Թուրքիային զիջել Բայազետը և Ալաշկերտի հովիտը, նաև բաց նավահանգստի վերածել Բաթումը, որոնք միասին կազմում էին 9600 կմ$^2$: Բացի այդ՝ Հայաստանի ինքնավարության խնդիրը անգլիական խարդավանքների հետևանքով մատնվեց անուշադրության **[14, էջ 91–97, 108], [7, էջ 444–445]**:

Սան Ստեֆանոյի պայմանագրի 16-րդ ու Բեռլինի տրակտատի 61-րդ հոդվածները Հայկական հարցի բովանդակության և լուծման հեռանկարների տեսանկյունից համեմատելով՝ Գ. Գալոյանը և Վ. Թունյանը նկատում են, որ, ըստ 1856 թ. Փարիզի պայմանագրի 9-րդ հոդվածի, եվրոպական տերությունները (այդ թվում և Ռուսաստանը) իրավունք չունեին միասին կամ առանձին-առանձին խառնվելու թուրքական կայսրությունում սուլթանի ներքին գործերին և իր հպատակների հետ ունեցած նրա հարաբերություններին: Մինչդեռ Սան Ստեֆանոյի պայմանագրով և Բեռլինի տրակտատով այդպիսի իրավունք էր վերապահվում բոլոր տերություններին միասին վերցրած **[3, էջ 297], [14, էջ 108]**: Այնուհետև, եթե Սան Ստեֆանոյի պայմանագրում խոսքը վերաբերում էր Ռուսաստանի կողմից «գրավված Հայաստանի» վայրերին, ապա Բեռլինի տրակտատում այն փոխարինված էր «հայաբնակ մարզեր» արտահայտությամբ, ինչը «նշանակում է, որ Արևմտյան Հայաստանն այլևս չէր դիտվում որպես առանձին միավոր և նրա ինքնավարության մասին խոսք լինել չէր կարող»: Գ. Գալոյանի գնահատմամբ, դա

միայն արևմտահայերի պարտությունը չէր, այլ՝ նախևառաջ Ռուսաստանի-նը, և վկայում էր նրա դիվանագիտության անհեռատեսությունը: 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմում «հաղթած Ռուսաստանը հայտնվեց պարտվողի վիճակում, իսկ պարտված Թուրքիան՝ հաղթողի»,- եզրակացնում է պատմաբանը **[3, էջ 297–298]**:

Անդրադառնալով այն հարցին, թե ինչո՞ւ Անգլիան համաձայնեց Բուլղարիայի ինքնավարությանը, իսկ հայերին մերժեց դրանում, ապա Գ. Գալոյանը նշում է՝ Բուլղարիան ավելի շուտ կծառայեր որպես Թուրքիայի պատվար ընդդեմ Ռուսաստանի, քան որպես Ռուսաստանի պատվար ընդդեմ Թուրքիայի, իսկ ինքնավար Հայաստանը երբեք չէր լինի Թուրքիայի պատվար ընդդեմ Ռուսաստանի **[3, էջ 298]**: Պատմաբանի կարծիքով, եթե 1877–1878 թթ. ռուս–թուրքական պատերազմի հաղթական ավարտից հետո ռուսական զորքերը կարողանային առժամանակ մնալ գրավված տարածքներում՝ մինչև Արևմտյան Հայաստանում Բեռլինի տրակտատի 61–րդ հոդվածով նախատեսվող բարենորոգումներ անցկացնելը, ապա արևմտահայերի պատմական ճակատագիրը թերևս այլ ընթացք կունենար: Սակայն, հասկանալով հանդերձ, թե ռուսական զորքերի դուրսբերումը վերջիններիս գրաված տարածքներից ինչ աղետալի հետևանքներ կարող էր ունենալ արևմտահայերի համար, Ռուսաստանին մրցակից մեծ տերությունները չէին կարող հանդուրժել նրանց ներկայությունն Արևմտյան Հայաստանում: Ըստ էության, Անգլիային հաջողվեց «նսեմացնել» Ռուսաստանի «սլավոնական հաղթանակը» և «ազատարարի առաքելությունը» **[13, էջ 3]**:

Գ. Գալոյանի եզրահանգմամբ, հայերին տրված խոստումների կատարմանը խոչընդոտեցին մի կողմից եվրոպական տերությունների մեծապետական շահերը Փոքր Ասիայում, մյուս կողմից՝ ռուսական կառավարության անվճռականությունը իր զորքերն Արևմտյան Հայաստանում պահելու հարցում. «Անգլիայի խարդավանքները և Ասիական Թուրքիան իրար մեջ բաժանել ձգտող եվրոպական մյուս տերությունների շահամոլ քաղաքականությունը Բեռլինի վեհաժողովում Հայկական հարցի լուծումը վիժեցնելու գլխավոր պատճառն էր»,– նկատում է պատմաբանը և իրատեսորեն հավելում. «Ինչ վերաբերում է Ռուսաստանին, ապա նրա ջանքերը՝ գրավելու Արևմտյան Հայաստանը, օբյեկտիվորեն ծառայում էին հայերի շահերին: Սակայն ռուսական իշխանությունների նպատակադրումները և հայ ազատագրական շարժման ձգտումները հակոտնյա էին: Ռուսաստանը ձգտում էր նվաճել Արևմտյան Հայաստանը՝ Ռուսաստանի համար, իսկ արևմտահայերն ակնկալում էին Ռուսաստանի օգնությամբ ձեռք բերել ինքնավարություն: Այդ պատճառով էլ Ռուսաստանի և արևմ-

տահայ ազատագրական շարժման միջև ամուր ռազմաքաղաքական դաշինք ձեռք չբերվեց» **[3, էջ 307]**: Գ. Գալոյանն իրավացիորեն շեշտում է, որ XIX դարի 70–ական թվականներին արևմտահայ ազգային–ազատագրական շարժումը լրջորեն նախապատրաստված չէր՝ Հայկական հարցը միջազգային ատյան հանելու համար: Բացի այդ՝ բացակայում էին համահայկական միասնության և զինված ազատագրական պայքարի գործոնները: Այդուհանդերձ, Գ. Գալոյանն արձանագրում է.

1. 1878 թվականին միջազգային դիվանագիտությունը չկարողացավ խուսափել Արևմտյան Հայաստանը՝ որպես միջազգային իրավունքի սուբյեկտ ճանաչելուց,

2. Հայկական հարցի արծարծումը Բեռլինի վեհաժողովում պայմանավորված էր Առաջավոր Ասիայում եվրոպական տերությունների և Ռուսաստանի շահերի բախմամբ,

3. Բեռլինի տրակտատը ծայր աստիճան սրեց հակահայկական տրամադրություններն Օսմանյան կայսրությունում և հանդիսացավ այն նշաձողը, որից հետո թուրքական իշխանությունները ջանադրաբար մշակեցին և հետևողականորեն իրագործեցին արևմտահայերի ցեղասպանությունը **[3, էջ 311–312]**:

Արդիական հնչեղություն ունի վերոնշյալ իրողությունների վերաբերյալ պատմաբանի եզրափակիչ միտքը. «Այն ժողովուրդը, որը չունի ազդու ռազմական ուժ և խելոք դիվանագետներ, նա հաղթանակներ չի կարող նվաճել: Պատմական արդարությունը, որպես այդպիսին, տեղ չունի դիվանագիտական կոմբինացիաներում» **[3, էջ 312]**:

**Եզրակացություն**

Այսպիսով՝ Հայաստանյան պատմագիտական աշխատություններում հետահայաց և օբյեկտիվ գնահատական է տրված Արևմտյան Հայաստանի հարցի միջազգայնացման իրողությանը: Շեշտված է 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմի ընթացքում և պատերազմի արդյունքների ամփոփման ժամանակահատվածում Ռուսաստանի պետական ու արևմտահայերի ազգային շահերի համընկնումը: Միևնույն ժամանակ ընդգծված է հայկական գործոնի զրոյական դերակատարությունը Հայկական հարցի դիվանագիտական քննարկումներում և Սան Ստեֆանոյի պայմանագրում ու Բեռլինի տրակտատում Արևմտյան Հայաստանին և արևմտահայությանը վերաբերող հոդվածների ձևակերպման գործում: Պատմաբանների եզրահանգումներում Հայկական հարցը միջազգային ատյաններում բարձրացնող հայ գործիչների դիվանագիտական ունակությունների և հմտությունների բացա-

կայությունը, մեծ տերությունների քաղաքականության թալանչիական էությունը, սուլթանական կառավարության հակահայկական քաղաքականությունը գնահատված են որպես Հայկական հարցի արդարացի լուծումը ձախողող հիմնական պատճառներ:

## Օգտագործված գրականության ցանկ


1. Ավետիս Փափազյան, Հայերի ցեղասպանությունը թուրք քաղաքական գործիչների հուշագրություններում, Երևան, «Զանգակ-97», 2001, 160 էջ:
2. Արմեն Ց. Մարուքյան, Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման հիմնախնդիրներն ու պատմաիրավական հիմնավորումները: Խմբ. Ա. Մելքոնյան, Վ. Վարդանյան: Մեսրոպ արք. Աշճեան մատենաշար 102, Երևան, Պատմության ինստիտուտ, 2014, 332 էջ:
3. Գալուստ Գալոյան, Հայաստանը մեծ տերությունների աշխարհակալական առճակատումներում (XVI դարից 1917 թ.), խմբ.՝ Դանիելյան Է., Երևան: ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, 2004, 822 էջ:
4. Գալուստ Գալոյան, Արևմտյան Հայաստանի ինքնավարության հարցը Բեռլինի 1878 թվականի վեհաժողովին նախորդող շրջանում, «Լրաբեր հասարակական գիտությունների», ՀՀ ԳԱԱ, 1996, № 3, էջ 3–18:
5. Գալուստ Գալոյան, Արևմտյան Հայաստանի ինքնավարության հարցը 1878 թ. Բեռլինի վեհաժողովում, «Լրաբեր հասարակական գիտությունների», ՀՀ ԳԱԱ, 1997, № 1, էջ 7–21:
6. Էդուարդ Գ. Դանիելյան, Թուրքիայի դերակատարությունը Հայկական հարցի միջազգայնացման գործընթացում (1876–1878 թթ.), «Բանբեր Երևանի համալսարանի», 2007, № 2, էջ 77–84:
7. Էմմա Կոստանդյան, Ռաֆիկ Հովհաննիսյան, Հայկական հարցի միջազգայնացումը: «Հայոց պատմություն», հ. III [Նոր ժամանակաշրջան (XVII դարի երկրորդ կես–1918 թ.)], գիրք I (XVII դարի երկրորդ կես – XIX դարի վերջ): Խմբ. Ա. Ա. Մելքոնյան և ուրիշ., Երևան, «Զանգակ-97», 2010, էջ 429-447:
8. Լէօ, Հայոց Հարցի Վաւերագրերը, Թիֆլիս, Տպարան Ն. Աղանեանցի, Պոլիս, 7, 1915, 404 էջ:
9. Լիլիթ Հովհաննիսյան, Հայկական հարցի ուսումնասիրության արդյունքները Հայաստանյան պատմագիտության մեջ (1991-2021 թթ.), «-

Հիմնարար և կիրառական գիտական հետազոտություններ. արդիական խնդիրներ և ձեռքբերումներ», միջազգային գիտաժողովի (31 մայիսի, 2022) գիտական հոդվածների ժողովածու, գլխ. խմբ. Ն. Հակոբյան, Երևան: ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոն, էջ 469-478:
10. Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828–1923): Խմբ. պրոֆ. Ջ. Ս. Կիրակոսյան, Երևան, «Հայաստան», 1972, 809 էջ:
11. Հայ ժողովրդի պատմություն, ՀՍՍՀ ԳԱ, Պատմ. ին-տ: Խմբ. խորհ. Ծ. Պ. Աղայան, Ա. Գ. Հովհաննիսյան, Մ. Գ. Ներսիսյան, Գ. Ա. Գալոյան և ուրիշ., հ. VI, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1981, 1050 էջ, 4 քարտեզ:
12. Սամվել Ա. Պողոսյան, Հայաստանի ինքնավարության ծրագրերը Սան Ստեֆանոյի և Բեռլինի կոնֆերանսների նախօրեին, «Էջմիածին», Ապրիլ, 2007, էջ 36–48:
13. Валерий Г. Тунян, Россия и Армения 1878-1897. Ереван, «Амарас», 1997, 120 с.
14. Валерий Г. Тунян, Россия и Армянский вопрос / Отв. ред. С. С. Степанян. Ереван, 1998, с. 76, 102–108.
15. Сборник договоров России с другими государствами (1856–1917). Сост. И. В. Козьменко. Под ред. Е. А. Адамова. М., «Госполитиздат», 1952, 463 с.
16. Esat Uras The Armenians in History and the Armenian Question. English translation of the revised and expanded second edition. Ankara, «Documentary publications», 1988, 1048 p.
17. Salahi R. Sonyel The Ottoman Armenians. Victims of Great Power Diplomacy. London, K. Rustem and Brother, 1987, 426 p.

# ՀՀ ԱՐՏԱՔԻՆ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏՔԻ ՎՐԱ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՈՒԹՅԱՆ ՑՈՒՑԱՆԻՇԻ ԱՃԻ ԵՎ ԱՐՏԱՐԺՈՒԹԱՅԻՆ ՏԱՏԱՆՈՒՄՆԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄՈՏԵՑՈՒՄԸ

**ԱՇՈՏ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ**
Տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր,
Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի
ֆինանսական ֆակուլտետի ֆինանսների ամբիոնի դասախոս
matashan@mail.ru

**ԱՆԻ ԳՐԻԳՈՐՅԱՆ**
Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի
ֆինանսական ֆակուլտետի ֆինանսների ամբիոնի ասպիրանտ,
Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի
ֆինանսական ֆակուլտետի ֆինանսների ամբիոնի ասիստենտ
anigrigoryan176@gmail.com

**Համառոտագիր**

ՀՀ արտաքին պետական պարտքի նվազեցման և առհասարակ պարտքային որակյալ քաղաքականության իրականացման համատեքստում առանցքային նշանակություն ունի Կառավարության կարողությունը պարտքի սպասարկման հատկացումների մասով, ինչպես նաև՝ արտարժույթով ներգրավված վարկերը, որոնք պարունակում են փոխարժեքային տատանումների ռիսկ, քանի որ որքան շատ դրամական միջոցներ հատկացվեն պարտքի սպասարկմանը, այնքան ավելի սակավ միջոցներ կգեներացվեն կապիտալաստեղծ ուղղություններ: Հատկանշական է նաև այն հանգամանքը, որ արտարժույթային անբարենպաստ տատանումների պարագայում արտաքին պարտքի սպասարկմանն ուղղվող ծախսերը պարտքի սպասարկմանն ուղղվելիք ֆինանսական ռեսուրսների պահանջն է:

Վերջին տարիներին արտաքին պարտքի կառավարելիության առումով որոշակի ռիսկեր են առաջացել: Տարեսկզբին արձանագրված պարտք-ՀՆԱ հարաբերակցության ցուցանիշը էապես ապահովվել է ազգային արժույթի արժևորմամբ:

2022 թվականին ՀՀ պետական բյուջեի պակասուրդը մեծապես ֆինանսավորվել է ներքին փոխառու միջոցների հաշվին՝ 79.2%-ով կամ 252.0 մլրդ դրամով, մինչդեռ արտաքին աղբյուրների հաշվին ֆինանսավորումը կազմել է 20.8% կամ 66.2 մլրդ դրամ:

Թեև արտաքին պետական պարտքի սպասարկումը «թանկացել է» նախորդ տարվա համեմատ, այնուամենայնիվ, դրամի արժևորումը էականորեն կոմպենսացրեց պարտքի սպասարկման ռիսկը:

ՀՀ պետական բյուջեի նախագծով 2023 թվականի համար դեֆիցիտը պլանավորվել է ՀՆԱ-ի 3. 1 տոկոսով: Կանխատեսվող 7 տոկոս տնտեսական աճի պարագայում լավատեսական մոտեցում է Կառավարության նպատակադրումը  պետական բյուջեի պակասուրդի սահմանումը ՀՆԱ-ի 2. 5-3. 0 % սահմաններում, ինչը հնարավորություն կտա նվազեցնելու պարտք-ՀՆԱ հարաբերակցության ցուցանիշը:

2023 թվականի  ՀՀ պետական պարտքի կառուցվածքում արտաքին պետական պարտքը տեսակարար կշիռը կախատեսվում է 58. 6%: 2022 թվականի տարեվերջին այս ցուցանիշը կազմել է 63. 4 %: Համեմատության համար նշենք, որ 2018 թվականին ցուցանիշը կազմել է 78%:

Վերջին տարիների ցուցանիշները փաստում են, որ ՀՀ պետական պարտքի կառուցվածքում արտաքին պետական պարտքի տեսակարար կշռիը զիջել է իր դիրքերը՝ ի հաշիվ ներքին պարտքի ծավալների աճի: Այս միտումը ՀՀ կառավարության պետական պարտքի կառավարման ռազմավարության մաս կազմելուց զատ, բարենպաստ ազդեցություն է ունենում նաև փոխարժեքային ռիսկերի նվազեցման տեսանկյունից:

Հոդվածում հետազոտական նպատակ է հանդիսացել դիտարկվող ժամանակահատվածում ՀՀ արտաքին պարտքի դինամիկայի ուսումնասիրությունը և ՀՀ տնտեսական ակտիվության և արտաքին պետական պարտքի, արտարժութային փոխարժեքի (դրամ / 1 ԱՄՆ դոլարի միջին փոխարժեքը) և ՀՀ արտաքին պետական պարտքի միջև փոխազդեցության գնահատումը՝ ռեգրեսիոն վերլուծության միջոցով:

Հոդվածում բազմակի գծային ռեգրեսիոն վերլուծության, ինչպես նաև «Shapiro-Wilk» թեստի կիրառությամբ գնահատված ՀՀ տնտեսական ակտիվության և արտաքին պետական պարտքի, ինչպես նաև արտարժութային փոխարժեքի (դրամ / 1 ԱՄՆ դոլարի միջին փոխարժեք) և ՀՀ արտաքին պետական պարտքի միջև փոխազդեցության արդյունքում հիմնավորվել է տնտեսական ակտիվության ցուցանիշի աճի և արտարժութային տատանումների բարենպաստ ազդեցությունը՝ արտաքին պետական պարտքի դինամիկայի և ՀՀ պարտք-ՀՆԱ հարաբերակցության նվազման համատեքստում:

**Բանալի բառեր և բառակապակցություններ**. պետական պարտք, արտաքին պարտք, տնտեսական ակտիվություն, արտարժութային փոփոխություն, գծային ռեգրեսիա, «Shapiro-Wilk» թեստ:

# ПОДХОДЫ К ОЦЕНКЕ ВЛИЯНИЯ ПОКАЗАТЕЛЯХ РОСТА ЭКОНОМИЧЕСКОЙ АКТИВНОСТИ И ВАЛЮТНЫХ КОЛЕБАНИЙ НА ВНЕШНИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ ДОЛГ РА

**АШОТ МАТЕВОСЯН**
Доктор экономических наук, профессор
Преподаватель кафедры финансов Армянского государственного экономического университета
matashan@mail.ru

**АНИ ГРИГОРЯН**
Аспирант кафедры финансов Государственный экономический университет Армении
Преподаватель кафедры финансов Государственный экономический университет Армении
anigrigoryan176@gmail.com

**Аннотация**

В контексте сокращения внешнего государственного долга РА и проведения качественной долговой политики в целом ключевое значение имеет способность правительства в плане распределения услуг по обслуживанию долга, а также кредиты, привлеченные в иностранной валюте, которые содержат риск курсовых колебаний, поскольку чем больше средств направляется на обслуживание долга, тем меньше средств будет вложено в капиталогенерирующие направления. Обращает на себя внимание и тот факт, что при неблагоприятных колебаниях валютных курсов расходы на обслуживание внешнего долга представляют собой потребность в финансовых ресурсах, направляемых на обслуживание долга.

В последние годы возникли определенные риски с точки зрения управляемости внешним долгом. Показатель отношения долга к ВВП, зафиксированный в начале года, получил существенную поддержку за счет укрепления национальной валюты.

В 2022 году дефицит государственного бюджета РА в основном финансировался за счет внутренних заемных средств на 79,2% или 252,0 млрд драмов, а финансирование за счет внешних источников составило 20,8% или 66,2 млрд драмов.

Хотя обслуживание внешнего государственного долга стало "дороже" по сравнению с прошлым годом, укрепление драма существенно компенсировало риск обслуживания долга.

Согласно проекту государственного бюджета РА, дефицит на 2023 год запланирован на уровне 3,1 процента ВВП. В случае прогнозируемого 7-процентного экономического роста оптимистичным подходом для Правительства

является установление дефицита государственного бюджета в диапазоне 2,5-3,0% ВВП, что позволит снизить соотношение Долг-ВВП.

В структуре государственного долга РА в 2023 году ожидается, что доля внешнего государственного долга составит 58,6%. На конец 2022 года этот показатель составлял 63,4%. Для сравнения отметим, что в 2018 году показатель составлял 78%.

Показатели последних лет свидетельствуют о том, что доля внешнего государственного долга в структуре государственного долга РА потеряла свои позиции за счет увеличения объема внутреннего долга. Помимо того, что это направление является частью стратегии правительства РА по управлению государственным долгом, это направление также имеет положительный эффект с точки зрения снижения валютных рисков.

Исследовательской целью статьи было изучение динамики внешнего долга Республики Армения за рассматриваемый период и оценка взаимосвязи между экономической деятельностью Республики Армения и внешним государственным долгом, валютным курсом (средний курс драм/1 доллар США) и внешнего государственного долга Республики Армения посредством регрессионного анализа.

В статье в результате множественного линейного регрессионного анализа, а также теста Шапиро-Уилка установлена взаимосвязь между экономической активностью и внешним государственным долгом РА, а также обменным курсом (средний обменный курс драм/долл. США) и внешним государственным долгом РА обосновано благоприятное влияние колебаний иностранной валюты на динамику внешнего государственного долга и снижение отношения долга РА к ВВП.

**Ключевые слова и словосочетания**: государственный долг, внешний долг, экономическая активность, иностранная валюта, линейная регрессия, критерий Шапиро-Уилка.

# APPROACHES TO ASSESSING THE IMPACT OF ECONOMIC ACTIVITY GROWTH AND CURRENCY FLUCTUATIONS ON THE EXTERNAL DEBT OF THE REPUBLIC OF ARMENIA

**ASHOT MATEVOSYAN**
Armenian State University of Economics
Department of Finances
Lecturer, Doctor of Economics, Professor
matashan@mail.ru

**ANI GRIGORYAN**
Armenian State University of Economics
Department of Finances
Lecturer, PhD Student
anigrigoryan176@gmail.com

**Abstract**

In the context of reducing the external public debt of the RA and implementing a quality debt policy in general, the ability of the Government in terms of debt service allocations is of key importance, as well as the loans involved in foreign currency, which contain the risk of exchange rate fluctuations, because the more funds are allocated to debt service, the fewer funds will be generated. Capital-generating directions. Also noteworthy is the fact that in case of unfavorable foreign currency fluctuations, the expenses for servicing the external debt are the demand for financial resources to be used for servicing the debt.

In recent years, certain risks have arisen regarding external debt manageability. The index of the debt-GDP ratio recorded at the beginning of the year was substantially supported by the appreciation of the national currency.

In 2022, the deficit of the RA state budget was financed mainly at the expense of domestic borrowed funds, by 79.2% or 252.0 billion drams, while the financing at the expense of external sources was 20.8% or 66.2 billion drams.

Although the external state debt service has become "more expensive" compared to the previous year, the dram appreciation significantly compensated for the debt service risk.

According to the draft of the RA state budget, the deficit for 2023 is planned at 3.1 per cent of the GDP. In the case of the predicted 7% economic growth, it is an optimistic approach for the Government to set the state budget deficit in the range of 2.5-3.0% of GDP, reducing the Debt-GDP ratio.

In the structure of the RA state debt in 2023, the share of foreign state debt is expected to be 58.6%. At the end of 2022, this indicator was 63.4%. For comparison, let us note that in 2018, the indicator was 78%.

The indicators of the last years prove that the share of the foreign public debt in the structure of the RA state debt has lost its position at the expense of the increase in

the volume of the domestic debt. Apart from being a part of the RA government's public debt management strategy, this trend also has a beneficial effect from the point of view of reducing exchange rate risks.

The research objective of the article was the study dynamics of the foreign debt of the Republic of Armenia during the considered period and the evaluation of the relationship between the economic activity of the Republic of Armenia and the foreign public debt, the foreign exchange rate (the average exchange rate of AMD / 1 US dollar) and the foreign public debt of the Republic of Armenia through regression analysis.

In the article, as a result of multiple linear regression analysis, as well as the Shapiro-Wilk test, the relationship between economic activity and foreign state debt of the RA, as well as the exchange rate (average exchange rate of AMD / USD 1) and foreign state debt of the RA, was justified. And the favorable effect of foreign currency fluctuations in the context of the dynamics of external public debt and the decrease in the RA debt-to-GDP ratio.

**Keywords and phrases**: public debt, foreign debt, economic activity, foreign exchange, linear regression, Shapiro-Wilk test.

**Ներածություն**

2022 թվականի տարեվերջին ՀՀ պետական պարտքը՝ դրամային արտահայտությամբ կազմել է 4,479.5 մլրդ դրամ՝ նախորդ տարվա համեմատ աճը կազմելով 4,9 տոկոս: Տարեվերջին ՀՀ Կառավարության պարտքը՝ դրամային արտահայտությամբ կազմել է 4,252.5 մլրդ դրամ, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ աճելով 4,2 տոկոսով (տե՛ս թիվ 1 գծապատկերում):

2022 թ-ին որոշակիորեն աճել է նաև ՀՀ կենտրոնական բանկի արտաքին պարտքի ցուցանիշը՝ տարեվերջին կազմելով 227.0 մլրդ դրամ (տե՛ս թիվ 2 գծապատկերում):




**Գծապատկեր 1. ՀՀ կառավարության պարտքը 2013-2022 թթ. , մլրդ դրամ**ն [1]:




**Գծապատկեր 2. ՀՀ կենտրոնական բանկի արտաքին պարտքը 2013-2022 թթ., մլրդ դրամ** [2]:

Դիտարկվող ժամանակաշրջանում աճման միտում է դրսևորվել թե՛ ներքին, թե՛ արտաքին պարտքի ցուցանիշներում: Մասնավորապես՝ 2021 թվականի տարեվերջին ՀՀ ներքին պետական պարտքը դրամային արտահայտությամբ կազմել է 1,237.4 մլրդ դրամ՝ 2022 թվականին՝ 1,267.8 մլրդ դրամ, արտաքին պետական պարտքը՝ համապատասխանաբար կազմել է 2021 թ-ին՝ 3,192.2 մլրդ դրամ, 2022 թ-ին՝ 3,211.7 մլրդ դրամ:

Ընդհանուր առմամբ, թեև ՀՀ պետական պարտքն աճել է, այնուամենայնիվ, ՀՀ կառավարությանը հաջողվել է ֆիսկալ կոնսոլիդացման արդյունքում 2022 թվականի տարեվերջին պարտք – ՀՆԱ հարաբերակցությունը նվազեցնել 47 տոկոսի, մինչդեռ 2021 թվականի կանխատեսմամբ ծրագրային ցուցանիշը կանխատեսվում էր նվազել 60 տոկոսից ցածր մակարդակի:

2022 թվականի տարեվերջին արձանագրված 47 տոկոս ցուցանիշը կարող ենք համարել ՀՀ կառավարության վարած ճկուն քաղաքականության, պարտքի կառավարման որակի բարձրացման, բնականաբար նաև, արտաքին գործոնների ազդեցությունների արդյունք, որը ինչ խոսք կարևորագույն ազդակ է ֆինանսական հուսալիության տեսանկյունից:

2023 թվականին, պայմանավորված երկնիշ տնտեսական աճով, ՀՀ միջին եկամուտը բարձրացել է, ինչի հետևանքով արտաքին փոխառու մի-

ջոցների ձեռքբերման հնարավորությունը արտոնյալ պայմաններով կրճատվել է, այսինքն՝ ՀՀ-ն անհրաժեշտության դեպքում արտաքին վարկեր կներգրավի արդեն իսկ շուկայական պայմաններով:

ՀՀ վիճակագրական կոմիտեի պաշտոնական տվյալներում 2022 թվականին ՀՀ պետական պարտքի կառուցվածքը էական փոփոխության է ենթարկվել: Համեմատության համար կարող ենք նշել, որ եթե 2021 թվականի ՀՀ պետական պարտքի կառուցվածքում արտաքին պարտքի տեսակարար կշիռը 70. 6 տոկոս էր կազմում, ապա 2022 թվականին արտաքին պարտքի տեսակարար կշիռը նվազել է՝ կազմելով 63. 4 տոկոս:

Այս համատեքստում, կարևորում ենք նշել, որ դիտարկող ժամանակահատվածում պետական պարտքի կառուցվածքում ավելացել է ներքին պարտքի տեսակարար կշիռը՝ 2021 թվականին կազմելով 29. 4 տոկոս, իսկ 2022 թվականին՝ կազմելով 36. 6 տոկոս:

**Հետազոտության մեթոդաբանություն**

Հետազոտության ընթացքում ընտրված փոփոխականների և ՀՀ արտաքին պարտքի փոխազդեցության գնահատման համար մեթոդաբանական հիմք են հանդիսացել բազմակի գծային ռեգրեսիոն վերլուծության մեթոդը, ինչպես նաև «Shapiro-Wilk» թեստը, որի կիրառությամբ գնահատել ենք ՀՀ տնտեսական ակտիվության և ՀՀ արտաքին պետական պարտքի, արտարժութային փոխարժեքի (դրամ / 1 ԱՄՆ դոլարի միջին փոխարժեքը) և ՀՀ արտաքին պետական պարտքի միջև փոխազգեցությունը՝ հիմնավորելու այն վարկածը, որ դիտարկվող ժամանակահատվածում տնտեսական ակտիվության ցուցանիշի աճը և արտարժութային տատանումները բարենպաստ են անդրադարձել արտաքին պետական պարտքի դինամիկայի և ՀՀ պարտք-ՀՆԱ հարաբերակցության նվազման վրա:

**Տեսամեթոդաբանական հիմքեր**

Գնահատման արդյուքները ստուգվել են «Shapiro-Wilk Test»-ի միջոցով, ըստ որի՝ ընտրված փոփոխականների միջև հարաբերակցությունը հետևում է նորմալ բաշխմանը:

Նորմալության ենթադրությունը կարող են ստուգվել բազմաթիվ վիճակագրական ընթացակարգերի, մասնավորապես՝ պարամետրային թեստերի միջոցով, քանի որ դրանց իսկությունը կախված է դրանից [3]:

Շատ վիճակագրական [4, էջ 822] ընթացակարգեր, ներառյալ հարաբերակցությունը, ռեգրեսիան, t-թեստերը և շեղումների վերլուծությունը, հատկապես պարամետրային թեստերը, հիմնված են այն ենթադրության վրա, որ տվյալները հետևում են նորմալ բաշխմանը [5, էջ 11] կամ գաուսյան

բաշխմանը (Յոհան Կարլ Գաուսի անվ. 1777–1855), այսինքն՝ ենթադրվում է, որ այն պոպուլյացիաները, որոնցից վերցված են նմուշները, սովորաբար բաշխված են [6, էջ 179-200]: Նորմալության ենթադրությունը հատկապես կարևոր է փոփոխականների համար հղումային միջակայքեր կառուցելիս [7, էջ 93]: Նորմալությանը և այլ ենթադրություններին պետք է լուրջ վերաբերվել {8, էջ 298], քանի որ երբ այս ենթադրությունները չեն համապատասխանում իրականությանը, անհնար է իրականության վերաբերյալ ճշգրիտ և հավաստի եզրակացություններ անել [9, էջ 171-176]:

Նորմալության թեստերը հավելյալ միջոցներ են նորմալության գրաֆիկական գնահատման իրականացման համար: Որպես նորմալության գնահատման հիմնական թեստեր են համարվում «Կոլմոգորով-Սմիրնով (K-S)» թեստը, «Լիլիֆորսի շտկված K-S» թեստը, «Շապիրո-Վիլկի» թեստը, «Անդերսոն-Դարլինգի» թեստը, «Կրամեր-ֆոն Միզեսի» թեստը և այլն [10]: Դրանց թվում «K-S» [11] և և «Shapiro-Wilk» թեստերը հաճախակի կիրառելի թեստեր են համարվում [12]:

Որոշ հետազոտողներ խորհուրդ են տալիս «Shapiro-Wilk» թեստը՝ որպես տվյալների նորմալությունը ստուգելու լավագույն ընտրություն [13]: Այդ իսկ պատճառով հետազոտության ընթացքում կատարված գնահատումների արդյունքները ստուգվել են «Shapiro-Wilk» թեստի միջոցով, որը հիմնված է տվյալների և համապատասխան նորմալ միավորների միջև հարաբերակցության վրա և ապահովում է ավելի լավ ուժեղ հարաբերակցություն՝ քան «K-S» թեստը [14]:

**Վերլուծություն և ստացված արդյունքներ**

*Էմպիրիկ արդյունքներ՝ ՀՀ տնտեսական ակտիվության և ՀՀ արտաքին պետական պարտքի վրա հիմնված:*

Նախկինում կատարված կանխատեսման արդյունքները ցույց են տալիս, որ պոտենցիալ ՀՆԱ-ի աճի տեմպի շարունակականությունն ապահովված է 5,769 տնտեսական ակտիվության ցուցանիշով: Մասնավորապես, դիտարկվող ժամանակահատվածի համար այս ցուցանիշի ապահովման դեպքում պոտենցիալ ՀՆԱ-ի աճի տեմպերը կլինեն այնպես, ինչպես ցույց է տրված գծապակերում.




**Գծապատկեր 3. Պոտենցիալ ՀՆԱ-ի աճի կանխատեսված տեմպերը՝ 2010-2020 թթ. [15, էջ 103-107]:**

Հայաստանում տնտեսական ակտիվության ցուցանիշը սկսել են հաշվարկել 2011 թվականից սկսած՝ կազմելով 3.2 %, 2012 թ.՝ 2.0%, 2013 թ.՝ 4.4%: Ընտրված փոփոխականների մասով մեր կողմից ուսումնասիրման ժամանակահատված է համարվել վերջին 10 տարվա ժամանակագրական դինամիկան:

**Աղյուսակ 1. 2014 - 2022 թթ. ՀՀ տնտեսական ակտիվության, արտաքին պետական պարտքի և դրամ / 1 ԱՄՆ դոլարի միջին փոխարժեքի ցուցանիշները [16]:**

| Թվական | Տնտեսական ակտիվության ցուցանիշը, % նախորդ տարվա համապատասխան ժամանակահատվածի նկատմամբ (%) | ՀՀ արտաքին պետական պարտք, մլն. ԱՄՆ դոլար նախորդ տարվա համապատասխան ժամանակահատվածի նկատմամբ (%) | Արտարժութային փոխարժեքներ, դրամ / 1 ԱՄՆ դոլար միջին փոխարժեքը նախորդ տարվա համապատասխան ժամանակահատվածի նկատմամբ (%) |
|---|---|---|---|
| 2022 | 114.2 | 97 | 86.48 |
| 2021 | 105.8 | 109.7 | 103.02 |
| 2020 | 92.5 | 104.7 | 101.78 |
| 2019 | 107.8 | 104.5 | 99.47 |

| | | | |
|---|---|---|---|
| 2018 | 105.6 | 100.4 | 100.06 |
| 2017 | 107.7 | 114.8 | 100.46 |
| 2016 | 100.7 | 111.1 | 100.54 |
| 2015 | 103 | 114.1 | 114.91 |
| 2014 | 104.1 | 97.2 | 101.54 |

«Shapiro–Wilk» թեստերը ցույց չեն տվել նորմալությունից էական շեղում, քանի որ W(18) = .969, p = .782:

«Shapiro–Wilk» թեստի արդյունքներով, քանի որ ներկա արժեքը մեծ է 0. 05-ից p = 0,7817 (p > 0,05), փոփոխականն ունի նորմալ բաշխում (տե՛ս թիվ 1 գրաֆիկում):

Այսինքն՝ տնտեսական ակտիվության փոփոխության կլաստերներն ազդում են արտաքին պետական պարտքի հարաբերակցության վրա:

Քանի որ n≤50, ուստի օգտագործել ենք «Shapiro-Wilk» թեստը՝ p-արժեքը հաշվարկելու համար: P-արժեքը > α, մենք ընդունում ենք $H_0$: Ենթադրվում է, որ տվյալները սովորաբար բաշխված են: Այլ կերպ ասած, տվյալների ընտրանքի և նորմալ բաշխման միջև տարբերությունը բավականաչափ մեծ չէ վիճակագրորեն նշանակալի լինելու համար: Ոչ էական արդյունքը չի կարող ապացուցել, որ $H_0$-ը ճիշտ է, քանի որ զրոյական ենթադրությունը չի կարող մերժվել:

Թեստի արդյունքով՝ p-արժեքը հավասար է 0,7817, (P(x≤-0,7781) = 0,2183): Դա նշանակում է, որ մեր կողմից սխալի հավանականությունը՝ $H_0$-ը մերժելը ճիշտ է, քանի որ ներկա արժեքը չափազանց մեծ է՝ 0,7817 (78,17%):

Թեստի վիճակագրությունը՝ W-ը հավասար է 0,9692-ի, որը ըստ կիրառված «Shapiro-Wilk» թեստի պարամետրերի գտնվում է 95% տարածաշրջանում ընդունելի միջակայքում՝ [0,8965 : 1]

Դիտարկված էֆեկտի չափը KS - D շատ փոքր է՝ 0,09225: Սա ցույց է տալիս, որ նմուշի բաշխման և նորմալ բաշխման տարբերության մեծությունը շատ փոքր է:

Քանի որ զրոյական ենթադրությունը չի կարող մերժվել, հետևաբար կարող ենք անտեսել էֆեկտի չափը:




**Գրաֆիկ 1. ՀՀ տնտեսական ակտիվության և ՀՀ արտաքին պետական պարտքի վրա հիմնված նորմալ բաշխումը՝ «Shapiro–Wilk test»-ի արդյունքում:**

Վիզուալացման նպատակով ստորև ներկայացնում ենք «Shapiro–Wilk test»-ի կիրառությամբ ՀՀ տնտեսական ակտիվության և ՀՀ արտաքին պետական պարտքի վրա հիմնված նորմալ բաշխման արդյունքները:

**Աղյուսակ 2. «Shapiro-Wilk» թեստի արդյունքները[4]:**

| **Parameter** | **Value** |
|---|---|
| Parameter | Value |
| P-value | 0.7817 |
| W | 0.9692 |
| Sample size (n) | 18 |
| Average ($\bar{x}$) | 105.2722 |
| Median | 105.15 |
| Sample Standard Deviation (S) | 6.2472 |
| Sum of Squares | 663.4761 |
| B | 25.3577 |
| Skewness | -0.2228 |
| Skewness Shape |  Potentially Symmetrical (pval=0.678) |
| Excess kurtosis | -0.3739 |

***Էմպիրիկ արդյունքներ՝ արփարժութային փոխարժեքի (դրամ / 1 ԱՄՆ դոլարի միջին փոխարժեք) և ՀՀ արտաքին պետական պարտքի վրա հիմնված:***

«Shapiro–Wilk test»-ի արդյունքներով, քանի որ ներկա արժեքը՝ p = 0,1427 (p > 0,05), փոփոխականների միջև առկա է նորմալ բաշխում (տե՛ս թիվ 2 գրաֆիկում):

[4] Հաշվարկները՝ հեղինակների կողմից:




**Գրաֆիկ 2. Արտարժութային փոխարժեքի (դրամ / 1 ԱՄՆ դոլարի միջին փոխարժեք) և ՀՀ արտաքին պետական պարտքի վրա հիմնված նորմալ բաշխումը՝ «Shapiro–Wilk test»-ի արդյունքում:**

Քանի որ n≤50, ապա գործածել ենք «Shapiro-Wilk» աղյուսակները՝ ներկա արժեքը (p) հաշվարկելու համար: Քանի որ p-արժեքը > α, մենք ընդունում ենք $H_0$: Ենթադրվում է, որ տվյալները սովորաբար բաշխված են: Այլ կերպ ասած, տվյալների ընտրանքի և նորմալ բաշխման միջև տարբերությունը բավականաչափ մեծ չէ վիճակագրորեն նշանակալի լինելու համար: Ոչ էական արդյունքը չի կարող ապացուցել, որ $H_0$-ը ճիշտ է, քանի որ զրոյական ենթադրությունը չի կարող մերժվել:

Ներկա արժեքը հավասար է 0,1427, (P(x≤1,0684) = 0,8573): Դա նշանակում է, որ սխալի հավանականությունը ($H_0$-ը) մերժելը ճիշտ է, քանի որ այն չափազանց մեծ է՝ 0,1427 (14,27%):

Թեստի վիճակագրությունը W-ը հավասար է 0,9224-ի, որը նույնպես գտնվում է 95% տարածաշրջանում ընդունելի համարվող միջակայքում՝ [0,8965 : 1]: Դիտարկված ազդեցության չափը՝ KS - D փոքր է՝ 0,1531: Սա ցույց է տալիս, որ նմուշի բաշխման և նորմալ բաշխման տարբերության մեծությունը փոքր է: Քանի որ զրոյական ենթադրությունը չի կարող մերժվել, ապա կարող եք էֆեկտի չափը անտեսել:

Վիզուալացման նպատակով ստորև ներկայացնում ենք «Shapiro–Wilk test»-ի կիրառությամբ արտարժութային փոխարժեքի (դրամ / 1 ԱՄՆ դոլարի

միջին փոխարժեքը) և ՀՀ արտաքին պետական պարտքի վրա հիմնված նորմալ բաշխման արդյունքները:

**Աղյուսակ 3. «Shapiro-Wilk» թեստի արդյունքները[5]:**

| **Parameter** | **Value** |
|---|---|
| P-value | 0.1427 |
| W | 0.9224 |
| Sample size (n) | 18 |
| Average ($\bar{x}$) | 103.4311 |
| Median | 101.66 |
| Sample Standard Deviation (S) | 7.2887 |
| Sum of Squares | 903.1312 |
| B | 28.8629 |
| Skewness | -0.1148 |
| Skewness Shape | Potentially **Symmetrical** (pval=0.831) |
| Excess kurtosis | 0.4993 |
| Kurtosis Shape | Potentially **Mesokurtic**, normal like tails (pval=0.63) |

«Shapiro–Wilk test»-ի գրանցած արդյունքները հաշվի առնելով՝ ընտրված փոփոխականների հիման վրա կատարենք բազմակի գծային ռեգրեսիոն վերլուծություն:

[5] Հաշվարկները՝ հեղինակների կողմից:

**Աղյուսակ 4. Ռեգրեսիոն վերլուծության արդյունքները[6]:**

| Group<br>s | X1 | X2 | Y | Pred Y | Residual |
|---|---|---|---|---|---|
| **Data** | 114.2<br>105.8<br>92.5<br>107.8<br>105.6<br>107.7<br>100.7<br>103<br>104.1 | 86.48<br>103.02<br>101.78<br>99.47<br>100.06<br>100.46<br>100.54<br>114.91<br>101.54 | 97<br>109.7<br>104.7<br>104.5<br>100.4<br>114.8<br>111.1<br>114.1<br>97.2 | 4.575131<br>4.681276<br>4.634869<br>4.660964<br>4.659505<br>4.66792<br>4.6497<br>4.753359<br>4.666201 | -<br>0.00041981<br>6<br>0.0164734<br>0.0162297<br>-0.0117767<br>-0.0503423<br>0.0752712<br>0.0607311<br>-0.0162833<br>-0.0894299 |
| **P-<br>value:** | 0.144111 | 0.0037975<br>5 | | | |
| **Avera<br>ge:** | 4.648691 | 4.612021 | 4.661042 | 4.660992 | 0.0001 |
| **n:** | 9 | 9 | 9 | 9 | 9 |
| **S:** | 0.057543<br>8 | 0.0720252 | 0.0650018 | 0.0463714 | 0.0510207 |
| **Skewn<br>ess:** | -<br>0.902054 | -0.516527 | -0.128908 | 0.233108 | -0.233197 |
| **Norm<br>ality:*<br>*** | 0.4684 | 0.03031 | 0.3703 | 0.2472 | 0.9531 |
| **Outlie<br>rs:** | 4.527208<br>64451838 | 4.45991317<br>33309525,<br>4.74414921<br>3269543 | 4.45991317<br>33309525,<br>4.74414921<br>3269543 | 4.5751307<br>94705469,<br>4.7533585<br>88498266 | -<br>0.08942994<br>468915355,<br>0.075271215<br>34274261 |

$Ln(Y) = 0.279757\ Ln(X_1) + 0.728637\ Ln(X_2)$

$Y = 1,322808 \cdot X_1^{0,728637}$

Բազմակի գծային ռեգրեսիայի արդյունքները ցույց տվեցին, որ առկա է շատ ուժեղ կոլեկտիվ նշանակալի ազդեցություն X1, X2 և Y միջև, ($F(2, 7) = 32864.19$, $p <.001$, $R^2 = 1$, $R^2adj = 1$):

---

6 Հաշվարկները՝ հեղինակների կողմից:

| Source | DF | Sum of Square | Mean Square | F Statistic | P-value |
|---|---|---|---|---|---|
| **Regression (between $\hat{y}_i$ and 0 )** | **2** | **195.540779** | **97.77039** | **32864.18678** | **1.24345e-14** |
| **Residual (between $y_i$ and $\hat{y}_i$)** | **7** | **0.0208249** | **0.00297498** | | |
| **Total (between $y_i$ and 0)** | **9** | **195.561604** | **21.729067** | | |

| | Coeff | SE | t-stat | lower t0.025(7) | upper t0.975(7) | Stand Coeff | p-value | VIF |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| **Ln(X1)** | **0.279757** | **0.170136** | **1.644309** | **-0.122552** | **0.682065** | **0** | **0.144111** | **1.352959** |
| **Ln(X2)** | **0.728637** | **0.171482** | **4.249058** | **0.323146** | **1.134128** | **0.625062** | **0.00379755** | **1.352959** |

R քառակուսի (R2) հավասար է 0,999894, այսինքն՝ Xi-ն 100%-փոփոխականություն է դրսևում Yi-ի նկատմամբ: Ճշգրտված R քառակուսին հավասար է 0,999863-ի: Բազմակի հարաբերակցության գործակիցը (R) հավասար է 0,999947, այսինքն՝ կանխատեսված տվյալների (ŷ) և դիտարկված տվյալների (y) միջև կա շատ ուժեղ հարաբերակցություն:

F(2,7) = 32864.18678, p-արժեք = 1.24345e-14: Քանի որ p-արժեքը < α (0,05), ուստի մերժում ենք $H_0$-ը: Գծային ռեգրեսիոն մոդելն առանց ընդհատման, Y = b1X1 +...+bpXp + ε, ապահովում է ավելի լավ համապատասխանություն, քան մոդելը առանց անկախ փոփոխականների, որի արդյունքում ստացվում է Y = 0 + ε:

Գծային ռեգրեսիան գնահատվում է նորմալ մնացորդային սխալների համար: «Shapiro-Wilk» թեստի արդյունքով p-արժեքը հավասար է 0,9531-ի, այսինքն՝ տվյալները հետևում են նորմալ բաշխման:

Շեղումների միատարրությունը (homogeneity of variance) «The White-test»-ի գնահատմամբ p-արժեքը հավասար է 0,437811 (F=0,950866), այսինքն՝ կարող ենք գնահատել, որ շեղումը միատարր է: Բազմագծայինության մտահոգություն չկա, քանի որ բոլոր «VIF» արժեքները 2.5-ից փոքր են:

**Եզրակացություն**

Հոդվածում հետազոտության իրականացման համար տեղեկատվական հիմք են հանդիսացել հայրենական և արտասահմանյան մասնագիտական գրականությունը, հայ և օտարերկրյա հետազոտողների աշխատությունները, ՀՀ ֆինանսների նախարարության և ՀՀ վիճակագրական կոմիտեի ամփոփ տվյալներ՝ դիտարկող ժամանակահատվածներում:

Այսպիսով՝ բազմակի գծային ռեգրեսիայի արդյունքները ցույց տվեցին, որ առկա է շատ ուժեղ կոլեկտիվ նշանակալի ազդեցություն X1, X2 և Y միջև, (F(2, 7) = 32864.19, p <.001, $R^2$ = 1, $R^2$adj = 1), իսկ թեստի կիրառությամբ իրականացված ՀՀ տնտեսական ակտիվության և ՀՀ արտաքին պետական պարտքի, ինչպես նաև արտարժութային փոխարժեքի (դրամ / 1 ԱՄՆ դոլարի միջին փոխարժեքը) և ՀՀ արտաքին պետական պարտքի միջև փոխազդեցության գնահատում արդյունքներով, կարող ենք նշել, որ դիտարկվող ժամանակահատվածում տնտեսական ակտիվության ցուցանիշի աճը և արտարժութային տատանումների հետևանքով ազգային արժույթի արժևումը արդյունավետորեն նպաստեցին արտաքին պետական պարտքի դինամիկայի և ՀՀ պարտք-ՀՆԱ հարաբերակցության նվազման վրա:

Թեև արտաքին պետական պարտքի կառավարելիության առումով որոշակի ռիսկեր են առաջացել, այնուամենայնիվ, կարծում ենք, որ պարտք-ՀՆԱ հարաբերակցության 2022 թվականի ցուցանիշը հետևանք էր ոչ միայն արտաքին գործոնների ազդեցության, այլև՝ պետական որակյալ քաղաքականության:

Այսպիսով՝ առնելով այն հանգամանքը, որ արտաքին վարկային միջոցների ներգրավումը պարունակում է արտարժութային ռիսկ, կարծում ենք ներքին փոխատվական շուկայի զարգացումը հնարավորինս կթուլացնի արժութային ռիսկը, ինչը շոշափելի է արտաքին պետական պարտքի ռիսկերի մասով:

2021 թվականին ՀՀ կառավարության պարտքի գծով վճարված 180.8 մլրդ դրամ տոկոսավճարներից 60%-ը կամ 108.3 մլրդ դրամը կազմել են ներքին տոկոսավճարները, իսկ արտաքին պարտքի գծով վճարված տոկոսավճարները կազմել են 40% կամ 72.5 մլրդ դրամ:

2022 թվականին ՀՀ պետական բյուջեից ՀՀ կառավարության պարտքի գծով վճարված տոկոսավճարների գերակշիռ մասն ուղղվել է ներքին պարտքի սպասարկմանը՝ 63.5% կամ 125.9 մլրդ դրամ, իսկ արտաքին պարտքի սպասարկմանը 36.5% կամ 72.4 մլրդ դրամ, որից արտաքին աղբ-

յուրներից ստացված վարկերի գծով տոկոսավճարների սպասարկումը կազմել է 17.7 տոկոս կամ 35.0 մլրդ դրամ:

Պարտքի սպասարկման ծախսերը 2023 թվականին կկազմեն 272 մլրդ դրամ: Դրանք կկազմեն բյուջեով սահմանված ծախսերի 10.5% կամ ՀՆԱ-ի 2.9%: Այս տարվա տոկոսավճարների նկատմամբ աճը կկազմի ՀՆԱ-ի 0.3 տոկոսային կետ: Գալիք տարվա համար պարտքի սպասարկման տոկոսավճարների չափը ՀՆԱ-ի նկատմամբ այն սահմանաչափն է, որը դեռևս անվտանգ է մակրոտնտեսական տեսանկյունից, սակայն նաև զգուշացնող՝ հետագա ավելացումներից խուսափելու համար: Տոկոսավճարների ավելացման հարցում էական ազդեցություն կթողնի պարտքի տոկոսադրույքների ավելացումը, որը սպասվում է թե՛ ներքին, և թե՛ արտաքին պարտքի առնչությամբ:

Պարտքի սպասարկման միջին կշռված տոկոսադրույքը այս տարվա 5.2%-ի փոխարեն 2023-ին կկազմի 6.4%: Մեկ տարվա ընթացքում 1.2 տոկոսային կետով տոկոսադրույքների ավելացումը պայմանավորված է մի շարք գործոններով:

Սպասվում է, որ գալիք տարում կավելանան արտաքին պարտքի տոկոսադրույքները՝ այս տարվա սպասվող 2.9%-ից ավելանալով մինչև 4.1%: Առաջին պատճառն այն է, որ տոկոսադրույքները շարունակում են ավելանալ միջազգային ֆինանսական շուկաներում, և դա ազդում է նոր ներգրավվող արտաքին պարտքի տոկոսադրույքների ավելացման վրա: Երկրորդ պատճառն այն է, որ մեր պարտքի 18%-ը լողացող տոկոսադրույքով ստացված պարտք է, և միջազգային շուկաներում տոկոսադրույքների ավելացումը ազդում է ոչ միայն նոր ներգրավվող վարկերի, այլև առկա պարտքի լողացող տոկոսադրույքով սահմանված մասի սպասարկման ծախսերի ավելացման վրա: Երրորդ պատճառն այն է, որ արտարժութային պարտքի մեր պորտֆելում կան վարկային պայմանագրեր, որոնք նախատեսում են տոկոսադրույքների ավելացում այն ժամանակ, երբ մեզ մոտ աճում է մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ն: Եթե այսպիսի վարկերի միջին տոկոսադրույքը 2018-2019 թվականներին կազմել է 2.3-2.4%, ապա 2023 թվականին այն կազմելու է 3.6% (2022-ին եղել է 2%):

Միջին կշռված տոկոսադրույքների վրա ազդել է նաև պարտքի ընդհանուր կառուցվածքում դրամային պարտքի կշռի ավելացումը: Հաշվի առնելով այն, որ մեր գանձապետական պարտքի տոկոսադրույքներն ավելի բարձր են (10.9%), քան արտաքին պարտքի միջին կշռված տոկոսադրույքը (4.1%), պարտքի կառուցվածքում ներքին պարտքի ավելացումը ազդում է

կշռված տոկոսադրույքի բարձրացման վրա, և վերջին էական գործոնը թերևս այն է, որ Կենտրոնական բանկի կողմից վարվող՝ բարձր տոկոսադրույքների քաղաքականությունն ազդում է գանձապետական պարտատոմսերի շուկայում տոկոսադրույքների բարձրացման վրա: Արդյունքում՝ 2021 թվականի համեմատությամբ 2023-ի գանձապետական պարտատոմսերի պորտֆելի ծախսատարությունը կավելանա 0.8 տոկոսային կետով [17]:

Այսպիսով, կարող ենք արձանագրել, որ ՀՀ Կառավարության կողմից ֆիսկալ կոնսոլիդացման արդյունքում 2022 թվականին արձանագրված պարտք-ՀՆԱ հարաբերակցության 47 տոկոս ցուցանիշն ամենացածր ցուցանիշն էր նախորդող 5 տարիների համեմատ, ինչը ՀՀ-ին կհաղորդի ավելի բարձր հուսալիության և վարկունակության երաշխիք՝ ֆինանսական շուկաների ինտեգրման համատեքստում:

**Օգտագործված գրականության ցանկ**


1. 2013-2022 թթ. ՀՀ կառավարության պարտքի վերաբերյալ ամփոփ տվյալների դինամիկա, https://www.minfin.am/hy/page/petakan_partqi_veraberyal_ampop_tvyalner/ վերջին մուտքի ամսաթիվ՝ 11/04 /2023 թ.

2. 2013-2022թթ. ՀՀ պետական պարտքի վերաբերյալ ամփոփ տվյալների դինամիկա https://www.minfin.am/hy/page/petakan_partqi_veraberyal_ampop_tvyalner/ վերջին մուտքի ամսաթիվ՝ 11/04/2023 թ.

3. Ghasemi, A.; Zahediasl, S. “Normality Tests for Statistical Analysis: A Guide for Non-Statisticians”; 2012. *Int J Endocrinol Metab. 2012; 10(2): 486-9. DOI: 10.5812/ijem.3505,* available at: *https://www.ncbi.nlm.nih.gov/pmc/articles/PMC3693611/*

4. Field, A. *Discovering statistics using SPSS*. 3 ed. London: SAGE publications Ltd; 2009. p. 822.

5. Driscoll, P.; Lecky, F.; Crosby, M. An introduction to everyday statistics-1. *J Accid Emerg Med*. 2000;17(3):205–11

6. Pallant, J. *SPSS survival manual, a step by step guide to data analysis using SPSS for windows*. 3 ed. Sydney: McGraw Hill; 2007. pp. 179–200

7. Royston, P. Estimating departure from normality. *Stat Med*. 1991;10(8):1283–93.

8. Altman, D.G.; Bland, J.M. Statistics notes: the normal distribution. *Bmj*. 1995;310(6975):298.

9. Oztuna, D.; Elhan, A.H.; Tuccar, E. Investigation of four different normality tests in terms of type 1 error rate and power under different distributions. *Turkish Journal of Medical Sciences*. 2006; 36(3): 171–176

10. Peat, J.; Barton, B. *Medical Statistics: A guide to data analysis and critical appraisal*. Blackwell Publishing; 2005

11. Thode, H. J. *Testing for normality*. New York: Marcel Dekker; 2002.

12. Elliott, A.C; Woodward, W. A. *Statistical analysis quick reference guidebook with SPSS examples*. 1st ed. London: Sage Publications; 2007

13. Thode, H.J. *Testing for normality*. New York: Marcel Dekker; 2002

14. Steinskog, D. J. A cautionary note on the use of the Kolmogorov-Smirnov test for normality. *American Meteor Soc*. 2007; 135: 1151–1157

15. MATEVOSYAN, A. “About the issue of the estimation of potential GDP of RA”: “Актуальные научные исследования в современном мире” XXXII Междунар. научн. Конф., ВЫПУСК 12(32) Часть 4 сборник научных трудов, КД2627280 Переяслав-Хмельницкий 2017г, ISSN 2524-0986. ст. 103-107.

16. ՀՀ Վիճակագրական կոմիտե www.armstat.am

17. ՀՀ Ֆինանսների նախարարություն. «Ազգային ժողովում ներկայացվել է ՀՀ 2023թ. պետական բյուջեի նախագիծը», https://minfin.am/hy/content/azgayin_zhoghovum_nerkayacvel_e_hh_2023t_petakan_byujei_nakhagitsy/#sthash.RwwqQzf1.t08fjZAf.dpuf վերջին մուտքի ամսաթիվ՝ 10/04/2023 թ.

# ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՆԵՐԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՇՈՒՐՋ

**ԱՐՄԻՆԵ ԶԱԽԱՐՅԱՆ**
ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա,
գիտակրթական միջազգային կենտրոն,
տնտեսագիտության և կառավարման ամբիոնի դասախոս,
տնտեսագիտության թեկնածու
armine.zakharyan@isec.am

**Համառոտագիր**

Հոդվածը նվիրված է Հայաստանի Հանրապետությունում կրթության և գիտության ոլորտների ֆինանսավորման խթանման միջոցով գիտակրթական համակարգի զարգացման մեթոդների և մեխանիզմների, դրանց արդյունավետ կիրառումը պայմանավորող գործոնների, ինչպես նաև գիտելիքահեն տնտեսության զարգացման հիմնահարցերի ուսումնասիրությանը:

Արդի պայմաններում կրթության և գիտության ոլորտների ֆինանսավորման խթանմանը և գիտելիքահեն տնտեսության զարգացմանը մեծապես կարող է նպաստել կրթության, գիտության, բիզնեսի և պետության փոխգործակցության ակտիվացումը: Վերջինս ենթադրում է պետական-մասնավոր գործընկերության շրջանակների ընդլայնում, հատկապես՝ նորարարական ոլորտներում:

Բուհ-երում գիտական հետազոտությունների խթանումը և դրանք երկրի գիտական աշխատանքների հիմնական մասը կատարող գիտակրթական կենտրոնների վերափոխումը կրթական հաստատությունների և պետական կառավարման մարմինների կարևոր խնդիրներից մեկն է: Վերջինիս լուծման համար հիմնականում կիրառվում են երկու մոտեցումներ. բուհերում գիտական հետազոտությունների ֆինանսավորման մեխանիզմների կատարելագործումը և բուհ-ական գիտության ֆինանսավորման ծավալների ավելացումը՝ ինստիտուցիոնալ ֆինանսավորման և բուհ-երի (որպես գիտակրթական համալիրների) զարգացման ծրագրերի ու նախագծերի նպատակային ֆինանսավորման միջոցներով: Սովորաբար, բուհ-ական գիտության ֆինանսավորման մեխանիզմների և ծավալների փոփոխությունների արդյունքներն ի հայտ են գալիս որոշակի ժամանակ անց, ինչը որոշ չափով դժվարացնում է դրանց արդյունավետության գնահատման գործընթացը, ուստի բուհ-երում գիտական հետազոտությունների խթանման առումով դեռևս կարևորվում են պետական ֆինանսավորման գերակայությամբ ֆինանսավորման ինստիտուցիոնալ ձևերը:

Հոդվածում Հայաստանի Հանրապետության օրինակով դիտարկվել են կրթության և գիտության ոլորտների ֆինանսավորման խթանման հիմնահարցերը, մշակվել են կրթության, գիտության, բիզնեսի և պետության փոխգործակցության ակտիվացման միջոցով գիտելիքահեն տնտեսության զարգացման խթանման որոշակի մեխանիզմներ:

**Բանալի բառեր և բառակապակցություններ.** գիտություն և կրթություն, ֆինանսավորում, ներդրումներ, ինովացիոն գործունեություն, տնտեսություն, պետական քաղաքականություն, խթանում, զարգացում, արդյունավետություն:

# К ВОПРОСУ О ФИНАНСИРОВАНИИ СФЕР ОБРАЗОВАНИЯ И НАУКИ

**АРМИНЕ ЗАХАРЯН**
Национальная академия наук Республики Армения
Международный научно-образовательный центр
преподаватель кафедры Экономики и управления
кандидат экономических наук
armine.zakharyan@isec.am

**Аннотация**

Статья посвящена изучению методов и механизмов развития научно-образовательной системы, факторов, определяющих эффективное применение данных методов и механизмов, а также вопросов развития наукоемкой экономики посредством стимулирования финансирования образования и науки в Республике Армения.

В современных условиях активизация взаимодействия образования, науки, бизнеса и государства может в значительной степени способствовать стимулированию финансирования сферы образования и науки и развитию наукоемкой экономики. Последнее предполагает расширение сферы государственно-частного партнерства, особенно в инновационных сферах.

Стимулирование научных исследований в высших учебных заведениях и их превращение в научно-образовательные центры, выполняющие основную часть научной работы страны, является одной из важных задач образовательных учреждений и органов государственного управления. Для решения этой задачи в основном используются два подхода: совершенствование механизмов финансирования научных исследований в ВУЗ-ах и увеличение объемов финансирования ВУЗ-овской науки за счет институционального финансирования и целевого финансирования программ и проектов развития высших учебных заведений (как научно-образовательных комплексов). Обычно результаты изменения механизмов и объемов финансирования ВУЗ-овской науки проявляются через некоторое время, что несколько усложняет процесс оценки их эффективности. Поэтому в плане стимулирования научных исследований в высших учебных заведениях по-прежнему важны институциональные формы финансирования с преобладанием государственного финансирования.

В статье на примере Республики Армения рассмотрены вопросы стимулирования финансирования в сферах образования и науки, разработаны некоторые механизмы стимулирования развития наукоемкой экономики посредством активизации взаимодействия образования, науки, бизнеса и государства.

**Ключевые слова и словосочетания:** наука и образование, финансирование, инвестиции, инновационная деятельность, экономика, государственная политика, стимулирование, развитие, эффективность.

# ON THE FINANCING OF EDUCATION AND SCIENCE SECTORS

**ARMINE ZAKHARYAN**
National Academy of Sciences of the Republic of Armenia
International Scientific-Educational Center, Department of Economics and Management, Lecturer
PhD in Economics
armine.zakharyan@isec.am

**Abstract**

The article is devoted to the study of methods and mechanisms for the development of the scientific and educational system, the factors that determine the effective use of these methods and mechanisms, as well as the development of a knowledge-intensive economy by stimulating the financing of education and science in the Republic of Armenia.

In current conditions, the intensification of interaction between education, science, business and the state can significantly contribute to stimulating the financing of education and science and the development of a knowledge-intensive economy. The latter involves expanding the scope of public-private partnerships, especially in innovative areas.

Stimulation of scientific research in higher educational institutions and their transformation into scientific and educational centers, that carry out the main part of the scientific work of the country is one of the important tasks of educational institutions and government bodies. To solve this problem, two approaches are mainly used: improving the mechanisms for financing scientific research in higher education institutions and increasing the amount of funding for science in higher educational institutions through institutional funding and targeted funding for programs and projects for the development of higher education institutions (as scientific and educational complexes). Usually, the results of changes in the mechanisms and volumes of funding for science of higher educational institutions appear after some time, which somewhat complicates the process of assessing their effectiveness. Therefore, in terms of stimulating research in higher education institutions, institutional forms of funding with a predominance of public funding are still important.

In the article, on the example of the Republic of Armenia, the issues of stimulating financing in the fields of education and science are considered, some mechanisms have been developed to stimulate the development of a knowledge-intensive economy by enhancing the interaction between education, science, business and the state.

**Keywords and phrases:** science and education, financing, investment, innovative activity, economy, state policy, stimulation, development, efficiency.

**Ներածություն**

Ժամանակակից տնտեսական պայմաններում Հայաստանի Հանրապետությունում մեծապես կարևորվում է գործազրկության մակարդակի կրճատումն ու նոր աշխատատեղերի ստեղծումը (հատկապես բարձր տեխնոլոգիաների ոլորտում), քանի որ վերջինս հանդիսանում է ինչպես ընկերությունների գործունեության խթանման, այնպես էլ բնակչության կենսամակարդակի որոշակի բարելավման կարևորագույն նախապայման: Այս պարագայում կրթության որակի բարելավումը, մրցունակ կադրերի պատրաստումը և գիտահետազոտական աշխատանքների խթանումը դառնում են օբյեկտիվ անհրաժեշտություն: Վերջինս էլ, իր հերթին, պահանջում է կրթության և գիտության ոլորտների ֆինանսավորման արդյունավետության հետևողական բարձրացում: Այս համատեքստում հատկապես կարևորվում է ՀՀ-ում կրթության և գիտության ոլորտների ֆինանսավորման հնարավորությունների և միջազգային փորձի ուսումնասիրությունը, ինչն էլ պայմանավորում է մեր *հետազոտության թեմայի արդիականությունը:*

*Հետազոտության նպատակն է*՝ կրթության և գիտության ոլորտների ֆինանսավորման հնարավորությունների ուսումնասիրության միջոցով Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության ոլորտների ֆինանսավորման խթանման եղանակների բացահայտումը:

*Հետազոտության խնդիրներն են*՝ կրթության և գիտության ոլորտների ֆինանսավորման մեխանիզմների վերլուծության արդյունքների հիման վրա ՀՀ գիտակրթական համակարգի զարգացման հնարավոր ուղիների մշակումը:

Հայաստանի Հանրապետության տնտեսության գրեթե բոլոր կարևորագույն ոլորտներում (տեղեկատվական տեխնոլոգիաներ, գյուղատնտեսություն, ռազմաարդյունաբերություն, քիմիական արդյունաբերություն, հաշվողական տեխնիկա, ռադիոէլեկտրոնիկա, նավիգացիոն սարքավորումների և կիսահաղորդիչների արտադրություն, դեղագործություն, բժշկական սարքավորումների արտադրություն, մեքենաշինություն, միջուկային էներգետիկա, զբոսաշրջություն և այլն) նկատվում է ինովացոն զարգացման անհրաժեշտություն: Վերջինս մեծապես պայմանավորված է որակյալ աշխատանքային ռեսուրսների առկայությամբ: Այս համատեքստում հատկապես կարևորվում է կրթության և գիտության ոլորտների ֆինանսավորումը: Նշված ոլորտներում զարգացած երկրների առաջավոր փորձը կարող է օգտակար լինել նաև Հայաստանի Հանրապետության համար: Առանձնահատուկ ուշադրության է արժանի նաև ինովացիոն գործունեության և կրթության ու գի-

տության ոլորտների ֆինանսավորման խթանման պետական քաղաքականության իրականացման փորձը՝ տնտեսության համաչափ և կայուն զարգացման շեշտադրմամբ:

Հոդվածում մանրամասնորեն դիտարկվել են կրթության և գիտության ոլորտների զարգացման նախադրյալները, կրթության և գիտության ոլորտների ֆինանսավորման խնդիրները, կրթության և գիտության ոլորտների բյուջետային ֆինանսավորման սկզբունքները, ինչպես նաև՝ կրթության և գիտության ոլորտների ֆինանսավորման համաշխարհային առաջատար փորձը: Առանձնահատուկ ուշադրություն է հատկացվել կրթության և գիտության ոլորտների ֆինանսավորման խթանման պետական քաղաքականությանը և վերջինիս հետագա բարելավման հնարավորություններին, ինչպես նաև վերլուծվել են 2010–2022 թթ. կրթության և գիտության ոլորտներում ՀՀ պետական բյուջեի ծախսերի ցուցանիշները: *Այնուամենայնիվ, ելնելով հոդվածի ծավալների սահմանափակության հանգամանքից, ինչպես նաև՝ դիտարկվող հիմնախնդրի կարևորությունից, հետազոտությունը կշարունակվի նաև մեր հետագա աշխատանքներում:*

**Տեսամեթոդական հիմքեր**

Հետազոտության համար տեսամեթոդական հիմքեր են հանդիսացել տնտեսագիտության տեսության, մակրո և միկրո տնտեսագիտության, կառավարման, ֆինանսների, միջազգային տնտեսական հարաբերությունների դասական, նեոդասական աշխատությունները, զարգացած և զարգացող, ինչպես նաև անցումային տնտեսությունների վերաբերյալ տնտեսագիտական հետազոտություններն ու վերլուծությունները, կրթության և գիտության ոլորտների ֆինանսավորման հիմնախնդիրներին վերաբերող հայրենական և արտասահմանյան հեղինակային հրապարակումները, գիտաժողովների հրապարակած նյութերը, տվյալ ոլորտի գործառույթները և փոխհարաբերությունները կանոնակարգող նորմատիվ բնույթի իրավական ակտերը և այլն:

**Ուսումնասիրության մեթոդներ**

Հետազոտությունների ընթացքում կիրառվել են գրաֆիկական, համակարգային և իրավիճակային վերլուծության, տնտեսավիճակագրական խմբավորումների, ինդուկցիայի և դեդուկցիայի, համեմատական և գործոնային վերլուծությունների և գիտական աբստրահման մեթոդները:

**Վերլուծություն**

Հասարակության զարգացման համաշխարհային փորձը վկայում է, որ կրթությունը՝ հանդիսանալով տնտեսության զարգացման կարևորագույն շարժիչ ուժերից մեկը, պահանջում է մշտական զարգացման և կատարելագործման անընդհատ գործընթացի ապահովում, հետևաբար, նաև բյուջետային ֆինանսավորման իրականացում հետևյալ սկզբունքների պահպանմամբ [8, էջ 118-121].

- բյուջետային միջոցների նպատակային հատկացում,
- հատկացված ֆինանսական ռեսուրսների անվերադարձելիություն և անհատուցանելիություն,
- ֆինանսական ռեսուրսների ծրագրված հատկացում,
- ըստ ծախսվածության աստիճանի՝ ֆինանսական միջոցների հատկացում,
- բյուջետային միջոցների խնայողական և ռացիոնալ օգտագործում,
- պետական բյուջեի եկամուտներին ծրագրված ծախսերի համապատասխանություն,
- մարդու իրավունքներին, կազմակերպությունների, պետության ու տարածաշրջանային կառույցների օրինական շահերին իրականացվող ֆինանսավորման համապատասխանություն,
- բնապահպանական, սանիտարահիգիենիկ և օրենքով սահմանված այլ պահանջներին ու չափանիշներին իրականացվող ֆինանսավորման համապատասխանություն,
- հատկացված բյուջետային միջոցների օգտագործման հանդեպ պետական վերահսկողություն, ինչպես նաև՝ տեղ գտած չարաշահումների համար իրավական պատասխանատվություն:

Նշված սկզբունքները պահպանվում են նաև բյուջետային գործընթացում:

Կրթության բյուջետային ֆինանսավորման գործընթացում կիրառվում են երկու տեսակի բյուջեներ. «նետտո-բյուջեն» կիրառվում է համեմատաբար սահմանափակ թվով ծախսումների ֆինանսավորման նպատակով, իսկ «բրուտտո-բյուջեն» կիրառվում է ամբողջությամբ բյուջետային միջոցներով գործունեություն ծավալող կազմակերպությունների ֆինանսավորման նպատակով [8, էջ 118-121]: ՀՀ-ում հիմնականում կիրառվում է «բրուտտո-բյուջեով» ֆինանսավորման եղանակը:

Համաձայն «Կրթության մասին» ՀՀ օրենքի [1], ուսումնական հաստատությունը ֆինանսավորում է հիմնադիրը: Պետությունը յուրաքանչյուր նոր

ուսումնական տարում երաշխավորում է կրթության կարիքների համար միջոցների հատկացումը՝ նրա առաջանցիկությունն ապահովող չափաքանակով: Պետական բյուջեի ընթացիկ ծախսերում կրթության ֆինանսավորման տոկոսային հարաբերությունը չպետք է ցածր լինի նախորդ բյուջետային տարվա համապատասխան ցուցանիշից: Պետական բյուջեից պետական ուսումնական հաստատության ֆինանսավորումն իրականացվում է պետական պատվերի, սուբսիդիայի, պետական սեփականություն հանդիսացող գույքի պահպանության վճարի և այլ ձևերով: Պետական պատվերով ուսումնական հաստատության ֆինանսավորման չափանիշները սահմանում է ՀՀ կառավարությունը՝ մեկ սովորողի հաշվարկով՝ ըստ ուսումնական հաստատության տիպի, իսկ առանձին դեպքերում (լեռնային և սահմանամերձ շրջաններ)՝ հատուկ չափաքանակներով: Ֆինանսավորման լրացուցիչ աղբյուրների ներգրավումը չի կարող հանգեցնել պետական բյուջեից ֆինանսավորման չափերի նվազեցմանը: Ուսումնական հաստատությունը չի կարող վճարովի ուսումնական գործունեություն իրականացնել բյուջեից ֆինանսավորվող կրթական գործունեության փոխարեն: Ուսումնական հաստատության ֆինանսավորման հիմնական աղբյուրները պետական և համայնքների բյուջեներն են: Ֆինանսավորման լրացուցիչ աղբյուրներն են՝

- Հայաստանի Հանրապետության ու օտարերկրյա պետությունների իրավաբանական և ֆիզիկական անձանց կատարած ներդրումները,
- սեփական միջոցները, որոնք գոյանում են վճարովի ուսումնական, հետազոտական, գիտաարտադրական, խորհրդատվական, հրատարակչական և ՀՀ օրենսդրությամբ չարգելված գործունեության այլ ձևերից,
- Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը չհակասող այլ աղբյուրներ:

Միաժամանակ, պետությունը կրթության բնագավառում ապահովում է բարենպաստ հարկային քաղաքականություն:

Նշենք նաև, որ գոյություն ունեն կրթության ոլորտի ֆինանսավորման երկու հիմնական իրավական ռեժիմներ՝ պայմանավորված սուբյեկտների կողմից ֆինանսական ռեսուրսների օգտագործման առանձնահատկություններով.

- տնտեսավարման իրավունքով ամրագրված գույքով պետական առևտրային կազմակերպությունների ֆինանսավորում,
- բյուջետային ֆինանսավորմամբ գործող և գույքի օպերատիվ կառավարմամբ օժտված պետական ոչ առևտրային կազմակերպությունների ֆինանսավորում (նախահաշվային-բյուջետային ֆինանսավորում):

Կրթության ոլորտի ֆինանսավորման աղբյուրներն են հանդիսանում [7, էջ 546-550].

- բյուջետային՝ պետական բյուջեն,
- արտաբյուջետային՝ վճարովի կրթական ծառայություններից գոյացած մուտքերը, կրթական հաստատությունների գիտատեխնիկական գործունեության արդյունքների իրացումից գոյացած միջոցները, կրթական հաստատությունների կրթական և գիտատեխնիկական գործունեության հետ չկապված առևտրային գործունեությունից ստացված եկամուտը:

Համաշխարհային պրակտիկայում հայտնի են կրթության ոլորտի ֆինանսավորման հետևյալ հիմնական մոդելները [10, էջ 18-20].

- Առկա պահանջմունքներին ուղղված ֆինանսավորում, որի դեպքում բյուջետային միջոցները պետությունից ուղղակիորեն փոխանցվում են կրթական հաստատություններին (Գերմանիա, Անգլիա, Ֆրանսիա և Շվեցիա): Այս մոդելի շրջանակներում համապատասխան պետական մարմնի հետ համաձայնագիր ստորագրած ուսումնական հաստատությունները պարտավորվում են պատրաստել հասարակության համար անհրաժեշտ մասնագետներ՝ նախապես համաձայնեցված և սահմանված գներով: Դիտարկվող մոդելի առավելությունն այն է, որ այն միաժամանակ նպաստում է ընդհանուր արդյունավետության բարձրացմանը և պետական ծախսերի կրճատմանը: Աշխատաշուկայի իրական պահանջներին նախապատրաստվող կադրերի որակավորման և թվաքանակի համապատասխանությունը որոշվում է համապատասխան պետական մարմինների կանխատեսումային գնահատականների հիման վրա:
- Պետության կողմից որոշակի նպատակներով բուհ-երից կրթական ծառայությունների ձեռք բերում (Նորվեգիա): Բարձրագույն կրթության ֆինանսավորման տվյալ համակարգը հիմնականում կողմնորոշված է դեպի շուկան: Բուհ-երը մասնակցում են մասնագիտական կադրերի պատրաստման պետական պատվերի ստացման մրցույթներին: Վերը նկարագրված առաջին մոդելից այս մոդելը տարբերվում է պետական շինությունների բաշխման մրցութային կարգով և կրթության վրա պետական ծախսերի կրճատման հնարավորությամբ:
- Աշխատանքի արդյունքների հիման վրա բուհ-երի ֆինանսավորում (Շվեցիա, Ռումինիա, Նիդերլանդներ): Ֆինանսավորման ծավալը որոշվում է բուհ-ի գործունեության այնպիսի ցուցանիշներով, ինչպիսիք են՝ շրջանավարտների և 1-ին կուրս ընդունված ուսանողների թվաքանակները, ուսա-

նողների գիտելիքի ստուգման արդյունքները, դասավանդվող առարկաների բարդությունը, պաշտպանված ատենախոսությունների թվաքանակը և այլն:

- Ուսումնական հաստատության ներքին պահանջմունքներին ուղղված ֆինանսավորում, որն իրականացվում է կրթական ծառայությունների անմիջական սպառողների կողմից (Ավստրալիա, Չինաստան, Մեծ Բրիտանիա, Ֆինլյանդիա): Ֆինանսավորման այս համակարգում կրթական ծառայությունների անմիջական սպառողներին են փոխանցվում կրթության ֆինանսավորման պետական պարտավորությունները՝ որոշակի կտրոնների և հավաստագրերի (վաուչերների) տեսքով: Սովորողի համար միակ էական սահմանափակումը՝ տրամադրված վաուչերի գործողության ժամկետն է: Ինչպես բարձրագույն կրթության ֆինանսավորման այլ մոդելներում, այս մոդելում նույնպես վաուչերների հիման վրա ֆինանսավորումը կարող է համալրվել ուսանողի կողմից տրվող հավելավճարով:

Այժմ ավելի հանգամանորեն ներկայացնենք մի շարք երկրներում կրթական համակարգի ֆինանսավորման առանձնահատկությունները:

**Մեծ Բրիտանիա:** Յուրաքանչյուր տարի Կրթության և զբաղվածության նախարարությունը հրապարակում է բարձրագույն և միջնակարգ կրթության հիմնական խնդիրների, նպատակների և առաջնահերթությունների վերաբերյալ զեկույց [9, էջ 51-60]: Այս զեկույցի հիման վրա Կրթության նախարարությունից անկախ գործող Բարձրագույն կրթության ֆինանսավորման պետական խորհուրդը մշակում և հրապարակում է երկրի բոլոր բուհ-երի ֆինանսավորման պլանը՝ ֆինանսավորման հոդվածներով հանդերձ: Յուրաքանչյուր տարի խորհուրդը դիտարկում է բուհ-երի գործունեության ցուցանիշները, այնուհետև, ռեկտորներին ու հանրությանը հայտնի բանաձևով որոշում բուհ-երի բյուջետային ֆինանսավորման ծավալը՝ բոլոր հոդվածներով (ներառյալ գիտական հետազոտությունների գծով ծախսերը): Մեծ Բրիտանիայում բուհ-երի ֆինանսավորման ժամանակ հաշվի են առնվում դրանց մասնագիտական ողղվածությունը, նաև՝ տարածաշրջանային առանձնահատկություններով պայմանավորված գործակիցները:

**Գերմանիա:** Դաշնային նախարարությունը հիմնականում ֆինանսավորում է շինարարությանն ու հատուկ թանկարժեք սարքավորումների ձեռք բերմանն ուղղված խոշոր կապիտալ ներդրումները: Մնացած բոլոր ծախսերը ֆինանսավորվում են Հողերի կրթության նախարարությունների կողմից, ընդ որում, բուհ-երի բյուջեները կազմվում են շատ մանրամասնորեն՝ բոլոր հոդվածների հանգամանալից նկարագրմամբ [13]: Բացի այդ՝ հաջորդ տարվա համար միջոցների հատկացման պլանավորումն իրականացվում է

հետևյալ բանաձևով. «Փաստացի նվաճված + նոր տեսակի ծախսերի գծով հիմնավորված ֆինանսավորումը»: Գերմանիայում բուհ-երի բյուջեները ձևավորվում են հետևյալ 3 մասերից.

1. Շահագործման ֆոնդերը: Դրանց միջոցների 50%-ը հաստատուն մեծություն է, իսկ մնացած 50%-ը կարգավորվում է տվյալ բուհ-ում ուսանողների թվաքանակի աճին կամ նվազեցմանը համապատասխան: Շահագործման ֆոնդերի միջոցները նախատեսված են համալսարանական կրթության կազմակերպման և գիտական հետազոտությունների համար:

2. Գիտահետազոտական աշխատանքների իրականացմանն ուղղվող միջոցներ, որոնք ֆինանսավորվում են երկրի Կառավարության կողմից:

3. Համալսարանի գիտահետազոտական աշխատանքներում մասնավոր ընկերությունների ներդրումները:

**Նորվեգիա:** Նորվեգիայի համալսարանների ֆոնդերի միջոցները հիմնականում գոյանում են տարբեր պետական գրանտների հաշվին: Ազգային հետազոտական խորհուրդը ամեն տարի խոշոր գրանտներ է տրամադրում համալսարաններին [9, էջ 51-60]: Հանրային կամ մասնավոր ֆոնդերի կողմից տրամադրվող գրանտները ֆինանսավորում են համալսարանների հետազոտական աշխատանքների հիմնական մասը: Նորվեգիայում բարձրագույն կրթությունն անվճար է բոլորի համար, սակայն, ուսանողները պարտավոր են որոշակի գումարներ վճարել սոցիալական ապահովության կազմակերպություններին անդամակցության համար: Ուսանողներին ֆինանսական աջակցություն է ցուցաբերվում հիմնականում կրթաթոշակների և պետական բանկի կողմից տրամադրվող կրթական վարկերի ձևով: Նորվեգիայում բուհ-երի տարեկան բյուջեները կազմելիս կարևորագույն ցուցանիշ է ուսանողների թվաքանակը: Բուհ-երի նոր բյուջեների մշակման համար ելակետային հիմք է նաև նախորդ տարվա բյուջեն: Նորվեգիայում էլ ավելի է կարևորվում նվաճված արդյունքների հիման վրա ռեսուրսների բաշխումը:

**Ռուսաստանի Դաշնություն:** Կրթական համակարգի ֆինանսավորման կատարելագործումն իրականացվում է հետևյալ չորս հիմնական ուղղություններով [9, էջ 51-60].

*1. Նորմատիվային ֆինանսավորման համակարգի ստեղծում:* 1989 թ-ից սկսած՝ ՌԴ ազգային կրթության հիմքում դրվել են հետևյալ հիմնական սկզբունքները.

- Ուսումնական հաստատությունների գործունեության նպատակային ուղղվածությունն ամփոփ ձևով արտացոլող նորմատիվներով ֆինանսավոր-

րում՝ ծախսերի առանձին հոդվածներով բյուջետային միջոցների հատկացման փոխարեն:

- Ուսումնական հաստատությունների գործունեության բյուջետային կամ ճյուղային ֆինանսավորման համադրում բնակչությանը տարաբնույթ վճարովի ծառայությունների մատուցման հետ: Այս պարագայում նպատակ է դրվել չնվազեցնելու ուսումնական հաստատությունների բյուջետային ֆինանսավորման ծավալները՝ ազգաբնակչության համար անվճար ծառայությունները վճարովիների փոխարինելու հետևանքով:
- Ուսումնական հաստատությունների և նրանց վերադաս մարմինների միջև կառավարչական գործառույթների վերաբաշխում և սահմանազատում, անցում տնտեսական գործունեության կառավարման առավելապես տնտեսական մեթոդների, ինչպես նաև՝ ուսումնական հաստատությունների ծրագրային, տնտեսական և ֆինանսական ինքնուրույնության ուժեղացում:
- Կրթության կառավարման կազմակերպական կառուցվածքների կատարելագործում՝ ճյուղային և միջճյուղային միավորումների, ֆիրմաների, ասոցիացիաների և այլ կառույցների ստեղծում:
- Աշխատանքային կոլեկտիվների ինքնուրույնության մեծացում:

*2. Պետական անվանական ֆինանսական պարտավորությունների օգտագործմամբ ֆինանսավորում:* Պետական անվանական ֆինանսական պարտավորությունը միասնական պետական քննության արդյունքներով միջնակարգ դպրոցի շրջանավարտին տրամադրվող պետական չափանիշով սահմանված ուսման ամբողջ ժամանակահատվածում բյուջետային միջոցների հաշվին բուհ-երում ուսման ֆինանսավորման պետության պարտավորությունն է: Տվյալ պարտավորությունն իրացվում է միայն այն դեպքում, երբ շրջանավարտը (կամ միասնական պետական քննություն հանձնած ցանկացած քաղաքացի) ընդունվում է բուհ:

*3. Կրթության սուբսիդավորում:* 2002-2004 թթ-ին Սոցիալական քաղաքականության և տնտեսության արդիականացման ոլորտում Ռուսաստանի Դաշնության կառավարության գործողությունների ծրագրի նախագծով նախատեսվել է ՌԴ քաղաքացիների բարձրագույն մասնագիտական կրթության ստացման համար պետական վերադարձելի սուբսիդիաների համակարգի ներդրում:

*4. Կրթության վարկավորում:* ՌԴ օրենսդրությամբ նախատեսված է քաղաքացիների կրթության վարկավորման պետական համակարգի ստեղծում, սակայն, կրթական վարկը ՌԴ-ում լայն տարածում չունի:

Անշուշտ, ՀՀ-ն, ունենալով ՌԴ-ի հետ տարբեր ոլորտներում սերտ գործընկերային հարաբերություններ, պետք է հաշվի առնի նաև կրթության ֆինանսավորման ոլորտում վերոնկարագրված փորձը՝ երկու երկրների կրթական համակարգերի առավելագույն ինտեգրումն ապահովելու նպատակով:

Այժմ ավելի հանգամանորեն անդրադառնանք Հայաստանի Հանրապետությունում կրթական համակարգի ֆինանսավորման հիմնախնդիրներին: Ներկայացնենք ՀՀ պետական բյուջեի ծախսերը կրության ոլորտում:




***Գծապատկեր 1. ՀՀ պետական բյուջեի ծախսերը կրթության ոլորտում 2010-2023 թթ. (մլն. դրամ) [2]:***

Գծապատկեր 1-ի տվյալները վկայում են, որ 2010 թ-ի համեմատությամբ կրթության ոլորտում 2023 թ-ի պետական բյուջեի ծախսերն ավելացել են 103333.0 մլն դրամով, սակայն, հարկ է նշել, որ 2017-2019 թթ-ին կրթության ոլորտում պետական բյուջեի ծախսերի որոշակի կրճատումներ են եղել, ինչը, մեր կարծիքով, պայմանավորված է ժողովրդագրական իրավիճակի փոփոխությամբ և միգրացիայով: Միաժամանակ, նշենք նաև, որ ՀՀ կառավարության նախաձեռնությամբ 2022 թվականին գիտության ֆինանսավորումը նախորդ տարվա համեմատ ավելացվել է աննախադեպ 82.8%-ով՝ կազմելով 25.1 մլրդ դրամ:

Ստորև ներկայացնենք նաև ՀՀ կրթության ոլորտում իրականացված պետական ծախսերի հարաբերակցությունը ՀՆԱ-ին գծապատկեր 2-ի միջոցով:




***Գծապատկեր 2. ՀՀ կրթության ոլորտում իրականացված պետական ծախսերի հարաբերակցությունը ՀՆԱ-ին 2010-2022 թթ. (%) [2]:***

Վերոբերյալ տվյալները վկայում են, որ 2022 թ-ին 2010 թ-ի համեմատությամբ ՀՀ-ում կրթության ոլորտում իրականացված պետական ծախսերի և ՀՆԱ-ի հարաբերակցության ցուցանիշը նվազել է 1.1 տոկոսային կետով: Այս ցուցանիշի նվազեցումները նկատվել են նաև 2011-2014 թթ-ին, ինչպես նաև՝ 2019 թ-ին, այնուհետև, տեղի է ունեցել որոշակի աճ: Մասնավորապես, 2020-2021 թթ-ին նկատվել է դիտարկվող ցուցանիշի կայուն աճ: Անշուշտ, Հայաստանի Հանրապետությունը, հետապնդելով տնտեսության գիտատար ճյուղերի զարգացման գերնպատակ, պետք է որոշ քայլեր ձեռնարկի այս ցուցանիշի աստիճանական բարելավման ուղղությամբ:

Ինչպես հայտնի է, Հայաստանի Հանրապետությունում վերջին տարիներին հետազոտությունների և մշակումների ուղղությամբ գերակշռում են պետության կողմից իրականացված ծախսերը, ինչը վկայում է գիտության ոլորտում մասնավոր հատվածի թույլ ներգրավվածության մասին, իսկ 2016 թ. հոկտեմբերին հաստատված ՀՀ կառավարության ծրագրի 1.4 կետի 4գ ենթակետով սահմանված է. «2018 թվականից սկսած՝ գիտության ֆինանսավորման ծավալների հիմնական մասի ուղղորդում դեպի կիրառական և փորձարարա-կոնստրուկտորական ծրագրեր» [3] միջոցառումների համախումբը, համաձայն որի՝ ՀՀ գիտության ոլորտի ֆինանսավորմանը տրված է հստակ ուղղվածություն:

Ստորև ներկայացնենք նաև 2010-2023 թթ. պետական ֆինանսավորման (բազային, նպատակային-ծրագրային և թեմատիկ) ծավալները գիտության ոլորտում (թվերը չեն ներառում պետական կառավարման մարմնի պահպանման ծախսերը):




***Գծապատկեր 3. Հայաստանի Հանրապետությունում գիտության ոլորտի ֆինանսավորման ծավալը 2010-2023 թթ. (մլն դրամ) [2]:***

Վերոբերյալ տվյալներից երևում է, որ 2008-2023 թթ. ընթացքում տեղի է ունեցել գիտության ֆինանսավորման ծավալի ցուցանիշի զգալի աճ՝ 22988,6 մլն դրամով: Անշուշտ, գիտության ֆինանսավորման ծավալների ավելացումը դրական երևույթ է, սակայն պետք է նշենք, որ անհրաժեշտ է ապահովել այս ցուցանիշի շարունական աճը՝ հատկապես հաշվի առնելով ՀՀ տնտեսության ինովացիոն զարգացման ներկայիս խնդիրները: Այս համատեքստում հատկապես կարևորվում է գիտության բազային ֆինանսավորման ծավալների շարունակական աճի ապահովումը: Նշենք, որ բազայինի մեջ են մտնում հիմնարար և կարևորագույն նշանակություն ունեցող կիրառական հետազոտությունները, գիտական կազմակերպությունների ենթակառուցվածքի պահպանումն ու զարգացումը, ազգային արժեք ներկայացնող գիտական օբյեկտների պահպանությունը, գիտական կադրերի պատրաստումը, գիտական և գիտատեխնիկական գործունեության ապահովումը, համատեղ օգտագործման գիտական սարքավորումների ձեռքբերումը և միջազգային համագործակցության ծրագրերի իրականացումը: Բազային ֆինանսավորման մեջ են մտնում նաև գիտական աստիճանների համար գիտաշխատողներին տրվող հավելավճարները:

Նշենք նաև, որ ՀՀ բուհ-երում կիրականացվեն նորարարական ու զարգացման ծրագրեր: ՀՀ ԿԳՄՍՆ «Կրթական ծրագրերի կենտրոն» ԾԻԳ-ը կրթության բարելավման լրացուցիչ ֆինանսավորման վարկային ծրագրի շրջանակում բարձրագույն ուսումնական հաստատություններում իրականացնելու է նորարարական ու զարգացման ծրագրեր՝ նպաստելով դասավանդման և ուսումնառության միջավայրի, հետազոտական կարողությունների զարգացմանը: Այդ ծրագրերն իրականացվելու են «Աջակցություն Նորարարությունների մրցակցային հիմնադրամի (ՆՄՀ) զարգացմանը» բա-

ղադրիչի միջոցով: ՆՄՀ-ի դրամաշնորհները մրցակցային հիմունքներով ուղղվելու են բուհ-երում նորարարական ու զարգացման ծրագրերի իրականացմանը, դրանց ընդհանուր կարողությունների հզորացմանը: Դրամաշնորհների տրամադրումը միաժամանակ նպաստելու է բարձրագույն ուսումնական հաստատությունների կրթական գործունեության որակի և արդյունավետության բարձրացմանը, կառավարման համակարգի զարգացմանը, մասնագիտական կրթական ծրագրերի և դասավանդման մեթոդների արդիականացմանը, կրթական գործընթացում գիտահետազոտական աշխատանքների ներդրմանը, ինչպես նաև՝ աշխատաշուկայի հետ կապերի զարգացմանը [6]:

Ինչպես հայտնի է, գիտահետազոտական և փորձարարա-կոնստրուկտորական աշխատանքների (ԳՀՓԿԱ) վրա ծախսերի մակարդակը հարաբերական մեծություն է. հաշվարկվում է որպես օրացուցային տարվա ընթացքում ԳՀՓԿԱ-ի  վրա պետական և մասնավոր ծախսերի (ներառյալ բոլոր մակարդակների պետական բյուջեները, առևտրային կազմակերպությունների բյուջեները, մասնավոր հիմնադրամների և ոչ կառավարական կազմակերպությունների դրամաշնորհները և նվիրատվությունները) ընդհանուր ծավալը ՀՆԱ-ում:

Պաշտոնական տվյալների համաձայն՝ 2020 թ-ին գիտահետազոտական աշխատանքների վրա ծախսերն ամբողջ աշխարհում կազմել են 1341.7 մլրդ դոլար: Դրանցից առավել քան 60 տոկոսը բաժին է ընկել չորս երկրի՝ ԱՄՆ, Չինաստան, Ճապոնիա և Գերմանիա [14]: Ըստ ԳՀՓԿԱ-ի վրա կատարած ծախսերի՝ երկրների առաջատար տասնյակի մեջ են մտնում՝ ԱՄՆ-ը, Չինաստանը, Ճապոնիան, Գերմանիան, Հարավային Կորեան, Ֆրանսիան, Հնդկաստանը, Մեծ Բրիտանիան, Բրազիլիան և Ռուսաստանը:

Ինչ վերաբերում է նախկին ԱՊՀ երկրներին, ապա թեև դրանցում գիտական հետազոտություններին և մշակումներին հատկացվող ծախսերի ծավալները որոշակի աճ են արձանագրել, այնուամենայնիվ ՀՆԱ նկատմամբ այն դեռևս չի ընդլայնվել: Ստորև ներկայացնենք ԱՊՀ երկրներում գիտական հետազոտությունների և մշակումների վրա իրականացված ծախսերի մեծությունը ՀՆԱ նկատմամբ տոկոսներով:

Աղյուսակ 1

***ԱՊՀ երկրներում գիտական հետազոտությունների և մշակումների վրա իրականացված ծախսերի մեծությունը ՀՆԱ նկատմամբ 2015-2020 թթ. (%) [14]***

| N | ԱՊՀ երկիրը | %, ՀՆԱ նկատմամբ | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | 2015 | 2016 | 2017 | 2018 | 2019 | 2020 |
| 1 | Ադրբեջան | 0.2 | 0.2 | 0.2 | 0.2 | 0.2 | 0.2 |
| 2 | Բելառուս | 0.5 | 0.5 | 0.6 | 0.6 | 0.6 | 0.5 |
| 3 | Հայաստան | 0.2 | 0.2 | 0.2 | 0.2 | 0.2 | 0.2 |
| 4 | Ղազախստան | 0.2 | 0.1 | 0.1 | 0.1 | 0.1 | 0.1 |
| 5 | Ղրղզստան | 0.1 | 0.1 | 0.1 | 0.1 | 0.1 | 0.1 |
| 6 | Մոլդովա | 0.3 | 0.3 | 0.2 | 0.2 | 0.2 | 0.2 |
| 7 | Ռուսաստան | 1.1 | 1.1 | 1.1 | 1.0 | 1.0 | 1.1 |
| 8 | Ուկրաինա | 0.6 | 0.5 | 04 | 0.5 | 0.4 | 0.4 |

ԱՊՀ անդամ երկրները գիտահետազոտական և փորձարարա-կոնստրուկտորական աշխատանքների վրա ծախսերի մակարդակով ևս էապես զիջում են տնտեսապես զարգացած երկրներին: Ռուսաստանի ցուցանիշը, որ ամենաբարձրն է ԱՊՀ անդամ երկրներից, համաշխարհային մակարդակով առաջատարների ցուցակում առաջին տեղը գրավողի ցուցանիշից փոքր է մոտ 12 անգամ: Հայաստանի ցուցանիշը մոտ 5 անգամ փոքր է Ռուսաստանի ցուցանիշից և մոտ 47 անգամ աշխարհում առաջին տեղը զբաղեցնող ԱՄՆ-ի ցուցանիշից: Այս վիճակն անցանկալի է Հայաստանի տեխնոլոգիական զարգացման առումով, քանի որ միայն սեփական գիտահետազոտական և փորձարարա-կոնստրուկտորական մշակումներն են հնարավորություն ընձեռում կտրուկ առաջընթացի, ինչպես որ վկայում է ԱՄՆ-ի փորձը: Նորամուծության առումով, Հայաստանը, ինչպես նաև ԱՊՀ անդամ երկրները, այդքան էլ հետ չեն մնում աշխարհի առաջատարից: Համաշխարհային մրցունակության զեկույցի գնահատմամբ, ըստ «նորարարության կարողություն» հենասյան, 2022 թ-ին Հայաստանը 132 երկրների շարքում զբաղեցնում է 80-րդ տեղը՝ 26. 6 միավորով: Տվյալ հենասյան ամենաուժեղ կետը արտոնագրերի հայտադիմումներն են, իսկ ամենաթույլ կետը՝ հետազոտությունների ու մշակումների ծախսերը [11]:

Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության «Գիտության ու տեխնոլոգիաների հիմնական ցուցանիշներ» տվյալների բաց շտեմարանի համաձայն՝ ԳՀՓԿԱ ներքին ծախսերի ընդհանուր ծավա-

լով համաշխարհային առաջատարներն են ԱՄՆ-ը, Գերմանիան, Չինաստանը, Ճապոնիան, Հարավային Կորեան [12, էջ 1-8]:

Ստորև ներկայացնենք նաև ԳՀՓԿԱ ֆինանսավորման աղբյուրների կառուցվածքը տարբեր երկրներում:

Աղյուսակ 2

***ԳՀՓԿԱ ֆինանսավորման աղբյուրների կառուցվածքը տարբեր երկրներում [4]***

| **Երկիր** | **ԳՀՓԿԱ ծախսերի ֆինանսավորման մեջ սեկտորների մասնաբաժինը, %** | | | |
|---|---|---|---|---|
| | ***բիզնես*** | ***պետություն*** | ***օտարերկրյա ներդրողներ*** | ***այլ աղբյուրներ*** |
| ԱՄՆ | 60.9 | 27.7 | 4.5 | 6.9 |
| Չինաստան | 74.6 | 21.1 | 0.9 | 3.4 |
| Ճապոնիա | 75.5 | 17.3 | 0.5 | 6.7 |
| Գերմանիա | 66.1 | 29.2 | 4.3 | 0.4 |
| Հարավային Կորեա | 75.7 | 23.8 | 0.3 | 1.1 |
| Ֆրանսիա | 55.4 | 35 | 7.6 | 2.0 |
| Մեծ Բրիտանիա | 46.6 | 27 | 20.7 | 5.7 |
| Ռուսաստան | 28.2 | 67.6 | 3.0 | 1.2 |
| Լեհաստան | 30 | 61 | 5.6 | 3.4 |

Այսպիսով՝ կարող ենք նշել, որ պետությունները պետք է ԳՀՓԿԱ ծախսերը պատշաճ մակարդակի վրա պահեն, կատարելագործեն ինովացիոն գործունեության խթանման մեխանիզմները: Դրա համար առավելապես պետք է ԱՄՆ օրինակով մեծացնել ԳՀՓԿԱ ծախսերը, խոշոր ներդրումներ կատարել գիտության մեջ, ուժեղացնել համագործակցությունը զարգացած երկրների հետ, ինչպիսիք են՝ Շվեյցարիան, Սինգապուրը, Ճապոնիան, Հարավային Կորեան և այլն, փոխառնել գիտական հատվածի նրանց փորձը: Ինչպես նաև անհրաժեշտ է խթանել ոչ պետական աղբյուրների շահը գիտահետազոտական գործունեության ֆինանսավորման հարցում: Այդ կերպ հնարավոր կլինի ոչ միայն գտնվել զարգացման ինովացիոն ուղու վրա, այլ նաև մրցակցել համաշխարհային առաջատարների հետ:

**Ստացված արդյունքներ**

Հաշվի առնելով թեման՝ հոդվածում բացահայտվել են կրթության և գիտության ոլորտների ֆինանսավորման որոշակի մեխանիզմներ: Դրանց հիման վրա առաջարկվել են կրթության և գիտության ոլորտների ֆինանսավորման խթանման մոտեցումներ, որոնցից հատկապես կարևորվում են՝ գիտակրթական համակարգի զարգացման և կրթության ու գիտության ոլորտների ֆինանսավորման ընդհանուր օբյեկտիվ համակարգվածության և ներդաշնակության ապահովումը, «հանդիպակաց ֆինանսավորման» մեթոդի կիրառումը, ըստ նպատակային գործունեության արդյունավետության և/-կամ մանկավարժական և գիտամանկավարժական (դասախոսական) անձնակազմի մասնագիտական պատրաստվածության աստիճանի ուսումնական հաստատությունների ֆինանսավորման ծավալների որոշումը:

**Եզրակացություն**

Հայաստանի Հանրապետությունում կրթության և գիտության ոլորտների ֆինանսավորման ծավալների ավելացումը մեծապես կարող է նպաստել տնտեսության ինովացիոն զարգացմանը և կրթության, գիտության, բիզնեսի ու պետության փոխգործակցության խորացմանը: Համաշխարհային պրակտիկայում գոյություն ունեն կրթության և գիտության ոլորտների ֆինանսավորման տարբեր մեխանիզմներ: Երկրների մեծամասնությունում պետության կողմից կրթության և գիտության ոլորտների ուղղակի ֆինանսավորումն իրականացվում է որոշակի «ֆինանսավորման բանաձևի» համաձայն: Յուրաքանչյուր երկիր ունի այս բանաձևի իր բովանդակային կառուցվածքը, քանի որ այն ձևավորվում է որոշակի փուլերով և տարաբնույթ ներքին գործոնների ազդեցության ներքո՝ ներառյալ հաստատված պրակտիկան և ազգային մենթալիտետը, սակայն բոլոր երկրներն իրենց «ֆինանսավորման բանաձևերում» պարտադիր հաշվի են առնում շահառուների թվաքանակը և «արդյունքների վրա հիմնված ֆինանսավորման» նպատակահարմարությունը: Վերջինս հատկապես կարևորվում է պետական ֆինանսավորման ծավալների աստիճանական նվազման և ֆինանսավորման այլ աղբյուրների կիրառման պայմաններում:

Հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության տնտեսության զարգացման ներկայիս վիճակը՝ կարող ենք առաջարկել կրթության և գիտության ոլորտների ֆինանսավորման արդյունավետության բարձրացման հետևյալ ուղիները.

- գիտակրթական համակարգի զարգացման և կրթության ու գիտության ոլորտների ֆինանսավորման ընդհանուր օբյեկտիվ համակարգվածության և ներդաշնակության ապահովում,
- ուսումնական հաստատությունների «հանդիպակաց ֆինանսավորման» մեթոդի կիրառում,
- գրանտային ծրագրերով կրթության ֆինանսավորման ծավալների ավելացում՝ բոլոր մասնագիտություններով,
- կրթաթոշակների ավելացում,
- ուսանողների կրթությանը զուգահեռ հեռավար աշխատանքային գործունեության խթանում՝ նրանց կենսամակարդակի բարելավման և կրթության ֆինանսավորմանը որոշակի մասնակցության ապահովման նպատակով,
- ըստ նպատակային գործունեության արդյունավետության և/կամ մանկավարժական և գիտամանկավարժական (դասախոսական) անձնակազմի մասնագիտական պատրաստվածության աստիճանի՝ ուսումնական հաստատությունների ֆինանսավորման ծավալների որոշում,
- կրթության և գիտության ոլորտների ֆինանսավորման արդյունավետության գնահատման գործիքակազմի մշակում,
- կրթության, գիտության, բիզնեսի և պետության փոխգործակցության ակտիվացում,
- կրթության և գիտության ոլորտների ֆինանսավորման արտասահմանյան առաջատար փորձի կիրառում և այլն:

Ամփոփելով՝ անհրաժեշտ է նշել, որ կրթական համակարգի ֆինանսավորման արդյունավետության բարձրացման արտասահմանյան առաջատար փորձի և հոդվածում ներկայացված գործնական առաջարկների կիրառումը կարող է նպաստել ՀՀ գիտակրթական համակարգի մրցունակության բարձրացմանը, ինովացիոն և ներդրումային գործունեության ակտիվացմանը, հասարակության անդամների կենսամակարդակի բարելավմանը և ՀՀ տնտեսության համաչափ և կայուն զարգացմանը:

**Օգտագործված գրականության ցանկ**

1. «Կրթության մասին» ՀՀ օրենք, ՀՀ ՊՏ N12 (78), 14 մայիսի 1999 թ.:

2. «ՀՀ պետական բյուջեի մասին» 2010-2023թթ. ՀՀ օրենքները, https://www.gov.am/am/budget/:

3. Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագիր, Երևան՝ Հոկտեմբեր 2016:

4. Ամենաինովացիոն տնտեսությունների վարկանիշը, https://www.bloomberg.com:

5. 2010-2023 թթ. պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրերով նախատեսված ցուցանիշները, https://www.irtek.am/:

6. Բուհ-երում կիրականացվեն նորարարական ու զարգացման ծրագրեր, https://escs.am/am/news/13439:

7. Батова Б.З., Асланова Л.О., Аликаева М.В., Губачиков А.М. Проблемы финансирования образования в России // Фундаментальные исследования. – 2016. – № 5-3. – С. 546-550.

8. Гаджиев Г. Г., Эскендеров А. Г., Кельбиханова Н. Г. К вопросу повышения эффективности финансирования образовательных учреждений // Известия Дагестанского государственного педагогического университета. Общественные и гуманитарные науки. 2017. Т. 11. № 2. С. 118-121.

9. Кулакова М.Н. Международные модели финансирования вузов и их применения для вузов России в период реформирования системы высшего образования // Территория новых возможностей. Вестник Владивостокского государственного университета экономики и сервиса, 2011. – №1 (10). – С. 51–60.

10. Лукичев Г.А., Филиппов В.М. Системы финансирования высшего образования в зарубежных странах, Учебное пособие, Российский университет дружбы народов, Москва 2008, с. 18-20.

11. Рейтинг стран мира по индексу инноваций 2022, https://gtmarket.ru/ratings/global-innovation-index#democratic-republic-congo.

12. Шадиева Д. Анализ мировых тенденций финансирования инновационной деятельности //Мировое и национальное хозяйство. 2018. № 2. С. 1–8.

13. Шамне А.Н., Переверзева Е.В. Особенности процесса финансирования высшего образования в Германии http://izron.ru/articles/aktualnye-problemy-yurisprudentsii-i-puti-resheniya-sbornik-nauchnykh-trudov-po-itogam-mezhdunarodno/sektsiya-10-administrativnoe-pravo-finansovoe-pravo-informatsionnoe-pravo/osobennosti-protsessa-finansirovaniya-vysshego-obrazovaniya-v-germanii/.

14. How much does your country invest in R&D? - UNESCO Institute for Statistics (UIS), 2023, http://uis.unesco.org/apps/visualisations/research-and-development-spending/.

# ԱՇԽԱՐՀԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՅԱՑՔ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԻՆ

**ՍՄԲԱՏ ԱՂԱՅԱՆ**
ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա
գիտակրթական միջազգային կենտրոն,
տնտեսական գիտությունների թեկնածու
smbatagayan@gmail.com

**Համառոտագիր**

Կարծում եմ, որ ամփոփ եզրակացությունը ավելի հարմար կլինի հետևյալ կերպ ներկայացնել՝

1. Գեոգենեզի փորձաքննության արդյունքներով մենք ևս մեկ անգամ փաստում ենք, որ հոմոսապենսը մարդկության կարճ պատմությունը չէ կամ էլ նրա վաղվա օրվա կարճ պատմությունը, ինչը կարծում եմ, որ հակահումանիզմ է: Այն իր՝ հարաբերություն և վերաբերմունք գեներացնելու շնորհիվ, աշխարհաընկալման անսահման գիտելիք է ձեռքբերում՝ նոր աշխարհակառույցի առանցքում իրեն դնելով:

2. Դիալեկտիկական փորձաքննության արդյունքից կարելի է եզրակացնել, որ Հեգելյան «պահպանողական հեղափոխություն» բացահայտումը և ազատականների կողմից գոյաբանության մերժումը ու վաղանցիկ մոդուսի բացարձականացումը, ժամանակակից աշխարհում դիալեկտիկական հակասությունների այնպիսի հիերարխիա է մտցրել, որը մարդու էության մեջ համընդհանուր կեցության և բիոլոգիզմի միջև է անտագոնիզմ առաջացրել:

3. Տրիոլեկտիկական փորձաքննության արդյունքից կարելի է եզրակացնել, որ ժամանակակից տնտեսագիտության տեսության «հիմնական հոսքերի» դոգմաներից ազատվելու համար, անհրաժեշտ է նեոլիբերալների կողմից մերժված դիալեկտիկական և համակարգային մոտեցումները կյանքի կոչել, որոնք էթնոտնտեսության ձևավորման և վերազգայնացման էությունը, նրա կառուցվածքը, ձևավորման ու գործունեության օրինաչափությունները բացատրող հասկացությունների հիմք կարող են հանդիսանալ:

4. Կվադրոլեկտիկական փորձաքննության արդյունքից կարելի է եզրակացնել, որ ՏՄՔ քաղաքակրթական նոր տարածության փիլիսոփայության պատմական մեկնարկն է, որը զարգացման կոորդինատների տարածական փոփոխության է տանում, որտեղ գրավչության առանցքի ձգտող պետության բոլոր ոլորտները, մեկ միջազգայնացված վերարտադրական

կառույցի հետ են հյուսվելու: Հետևաբար քաղաքակրթական զարգացման նման միտումներին հարմարվելու համար, ազգային միջազգայնացված վերարտադրական միջուկներ է անհրաժեշտ ձևավորվել:

Հոդվածում ձևակերպվում և հիմնավորվում է այն գաղափարը, ըստ որի՝ XXI դարի գիտական ու կրթական գործընթացները պետք է փոխմիահյուսված բարոյականության և բարոյական դիալեկտիկայի վրա հիմնված, ազգի ինքնանույնականացման հարացույցներ գեներացնեն՝ մարդու ու հասարակության հզոր զարգացման համար պայմաններ ստեղծելով: Կարծում եմ, որ դա է միակ այլընտրանքը, որը ոչ միայն նոր քաղաքակրթություններին՝ փոխմիահյուսված էթնոտնտեսական համակարգերին, գոյատևելու հնարավորություն կտա՝ այսօրվա մարդու կրեատիվ բնույթի մեջ գերակայող բիոլոգիզմը չեզոքացնելով, այլ նաև՝ անհրաժեշտության դեպքում համընդհանուր սպառնալիքներին դիմակայելու համար:

**Բանալի բառեր և բառակապակցություններ.** մարդ, պատմականացում, ժամանակակից տնտեսագիտության հիմնական հոսքեր, տեղային մարդկային քաղաքակրթություններ, էթնոտնտեսություն:

# ГЕОЭКОНОМИЧЕСКИЙ ВЗГЛЯД НА ФУНДАМЕНТАЛЬНЫЕ ПРОБЛЕМЫ НАУКИ И ОБРАЗОВАНИЯ

**СМБАТ АГАЯН**
Национальная академия наук Республики Армения
Международный научно-образовательный центр
кандидат экономических наук.
smbatagayan@gmail.com

**Аннотация**

Думаю, было бы удобнее резюмировать вывод следующим образом.

1. Опираясь на результаты экспертизы геогенеза, мы еще раз доказываем, что Homosapiens — это не краткая история человечества или его краткая история завтрашнего дня, что я считаю антигуманистическим. Благодаря своему порождению взаимоотношения и поведения он является достижением бесконечного познания мировосприятия, ставя себя в основу архитектуры нового мироустройства.

2. Из результата диалектической экспертизы можно сделать вывод, что открытие Гегелевской <консервативной революции> и отказ либералов от онтологии и абсолютизация эфемерного модуса внесли в современный мир такую иерархию диалектических противоречий, которая создала антагонизм между всеобщностью и биологичностью в природе человека.

3. По результатам триолектической экспертизы можно сделать вывод, что для избавления от «мейнстрим» догм современной экономической науки необходимо реализовать отвергаемые неолибералами диалектические и системные подходы, которые могут быть положены в основу концепций, объясняющих экономическую теорию. характер формирования и ренационализации этноэкономики, ее структур, закономерности формирования и деятельности.

4. По результатам квадролектической экспертизы можно сделать вывод, что ЛЧЦ – это историческое начало философии нового цивилизационного пространства, ведущее к пространственной смене координат развития, где все сферы государств, стремящиеся к оси привлекательности, будут сплетены вместе с одним интернационализированным воспроизводственным циклом. Поэтому для адаптации к таким тенденциям цивилизационного развития необходимо формирование национальных интернационализированных воспроизводственных циклов.

В статье формулируется и обосновывается идея, согласно которой научно-образовательные процессы XXI века должны формировать закономерности самоидентификации нации на основе переплетения нравственности и нравственной диалектики, создавая условия для мощного развития человека и общества. Я считаю, что это единственная альтернатива, которая не только позволит выжить новым цивилизациям - переплетающиеся этноэкономические

системы, нейтрализации биологизма, преобладающего в творческой природе современного человека, но и при необходимости противостоять общечеловеческим угрозам.

**Ключевые слова и словосочетания:** человек, историцизм, «мейнстрим» современной экономики, локальные человеческие цивилизации, этноэкономика.

# GEOECONOMIC VIEW ON FUNDAMENTAL PROBLEMS OF SCIENCE AND EDUCATION

**SMBAT AGHAYAN**
National Academy of Sciences of the Republic of Armenia
International Scientific-Educational Center
PhD in Economic Sciences
smbatagayan@gmail.com

**Abstract**

1. With the experimental results of Geogenesis, we prove once again that Homosapiens is not a short history of humanity or its short history of tomorrow, which is anti-humanism. Due to generating its relation and attitude, it is an achievement of infinite knowledge of world perception, placing itself in the core of the architecture of the new world structure.
2. It can be concluded from the result of dialectical expertise that the discovery of the Hegelian <conservative revolution> and the rejection of ontology by liberals, and the absolutization of the ephemeral modus, have introduced such a hierarchy of dialectical contradictions in the modern world, which has caused antagonism between universal existence and biologism in human nature.
3. From the results of the triolectic expertise, it can be concluded that in order to get rid of the dogmas of the <main streams> of modern economics, it is necessary to implement the dialectical and systemic approaches rejected by the neoliberals, which can be the basis of the concepts explaining the essence of the formation and renationalization of the ethno-economy, its structure, patterns of formation and activity.
4. From the results of the quadrolectic expertise, it can be concluded that the LHC is a historical start of the philosophy of the new civilizational space, which leads to a spatial change of the development coordinates, where all the spheres of the state striving for the axis of attraction are intertwined with one internationalized reconstruction structure. Therefore, to adapt to such trends of civilizational development, national internationalized reproductive nuclei should be formed.

The article formulates and substantiates the idea that scientific and educational processes of the XXI century should generate patterns of national self-identification based on interwoven morality and moral dialectics by creating conditions for the nation's and society's robust development.

This is the only alternative that will not only allow the survival of new civilizations - intertwined ethno-economic systems, neutralizing the biology prevailing in the creative nature of modern man, but also, when necessary, confront common human threats.

**Keywords and phrases**: Man, historicization, <main streams> of modern economics, local human civilization, ethno-economics.

**Նախաբան**

Այսօր աշխարհատնտեսական տարածությունում տիրող հետճգնաժամային իրադարձությունները, աշխարհատնտեսական նախագծերի նոր տնտեսա-տեխնոլոգիական ճարտարապետությունը ձևավորելու և աշխարհակարգի նոր կանոնները մշակելու շատ բարդ փուլով է բնութագրվում: Այնպիսի նախագծերի նշանակությունն է կտրուկ բարձրացել, ինչպիսին տարածաշրջաններն են, ինչպես ամբողջություն: Հիմնականում իրենց աշխարհատնտեսական նախագծերի՝ վերատադրության կենսունակությունը ապահովելու և արդյունքները սպառելու տարածքների վերաձևելու համար տարածաշրջայնացման այդ գործընթացները արևմուտք-արևելք աշխարհատնտեսական նախագծերի սուր մրցակցությամբ է ընթանում, որը աշխարհատնտեսական պատերազմներ տեղայնացնելով է բնութագրվում: Այստեղ հակամարտող կողմերի հիմնական նպատակը առևտրա-տնտեսական, մենթալ և զինված պատերազմներով, իրենց տնտեսական սահմանների ընդլայնումն է:

Այդ հակամարտությունների հիմքում արևմտյան քաղաքակրթական կոալիցիայի զարգացման մոդելը ոչ ռացիոնալ լինելու հանգամանքն է ընկած, իսկ դա այսօր երկրների ճնշող մեծամասնության մոտ հասարակական կառուցվածքի հիմքն է (այդ թվում նաև Հայաստանում) և արդեն իրեն սպառել է: Այսինքն՝ այդ հանգամանքը, գլոբալ բիոսոցիումի, ինչպես նաև առանձին երկրների առաջ, գոյության էկզիստենցիալ հարցն է դրել: Ի դեպ, այդ հարցը, դեռ ֆինանսա-իրավական մեխանիզմներով և նեոլիբերալ գաղափարախոսությամբ աշխարհընկալման գերիշխանության պայմաններում էր ձևակերպվել, որն այսօր չի տալիս և չի կարող տալ աշխարհընկալման ռացիոնալ պատասխաններ:

Նման աշխարհայացքի գերակայությունը մարդու կրեատիվ բնույթի մեջ բիոլոգիզմ է ակտիվացնում, ինչը գիտա-տեխնիկական առաջընթացի կտրուկ թռիչքի պայմաններում, ամբողջ բազմաշերտ, ազգային, սոցիալական և քաղաքական մարդածին դիֆերենցված համակարգն է դեպի գոյաբանական ոլորտ ճնշում՝ առանձին երկրների պետական կառավարման մոդելի, երկարաժամկետ զարգացման հիմնական օրինաչափությունների, պետական տնտեսական քաղաքականությունում նրանց օգտագործման մեթոդների՝ գոյություն ունեցող կրթական համակարգի վերաիմաստավորման և փոփոխվող աշխարհի մարտահրավերներին մասնագետներին հարմարվելու անհրաժեշտություն առաջացնելով: Սա խնդիր է, որը մենք գլոբալ մարդաբանական աշխարհի, գնահատման և վերլուծության առանցքային

կետ ենք համարում: Հոդվածի նպատակն է՝ հետազոտության առարկա դարձնել տեսական և մեթոդաբանական այն մոտեցումները, որոնք վերոնշյալ հիմնախնդիրների պատճառ են հանդիսացել:

**Տեսամեթոդաբանական կողմը**

Աշխարհատնտեսություն առարկան մարդու գործունեության բոլոր ոլորտների ու նրա բարոյահոգեբանական վիճակի համակեցություն է, գոյության և ռացիոնալ վարքի ամբողջական մոդելի մեջ արտացոլում, ուստի վերոնշյալ խնդրի ուսումնասիրության համար, մենք աշխարհատնտեսության 325 հատկանիշներից **[1, էջ 493]** երեք ենք ընտրել՝ գեոգենեզը, գլոբալ ճանաչողական օպտիկան և գեոլոգիստիկան, որոնք մեր փորձագիտական մեթոդաբանությունում են գործածվելու:

***Աշխարհատնտեսության վերոնշյալ հատկանիշներից առաջինը գեոգենեզն է (Geogenesis)*** **[1, էջ492] –** աշխարհը գիտակցելու, ընկալելու և նկարագրելու տարածա-փիլիսոփայական մեթոդաբանություն է, գլոբալ ուսումնասիրությունների մեթոդաբանության հիմքը, մեկ ամբողջական տարածությունում, ֆունկցիոնալ վկայություններով առանձնացված ենթատարածական ձևերի սինթեզ, մեթոդաբանական նոր պրիզմա է, որի միջով գլոբալացման գործընթացն է դիտարկվում: Գեոգենեզը նոր մեթոդաբանության հիմքն է, ժամանակակից աշխարհի ճարտարապետությունը նորագույն «օպտիկայով» հասկանալու համար: Հենց գեոգենեզն է ժամանակակից աշխարհակառույցը և նրանում մարդու կեցությունը փիլիսոփայորեն իմաստավորելու հնարավորություն ստեղծում:

Այս առումով գոյաբանության մտքի պատմական առանցքից անդրադառնալով՝ կուզենայի նշել, որ մարդու գոյության խնդրի մասին դեռ անտիկ փիլիսոփաները՝ Արիստոտելն ու Պլատոնն են անդրադարձել, սակայն ըստ Մարտին Հայդեգերի - «քանի որ լոգոսի (λόγος'a) գործառույթը ընդամենը ինչ-որ բան տեսնելու կարողության մեջ է, որը գոյություն ունեցողի հանդեպ ուշադրություն է ենթադրում, ապա լոգոսը (λόγος'a) կարող է խելք նշանակել: Եվ քանի որ ասում են (λέγειν), որ լոգոսը (λόγος'a) ոչ միայն նշանակությամբ է գործածվում, ապա այսպես կոչված (λεγόμενον) նշանակության հետ միասին, ասվածն ինչպես այդպիսին է, և քանի որ վերջինս ինչ-որ այլ բան է, ինչպես առարկան (υποκείμενον), ինչը միշտ, ինչի մասին էլ, որ խոսք լինի կամ չլինի, արդեն ինչպես առկայի (այստեղ լինելու) հիմքում է ընկած, այսպես կոչված չորս պատճառի (λόγος qua λεγόμενον) հիմք է համարվում (ratio): Եվ վերջապես, քանի որ այսպես կոչված չորս պատճառները (λόγος

qua λεγόμενον) կարող են նշանակել նաև դիտարկվող ինչ-որ բան, ինչը տեսանելի է դարձել ինչ-որ բանի հետ նրա հարաբերության ժամանակ, դրա հանդեպ ունեցած իր «վերաբերմունքով», ապա լոգոսը (λόγος) հարաբերություն և վերաբերմունք նշանակությունն է ստանում» [**2, էջ25**]: Ահա այսպես է Հայդեգերը լոգոսի առաջնային գործառույթը գիտականորեն հիմնավորում:

Այսինքն, ըստ Մարտին Հայդեգերի, մարդն ինչպես տեսակ լոգոսով է ստեղծվում շնորհիվ մտածողության: Հետևաբար այն ինչ-որ մենք ունենք, մարդու մտածողության բացառիկ հատկանիշ է համարվում: Եվ ահա լոգոսվ օժտված մարդն է իր ամբողջ էությամբ մարդ դառնում: Այսինքն՝ լոգոսն է մեզ մարդ դարձնում. լոգոսը մտքի այն կառուցվածքն է, որով մենք արարում և աշխարհին ենք ստեղծագործում: Քանի որ, ըստ Հայդեգերի, աշխարհը մեզ չի տրվել որպես բացառիկ երևույթների հանրագումար, այլ այն զգացողություններով, ցրված մասերով և կտորներով է տրված: Եվ աշխարհի ամբողջականության մասին պատկերացումներով ու նկարագրելու կարողություններով մարդը պետք է այն ստեղծի: Այսինքն՝ մարդը աշխարհի մասերը ինչ-որ իմաստաբանական կառուցվածքի մեջ հավաքելու՝ գիտելիք ձևավորելու կարողությամբ է աշխարհը ստեղծագործում, աշխարհը արարում:

Հետաքրքիր է նաև գիտության մասին Հայդեգերի մոտեցումը, «ընդհանուր առմամբ գիտությունը կարելի է որպես իրական հանգամանքների հիմնավորված փոխգործողությունների հանրագումար սահմանել: Այդ սահմանումը նույնպես ամբողջական չէ, և այն այնքան էլ չի համապատասխանում գիտության ներքին բովանդակությանը: Գիտություններն, ինչպես մարդկանց վարքի ձևեր, այդ գոյություն ունեցողի (մարդու) համար լինելու հատկություն ունեն» [2, էջ14]:

Այսինքն՝ գիտությունը, ըստ Հայդեգերի մետաֆիզիկական տրամաբանության, անսահման է, որովհետև կախված մարդու գիտելիքի մակարդակից, անսահման են նրանում բոլոր դրույթները, քանի դեռ պարզված չեն այնտեղ եղած դրույթների հարաբերություններն ու վերաբերմունքները: Հայդեգերյան նման մոտեցումը նաև լոգոսի առեղծվածայնություն է բացում, ճշմարտություն կուտակելու մարդու անսահման կարողությունը: Ինչի համար էլ Հայդեգերը այն միայն մարդուն է բնորոշ համարում որպես նրա հոգևոր գործունեության ձև: Այսինքն՝ այդ հոգևոր գործունեության ժամանակ մարդը բնության, հասարակության և ինքնաճանաչողության մասին գիտելիք արտադրելու և ուղղակիորեն ճշմարտությանը հասնելու և հասարական օրենքները բացահատելու նպատակ է հետապնդում: Եվ քանի որ այդ

հոգևոր գործունեությունը մեր գիտակցությունում ինչ-որ միասնական բան ձևավորելուն է կոչված, ապա միաժամանակ նաև կրթությունն է աշխարհաընկալմանը ծառայեցնում: Քանի որ կրթության գործընթացում մարդու մոտ նոր աշխարհայացք և ինքնաճանաչողություն է զարգանում: Ապա կարելի է ասել, որ գիտականորեն բացահայտված աշխարհաընկալումն է աշխարհը և նրանում տեղի ունեցող փոփոխությունները ընկալելու հնարավորություն տալիս:

***Աշխարհափնփեսական երկրորդ հափկանիշը Գլոբալ ճանաչողական՝ «օպփիկան» է (Globalistic optics)*** **[1, էջ113]** – այն ժամանակվանից, երբ մարդն իրեն և աշխարհը սկսեց գիտակցել, նրան շրջապատող աշխարհը, աշխարհը շոշափելու և աշխարհը ընկալելու բազում հնարավոր մոդելներ կառուցվեցին: Իսկ հետո - այդ աշխարհաընկալման «ձևակերպումը», «հիմնարար հենասյուների» որոնումը և նրանց վրա աշխարհակառույցի տեսական և մեթոդաբանական կարկասը: Կարճ ասած, այն մեթոդաբանություն է՝ ժամանակակից աշխարհը հասկանալու և հիմնական մեկնարկներն ու սկզբունքները ցուցադրելու համար: Նման աշխարհակառույցներից մեկը դիալեկտիկական հիմքերի վրա և բարոյականության հրամայականով է ձևավորվելը:

***Դիալեկփիկան*** - աշխարհը որպես գծային-հարթություն ընկալելու ամենավառ մոտեցումներից մեկն է: Ինչպես նաև բնության, հասարակության և գիտակցության զարգացման առավել ընդհանուր օրենքների մասին գիտություն, որը աշխարհակառույցի հիմքում երկու հիմնարար դրույթներ է դրել՝ 1) դիխոտոմ (երկչոտ) ընդդիմություն, այսինքն՝ երկուսի առկայությունը, սակայն ինչ-որ գործընթացի մեջ միմյանց հակասող բաղկացուցիչ մասեր, 2) զարգացման գաղափարը: Զարգացման ներքին աղբյուրը հակադրությունների միասնության և պայքարի մեջ է դիտարկվում (համակարգի մասերի, բլոկների և այլն): Դա էլ հենց իրականությունը գիտակցելու և ձևավորելու տեսության և մեթոդի հիմքում է ընկած: Այստեղ իրականությունը հակադիր շարժումների մեջ է դիտարկվում, սակայն պարտադիր դարերի, իրադարձությունների և այլնը ցուցադրող գծային աճի տեսքով:

Այսպիսով՝ մեր փորձագիտական օպտիկայի կիզակետում Ալեքսանդր Դուգինն է, որն, իր «Աշխարհաքաղաքականության հիմունքները» աշխատությունում պատմականության և ժամանակի անխզելի կապը իմաստավորելով, նշում է, որ կեցությունը ժամանակի միջոցով իմաստավորելու արդյունքում, մենք կարող ենք երեք անհավասարաչափ տարբերակներ ստա-

նալ, որոնք, իրենց հերթին, աշխարհաընկալման շրջանակներում երեք կողմնորոշիչներ են կանխորոշում [3, էջ 584]:

Մի դեպքում պատմությունը որպես կեցության կուտակում է դիտարկվում, ինչպես գոյաբանության և իմացաբանության մշտական լրացում: Այն գումարային առումով կարելի է «Պահպանողական պատմականություն» անվանել, որի վառ օրինակը Հեգելի փիլիսոփայության մեջ է արտահայտվում: Նման առաջադիմությունում անցյալը երբեք չի արժեզրկվում, սակայն ինչպես իրականության նախնական փուլ է դիտարկվում **[3, էջ 585]:**

Երկրորդ գիծը – ֆուտուրիստականն է: Այն որպես առաջին տարբերակի բացարձականացում է հանդես գալիս, սակայն նրանում իրական գոյաբանությունը ոչ թե գոյության աստիճանաբար կուտակում է ենթադրվում, որի հետևանքով միաժամանակ ինչ-որ գոյություն ունեցողի իրականության (օրինակ՝ Բացարձակ գաղափարների մոդուսում) նախապատմական ձևն է պոստուլատացվում, *այլ դեպի ամբողջական գոյաբանության ձգտող չբավարարված (պարրական) գոյության պատմական գործընթացը՝ ապագային վերագրվածը:*

Պատմականության երրորդ տարբերակը ամենահետևողական և արմատական է հանդիսանում: Այստեղ միայն *վաղանցիկը, ակնթարթայինը, րոպեականն է* իրական թվում: Անցյալն ու ապագան բացարձակապես ապագոյաբանականացվում են, և ամբողջ իրականությունը դինամիկ փոփոխվող «արդիականության» պահի վրա է հենվում: Ի տարբերություն պահպանողական պատմականության՝ պատմությունը իմաստավորելու ակտն այստեղ որպես բացասական ընթացակարգ է ընկալվում, քանի որ պատկերացումը գոյության հանդեպ հակասական է դիտարկվում: *Դա բացառապես այն է, ինչը դեռ պատկերացում չի դարձել, ինչն էլ մաքուր նախագոյաբանության վաղանցիկ, րոպեյական ի հայտ գալն է, անմիջական փորձն է, էվրիստիկ տպավորությունների բխումն է* **[3, էջ 585]:**

Այնուհետև Դուգինը առանձին-առանձին քննարկում է պատմականության վերոնշյալ տարբերակները: Եվ նշում, որ պատմականացումն ինչպես փիլիսոփայական մոտեցում կամ մետա-մոտեցում, ինչպես անուղղակի ֆոնային սարք, միևնույն է, պատմություն ունի: *Այդ պատմությունը ժամանակի անթոլոգիական հասկացության բևեռից դեպի ապաանթոլոգիական բևեռ հասկացություն է շարժվում*: Եվ այդ գործընթացը աստիճանաբար ինտեսիվացվում է, *փիլիսոփայության խնդիրը պատմականացման և ապապատմականացման հակադրությունից դեպի գոյաբանությամբ ծանրաբեռնված պատմականության և պատմականության ընդիմախոսների այնպիսի*

*դաշտ է տեղափոխվում, որում ապագոյաբանությունն է բացարձականացվում* **[3, էջ 586]:**

Այստեղ անհրաժեշտ է՝ նշենք, որ արդիականության հասկացությունը այնքան ընդհանուր և ունիվերսալ է դառնում, որ որոշ ոչ հեռատես փորձագետներ, համաշխարհային սոցիալիստական համակարգի փլուզումից հետո պատմության ավարտի և ազատականատենչ գաղափարախոսության տոնախնդության մասին սկսեցին հապճեպ հայտարարել, սակայն ընդամենը մի քանի տասնյակ տարիներից հետո պարզվեց, որ այդ համակարգի առանցքը ընդամենը դեպի ՉԺՀ է տեղափոխվել, այն դեպքում երբ հավերժ թվացող «Pax Americana» համաշխարհային ֆինանսական ճգնաժամի էպիկենտրոնում է հայտնվել, որը ամբողջովին կարող է աղետի վերածվել:

Վերոնշյալ վերլուծության կարևորությունը նրանով է պայմանավորված, որ հստակ հասկանալի դառնա այն, որ ցանկացած ժողովրդի պատմություն մտացածին հեքիաթ չէ, այլ նրա կենդանի կապն է իր բնօրրանի հետ: Հետևաբար մենք այստեղ պետք է հստակ հասկանանք նաև, որ ցանկացած գիտական թեզ կամ որոշում իր օրինաչափ զարգացման՝ պատմականության և ժամանակի սերտ փոխմիասնության շրջանակներում կատարված գիտական բացահայտումների հիման վրա է իմաստավորվում: Ինչից բխում է, որ ցանկացած օրիգինալ՝ ֆուտուրիստական - *վաղանցիկ, ակնթարթային, րոպեական* թեզ կամ որոշում պետք է զարգացման օրինաչափ բնույթին համապատասխանող լրացում լինի: Հակառակ դեպքում մենք իրականության հետ տեսության անհամապատասխանությանն ենք հանգելու, որը միշտ կառավարման ձախողումների է հանգեցնում: Այսինքն՝ կառավարման օբյեկտի  վրա (մասնավորապես՝ տնտեսական համակարգի վրա) կառավարչի ոչ իրատեսական՝ սուբյեկտիվ ազդեցությունն ենք ունենալու:

***Գլոբալ ճանաչողականության օպտիկայի երկրորդ բաղադրիչը Տրիոլեկտիկան է*** *(եռաչափ փորձաքննություն):* Այստեղ մենք ոչ միայն աշխարհակառույցի գծային-հարթության բաժանման շեմին ենք կանգնած, այլ նաև, «տրամաբանորեն անհրաժեշտ» ամեն-ինչի հանդեպ կասկածանքով զինվելու (Կանտական պարտավորությունների կատեգորիկ հրամայականն է), գլոբալացվող աշխարհը գիտակցելու փիլիսոփայական նոր մակարդակ, նրա նոր, տարածա-ծավալային մոդելի ընկալման ենք դուրս գալիս՝ գեոգենեզին: Այդ ճանապարհի առաջին քայլը գծային-հարթության մոդելում նոր բաղադրիչներ հյուսելով ներմուծելն է: Այստեղ մեր փորձագիտական հայացքը Ռուսաստանի գիտությունների ակադեմիայի անդամ, Ակադեմիկոս Սերգեյ Յուրևիչ Գլազևի տնտեսության զարգացման նեոդասական մտքի «հիմ-

նական հոսքերի» մասին երեք աքսիոմներին է ուղղված **[5, էջ 10]:** Նշեմ նաև, որ այստեղ օրինաչափությունները, մենք բնագիտական պրիզմայի միջով ենք նայելու, ոչ թե գաղափարախոսական:

Այսպիսով՝ տնտեսագիտական մտքի «Հիմնական հոսքերին» (անգլ.՝ main stream —հիմնական հոսքեր) անդրադառնալով՝ Ս. Գլազևը նշում է, որ նրա «միջուկը», այսպես ասած, նեոդասական տեսություն է հանդիսանում, որը մարդու ռացիոնալի վարքի (նպատակային գործառույթը առավելագույնի հասցնելու) և տնտեսության հավասարակշռված իրավիճակի մասին ենթադրության վրա է հիմնվում: Մինչ 1970 թվականի ավարտը «Հիմնական հոսքերի միջուկը» քենսիականն էր հանդիսանում, որը հետագա տասնամյակների ընթացքում իր տեղը Չիկագոյի մոնետարիստական (նեոլիբերալներին՝ «Ետդարձ դեպի Ադամ Սմիթ» կարգախոսով) դպրոցին (Չիկագոյի համալսարանին) զիջեց, իսկ հետո, այսպես ասած, «նոր դասական մակրոտնտեսագիտությանը» (նեոդասական հիմքերով մակրոտնտեսագիտություն): 1980 թվականներին «Հիմնական հոսքերը» իր մեջ նոր ինստիտուցիոնալիզմ ներգրավեց – նեորդասական գործիքակազմի օգնությամբ ինստիտուցիոնալ խնդիրների հետազոտություն: «Հիմնական հոսքերին» է վերագրվում նաև «նեոդասական սինթեզ» անունով նեոքենսիականի մի մասը: Վերջում նշում, որ «Հիմնական հոսքերի» հիմնական բաղադրիչը արդեն բավական երկար ժամանակ է, ինչ մոնետարիստական է մնում, որը իր մակրոտնտեսական քաղաքականության հիմնական գործիքը փողն է համարում **[4, էջ 16]:**

Այսպիսով՝ տնտեսական հավասարակշռվածություն դոկտրինայի առաջին աքսիոման, ըստ Ս. Գլազևի, այսօրվա գերակայող նեոդասական հարացույցի տնտեսագիտության հիմքում է ընկած, որը ազատ մրցակցության սկզբունքն է հռչակում: Համաձայն նրա՝ տնտեսությունում տնտեսվարող սուբյեկտները բացարձակ ինքնավար են և շուկայի այլ մասնակիցներից կախված չեն, նրանցից ոչ մեկը չի կարող գնի վրա ազդել, որը շուկայում պահանջարկի և առաջարկի տարերայնորեն ստեղծված արդյունքում է ձևավորվում: Իրականում ազատ մրցակցություն երբեք և ոչ մի տեղ չի դիտարկվել: Քանի որ շուկայական տնտեսության ձևավորումը բազմաթիվ մենաշնորհների և պետական սահմանափակումների պայմաններում է իրականացվում [4, էջ 19]:

Ըստ երկրորդ աքսիոմի - տնտեսական գործակալը բացարձակապես ռացիոնալ է, այսինքն՝ նա իր բոլոր որոշումները և նրանց հետևանքները, գործողությունների ճիշտ ընկալման հիման վրա է ընդունում, շահույթը ա-

ռավելագույնի հասցնելուց ելնելով: Թվում է, թե նման է իրականությանը, սակայն իրականությունում տնտեսական գործակալներն իրենց նման ձևով չեն դրսևորում: Յուրաքանչյուր կառավարիչ ձգտում է մրցակցությունից խուսափել, այսինքն՝ այն, ինչը-որ տեսությունում նորմ է համարվում, իրականությունում անոմալիա է: Շուկայում ցանկացած ֆիրմա մոնոպոլ դիրքերի է ձգտում և մրցակիցների հետ ձգտում է համաձայնության գալ այն բանի մասին, որ ռիսկերը նվազագույնի հասցնի և իր հնարավորությունները մեծացնի: Իրական տնտեսական միջավայրում ձեռնարկատերերի կողմից որոշումներ ընդունելու չափանիշը, շուկայում գոյատևելու անհրաժեշտությամբ է ընդունվում և ընթացիկ շահույթի մեծացման վրա չի հիմնվում **[4, էջ 20]:**

Ըստ երրորդ աքսիոմի (ապրանքներ և ծառայություններ արտադրելու համար գոյություն ունեցող տեխնոլոգիական և ռեսուրսային հնարավորությունների մասին տնտեսվարող սուբյեկտների բացարձակ տեղեկացվածության մասին է)՝ ինչը ավելի քիչ է իրականությանը համապատասխանում: Քանի որ յուրաքանչյուր օր տնտեսությունում նոր տեխնոլոգիաներ են առաջանում և ներդրվում, նոր ռեսուրսային հնարավորություններ են առաջանում: Շուկայական միջավայրն է մրցակիցների, գործընկերների, պետության իշխանական մարմինների, սոցիալական խմբերի չկարգավորվող գործողությունների շնորհիվ մշտապես փոխվում: Ձեռնարկատերերն ու կառավարիչները անորոշության պայմաններում են ապրում: Իրական կյանքում նրանք շահույթը առավելագույնի հասցնելու համար ոչ թե օպտիմիզացման մոդելով են գործում, այլ՝ որոշումների ընդունման հաստատված ընթացակարգերով **[4, էջ 20]:**

Այսպիսով՝ գործարարի, տեխնոլոգիայի և կապիտալի նկատմամբ եռաչափ փորձաքննության սկզբունքները պահպանելով՝ Սերգեյ Գլազևը նշում է, որ հիմնարար աքսիոմաները, որոնց վրա տնտեսական տեսության «Հիմնական հոսքերն» են կառուցվում - դա տնտեսվարող սուբյեկտների բացարձակ ռացիոնալություն է, ազատ մրցակցություն է, ամբողջական տեղեկացվածություն է - իրականությունը չեն արտացոլում: Ինչը համապատասխանաբար և ակնհայտ ապացույց է համարվում այն բանի, որ շուկայական մրցակցության ազդեցության տակ, տնտեսական համակարգը հավասարակշռվածության իրավիճակի է ձգտում, որում ռեսուրսների օպտիմալ օգտագործում է ձեռքբերվում, նույնպես իրականությանը չի համապատասխանում: Տնտեսական հավասարակշռվածության իրավիճակ երբեք ձեռք չի բերվում ոչ միայն այն բանի համար, որ բացարձակ մրցակցություն չի լինում: Այլ նաև, նախևառաջ, այն բանի համար, որ տնտեսությունը, ստեղծա-

գործական միջավայր է, որում առավել մեծ քանակով դեմքեր են գործում և յուրաքանչյուր րոպե նոր տեխնոլոգիաներ են առաջանում՝ մշտապես փոփոխություններ գեներացնելով: Այսինքն՝ տնտեսագության «հիմնական հոսքերի» անպիտանությունը նրա գաղափարախոսական գործառույթի հետ է կապված, ուստի լայն հանրությանը անհրաժեշտ է բացատրել, որ հասարակությունը բանականությամբ է կառուցված և վերջ: Եվ այն, ինչ մենք ունենք, բանական կառավարման համակարգի միջոցով է ստեղծվել:

***Գլոբալ ճանաչողականության օպտիկայի երրորդ բաղադրիչը Կվադրոլեկտիկան է*** *(քառաչափ փորձաքննությունը):* Այստեղ աշխարհի ամբողջականությունն է ամբողջովին բացահայտվում, եթե մենք իմացության գիտական մեթոդին ևս մեկ վեկտոր ավելացնենք – քաղաքակրթական: Ապա քառաչափ փորձաքննությունը մեզ հասկանալու հնարավորություն կտա այն բանի, թե ինչպես է համաշխարհային համակարգը քաղաքակրթական մակարդակում ներդաշնակեցման ուղիներ գտնում: Այստեղ քաղաքակրթական հասկացությունը մենք միջազգային հարաբերությունների (ՄՀ) կոնտեքստում ենք դիտարկելու:

Այսպիսով՝ XXI դարում պետությունների և ազգերի միջև հարաբերությունները աստիճանաբար միջքաղաքակրթական հարաբերությունների ոլորտ են տեղափոխվում: Հատկապես դա XX դարի վերջում Ս. Հանթինգտոն ու Ա. Տոյբին են հիմնավորում և մանրամասնորեն դրա մասին գրում: Մասնավորապես, Ս. Հանթինգտոն իր աշխատությունում գրում է, որ «Համաշխարհային քաղաքականության դաշտում հիմնական խաղացողները ազգային պետություններն են մնում … Պետությունների առավել կարևոր խումբը արդեն ոչ թե սառը պատերազմի ժամանակահատվածի երեք բլոկներն են հանդիսանում, սակայն, կարծում եմ, յոթ կամ ութ հիմնական համաշխարհային քաղաքակրթությունները» **[6, էջ15]:** Այլ խոսքերով ասած՝ ՄՀ սուբյեկտ համարվող պետություններն արդեն տեղային մարդկային քաղաքակրթությունների (ՏՄՔ) ու նրանց կոալիցիաների են փոխակերպվում, որոնք, ըստ էության, ՄՀ նոր սուբյեկտների են վերածվում՝ ՄՀ համակարգում առավել կարևոր դեր խաղալով, իսկ դա նշանակում է, որ նորագույն սուբյեկտների առաջացումը նոր քաղաքակրթական-մշակույթի ստեղծման հիմք է դառնում: Եվ այս եզրակացությունը մենք չենք կարող հաշվի չառնել: Քանի որ, օրինակ՝ 2015 թ. Արևմտյան քաղաքակրթական կոալիցիան իր կողմից ավելի քան 50 պետությունների հետ միությունների և երկկողմանի համաձայնագրերի համակարգ էր ստեղծել **[7, էջ 3]**, իսկ 2021 թ. հուլիսի 2-ին ԱՄՆ աշխարհի ավելի քան 130 երկրների հետ համաշխարհային կորպորա-

տիվ նվազագույն հարկ սահմանելու համաձայնագիր կնքեց: Իսկ սա արդեն ժամանակակից Արևմտյան քաղաքակրթական կոալիցիայի կամ արևմտյան տեղային քաղաքակրթության աշխարհատնտեսական էքսպանսիոն էությունն է **[1, էջ 495]:**

Այս առումով, եթե մենք այն փոփոխությունները, այն էական բաղադրիչները առանձնացնենք, որոնք այսօրվա հետխորհրդային տարածության քաղաքակրթական մակարդակում են տեղի ունեցել, ապա որպես օրինակ կարելի է Ուկրաինայում «Նարջնագույն հեղափոխությունը», Հայաստանում «Ոչ բռնի, թավշյա հեղափոխությունը» համարել: Քանի որ այդ բոլոր հեղափոխությունները վերոնշյալ պետություններում բողոքական էթիկայով ՏՄՔ ձևավորելու արդյունքում են տեղի ունեցել: Մասնավորապես, Հայաստանում «Ոչ բռնի, թավշյա հեղափոխությունը» իրականում Արևմտյան քաղաքակրթական կոալիցիայի աշխարհատնտեսական էքսպանսիա է: Քանի որ այն քաղաքացիական հասարակություն ձևավորելու և օժանդակության տարբեր ծրագրերի միջոցով ՀՀ բնակչության մի որոշ հատվածին ընդհանուր արժեքների համակարգով (հիմնականում բողոքական էթիակայի), պատմական ժառանգությամբ և ընդհանուր ապագայի տեսլականով միավորելու ձգտումներով է բնութագրվում: Այսինքն՝հայ հասարակության մի մասին իրենց սոցիալական դիրքերից պոկելու, անորոշության մեջ գցելու, հայ մարդու կեցությունը օտար հրահանգներից կախվածության մեջ պահելու համար, որոնք 2018 թ. քաղաքակրթական բախումների տանող կարքախոսների և սոցիալական բունտի միջոցով ազգային պետության դեմ դուրս եկան:

Այսպիսով՝ վերոնշյալ օրինակից կարելի է եզրակացնել, որ Արևմտյան քաղաքակրթական կոալիցիան, ՏՄՔ իր աշխարհաատնտեսաական նախաագծերը արդարացնող աշխարհաքաղաքական գործիքի է վերածել՝ կասկածի տակ դնելու այն ամենը, ինչը-որ արժեհամակարգերին է վերաբերում: Ինչի արդյունքում համաշխարհային համակարգի քաղաքակրթական միջավայրում այնպիսի ինստիտուտներ են կասկածի տակ դրվում, ինչպիսիք ազգային պետություն է:

***Աշխարհապնպեսության երրորդ հապկանիշը Գեոլոգիսպիկան է (Geologistics)*[1, էջ 92]** – տրամաբանություն է գլոբալ չափադրումներում, որի դեպքում գլոբալ կոորդինատներում գտնվող մասնավոր տրամաբանական համակարգերն են հարաբերակցվում, ինչպիսին աշխարհատնտեսականն է, աշխարհաֆինանսականն է, աշխարհաքաղաքականն է, ռազմա-ստրատեգիականն է, աշխարհատեղեկատվականն է: Կարճ ասած, գեոլոգիստիկան

իր յոթ դրույթներով բարդ համակարգերին հարմարվելով գոյատևելու փիլի-սոփայություն է, հումանիտար գիտելիքների միջառարկայական ոլորտ:

Այս առումով, եթե այն ամենը, ինչ վերոնշյալում քննարկվեց, հատկա-պես քաղաքակրթական առումով, որը անմիջական պատճառահետևանք-նային կապ ունի նախորդների հետ, ապա կարելի է ասել, որ այսօրվա լար-վածությունը, ավելի ճիշտ կլիներ ասել գոյություն ունեցող լարվածության ուժգնացումը, որը աստիճանաբար գլոբալ հակամարտության վերածվելու միտումներով է բնութագրվում: Կարելի է հետևյալ կերպ ձևակերպել - նման քաղաքակրթական լարվածություններ պատմության ընթացքում միշտ էլ եղել են, սակայն ավելի շուտ լատենտ տեղայնացված ձևերով, քան բացա-հայտ, սակայն այն իրականությունը, որը, որ մենք աշխարհատնտեսական փորձագիտական մեթոդներով կարողացանք ինչ-որ չափով ամբողջակա-նացնել: Ըստ Գեոլոգիստիկ տրամաբանության՝ արձանագրում է այն, որ մենք համաաշխարհային մի հավասարակշռվածությունից մեկ այլ հավասա-րակշռվածություն ենք անցում կատարում, ինչը այդ քաղաքակրթությունների միջև լարվածության աճի է տանում, ինչպես նաև Հայ և Թուրք-Ադրբեջանա-հակամարտությունը: Եվ ինչպես համաաշխարհային պատմության տրամա-բանությունն է ցույց տալիս, այն երբեք անցավ չի եղել և շատ սուր հակա-մարտություններով է ուղեկցվել: Եվ այն միշտ ոչ թե կարճ, այլ երկարաժամ-կետ է ընթացել՝ մի քանի տասնյակ տարիներ զբաղեցնելով:

**Օգտագործված գրականության ցանկ**


1. Кочетов Э.Г Геоекономика. Освоение мирового экономического пространства: Учебник для вызов. – М.: Норма, 2006. – 528 с.: ил.
2. Хайдеггер М. Бытие и время / М. Хайдеггер; Пер. с нем. В.В. Бибихина. — Харьков: «Фолио», 2003. — 503, [9] с. — (Philosophy).:
3. Основы геополитики. Геополитическое будущее России. Мыслить Простанством – Изд.3-е, доплон., Москва, “АРКОГЕЯ-центр”, 1999-928 стр.
4. Управление развитием экономики : курс лекций / С. Ю. Глазьев. — 2019. — 759.
5. Определение приведено на основе: Маршев В.И. История управленческой мысли. М.: Проспект, 2016. С. 10.
6. *Хантингтон С.* Столкновение цивилизаций [пер. с анг. Т. Велимеева]. — М.: АСТ, 2016.
7. National Security Strategy. — Wash.: GPO, 2015. February.

# ՍՏՈՐԱԳՅԱԼԻ ՏԵՍԱԿՆԵՐՆ ԱՆԳԼԵՐԵՆԻ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՆ ՄԵՋ

**ԳՈՀԱՐ ԳՐԻԳՈՐՅԱՆ**
ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա
Գիտակրթական միջազգային կենտրոն
Օտար լեզուների ամբիոնի վարիչ,
բանասիրական գիտութոունների թեկնածու, դոցենտ
Gohar.grigoryan@isec.am

**Համառոտագիր**

Լեզուն իրացվում է խոսքի միջոցով, այսինքն՝ խոսքը լեզուն է գործածության մեջ: Այն իրականացվում է կապակցված հաղորդակցության միջոցով, հիմնականում՝ նախադասության տեսքով: Նախադասության բոլոր բառերը քերականորեն կապված են միմյանց, այսինքն՝ ենթարկվում են քերականական ձևափոխությունների՝ մտքեր ու զգացմունքներ արտահայտելու համար: Քերականության՝ որպես գիտության հիմնական օբյեկտը լեզվի քերականական կառուցվածքն է, այսինքն՝ բառերի քերականական ձևերի փոփոխությունը կարգավորող օրենքների համակարգը: Լեզվաբանության մեջ ժամանակակից քերականության տեսությունը անընդհատ է զարգանում: Ամբողջ աշխարհում լեզվաբաններն անգլերենն դիտարկում են տեսական քերականության տեսանկյունից, ուստի շատ կարևոր է այս թեմայի ուսումնասիրությունը:

Նախադասությունը քերականության ամենաբարդ և հետաքրքիր մասն է: Նախադասությունը հաղորդակցության այն ամբողջական միավորն է, որի միջոցով երկխոսության ընթացքում կատարվում է տեղեկատվության ուղղակի փոխանցում խոսքից մինչև ունկնդրում:

Նախադասության կառուցվածքը՝ որպես հաղորդագրության ամբողջական միավոր, ձևավորվում է բառերի քերականական զուգորդմամբ, որն էլ ունի իր նշանային բնույթը: Նախադասությունը՝ որպես լեզվի միավոր, կատարում է երկու էական նշանային գործառույթ՝ ենթակայական կամ անվանական, և ստորոգելական կամ համաձայնական:

Ստորոգման գործառույթը իրականացվում է ստորոգյալի միջոցով:

Ստորոգյալը՝ որպես նախադասության անդամ, միշտ էլ եղել է գիտնականների հետաքրքրության կենտրոնում, և վերջինիս ուղղությամբ տարվող ուսումնասիրությունները դեռևս շարունակվում են:

Հոդվածի նպատակներն են՝

- ներկայացնել ստորոգյալը՝ որպես նախադասության հիմնական անդամ, նրա սահմանումը և տեղը նախադասության մեջ,
- ուսումնասիրել ստորոգյալի կառուցվածքային դասակարգումը,
- իրականացնել գործնական հետազոտություն՝ նախադասության մեջ օգտագործելով ստորոգյալի տարբեր տեսակներ,
- հնարավորինս համակարգել ստորոգյալի վերաբերյալ աղբյուրները մեկ ուսումնասիրության մեջ դասերի ընթացքում ուսանողներին տրամադրելու նպատակով:

Հետազոտությունն իրականացվել է փաստաթղթերի ուսումնասիրության և աղբյուրագիտական մեթոդներով:

**Բանալի բառեր և բառակապակցություններ.** քերականության տեսություն, կառուցվածքային դասակարգումներ, ստորոգյալիբ տեսակներ, հաղորդակցական միավոր, գործնական հետազոտություն:

# ТИПЫ СКАЗУЕМЫХ В АНГЛИЙСКОМ ПРЕДЛОЖЕНИИ

**ГОАР ГРИГОРЯН**
Заведующая кафедрой иностранных языков МНОЦ НАН РА
кандидат филологических наук, доцент
Gohar.grigoryan@isec.am

**Аннотация**

Язык реализуется через речь, т.е. речь - это язык в употреблении. Он реализуется посредством связных высказываний, главным образом в форме предложений. Все слова в предложении грамматически связаны. Это означает, что они модифицируются и соединяются вместе для выражения мыслей и чувств. Основным объектом грамматики как науки является грамматический строй языка, т.е. система законов, управляющих изменением грамматических форм слов. Развитие области грамматической теории модема в лингвистике имеет прогрессивный характер.

Лингвисты всего мира изучают английский язык с точки зрения теоретической грамматики, поэтому очень важно изучать этот предмет. Предложение - самая сложная и интересная часть грамматики. Оно представляет собой целостную коммуникативную единицу сообщения, то есть такую единицу, с помощью которой осуществляется непосредственная передача информации от говорящего к слушающему в процессе речевого общения. Структура предложения как целостной единицы сообщения формируется грамматической ассоциацией слов, и эта связь имеет свой знаковый характер. Предложение как единица языка выполняет две важнейшие знаковые функции: субъективную, или номинативную, и установочную, или предикативную. Предикативная функция реализуется с помощью предиката. Тема статьи актуальна, потому что предикат как член предложения до сих пор изучается различными учеными, и исследование все еще продолжается. интерпретировать сказуемое как главный член предложения, его определение, место в предложении. В ходе работы над статьей были поставлены следующие цели. Методы исследования -метод анализа документов и метод источников.

- изучить структурные классификации сказуемого,
- провести практическое исследование, используя различные типы сказуемого в предложении.
- проводить практические исследования, используя различные типы сказуемого в предложении.
- в какой-то степени систематизировать источники о предикатах в одном исследовании, чтобы поделиться ими с учениками на уроках.

**Ключевые слова и словосочетания:** грамматическая теория, структурные классификации, типы предикатов, коммуникативная единица, практическое исследование.

# TYPES OF PREDICATES IN THE ENGLISH SENTENCE

**GOHAR GRIGORYAN**
National Academy of Sciences of the Republic of Armenia
International Scientific-Educational Center
Head of the Chair of Foreign Languages
PhD in Philological Sciences, Associate Professor
**Gohar.grigoryan@isec.am**

**Abstract**

Language is realized through speech, i.e., speech is language in use. It is exercised through connected communications, chiefly in the form of sentences. All words in a sentence are grammatically connected. It means they are modified and joined together to express thoughts and feelings.

The main object of grammar as a science is the grammatical structure of the language, i.e. the system of laws governing the change of grammatical forms of words.

The development of the modem grammatical theory domain in linguistic science has a progressive character.

Linguists worldwide study the English language from the point of view of theoretical grammar, so it is essential to study this subject.

The sentence is the most complex and interesting part of grammar. It represents the whole communicative unit of the message, a unit through which direct transfer of the information from speaking to listening is carried out during the speech dialogue.

The structure of the sentence as a complete unit of the message is formed by the grammatical association of words, and this association has its sign character.

The sentence as a unit of a language carries out two essential sign functions: subjective or nominative and predicative or adjusting. The predicative function is realized through a predicate. The article's theme is up-to-date because various scientists still study the predicate as a sentence member.

The article deals with the use of different types of predicates in the English language.

The following objectives were set throughout the article.

- to interpret a predicate as a principal member of a sentence, its definition, and its place in a sentence,
- to study the structural classifications of the predicate,
- to do practical research by using different predicate types in a sentence.
- to systematize to some extent the sources about predicate in one research to share it with students in the lessons.

The research has been carried out through the document analysis method and source method.

**Keywords and phrases:** grammatical theory, structural classifications, predicate types, communicative unit, practical research.

## Introduction

In the English language, there are many definitions of the predicate which many authors give. So the predicate denotes the action or property of the thing expressed by the subject. Ilyish gave such a definition. [1, p.199]

Ganshina suggested that the predicate is the second principal part of the sentence. It serves to assert something about the subject and has a definite grammatical structure. It is characteristic of the English language that the predicate, even a nominal one, always comprises a verb in the finite form, denoting the categories of person, mood and tense through which predication is expressed: the forms of person connect the predicate with the subject; the mood- forms show in what relation to reality the speaker places the action or state expressed by the predicate; the tense-forms refer to it a definite period. [2,p 342]

According to Kobrina, the predicate is the second principal (main) part of the sentence and its organizing centre. The object and almost all adverbial modifiers are related to and dependent on it. [3,p 176]

Krylova supposed that the predicate is a word or a group of words that informs us of what is happening to the person, object, or phenomenon indicated as the subject in the sentence. [4, p 417]. The predicate differs from all the other parts of the sentence as it relates the information in the sentence to reality, i.e. it is the means of expressing predication and modality for the whole sentence.

## Classification of the predicate

From the structural point of view, there are two main types of predicate: the simple predicate and the compound predicate, as states N.A. Kobrina. [3, p 178].

All the other grammarians define the same types of predicates, but they differ in peculiar types. N.A. Kobrina states ten predicate types: simple verbal, simple nominal, compound verbal (3 types), compound nominal (2 types) and three mixed predicate types. (See Figure1)

**Figure 1**

**Structural Types of Predicate**




Some other scientists consider fewer types: Ganshina - 7 types, Kaushanskaya - 8 types. Kobrina's theory has been considered because it is pretty comprehensive. According to her theory, compound verbal predicates may be further classified into phrasal, modal and double orientation. Compound nominal predicates may be classified into compound nominal proper and compound nominal double predicates.

**The simple verbal predicate is expressed by**:

1. A verb in a synthetic or analytical form.

e.g. She was moaning and crying. [5, p 95]

was moaning and crying — a simple verbal predicate in the analytical form. It consists of the auxiliary verbs to be in the second form and notional verbs to moan and to cry. The predicate is in the Past Continuous Tense, Indicative mood, Active voice, the third person, and singular number.

2. A verbal phrase (a phraseological equivalent of a verb denoting one action):

a) Phrases denoting momentaneous actions: to have a deal, to have a look, to have a smoke, to have a talk, to make и remark, to pay a visit.

She gave him a look and walked out. The man gave a violent start.

b) Phrases denoting various kinds of actions: to change one's mind, to get rid (of), to lose sight (of), to make fun (of), to make up one's mind, to play a joke (on).

The sick man had been brought ashore. [5, p 50]

had been brought ashore - simple verbal predicate in the Past Perfect Passive, Indicative mood, expressed by a phrasal verb to bring ashore.

A noun, an adjective, or a verbal express a simple nominal predicate. It does not contain a link verb, as it shows the incompatibility of the idea expressed by the subject and that expressed by the predicate; thus, in the meaning of the simple nominal predicate, there is an implied negation.

e.g. He a gentleman! You a bother! Never. Fred, a priest! [6,p 112]

The compound predicate consists of two parts: the notional and the structural. The structural part comes first and is followed by the notional part. The notional part may be expressed by a noun, an adjective, a stative, an adverb, a verbal, a phrase, a predicative complex, or a clause. The structural part is expressed by a finite verb — a phrasal, modal, or linking verb. [7, p 101]

**e.g.** He had been polite enough to the Macphails during the journey.[5,p 48]

had been polite - the predicate is compound nominal one, the link verb expresses the first part to be, predicative is expressed by an adjective polite. The predicate is in the Past Perfect Tense, Indicative mood, Active voice, the third person, and singular number.

From the point of view of the structure, the essential part of the predicate is the first one since a finite verb expresses it and carries grammatical information about the person, number, tense, voice, modal and aspective (phasal) meaning of the whole predicate.

**The Compound Verbal Predicate** may be the compound verbal phasal (aspective) predicate, the compound verbal modal predicate, the compound verbal predicate of double orientation.

*a)* **the compound verbal phasal (aspective) predicate** denotes the action's beginning, duration, repetition or cessation expressed by an infinitive or a gerund. It is made up of a phasal verb and an infinitive or a gerund. Its first component is a phasal verb of:

1. **Beginning**: to begin, to start, to commence, to set about, to take to, to fall to, to come to.

**e.g**. The tanks began moving towards the bridge.[8, p. 40]

began moving - compound verbal phasal (aspective) predicate denotes the beginning of the action expressed by the gerund moving. It consists of a phasal verb began and the gerund moving.

The predicate is in the Past Indefinite tense, Active Voice, Indicative mood

2. **Duration**: to go on, to keep, to proceed, to continue.

**e.g**. Aloysius Royce continued to work quietly as the other two talked. [5, p. 50]

continued to work - compound verbal phasal (aspective) predicate, which denotes the duration of the action expressed by infinitive walking. It consists of a phasal verb continued and the infinitive to work.

The predicate is in the Past Indefinite tense, Active Voice, Indicative mood

talked - simple verbal predicate, expressed by the finite verb to talk- is in the Past Indefinite tense, Active Voice, Indicative mood.

3. **Repetition**: would, used to (denote a repeated action in the past)

**e.g.** Alfredo used to talk to me about it. She would sit by the window or walk in the fields during her small leisure hours.

*Used to talk*- compound verbal predicate, expressed by used to, a past habit which is now finished

*Would*-compound verbal predicate, expressed by *would*, to talk about typical behaviour in the past.

4. **Cessation**: to stop, to finish, to cease, to give up, to leave off.

**e.g.** They ceased to speak, eyeing the newcomer suspiciously. [9, p57]

ceased to speak - compound verbal phasal (aspective) predicate, denotes the duration of the action expressed by infinitive speak. It consists of a phasal verb ceased and the infinitive to speak.

The predicate is in the Past Indefinite tense, Active Voice, Indicative mood

*b)* **the compound verbal modal predicate** shows where the action expressed by an infinitive is looked upon as possible, impossible, obligatory, necessary, desirable, planned, certain, permissible. In most cases, it denotes the attitude to the action of the person or non-person expressed by the subject. It consists of a modal part and an infinitive (or sometimes gerund. [10, p 103]

The modal part may be expressed by:

1. *A modal verb*.

**e.g.** Your mother must have gone through a good deal of suffering. [5, p65]

must have gone - compound verbal modal predicate, consists of two parts: a modal part must, and an infinitive have gone.

The predicate is in the Present Perfect tense, Active Voice, and Indicative mood.

2. *A modal expression*: to be able to, to be allowed, to be willing, to be anxious, to be capable, to be going.

e.g. They were to go to Spain for the honeymoon.

*Were to go*- compound verbal modal predicate consists of two parts: a modal part to be and an infinitive to go.

The predicate is in Past Simple, Active Voice, and Indicative mood.

3. *An attitudinal verb* such as to like, to hate, to attempt, to expect, to hope, to intend, to mean, to plan, to try, to have a mind, to wish, or to want followed by an infinitive denotes the attitude of the person expressed by the subject to the action denoted by the infinitive. []

A predicate of this type may be called a compound verbal attitudinal predicate.

**e.g.** He hoped to see them the next day.

Hoped to see- compound verbal attitudinal predicate and infinitive to see.

The predicate is in Present Simple, Active Voice, and Indicative Mood.

*c)* **the compound verbal predicate of double orientation** consists of two parts. The first part is a finite verb which denotes the speaker's attitude to the content of the sentence.

**e.g.** Four thousand port workers are believed to be on strike. (Daily Worker)

The second part denotes the action which is performed by the person/non-person expressed by the subject.

**The Compound Nominal Predicate** comprises a link verb and a predicative (nominal part). The link verb is a structural element of the predicate, as it joins the subject and the predicative. It expresses the grammatical categories of person, number, tense, aspect and mood.

Among the class of link verbs, we can distinguish those which have lost their lexical meaning: to be, to get; those which have somewhat lost their lexical meaning: to remain, to become, to grow, to turn, to look; those which have fully preserved their lexical meaning but still serve as link verbs: to elect, to call, to leave.

**e.g**. "It wouldn't have been very nice for the Davidsons to have to mix with all that rough lot in the smoking room." [5, p 48]

wouldn't have been nice - compound nominal predicate consists of two parts: verbal and nominal. The verbal part is: wouldn't have been, nominal part is: nice. The verbal part consists of an auxiliary verb would in the negative form and a link verb to be. The predicate is in the Future-in-the-Past Perfect Tense, Active voice, Subjunctive mood, the third person, and singular number.

**The predicative can be expressed in different ways.**

- a noun in the common or the genitive case: *She is a very charming girl.*

- an adjective or an adjective phrase: *He is awfully smart and handsome.*

- a pronoun. *She has never been anybody to me.*

- a numeral. *He has always been the first to express his opinion.*

- an infinitive (or an infinitive phrase or construction). *His first action was to able the doors and windows.*

- a gerund (or a gerundial phrase or construction). *He drives at telling him everything.*

- a participle or a participial phrase. *It's very dull to listen to the same things several times.*

- a prepositional phrase. *She is on your side.*

**As its name suggests, the compound nominal double predicate** combines the features of two different types of predicate. It has the features of the simple verbal predicate and those of the compound nominal predicate. It consists of two parts, both of which are notional. The first one is verbal and is expressed by a notional verb denoting an action or process performed by the person/non-person expressed by the subject. [3, p187]

The second part of the compound nominal double predicate is expressed by a noun or an adjective which denotes the properties of the subject in the same way as the predicative of the compound nominal predicate proper does.

**e.g.** The doctor was feeling wan and nervous.[5, p53]

was feeling wan and nervous — compound nominal double predicate, is made up of two parts: both of which are notional. The first one is verbal, was feeling and is expressed by a link verb to be. The second part of the compound nominal double predicate is expressed by an adjective which denotes the properties of the subject in the same way as the predicative of the compound nominal predicate proper does: wan and nervous. The predicate is in the Past Continuous Tense, Indicative mood, Active voice, the third person, and singular number.

Mixed Types of the Predicate.

We also have a type of predicate in which we have elements of two types of predicates. Such predicates contain three components[7,p 238-239]

1. compound modal nominal predicate

All of the efforts were to be taken into consideration.

2. compound aspect nominal

The woman had stopped to be his wife long before their divorce.

3. The compound modal aspect predicate.

You ought to cease looking at me like that and saying nothing.

.

**The Results of the Research**

Practical research of the predicate as a main part of a sentence was carried out, and its different types according to the structural classification were studied. Novels by English writers: S.W. Maugham's "The Moon and the Sixpence", J. Aldington's "Death of the Hero", and D.Du Maurier's "Rebecca", were studied and analyzed, defining the predicate types, tense, mood, number, aspect, person. Afterwards, a quantitative analysis of the types of predicate followed. So, 40 extracts from the English fiction of famous writers and all in all, 51 examples of a predicate were found, some of which are respectively introduced in the article,

- compound nominal proper predicates - 19,
- simple verbal - 17,
- compound verbal phasal - 6,
- compound verbal modal - 5,
- compound nominal double -4.

The most frequently met are compound nominal predicates and simple verbal predicates, which are used in different tenses and voices. (See Diagram 1)

**Diagram 1**

**Types of a predicate in absolute quantity**




## CONCLUSION

The predicate is studied in the part of grammar - syntax, which treats the rules according to which words are connected in the sentence, and also of the various types of sentences and their members. The basis of a sentence is the predicative connection of words, uniting the subject and the predicate. The nature of this connection consists in the fact that the subject dominates the predicate determining the person of predication. In contrast, the predicate dominates the subject, determining the event of predication.

Scientists state that there are two main members of the sentence: the subject and the predicate, which fulfil the constructive and communicative function in the sentence. The predicate is the second principal member of a sentence that has always been at the centre of attention. Scientists have determined that the predicate asserts something about the subject and has a definite grammatical structure.

The practical research has shown that from the structural point of view, there are two main types of predicate: simple and compound. Almost all types of the predicate, which may be subdivided into simple verbal, simple nominal, compound verbal, and

compound nominal, have been found. The compound verbal predicate may be of two types: compound verbal modal and aspective compound verbal predicate. The nominal predicate can be a modal and aspective nominal predicate. Sometimes there is also a double predicate in the sentence.

Mostly compound nominal proper predicates and simple verbal predicates were found; the rarest predicate found is the compound nominal double one.

**References**


1. Ильиш Б.А., Строй современного английского языка. — JI.: Просвещение, 1971. -366 с.

2. Ганшина М.А., Василевская Н.М. Практическая грамматика английского языка. - М.: Высшая школа, 1964. - 548 с.

3. Н.А. Кобрина, Грамматика английского языка. Морфология. Синтаксис Н.А. Кобрина и др.- СПб: Союз, 2001.-496 с.

4. Крылова И.П., Гордон Е.М. Грамматика современного английского языка. - М.: Книжный Дом «Университет», 2000. - 448 с.

5. Maugham W.S. The Moon and the Sixpence. - London: William Heinemann, 1971. - 318 p

6. Хаймович Б.С., Роговская Б.И. Теоретическая грамматика английского языка. - М.: Высшая школа, 1967. - 298 с.

7. Грамматика английского языка \ В.Л. Каушанская и др. — JI: Просвещение, 1967. - 320 с.

8. Aldington J. Death of the Hero. - M.: Foreign Languages Publishing House, 1987.- 442 p.

9. Du Maurier D. Rebecka - M.: Foreign Languages Publishing House, 1991. - 287 p.

10. Барабаш Т.А. Грамматика английского языка. - М.: ЮНВЕС, 2002.-256 с.

# ԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ՌՈՒՍԱՑ ԼԵԶՎԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐՆ ՈՒ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**ՄԵԼԻՆԵ ՍԱՐՋԱՆՅԱՆ**
Ռուսաց լեզվի ուսուցիչ

*«Կրթությունն այն է, ինչ մնում է*
*դպրոցում սովորած ամեն ինչի մոռացումից հետո»:*
***Ալբերտ Էյնշտեյն***

**Համառոտագիր**

Մեր օրերում նոր պահանջներ են ի հայտ գալիս, ինչպես անձի զարգացման, այնպես էլ կրթական համակարգի ձևավորման գործում: Թեմայի արդիականությունը սահմանվում է հանրակրթական դպրոցներում դասավանդման մեթոդների շարունակական կատարելագործման համատեքստում:

Ժամանակակից սերունդները զգալիորեն տարբերվում են այն սերնդից, ում համար ստեղծվել է ներկայիս կրթական համակարգը: Սա բացատրվում է մի շարք գործոնների ազդեցությամբ, որոնք նպաստում են երեխաների ճիշտ սոցիալականացմանը, միջանձնային հարաբերությունների զարգացմանը, ինովացիոն տեխնոլոգիաների կիրառմանը և արժեհամակարգի փոփոխությանը:

Դասավանդման մեջ նոր և արդիական մեթոդների օգտագործումը ձևավորում է ինքնուրույն գիտելիքներ ձեռք բերելու անհրաժեշտություն, ուստի նախկինում մշակված մեթոդներն ու փորձը դառնում են ոչ լիարժեք, հատկապես օտար լեզվի դասավանդման և ուսուցման համատեքստում:

Այսպիսով՝ դպրոցը դառնում է ոչ այնքան տեղեկատվության աղբյուր, որքան սովորեցնում է սովորել: Այս մեխանիզմն ունի իր և՛ դրական, և՛ բացասական կողմերը: Դրական կողմն աշակերտի մոտ ինքնուրույնության ձևավորումն է, բացասական կողմն ուղեկցվում է ապատեղեկատվության յուրացմամբ և միջանձնային հմտությունների թերի ձևավորմամբ:

**Բանալի բառեր և բառակապակցություններ.** հանրակրթական դպրոցներ, ռուսաց լեզու, դասավանդման հմտություններ, դասավանդման արդիական խնդիրներ, օտար լեզու, միջմշակութային հաղորդակցություն:

# ПРОБЛЕМЫ И ОСОБЕННОСТИ ПРЕПОДАВАНИЯ РУССКОГО ЯЗЫКА В ОБЩЕОБРАЗОВАТЕЛЬНЫХ ШКОЛАХ

**МЕЛИНЕ САРДЖАНЯН**
Учитель русского языка

*“Образование — это то, что остаётся после того,
как забывается всё выученное в школе”.*
***Альберт Эйнштейн***

**Аннотация**

В наше время выдвигаются новые требования, как к развитию личности, так и к формированию системы образования. Актуальность темы определяется в контексте постоянного совершенствования методов обучения в общеобразовательных школах.

Современные поколения существенно отличаются от того поколения, для которого создавалась нынешняя система образования. Это объясняется влиянием ряда факторов, способствующих правильной социализации детей, развитию межличностных отношений, использованию инновационных технологий и изменению системы ценностей.

Использование новых и современных методов в обучении порождает потребность в приобретении самостоятельных знаний, поэтому ранее разработанные методы и опыт становятся неполными, особенно в условиях преподавания и изучения иностранного языка.

Таким образом, школа становится не столько источником информации, сколько учит учиться. Этот механизм имеет как положительные, так и отрицательные стороны. Положительной стороной является формирование у учащегося самостоятельности, отрицательная сторона сопровождается усвоением дезинформации и недостаточным формированием навыков межличностного общения.

**Ключевые слова и словосочетания:** общеобразовательные школы, русский язык, педагогическое мастерство, актуальные проблемы обучения, иностранный язык, межкультурная коммуникация.

## PROBLEMS AND FEATURES OF TEACHING RUSSIAN IN GENERAL SCHOOLS

**MELINE SARJANYAN**
Russian language teacher

*"Education is what remains after everything we have been taught has been forgotten".*
***Albert Einstein***

**Abstrac**t

Nowadays, new requirements are put forward, both for the development of the individual and for the formation of the educational system. The topic's relevance is determined in the context of the continuous improvement of teaching methods in general education schools.

Modern generations are very different from the generation for which the present educational system was created. It is due to the influence of several factors that contribute to the proper socialization of children, the development of interpersonal relations, the use of innovative technologies and changes in the system of values. The use of new and modern methods in teaching generates the need to acquire independent knowledge; therefore, previously developed methods and experience become incomplete, especially in the context of teaching and learning a foreign language.

Thus, the school becomes more of a source of information than it teaches how to learn. This mechanism has both positive and negative sides. The positive side is the formation of independence in the student, the assimilation of disinformation and the incomplete formation of interpersonal communication skills accompanies the opposing side.

**Keywords and phrases:** comprehensive schools, Russian language, teaching skill, actual problems of education, foreign language, intercultural communication.

***Տեսամեթոդական մաս***: Հանրակրթական դպրոցների զարգացման ներկայիս փուլը կապված է աշակերտների մտավոր ճանաչողական և ստեղծագործական ներուժի բարձրացման խնդրի լուծման անհրաժեշտության հետ: Այս խնդրի լուծումը դասավանդման մեթոդների շարունակական կատարելագործման ոլորտում է, մասնավորապես՝ գիտելիքի և մեթոդների մշակման, հետազոտական հմտությունների զարգացման և հանրայնացման շրջափուլում:

Մեր երկրի համար անհրաժեշտ մասնագիտությունների շարքում ուսուցչի մասնագիտությունը միշտ էլ իր ուրույն տեղն է զբաղեցրել, քանի որ հենց այս մասնագիտության կրողներն են «կերտում» նոր հասարակություն:

Մերօրյա զարգացման պայմաններում գործում է ունիվերսալության սկզբունք, որը ենթադրում է բոլոր ոլորտներից իրազեկվածության բարձր մակարդակ: Քանի որ նախկին մեթոդներն ու կարգերն ամբողջապես չեն գործում արդի սերնդի կրթության գործընթացում, ուստի փոփոխության ենթարկվում է ոչ միայն մեթոդներն, այլև ուսուցիչը, որը սովորեցնելուց զատ սովորում է՝ ժամանակաշրջանի պահանջների համապատասխանելու համար:

Անշուշտ, աշակերտը կրթական համակարգում հանդես է գալիս իբրև բարձրագույն արժեք, ուստի որակյալ կրթության համար անհրաժեշտ է կիրառել անհատակետրոն մոտեցում, որն էլ կնպաստի աշակերտների շրջանում կրթական մակարդակի բարձրացմանը:

Ներկայումս նոր պահանջներ են ի հայտ գալիս, ինչպես անձի զարգացման, այնպես էլ կրթական համակարգի ձևավորման համար: Ժամանակակից երեխաները զգալիորեն տարբերվում են այն երեխաներից, ում համար ստեղծվել է ներկայիս կրթական համակարգը: Սա բացատրվում է մի շարք գործոնների ազդեցությամբ, որոնք նպաստում են երեխաների ճիշտ սոցիալականացման, միջանձնային հարաբերությունների զարգացման, ինովացիոն տեխնոլոգիաների կիրառման և արժեհամակարգի փոփոխության համատեքստում:

Դասավանդման մեջ նոր և արդիական մեթոդների օգտագործումը ձևավորում է ինքնուրույն գիտելիքներ ձեռք բերելու և անհրաժեշտ տեղեկատվություն որոնելու  հմտության զարգացում, որի շնորհիվ նախկինում մշակված մեթոդներն ու փորձը դառնում են ոչ լիարժեք: Բացի այդ, շատ է քննարկվում աշակերտակենտրոն աշխատանքի կարևորությունը և մարդանհատի ճիշտ զարգացման և դաստիարակման անհրաժեշտությունն՝ արդեն իսկ ձևավորված արժեքային համակարգի պայմաններում:

Դպրոցը դառնում է ոչ այնքան տեղեկատվության աղբյուր, որքան սովորեցնում է սովորել: Սա նշանակում է, որ մերօրյա կրթական համակարգի ազդեցության պայմաններում աշակերտի մոտ ձևավորվում է անկախ կրթական գործունեության կազմակերպման ունակություն, ինչն ունենում է իր և՛ դրական, և՛ բացասական կողմերը: Դրական կողմը կայանում է աշակերտի մոտ ինքնուրույնության ձևավորման հմտության զարգացմամբ, իսկ բացասական կողմն ուղեկցվում է միջանձնային հմտությունների թերի ձևավորմամբ և ինֆորմացիայի ոչ լիարժեք յուրացման ռիսկով: Բացի այդ՝ աշակերտը հնարավորություն չի ունենում ստացված ինֆորմացիան քննարկելու դա-

ընկերների հետ, ինչի արդյունքում չի ձևավորվում նաև «կոլեկտիվի մարդ» վարքաձևը:

Այս ողջ գործընթացը կատարվում է փուլ առ փուլ՝ հանգեցնելով քայլ-քայլիչ ազդեցության, որի արդյունքը նկատելի է դառնում տարիներ հետո:

ՀՀ-ում կրթության ոլորտը հանդիսանում է երկրի կայուն զարգացման և հզորացման հենք: Կրթության դերը մեծ է ռազմավարական հիմնախնդիրների, մասնավորապես, ազգային անվտանգության, կայուն տնտեսական զարգացման, աղքատության հաղթահարման, ժողովրդագրական հիմնախնդիրների լուծման և գիտելիքահեն տնտեսության ամրակայման գործընթացում:

*Կրթությունը սահմանվում է որպես անձի, հասարակության և պետության շահերից ելնող ուսուցման և դաստիարակության գործընթաց, որը նպատակաուղղված է գիտելիքները պահպանելու ու սերունդներին փոխանցելու համար* ***[1]***:

Կրթության համակարգի ներկա փուլի հիմնական ռազմավարական նպատակը հզոր և բանիմաց սերունդ ստեղծելն է:

Չնայած նրան, որ տարիներ շարունակ մշակվում և իրականացվում են բարեփոխման ծրագրեր, այնուամենայնիվ, ՀՀ ներկայիս կրթական համակարգում առկա են բացեր, որոնք լուծելի են միայն խնդրի բազմակողմանի ուսումնասիրության և նպատակային քայլերի ճիշտ պլանավորման պայմաններում: Կարելի է ասել, որ ՀՀ կրթական համակարգը երկար տարիներ գտնվում է կայունացման, այլ ոչ զարգացման փուլում, սա, իհարկե, պայմանավորված է ծառացող հիմնախնդիրների ոչ լիարժեք ուսումնասիրությամբ, որն էլ հանգեցնում է հետընթաց ռիսկ, քանի որ չեն մշակվում ռազմավարական այնպիսի քայլեր, որոնց կիրառմամբ ՀՀ կրթական համակարգը կկարողանա պայքարել մերօրյա մարտահրավերների և ճգնաժամերի հետ:

Համաձայն «Կրթության մասին» ՀՀ օրենքի՝ կրթության բնագավառում պետական քաղաքականության կազմակերպական հիմքը կրթության զարգացման պետական ծրագիրն է:

Կրթության համակարգի հիմնական բնութագրիչներից են կրթության մեջ ընդգրկվածության ցուցանիշները, որոնց հիման վրա կարելի է դատել այս կամ այն սոցիալական խմբի համար մշակված կրթական ծառայությունների մատչելիությունը:

Հանրային կառավարման և, մասնավորապես, կրթության կառավարման բնագավառում իրականացվել են մի շարք բարեփոխումներ, որոնց շնորհիվ մեծացել է ուսումնական հաստատությունների ինքնավարությունն

ու պատասխանատվությունը, ընդլայնվել է քաղաքացիական հասարակության մասնակցությունը, նպաստավոր պայմաններ են ստեղծվել կրթության համակարգի և գործարար հանրության արդյունավետ երկխոսության համար: Կառավարման մարմինների գործունեությունը դարձել է ավելի թափանցիկ, սակայն արդյունավետ կառավարման համակարգ ունենալու համար դեռևս բազմաթիվ հիմնախնդիրներ կան, որոնք դեռ չեն գտել իրենց համարժեք լուծումները:

Հայաստանի կրթության զարգացման հեռանկարն անհրաժեշտ է դիտարկել երկրի ընդհանուր զարգացման, ազգային և պետական անվտանգության ապահովման հետևյալ հիմնական նպատակադրումների համատեքստում՝ ապահովելով կրթության բնագավառում պետական քաղաքականության սկզբունքների իրականացումը.

- անկախ պետականության ամրապնդում և քաղաքացիական հասարակության զարգացում,
- աղքատության հաղթահարում և բարեկեցության ապահովում,
- կայուն տնտեսական աճի և մրցունակության ապահովում,
- հայապահպանություն,
- միջազգային և տարածաշրջանային համագործակցություն **[2]**:

Այսպիսով՝ ամփոփելով վերը նշվածը՝ կարող ենք փաստել, որ ՀՀ պետական ծրագրերն ու հայեցակարգերը, որոնք նպատակաուղղված են ՀՀ կրթական համակարգի բարելավմանն ու զարգացմանը, դեռևս գտնվում են մշակման և կատարելագործման փուլում և անկախ կիրառվող ռազմավարությունից, առկա են բացեր, որոնց լուծումը համակարգային զարգացման և տրանսֆորմացիայի կիրառման դաշտում է, ուստի, ուսումնասիրելով ներքին և արտաքին գործոնների ազդեցությունը, կրթական հաստատությունները պետք է մշակեն զարգացման սեփական ռազմավարությունը՝ ժամանակաշրջանի հետ քայլելու և որակյալ սերունդ կրթելու համար, քանի որ համակարգային զարգացումն անհատական զարգացման հիմքում է:

Անդրադարձ կատարենք նաև դասապրոցեսի ժամանակ կիրառվող մեթոդների առանձնահատկություններին:

For the research, short stories by British female authors of the 19th century were selected: "The Awakening" (1899) by Kate Chopin and "Mrs Dalloway" (1925) by Virginia Woolf. While carrying out the research, content and textual analysis **[10, pp. 68-172]** served as a basis to explore the sociolinguistic and psycholinguistic aspects, which helped to discern the semantic elements and the linguistic means by the help of which the authors constructed the female identity.

**The Main Features and Linguistic Means of Female Speech in "The Awakening" and in "Mrs. Dalloway"**

"The Awakening," a novel by Kate Chopin, includes many passages where the main female character Edna experiences the discovery of her "self." She starts to operate freely, boldly and feels like an independent entity. The author aims to discover selfhood and freedom by containing various languages in the story. Edna is enchanted

by those different languages which attract and torture her. In the story, she sometimes gets confused and is strayed most of the time. Even her speech might seem less confident, and the tone of her voice might be deflated.

> "*Are you going bathing?" asked Robert of Mrs. Pontellier. It modified into not plenty a question as a reminder.*" **[p.31]** *"Oh, no*", *she responded with a tone of indecision. "I'm worn out; I anticipate no longer."* **[1, p. 31]**

Edna sometimes is doubtful about her actions and is always on a quest for her identity, character and duties. In her speech, she uses lexical hedges such as "perhaps", "maybe", and "I suppose."

- "*Forever, perhaps. I don't know. It depends upon a good many things."* **[1, p. 114]**
- *"Maybe she thinks you are pretty."* **[1, p. 86]**
- "*I suppose this is what you would call unwomanly, but I have got into a habit of expressing myself. It doesn't matter to me, and you may think me unwomanly if you like.*" **[1, p. 277]**

Women also tend to use lexical fillers such as *"well," "you know."* When Edna is talking, she often takes what others think into consideration. She usually leaves a decision open rather than imposing her ideas or claims on others. When women want to get help from others, they express themselves in different ways as the followings:

- *"Well," agreed Mademoiselle Reisz."* **[1, p. 126]**
- "*I am white! Well, Look at my hair, it is brown, and my eyes are gray, Armand, you know they are gray. And my skin is fair, seizing his wrist. "Look!*" **[1, p. 155].**

Women's speech may sound rapid and incomplete since they always hasten when talking. As a result, they express a sentence in which the ellipsis is evident. In the following example, the subject of the sentence is omitted.

- "*Wrote to you?" repeated Edna in amazement, stirring her coffee absently.*" **[1, p. 163]**

Another work from which the factual data were collected is "Mrs. Dalloway", written by Virginia Woolf. The narrative consists of the characters' thoughts, introspections, and reminiscences. The technique called "stream of consciousness" or "blood of consciousness", is generally connected with the Modernist movement. It offers a glimpse into the characters' feelings and emotions; it is a way to penetrate their thoughts and inner world.

To put it in specific terms, the technique makes use of unusual syntax, grammar, and repetition. The exclamations are used to better express the flow of thoughts, emotions, and feelings, which successively penetrate Clarissa's inner world. After the exclamations, Clarissa is drawn into the memory of the morning vibes, the morning air.

· "*What a morning!" "What a lark!" "What a plunge!*" **[12, p. 3]**

It is true of women to construct their speech, relying heavily on interrogative sentences, thereby expressing their fears. Sometimes they might cast doubts and think whether their actions are right or wrong.

- *"Horror! Horror! She wanted to cry. Why hadn't she stayed at home? She cried, twisting the knob of the iron railing."* **[12, p. 19]**

There is a controversy that women talk too much and are more likely to interrupt the speaker.

- "*What are you saying? Said Rezia suddenly, sitting down by him. Interrupted again! She was always interrupting."* **[12, p. 18]**

Women quite often tend to be noticed by their partners. They can repeat the same word or sentence once or twice, thereby sending their message to them.

- "*Look, she implored him, pointing at a little troop of boys carrying cricket stumps." "Look, she implored him, for Dr. Holmes had told her to make him notice the real thing." "Look, she repeated.*" **[12, p. 18]**
- "*It might be possible; it might be possible that the world itself is without meaning."* **[12, p. 63]**

*"And it came over me I might have married you."* **[12, p. 85]**

Women's lexicon can sometimes sound colloquial, informal or incomplete.

- "*Ah, damn!" she cried; the needle had broken.*" **[12, p. 104]**

**Results**

**After investigating the linguistic expression of female identity, several results can be drawn:**

- Women are sometimes helpless and indecisive about their actions. Hence, they tend to use interrogative sentences such as "*Would you please help me with…?".*
- Women are always hesitating when making their speech; they may produce general questions such as "*Are you going bathing?" What are you saying?"*
- Their mental perception is mainly based on sensory and visual tools. There is a strong bond between women and nature. *"What a morning!" "What a plunge!" "What a lark!".*
- Concerning vocabulary, women most of the time use hedges such as *"I suppose,"* "maybe," *"perhaps," and "It might be."*
- Since women are sometimes indecisive, they might fill pauses when searching for the next word. Therefore, lexical fillers are dominant in women's speech "well," "you know," and "ah."
- Women are inclined to produce sentences full of admiration; these are mostly exclamatory sentences *"What a morning!" "What a plunge!" "What a lark!".*
- Women's lexicon may sound colloquial, informal, or incomplete. They can utter phrases such as *"Ah", but thinking", or "ah" damn*".
- From the paralinguistic aspect, women's speech always seems to be less confident *"oh," "oh! dear no,"* and the tone of the voice is deflated.
- They sometimes use repetitions in their speech to be noticed by their partners *"Look; she implored him ….Look, she repeated."*

- Consciously or subconsciously, women very often make interruptions in their speech as they talk too much. *"What are you saying?"…." What are you saying?"*
- Women hasten while speaking, and as a result, there appear to be omissions of the main components in the sentence *"Wrote to you?"*

**Conclusion**

Gender and language can be traced to linguistic and feminist theory and political practice as well. Therefore, it can be considered as an explanation for all types of linguistic variation, such as vocabulary, pronunciation, grammar, and communication style. One should bear in mind that language is strongly connected with culture. Thus, in order to master the language thoroughly, it is mandatory to know the culture perfectly. The gender investigations evinced a great interest among scholars and led them to consider gender and sex more exhaustively, which promotes in mastering gender discourse. Discourse can manipulate people's ideas, which are acknowledged by society. The term *discourse* is an organized set of statements which makes the meaning more expressive and organizes and gives structure to the manner whereby a particular topic, object or process is to be discussed **[5, p. 6]**.

Some writers take advantage of the power of discourse and deliver hidden messages through discourse. Such intended messages may consist of punctuation, possibilities, suppositions, and some details in order to draw attention to female identity. The connection between gender and language has always grabbed scholars' attention. The latter has made a significant contribution to the academic sphere. This research has pointed out the striking features which describe women's emotional state, their psychology, and the way they communicate with the surrounding world. The same features can be encountered, and many women cannot be accepted by their partners, society, and colleges. However, women stand firmly in their beliefs that the social system will be improved, the mentality will be changed, and they can put an end to the biased approach towards them. Hopefully, they will improve their social status and gain the same rights as men.

**References**


1. Chopin K. The Awakening H. S. Stone, 1899-303pp.
2. Elaine Showalter. The Female Malady: Women Madness and English Culture, New York: Pantheon Books, 1985, p. 121
3. Elaine Showalter. The Female Malady: Women Madness and English Culture, New York: Pantheon Books, 1985, p. 123
4. J. Gray, Why Mars and Venus Collide: Improving Relationships by Understanding with Stress, 2008, p. 17
5. Kramarae, Cheris &Paula A. Treichler. *A Feminist Dictionary*. Boston: Pandora, 1985, p. 173
6. Kress G., *Linguistic processes in Socio-cultural Practice, Victoria:* Deakin University Press, 1985, p. 6
7. Lakoff, R., *Language and Women's Place.* New York: Harper and Row, 1975, p. 53
8. Lia Litosseliti, Gender and Language: Theory and Practice. Published by Hodder Education, 2006, pp. 10-13
9. Marlis Hellinger, Hadumond Bussmann, Gender Across Languages: The linguistic representation of women and men. Vol. 1, published in 2001, p. 3
10. Schulz, Muriel, "The Semantic Derogation of Women". *In Language and sex: Difference and Dominance,* 1975, pp. 64-70
11. Suzanne Romaine, *Merton College, University of Oxford, UK.* A corpus-based view of gender in British and American English, 2001, pp. 68-172
12. Woolf V. Mrs. Dalloway Broadview Press, Canada 2012-300pp.

# ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ ՀՀ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ


**ՎԻԿՏՈՐՅԱ ՍԱՐՋԱՆՅԱՆ**

ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա
գիտակրթական միջազգային կենտրոն
գիտահետազոտական աշխատանքների գծով փոխտնօրենի օգնական
viktorya.sarjanyan@isec.am



**Համառոտագիր**

Այսօր աշխարհը որդեգրել է կայուն զարգացման հայեցակարգ, որի հիմքում դրված է հասարակության քաղաքական, սոցիալ-տնտեսական և բնապահպանական խնդիրների ամբողջականացումը:

Սույն հոդվածի արդիականացումը կապված է ժողովրդագրական հիմնահարցերի լուծման առաջնահերթության հետ:

Պետական ժողովրդագրական քաղաքականության նպատակն է նվազեցնել բնակչության բնական անկման տեմպերը, կայունացնել բնակչության թվաքանակը, ինչպես նաև բարելավել կյանքի որակը և բարձրացնել կյանքի տևողությունը:

Ժամանակակից Հայաստանում ժողովրդագրական ճգնաժամի խնդիրը տարեցտարի ավելի ու ավելի հրատապ է դառնում:

Իրենց հերթին ժողովրդագրական իրավիճակը սրում են տնտեսական ճգնաժամերը. ծնելիության անկում, հիվանդացության և մահացության բարձր ցուցանիշներ, կյանքի տևողության կրճատում: Արդյունքում բնակչության միգրացիոն շարժունակությունը հասնում է աննախադեպ չափերի, մեծանում է փախստականների հոսքը:

Նշված գործոնները հնարավորություն են տալիս որակել ներկայիս ժողովրդագրական իրավիճակը որպես ճգնաժամ, որը վտանգ է ներկայացնում պետության ազգային անվտանգության համար: Հետևաբար, ազգային անվտանգության համակարգում երկրի պաշտպանական և տնտեսական անվտանգության ապահովումը, հասարակության մեջ հասարակական-քաղաքական կայունության պահպանումն ու ժողովրդագրական բաղադրիչը ծեռք է բերում գերակա նշանակություն:



**Բանալի բառեր և բառակապակցություններ.** ժողովրդագրություն, ծնելիություն, մահացություն, միգրացիա, տնտեսական ճգնաժամ, պետական անվտանգություն:

# ПУТИ РЕГУЛИРОВАНИЯ ДЕМОГРАФИЧЕСКИХ ПРОБЛЕМ В КОНТЕКСТЕ СОЦИАЛЬНОЙ ПОЛИТИКИ РА

**ВИКТОРИЯ САРДЖАНЯН**
Национальная академия наук Республики Армения
Международный научно-образовательный центр
помощник заместителя директора по научно-исследовательским работам
viktorya.sarjanyan@isec.am

**Аннотация**

Сегодня в мире принята концепция устойчивого развития, в основе которой лежит интеграция политических, социально-экономических и экологических проблем общества.

Актуальность данной статьи связана с приоритетом решения демографических проблем.

Целью государственной демографической политики является снижение темпов естественной убыли населения, стабилизация численности населения, а также повышение качества жизни и увеличение продолжительности жизни.

Проблема демографического кризиса в современной Армении с каждым годом становится все более актуальной.

В свою очередь, демографическая ситуация усугубляется экономическими кризисами, снижением рождаемости, высокими показателями заболеваемости и смертности, сокращением продолжительности жизни. В результате миграционная подвижность населения достигает небывалых показателей, увеличивается поток беженцев.

Названные факторы позволяют квалифицировать сложившуюся демографическую ситуацию как кризисную, создающую угрозу национальной безопасности государства. Поэтому в системе национальной безопасности первостепенное значение приобретает обеспечение обороноспособности и экономической безопасности страны, поддержание социально-политической стабильности в обществе и демографическая составляющая.

**Ключевые слова и словосочетания:** демография, рождаемость, смертность, миграция, экономический кризис, государственная безопасность.

# WAYS OF REGULATING DEMOGRAPHIC ISSUES IN THE CONTEXT OF THE RA SOCIAL POLICY

**VIKTORYA SARJANYAN**
National Academy of Sciences of the Republic of Armenia
International Scientific-Educational Center
Assistant of the Deputy Director on Research Affairs
viktorya.sarjanyan@isec.am

**Abstract**

Today, the world has adopted the concept of sustainable development, which is based on the integration of political, socioeconomic and environmental problems of the society.

The modernization of this article is limited to the priority of solving demographic problems.

The goal of the state demographic policy is to reduce the rate of natural population decline, stabilize the population size, as well as improve the quality of life and increase life expectancy.

The problem of the demographic crisis in modern Armenia is becoming more and more urgent every year.

In turn, the demographic situation is aggravated by economic crises, declining birth rates, high morbidity and mortality rates, and reduced life expectancy. As a result, the migratory mobility of the population reaches unprecedented levels, and the flow of refugees increases.

The mentioned factors make it possible to qualify the current demographic situation as a crisis that poses a threat to the state's national security. Therefore, in the national security system, ensuring the defence and economic security of the country, maintaining socio-political stability in the society, and the demographic component acquires paramount importance.

**Keywords and phrases:** demography, birth rate, mortality, migration, economic crisis, mortality, state security.

**Տեսամեթոդական մաս:** Ժողովրդագրությունը (հուն. ՝ δήμος-ժողովուրդ և γράφω-գրաֆիա) գիտություն է, որն ուսումնասիրում է բնակչության չափը, տարածքային բաշխվածությունը և կազմը, դրանց փոփոխությունները, բնակչության շրջանում այդ փոփոխությունների պատճառներն ու հետևանքները, սոցիալ-տնտեսական գործոնների և փոփոխությունների կապը:

Ժողովրդագրությունը կամ դեմոգրաֆիան գիտություն է բնակչության վերարտադրության օրինաչափությունների մասին: Եզրույթը գիտական շրջանառության մեջ մտավ գրեթե 200 տարի ավելի ուշ, քան հայտնվեց այն գիտությունը, որին պետք է բնորոշեր: Առաջիններից մեկը, ով «ժողովրդագրություն»-ն անվանեց նոր գիտությունը, շվեյցարացի մաթեմատիկոս Կրիստոֆ Բերնուլլին էր: Հեղինակն իր աշխատանքներում օգտագործել էր «բնակչության ուսումնասիրություն» անվանումը **[1, էջ 92]**:

«Ժողովրդագրություն» եզրույթն առաջին անգամ օգտագործվել է 1855 թվականին ֆրանսիացի գիտնական Աշիլ Գիյարի «Մարդկային վիճակագրության տարրեր կամ Համեմատական ժողովրդագրություն» գրքում: Հեղինակը ժողովրդագրությունը դիտարկում էր որպես «մարդկանց բնական և սոցիալական պատմություն» կամ առավել նեղ իմաստով՝ «մաթեմատիկական գիտելիքներ բնակչության ընդհանուր շարժի, ֆիզիկական, քաղաքացիական, մտավոր և բարոյական վիճակի մասին» **[2, էջ 120]**:

Ժողովրդագրությունը մշակում է ազգաբնակչության տեսությունն ու քաղաքականությունը, նշում երկրագնդի բնակչության վիճակն ու շարժի հեռանկարները: Այս գիտության մեջ կենտրոնական տեղ են գրավում բնակչության վերարտադրությունը, նրա թվաքանակի, կազմի տեղաբաշխումն ու փոփոխությունները:

Ժողովրդագրության մեջ, ինչպես մյուս գիտություններում, տեղի է ունենում մասնագիտացման գործընթաց: Գոյություն ունեն աշխատանքի մի քանի ուղղություններ՝

- ժողովրդագրական տեսություն,
- բնակչության և ժողովրդագրական գործընթացների վերաբերյալ առաջնային տվյալների հավաքում,
- ժողովրդագրական գործընթացների նկարագրություն,
- մաքուր կամ ֆորմալ ժողովրդագրություն (հաշվի է առնում ժողովրդագրական երևույթների քանակական հարաբերակցությունը, գործընթացները, կառուցվածքները, փոփոխությունները, նրանց ազդեցության տակ գտնվող բնակչության չափն ու կազմը),
- ժողովրդագրական վերլուծություն,

- պատմական ժողովրդագրություն և այլն:

Ժողովրդագրական երևույթները պայմանավորում են բնակչության զարգացումն ու փոփոխությունները, իսկ ժողովրդագրական գործընթացը հանդես է գալիս որպես մարդկանց կյանքում տեղի ունեցող նույն իրադարձությունների հաջորդականությունն, որը կարևոր դեր է խաղում սերնդափոխության ժամանակ:

Բնակչության և նրա կազմի փոփոխությունները ժողովրդագրական հետազոտություններում ուսումնասիրվում են քանակական և որակական տեսանկյունից, իսկ մարդկանց դեմոգրաֆիկ հատկանիշները ծառայում են ինչպես ամբողջ բնակչության բնութագրման, այնպես էլ կոնկրետ խմբերի առանձնացման համար՝ որպես հետազոտման ինքնուրույն օբյեկտ **[3, էջ 25]**:

Ժողովրդագրական հիմնախնդրի էությունը 20-րդ դարի երկրորդ կեսից մինչ օրս աշխարհի բնակչության չափազանց արագ և անհավասար աճի մեջ է: Առաջին հերթին սա կապված է բնակչության աճի բարձր տեմպերի հետ: Մեծանում է բնակչության խտությունը հատկապես խոշոր քաղաքներում: Այս հիմնախնդիրն ունի առանձնահատուկ կարևորություն, քանի որ նրա լուծումից մեծապես կախված է համաշխարհային մի շարք հիմնախնդիրների լուծումը:

Աշխարհի ժողովրդագրական իրավիճակն ուսումնասիրելիս բախվում ենք երկու բացարձակապես հակադիր կարծիքի, որոնցից մեկի համաձայն շուտով կզգանք ժողովրդագրական ռումբի պայթյուն, իսկ մյուսի համաձայն՝ գտնվում ենք դեպոպուլյացիայի եզրին **[4, էջ 15]**:

XIX դարի վերջում և հատկապես XX դարում երկրի բնակչությունն աճի այնպիսի տեմպեր ընդունեց, որ սարսափեցրեց ժողովրդագրությամբ զբաղվող շատ մասնագետների: Նրանց կարծիքով՝ եթե ժողովրդագրական խնդիրները չլուծվեն, այլևս ոչ մի խնդիր չի լուծվի: Աշխարհի բնակչության աճի շարժընթացը պատկերացնելու համար էքսկուրս կատարենք հազարամյակների միջով:

ՄԱԿ-ի բնակչության հարցերով հանձնախմբի տնօրեն Ջոն Ուիլմոսի դիտարկմամբ վերջին տասնամյակի ընթացքում բնակչությունը կավելանա մեկ միլիարդով, իսկ դարավերջում մոլորակի վրա կապրի 11 միլիարդ մարդ: Աճը կլինի չափազանց անհավասար, քանի որ Աֆրիկայի բնակչությունը կկրկնապատկվի, իսկ Հնդկաստանի բնակչությունը կգերազանցի Չինաստանին:

Իրադարձությունների զարգացման այս հեռանկարում եվրոպացիները կկանգնեն դեմոգրաֆիական խնդիրների առջև **[5]**:

Դարեր շարունակ եվրոպական ընտանիքներն ունեցել են հինգ և ավելի երեխա, քանի որ եկեղեցին խստիվ արգելել է հակաբեղմնավորիչների կիրառումը: Նրանք ծննդաբերել են այսպես կոչված «պահեստային տարբերակ ունենալու համար»՝ մանկական բարձր մահացության պատճառով: Բացի այդ, ունենալ ավելի շատ երեխաներ, նշանակում էր տարիներ շարունակ ստանալ անվճար օգնություն: Պատվաստանյութերի կիրառման արդյունքում երեխաների մահացության ցուցանիշը նվազեց: Մարդիկ տեղափոխվեցին քաղաքներ, մարդասիրական նկատառումներով արգելվեց երեխաների աշխատանքն, իսկ կանայք գնացին սովորելու և աշխատելու: Այս քաղաքականության արդյունքում երեխաների թիվը կտրուկ նվազեց: Եթե մարդկության համար կիրառենք միջին թվաբանական հաշվարկ, ապա կտեսնենք, որ համամասնորեն մեկ կինը ունեւոմ էր 3 երեխա: Իհարկե, հաշվի են առնվում տարածաշրջանիային տվյալները: Աֆրիկացի կանայք միջինում ունենում են 5 երեխա, ինչի արդյունքում, եթե անգամ որոշ երկրներում նկատվի ծնելիության անկում, այսօրվա բարձր ցուցանիշի պայմաններում տեղի կունենա բնակչության թվի աճ:

Եվրոպայում, ներառյալ Ռուսաստանում, յուրաքանչյուր կնոջ բաժին է ընկնում 2-ից քիչ երեխա: Սա չի ապահովում բնակչության վերարտադրություն:

Բնակչության «բնական» կամ «կենսաբանական» էությունը դրսևորվում է ծնելիության և մահացության հետևանքով սերնդափոխության գործընթացում մշտապես ինքնավերականգնվելու նրա ունակությամբ: Այս շարունակական գործընթացը կոչվում է բնակչության վերարտադրություն: Ծնելիության, մահացության, ամուսնության և ամուսնալուծության գործընթացները, լինելով բնակչության վերարտադրության բաղադրիչներ, կոչվում են ժողովրդագրական գործընթացներ:

Ժողովրդագրական գործընթացներն ուսումնասիրելու համար օգտագործվում է վիճակագրական ցուցանիշների համակարգ, որտեղ այս բոլոր ցուցանիշները, որպես կանոն, ունենում են քանակական արտահայտություն: Այս ցուցանիշները հիմնված են ժողովրդագրական երևույթների և գործընթացների չափումների վրա **[6, էջ 108]**:

Անդրադառնանք ժողովրդագրական ցուցանիշներին:

***ԾՆԵԼԻՈՒԹՅՈՒՆ***

*Ծնելիության և մահացության հետևանքով բնակչության սերունդների նորացման և հերթափոխման գործընթացն անվանում են բնակչության վերարտադրություն:*

ժողովրդագրական ցուցանիշների փոփոխությանը համապատասխան՝ ընդունված է առանձնացնել բնակչության վերարտադրության երեք հիմնական պատմական տեսակ:

Դրանցից առաջինը և ամենավաղը բնակչության վերարտադրության այսպես կոչված **արխետիպն է**: Այն մեծամասամբ տարածված էր պարզունակ հասարակության շրջանում, որը դեռևս գտնվում էր տնտեսության յուրացման փուլում, օրինակ, Ամազոնի հնդկացիների որոշ ցեղեր: Այս ժողովուրդներն ունեն մահացության այնքան բարձր ցուցանիշ, որ նրանց թիվը նվազում է անչափելի արագությամբ:

Երրորդը՝ բնակչության վերարտադրության «**ժամանակակից**» կամ «**ռացիոնալ**» տեսակը, ձևավորվեց ագրարայինից արդյունաբերական տնտեսության անցումով: Վերարտադրության այս տեսակը բնութագրվում էր ծնելիության ցածր մակարդակով, մահացության միջին մակարդակի, ցածր բնական աճի և կյանքի միջին տևողության բարձր ցուցանիշներով: Այն բնորոշ էր տնտեսապես զարգացած երկրներին, որոնք ունեն ավելի բարձր կենսամակարդակ: Ծնելիության ցածր մակարդակն այստեղ սերտորեն կապված էր տարեցների մահացության բարձր մակարդակի հետ **[7]**:

Բնակչության վերարտադրության ավանդականից ժամանակակից տիպի անցումը սկսվել է 18-րդ դարի վերջին: Արևմտյան Եվրոպայի մի շարք կապիտալիստական երկրներից այն աստիճանաբար տարածվեց մյուս երկրներում և քսաներորդ դարի կեսերին ընդգրկեց ողջ աշխարհը: Տարբեր երկրներում ժողովրդագրական անցումն ունեցավ իր առանձնահատկությունները, որոնք բնորոշվեցին պատմական զարգացման ողջ ընթացքով՝ հասարակության տնտեսական, քաղաքական, սոցիալական և մշակութային համատեքստում:

Ընդունված է առանձնացնել բնակչության վերարտադրության **երեք ռեժիմ** և **երկու տիպ:**

Բնակչության վերարտադրության **առաջին տիպին** բնորոշ է ցածր բնական աճը, քանի որ ծնելիության և մահացության ցուցանիշները ցածր են:

Վերարտադրության այս տեսակը բնորոշ է Մեծ Բրիտանիային, Ֆրանսիային, Իտալիային, այսինքն՝ զարգացած երկրներին: Այս երկրներում դիտվում *է «**ժողովրդագրական ձմեռ»,*** այսինքն՝ բնակչությունը «***ծերացման»*** միտում ունի:

Երկրորդ տիպի երկրներին բնորոշ է **«ժողովրդագրական գարուն»,** քանի որ բնակչության ծնելիության ցուցանիշը բարձր է, իսկ՝ մահացությանը՝ չափավոր: Բնական աճը բարձր է, դիտվում է ***«ժողովրդագրական պայթյուն»:***

Այս երևույթը բնորոշ է այնպիսի երկրներին, ինչպիսիք են Եգիպտոսը, Ուգանդան, Սվազիլենդը, Լեսոտոն, Զաիրը, Անգոլան, Նիգերիան, Սուդանը, Սոմալին, ինչպես նաև Լատինական Ամերիկայի (Մեքսիկայից հարավ ընկած երկրներին՝ ներառյալ հարավամերիկյան երկրները), օրինակ՝ Կոլումբիան, Բրազիլիան, Պերուն, Բոլիվիան, Վենեսուելան, Նիկարագուան, Հոնդուրասը, Արևելյան և Հարավարևելյան Ասիան (Հնդկաստան, Պակիստան, Կամբոջա, Վիետնամ, Մյանմա, Ինդոնեզիա, Մալայզիա) և այլն **[8]**:

Ժողովրդագրական պայթյունը բնակչության արագ քանակական աճի պատկերավոր նշանակումն է, որը սկսվել է 1950-ական թվականներին: Այս հայեցակարգի տեսանկյունից բնակչության պայթյունը բնակչության աճի կտրուկ արագացում է՝ պայմանավորված բնակչության վերարտադրության միջանկյալ տիպի հաստատմամբ: Որպես կանոն, այս ժամանակահատվածում մահացության նվազումը զգալիորեն գերազանցում է ծնելիության նվազմանը, ինչը հանգեցնում է բնակչության արագացված աճի **[9]**:

**Բնակչության բնական աճը** ծնելիության և մահացության ցուցանիշների տարբերությունն է: Այն չափում են տոկոսներով % յուրաքանչյուր 100 մարդու հաշվով և պրոմիլներով ‰՝ 1000 մարդու հաշվով:

**Ծնելիության մակարդակը (մահացության մակարդակը**) տարվա ընթացքում տվյալ տարածքում ծնվածների (մահացածների) թիվն է յուրաքանչյուր 1000 մարդու հաշվով (‰) կամ 100 մարդու հաշվով (%) **[10]**:

Բնակչության վերարտադրությունն ունի երեք ռեժիմ՝ **նեղացված, պարզ և ընդլայնված**:

**Նեղացված վերարտադրությունը կամ դեպոպուլյացիան** դիտվում է Մերձբալթյան երկրներում և ՌԴ-ում, որտեղ ծնելիության մակարդակն ավելի ցածր է, քան մահացությանը, ինչի արդյունքում բնական աճը բացասական է **[11]**:

Դեպոպուլյացիան երկրի կամ տարածքի բացարձակ բնակչության համակարգված նվազումն է՝ բնակչության նեղ վերարտադրության արդյունքում, երբ հաջորդ սերունդը թվով ավելի քիչ է, քան՝ նախորդը: Սա ենթադրում է, որ մահացության ցուցանիշը գերազանցում է ծնելիության ցուցանիշին, և գործում են հանգամանքներ, որոնք հանգեցնում են մեծ թվով մարդկանց կորուստների, օրինակ՝ պատերազմ, համաճարակ և այլն: Այսիքն՝ դեպոպուլյացիայի ժամանակ նկատվում է բնակչության նվազում **[12]**:

**Պարզ վերարտադրության** դեպքում բնական աճը մոտ է 0-ին: Այս տեսակը դրսևորվում է Իտալիայում և Մեծ Բրիտանիայում:

**Ընդլայնված է այն վերարտադրությունը**, որի դեպքում բնական աճը մեծ է և դիտվում է «ժողովրդագրական պայթյուն» օրինակ՝ Քենիայում:

Տարբերակում ենք բնակչության **բացարձակ և հարաբերական աճ**:

Բնական աճ **(բացարձակ)** = Ծնելիության ցուցանիշ – Մահացության ցուցանիշ:

Բնական աճ **(հարաբերական)** = (Ծնելիություն – Մահացություն) x100 (պրոմիլների դեպքում՝ 1000) / երկրի բնակչության թիվ %, ‰

Բնակչության բնական աճն իրենցի ներկայացնում է կենսաբանական գործընթաց: Այդ գործընթացի վրա որոշիչ ազդեցություն ունեն հասարակական կյանքի սոցիալ-տնտեսական պայմանները:

Կանխատեսումների համաձայն աշխարհի ամենամարդաշատ պետությունը կլինի Հնդկաստանը՝ գերազանցելով ներկայիս առաջատար Չինաստանին՝ կանխատեսում 2100 թ. **[13]**:




Աշխարհի վիճակագրական պատկերը թույլ է տալիս եզրակացնել, որ տնտեսապես զարգացած երկրների մասնաբաժինը համաշխարհային բնակչության մեջ կրճատվում է, իսկ զարգացող երկրների մասնաբաժինն՝ աճում: Վերջիններս որոշիչ ազդեցություն են ունենում բնակչության չափի և վերարտադրության վրա և ձևավորում են աշխարհի ժողովրդագրական իրավիճակը:

Ծնելիության վերահսկումն առաջին անգամ սկսվեց իրականացվել 18-րդ դարում Ֆրանսիայում: Այժմ աշխարհի տնեսապես զարգացած մոտ 130

երկիր և մոտ 80 զարգացող երկիր վարում է ժողովրդագրական քաղաքականություն, որի ուղղությունը կախված է հիմնականում տվյալ երկրի ժողովրդագրական իրավիճակից:

Ծնելիության ինտենսիվությունը բնութագրելու համար առավել հաճախ օգտագործվում է ծնելիության ընդհանուր գործակիցը՝ տարեկան ծնունդների թիվը 1000 բնակչի հաշվով:

Զարգացող երկրներում գնալով ավելի են դրսևորվում ծնելիության նվազման միտումներ, սակայն, ընդհանուր առմամբ, դրա ավանդական բարձր մակարդակը դեռ պահպանվում է: Այս երկրներում ընտանիքները շատ ավելի վաղ են ձևավորվում, իսկի երեխաների թիվը չի վերահսկվում:

***ՄԱՀԱՑՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿՅԱՆՔԻ ՄԻՋԻՆ ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆ***

Բնակչության մահացության մակարդակի մոտավոր գնահատականը տրվում է ընդհանուր մահացության գործակից՝ տարեկան մահացությունների թիվը 1000 բնակչի հաշվով: Բնակչության մահացությունն աշխարհում մինչև XVIII դ. շատ բարձր էր՝ 40-50%, հետո սկսվեց նրա աստիճանական անկումը: XX դարի 50-ական թթ.-ին այն կազմում էր 19,6%, իսկ դարավերջին՝ 8,9%: Մահացության նվազման գլոբալ գործընթացը տարբեր տեսակի երկրներում հանգեցրեց ցուցանիշների մերձեցման: Ավելին, տնտեսապես զարգացած շատ երկրներում մահացությունն արդեն զգալիորեն ավելի բարձր էր, քան զարգացող երկրներում:

Բնակչության առողջական վիճակի կարևոր ցուցանիշը մարդկանց կյանքի միջին տևողությունն է: *Գիտնականները կարծում են, որ մարդու կյանքի միջին տևողությունը 110-115 և նույնիսկ 120-140: Սակայն բազմաթիվ կենսաբանական և սոցիալ-տնտեսական գործոնների ազդեցությունը հանգեցնում է այս ցուցանիշի զգալի նվազմանը:* Միաժամանակ արձանագրվել են փաստեր, որ կյանքի տևողությունը աճելու միտում ունի: Այսպիսով, եթե 1950 թվականին աշխարհում կյանքի միջին տևողությունը կազմում էր 50 տարի, ապա 1970 թվականին այն հասել է 57-ի, 1990 թվականին՝ 63-ի, իսկ 2000 թվականին՝ 66 տարվա: Զարգացած երկրներում կյանքի միջին տևողությունը կազմում է 74 տարի, զարգացող երկրներում՝ 63 տարի:

Կյանքի միջին տևողության աճը նկատվում է երիտասարդ բնակչություն ունեցող զարգացող երկրներում և տնտեսապես զարգացած երկրներում՝ ցածր կամ բացասական բնական աճ և աշխատունակ տարիքից բարձր բնակչության բարձր համամասնության առկայության դեպքում:

Կյանքի միջին տևողությունը տղամարդկանց և կանանց համար տարբեր է: Աշխարհում կանայք 3 տարով ավելի երկար են ապրում, քան տղա-

մարդիկ: Տնտեսապես զարգացած շատ երկրներում կյանքի միջին տևողության տարբերությունը կանանց օգտին 6-7 տարի է, իսկ Ռուսաստանում այն հասնում է առավելագույնի՝ 12 տարի՝ 61 և 73 համամասնությամբ: Հիմնական պատճառը կանանց մարմնի ճկունությունն է, ինչպես նաև տղամարդկանց շրջանում վատ սովորությունների ավելի լայն տարածումը՝ ալկոհոլիզմ, ծխախոտ, ավելի հաճախ տեղի ունեցող պատահարներ, սպանություններ և այլն:

### *ՄԻԳՐԱՑԻԱ*

Յուրաքանչյուր երկրի բնակչության թվաքանակը փոխվում է ոչ միայն բնական շարժի սերնդափոխության, այլև մեխանիկական շարժի՝ միգրացիայի շնորհիվ:

**Միգրացիան** (լատ. migratio, migro - գաղթ, վերաբնակեցում) բնակչության բռնի կամ կամավոր տեղաշարժն է մի երկրից մյուսը կամ նույն երկրի ներսում՝ կապված մշտական կամ ժամանակավոր բնակավայրը փոխելու հետ:

Տարբերում ենք **արտաքին՝** միջմայցամաքային և միջպետական, և **ներքին՝** ներպետական, միջշրջանային և գյուղական բնակավայրերից բնակչության վերաբնակեցումը քաղաքներում:

Արտագաղթի և ներգաղթի գումարն արտահայտում է միգրացիայի ընդհանուր մեծությունը:

Միգրացիան լինում է **կամավոր** և **բռնի**: Եթե անձի միգրացիա կատարելու որոշումը կայացվել է ինքնակամ, առանց արտաքին գործոնների պարտադրանքի, ապա միգրացիան կամավոր է, իսկ եթե որոշումն ընդունվել է արտաքին գործոնների ճնշման ներքո՝ այդպիսի միգրացիան կոչվում է բռնի՝ դեպորտացիա:

*Ըստ տարածքի ընդգրկման՝* միգրացիաները լինում են **արտաքին** և **ներքին:** Արտաքին միգրացիաների շարքին դասվում են **արտագաղթը՝ էմիգրացիան, և ներգաղթը՝ իմիգրացիան:**

**Էմիգրացիան** քաղաքացիների մեկնումն է սեփական երկրից, իսկ **իմիգրացիան՝** այլ երկրի քաղաքացիների մուտքը տվյալ երկիր: Արտաքին միգրացիաներ դիտվել են մարդկության պատմության ողջ ընթացքում, օրինակ՝ «ժողովուրդների մեծ գաղթը»:

Արտաքին միգրացիան ըստ տարածքի ընդգրկման կարող է լինել միջմայրցամաքային և ներմայրցամաքային, իսկ ներքին միգրացիան՝ միջշրջանային և ներշրջանային՝ գյուղ-քաղաք:

Ներքին միգրացիան տեղի է ունենում հիմնականում չորս ուղղությամբ՝ ***գյուղից քաղաք, քաղաքից գյուղ, գյուղից գյուղ, փոքր քաղաքից մեծ քաղաք:*** Բազմաթիվ երկրներում ներքին միգրացիաներ կատարվում են նախկինում յուրացված և խիտ բնակեցված շրջաններից դեպի նոր յուրացվող շրջաններ:

Ստորև ներկայացվում են 2015 թվականին միգրանտների թվով առաջատար պետությունները **[14]**:




*Ըստ փևողության* միգրացիան լինում է **մշտական, ժամանակավոր և սեզոնային:**

*Ըստ եղանակի* միգրացիան լինում է՝ **անկազմակերպ և կազմակերպված:**

*Ըստ ձևի* միգրացիան լինում է **հարկադիր և կամավոր [15]:**

Միգրացիայի գլխավոր պատճառը սոցիալ - տնտեսական է՝ աղքատություն, գործազրկություն և այլն: Միգրացիա կարող է տեղի ունենալ նաև քաղաքական, ընտանեկան-կենցաղային, կրոնական, ազգային, էկոլոգիական և այլ պատճառներով:

Կրոնական շարժառիթով զանգվածային գաղթեր են տեղի ունեցել 1947 թ.-ին Հնդկաստանում, երբ մահմեդականներն առանձնացան Պակիստանում, իսկ Պակիստանից միլիոնավոր հինդուականներ և բուդդայականներ տեղափոխվեցին Հնդկաստան:

Քաղաքական և ազգային միգրացիայի օրինակ է Ադրբեջանից մոտ **400 000** հայերի հարկադրված գաղթը՝ դեպորտացիան, բայց իրականում փախուստը կյանքը փրկելու նպատակով ՀՀ և այլ երկրներ: Վեր-

ջին 20 տարվա ընթացում ՀՀ-ից արտագաղթել է մոտ 1 **մլն մարդ՝** հիմնականում սոցիալ-տնտեսական շարժառիթով **[16]**:

2022 թվականի տվյալների համաձայն բնակչության թվով աշխարհի երկրների դասակարգման մեջ Հայաստանը զբաղեցնում է 137-րդ տեղը՝ 2,963,243 ցուցանիշով: Ռուսաստանը 9-րդն է՝ 145,934,462 ցուցանիշով, Թուրքիան՝ 17-րդը՝ 84,339,067 ցուցանիշով: Նրան 18-րդ տեղում հաջորդում է Իրանը՝ 83,992,949 ցուցանիշով, Ադրբեջանը՝ 90-րդ տեղում է՝ 10,139,177 ցուցանիշով, իսկ Վրաստանը՝ 132-րդը՝ 3,989,167 ցուցանիշով **[17]**:

Ներգաղթի այլ մեծ տարածքներ են առաջացել ԱՄՆ-ում, Պարսից ծոցի երկրներում և Հարավային Աֆրիկայում: Տնտեսական պատճառներն ընկած են միգրացիոն այնպիսի ճյուղի հիմքում, որը կոչվում է **«ուղեղների արտահոսք»**: Ավելին, այս գործընթացն արդեն ամբողջությամբ յուրացվել է Ռուսաստանի և ԱՊՀ այլ երկրների կողմից: Տնտեսական արտաքին արտագաղթի հետ մեկտեղ կարող են լինել նաև քաղաքական պատճառներ: Նման օրինակներ են գրեթե կես միլիոն քաղաքացիների՝ հիմնականում «մտավորականների»՝ Ալբերտ Էյնշտեյն, Էնրիկո Ֆերմի, Լիոն Ֆոյխթվանգեր, արտագաղթը նացիստական Գերմանիայից, ֆաշիստական Իտալիայից և ֆրանկոիստական Իսպանիայից: Այն բանից հետո, երբ 1970-ականների կեսերին Չիլիում իշխանության եկավ գեներալ Պինոչետը, այս երկիրը լքեց ավելի քան 1 միլիոն մարդ: Լայնածավալ քաղաքական արտագաղթ տեղի ունեցավ նաև նախահեղափոխական Ռուսաստանում, ԽՍՀՄ-ում, Կուբայում, Վիետնամում, Կամբոջայում և շատ այլ երկրներում: Ֆաշիստական Գերմանիայի պարտությունից հետո գրեթե 10 միլիոն գերմանացիներ վերաբնակեցվեցին Արևելյան Եվրոպայի երկրներից Գերմանիայի Դաշնային Հանրապետությունում: 1950-1970-ական թվականներին գաղութատիրական համակարգի փլուզումը հանգեցրեց նախկին գաղութներից բնակչության վերադարձին մետրոպոլիայի երկրներ **[18]**:

***ԱՄՈՒՍՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՄՈՒՍՆԱԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ***

Ամուսնությունների և ամուսնալուծությունների մասին տեղեկությունները ստացվում են ամուսնության և ամուսնալուծության ակտերի հիման վրա, որոնք տրամադրվում են ՀՀ արդարադատության նախարարության քաղաքացիական կացության ակտերի գրանցման (ՔԿԱԳ) գործակալության տարածքային բաժինների կողմից:

Ամուսնության ընդհանուր գործակիցը հաշվարկվում է գրանցված ամուսնությունների քանակի և մշտական բնակչության միջին տարեկան թվաքանակի ցուցանիշների հարաբերությամբ:

Ամուսնալուծության ընդհանուր գործակիցը որոշվում է գրանցված ամուսնալուծությունների քանակի և մշտական բնակչության միջին տարեկան թվաքանակի ցուցանիշների հարաբերությամբ: Հաշվարկվում է 1000 բնակչի հաշվով:

Կանանց, ինչպես առաջին ամուսնության միջին տարիքն, այնպես էլ ամուսնության միջին տարիքն ընդհանուր առմամբ, ավելի բարձր է, քան մոր միջին տարիքը թե՛ առաջին անգամ մայրանալու և թե՛ ընդհանուր առմամբ մայրանալու ժամանակ: Երևույթը պայմանավորված է այն հանգամանքով, որ տվյալները հաշվարկված են գրանցված ամուսնությունների հիման վրա, իսկ սովորաբար ամուսնությունների գրանցումներն իրականացվում են որոշակի հետաձգումով՝ երեխայի ծննդից հետո, ինչպես նաև առկա են դեպքեր՝ երկրորդ և այլ ամուսնությունների, որոնց գրանցումը կատարվում է ավելի բարձր տարիքում **[19]**:

XX դարի վերջին բնակչության շրջանում առաջին ամուսնության տարիքն իջավ՝ կանանց համար 25-ից մինչև 22 տարեկան, տղամարդկանց համար՝ 27-ից մինչև 24 տարեկան: Հատկապես հատկանշական է գյուղաբնակ կանանց առաջին ամուսնության տարիքի նվազումը:

Առավել հաճախ ամուսնալուծություններ նախաձեռնում են կանայք: Մյուս կողմից, տղամարդկանց կրկնակի ամուսնությունն ավելի հավանական է: Տղամարդկանց, հատկապես աշխատունակ տարիքի տղամարդկանց մահացության բարձր մակարդակի պատճառով այրիների համամասնությունը շատ ավելի բարձր է **[20]**:

Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարությունն ուշադրություն է հրավիրում ժողովրդագրական իրավիճակի բարելավման բացառիկ կարևորությանը, որից, ի վերջո, կախված է Հայաստանի ապագան: Այս ամենը կանխորոշում է ժամանակակից Հայաստանի ժողովրդագրական գործընթացների և քաղաքագիտական ուսումնասիրության նկատմամբ ցուցաբերվող հետաքրքրությունը:

Համաձայն «Պետական վիճակագրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի՝ երկրի ցուցանիշների համադրելիությունը վիճակագրական տվյալների բացարձակ հարբեբրականություն չի երաշխավորում, ուստի, պետական վիճակագրությանը հատկացվող ռեսուրսների անհամապատասխանությունը հանգեցնում է վիճակագրական ճեղքերի առաջացման:

**Եզրակացություն և առաջարկություններ**: Այսպիսով, վերլուծելով սույն աշխատանքը և դրա հետ կապված հետազոտության արդյունքները,

կարելի է եզրակացնել, որ այսօր, հայ հասարակությունը կանգնած է ժողովրդագրական աղետի առջև:

Գաղտնիք չէ, որ պետության զարգացման և տնտեսական քաղաքականության վրա մեծ ազդեցություն ունեն բնակչության թվաքանակն ու կառուցվածքը: Նշենք, որ ժամանակակից աշխարհում բնակչության խնդիրների լուծման բարդությունը դիտարկվում է ժողովրդագրական գործընթացների արդյունքում առաջացող խնդիրների ոչ կառուցողական լուծման դաշտում, ինչն իր հերթին պայմանավորված է երկրների տնտեսության զարգացման կարիքներով:

Արտակարգ իրողություններն ուղղակիորեն ներգործում են վիճակագրական տվյալների ցուցանիշների վրա: Նյութական, բնակարանային, կենցաղային ու այլ գործոնների ազդեցությունը զգալիորեն նվազեցնում է ներկայացված ցուցանիշների բացարձակ և հարաբերական կայունությունը և այդ համատեքստում կարևորվում է բնակչության բնական տեղաշարժը, որը շարունակում է մնալ ժողովրդագրական հետազոտությունների գլխավոր հիմնախնդիրը և կարող ենք ասել, որ ՀՀ-ում բնակչության ծերացման, աշխատունակ բնակչության արտահոսքի, աշխատողների պակասի և ավանդական ընտանիքի փլուզման հետևանքներն այժմ ավելի սուր են, քան երբևէ:

Համեմատական դաշտում վերլուծվեց նաև աշխարհում տիրող ժողովրդագրական իրավիճակը, որի հնարավոր վտանգն աշխարհի բնակչության արագ աճն է: ՄԱԿ-ի կանխատեսումների համաձայն՝ բնակչությունը կշարունակի աճել, բայց ոչ հավասարաչափ, քանի որ հիմնականում ավելանում է զարգացող աշխարհի բնակչությունը:

Աշխարհի բնակչության արագ աճը կապված է շրջակա միջավայրի վրա մարդածին մեծ ճնշումների, կլիմայի փոփոխության խնդիրների, բնական ռեսուրսների սպառման, սննդի պակասի և այլ հանգամանքների հետ: Այս բոլոր դժվարությունների պատճառը ոչ միայն բնակչության աճն է, այլ դրա ոչ կառուցողական լուծումը:

Վերադառնալով մեր իրականություն, նշենք, որ ժողովրդագրական գործընթացների վերլուծությունը հնարավորություն է տալիս նախանշել մեր երկրի ապագա զարգացման հավանական սցենարները, իսկ վիճակագրությունն իր հերթին թույլ է տալիս միայն կառուցել օբյեկտիվ պատկեր՝ ցույց տալու համար, թե ինչ է կատարվում աշխարհում:

Հետազոտության արդյունքում բազմիցս արձանագրվեց, որ մեծ թվով երիտասարդ ընտանիքներ այսօր ավելի քիչ երեխաներ են ունենում, քան

տարիներ առաջ, և ավելին, կա նաև անպտղության լուրջ խնդիր, որին առնչվում են թե՛ կանայք և թե՛ տղամարդիկ: Այս ամենը դառնում է ժողովրդագրական խնդիրների առաջացման պատճառ: Բացի այդ, արձանագրվեց, որ տարեց տարի աճում է ամուսնությունների և առաջին երեխայի ծննդյան տարիքը, ինչն իր հերթին նվազեցնում է ամուսնությունների թիվը:

Ամփոփելով ընդհանուր արդյունքները՝ հարկ է նշել, որ ժողովրդագրական ճգնաժամի հաղթահարման բոլոր միջոցները, չնայած որոշակի դրական ազդեցության, չեն կարող արմատապես փոխել երկրում տիրող ժողովրդագրական իրավիճակը, որն իր հերթին պահանջում է օրենսդրական մի շարք համապարփակ, նպատակային միջոցառումների ներդրում և շարունակական վերահսկողութուն:

Պարզ դարձավ, որ մարդկանց արժանապատիվ կյանքի որակը կարող է հիմք հանդիսանալ բնակչության վերարտադրության բարելավման համար, քանի որ ներկա ժողովրդագրական իրավիճակը պահանջում է ինչպես պետական, այնպես էլ հասարակական ինստիտուտների միջամտություն: Այս համատեքստում հաստատվեց առաջ քաշված այն վարկածը, որ ՀՀ քաղաքացիների միգրացիայի գլխավոր պատճառը սոցիալ-տնտեսական անկայությունն է: Փորձագիտական հարցման արդյունքում հարցվող փորձագետները բազմիցս նշեցին այս գործոնի դերն ու կարևորությունը:

Ամփոփելով աշխատանքը, կարող ենք նշել, որ ստորև ներկայացված առաջարկները մեծապես մշակվել են՝ հաշվի առնելով ժողովրդագրական տվյալների ոչ դրական փոփոխությունը:

**Օգտագործված գրականության ցանկ**


1. Райзберг Б. А., Лозовский Л. Ш., СтародубцеваЕ. Б., Современный экономический словарь. — 2-е изд., испр. М.: ИНФРА-М. 2022, 512 с.
2. Воронцов А. В., Глотов М. Б.. Демография: учебник и практикум для прикладного бакалавриата — М.: Издательство Юрайт, 2016, 287 с.
3. Մուրադյան Յու., Հասարակական աշխարհագրության հանրագիտակ բառարան, Երևան, «ՄՈԱ» հրատ., 2008
4. Мировой демографический взрыв и его проблемы. Москва, Знание, 1978, 63 с.
5. Новости ООН, Глобальный взгляд Человеческие судьбы, Чем вызваны демографические проблемы развитых стран мира? https://news.un.org/ru /audio/2015/08/1029211
6. Лысенко С. Н.: Демография, Инфра, Москва, Вузовский учебник, 2010, 108 с.

7. География, Численность населения мира. Естественный прирост и типы воспроизводства населения, https://geographyofrussia.com/chislennost-naseleniya-mira-estestvennyj-prirost-i-tipy-vosproizvodstva-naseleniya/
8. Ավագյան Գ., Մարգարյան Ռ., Աշխարհագրություն, Երևան, «Արևիկ»,1999, 62 էջ
9. География, Демографический переход (демографическая революция), https://geographyofrussia.com/demograficheskij-perexod-demograficheskaya-revolyuciya/ География, Глобальные проблемы человечества — демографическая проблема, https://geographyofrussia.com/globalnye-problemy-chelovechestva-demograficheskaya-problema/
10. Մարգարյան Ռ., Մանասյան Մ., Հովհաննիսյան Գ., Հովսեփյան Ա., Աշխարհագրություն, Երևան, «Մանմար», 2013, 176 էջ
11. Халтурина Д. А., Коротаев А. В.. Русский крест: Факторы, механизмы и пути преодоления демографического кризиса в России. Москва: УРСС, 2006, 128 с.
12. Синельников А. Б. «Что повысит рождаемость — льготы и пособия для семей с детьми или демографическая саморегуляция? Социологический журнал, Том 26, Номер 2, 2020, с. 174-182
13. WorldoMeters, World-Population, https://www.worldometers.info/world-population/2020
14. Scientific American, Global Migrant Flows: An Interactive Map
15. /https://blogs.scientificamerican.com/observations/global-migrant-flows-an interactive-map
16. Մարգարյան Ռ., Մանասյան Մ., Հովհաննիսյան Գ., Հովսեփյան Ա., Աշխարհագրություն, Երևան, «Մանմար», 2013, 176 էջ
17. Մուրադյան Յու., Հասարակական աշխարհագրության հանրագիտակ բառարան, Երևան, «ՄՈԱ» հրատ., 2008
18. WorldoMeters, Countries in the world by population/2021
19. География, Миграция населения, https://geographyofrussia.com/migraciya-naseleniya
20. Հայաստանի ժողովրդագրական ժողովածու, 2021, ՄԱՍ 6: Ամուսնություններ և ամուսնալուծություններ https://armstat.am/file/article/demog_2017_6.pdf
21. География, Браки и разводы, https://geographyofrussia.com/braki-i-razvody

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
NATIONAL ACADEMY OF SCIENCES OF THE REPUBLIC OF ARMENIA

ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ
МЕЖДУНАРОДНЫЙ НАУЧНО-ОБРАЗОВАТЕЛЬНЫЙ ЦЕНТР
INTERNATIONAL SCIENTIFIC-EDUCATIONAL CENTER

# ՄՐՑՈՒՆԱԿ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՐԱՓՈՓՈԽ ԱՇԽԱՐՀՈՒՄ

**ԳԻՏԱԿԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ**
**ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԺՈՂՈՎԻ ՆՅՈՒԹԵՐ**
**ՀՈՒՆԻՍԻ 21, 2023**

# ПРОБЛЕМЫ КОНКУРЕНТОСПОСОБНОГО ОБРАЗОВАНИЯ И НАУКИ В МЕНЯЮЩЕМСЯ МИРЕ

**СБОРНИК НАУЧНЫХ СТАТЕЙ**
**МАТЕРИАЛЫ МЕЖДУНАРОДНОЙ КОНФЕРЕНЦИИ**
**19 Июня, 2023**

# PROBLEMS OF COMPETITIVE EDUCATION AND SCIENCE IN A CHANGING WORLD

**INTERNATIONAL CONFERENCE**
**COLLECTION OF SCIENTIFIC ARTICLES**

Ժողովածուի պատասխանատու
և գլխավոր խմբագիր՝ ՆԱԻՐԱ ՀԱԿՈԲՅԱՆ

Համակարգչային ձևավորումը՝ ՎԱՀՐԱՄ ՂԱՐԱԽԱՆՅԱՆԻ

Չափսը՝ 70X100/16
Ծավալը՝ 28 տպ. մամուլ

«Տիր» հրատարակչություն ՍՊԸ
Երևան, 0070, Հ. Քաջազնունու փ., 14/10

ISBN 978-9939-9303-4-3

9 789939 930343